ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԵՍԹՍԵԼԼԵՐ

ԼԻ ՍՏՐՈՖԵԼ

ՔՐԻՍՏՈՍԻ ԽՍԿՈՒՄՅԱՆ ՊԱՀՈՒՅՄԸ

Ճշմարտության լուսագրողական հեռանքնություն

ՀՈՒՆ
ՍԱՏԵԼԱՇԱՐ

թվայնացրել է 1915.info կայքը

ՔՐԻՍՏՈՍԻ ԻՍԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ

ՀՈՒՆ
ՍԱՏԵԼԱՇԱՐ

թվայնացրել է 1915.info կայքը

Lee Strobel

THE CASE FOR CHRIST

A Journalist's Personal Investigation
of the Evidence for Jesus

թվայնացրել է 1915.info կայքը

Լի Ստրոբել

ՔՐԻՍՏՈՍԻ ԻՍԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ

ճշմարտության լրագրողական հետաքննություն

Թարգմանությունն անգլերենից՝
Աստղիկ Սարգսյանի

ԵՐԵՎԱՆ
2024

թվայնացրել է 1915.info կայքը



ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հրատարակվում է երաշխավորությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի

ՀՏԴ 27
ԳՄԴ 86.37
Ս 906

Ս 906 Ստրոբել Լի
Քրիստոսի իսկության վարույթը: Ճշմարտության լրագրողական հետաքննություն / Լի Ստրոբել.- Եր.: Newmag - Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչություն, 2024.- 368 էջ:

Փորձառու լրագրողը հետաքննում է պատմության մեջ ամենամեծ առեղծվածը՝ կա՞ հավաստի ապացույց, որ Հիսուս Նազովրեցին իսկապես Աստծո որդին է: Վերանայելով իր հոգևոր ճամփորդությունն աթեիզմից մինչև հավատ՝ Chicago Tribune-ի քրեական բաժնի նախկին խմբագիր Լի Ստրոբելը հարցաքննում է ճանաչված դոկտորների, որոնք դասավանդում են Քեմբրիջի, Փրինսթոնի համալսարաններում և այլ բարձրագույն կրթական հաստատություններում: Ստրոբելը նրանց հարցնում է՝ որքա՞ն վստահելի է Նոր Կտակարանը, Աստվածաշնչից դուրս կա՞ն Հիսուսի գոյության ապացույցներ, ինչո՞ւ է հարությունն իրական իրադարձություն եղել: «Ոսկե մեդալի» արժանացած այս գիրքն ընթերցվում է գրավիչ վեպի պես, բայց այն գեղարվեստական չէ, այլ ճշմարտության փնտրտուք:

ՀՏԴ 27
ԳՄԴ 86.37

ISBN 978-9939-967-33-2
The Case for Christ
Copyright © 1998, 2016 by Lee Strobel
Published by arrangement with The Zondervan Corporation L.L.C.
a subsidiary of HarperCollins Christian Publishing, Inc.

Լի Ստրոբել, «Քրիստոսի իսկության վարույթը» © 2024 «Նյու Մեգ» ՍՊԸ
Այս գրքի հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել The Zondervan Corporation ընկերության հետ կնքած պայմանագրով:

«Հուն» մատենաշարը Newmag հրատարակչության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչության համատեղ նախագիծն է, մատենաշարով լույս տեսնող գրքերը հրատարակվում են համատեղ ջանքով:

թվայնացրել է 1915.info կայքը

«Քրիստոսի իսկության վարույթը» գրքի հեղինակն իրավաբանի կրթությամբ հետաքննող լրագրող է, որը բուլդոգի համառությամբ հետազոտում է աստվածաշնչյան քրիստոնեության ճշմարտացիությունը հաստատող փաստերը: Այս կլանող պատմությունից շատ նոր բան կսովորեն և՛ հավատացյալները, և՛ ագնոստիկները:

ԲՐՅՈՒՍ ՄԵՅԳԵՐ

Լի Ստրոբելը տալիս է հարցեր, որոնք կտար անուղղելի թերահավատը, և գտնում է համոզիչ պատասխաններ այդ բոլոր հարցերին: Նրա գիրքն այնքան լավն է, որ երեկոները, ընթրիքից հետո, բարձրաձայն կարդում էի կնոջս համար: Ամեն հետազոտող պիտի ունենա այս գիրքը:

ՖԻԼԻՊ Է. ՋՈՆՍՈՆ, բեսթսելլեր հեղինակ
և իրավագիտության դասախոս
Կալիֆոռնիայի համալսարան, Բերքլի

Զարմանալի մոտեցում հետազոտության առարկայի նկատմամբ: Իսկապես եզակի գիրք, որը սրտանց խորհուրդ եմ տալիս:

ՌԱՎԻ ԶԱԽԱՐԻԱՍ

Ոչ ոք չի կարող ճշմարտությունը զատել հորինվածքից այնպես, ինչպես փորձառու դատական լրագրողը: Ոչ ոք չի կարող այնպես հիմնավոր ապացույցներ կառուցել, ինչպես Եյլի համալսարանի իրավաբանության ֆակուլտետի շրջանավարտը: Լի Ստրոբելը՝ այս հրաշալի գրքի հեղինակը, համատեղում է այդ երկու հատկանիշները: Աթեիզմից քրիստոնեության իր սեփական դարձի ապշեցուցիչ պատմությունը և փորձագետ-ականատեսների անհերքելի վկայությունները թույլ են տալիս նրան կառուցել Հիսուս Քրիստոսի օգտին իր երկաթակուռ պաշտպանությունը: Համամիտ եմ, որ այս գիրքը նոր չափանիշներ է սահմանում ժամանակակից քրիստոնեական ջատագովության համար:

Դ. ՋԵՅՄՍ ՔԵՆԵԴԻ

թվայնացրել է 1915.info կայքը

Երբեք չեմ հանդիպել որևէ մեկին, որ այսքան ջանասիրաբար քրիստոնեական հավատի բանական հիմնավորումներով ապահովեր թե՛ հավատացյալներին, և թե՛ ճշմարտությունը փնտրողներին: Այս գիրքը դասական է դառնալու:

ԲԻԼ ՀԻԲԵԼՍ, ավագ քարոզիչ, Ուիլոու Քրիկ համայնքային եկեղեցի

Խորապես զգացված եմ, որ այս հետաքննության մասնակից դարձա: Սա քրիստոնեության ապացույցների մասին ամենահետաքրքրական ժամանակակից գրքերից է, ու հավատացած եմ, որ մեծ ազդեցություն է ունենալու: Բոլոր նրանք, ում հետաքրքրում է քրիստոնեական հավատի պատմական հիմքը, պիտի կարդան այս գիրքը:

Ջ. Փ. ՄՈՐԼԵՆԴ, փիլիսոփայության վաստակավոր դասախոս Թալբոթի աստվածաբանական դպրոց, Բիոլա համալսարան, Լամիրադա, Կալիֆոռնիա

Լրագրող և իրավաբան Լի Ստրոբելը հարցազրույց է վարում 13 առաջատար գիտնականների ու հեղինակավոր մասնագետների հետ՝ տալով նրանց բարդ ու կնճռոտ հարցեր Հիսուս Նազովրեցու և նրա կյանքի աստվածաշնչային կենսագրությունների մասին: Արդյունքում, Լին հանգում է ապշեցուցիչ եզրակացության. այժմ նա պետք է շատ ավելի մեծ ջանքեր գործադրի աթեիստ մնալու, քան Նազովրեցի Հիսուսին հավատալու համար: Կարծում եմ, Լին չի սխալվում: Այս հետաքննությունն առաջարկում է համապարփակ պատմական ապացույց, որ Հիսուս հենց նա է, ինչ պնդում էր, որ է:

ԼՈՒԻՍ ՊԱԼԱՈՒ

Համոզիչ ապացույցներ, հուզիչ ընթերցանություն:

ՊԻՏԵՐ ՔՐԻՖՏ, փիլիսոփայության դասախոս, Բոստոնի քոլեջ

թվայնացրել է 1915.info կայքը

Լի Ստրոբելի փայլուն, միայն անվիճելի փաստերի վրա հիմնված հետաքննական լրագրությունը հմտորեն ի մի է բերում Քրիստոսի պնդումների անհերքելի ապացույցները: Յուրաքանչյուր քրիստոնյա պետք է ունենա այս գիրքն իր գրադարանում և առաջարկի այն ուրիշներին:

Դր ԲԻԼ ԲՐԱՅԹ

Մեր սերնդից քչերն են Լի Ստրոբելի պես հասկանում ժամանակակից սկեպտիկների մտածելակերպը: Այս հիանալի գիրքը պարունակում է ոչ միայն ջատագովություն, այլև պատասխաններ այն մարդու հիմնական հարցերին, որ մտադիր է քննել Քրիստոսի պնդումները: Այն նույնքան գրավիչ է, որքան համոզիչ:

Դր ՌՈԲԵՐՏ Է. ՔՈԼՄԱՆ, աշակերտության և ավետարանչության վաստակավոր ավագ դասախոս Գորդոն Քոնվելում

Լի Ստրոբելը գրել է մի գիրք, որը վստահաբար դառնալու է հանրամատչելի ջատագովության ամենաընթերցվող գործերից մեկը: Իրավագետի ու լրագրողի կրթությունը հեղինակին թույլ է տալիս աշխույժ և գրավիչ ներկայացնել տասներեք ավետարանական առաջատար գիտնականների հետ իր հարցազրույցները: Նախկին աթեիստը գիտի ճիշտ հարցեր տալ: Գրքում բերված փաստերն իսկապես համոզիչ են:

Դր ԹՈՄ Ս. ՌԱՅՆԵՐ, LifeWay Christian Resources-ի նախագահ ու գործադիր տնօրեն

Լի Ստրոբելը միշտ գրել է ստեղծագործաբար, գրավիչ ու համոզիչ: Այս անգամ բախտ ունեցա սեփական աչքերով դիտել, թե ինչպես է ստեղծվել գիրքը, որը համոզում է, բայց չի շահարկում, միտք է արթնացնում, բայց իր կարծիքը չի պարտադրում, հրապուրում է, բայց չի հարմարվում ընթերցողին: Ես այն սիրով խորհուրդ եմ տալիս:

ԳԱՐԻ ՔՈԼԻՆԶ, փիլիսոփայության դոկտոր, Ռիչմոնդի Շրջանավարտների համալսարանի վաստակավոր դասախոս

թվայնացրել է 1915.info կայքը

թվայնացրել է 1915.info կայքը

Բովանդակություն

Ներածություն Եզակի հետաքննության վերսկսում 11

ՄԱՍ 1 **Արձանագրությունների քննություն** 21
Գլուխ 1 Ականատեսների վկայությունները 23
Գլուխ 2 Ականատեսների վկայությունների ստուգում 47
Գլուխ 3 Փաստագրական ապացույցներ 68
Գլուխ 4 Հավելյալ ապացույցներ 89
Գլուխ 5 Գիտական ապացույցներ 113
Գլուխ 6 Հերքող ապացույցներ 136

ՄԱՍ 2 **Հիսուս. հետաքննություն** 159
Գլուխ 7 Ինքնության փաստեր 161
Գլուխ 8 Հոգեբանական փաստեր 176
Գլուխ 9 Հոգեբանական դիմանկարի փաստը 190
Գլուխ 10 Մատնահետքերի փաստը 210

ՄԱՍ 3 **Հարության քննություն** 231
Գլուխ 11 Բժշկական փաստեր 233
Գլուխ 12 Անհետացած մարմնի փաստը 250
Գլուխ 13 Հայտնությունների փաստը 273
Գլուխ 14 Անուղղակի ապացույցներ 295

Եզրակացություն. Պատմության դատավճիռը 312
Հարցազրույց Լի Ստրոբելի հետ 328
Երախտագիտության խոսք 345
Օգտագործված գրականություն 346
Լրացուցիչ գրականություն 351
Ծանոթագրություններ 357

թվայնացրել է 1915.info կայքը

թվայնացրել է 1915.info կայքը

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եզակի հեռաքննության վերսկսում

Դատախազների ժարգոնով՝ Ջեյմսի Դիքսոնի դեմ գործը, որ հարուցվել էր սպանության փորձի մեղադրանքով, «շահած-պրծած էր»: Մեկից մեկ: Բավական էր թերթել վկաների ցուցմունքները՝ համոզվելու համար, որ Չիկագոյի հարավում տեղի ունեցած բախման ժամանակ Դիքսոնը կրակել է ոստիկանության սերժանտ Ռիչարդ Սկանլոնի որովայնին:

Յուրաքանչյուր ցուցմունքի, իրեղեն ապացույցի հետ անհերքելի հանցանշանների օղակը սեղմվում էր Դիքսոնի վզի շուրջը: Մատնահետքեր կային ու զենք, ականատեսների ցուցմունքներ ու վիրավոր ոստիկան, շարժառիթ ու հանցավոր անցյալ ունեցող մեղադրյալ: Արդարադատությունը դիրքավորվել էր՝ փակելու ծուղակի դուռը, որտեղ Դիքսոնը մնալու էր սեփական մեղքի ծանրության տակ կքած:

Փաստերը պարզ էին: Ոստիկանություն էր զանգել մի մարդ և հայտնել, որ ատրճանակով մի տղամարդ փորձում է ներխուժել իր հարևանի տուն, հասցեն՝ Արևմտյան 108: Սերժանտ Սկանլոնը շտապել էր նշված տեղն ու տեսել, որ Դիքսոնը բարձրաձայն վիճաբանում է ընկերուհու հետ նրա տան շեմին: Աղջկա հայրը, պատուհանից տեսնելով ոստիկանին ու մտածելով, որ ապահով է, դուրս էր եկել:

Հանկարծ Դիքսոնի ու աղջկա հոր միջև կռիվ էր սկսվել: Սերժանտն արագ միջամտել էր՝ փորձելով բաժանել նրանց: Կրակոց էր հնչել, Սկանլոնը հեռացել էր՝ գոտկատեղից վիրավոր: Հենց այդ պահին պարեկային երկու այլ մեքենա էր տեղ հասել, ճռնչոցով արգելակել, ու ոստիկանները վազել էին զսպելու Դիքսոնին:

Մոտակայքում հայտնաբերվել էր Դիքսոնի 22 տրամաչափի ատրճանակը՝ նրա մատնահետքերով, մի գնդակը կրակած. ըստ երևույթին, Դիքսոնը, կրակոցից հետո այն մի կողմ էր նետել: Աղջկա հայրը զինված չէր եղել, Սկանլոնի ատրճանակը պատյանից դուրս չէր բերվել: Սկանլոնի մաշկի այրվածքները ցույց էին տալիս, որ նրան չափազանց մոտիկից են կրակել:

Վերքը, բարեբախտաբար, կյանքի համար վտանգավոր չէր, թեև բավականաչափ ծանր էր, որպեսզի նա արիության համար շքանշանի արժանանա, որը նրա կրծքին ամրացրեց հենց ինքը՝ ոստիկանապետը: Ինչ վերաբերում է Դիքսոնին, երբ ոստիկանությունը ստուգեց նրա դատվածությունը, պարզվեց, որ նախկինում դատապարտվել է ուրիշ մեկին կրակելու համար: Ակներև էր, որ բռնության հանդեպ հակվածություն ունի:

Եվ հիմա, մեկ տարի անց, նստած էի Նոթատետրը ծնկներիս, Չիկագոյի դատարանի կիսադատարկ դահլիճում, որտեղ Դիքսոնն իրեն մեղավոր ճանաչեց, որ կրակել է մի մարդու, որը 15 տարի հավատարիմ ծառայել է ոստիկանությունում: Ի լրումն մյուս բոլոր փաստերի, խոստովանությունը վերջնականապես հաստատեց մեղքը: Քրեական դատարանի դատավոր Ֆրենկ Մաչալան հրամայեց, որ Դիքսոնին բանտարկեն: Մուրճի հարվածն ազդարարեց, որ գործը փակված է, արդարադատությունը՝ իրագործված:

Նոթատետրս մտցրի սպորտային բաճկոնիս գրպանը, աստիճաններով իջա ու քայլերս ուղղեցի դեպի մամուլի սրահը: Ենթադրում էի, որ խմբագիրս Chicago Tribune-ի հաջորդ օրվա համարում այդ պատմությանն ամենաշատը երեք պարբերություն կհատկացնի քրեական լրատվության բաժնում. ավելիին այս գործն արժանի չէր: Առանձնահատուկ պատմություն չէր:

Բայց դա միայն ինձ թվում էր:

Իրազեկիչի շունչը

Մամուլի սրահում պատասխանեցի հեռախոսին ու ձայնից անմիջապես ճանաչեցի. այն իրազեկիչն էր, որին ձեռք էի բերել քրեական դատարանի գործերը լուսաբանելու մեկ տարվա ընթացքում: Զգացվում էր, որ ինչ-որ կարևոր բան ունի ինձ հայտնելու, որովհետև որքան հոնորարը մեծ էր լինում, այնքան ավելի արագ ու ցածր էր խոսում, իսկ հիմա շշնջում էր որպեսզի 1.5 կմ արագությամբ:

— Լի՛, Դիքսոնի գործին ծանո՞թ ես,– հարցրեց:

— Հա, բա ոնց,– պատասխանեցի: — Երկու օր առաջ եմ լուսաբանել: Սովորական գործ էր:

թվայնացրել է 1915.info կայքը

— Այդքան վստահ մի՛ եղիր: Ասում են՝ կրակոցից մի քանի շաբաթ առաջ սերժանտ Սկանլոնը երեկույթի է եղել ու իր նոր գրիչ-ատրճանակն է ցուցադրել:

— Նոր ի՞նչը:

— Գրիչ-ատրճանակը: 22 տրամաչափի ատրճանակ է, որ ինքնահոս գրիչի նման է սարքած: Դրանք կրելն արգելված է, այդ թվում՝ ոստիկաններին:

Երբ նրան ասացի, որ կապ չեմ տեսնում, նրա ձայնն ավելի աշխուժացավ:

— Ահա թե ինչ: Դիքսոնը չի կրակել Սկանլոնին: Սկանլոնը վիրավորվել է, երբ իր գրիչ-ատրճանակը պատահաբար կրակել է վերնաշապիկի գրպանում: Նա Դիքսոնի գլխին սարքել է, որ ապօրինի զենք կրելու համար փորձանքի մեջ չընկնի: Չե՞ս հասկանում: Դիքսոնն անմեղ է:

— Հնարավոր չէ,– բացականչեցի:

— Ինքդ ստուգիր փաստերը,– հնչեց նրա պատասխանը: — Տես, թե իրականում ուր են տանում:

Կախեցի լսափողն ու աստիճաններով նետվեցի դեպի դատախազի գրասենյակը՝ կարճ դադար առնելով, որ ներս մտնելուց առաջ շունչ առնեմ:

— Դիքսոնի գործը հիշո՞ւմ եք,– հարցրի անփույթ՝ չուզենալով խաղաքարտերս չափից դուրս շուտ բաց անել: — Եթե դեմ չեք, ուզում եմ մի անգամ էլ մանրամասների վրայով անցնել:

Նա գույնը գցեց:

— Ըը, դրա մասին չեմ կարող խոսել,– կմկմալով փնթփնթաց: — Առանց մեկնաբանությունների:

Պարզվեց, որ իմ իրազեկիչն արդեն իր կասկածները փոխանցել էր դատախազի գրասենյակին: Երդվյալ ատենակալներին գաղտնի, անաղմուկ հրավիրել են ապացույցները վերանայելու: Ապշեցուցիչ էր, անսպասելի, որ Ջեյմս Դիքսոնի դեմ՝ ժամանակին անթերի ու կարծես թե ընդմիշտ փակված գործը վերաբացվում էր:

Նոր փաստեր, նոր տեսություն

Միաժամանակ սկսեցի իմ սեփական հետաքննությունը, ուսումնասիրեցի հանցագործության վայրը, խոսեցի վկաների և անձամբ Դիքսոնի հետ, հետազոտեցի իրեղեն ապացույցները: Երբ մանրամասն ստուգում

էի գործը, շատ տարօրինակ բան պատահեց: Բոլոր նոր փաստերը, որոնք բացահայտում էի, ու անգամ հները, որ նախկինում այնքան ստույգ ու համոզիչ ցույց էին տալիս Դիքսոնի մեղքը, իդեալականորեն համապատասխանում էին գրիչ-ատրճանակի տեսությանը:

- Վկաներն ասացին, որ նախքան Սկանլոնի՝ դեպքի վայր հասնելը Դիքսոնն իր ատրճանակից կրակել էր ընկերուհու տան շքամուտքի դռանը: Կրակոցն ուղղված էր ներքև: Ցեմենտի մի կտոր պոկվել էր շքամուտքից, այն կարող էր պոկված լինել գնդակի հարվածից: Դա կբացատրեր, թե ինչու է Դիքսոնի ատրճանակի մեջ մի գնդակ պակասում:
- Դիքսոնն ասաց, որ չէր ուզում ատրճանակով բռնվել, դրա համար էլ մինչև ոստիկանների գալը թաքցրել էր այն փողոցի մյուս կողմում, խոտի մեջ: Ես վկա գտա, որը հաստատեց դա: Բացատրում էր, թե ինչու է ատրճանակը գտնվել կրակոցի վայրից որոշ տարածության վրա, թեև ոչ ոք երբեք չէր տեսել, թե ինչպես է Դիքսոնը նետում այն:
- Վառոդի հետքեր կային Սկանլոնի վերնաշապիկի ձախ գրպանի ներսում, բայց ոչ դրսում: Գնդակի անցքը գրպանի ներքևում էր: Եզրակացություն՝ զենքն ինչ-որ կերպ կրակել էր գրպանի ներսում:
- Հակառակ ոստիկանական զեկույցի տվյալի՝ գնդակի հետագիծն անկյան տակ ներքև էր ուղղված: Սկանլոնի վերնաշապիկի գրպանի ներքևում արյունոտ պատռվածք կար, որով գնդակը դուրս էր եկել մարմնի որոշ մասի միջով անցնելուց հետո:
- Դիքսոնի քրեական պատմության մասին ոստիկանության տեղեկությունը հեռու էր ամբողջական լինելուց: Այո, նա երեք տարի անցկացրել է բանտում՝ զինված հարձակման մեղադրանքով, սակայն վճռաբեկ դատարանի որոշմամբ ազատ է արձակվել: Պարզվել է, որ ոստիկանությունը դատարանից թաքցրել է պաշտպանական կողմի կարևոր վկային, իսկ մեղադրող կողմի վկան ստել է: Ահա թե ինչպիսին էր Դիքսոնի՝ բռնության հակվածության մասին վկայող անցյալը:

թվայնացրել է 1915.info կայքը

Անմեղ մարդն ազատ է արձակվում

Ի վերջո, Դիքսոնին տվեցի վճռորոշ հարցը.

— Եթե անմեղ էիր, ախր ինչո՞ւ քեզ մեղավոր ճանաչեցիր:

Դիքսոնը հառաչեց:

— Մեղքն ընդունելու գործարք էր,– ասաց:

Դիքսոնը նկատի ուներ այն պրակտիկան, երբ դատախազներն առաջարկում են պատժի մեղմացում, եթե մեղադրյալն իրեն մեղավոր է ճանաչում ու դրանով խնայում է բոլորի ժամանակն ու դատավարության ծախսերը:

— Ասել էին, որ եթե ինձ մեղավոր ճանաչեմ, կդատապարտեն մի տարվա բանտարկության: Արդեն 362 օր անցկացրել էի բանտում՝ դատավարությանը սպասելով: Ընդամենը պիտի ընդունեի, որ ես եմ արել, ու մի քանի օրից տուն կգնայի: Բայց եթե պնդեի, որ դատավարություն լինի, ու դատարանն ինձ մեղավոր ճանաչեր, ամենածանր պատիժը կնշանակեին: Քսան տարի կտային ոստիկանին կրակելու համար: Չարժեր ռիսկի դիմել: Ուզում էի տուն գնալ...

— Ուրեմն,– ասացի,– խոստովանել ես հանցանքը, որը չե՞ս գործել:

— Այդպես է,– գլխով արեց Դիքսոնը:

Ի վերջո, Դիքսոնին ազատ արձակեցին, իսկ ավելի ուշ նա շահեց ոստիկանական բաժնի դեմ դատական գործը: Սկանլոնին զրկեցին իր շքանշանից, նա կանգնեց դատարանի առաջ, մեղավոր ճանաչվեց պաշտոնեական զանցանքի մեջ ու աշխատանքից ազատվեց: Ինչ վերաբերում է ինձ, հոդվածս զբաղեցրեց գրեթե ամբողջ առաջին էջը: Շատ ավելի կարևոր էր, որ, որպես երիտասարդ լրագրող, մեծ դասեր քաղեցի:

Ամենաակնհայտ դասերից մեկն այն էր, որ փաստերը կարելի է դասավորել այնպես, որ ցույց տան մեկից ավելի ուղղություններ: Օրինակ՝ փաստերը լրիվ բավարարել էին, որ Դիքսոնին դատապարտեն սերժանտին կրակելու համար: Բայց գլխավոր հարցերը սրանք էին: Փաստերի ժողովածուն ամբողջակա՞ն էր: Ո՞ր բացատրությունն էր լավագույն կերպով համապատասխանում միասին վերցրած բոլոր փաստերին: Երբ առաջարկվեց գրիչ-ատրճանակի վարկածը, պարզ դարձավ, որ այս սցենարը առավել լավ է բացատրում փաստերի ամբողջական համալիրը:

թվայնացրել է 1915.info կայքը

Մեկ այլ դաս էլ կար: Սկզբում Դիքսոնի մեղքի ապացույցներն ինձ անհերքելի թվացին, քանի որ դրանք հարմար եկան իմ՝ այդ ժամանակվա կանխակալ կարծիքին: Ես դատում էի այսպես. ակնհայտ է, որ Դիքսոնը կարգազանց է, ձախողակ, կազմալուծված ընտանիքի գործազուրկ պտուղ: Ոստիկանները լավ տղաներ են: Դատախազներն անսխալական են:

Այդ պրիզմայով նայելիս՝ բոլոր սկզբնական փաստերն ասես ճիշտ տեղն ընկան: Իսկ հակասությունները կամ բացերը պարզամտորեն անուշադրության մատնեցի: Երբ ոստիկանությունն ասաց, որ գործն անթերի է, հավատացի նրանց խոսքին ու այլևս չփորփրեցի:

Երբ փորձեցի այս գործին նայել անաչառորեն և առանց կողմնակալության, այն բոլորովին այլ լույսի ներքո երևաց ինձ: Ի վերջո, թույլ տվեցի, որ փաստերն ինձ դեպի ճշմարտություն առաջնորդեն՝ անկախ նրանից՝ համապատասխանում էր դա իմ նախնական ենթադրություններին, թե ոչ:

Դա վաղուց էր: Իմ մեծագույն դասերը դեռ առջևում էին:

Դիքսոնից մինչև Հիսուս

Ինչո՞ւ եմ հիմա հիշում Ջեյմս Դիքսոնի գործը: Հենց այն պատճառով, որ իմ հոգևոր ուղին շատ ընդհանրություններ ունի այս անսովոր պատմության հետ:

Կյանքիս մեծ մասը սկեպտիկ եմ եղել: Իրականում ինձ աթեիստ էի համարում: Կարծում էի՝ չափից շատ են փաստերը, որ Աստված ընդամենը ցանկալին իրականության տեղ ընդունելու, հին առասպելաբանության, պարզունակ սնահավատության արգասիք է: Ինչպե՞ս կարելի է լրջորեն խոսել բարեգութ Աստծո մասին, եթե նա մարդկանց դատապարտում է հավերժական դժոխային տանջանքների միայն այն պատճառով, որ նրանք չեն ցանկանում հավատալ իրեն: Ինչպե՞ս կարելի է լրջորեն խոսել հրաշքների մասին, եթե դրանք հակասում են բնության հիմնական օրենքներին: Մի՞թե էվոլյուցիայի տեսությունն ամենասպառիչ կերպով չի բացատրում կյանքի ծագումը: Մի՞թե գիտությունը չի ցրել հավատը գերբնականի հանդեպ:

Ինչ վերաբերում է Հիսուսին. չգիտեի՞ք, որ երբեք չի պնդել, որ ինքն Աստված է: Նա հեղափոխական էր, իմաստուն, հուդայականության հիմքերը

թվայնացրել է 1915.info կայքը

քանդող հրեա, բայց Աստված: Ո՛չ, նման բան երբեք նրա մտքով չի անցել: Այդպես են ասում համալսարանական անվանի շատ դասախոսներ, իսկ նրանք վստահելի են, չէ՞: Համաձայնեք, փաստերի նույնիսկ թռուցիկ ուսումնասիրությունը համոզիչ ցույց է տալիս, որ Հիսուս ուղղակի մարդ արարած է եղել, ինչպես դու և ես, թեև բարության ու իմաստության արտասովոր շնորհներով օժտված:

Բայց խնդիրն այն էր, որ իմ ծանոթությունը փաստերին հենց այդպիսին էր՝ թռուցիկ: Կարդացել էի այնքան փիլիսոփայություն ու պատմություն, որքան բավարար էր իմ սկեպտիցիզմը հաստատելու համար. մի փաստ այստեղից, մի տեսություն այնտեղից, մի ինչեղ մեջբերում, մի սրամիտ փաստարկ: Իհարկե, որոշ բացեր ու հակասություններ նկատել էի, բայց դրանք անտեսելու լուրջ պատճառ ունեի. եթե փոխեի իմ հայացքներն ու հետևեի Հիսուսին, պիտի հրաժարվեի իմ սովորական ու հարմարավետ կյանքից, որտեղ մտածում էի միայն իմ շահերի մասին և քիչ էի հոգում բարոյականության մասին:

Համարում էի, որ գործը փակված էր: Իմ ունեցած ապացույցներն ավելի քան բավարար էին եզրակացնելու համար, որ Հիսուսի աստվածությունը սնահավատ մարդկանց տարօրինակ հնարանք է:

Համենայն դեպս, այդպես էր թվում:

Պատասխաններ աթեիստի համար

Իրազեկիչի հեռախոսազանգը չէր, որ ինձ մղեց վերանայել Քրիստոսի «գործը»: Կինս էր:

1979-ի աշնանը Լեսլին ապշեցրեց ինձ՝ հայտարարելով, որ քրիստոնյա է դարձել: Զարմանքից քարացած պատրաստվեցի վատթարագույնին: Ինձ խաբված էի զգում: Վախենում էի, որ կենսուրախ, անլուրջ, անխոհեմ Լեսլին, որի հետ ամուսնացել էի, կվերածվի ինչ-որ սեռականորեն ճնշված, կեղծ բարեպաշտի, որը մեր եռանդուն ու աշխույժ կենսակերպը կփոխարինի ամբողջ գիշեր ձգվող աղոթքներով ու կամավոր աշխատանքով՝ մրոտ խոհանոցներում, որտեղ ապուր են եփում անօթևանների համար:

Փոխարենը, սակայն, հաճելիորեն զարմացա, նույնիսկ հիացա նրա բնավորության հիմնարար փոփոխություններով: Լեսլին դարձել էր ավելի

ազնիվ, ավելի շիտակ ու ինքնավստահ, և ես ուզեցի հասկանալ, թե որտեղից են ծագել աշխարհի և իր հանդեպ նրա վերաբերմունքի այս անորսալի, բայց էական փոփոխությունները: Ահա թե ինչու սկսեցի «քրիստոնեության գործի» հանգամանքների ամբողջական հետաքննությունը:

Մի կողմ դնելով իմ եսասիրությունն ու կանխակարծությունները՝ սկսեցի շատ կարդալ, զրուցել մասնագետների հետ, հարցեր տալ, վերլուծել պատմական իրադարձությունները, ուսումնասիրել հնագիտական գտածոներն ու հնագույն գրքերը: Կյանքում առաջին անգամ իսկապես կարդացի Աստվածաշունչը՝ լրջմտորեն, տող առ տող խորամուխ լինելով:

Այս հետաքննության մեջ խորասուզվեցի ավելի մեծ եռանդով, քան նախկինում որևէ այլ գործով զբաղվելիս: Ինձ շատ պետք եկան և՛ Եյլի իրավաբանության ֆակուլտետում ստացած գիտելիքներս, և՛ Chicago Tribune-ի իրավական հարցերով խմբագրի փորձս: Աստիճանաբար բոլոր ապացույցները՝ պատմական, գիտական, փիլիսոփայական, հոգեբանական, միավորվեցին՝ դառնալով մեկ ամբողջական պատկեր, որ առաջ երբեք չէի կարող պատկերացնել: Այն ամենը, ինչ ինձ թվում էր ակնհայտ, գլխիվայր շրջվեց, ինչպես Ջեյմս Դիքսոնի գործում:

Դատեք ինքներդ

Թերևս ձեր հոգևոր հայացքները ևս հիմնված են այն ամենի վրա, ինչ տեսել, կարդացել ու քաղել եք գրքերից, համալսարանի դասախոսներից, ընտանիքի անդամներից կամ ընկերներից: Վստահ եք, որ ձեր տեսակետը լավագույն կերպով է բացատրում փաստերը: Եթե ավելի խորանաք, մարտահրավեր նետեք ձեր կանխակարծություններին, ջանասիրաբար և նպատակաուղղված տրվեք ճշմարտության որոնումներին, ի՞նչ կգտնեք:

Այս գիրքը հենց դրա մասին է: Ուզում եմ նորից, քայլ առ քայլ ձեզ հետ անցնել այն հոգևոր ճանապարհը, որն ինձ համար տևեց մոտ երկու տարի: Դուք կլսեք 13 առաջատար գիտնականների վկայությունները, որոնց գիտական համբավն անբասիր է:

Մի քանի անգամ անցել եմ երկիրը ծայրից ծայր՝ Մինեսոտայից մինչև Ջորջիա, Վիրջինիայից մինչև Կալիֆոռնիա, որ նրանց մասնագիտական կարծիքը ստանամ, մարտահրավեր նետեմ նրանց այն առարկություննե-

թվայնացրել է 1915.info կայքը

րով, որոնք ունեի, երբ սկեպտիկ էի, ստիպեմ նրանց պաշտպանել իրենց տեսակետները ծանրակշիռ տվյալներով ու համոզիչ փաստարկներով, ուղղեմ այն նույն հարցերը, որոնք հնարավորության դեպքում դուք կտայիք:

Ճշմարտության այս որոնումներում շատ օգտակար եղավ իրավական լրագրողի իմ մասնագիտական փորձը, քանի որ ստիպված էի գործ ունենալ իրավական ապացույցների բոլոր տեսակների հետ՝ ականատեսների վկայություններ, փաստաթղթային ապացույցներ, հաստատող և հերքող ապացույցներ, գիտական փաստեր, հոգեբանական ապացույցներ, անուղղակի ապացույցներ, նույնիսկ մատնահետքեր (խորհրդավոր է հնչում, այնպես չէ՞):

Սրանք ապացույցների նույն տեսակներն են, որոնք սովորաբար հանդիպում են դատարանի դահլիճում: Ու ճանապարհը, որ ձեզ հետ պիտի անցնենք, դատավարություն է հիշեցնում, դատավարություն, որում ձեզ վերապահված է երդվյալ ատենակալի դերը:

Եթե ձեզ ընտրեին ատենակալ իրական դատավարության համար, նախ կխնդրեին հաստատել, որ քննվող գործի վերաբերյալ կանխակալ կարծիք չունեք: Ձեզանից կպահանջվեր երդվել, որ կլինեք անաչառ և արդար, որ ձեր եզրակացությունները հիմնված կլինեն օբյեկտիվ փաստերի, ոչ թե ձեր քմահաճության կամ նախապաշարումների վրա: Ձեզ կպարտավորեցնեին մանրակրկիտ և կշռադատված, դիմելով տրամաբանության և առողջ դատողության օգնությանը, գնահատել վկաների ցուցմունքների արժանահավատությունն ու փաստարկների հավաստիությունը: Նույնը ես եմ ձեզ խնդրում, որ անեք՝ այս գիրքը կարդալիս:

Ի վերջո, երդվյալ ատենակալներն են վճիռ կայացնում: Իհարկե, դա չի նշանակում, որ նրանք հարյուր տոկոսով վստահ են, որ իրենց որոշումը ճիշտ է: Այս կյանքում ոչինչ հաստատ չենք կարող իմանալ: Դատավարության ժամանակ ատենակալներին խնդրում են խնամքով ծանր ու թեթև անել բոլոր ապացույցներն ու հնարավոր ամենաճիշտ, ամենաարդար եզրակացությունն անել: Այլ խոսքով, վերադառնալով Ջեյմս Դիքսոնի գործին, նրանց խնդրում են անել եզրակացություններ, որոնք ամենից լավ կբացատրեն եղած փաստերը:

Սա է ձեր խնդիրը: Հուսով եմ, որ դրան լուրջ կվերաբերվեք, որովհետև, հնարավոր է, նժարին դրված է ավելին, քան պարապ հետաքրքրասիրությունը: Եթե Հիսուսին պետք է հավատալ, իսկ ես հիանալի հասկանում

թվայնացրել է 1915.info կայքը

եմ, որ ձեր կյանքի այս փուլում սա կարող է ձեզ համար մեծ «եթե» լինել, ապա ոչինչ ավելի կարևոր չէ, քան ձեր որոշումը:

Ուրեմն ո՞վ էր նա իրականում: Ի՞նչ էր նա պնդում իր մասին: Ունե՞նք նրա խոսքերը հաստատող ծանրակշիռ ապացույցներ: Ահա թե ինչ էի ուզում պարզել, երբ գնացի Դենվեր՝ առաջին հարցազրույցի:

թվայնացրել է 1915.info կայքը

ՄԱՍ 1

Արձանագրությունների քննություն

թվայնացրել է 1915.info կայքը

թվայնացրել է 1915.info կայքը

ԳԼՈՒԽ 1

Ականատեսների վկայությունները

Վստահելի՞ են Քրիստոսի կենսագրությունները

Երբ առաջին անգամ հանդիպեցի երկչոտ ու ցածրաձայն խոսող Լեո Քարթերին, նա 17 տարեկան էր, և բոլոր այդ տարիներն անցկացրել էր Չիկագոյի ամենամռայլ ու դաժան թաղամասում: Նրա ցուցմունքը երեք մարդասպանի էր բանտ նստեցրել: Ու դեռ 38 տրամաչափի փամփուշտ ուներ գանգի մեջ, չարագույժ հիշեցում այն ահ ու սարսափի մասին, որ սկսվեց նրա կյանքում այն պահից, երբ տեսավ, թե ինչպես Եղիա Բապտիստը գնդակահարեց տեղի նպարավաճառին:

Լեոն ու նրա ընկերը՝ Լեսլի Սքոթը, բասկետբոլ էին խաղում, երբ նկատեցին, որ Եղիան, որին 16 տարեկանում արդեն 30 անգամ ոստիկանությունը կալանավորել էր, սպանեց Սեմ Բլուին՝ իր մթերային խանութի մուտքի մոտ:

Լեոն նպարավաճառին ճանաչում էր մանկությունից: «Երբ ուտելու բան չէինք ունենում, նա տալիս էր,– հազիվ լսելի պատմում էր Լեոն: — Երբ գնացի հիվանդանոց նրան տեսնելու, և ինձ ասացին, որ նա մահացել է, հասկացա, որ պարտավոր եմ պատմել այն ամենի մասին, ինչ տեսել եմ»:

Ականատեսի վկայությունը հզոր ազդեցություն ունի: Դատավարության ամենալարված պահերից մեկն այն է, երբ հանցագործության վկան մանրամասն նկարագրում է տեսածն ու վստահ մատնացույց է անում մեղադրյալին, որպես հանցագործ: Եղիա Բապտիստը գիտեր, որ բանտից խուսափելու միակ միջոցն ականատեսների բերանը փակելն է: Նա և իր հանցակիցները հետևեցին Լեոյին ու Լեսլիին: Մի երեկո, երբ նրանք Լեոյի եղբոր՝ Հենրիի հետ քայլում էին փողոցով, ատրճանակի սպառնալիքով երեքին էլ քարշ տվեցին մոտակա կիսախավար նավանորոգարանը:

— Դու ինձ դուր ես գալիս,– Լեոյին դիմելով ասաց Եղիայի զարմիկը,– բայց ես պետք է անեմ դա:

Այս ասելով ատրճանակը սեղմեց Լեոյի քթարմատին ու ձգանը քաշեց:

Կրակոցը որոտաց, գնդակը թափանցեց շեղակի՝ զրկելով Լեոյին աջ աչքից ու խրվեց գլխի մեջ: Երբ Լեոն գետնին փլվեց, ևս մեկ կրակոց հնչեց: Այս անգամ գնդակը խրվեց նրա ողնաշարից 5 սմ այն կողմ:

Գետնին փռված, մեռած ձևանալով Լեոն տեսավ, թե ինչպես մարդասպանները դիմահար կրակոցով դաժանաբար գնդակահարեցին իր ընկերոջն ու հեծկլտացող եղբորը: Երբ Եղիան ու նրա ավազակախումբը փախան, Լեոն սողալով դուրս եկավ նավանորոգարանից:

Հակառակ բոլոր հանգամանքների՝ Լեո Քարթերն ինչ-որ կերպ ողջ մնաց: Գնդակը, որը հեռացնելը չափազանց վտանգավոր էր, մնաց գլխի մեջ: Չնայած սարսափելի գլխացավին, որը չէին մեղմում նույնիսկ ամենաուժեղ դեղամիջոցները, նա հանդես եկավ որպես հանցագործության միակ վկա դատավարությունում, որտեղ Եղիա Բապտիստը մեղադրվում էր նպարավաճառ Սեմ Բլուի սպանության համար: Ատենակալները հավատացին Լեոյին, ու Եղիան դատապարտվեց 80 տարվա բանտարկության:

Լեոն կրկին միակ վկան էր, որ կարող էր ցուցմունք տալ, որ իր եղբորն ու ընկերոջը սպանել է Եղիան՝ իր երկու գործակիցների հետ: Ու կրկին նրա վկայությունը բավարար եղավ, որ այդ եռյակին ցմահ բանտ նստեցնեն:

Լեո Քարթերն ինձ համար ընդմիշտ կմնա որպես քաղաքացիական խիզախության օրինակ: Նա արեց ամեն բան, որ արդարադատությունն ի կատար ածվի, թեև դրա համար շատ թանկ վճարեց: Ամեն անգամ, երբ մտածում եմ ականատեսի վկայության արժեքի մասին, նրա դեմքն է հայտնվում աչքերիս առաջ, նույնիսկ հիմա, այսքան տարի անց[1]:

Վկայություններ հեռավոր անցյալից

Այո՛, ականատեսի վկայությունը կարող է լինել համոզիչ ու անվիճարկելի: Եթե մարդն իր աչքով է տեսել, թե ինչպես է կատարվել հանցագործությունը, եթե չի առաջնորդվում կանխակալությամբ կամ ծածուկ շարժառիթներով, եթե ազնիվ է ու ճշմարտախոս, ապա դատարանի դահլիճում նրա ցուցմունքը կարող է բավական լինել մեղադրյալին ազատազրկելու կամ նույնիսկ մահապատժի դատապարտելու համար:

թվայնացրել է 1915.info կայքը

Ականատեսների վկայությունները նույնքան վճռորոշ են նաև պատմական հարցերի քննության ժամանակ, նույնիսկ այն հարցի, թե Հիսուս Քրիստոս Աստծո միածին Որդին է:

Բայց մենք ունենք ականատեսների ցուցմունքներ: Ունենք որևէ մեկի վկայությունը, նրա, ով անձամբ է շփվել Հիսուսի հետ, լսել նրա քարոզները, տեսել նրա գործած հրաշքները, ականատես եղել մահվանը և, հնարավոր է, նույնիսկ հանդիպել է նրան՝ նրա ենթադրյալ հարությունից հետո: Ունենք առաջին դարի «լրագրողների» գրառումներ, որոնք հարցուփորձ են արել ականատեսներին, տվել դժվար հարցեր, բծախնդրորեն պարզել ճշմարտությունն ու ազնվորեն գրանցել այն: Եվ, որ նույնքան կարևոր է, կդիմանայի՞ն այդ վկայությունները թերահավատների մանրազնին քննությանը:

Գիտեի, որ ճիշտ ինչպես Լեո Քարթերի վկայությունը վերջնականապես հաստատուն դարձրեց երեք մարդասպանների դատավճիռը, այնպես էլ դարերի խորքից ականատեսների պատմություններն են օգնելու վճռել ամենակարևոր հոգևոր հարցը: Պարզելու համար, թե գոյություն ունեն այդպիսի վկայություններ, պայմանավորվեցի հարցազրույցի համար դոկտոր Կրեյգ Բլոմբերգի հետ, որը գիրք է գրել ինձ այդքան հետաքրքրող թեմայով՝ «Ավետարանների պատմական հավաստիությունը»:

Գիտեի, որ Բլոմբերգը մեծ գիտնական է: Նույնիսկ նրա արտաքինն էր համապատասխանում մտավորականի մասին կարծրատիպային պատկերացմանը: Բարձրահասակ (1.85 մետր), նիհար, կարճ, ալիքաձև, շագանակագույն մազերով, որ անփույթ առաջ էին սանրած, գանգուր մորուքով ու հաստ, առանց շրջանակի ակնոցով. նա նման էր այն մարդուն, որը քոլեջի լավագույն շրջանավարտը կլիներ (այդպես էլ կար), պետական կրթաթոշակառու (այդպես էլ կար) ու հեղինակավոր աստվածաբանական ուսումնական հաստատությունների գերազանցության դիպլոմով շրջանավարտ (այդպես էլ կար, նա ավարտել էր Թրինիթիի Ավետարանական աստվածաբանական դպրոցը):

Բայց ես փնտրում էի ոչ թե պարզապես խելացի ու կիրթ մարդու, այլ իսկական մասնագետի, իր գործի գիտակի, որը չէր շրջանցի սայթաքուն թեմաներն ու խույս չէր տա քրիստոնեության պատմության տարեգրությանն առնչվող բարդ հարցերից: Ինձ պետք էր մի ճշմարտախոհ ու շիտակ մարդ, որը մեկ անգամ չէ, որ պաշտպանել էր իր հավատն ամենաազդեցիկ

քննադատներից, որը խոսում է համոզիչ, բայց ոչ կտրական, որը մի կողմ չի թողնում քննադատական դիտողությունները, այլ ազնվորեն պատասխանում է դրանց:

Ինձ ասացին, որ Բլոմբերգը հենց այդպիսի մարդ է, ու Դենվեր գնալու ճանապարհին շարունակ մտածում էի՝ հանդիպումը նրա հետ կարդարացնի՞ իմ սպասելիքները: Պետք է ասեմ, որ կասկածելու որոշ հիմքեր ունեի: Երբ հարցումներ էի անում Բլոմբերգի մասին, ջրի երես դուրս եկավ մի փաստ, որն ինքը հավանաբար կնախընտրեր թաքցնել: Բլոմբերգը հույս էր փայփայում, որ իր կյանքի ընթացքում Chicago Cubs-ին կհաջողվի հաղթել ԱՄՆ բեյսբոլի առաջնությունը:

Անկեղծ ասած, այդքանը բավական էր, որ մի փոքր կասկածեմ նրա ողջամտությանը, մինչև որ Chicago Cubs-ի հաղթանակը 2016-ին ապացուցեց, որ Բլոմբերգն ավելի լավ մարգարե է, քան ես:

1-ԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Կրեյգ Լ. Բլոմբերգ, փիլիսոփայության դոկտոր

Կրեյգ Բլոմբերգը համարվում է չորս ավետարանների՝ Հիսուսի կենսագրությունների, առաջատար ամերիկյան հետազոտողներից մեկը: Նոր Կտակարանի վերաբերյալ իր դոկտորական ատենախոսությունը պաշտպանել է Աբերդինի համալսարանում (Շոտլանդիա), հետագայում աշխատել է որպես ավագ գիտաշխատող Քեմբրիջի համալսարանի Թինդլ Հաուս հրատարակչությունում, որտեղ տարբեր երկրների լավագույն մասնագետների հետ մասնակցել է Հիսուս Քրիստոսի մասին գրքերի հայտնի շարքի ստեղծմանը: Վերջին տասնամյակում Նոր Կտակարան է դասավանդել մեծ հեղինակություն վայելող Դենվերի սեմինարիայում:

«Ավետարանների պատմական հավաստիությունը» աշխատությունից բացի՝ Բլոմբերգի գրքերի թվին են պատկանում «Հովհաննեսի ավետարանի պատմական հավաստիությունը», «Հիսուս և ավետարանները», «Առակների մեկնությունը», «Դեռ կարո՞ղ ենք հավատալ Աստվածաշնչին» և Մատթեոսի ավետարանի ու Կորնթացիներ 1-ի մեկնաբանությունները: Նա նաև օգնել է խմբագրել «Ավետարանական տեսակետների» 6-րդ

թվայնացրել է 1915.info կայքը

հատորը, որը ծավալուն անդրադառնում է Հիսուսի հրաշքներին, համահեղինակել է «Աստվածաշնչյան մեկնության ներածությունը» և «Նոր Կտակարանի մեկնության ձեռնարկը»: Գրել է «Հիսուս կրակի տակ» մրցանակակիր գրքի՝ ավետարանների պատմականությանը վերաբերող գլուխները: Նոր Կտակարանի հետազոտության ընկերության, Աստվածաշնչյան գրականության ընկերության ու Աստվածաշնչյան հետազոտությունների ինստիտուտի անդամ է:

Ինչպես սպասում էի, նրա աշխատասենյակը լեփ-լեցուն էր գրքերով: Ծավալուն աշխատությունները հազիվ էին տեղավորվում գրադարակներում, նույնիսկ Բլոմբերգի փողկապն էր նախշազարդված գրքերի նկարներով:

Այդուհանդերձ, անմիջապես նկատեցի, որ գրասենյակի պատերը զարդարում էին ոչ միայն անտիկ պատմաբանների փոշոտ հատորները, այլև Բլոմբերգի փոքրիկ աղջիկների ստեղծագործությունները: Արտասովոր ու վառ նկարները, որ պատկերում էին գազանիկներ, տնակներ ու ծաղիկներ, փակցված էին ոչ թե անփութորեն՝ ինչպես պատահի, այլ խնամքով տեղադրված էին շրջանակների մեջ, լավագույն տեղերում, և յուրաքանչյուր նկարի անկյունում աչքի էր զարնում հեղինակի ստորագրությունը՝ Էլիզաբեթ կամ Ռեյչել: Այս մարդն ակնհայտորեն խելքից բացի սիրտ էլ ունի՝ մտածեցի:

Բլոմբերգը խոսում է մաթեմատիկական ճշգրտությամբ (այո, այո, իր գործունեության ավելի վաղ տարիներին նա նաև մաթեմատիկա էր դասավանդում)՝ հանգամանորեն կշռադատելով յուրաքանչյուր բառը, չուզենալով բաց թողնել ապացույցների շղթայի որևէ, թեկուզ ամենափոքր օղակը: Հենց այն է, ինչ փնտրում էի:

Մինչ նա սուրճի բաժակը ձեռքին տեղավորվեց բազկաթոռին, ես նույնպես մի քանի կում արեցի սուրճից, որ դիմակայեմ Կոլորադոյի ցրտին: Քանի որ զգացել էի, որ Բլոմբերգը գործի մարդ է, որոշեցի հարցազրույցս սկսել խնդրի բուն էության մեջ թափանցող հարցով*:

---

* Բոլոր հարցազրույցների բովանդակությունը խմբագրված է հակիրճության ու հստակության համար (բոլոր ծանոթագրությունները՝ հեղինակի):

Պատմության ականատեսները

— Ասացեք ինձ,– սկսեցի ես՝ ձայնիս մարտահրավերի երանգ հաղորդելով,– միթե խելամիտ, քննադատաբար մտածող մարդը կարող է հավատալ, որ չորս ավետարանները գրել են մարդիկ, որոնց անուններն ամրակցված են դրանց:

Բլոմբերգը սուրճի բաժակը դրեց գրասեղանի եզրին, սևեռուն նայեց ինձ ու համոզված պատասխանեց.

— Այո՛:

Նա հետ նստեց ու շարունակեց.

— Կարևոր է ընդունել, որ, խստորեն ասած, ավետարաններն անանուն են: Բայց վաղ եկեղեցին միաձայն վկայում է, որ Մատթեոսը, որը հայտնի էր նաև Ղևի անունով, հարկահավաքն ու 12 աշակերտներից մեկը, գրել է Նոր Կտակարանի առաջին ավետարանը: Հովհաննես Մարկոսը՝ Պետրոսի ուղեկիցը, գրել է այն ավետարանը, որն անվանում ենք Ավետարան ըստ Մարկոսի: Եվ Ղուկասը, որին Պողոսն անվանում է «սիրելի բժիշկ», գրել է Ղուկասի ավետարանը և «Գործք առաքելոցը»:

— Այնուամենայնիվ, որքանո՞վ էր համոզմունքը միաձայն, որ հեղինակները նրանք են,– հարցրի:

— Պատմությանը հայտնի չեն այլ մարդիկ, որոնք կարող են համարվել այս երեք ավետարանների հեղինակները,– ասաց նա: — Ակնհայտորեն, դրանց հեղինակությունն ուղղակի չի վիճարկվել:

Նույնիսկ եթե այդպես էր, ուզում էի լրացուցիչ քննել հարցը:

— Ներեցեք ինձ թերահավատության համար,– ասացի,– միթե չէր կարող պատահել այնպես, որ ինչ-որ մեկը միայն իրեն հայտնի շարժառիթներով ավետարանների հեղինակությունը վերագրեր մարդկանց, որոնք իրականում չեն գրել դրանք:

Բլոմբերգը տարուբերեց գլուխը:

— Քիչ հավանական է: Ինքներդ մտածեք,– քմծիծաղ տվեց նա,– ինչպե՞ս է ներկայացնել առավել անհամապատասխան թեկնածուներ: Մարկոսն ու Ղուկասը նույնիսկ առաքյալներ չէին: Մատթեոսը, ճիշտ է, եղել է, բայց որպես նախկին ատելի հարկահավաք, նա կլիներ ամենատխրահռչակ կերպարը Հուդա Իսկարիովտացուց հետո, որը դավաճանեց Հիսուսին: Համեմատեք սա նրա հետ, թե ինչ պատահեց, երբ ավելի ուշ

թվայնացրել է 1915.info կայքը

մտացածին, պարականոն ավետարաններ գրվեցին: Ժողովուրդը դրանց հեղինակ լինելը վերագրել էր նշանավոր ու տիպարային դեմքերի՝ Փիլիպոս, Պետրոս, Մարիամ, Հակոբոս: Այդ անունները շատ ավելի ծանրակշիռ էին, քան Մատթեոսի, Մարկոսի ու Ղուկասի անունները: Այնպես որ, ժամանակակիցները պատճառ չունեին հեղինակությունը վերագրել այս երեք՝ պակաս հարգված մարդկանց, եթե դա իրականությունը չէր:

Տրամաբանական էր հնչում, բայց զրուցակիցս ինչ-ինչ պատճառով չհիշատակեց չորրորդ ավետարանիչին:

— Իսկ Հովհաննեսը,– հարցրի: — Նա չափազանց նշանավոր էր: Չէ՞ որ նա պարզապես 12-ից մեկը չէր, Հակոբոսի ու Պետրոսի հետ միասին նա Հիսուսի ամենամոտ աշակերտներից էր:

— Այո՛,– գլխով արեց Բլոմբերգը: — Միակ բացառությունը նա է: Ու հետաքրքիր է, որ Հովհաննեսինը միակ ավետարանն է, որի հեղինակի առնչությամբ որոշ կասկած կա:

— Կոնկրետ ի՞նչն է վիճահարույց:

— Հեղինակի անունը կասկած չի հարուցում, հաստատ Հովհաննես է,– պատասխանեց Բլոմբերգը: — Հարցն այն է, թե որ մեկն է հեղինակը՝ Հովհաննես առաքյա՞լը, թե՞ մեկ այլ Հովհաննես: Տեսեք, քրիստոնյա հեղինակ Պապիասը մոտ 125 թվականին հիշատակում է Հովհաննես առաքյալին ու Հովհաննես ավագին, և պարզ չէ՝ նա խոսում է երկու տարբե՞ր մարդկանց, թե՞ միևնույն մարդու մասին, բայց տարբեր տեսանկյուններից: Սա միակ բացառությունն է: Վաղ եկեղեցու մյուս բոլոր վկայությունները միաձայն հաստատում են, որ ավետարանը գրել է Հովհաննես առաքյալը՝ Զեբեդեոսի որդին:

— Ինքներդ համոզվա՞ծ եք, որ նա էր,– ասացի՝ ջանալով նրան պատին դեմ անել:

— Այո՛, հավատացած եմ, որ նյութի զգալի մասը առաքյալից է սկիզբ առնում: Այնուամենայնիվ, ուշադիր կարդալով Հովհաննեսի ավետարանը, կարելի է ենթադրել, որ վերջին տողերը, հավանաբար, խմբագիր է մշակել: Խնդիր չեմ տեսնում նրանում, որ Հովհաննեսի հետ սերտ կապեր ունեցող մեկը կարող էր կատարել այդ դերը՝ ավարտուն տեսքի բերելով վերջին տողերն ու ամբողջ փաստաթղթի ոճական միասնությունը: Բայց, ամեն պարագայում,– ընդգծեց Բլոմբերգը,– ակնհայտ է, որ այս ավետարանը, ինչպես մյուս երեքը, հիմնված է ականատեսների վկայությունների վրա:

թվայնացրել է 1915.info կայքը

Խորանում ենք մանրամասների քննության մեջ

Թեև գնահատեցի Բլոմբերգի մեկնաբանությունները, դեռ պատրաստ չէի առաջ շարժվել: Հարցը, թե ով է գրել ավետարանները, վիթխարի նշանակություն ունի, ու ինձ կոնկրետ մանրամասներ էին պետք՝ անուններ, տարեթվեր, մեջբերումներ: Սուրճս ավարտեցի ու բաժակը գրասեղանին դրեցի: Գրիչը ձեռքիս պատրաստվեցի ավելի խորը փորել:

— Վերադառնանք Մարկոսին, Մատթեոսին ու Ղուկասին,– ասացի: — Ինչ կոնկրետ փաստեր ունեք, որ նրանք են ավետարանների հեղինակները:

Բլոմբերգն առաջ հակվեց:

— Ամենահին ու թերևս ամենանշանակալի, կարևոր վկայությունը գալիս է նույն Պապիասից, որը Ք. հ. մոտ 125 թվականին կոնկրետ հաստատեց, որ Մարկոսը խնամքով ու ճշգրիտ գրառել է Պետրոսի՝ ականատեսի դիտարկումները: Ավելի ստույգ, Պապիասը գրել է, որ Մարկոսը «չունի ոչ մի սխալ ու ոչ մի կեղծ պնդում»: Նաև գրել է, որ Մատթեոսը պահպանեց Հիսուսի ուսմունքներն անփոփոխ: Ավելի ուշ, մոտ 180 թվականին, Իրենեոսը հաստատեց ավետարանները հեղինակելու ավանդական տարբերակը: Ահա տեսեք:

Նա ձեռքը մեկնեց հատորին և բացելով այն կարդաց Իրենեոսի բառերը:

«Մատթեոսը հրապարակեց իր սեփական ավետարանը հրեաների միջավայրում, նրանց լեզվով, մինչդեռ Պետրոսն ու Պողոսը Հռոմում էին քարոզում ավետարանն ու հիմնում եկեղեցին: Նրանց մեկնելուց հետո Մարկոսը՝ Պետրոսի աշակերտն ու թարգմանիչը, մեզ գրավոր փոխանցեց այն, ինչ քարոզում էր Պետրոսը: Իսկ Ղուկասը՝ Պողոսի ուղեկիցը, գրքի մեջ շարադրեց նրա քարոզած ավետարանը: Այնուհետև Հովհաննեսը՝ Տիրոջ աշակերտը, որը նաև հակվել էր նրա կրծքին, նույնպես հրապարակեց ավետարանը, Ասիայի Եփեսոսում գտնվելու ժամանակ»[2]:

Հայացքս բարձրացրի իմ գրառումներից և ասացի.

— Լավ, թույլ տվեք հստակեցնել: Եթե լիովին համոզված ենք, որ ավետարանները գրել են Մատթեոս և Հովհաննես առաքյալները, Պետրոս առաքյալի օգնականը՝ Մարկոսը, և Պողոս առաքյալի ուղեկից, պատմա-

թվայնացրել է 1915.info կայքը

բան Ղուկասը՝ առաջին դարի մի յուրատեսակ լրագրող, ապա կարող ենք վստահ լինել, որ իրադարձությունները, որոնք նրանք արձանագրում են, հիմնված են ականատեսների ուղղակի կամ անուղղակի վկայությունների վրա: Այդպես է:

Բլոմբերգը լսեց այս երկարաշունչ խոսքը շատ ուշադիր՝ ոչ մի բառ բաց չթողնելով: Երբ ավարտեցի, գլխով արեց ու հաստատապես ասաց:

— Հենց այդպես:

Կենսագրություններ՝ հնագույն և ժամանակակից

Այնուամենայնիվ, ավետարանների հարցում ինձ ամեն բան պարզ չէր: Մասնավորապես, ուզում էի հասկանալ, թե ինչ գրական ժանրի պետք է դրանք դասել:

— Գրախանութներում, կենսագրությունների բաժնում, տեսնում ենք գրքեր, որոնք ավետարաններից տարբեր են գրված,– ասացի ես: — Այսօր, երբ որևէ մեկը կենսագրություն է գրում, փորձում է պարզել իր հերոսի կյանքի բոլոր մանրամասները: Բայց նայե՛ք Մարկոսին: Նա մեզ ոչինչ չի ասում Հիսուսի ծննդյան մասին և շատ քիչ բան է ասում նրա վաղ տարիներից: Նա ամբողջ ուշադրությունը կենտրոնացնում է Հիսուսի հասուն կյանքի եռամյա շրջանի վրա: Իսկ ավետարանի կեսը նվիրված է Նրա կյանքի վերջին շաբաթվան անմիջապես նախորդած իրադարձություններին, և, ըստ էության, այդ շաբաթվա նկարագրությունն է: Ինչպե՞ս կբացատրեք դա:

— Երկու պատճառ կա,– ասաց Բլոմբերգը՝ երկու մատները բարձրացնելով,– գրական և աստվածաբանական: Գրական բացատրությունն այն է, որ հնում կենսագրություններն այդպես էին գրվում: Այն ժամանակ մարդիկ, ի տարբերություն մեզ, հարկ չէին համարում հավասար տեղ հատկացնել հերոսի կյանքի բոլոր շրջաններին, նկարագրել այն խիստ ժամանակագրական հաջորդականությամբ կամ նույնիսկ բառացի մեջբերումներ անել: Բավական էր միայն ասվածի էությունը փոխանցել: Հին հույներն ու հրեաները նույնիսկ մեր չակերտներին համարժեք նշաններ չունեին: Պատմական տարեգրությունների նպատակը մեկն էր՝ խրատ սերունդներին: Ահա ինչու կենսագիրները մանրամասն անդրադառնում

թվայնացրել է 1915.info կայքը

էին մարդու կյանքի այն իրադարձություններին, որոնք համարում էին կարևոր, ընդօրինակելի, օգտակար՝ ընթերցողների համար կամ պատմական շրջանին առանձնահատուկ նշանակություն հաղորդող:

— Իսկ ո՞րն է աստվածաբանական պատճառը,– հարցրի:

— Այն բխում է իմ վերջին պնդումից: Քրիստոնյաները հավատում են, որ, որքան էլ հրաշալի են եղել Քրիստոսի կյանքը, ուսմունքն ու հրաշքները, դրանք իմաստ ունեն միայն այն պատճառով, որ Հիսուս իրականում մահացավ ու Հարություն առավ մեռելներից՝ քավելով կամ ներելով մարդկության մեղքերը: Ահա թե ինչու Մարկոսը՝ առաջին ավետարանի հեղինակը, իր պատմության գրեթե կեսը նվիրում է Հիսուսի կյանքի վերջին շաբաթվան, մահվան ու հարությանը: Հին գրականության համար դա միանգամայն տրամաբանական է,– եզրափակեց Բլոմբերգը,– եթե հաշվի առնենք Խաչելության նշանակությունը:

Q-ի առեղծվածը

Հետազոտողները հաճախ դիմում են ոչ միայն ավետարաններին, այլև, այսպես կոչված, Q-ին (գերմաներեն Quelle բառի առաջին տառն է, նշանակում է «աղբյուր»)[3]: Լեզվի ու բովանդակության նմանությունների պատճառով ավանդաբար համարվում է, որ Մատթեոսն ու Ղուկասը, իրենց ավետարանները գրելիս, օգտվել են Մարկոսի՝ ավելի վաղ գրված ավետարանից: Բայց գիտնականները պնդում են, որ Մատթեոսն ու Ղուկասը տեղեկություն են քաղել նաև այս խորհրդավոր Q-ից, տեղեկություն, որ չկա Մարկոսի ավետարանում:

— Ի՞նչ է Q-ն,– հարցրի Բլոմբերգին:

— Վարկած, ոչ ավելին,– պատասխանեց՝ նորից հարմար հետ ընկնելով իր բազկաթոռին: — Մի քանի բացառություններով, խոսքը Հիսուսի միայն մի քանի ասույթների կամ քարոզների մասին է, որոնք նախկինում թերևս առանձին, ինքնուրույն փաստաթուղթ էին: Նկատի ունեցեք, այդ ժամանակներում պատվելի ուսուցիչների ասույթները շատ տարածված գրական ժանր էին, ինչպես որ հիմա են ընտրում մեկ երաժշտի լավագույն երգերը տարբեր ալբոմներից ու Ոսկե սկավառակ թողարկում: Q-ն հավանաբար նման մի բան է եղել: Համենայն դեպս, կա նման վարկած:

թվայնացրել է 1915.info կայքը

Բայց եթե այդ Q-ն գոյություն ուներ Մատթեոսի ու Ղուկասի ավետարաններից առաջ, ուրեմն պարունակել է ավելի վաղ շրջանի տեղեկություններ Հիսուսի մասին: Գուցե դա նոր լույս սփռի, թե ինչպիսին է իրականում եղել Հիսուս:

— Թույլ տվեք հարցնել,– ասացի,– եթե վերցնենք միայն այն տեղեկությունը, որը ենթադրաբար պարունակում էր Q-ն, ինչպիսի՞ Հիսուս կտեսնենք:

Բլոմբերգը շոյեց մորուքն ու հայացքը հառեց առաստաղին:

— Դե, սկսենք նրանից, որ Q-ն ասույթների ժողովածու է, հետևաբար չի պարունակում պատմողական նյութ, որը կօգներ մեզ ավելի լիարժեք պատկերացնել Հիսուսին,– պատասխանեց դանդաղ, ամեն բառը խնամքով ընտրելով: — Բայց, ամեն դեպքում, Հիսուս հայտնի է մեզ Իր մասին չափազանց համարձակ հայտարարություններով, օրինակ՝ որ ինքն իմաստությունն է՝ անձնավորված, ու որ Աստված իրենով է դատելու մարդկությանը՝ անկախ նրանից՝ ընդունո՞ւմ են իրեն, թե՞ մերժում: Վերջերս մի լուրջ գիտական գրքում արտահայտվեց այն միտքը, որ եթե ի մի բերենք Q-ի բոլոր ասույթները և վերլուծենք, կստացվի Հիսուսի նույն պատկերը, նրա, ով իր մասին հանդուգն պնդումներ է անում, ինչը կարելի է ավելի ընդհանրացված գտնել ավետարաններում:

Ուզում էի շարունակել և զարգացնել այս թեման:

— Նա հրաշագործ էր:

— Հրաշքների պատմություններ, որպես այդպիսին, շատ չեք գտնի,– ասաց,– դրանք սովորաբար հանդիպում են պատմություններում, իսկ Q-ն գլխավորապես ասույթների ժողովածու է:

Նա դադար տվեց, գրասեղանի վրայով ձգվեց, վերցրեց կաշեկազմ Աստվածաշունչն ու խշխշացնելով թերթեց հաճախ կարդալուց մաշված էջերը:

— Ահա, օրինակ, Ղուկասի 7:18-23-ում և Մատթեոսի 11:2-6-ում ասվում է, որ Հովհաննես Մկրտիչն իր պատգամաբերներին ուղարկում է Հիսուսի մոտ, որ հարցնեն, թե նա իսկապե՞ս Քրիստոսն է՝ Փրկիչը, որին սպասում են: Հիսուս պատասխանում է՝ ասելով, որ խորհի իր հրաշքների մասին. «Գնացեք, պատմեցեք Հովհաննեսին, ինչ որ լսեցիք և տեսաք. կույրերը տեսնում են, կաղերը՝ քայլում, բորոտները՝ մաքրվում, խուլերը՝ լսում, մեռելները՝ հառնում, աղքատներին քարոզվում է բարի լուրը»:

թվայնացրել է 1915.info կայքը

Այնպես որ,– եզրափակեց Բլոմբերգը,– նույնիսկ Q-ից պարզ է դառնում, որ Հիսուս հրաշքներ է գործել:

Երբ լսեցի Մատթեոսի ավետարանի մասին, հիշեցի, որ պատրաստվում էի ևս մեկ հարց տալ կենսագրությունների կառուցվածքի վերաբերյալ:

— Ինչո՞ւ,– հարցրի,– Մատթեոսը, որ, ասում են, Հիսուսին իր աչքով է տեսել, իր ավետարանում պիտի ներառեր Մարկոսի գրած ավետարանից մաս, եթե Մարկոսը, բոլորի համոզմամբ, իր նկարագրած իրադարձությունների ականատեսը չէր: Եթե Մատթեոսի ավետարանն իսկապես գրել է ականատեսը, ապա ավելի խելամիտ չէ՞ր լինի, որ ինքն իր տեսածի մասին գրեր:

Բլոմբերգը ժպտաց:

— Դա միայն մեկ բացատրություն կարող է ունենալ. Մարկոսն իր պատմության հիմք է ընդունել ականատես Պետրոսի հիշողությունները: Իսկ Պետրոսը, ինչպես ինքներդ նշեցիք, Հիսուսի ամենամոտ աշակերտների նեղ շրջանակից էր: Նա տեսնում ու լսում էր այն, ինչ չէին տեսնում ու լսում մյուս առաքյալները: Այսպիսով, Մատթեոսը, թեև ինքն էլ եղել է իրադարձությունների ականատես, հիմնավոր պատճառներ ուներ վստահելու Պետրոսի տարբերակին, որ շարադրել էր Մարկոսը:

Հիմնավոր է ինչում, մտածեցի: Հիշեցի մի պատմություն իմ լրագրողական տարիներից: Լրագրողների մի մեծ խումբ, այդ թվում՝ ես, շրջապատել էր այժմ հանգուցյալ քաղաքապետ Ռիչարդ Դեյլիին՝ Չիկագոյի հայտնի քաղաքական «նահապետին», ու հարցերի տարափ էր տեղում մի սկանդալի մասին, որ հասունանում էր ոստիկանական բաժանմունքում: Մինչև ճեղքելով կհասներ իր լիմուզինին, Դեյլին մի քանի արտահայտություն արեց:

Թեև այդ իրադարձության ականատեսն էի, լսեցի այդ արտահայտությունները, այնուամենայնիվ, անմիջապես մոտեցա Դեյլիին ավելի մոտ կանգնած մի ռադիոլրագրողի ու խնդրեցի թույլ տալ լսել հենց նոր ասվածի ձայնագրությունը: Ուզում էի համոզվել, որ նրա խոսքերը ճիշտ եմ գրառել:

Այդպես է, հավանաբար, վարվել նաև Մատթեոսը: Նա առաքյալ էր և ինքն էլ շատ բան էր հիշում, բայց, ձգտելով անբասիր ճշգրտության, դիմեց Մարկոսի ավետարանին, չէ՞ որ այն պարունակում էր տեղեկություններ, որոնք ուղղակիորեն գալիս էին Պետրոսից՝ Հիսուսի մերձավոր շրջանակից:

թվայնացրել է 1915.info կայքը

Հովհաննու ավետարան. եզակի տեսանկյուն

Լիովին բավարարված Բլոմբերգի պատասխաններից՝ առաջին երեք ավետարանների վերաբերյալ (դրանք կոչվում են նաև սինոպտիկ՝ համատես ավետարաններ, քանի որ ունեն միանման շարադրանք, ընդհանուր տեսանկյուն և փոխադարձ կապ)[4], ուշադրությունս դարձրի Հովհաննեսի ավետարանին: Կարդալով բոլոր չորս ավետարանները՝ չեք կարող չնկատել, թե որքան տարբեր է Հովհաննեսի ավետարանը մյուսներից: Ուզում էի իմանալ, դա նշանակում է, որ դրանց միջև կա՞ն սկզբունքային հակասություններ:

— Կարո՞ղ եք բացատրել, թե Հովհաննեսի ավետարանն ինչով է տարբերվում համատես ավետարաններից,– հարցրի Բլոմբերգին:

Նրա հոնքերը վեր ձգվեցին:

— Շա՛տ ծավալուն հարց է,– բացականչեց նա: — Հուսով եմ՝ մի օր այդ թեմայով մի ամբողջ գիրք կգրեմ:

Երբ վստահեցրի, որ ինձ միայն հարցի հիմնական էությունն է հետաքրքրում, ոչ թե սպառիչ քննություն եմ ակնկալում, նա նորից հարմարավետ տեղավորվեց իր աթոռին:

— Իսկապես, ավելի շատ տարբերություններ կան, քան նմանություններ Հովհաննեսի և համատես ավետարանների միջև,– սկսեց նա: — Առաջին երեք ավետարաններում պատմված բոլոր իրադարձություններից շատ քչերն են հայտնվում Հովհաննեսի ավետարանում, սակայն դրությունը նկատելիորեն փոխվում է, երբ խոսքը հասնում է Հիսուսի կյանքի վերջին շաբաթվան: Այդ պահից սկսած՝ ավելի ակնհայտ զուգահեռներ կան: Շատ տարբեր է նաև Հովհաննեսի պատմելու ոճը: Այս ավետարանում Հիսուս այլ բառեր է գործածում, Նրա քարոզներն ավելի երկար են դառնում: Բացի այդ, այս Ավետարանին բնորոշ է առանձնահատուկ, ավելի բարձր քրիստոսաբանություն, այսինքն՝ ավելի ուղիղ ու բացահայտ են պնդումները, որ Հիսուս մեկ է Հոր՝ Աստծո հետ, Ճանապարհն է, Ճշմարտությունն ու Կյանքը, Հարությունն ու Կյանքը:

— Ինչո՞վ են բացատրվում այս տարբերությունները,– հարցրի:

— Երկար տարիներ ենթադրվում էր, որ Հովհաննեսը գիտեր այն ամենը, ինչ գրել են Մատթեոսը, Մարկոսն ու Ղուկասը, և կրկնելու կարիք չի տեսել, ուստի միտումնավոր որոշել է լրացնել դրանք: Հետագայում առաջ

եկավ մեկ այլ տեսակետ. այս ավետարանի անկախությունը մյուս երեքից բացատրվում է ոչ միայն նյութի տարբեր ընտրությամբ, այլև Հիսուսի մասին տարբեր տեսակետով:

Հիսուսի ամենահամարձակ պնդումը

— Բայց Հովհաննեսի ավետարանում որոշ աստվածաբանական տարբերություններ կան,– նկատեցի:

— Անկասկած, բայց արժի՞ դրանք հակասություններ անվանել: Ինձ թվում է՝ ոչ, ահա թե ինչու. Հովհաննեսի ավետարանի գրեթե յուրաքանչյուր թեմայի կամ առանձնահատկության զուգահեռը կարելի է գտնել Մատթեոսի, Մարկոսի ու Ղուկասի մոտ, թեկուզ դրանք այնքան էլ շատ չեն:

Դա համարձակ պնդում էր: Ես արագ որոշեցի այն քննության ենթարկել՝ բարձրացնելով Հովհաննեսի և համատես ավետարանների տարբերությունների վերաբերյալ թերևս ամենակարևոր հարցը:

— Հովհաննեսը շատ պարզ ու որոշակի պնդում է, որ Հիսուս Աստված է: Ոմանք դա բացատրում են նրանով, որ նա գրել է ավելի ուշ, քան մյուս ավետարանիչները, ու սկսել է չափազանցնել իրադարձությունները,– ասացի ես: — Նրա աստվածության թեման կա՞ համատես ավետարաններում:

— Այո, կա,– ասաց նա: — Ոչ այնքան ակնհայտ, բայց կա: Հիշեք, թե ինչպես էր Հիսուս քայլում ջրի վրայով Մատթեոս 14:22-23-ում ու Մարկոս 6:45-52-ում: Անգլերեն թարգմանությունների մեծ մասը թաքցնում է հունարենը՝ մեջբերելով Հիսուսին, որն իբր ասում է. «Քաջալերվե՛ք: Այդ ես եմ»: Իրականում հունարենը բառացի ասում է. «Մի՛ վախեցեք: Ես ԵՄ»: Ճիշտ այդպես՝ «Ես ԵՄ»: Նա հայտարարում է Իր Աստվածությունը Հովհաննես 8:58-ում, քանի որ Աստված այս նույն բառերով հայտնվեց Մովսեսին անկեզ մորենու թփից Ելից 3:14-ում: Ահա թե ինչպես է Հիսուս հայտնում, որ Նա ունի նույն աստվածային իշխանությունը, ինչ Յահվեն՝ Հին կտակարանի Աստված:

Գլխով արեցի և ասացի.

— Սա ընդամենը մեկ օրինակ է: Կա՞ն ուրիշներ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Այո, կարող ենք երկար խոսել այս մասին,– ասաց Բլոմբերգը: — Օրինակ՝ առաջին երեք ավետարաններում Հիսուս ամենից հաճախ Իրեն անվանում է Մարդու Որդի, և...

Բարձրացրի ձեռքս՝ նրան ընդհատելով:

— Սպասե՛ք:

Պայուսակիցս հանեցի մի գիրք և գտա ինձ անհրաժեշտ մեջբերումը:

— Քարեն Արմսթրոնգը՝ նախկին միանձնուհին և «Աստծո պատմությունը» հանրածանոթ գրքի հեղինակը, ասում է, որ «Մարդու Որդի» եզրույթն ավելի շուտ «պարզապես ընդգծում է մարդու թուլությունն ու մահկանացու լինելը», ուրեմն այն օգտագործելով Հիսուս ուղղակի շեշտում էր, որ «ինքը տկար մարդ արարած է, որը մի օր տառապելու և մեռնելու է»[5]: Եթե դա այդպես է, ապա այնքան էլ նման չէ աստվածության պնդման:

Բլոմբերգը վրդովված մռայլվեց:

— Լսե՛ք,– ասաց վճռական,– հակառակ տարածված կարծիքի՝ «Մարդու Որդի» արտահայտությունը գլխավորապես Հիսուսի մարդեղությանը չի վերաբերում: Դա ուղիղ հղում է Դանիել 7:13–14–ին:

Սա ասելով բացեց Հին կտակարանն ու կարդաց Դանիել մարգարեի այդ բառերը:

> Գիշերվա տեսիլքներում տեսա, որ ահա երկնքի ամպերով մեկը եկավ մարդու Որդու նման, եկավ դեպի Հինավուրցը և նրան ներկայացվեց: Եվ Նրան տրվեցին իշխանություն, փառք և թագավորություն, որպեսզի բոլոր ժողովուրդները, ազգերը և լեզուները նրան ծառայեն: Նրա իշխանությունը հավիտենական իշխանություն է, որ չի անցնելու, և Նրա թագավորությունը չի կործանվելու:

Բլոմբերգը փակեց Աստվածաշունչը:

— Հիմա հասկանո՞ւմ եք, թե ինչ իմաստով Հիսուս իրեն անվանեց Մարդու Որդի,– շարունակեց նա: — Մարդու Որդին Նա է, Ով մոտենում է Աստծուն իր երկնային գահասենյակում և տիրապետություն է ստանում գոյություն ունեցող ամեն ինչի վրա: Սրանով «Մարդու Որդին» դառնում է մեծ բարձրացման տիտղոս, այլ ոչ պարզապես մարդեղության:

թվայնացրել է 1915.info կայքը

Ավելի ուշ հանդիպեցի մեկ այլ գիտնականի նմանատիպ դիտարկմանը: Նրանից շուտով այս գրքի համար հարցազրույց պիտի վերցնեի: Խոսքս Ուիլյամ Լեյն Կրեյգի մասին է:

«Հաճախ կարծում են, թե «Մարդու Որդի» արտահայտությունը Հիսուսի մարդեղությունն է ցույց տալիս, ճիշտ ինչպես «Աստծո Որդի» արտահայտությունը՝ նրա աստվածությունը: Իրականում ճիշտ հակառակն է: Հին կտակարանի Դանիելի գրքում Մարդու որդին աստվածային կերպար է, որը գալու է աշխարհի վերջին՝ դատելու մարդկությանն ու իշխելու հավիտյան: Այսպիսով, Մարդու որդին լինելու պնդումն աստվածության պնդում է»[6]:

Բլոմբերգը շարունակեց:

— Բացի այդ համատես ավետարաններում Հիսուս պնդում է, որ մեղքեր է ներում, իսկ դա միայն Աստված կարող է անել: Հիսուս ընդունում է աղոթք ու երկրպագություն: Հիսուս ասում է. «Ով ընդունում է ինձ, նրան ես կընդունեմ իմ Հոր առաջ, երկնքում»: Վերջին դատաստանը հիմնված է նրա վրա, թե մարդն ինչպես է արձագանքում ոմ: Ընդամենը մարդ արարածի՞: Ոչ, դա շատ մեծամիտ պնդում կլիներ: Մարդիկ հասկացան, որ իրենց առաջ Աստված է:

Այժմ տեսնում եք, որ համատես ավետարանները մեզ ամեն կերպ հաղորդում են Քրիստոսի աստվածության մասին, իսկ Հովհաննեսի ավետարանում այս թեման պարզապես ավելի հստակ է արտահայտված:

Ավետարանիչների աստվածաբանական դիրքորոշումները

Քանի որ Հովհաննեսի ավետարանը վերջինը գրվեց, նա աստվածաբանական հարցերի շուրջ ավելի երկար մտորելու առավելություն ունեցավ: Բլոմբերգին հարցրի.

— Եթե Հովհաննեսն իր ավետարանը գրում էր ավելի աստվածաբանական թեքումով, չի՞ նշանակում, որ պատմական տեսակետից նրա տեքստը լիովին վստահելի չէ:

— Չեմ կարծում, թե Հովհաննեսի ավետարանն ավելի աստվածաբանական է,– առարկեց Բլոմբերգը,– պարզապես նրա աստվածաբանական

թվայնացրել է 1915.info կայքը

շեշտադրումներն են տարբեր: Նույնը կարելի է ասել մյուս ավետարանիչների մասին: Մատթեոսը, Մարկոսը, Ղուկասը շատ տարբեր աստվածաբանական տեսանկյուն ունեին, որոնք ուզում էին ընդգծել: Ղուկասը նախ և առաջ մտածում էր աղքատների ու սոցիալական խնդիրների մասին, Մատթեոսը փորձում էր հասկանալ քրիստոնեության ու հուդայականության հարաբերությունների էությունը, Մարկոսը Հիսուսին ներկայացնում էր որպես տառապող սպասավոր: Մատթեոսի, Մարկոսի ու Ղուկասի աստվածաբանական առանձնահատկությունների ցանկը կարելի է երկար շարունակել...

Ընդհատեցի՝ ենթադրելով որ Բլոմբերգը չըմբռնեց իմ հարցի ավելի լայն իմաստը:

— Լավ, բայց ավետարանիչների աստվածաբանական հայացքները չե՞ն ազդել իրադարձությունները ճշգրիտ և անաչառ հաղորդելու նրանց կարողության ու ցանկության վրա, չե՞ն մղել նրանց գունազարդելու և պատմությունն իրենց համոզմունքներին հարմարեցնելու:

— Իհարկե, չենք կարող լիովին բացառել նման հնարավորությունը: Գաղափարախոսական ուղղվածություն ունեցող որևէ փաստաթղթի դեպքում դա հավանական է,– ընդունեց Բլոմբերգը: — Իրոք, երբեմն մարդիկ, սեփական շահերից կամ գաղափարական նկատառումներից ելնելով, փորձում են վերաձևել պատմությունը՝ իրենց ծառայեցնելու համար, բայց, չգիտես ինչու, համարվում է, որ միշտ այդպես է լինում և այլ կերպ լինել չի կարող: Սա թյուր կարծիք է: Հին աշխարհին խորթ էր առանց գաղափարախոսական նպատակի, պարզապես իրադարձությունների ժամանակագրության համար անկողմնակալ, անաչառ պատմություն գրելու գաղափարը: Ոչ ոք պատմություն չէր գրում, եթե այն ոչինչ չէր սովորեցնում:

Ժպտացի:

— Ուզում եք ասել, որ դա ամեն ինչ կասկածելի՞ է դարձնում:

— Այո՛, որոշ իմաստով այդպես է,– պատասխանեց,– բայց եթե մեզ հաջողվում է պատմական իրականությունը բավական ճշգրիտ վերականգնել տարատեսակ այլ հնագույն աղբյուրների հիման վրա, ինչո՞ւ նույն մոտեցումը չպետք է կիրառենք նաև ավետարանների նկատմամբ, նույնիսկ եթե դրանք ևս գաղափարախոսական են:

Բլոմբերգը մի պահ հապաղեց՝ հարմար օրինակ փնտրելով իր միտքը տեղ հասցնելու համար: Ի վերջո, ասաց.

— Ահա մի օրինակ ժամանակակից հրեական համայնքի փորձից, որը կարող է պարզաբանել, թե ինչ նկատի ունեմ: Կան մարդիք, սովորաբար հակասեմիտներ, որոնք ժխտում կամ նվազեցնում են Հոլոքոստի սարսափները: Բայց հրեա հետազոտողները գրքեր են գրում Հոլոքոստի մասին, ստեղծում թանգարաններ, հավաքում իրեղեն ապացույցներ ու գրի առնում ականատեսների վկայությունները: Նրանց նպատակը, հասկանալի է, շատ գաղափարական է, այն է՝ ապահովել, որ նման վայրագություն երբեք չկրկնվի, բայց միաժամանակ նրանք դրսևորում են նաև առավելագույն ճշգրտություն ու անաչառություն պատմական ճշմարտությունը հաղորդելիս: Քրիստոնեությունը նմանապես հիմնած է որոշակի պատմական պնդումների վրա, որ Աստված մեն-միակ անգամ մուտք գործեց տարածություն ու ժամանակ՝ մարմնավորվելով որպես Հիսուս Նազովրեցի: Ուստի քրիստոնեական գաղափարախոսությունն ինքնին ենթադրում է պատմական ճշմարտության ամենահիմնավոր որոնում:

Նա որոշ ժամանակ սպասեց, որ խորամուխ լինեմ ասվածի էության մեջ, հետո նայեց աչքերիս մեջ և հարցրեց.

— Հասկանո՞ւմ եք:

Գլխով արեցի: Հասկանում էի:

Թարմ նորություն պատմությունից

Մի բան է ասելը, որ ավետարանները հիմնված են ականատեսների ուղիղ կամ անուղղակի վկայությունների վրա, այլ բան՝ պնդելը, որ այդ տեղեկությունները ստույգ պահպանվել են, մինչև վերջապես գրի են առնվել տարիներ անց: Գիտեի, որ հենց սա է տարաձայնությունների հիմնական առարկան, և ուզում էի Բլոմբերգին ուղղակիորեն հարցնել այդ մասին:

Կրկին ձեռքս առա Արմսթրոնգի «Աստծո պատմությունը» գիրքը:

— Լսեք, թե էլ ինչ է նա գրում:

«Մենք շատ քիչ բան գիտենք Հիսուսի մասին: Նրա կյանքի առաջին ամբողջական պատմությունը՝ Սուրբ Մարկոսի ավետարանը, գրվել է միայն 70 թվականին, Նրա մահից մոտ 40 տարի անց: Այդ ժամանակ պատմական փաստերին արդեն խառնվել էին առասպելաբանության տարրեր, որ արտա-

թվայնացրել է 1915.info կայքը

հայտում էին այն նշանակությունը, ինչ Հիսուս ձեռք էր բերել իր հետևորդնե-
րի համար: Սբ Մարկոսն ավելի շուտ այս նշանակությունն է գլխավորապես
հաղորդում, քան տալիս է արժանահավատ, անկեղծ պատկեր»[7]:

Գիրքը նորից դրեցի պայուսակս և դառնալով Բլոմբերգին շարունակեցի.

— Որոշ գիտնականներ ասում են, որ ավետարանները գրվել են իրա-
դարձություններից այնքան ուշ, որ առաջ եկած լեգենդներն աղավաղել,
ստվերել են պատմական ճշմարտությունը՝ Հիսուսին պարզապես իմաս-
տուն ուսուցչից վերածելով Աստծո առասպելական որդու: Սա խելամիտ
վարկած է, թե՞ այնուամենայնիվ ապացույցներ կան, որ ավետարանները
գրվել են ավելի վաղ, նախքան լեգենդը կհասցներ ամբողջովին փչացնել
այն, ինչ վերջում գրվեց:

Բլոմբերգն աչքերը կկոցեց և անդրդվելի ձայնով ասաց.

— Սրանք երկու առանձին հարցեր են, ու հարկավոր է դրանք առանձին
դիտարկել: Այո, կարծում եմ, որ ծանրակշիռ հիմքեր կան ենթադրելու, որ
ավետարանները գրվել են ավելի վաղ, քան ասվում է այստեղ: Բայց նույ-
նիսկ եթե այդպես չլիներ, Արմսթրոնգի փաստարկը, միևնույն է, անհիմն է:

— Ինչո՞ւ:

— Ընդհանուր ընդունված տարեթվերը, որոնք բողոք չեն հարուցում նույ-
նիսկ ամենաազատական գիտական շրջանակներում, հետևյալն են՝ Մար-
կոսի ավետարան՝ 70-ականներ, Մատթեոսի և Ղուկասի՝ 80-ականներ,
Հովհաննեսի՝ 90-ականներ: Բայց, լսե՛ք, չէ՞ որ այդ ժամանակ դեռ ողջ էին
մարդիկ, որոնք տեսել էին Հիսուսին, և նրանք, ովքեր բավական թշնամա-
բար էին տրամադրված Նրա հանդեպ, չէին լռի, եթե Նրա մասին տարած-
ված ուսմունքը կեղծ լիներ: Հետևաբար ավետարաններն իրականում այդ-
քան էլ ուշ չեն գրվել: Ընդհանրապես, այստեղ տեղին կլիներ մի բավական
ուսանելի համեմատություն: Ալեքսանդր Մակեդոնացու երկու ամենավաղ
կենսագրությունները գրել են Արիանոսն ու Պլուտարքոսը՝ Ալեքսանդրի
մահից ավելի քան 400 տարի անց՝ Ք. ա. 323-ին, և բոլոր պատմաբան-
ները դրանք միանգամայն արժանահավատ են համարում: Այո՛, Ալեք-
սանդրի մասին շատ լեգենդներ կային, բայց դրանք առաջացել են ավելի
ուշ, երբ նրա կենսագիրներն այլևս ողջ չէին: Այսինքն՝ 500 տարի Ալեք-
սանդր Մակեդոնացու մահից հետո նրա կյանքի մասին պատկերացում-
ները նկատելի փոփոխություններ չեն կրել: Նրա մասին առասպելները

սկսեցին հայտնվել միայն հաջորդ 500 տարում: Այնպես որ այս թվերի ֆոնին քննարկել, թե ավետարանները գրվել են Հիսուսի երկրային կյանքից 60, թե 30 տարի անց, ընդհանրապես անիմաստ է:

Համաձայն էի Բլոմբերգի փաստարկների հետ, բայց միաժամանակ որոշ վերապահումներ ունեի: Թվում էր, թե որքան ավելի կարճ լինի իրադարձության ու դրա գրառման միջև ընկած ժամանակամիջոցը, այնքան ավելի ճշգրիտ կլինի այդ պատմությունը: Խնդիրը միայն առասպելները չեն, այլև այն, որ տարիների ընթացքում ականատեսների հիշողությունը վատանում է, հիշողությունները՝ աղճատվում:

— Ընդունենք, որ ինձ համոզեցիք,– ասացի,– բայց վերադառնանք ավետարանների ստեղծման տարեթվերին: Կարծում եք, թե դրանք ավելի վաղ են գրվել, քան այն տարեթվերը, որ հիշատակեցիք:

— Այո՛, ավելի վաղ,– ասաց նա: — Եվ դա կարելի է ապացուցել «Գործք առաքելոց» գրքի օգնությամբ, որը գրել է Ղուկասը: Գործողություններն այս գրքում ակնհայտորեն անավարտ են մնում, նրա գլխավոր հերոսը՝ Պողոս առաքյալը, Հռոմում տնային կալանքի տակ է: Հենց այստեղ էլ գիրքը կտրուկ ավարտվում է: Ի՞նչ պատահեց Պողոսի հետ հետո: Ինչո՞ւ «Գործք առաքելոցը» սա չի ասում: Այն պատճառով, որ գիրքը գրվել է Պողոսին մահապատժի ենթարկելուց առաջ,– Բլոմբերգն ավելի ու ավելի հուզված էր խոսում,– դա նշանակում է, որ «Գործք առաքելոցը» գրվել է Ք. հ. 62-ից ոչ ուշ: Սա հաստատելով կարող ենք այստեղից հետ գնալ: Քանի որ «Գործք առաքելոցը» նույն հեղինակի երկմաս աշխատանքի երկրորդ մասն է, հետևաբար առաջին մասը՝ Ղուկասի ավետարանը, գրվել է ավելի վաղ: Ու քանի որ Ղուկասն իր ավետարանում ներառել է հատվածներ Մարկոսի ավետարանից, նշանակում է, որ Մարկոսի ավետարանը գրվել է ավելի վաղ: Եթե ենթադրենք, թե այս տեքստերից յուրաքանչյուրի շարադրանքը տևել է առնվազն մեկ տարի, ստացվում է, որ Մարկոսի ավետարանը գրվել է ոչ ուշ, քան 60, նույնիսկ 50-ականներին: Եթե Հիսուս մահապատժի է ենթարկվել 30 կամ 33 տարեկանում, ապա ստանում ենք առավելագույնը 30 տարվա խզվածք կամ մոտավորապես այդքան,– նա հաղթական հետ ընկավ աթոռին,– պատմության չափանիշներով, հատկապես Ալեքսանդր Մակեդոնացու համեմատ սա նման է լուրերի հրատապ թողարկման:

թվայնացրել է 1915.info կայքը

Իսկապես տպավորիչ էր. ստացվում էր, որ Հիսուսի երկրային կյանքի իրադարձությունների և ավետարանների ստեղծման միջև ժամանակի բացը պատմական չափանիշներով չնչին է: Այդուհանդերձ, դեռ ուզում էի քննել այս հարցը: Իմ նպատակն էր հետ պտտել ժամացույցի սլաքներն այնքան, մինչև այն ինձ մոտեցներ Հիսուսի մասին ամենավաղ տեղեկություններին:

Վերադարձ սկզբին

Ոտքի ելա ու քայլերս ուղղեցի դեպի գրապահարանը:

— Փորձենք վերադառնալ ավելի հեռավոր անցյալ,– ասացի ես՝ դառնալով դեպի Բլոմբերգը: — Կարելի՞ է պարզել, թե երբ սկիզբ առան Հիսուսի քավության, հարության և աստվածության հանդեպ հավատի հիմքերը:

— Հիշենք, որ Նոր Կտակարանի գրքերը ժամանակագրական կարգով չեն դասավորված,– սկսեց նա: — Ավետարանները գրվել են ավելի ուշ, քան Պողոսի գրեթե բոլոր նամակները: Պողոսի գրավոր ծառայությունը սկսվել է 40-ականների վերջին: Նրա կարևորագույն նամակների մեծ մասը հայտնվեց 50-ականներին: Այնպես որ ամենավաղ տեղեկությունները գտնելու համար պետք է կարդալ Պողոսի նամակներն ու հարց տալ. «Կա՞ն այնտեղ նշաններ, որոնք գրելիս նա հիմնվել է ավելի վաղ աղբյուրների վրա»:

— Եվ ի՞նչ կպարզենք,– հարցրի:

— Կպարզենք, որ Պողոսն իր նամակներում ներառել է վաղ քրիստոնեական եկեղեցու դավանանքի մի քանի հիմնական դրույթներ կամ օրհներգություններ, որոնք սկիզբ են առել Հարությունից շատ չանցած: Ամենահայտնի դոգմաները շարադրված են Փիլիպեցիներին ուղղված նամակի 2:6-11-ում, որտեղ Հիսուս Քրիստոս անվանվում է Տեր, և Կողոսացիներին ուղղված նամակի 1:15-20-ում, որտեղ ասվում է, որ Նա «աներևույթ Աստծո պատկերն է», որը ստեղծեց ամեն բան, և որ Նրա միջոցով, «Նրա խաչի արյունով» գոյություն ունեցող ամեն բան հաշտեցվում է Աստծո հետ: Այս տողերը չափազանց կարևոր են, քանի որ դրանք բացատրում են, թե ինչպես էին վաղ քրիստոնյաները հավատում Հիսուսին, ինչին էին նրանք հավատում: Բայց պատմական տեսանկյունից թերևս ավելի կարևոր

է Կորնթացիներին ուղղված 1-ին նամակի 15-րդ գլուխը, որտեղ Պողոս առաքյալն օգտագործում է տեխնիկական լեզու: Իսկ դա նշանակում է, որ բանավոր ավանդույթն արդեն սկսել է ամրապնդվել՝ ձեռք բերելով համեմատաբար կայուն ձև:

Բլոմբերգը գտավ այդ տողերն Աստվածաշնչում ու կարդաց ինձ համար:

> «Որովհետև ձեզ ավանդեցի նախ այն, ինչը ես ինքս ընդունեցի. թե՝ Քրիստոս մեռավ մեր մեղքերի համար՝ ըստ Գրքերի, թաղվեց և Հարություն առավ երրորդ օրը՝ ըստ Գրքերի, երևաց Կեփասին և ապա Տասներկուսին: Ապա երևաց միանգամից ավելի քան 500 եղբայրների, որոնցից շատերը կան մինչև այժմ. ոմանք էլ ննջեցյալ եղան: Եվ ապա երևաց Հակոբոսին, ապա բոլոր առաքյալներին»[8]:

— Դա մեր մեկնարկային կետն է,– ասաց Բլոմբերգը: — Եթե խաչելությունը տեղի է ունեցել 30 թվականին, ապա Պողոսը դարձի է եկել մոտ 32-ին և անմիջապես ուղևորվել է Դամասկոս, որտեղ հանդիպել է Անանիա անունով մի քրիստոնյայի և մի քանի այլ հավատացյալների: Նրա առաջին հանդիպումը առաքյալների հետ Երուսաղեմում տեղի է ունեցել մոտ 35 թվականին: Մոտավորապես այդ ժամանակ Պողոսին հաղորդեցին այս դավանանքը, որն արդեն ձևակերպվել ու գործածվում էր վաղ եկեղեցում:

Այսպիսով, գիտենք մեր մեղքերի քավության համար Հիսուսի մահվան բոլոր կարևոր փաստերը, նաև անունները բոլոր նրանց, որոնց Նա հայտնվեց Հարությունից հետո: Եվ այս ամենը տեղի է ունենում բուն իրադարձություններից 2-5 տարվա ընթացքում: Սրանք ամենևին էլ առասպելներ չեն, որոնք, ինչպես կարծում է Արմսթրոնգը, առաջացել են 40 տարի անց, եթե ոչ ավելի: Ծանրակշիռ հիմքեր ունենք պնդելու, որ Հարության հանդեպ քրիստոնեական հավատն ամրապնդվել է, թեև դեռ ոչ գրավոր, Հարության պահից երկու տարվա ընթացքում: Սա չափազանց կարևոր է,– համոզիչ լինելու համար Բլոմբերգը մի փոքր բարձրացրեց ձայնը,– նկատի առեք, արդեն չենք համեմատում 30-60 տարին 500 տարվա հետ, ինչը սովորաբար ընդունելի է այլ տվյալների համար: Խոսում ենք ընդամենը երկու տարվա մասին:

թվայնացրել է 1915.info կայքը

Չէի կարող ժխտել այդ վկայության կարևորությունը: Այն, իհարկե, շարքից հանում էր բոլոր պնդումները, որ Հարությունը, որը քրիստոնյաները համարում են Հիսուսի աստվածության հիմնական հաստատումը, ընդամենը առասպել է, որը ծագել է շատ տարիներ անց, երբ ականատեսների վկայությունները պատվել են երևակայական մանրամասներով: Որպես թերահավատ մարդ, որին նման հայտարարությունները միշտ թվացել են ուժեղ փաստարկ և քրիստոնեության ամենամեծ առարկություններից, սա ինձ հատկապես համոզիչ թվաց:

Հենվեցի գրապահարանին: Ծավալուն նյութ էինք քննարկել, ու հիմա, Բլոմբերգի վերջին, բուռն ու համոզիչ մենախոսությունից հետո ակնհայտորեն եկել էր դադար առնելու պահը:

Կարճ ընդմիջում

Արդեն մթնում էր: Բավական երկար էինք խոսել, առանց ընդմիջման, բայց չէի ուզում դադարեցնել զրույցը՝ առանց ականատեսների պատմությունները քննելու, ինչպես դրանք քննության կենթարկեր իրավաբանը կամ լրագրողը: Պետք է պարզեի՝ այդ «ցուցմունքները» կդիմանա՞ն քննությանը, թե՞ լավագույն դեպքում կասկածելի կլինեն, վատագույն դեպքում՝ անվստահելի:

Անհրաժեշտ հիմքը գցելով՝ Բլոմբերգին առաջարկեցի քայլել, որ ոտքերի թմրածությունն անցնի, հետո նորից կնստենք ու կվերսկսենք մեր քննարկումը:

Քննարկումներ

Հարցեր խորհրդածելու կամ խմբային պարապմունքի համար

1. Ականատեսների վկայություններն ազդո՞ւմ են որևէ իրադարձության վերաբերյալ ձեր կարծիքի վրա: Ինչպե՞ս եք սովորաբար որոշում, թե որքանով է ճշմարիտ և ճշգրիտ նրանց պատմությունը: Ի՞նչ եք կարծում, ավետարանները կդիմանա՞ն այդ տեսակ քննությանը:

2. Հավատո՞ւմ եք, որ ավետարանները, լինելով աստվածաբանական տեքստեր, եղելությունն օբյեկտիվ են մատուցում: Եթե այո կամ ոչ, ապա ինչո՞ւ: Բլոմբերգի՝ Հոլոքոստի հետ զուգահեռը համոզի՞չ եք համարում:
3. Այն, ինչ սովորեցիք այս գլխում, ազդե՞լ է ձեր կարծիքի վրա ավետարանների հավաստիության և իսկության առումով:

թվայնացրել է 1915.info կայքը

ԳԼՈՒԽ 2

Ականատեսների վկայությունների ստուգում

Քրիստոսի կենսագրությունները քննությանը դիմանում են

Այնքան թույլ էր 16-ամյա Մայքլ Մակքալոյի ձայնը, որ ատենակալները չէին կարողանում հասկանալ բառերը. դրանք խլացնում էր արհեստական շնչառության սարքի թեթև գվվոցը, որը տղային ողջ էր պահում: Շրթունքներով կարդացող մասնագետը կռացել էր նրա մահճակալի վրա և բարձրաձայն կրկնում էր Մայքլի յուրաքանչյուր բառը. այսպես էր ցուցմունք տրվում հիվանդանոցի բաժանմունքում, որը ժամանակավորապես դարձել էր դատարանի դահլիճ:

Գնդակը, որը վնասել էր նրա ողնուղեղը, կաթվածահար էր արել Մայքլին պարանոցից ներքև: Երիտասարդի վիճակը թույլ չէր տվել նրան տանել դատարանի դահլիճ, որտեղ ընթանում էր Մայքլի վրա հարձակվելու մեջ մեղադրվող երկու երիտասարդների դատավարությունը: Փոխարենը դատավորը, ատենակալները, մեղադրյալները, իրավաբանները, լրագրողներն ու դիտորդներն էին կուտակվել Մայքլի հիվանդասենյակում, որը հայտարարվել էր շրջանային դատարանի ժամանակավոր բաժանմունք:

Դատախազների հարցերին պատասխանելիս՝ Մայքլը հիշեց, թե ինչպես է դուրս եկել Չիկագոյում գտնվող իր բնակարանից՝ գրպանում 2 դոլար, և ինչպես են մուտքի աստիճանների վրա մեղադրյալները, գողանալով փողը, դիտավորությամբ կրակել իր դեմքին: Նրա պատմածը հաստատեցին երկու տղաներ, որոնք սարսափից կարկամած հետևել էին հարձակմանը:

Մեղադրյալները չէին ժխտում, որ կրակոց եղել է, սակայն պնդում էին, որ դիտավորյալ չեն կրակել. ատրճանակը պատահաբար է կրակել, երբ հարվածել են Մայքլի դեմքին: Փաստաբանները գիտեին, որ իրենց պաշտպանյալների պատժաչափերը նվազեցնելու միակ միջոցը վկաների ցուցմունքները հերքելն է, որոնք պնդում էին, որ կրակոցը կանխամտածված

ու դաժան բռնության գործողություն է եղել: Եվ նրանք ձեռքներից եկածն արեցին, որ կասկածի տակ դնեն վկաների ցուցմունքները:

Պաշտպանները փորձեցին ապացուցել, որ վկաների գտնվելու վայրից հնարավոր չի տեսնել հանցագործության մանրամասները, բայց դա նրանց չհաջողվեց: Փորձեցին շահարկել ցուցմունքներում եղած անհամապատասխանությունները, բայց վկաների պատմածը գլխավոր կետերում համընկնում էր: Լրացուցիչ ապացույցներ պահանջեցին, այնինչ պարզ էր, որ դրա կարիքը չկա:

Կասկածներ առաջ քաշեցին տուժածի ու վկաների բնութագրի վերաբերյալ, բայց պարզվեց երեքն էլ օրինապահ երիտասարդներ էին՝ առանց դատվածության: Փորձեցին մեղադրյալների հանդեպ կողմնապահություն ի հայտ բերել, բայց չգտան: Հարցականի տակ դրեցին, թե վկաներից մեկը՝ Քիտ անունով 9-ամյա տղան, բավական մեծ է, որ հասկանա, թե ինչ է նշանակում երդման տակ ճշմարտությունն ասել, բայց բոլորի համար ակնհայտ էր, որ նա հասկանում է:

Քանի որ պաշտպանները չկարողացան խաթարել տուժողի ու վկաների ցուցմունքների արժանահավատությունը, ամբաստանյալները մեղավոր ճանաչվեցին սպանության փորձի համար ու դատապարտվեցին 50 տարվա ազատազրկման: 18 օր անց Մայքլը մահացավ[9]:

Փաստաբաններին բարդ առաջադրանք է տրված՝ կասկածել և կասկածներ արթնացնել, վկաների ցուցմունքների թույլ ու խոցելի տեղերը գտնել: Նրանք սա անում են՝ վկայությունը ենթարկելով բազմատեսակ փորձարկումների: Այսպիսի հետազոտության իմաստն այն է, որ ազնիվ ու ճշգրիտ ցուցմունքը դիմանա յուրաքանչյուր փորձության, կեղծիքը, չափազանցությունը կամ կանխամտածված սուտը ջրի երես դուրս գան:

Մայքլի գործում արդարությունը հաղթանակեց, որովհետև ատենակալները տեսնում էին, որ վկաներն ու տուժողն անկեղծ ու ճշգրիտ պատմում էին այն, ինչ ապրել էին:

Վերադառնանք Հիսուսի վերաբերյալ պատմական փաստերի մեր հետաքննությանը: Ժամանակն էր, որ դր Բլոմբերգի վկայությունը ենթարկվեր փորձարկումների, որոնք կամ կբացահայտեին դրա թույլ կողմերը, կամ կընդգծեին ուժեղները: Դրանցից շատերը նույն փորձարկումներն էին լինելու, ինչ շատ տարիներ առաջ փաստաբաններն օգտագործել էին Մայքլի գործում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ուզում եմ առաջարկել ութ տարբեր փորձարկումներ,– ասացի, երբ 15 րոպե ընդմիջումից հետո ես և Բլոմբերգը նորից նստեցինք սեղանի շուրջը:

Բլոմբերգը ձեռքն առավ գոլորշի արձակող թարմ սուրճի բաժակն ու հետ նստեց: Վստահ չեմ, բայց ինձ թվաց, որ կանխավայելում է մարտահրավերը:

— Շարունակենք,– ասաց:

1. Մտադրությունների ստուգում

Այս փորձարկման նպատակն է որոշել, թե հեղինակներն ունեի՞ն բացահայտ կամ ենթադրյալ մտադրություն՝ ճշգրիտ փոխանցելու պատմության փաստերը:

— Իսկ այս հեղինակներն 1-ին դարում իրենց առջև խնդիր դրե՞լ են ստույգ արտացոլել իրադարձությունները,– հարցրի:

Բլոմբերգը գլխով արեց:

— Այո: Դա պարզորոշ երևում է Ղուկասի ավետարանի առաջին տողերից, որոնք շատ նման են հին ժամանակների այլ՝ ընդհանուր վստահություն վայելող պատմական ու կենսագրական գործերի նախաբաններին:

Իր Աստվածաշունչը ձեռքն առնելով՝ Բլոմբերգը կարդաց Ղուկասի ավետարանի սկիզբը:

> «Քանի որ շատերը ձեռնարկեցին վերաշարադրել մեզանում իրականացած դեպքերի պատմությունը, ինչպես մեզ ավանդեցին նրանք, որ սկզբից Խոսքի ականատեսներն ու սպասավորները եղան, ես էլ, որ սկզբից ամենայն ճշմարտությամբ հետամուտ եղա ամեն ինչի, կամեցա կարգով շարադրել քեզ համար, ո՛վ գերազանցդ Թեոփիլոս, որպեսզի ճանաչես ճշմարտությունն այն խոսքերի, որոնց աշակերտեցիր»[10]:

— Ահա տեսնում եք,– շարունակեց Բլոմբերգը,– Ղուկասը պարզորոշ ասում է, որ մտադիր է ճշգրիտ նկարագրել այն իրադարձությունները, որոնք նա հետաքննել է, և որոնք համարվում են հիմնավորված ականատեսների վկայություններով:

— Ինչ կասեք մյուս ավետարանների մասին,– հարցրի: — Դրանք նման հայտարարություններով չեն սկսվում, նշանակում է՝ հեղինակները նույն մտադրությունները չունեն:

— Ճիշտ է, Մարկոսն ու Մատթեոսն այդ մասին ուղիղ պնդում չեն անում,– եղավ Բլոմբերգի պատասխանը: — Բայց նրանց ավետարանները եզրույթաբանության և ժանրային առումով շատ մոտ են Ղուկասի ավետարանին, ուստի տրամաբանական է թվում, որ Ղուկասի խոսքերում արտացոլվել են և այդ ավետարանիչների մտադրությունները:

— Իսկ Հովհաննեսը,– հարցրի:

— Ավետարաններում միակ այլ՝ նպատակի մասին հայտարարությունը հանդիպում է Հովհաննեսի 20:31-ում. «Բայց այսքանը գրվեց, որպեսզի հավատաք, որ Հիսուս Քրիստոսն է՝ Աստծո Որդին, և որպեսզի հավատաք ու նրա անունով հավիտենական կյանքն ընդունեք»:

— Բայց,– առարկեցի,– դա ավելի շուտ աստվածաբանական պնդում է հիշեցնում, քան պատմական:

— Ընդունում եմ,– պատասխանեց Բլոմբերգը,– բայց եթե ուզում եք համոզված լինել այնքան, որ հավատաք, աստվածաբանությունը պետք է բխի ճշգրիտ պատմությունից: Կան նաև կարևոր անուղղակի ապացույցներ, որոնք չենք կարող անտեսել: Ուշադրություն դարձրեք, թե ինչպես են գրված ավետարանները՝ սթափ և պատասխանատու, ճշգրիտ երկրորդական մանրամասներով, ակնհայտ խնամքով ու ճշգրտությամբ: Ավետարաններում չեք գտնի արտասովոր պաճուճազարդումներ, ոչ էլ աչք ծակող առասպելաստեղծություն, ինչը բնորոշ է բազմաթիվ այլ հնագույն գրվածքների: Ինչի՞ մասին է սա խոսում,– հարցրեց նա և ինքն էլ պատասխանեց,– այդ ամենը հանգեցնում է այն եզրակացությանը, որ ավետարանների հեղինակները հաստատապես մտադիր էին նկարագրել այն, ինչ իրականում տեղի է ունեցել:

Պատասխաններ առարկություններին

Լավ, ընդունենք՝ ավետարանիչների նպատակը հենց դա էր, բայց որքանո՞վ կարողացան մոտենալ դրան: Որոշ քննադատներ պնդում են հետևյալ՝ բավական վիճահարույց տարբերակը. ըստ նրանց՝ վաղ քրիստոնյաները վստահ էին, որ Հիսուս երկիր կվերադառնա իրենց կյանքի

թվայնացրել է 1915.info կայքը

ընթացքում, և պատմության ընթացքը կավարտվի: Հետևաբար, նրանք հարկ չհամարեցին պահպանել Նրա կյանքի և ուսմունքի մասին գրավոր վկայությունները: Ի վերջո, ինչո՞ւ նեղություն քաշել, եթե որևէ պահի Նա կարող է վերադառնալ ու աշխարհին վերջ դնել:

— Եվ այսպես,– ասացի,– տարիներ անց, երբ ակնհայտ դարձավ, որ Հիսուս չի վերադառնալու շատ շուտով, պարզվեց, որ Նրա՝ երկրի վրա գտնվելու մասին ստույգ տեղեկություն պարզապես չկա, որից կարող են օգտվել ավետարանները գրելիս: Պատմության համար ոչինչ չէր պահվել: Իրականում դա այդպե՞ս է եղել:

— Պատմության ընթացքում եղել են աղանդներ ու խմբեր, այդ թվում՝ կրոնական, որոնք այդպես էին մտածում, բայց դա այդպես չէ վաղ քրիստոնյաների պարագայում,– պատասխանեց Բլոմբերգը:

— Ինչո՞ւ ոչ,– չէի հանձնվում,– ինչո՞վ էին քրիստոնյաներն այդքան տարբերվում մյուսներից:

— Նախ, կարծում եմ, ելակետային առաջադրույթը փոքր-ինչ չափազանցված է: Իրականությունն այն է, որ Հիսուսի ուսմունքը մինչև աշխարհի վերջը նշանակալի ժամանակամիջոց է ենթադրում,– ասաց: — Երկրորդ, նույնիսկ եթե Հիսուսի հետևորդներից ոմանք իսկապես կարծում էին, թե նա կարող է բավական արագ վերադառնալ, հիշեք, որ քրիստոնեությունը հուդայականությունից է ծնվել: Ութ դար շարունակ հրեաները փորձում էին համատեղել անհամատեղելին. մի կողմից մարգարեները մեկը մյուսի հետևից հայտարարում էին, որ Տիրոջ օրը մոտ է, մյուս կողմից Իսրայելի պատմությունն ընթանում էր սովորական հունով: Այնուամենայնիվ, այս մարգարեների հետևորդները գրառում ու հոգածությամբ պահպանում էին նրանց կանխատեսումները: Մինչդեռ Հիսուսի հետևորդները հավատում էին, որ Նա ավելին է, քան մարգարե, ուստի ավելի քան խելամիտ է ենթադրել, որ նրանք էլ նույնն են արել:

Իսկապես համոզիչ էր թվում, սակայն որոշ գիտնականներ նաև երկրորդ առարկություն են հայտնել, որն ուզում էի ներկայացնել Բլոմբերգին:

— Նրանք ասում են, որ շատ վաղ քրիստոնյաները պնդում էին, որ Հիսուս, ֆիզիկապես լքելով այս աշխարհը, շարունակում է իրենց բերանով մարգարեանալ,– ասացի: — Այս մարգարեությունները համարվում էին նույնքան վստահելի և անսխալական, որքան Իր՝ Հիսուսի խոսքերը, որոնք Նա ասաց երկրային կյանքում: Հետևաբար, վաղ քրիստոնյաները

չէին առանձնացնում Հիսուսի, որպես պատմական անձի, իսկական խոսքերն ավելի ուշ արված արտահայտություններից: Արդյունքում՝ երկուսն էլ մտել են ավետարաններ, և չենք կարողանում տարբերել դրանք: Այս հարցը շատերին է մտահոգում: Ի՞նչ կասեք այս մասին:

— Այդ փաստարկը շատ ավելի վատ է հիմնավորված, քան նախորդը,– ժպտաց Բլոմբերգը: — Հենց Նոր Կտակարանում կան փաստեր, որոնք հերքում են այդ վարկածը: Այո, այնտեղ կան հղումներ վաղ քրիստոնեական մարգարեություններին, բայց դրանք միշտ հստակ առանձնացված են Տիրոջ խոսքերից: Օրինակ՝ Ա Կորնթացիներին 7-ում Պողոսը հստակ տարբերակում է, թե որտեղ է մեջբերում Տիրոջ խոսքը, որ լսել է, և որտեղ է մեջբերում այն, ինչ Հիսուս ասել է երկրի վրա: Հայտնության գրքում ևս հեշտ է հստակ տարբերակել, թե երբ, մի քանի անգամ, Հիսուս ինքն է դիմում այս մարգարեին (ավանդաբար ենթադրվում է, որ դա Հովհաննես առաքյալն է), ու երբ է Հովհաննեսը պատմում իր սեփական՝ ներշնչված տեսիլքները:

Իսկ Ա Կորնթացիներին 14-ում, խոսելով մարգարեության ճշմարտացիության չափանիշների մասին, Պողոսը նշում է, որ եկեղեցին պարտավոր է հենց ինքը ստուգել մարգարեությունների իսկությունը: Նրա հրեական արմատները հաշվի առնելով՝ կարող ենք վստահաբար ենթադրել, որ ճշմարտության չափանիշները մասնավորապես այն էին, թե մարգարեությունը կատարվել է, բայց այն համընկնո՞ւմ է այն ամենի հետ, ինչ նախապես ասել էր Տերը:

Ամենաուժեղ փաստարկն այն է, ինչը երբեք չենք գտնի ավետարաններում: Հիսուսի համբարձումից հետո կային մի շարք տարաձայնություններ, որ ծվատում էին վաղ եկեղեցին՝ պե՞տք է քրիստոնյաները թլփատվեն, ինչպե՞ս պետք է կարգավորել լեզուներով խոսելը, ինչպե՞ս պահպանել հրեաների ու հեթանոսների միասնությունը, որո՞նք են կանանց համար պատշաճ դերերը ծառայության մեջ, հավատացյալները պե՞տք է բաժանվեն ոչ քրիստոնյա կողակցից:

Բոլոր այս տարաձայնությունները բարեհաջող կլուծվեին, եթե վաղ քրիստոնյաներն ուղղակի ավետարաններին ավելացնեին այն, ինչ Քրիստոս նրանց ասել էր այն աշխարհից: Բայց դա այդպես էլ տեղի չունեցավ: Վեճը տևեց երկար, շատ երկար: Այս տարաձայնությունները ցույց են տալիս, որ քրիստոնյաները տարբերակում էին այն, ինչ տեղի ունեցավ

թվայնացրել է 1915.info կայքը

Հիսուսի երկրային կյանքում, և այն, ինչ հետագայում քննարկվում էր եկեղեցական համայնքներում:

2. Կարողությունների ստուգում

Եթե նույնիսկ հեղինակները մտադիր են եղել ստույգ արձանագրել պատմությունը, կարո՞ղ էին նրանք անել դա: Ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ 30 տարի Հիսուսի կյանքի և ուսմունքի մասին տեղեկություններն անփոփոխ պահպանվել են և առանց աղավաղումների, ի վերջո, արձանագրվել ավետարաններում:

— Մարդիկ հաճախ են սխալվում, հավատում են նրան, ինչին ուզում են հավատալ, հիշողությունն է խափանվում, բացի այդ ավանդությունները նոր մանրամասներով պատմվելու և լեգենդի վերածվելու հատկություն ունեն: Չե՞ք կարծում,– հարցրի Բլոմբերգին,– որ այս ամենը բանավոր վերապատումների 30 տարում կարող էին անուղղելիորեն աղավաղել Հիսուսի ավանդությունը մինչև ավետարանները գրվելը:

Նա իր պատասխանը սկսեց հեռվից՝ մշակութային-պատմական համատեքստից:

— Չմոռանանք, որ խոսքը բոլորովին այլ երկրի և բոլորովին այլ դարաշրջանի մասին է, երբ ոչ թե համակարգիչ, այլ տպագրահաստոց չկար: Գրքերը կամ, ավելի ճիշտ, պապիրուսի գալարակները, հազվադեպ էին: Ուսուցիչներն ու քարոզիչները գիտելիքը բերնեբերան էին հաղորդում: Ռաբբիները հայտնի էին ամբողջ Հին Կտակարանն անգիր իմացությամբ: Այնպես որ Հիսուսի աշակերտները շատ լավ էլ կարող էին մտապահել շատ ավելին, քան բոլոր չորս ավետարանները միասին վերցրած, ու ճշգրիտ փոխանցել:

— Մի վայրկյան սպասեք,– միջամտեցի: — Անկեղծ ասած, այդքանը մտապահելն անհավատալի է թվում: Ինչպե՞ս է դա հնարավոր:

— Այո, այսօր դա դժվար է պատկերացնել,– համաձայնեց նա,– այնուամենայնիվ, այդպիսին էր բանավոր խոսքի մշակույթը. այն ամբողջովին հիմնված էր մարդկային հիշողության վրա: Ու հիշեք, որ Հիսուսի խոսքերի 80-90 տոկոսն ի սկզբանե բանաստեղծության ձև է ունեցել: Ոչ, հանգավորված չէր. խոսքը ոտանավորի չափի, ռիթմի, տողերի համաչափության, զուգահեռությունների և այլնի մասին է, և սա մեծապես օգնում էր մտապահել:

Պետք է նշել ևս մեկ բան. «հիշել» հասկացությունն այն օրերին ավելի ճկուն էր: Բանավոր ավանդույթների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պատմությունը շարադրելիս պատմողն ազատ էր յուրաքանչյուր պահի որոշել, թե ինչն է ներառում, ինչը՝ բաց թողնում, ինչն է վերաշարադրում, ինչը՝ բացատրում ու այսպես շարունակ: Մի ուսումնասիրության համաձայն՝ յուրաքանչյուր կոնկրետ վերապատմություն, իրադրությամբ պայմանավորված, տարբերվում էր սուրբ տեքստից 10-40 տոկոսով: Բայց միշտ կար ինչ-որ անփոփոխ, հաստատուն բան, և ունկնդիրներն իրավունք ունեին միջամտելու և ուղղելու պատմողին, եթե նա սխալվեր պատմության այդ կարևոր, հիմնարար կետերից մեկում:

Եվ ահա մի հետաքրքիր...,– Բլոմբերգը դադար տվեց՝ մտքում ճիշտ բառը փնտրելով,– համընկնում: 10-40 տոկոսը վարիացիաների այն թիվն է, որը բավական հաստատուն է համատես ավետարանների որևէ հատվածում:

Բլոմբերգն ակնհայտորեն ինչ-որ բան էր ակնարկում: Ինձ հարկավոր էր, որ նա ավելի պարզորոշ խոսի:

— Պարզաբանե՛ք, խնդրեմ,– ասացի,– Կոնկրետ ի՞նչ նկատի ունեք:

— Ուզում եմ ասել, որ համատես ավետարանների և՛ նմանությունները, և՛ տարբերությունները շատ ավելի հասկանալի կդառնան, եթե ենթադրենք, որ առաքյալները և մյուս վաղ քրիստոնյաները հստակորեն հիշում էին Հիսուսի խոսքերն ու գործերը, բայց դրանք պատմում էին տարբեր ձևերով՝ միշտ պահպանելով և ընդգծելով Հիսուսի ուսմունքի ու գործերի կարևորությունը:

Այնուամենայնիվ, դեռ կասկածներ ունեի վաղ քրիստոնյաների՝ բանավոր ավանդույթը ճշգրիտ և առանց աղավաղումների փոխանցելու կարողության վերաբերյալ: Չափազանց վառ էի հիշում մանկությանս սիրելի խաղը՝ փչացած հեռախոսը, որտեղ բառերը հաշված րոպեների ընթացքում դառնում են անճանաչելի:

Փչացած հեռախոս

Հավանաբար ինքներդ էլ խաղացել եք այս խաղը. մի երեխան մյուսի ականջին ինչ-որ բան է շշնջում, օրինակ, «Դու իմ ամենալավ ընկերն ես», և մինչ այս արտահայտությունը հաջորդաբար փոխանցվում է մյուսներին,

թվայնացրել է 1915.info կայքը

վերջում բոլորովին աղավաղված մի բան է դուրս գալիս, ասենք, «Դու իմ ամենադավ ընկերն ես»:

— Անկեղծ լինենք,– ասացի Բլոմբերգին,– սա նման չէ՞ նրան, ինչ հավանաբար կատարվել է Հիսուսի բանավոր ավանդության հետ:

Այս բացատրությունը Բլոմբերգին կարծես համոզիչ չթվաց:

— Ոչ, նման չէ,– պատասխանեց: — Եվ ահա թե ինչու. երբ ուշադիր ու ջանասիրաբար ինչ-որ բան անգիր ենք անում և ոչ մեկին չենք ասում, մինչև ամեն ինչ ճիշտ չհիշենք, բոլորովին այլ կանոնների ենք հետևում, քան «փչացած հեռախոս» խաղի կանոններն են: Չէ՞ որ «փչացած հեռախոսը» հենց նրանով է զվարճալի, որ պարտավոր ես արտահայտությունը փոխանցել անկախ նրանից՝ հասկացել ես, թե՞ ոչ, լսել ես, թե՞ չես լսել: Կրկին հարցնելն արգելված է: Շշուկով խոսել, արագ-արագ. այս ամենն արվում է շփոթեցնելու և լսածն աղավաղելու համար, ավելի հավանական է դարձնում, որ հաջորդ խաղացողն ինչ-որ բան ավելի կփչացնի: Իսկ եթե խաղին, ասենք, 30 մարդ է մասնակցում, ապա հասկանալի է, թե ինչ ծիծաղելի կստացվի, երբ շրջապտույտն ավարտվի, ու շրջանը փակվի:

— Այդ դեպքում,– նկատեցի,– ինչո՞ւ եք կարծում, որ բանավոր վերապատմելու հին ավանդույթը նման չէ այս խաղին:

Բլոմբերգը նախ մի կում արեց սուրճից:

— Գիտե՞ք ինչ, եթե ցանկանում եք Ձեր անալոգիան տեղափոխել առաջին դարի մշակութային հողի վրա, ապա պետք է հաշվի առնեք մի կարևոր հանգամանք. յուրաքանչյուր երրորդն այդ դարաշրջանում անպայման կհարցներ առաջինին՝ բարձրաձայն, հստակ և հրապարակավ. «Ճի՞շտ եմ լսել»: Ու եթե պարզվեր, որ սխալ է, կուղղվեր: Հասարակությունը մշտապես հետևում էր, որ ասվածի բովանդակությունն ու ձևը մնան անփոփոխ, ու, եթե պետք էր, միջամտում ու շտկումներ էր անում: Այսպես էր ապահովվում բանավոր ավանդության ամբողջականությունն ու պահպանվածությունը: Մի՞թե սա նման է «փչացած հեռախոսի»:

3. Բնութագրի ստուգում

Այս փորձարկման նպատակը պարզելն է՝ ճշմարտախոսությունը բնորո՞շ է ավետարանների հեղինակներին: Եղե՞լ է անազնվության կամ անբարոյա-

կանության որևէ ապացույց, որը կարող էր ստվեր գցել պատմությունը ճշգրիտ փոխանցելու նրանց կարողության կամ պատրաստակամության վրա:

Բլոմբերգն օրորեց գլուխը:

— Չունենք մի փաստ, որը թույլ է տալիս թեկուզ մի պահ կասկածել ավետարանիչներին անաղնվության մեջ: Նրանք մեզ հաղորդեցին խոսքերն ու գործերը Մարդու, որ նրանց կոչեց ազնվության այնպիսի մակարդակի, որ նախկինում ծանոթ չի եղել որևէ կրոնի: Նրանք պատրաստ էին ապրել իրենց համոզմունքների համաձայն՝ չնայած հալածանքին, զրկանքներին ու տառապանքին, ինչը հիանալի բնավորությունն է ցույց տալիս[11]: Ազնվության, ճշմարտախոսության, առաքինության ու բարոյականության առումով այս մարդկանց հեղինակությանը նախանձել կարելի է:

4. Համապատասխանության ստուգում

Ահա մի փորձարկում, որը, ըստ թերահավատների հաճախակի մեղադրանքների, ավետարանները չեն անցնում: Ի վերջո, չէ՞ որ նրանք անհուսալի հակասում են մեկը մյուսին: Չէ՞ որ ավետարանական տարբեր պատմություններում անհամատեղելի տարբերություններ կան: Ու եթե դա այդպես է, ինչպե՞ս կարող է որևէ մեկը վստահել դրանց ասածին:

Բլոմբերգը չհերքեց փաստը, որ առաջին հայացքից ավետարանները տարբերվում են բազմաթիվ կետերում:

— Ձևակերպումների աննշան տարբերություններից մինչև ամենահայտնի, ակնհայտ հակասություններ,– ասաց նա և շարունակեց,– իմ համոզմունքն այն է, որ եթե հաշվի առնենք ավետարանների տեքստի այն առանձնահատկությունները, որոնց մասին արդեն խոսել ենք՝ վերաշարադրանք, կրճատումներ, բացատրություններ, ընտրված հատվածներ, բացթողումներ, ապա կստացվի, որ ավետարաններն իրենց դարաշրջանի չափանիշներով զգալի համահունչ են միմյանց: Եվ որևէ այլ չափանիշով դրանց մասին դատելն անարդար կլիներ:

— Եվ ահա ինչն է տարօրինակ,– միջամտեցի ես,– եթե ավետարանների տեքստերը ճշգրիտ համընկնեին, մեկը մյուսին բառ առ բառ կրկնեին, մեղադրանքի տեղիք կտար, որ հեղինակները միմյանց հետ նախապես դա-

թվայնացրել է 1915.info կայքը

վադրաբար համաձայնեցրել են իրենց պատմությունները, և անվստահությունը կմեծանար:

— Ճիշտ է,– համաձայնեց Բլոմբերգը: — Եթե ավետարանները կատարելապես համաձայնեցված լինեին միմյանց հետ, այս փաստն ինքնին կասկածներ կառաջացներ հեղինակների անաչառության վերաբերյալ: Կարող էին ասել, որ դրանք ոչ թե չորս անկախ վկայություններ են, այլ միայն մեկը: Մյուսները պարզապես նմանակումներ են:

Մտաբերեցի, թե այդ առիթով ինչ է ասել հայտնի իրավաբան Սայմոն Գրինլիֆը Հարվարդի իրավունքի դպրոցից: Նա ապացույցների վերաբերյալ հիմնարար տրակտատի հեղինակն է: Ուսումնասիրելով ավետարանները դրանց համապատասխանության տեսանկյունից՝ նա հանգել է հետևյալ եզրակացության. «Անհամապատասխանությունները բավարար են ցույց տալու համար, որ հեղինակների միջև նախնական համաձայնություն չի եղել. միաժամանակ համաձայնությունը բավարար է՝ ցույց տալու համար, որ նրանք միմյանցից անկախ պատմում են միևնույն իրադարձությունների մասին»[12]:

Նման կարծիք է հայտնում նաև գերմանացի գիտնական Հանս Շտիերը, որը հին պատմության մասնագետ է: Նա համամիտ է, որ հիմնական տվյալների շուրջ համաձայնությունն ու դետալների տարբերությունն արժանահավատություն է ենթադրում, որովհետև հորինված պատմությունները սովորաբար լիովին համապատասխանում են միմյանց և համընկնում են ամենափոքր մանրամասներում: «Եթե որևէ արտասովոր իրադարձության նկարագրությունն ամբողջովին զերծ է հակասություններից,– գրում է նա,– այն անխուսափելիորեն պատմաբանի կասկածներն է հարուցում»[13]:

Այս ամենը, իհարկե, ճիշտ է: Այնուամենայնիվ, չէի ուզում անտեսել խնդիրները, որոնք առաջանում են ավետարանների թվացյալ հակասություններից: Որոշեցի Բլոմբերգին ավելի մանրամասն հարցնել ամենաակնառու հակասությունների մասին, որոնք թերահավատները սովորաբար բերում են որպես օրինակ՝ պնդելով, որ ավետարաններն անվստահելի են:

թվայնացրել է 1915.info կայքը

Հաղթահարելով հակասությունները

Սկսեցի հարյուրապետի ծառայի բժշկության հայտնի պատմությունից:

— Մատթեոսի ավետարանում ասվում է, որ հարյուրապետն ինքը եկավ Հիսուսին խնդրելու, որ բժշկի իր ծառային: Այնինչ Ղուկասն ասում է, որ հարյուրապետը հրեա երեցներին ուղարկեց Հիսուսի մոտ: Ակնհայտ հակասություն է:

— Ես այդպես չեմ կարծում,– պատասխանեց Բլոմբերգը: — Փորձեք այլ կողմից նայել դրան: Մենք ամեն օր լուրերի հաղորդումներում լսում ենք. «Նախագահն այսօրվա ելույթում հայտարարեց, որ...»: Բայց գիտենք, որ հայտարարության տեքստը գրել է հատուկ մարդ՝ ելույթներ կազմողը, և կարդացել է մամուլի քարտուղարը. նախագահը, լավագույն դեպքում, աչքի է անցկացրել այդ ելույթը: Այնինչ որևէ մեկը չի համարում, որ լրատվականի հաղորդավարները խաբում են մեզ: Նույն կերպ հին աշխարհում լիովին հասկանալի էր և ընդունված, որ մարդկանց հաճախ վերագրվում են գործողություններ, որոնք իրականում կատարել են նրանց ենթակաները կամ պատվիրակները, այս դեպքում՝ հրեա երեցները:

— Այսինքն՝ ուզում եք ասել, որ Մատթեոսն ու Ղուկասը ճիշտ են:

— Հենց դա էլ նկատի ունեմ,– հաստատեց նա:

Այս բացատրությունը հավանական թվաց, ու անցա երկրորդ օրինակին:

— Մարկոսն ու Ղուկասը գրում են, որ Հիսուս դևերին ուղարկեց խոզերի մեջ, գերգեսացիների երկիր, այնինչ Մատթեոսն ասում է, որ դա Գադարեսում էր: Մարդիկ այստեղ տեսնում են ակնհայտ և անհամատեղելի հակասություն. աշխարհագրորեն դրանք երկու տարբեր կետեր են: Գործը կարծես փակված է:

— Մի՛ շտապեք գործը փակել,– քմծիծաղեց Բլոմբերգը: — Կա մեկ այլ վարկած. այդ տեղանուններից մեկը քաղաք էր, մյուսը՝ գավառ:

Դա ինձ չափից դուրս մակերեսային թվաց: Ասես թռուցիկ անցավ այն դժվարությունների վրայով, որոնք վերհանում է այս հարցը:

— Ամեն ինչ ավելի է բարդանում,– ասացի: — Դևերը խոզերի մեջ մտնելով՝ ամբողջ բոլուկը քաշեցին-տարան ժայռից դեպի ծովը, որտեղ նրանք խեղդվեցին, և դա տեղի ունեցավ Գերգեսայի երկրում, մի վայրում, որը շատ հեռու էր Գալիլեայի ծովից:

թվայնացրել է 1915.info կայքը

— Լավ միտք է,– համաձայնեց նա: — Բայց համեմատաբար վերջերս Գալիլեայի ծովի արևելյան ափին, նույն տեղում, հնագետները հայտնաբերեցին հնագույն քաղաքի ավերակներ: Քաղաքի անունն անգլերեն արտասանվում է «Քերսա», բայց, եբրայերեն բառը հունարեն թարգմանելիս կամ տառադարձելիս, կստանանք անվանում, որը հնչողությամբ շատ մոտ է «Գերգեսա» բառի արմատին: Այնպես որ դեպքը կարող էր տեղի ունենալ Քերսա քաղաքում, Գադարես նահանգում:

— Վատ չէր,– ընդունեցի ժպտալով: — Այդ կետում հանձնվում եմ: Բայց ահա մի խնդիր, որն ավելի բարդ է. ի՞նչ կասեք Մատթեոսի ու Ղուկասի ավետարաններում Հիսուսի տոհմաբանության տարբերությունների մասին: Քննադատները հաճախ են դրանք մատնանշում՝ որպես անհուսալիորեն իրարամերժ:

— Իսկ այստեղ,– պատասխանեց Բլոմբերգը,– նորից գործ ունենք տարբերակների ընտրության խնդրի հետ:

— Օրինա՞կ:

— Երկու ամենատարածված տարբերակներից առաջինը հետևյալն է. Մատթեոսը Հիսուսի ծագումնաբանությանը հետևում է Նրա հոգեհոր՝ Հովսեփի տոհմով: Մատթեոսի համար կարևոր է ընդգծել, որ Հիսուսի թագավորական ծագումը գալիս է մինչև Նրա օրինական հայրը: Մինչդեռ Ղուկասը Նրա ծագումնաբանությանը հետևում է Մարիամի տոհմով: Եվ քանի որ և՛ Հովսեփը, և՛ Մարիամը պատկանում էին Դավթի տոհմին, ինչքան վերադառնում ենք անցյալին, այնքան այս ծագումնաբանությունները միանում են:

Երկրորդ տարբերակն ասում է, որ երկու ծագումնաբանություններն էլ օրենքի պահանջները պահպանելու համար անցկացվում են Հովսեփի գծով: Միայն թե Ղուկասի ավետարանում մարդկային գիծն է, իսկ Մատթեոսի ավետարանում՝ օրինական: Նրանք տարբերվում են այն տեղերում, որտեղ տոհմում որևէ մեկը չուներ ուղիղ ժառանգներ, և ժառանգներ դառնում էին այլ մարդիկ՝ համաձայն Հին Կտակարանի ավանդույթների:

Խնդիրն ավելի է բարդանում, որովհետև որոշ անուններ բաց են թողնված, ինչը միանգամայն համապատասխանում է այդ դարաշրջանի չափանիշներին: Կան նաև տեքստային տարընթերցումներ: Մի լեզվից մյուսը թարգմանելիս՝ անունները ձեռք են բերել այլ արտասանություն և ուղղագրություն, ինչը նույնպես շփոթություն է առաջացրել:

Այսպիսով, Բլոմբերգն առաջարկեց առնվազն երկու ռացիոնալ բացատրություն: Դրանք չի կարելի անվանել անհերքելի, բայց հնարավորություն են տալիս հաշտեցնել տարբեր ավետարանների պատմությունները:

Չցանկանալով մեր զրույցը վերածել «Հարցեր գիտնականին» խաղի՝ որոշեցի առաջ անցնել: Ես ու Բլոմբերգը համաձայնության եկանք, որ լավագույն ընդգրկուն մոտեցումը յուրաքանչյուր հարց առանձին-առանձին ուսումնասիրելն է՝ ավետարանների հակասությունները լուծելու խելամիտ եղանակ գտնելու համար: Իհարկե, հեղինակավոր գրքերի պակաս չկա, որոնք մանրակրկիտ, երբեմն հոգնեցնող բծախնդրությամբ քննում են, թե ինչպես կարելի է հարթել այդ տարբերությունները[14]:

— Բացի այդ,– ասաց Բլոմբերգը,– որոշ դեպքերում արժի հետաձգել որոշում ընդունելն ու պարզապես ասել՝ քանի որ ուշադիր ուսումնասիրել ենք ավետարանական տեքստերը և հանգել այն եզրակացության, որ դրանք, ընդհանուր առմամբ, վստահելի են, բոլոր կասկածելի տեղերը՝ չափազանց հազվադեպ և աննշան, կարելի է և պետք է մեկնաբանել հոգուտ ավետարանների:

5. Կանխակալության ստուգում

Այս փորձարկման նպատակը պարզելն է՝ ավետարանների հեղինակներն ունեցե՞լ են կանխակալ կարծիք, որը կարող էր անդրադառնալ նրանց գործի վրա: Չէ՞ որ, եթե ավետարանիչները հետապնդում էին իրենց շահերը, դա չէր կարող չարտացոլվել նրանց աշխատանքում:

— Չենք կարող թերագնահատել փաստը, որ այս մարդիկ սիրում էին Հիսուսին,– նշեցի ես: — Նրանք չեզոք դիտորդներ չէին, Հիսուսին նվիրված հետևորդներ էին: Դա հավանական չի՞ դարձնում, որ փոփոխություններ կանեին Նրան դրական լույսի ներքո ներկայացնելու համար:

— Համաձայն եմ,– պատասխանեց Բլոմբերգը,– դրանով նախադրյալներ են ստեղծվում, որ նման բան տեղի ունենա: Բայց, մյուս կողմից, Հիսուսի հանդեպ ակնածանքն ու մեծարանքն էին, որ մղեցին աշակերտներին արձանագրել նրա կյանքը մեծագույն ազնվությամբ, առանց գունազարդելու: Այդ կերպ ցույց կտային նրա հանդեպ սերը: Ու, իմ կարծիքով, այս դեպքում այդպես էլ եղել է:

թվայնացրել է 1915.info կայքը

Բացի այդ, այս աշակերտները շահելու ոչինչ չունեին՝ բացի քննադատությունից, հալածանքից ու նահատակությունից: Ֆինանսապես հաստատ ոչինչ ձեռք չէին բերելու: Ընդհակառակը, դա պիտի ճնշում գործադրեր, որ լուռ մնան, ուրանան Հիսուսին, նվազեցնեն նրա նշանակությունը, անգամ մոռանան, որ երբևէ հանդիպել են նրան, այնինչ իրենց ազնվության պատճառով հռչակում էին իրենց տեսածը, նույնիսկ երբ դա նշանակում էր տառապանք ու մահ:

6. Տեղեկությունը կոծկելու ստուգում

Երբ մարդիկ վկայում են իրադարձությունների մասին, որոնց ականատես են եղել, հաճախ փորձում են պաշտպանել իրենք իրենց կամ գիտակցաբար լռում են դետալների մասին, որոնք աննպաստ են կամ դժվար բացատրելի: Եվ կասկածի տակ է առնվում նրանց ամբողջ վկայության ճշմարտացիությունը: Ահա թե ինչու Բլոմբերգին հարցրի.

— Ավետարանիչների պատմություններում կա՞ն մանրամասներ, որոնք կարող են նրանց ձեռնտու չլինել կամ իրենց վատ լույսի ներքո ներկայացնել, թե՞ փորձել են հնարավորին չափ պարկեշտ երևալ: Իրենց համար աննպաստ կամ դժվար բացատրելի որևէ բան հաղորդո՞ւմ են:

— Այդպիսի տեղեկությունները բավական շատ են,– ասաց նա: — Հիսուսի ուսմունքը պարունակում է բազմաթիվ, այսպես կոչված, դժվարին ասույթներ: Դրանցից որոշները էթիկական տեսանկյունից պահանջկոտ են, որոշները ենթադրում են բարոյական սխրանք: Եթե իմ ճաշակով կրոն հորինելիս լինեի, հավանաբար ինքս ինձ չէի պատվիրի այնքան կատարյալ լինել, որքան իմ երկնային Հայրն է, կամ շնությունը չէի սահմանի այնպես, որ այն ներառեր նաև մտքում ցանկանալը:

— Բայց,– առարկեցի,– այլ կրոններում ևս պահանջկոտ պնդումներ կան:

— Այո, ճիշտ է, այդ պատճառով էլ դժվարին ասույթներից առավել համոզիչները նրանք են, որոնք կարող են հարմար չգալ նրան, ինչ եկեղեցին ուզում էր սովորեցնել Հիսուսի մասին:

Բլոմբերգի պատասխանն այնքան էլ պարզ չէր:

— Կարո՞ղ եք օրինակ բերել,– հարցրի:

թվայնացրել է 1915.info կայքը

Մի պահ մտածելուց հետո Բլոմբերգն ասաց.

— Օրինակ՝ Մարկոս 6:5-ում ասվում է, որ Հիսուս չկարողացավ մեծ հրաշքներ գործել Նազարեթում, քաղաքի բնակիչների անհավատության պատճառով: Այս խոսքերից կարծես հետևում է, որ Նրա զորությունը սահմաններ ունի: Իսկ Մարկոս 13:32-ում Հիսուս ասում է, որ ինքը չգիտի իր վերադարձի օրը և ժամը: Սա չի՞ նշանակում, որ Նա ամենագետ չէ: Իրականում այստեղ աստվածաբանական որևէ հակասություն չկա. Պողոս առաքյալն ինքը Փիլիպեցիներին 2:5-8-ում պարզ է դարձնում, որ Աստված Քրիստոսում կամովի և գիտակցաբար սահմանափակել է աստվածային հատկանիշների դրսևորումները: Բայց եթե հեղինակը թեթևամտորեն վարվեր ավետարանի պատմության հետ, շատ ավելի հարմար կլիներ ուղղակի բաց թողնել այդ «հակասությունը», քան իրեն ծանրաբեռնել բացատրություններով: Մեկ այլ օրինակ է Հիսուսի մկրտությունը: Իհարկե, կարելի է բացատրել, թե ինչու Հիսուս, որը մեղք չէր գործել, թույլ տվեց, որ իրեն մկրտեն, բայց ավելի հեշտ կլիներ ընդհանրապես չնշել: Խաչի վրա Հիսուս բարձրաձայն գոչեց. «Աստված իմ, Աստված իմ, ինչո՞ւ լքեցիր ինձ»: Մի՞թե ավետարանիչների շահերից չէր բխում բաց թողնել այդ պահը, որը մինչև օրս բազմաթիվ հարցեր է առաջացնում:

— Իհարկե,- ավելացրի,- աշակերտների մասին աննպաստ շատ նյութ կա:

— Ճիշտ է,- ասաց Բլոմբերգը: — Օրինակ՝ Մարկոսը մշտապես աննպաստ է արտահայտվում Պետրոսի մասին, որն առաքյալների մեջ գլխավորն է: Ընդհանրապես, Հիսուսի աշակերտները հաճախ չեն հասկացել Նրան կամ սխալ են հասկացել: Երբ Հակոբոսն ու Հովհաննեսը ձգտում էին զբաղեցնել իրենց տեղերը Հիսուսի աջ և ձախ կողմում՝ Նրա փառքի մեջ, Նա ստիպված էր դժվար դասեր տալ նրանց, թե ինչ է նշանակում լինել ծառա և լինել առաջինը ծառայության մեջ: Երկար ժամանակ աշակերտները մնացին կարճամիտ եսասերներ՝ հոգալով միայն իրենց շահի համար: Այսօր գիտենք, որ ավետարանիչները չեն գրել այն ամենը, ինչ գիտեին. ավետարանն ավարտելով Հովհաննեսը նշում է, թերևս նույնիսկ որոշ չափով չափազանցրած, որ եթե Հիսուսի բոլոր գործերը մեկ առ մեկ գրված լինեին, ապա «այս աշխարհը բավական չէր լինի պարփակելու այդ գրքերը»: Այնպես որ, եթե ավետարանիչները դրա հետ միասին բաց են թողել որոշ «դժվար» պահեր, հազիվ թե որևէ մեկը նրանց մեղադրեր պատմությունը կեղծելու համար: Բայց ահա թե ինչն է էականը. եթե նրանք

թվայնացրել է 1915.info կայքը

բաց չեն թողել նույնիսկ այն, ինչն իրենց հարմար ու շահավետ կլիներ ստվերում թողնել, ապա կարելի է պնդել, որ նրանք ինքնակամ ավելացրել ու փոխել են նյութը՝ առանց պատմական հիմքի:

Բլոմբերգը թողեց՝ հարցը որոշ ժամանակ առկախ մնա, հետո վստահ եզրակացրեց.

— Ես կասեմ՝ ոչ:

7. Հաստատող ապացույցների ստուգում

Այս փորձարկումը սկսեցի մի հարցով:

— Ավետարաններում հիշատակվում են որոշակի մարդիկ, վայրեր և իրադարձություններ. ճիշտ են դրանք անվանված, իրական են: Իհարկե, խոսում եմ այն դեպքերի մասին, երբ դրանք կարելի է ստուգել:

Նման ապացույցները (իրավագիտության մեջ դրանք կոչվում են հաստատող) չափազանց արժեքավոր են, երբ անհրաժեշտ է պարզել՝ հեղինակը ձգտել է միշտ ճշգրիտ լինել:

— Այո,- համոզված պատասխանեց Բլոմբերգը: — Ավելին, որքան երկար են մարդիկ ուսումնասիրում ավետարանները, այնքան ավելի շատ մանրամասներ են հաստատվում: Վերջին 100 տարում հնագիտական գտածոները հաստատել են ավետարանների շատ մանրամասների ճշմարտացիությունը, հատկապես Հովհաննեսի ավետարանի, որը, ճակատագրի հեգնանքով, ամենից շատ է կասկածներ առաջացնում: Իհարկե, չբացահատված առեղծվածներ դեռ կան, հնագիտությունը երբեմն նորերն է ասպարեզ բերում, բայց դրանց թիվը չնչին է՝ հիմնավոր ապացույցների համեմատ: Հիսուսի ուսմունքի ու կյանքի առանցքային դրույթներն ու իրադարձությունները հաստատում են նաև ոչ քրիստոնեական բազմաթիվ աղբյուրներ: Եվ եթե նկատի առնենք, որ հնում պատմագիրների ուշադրության կենտրոնում էին հիմնականում տիրակալները, կայսրերը, թագավորները, կրոնական պաշտոնյաները, զորավարներն ու փիլիսոփաները, ուղղակի զարմանալի է, թե որքան բան են նրանք հաղորդում մեզ Հիսուսի ու նրա հետևորդների մասին, թեև այն ժամանակ, երբ այս պատմագիրները գրում էին, նրանք այս կատեգորիաներից որևէ մեկին չէին համապատասխանում:

Սպառիչ պատասխան էր: Այնուամենայնիվ, թեև Բլոմբերգի իրազեկությանը կասկածելու չնչին պատճառ չունեի, նոթատետրիս լուսանցքում նշեցի. «Ստանալ հնագետի և պատմաբանի փորձագիտական եզրակացությունը»:

8. Վերջին փորձարկում. հակառակ կողմի վկայությունը

Այս փորձարկման նպատակն է պարզել՝ եղե՞լ են ականատեսներ, որոնք կարող էին հերքել կամ ուղղել ավետարանական վկայությունները, եթե դրանք աղավաղված կամ սխալ լինեին: Այլ խոսքով, Հիսուսի ժամանակակիցներից որևէ մեկը պնդե՞լ է, որ ավետարանների պատմությունները ճշմարիտ չեն:

— Այն ժամանակ,– ասաց Բլոմբերգը,– շատերն էին ցանկանում վարկաբեկել քրիստոնեությունն, ու բավականությամբ կանեին դա, եթե միայն կարողանային վերաշարադրել պատմությունը: Բայց ուշադրություն դարձրեք, թե ինչ են ասել Նրա հակառակորդները: Ավելի ուշ հրեական տեքստերում Հիսուսին անվանում են «կախարդ», ինչը մոլորության մեջ գցեց Իսրայելը. օգտագործելով այդ բառը՝ հեղինակներն ընդունում են, որ Հիսուս հրաշքներ է գործել, թեև կարծում են, թե Նրա զորությունը բոլորովին այլ աղբյուրներ ունի: Թվում է, թե նրանք հիանալի հնարավորություն են ունեցել նման մի բան ասելու. «Քրիստոնյաները ձեզ կասեն, որ նա հրաշքներ է գործել, բայց մի՛ հավատացեք, մենք գիտենք ճշմարտությունը»: Այնուամենայնիվ, Հիսուսի հակառակորդները երբեք նման բան չեն ասում: Փոխարենը անուղղակի ընդունում են, որ այն, ինչ ավետարանները գրել են՝ որ Հիսուս հրաշքներ է գործել, ճիշտ է»:

Ես հարցրի.

— Կարո՞ղ էր քրիստոնեական շարժումը արմատավորվել Երուսաղեմում, որտեղ Հիսուս իրականացրել էր իր ծառայության մեծ մասը, խաչվել, թաղվել ու հարություն առել, եթե մարդիկ, որոնք ճանաչում էին Նրան, իմանային, որ աշակերտները չափազանցում կամ խեղաթյուրում են ճշմարտությունը»:

— Չեմ կարծում,– պատասխանեց Բլոմբերգը: — Քրիստոնեական շարժումը սկզբում եղել է փխրուն ու խոցելի, Հիսուսի հետևորդները հալածվել

թվայնացրել է 1915.info կայքը

ու հետապնդվել են: Եթե քննադատները կարողանային մեղադրել քրիստոնյաներին փաստերը խեղաթյուրելու մեջ, նրանք չէին զլանա անել դա:

— Այնուամենայնիվ,– ընդգծեց նա եզրափակելով,– դա տեղի չունեցավ:

Հավատ՝ ամրապնդված փաստերով

Չեմ թաքցնի՝ Բլոմբերգը տպավորություն գործեց ինձ վրա: Բազմագիտակ ու բարձրակիրթ, հասկանալի ու համոզիչ՝ նա ավետարանների հավաստիության ամուր պաշտպանություն էր կառուցել և ապացուցեց, որ ավետարանները գրել են հենց նրանք, ում անուններն են դրանց վրա, նա վերլուծեց Հիսուսի հանդեպ հավատի հիմնական դրույթները՝ ցույց տալով, որ դրանք առաջացել են շատ վաղուց, հիմնավորեց, թե ինչու բանավոր ավանդույթը սրբությամբ պահպանեց Հիսուսի կյանքի ու ծառայության պատմությունը, մանրակրկիտ քննեց ավետարանների առերևույթ անհամապատասխանությունները: Այս բոլոր ապացույցներն ամուր հիմք դարձան իմ հետազոտության համար:

Մինչդեռ հետաքննությունը, որ պիտի պարզեր, թե Հիսուս Աստծո միածին Որդի՞ն է, դեռ երկար պիտի տևեր: Բլոմբերգի հետ զրույցից հետո ինձ համար պարզ դարձավ որ ուղղությամբ շարժվել. ավետարանները, ինչպես ցույց տվեց Բլոմբերգը, լիովին արժանահավատ են, բայց ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ դրանց տեքստերը մեզ հասել են առանց աղավաղումների: Չէ՞ որ դրանից անցել է առնվազն 2000-ամյակ: Ինչպե՞ս իմանանք՝ ավետարանները, որ կարդում ենք այսօր, որևէ նմանություն ունե՞ն բնագրի հետ, որ ստեղծվել է մ. թ. 1-ին դարում: Ավելին, որտեղի՞ց գիտենք, որ ավետարանները Հիսուսի մասին ամբողջ պատմությունն են պատմում:

Նայեցի ժամացույցիս: Եթե ճանապարհին խցանում չլինի, և ժամանակին օդանավակայան հասնեմ, կարող եմ հենց այսօր թռչել Չիկագո: Մինչ գրառումներս էի հավաքում ու անջատում ձայնագրող սարքը, մի անգամ էլ նայեցի Բլոմբերգի դուստրերի նկարներին ու հանկարծ մի պահ նրան պատկերացրի ոչ որպես գիտնական, այլ որպես հայր, որը գիշերը նստում է դուստրերի անկողնու կողքին ու ցածրաձայն խոսում նրանց հետ այն մասին, թե կյանքում ինչն է իրականում կարևոր:

թվայնացրել է 1915.info կայքը

Տեսնես ինչ է ասում նրանց, մտածում էի ես, Աստվածաշնչի, Աստծո մասին, այս Հիսուսի մասին, որն իր մասին այսքան հանդուգն պնդումներ է անում:

Չդիմացա ու տվեցի վերջին հարցը:

— Դուք հավատո՞ւմ եք: Ձեր բոլոր ուսումնասիրություններն ինչպե՞ս են ազդել Ձեր համոզմունքների վրա:

Հազիվ էի խոսքս ավարտել, երբ պատասխանեց առանց վարանելու.

— Կասկած չկա՝ միայն ամրապնդել են այն: Սեփական հետազոտությունից գիտեմ, որ ավետարանների պատմությունների հուսալիության շատ ամուր ապացույցներ կան,– մի պահ լռեց ու շարունակեց,– գիտեք, պարադոքս է, չէ՞ որ Աստվածաշունչը գովելի է համարում հենց այն հավատը, որն ապացույց չի պահանջում: Հիշեք, թե ինչպես Հիսուս պատասխանեց թերահավատ Թովմասին. «Հավատացիր, որովհետև տեսար ինձ. երանի՜ նրանց, ովքեր չեն տեսել, սակայն կհավատան»: Ու ես գիտեմ, որ ապացույցները երբեք չեն կարող հավատ առաջացնել կամ հավատ պարտադրել: Մենք չենք կարող փոխարինել Սուրբ Հոգուն ու նրա դերը կատարել, ինչը հաճախ մտահոգում է քրիստոնյաներին, երբ նրանք այս տեսակ քննարկումներ են լսում: Բայց ահա թե ինչ կասեմ. Նոր Կտակարանն ուսումնասիրող գիտնականներից շատերը, որոնք սկզբում քրիստոնյաներ չեն եղել, հենց այս հարցերը հետազոտելով, սկսել են հավատալ Քրիստոսին: Ու անհաշվելի շատ են եղել այն գիտնականները՝ արդեն հավատացյալ, որոնց հավատն ավելի հիմնավոր ու ամուր է դարձել փաստերի շնորհիվ, ու ես էլ եմ պատկանում նրանց դասին:

Ինչ վերաբերում է ինձ, սկզբում պատկանում էի առաջին դասին: Ոչ, ես գիտնական չէի, ես թերահավատ էի, պսակազերծող, անողոք լրագրող, որը ձեռնամուխ էր եղել բացահայտել ճշմարտությունը Հիսուսի մասին, այն Մարդու, որն Իր մասին ասել է. «Ես եմ Ճանապարհը, Ճշմարտությունն ու Կյանքը»:

Փակեցի պայուսակս, կանգնեցի և շնորհակալություն հայտնեցի Բլոմբերգին: Այժմ կարելի է հանգիստ թռչել Չիկագո: Հետաքննությունը հաջող է սկսվել:

թվայնացրել է 1915.info կայքը

Քննարկումներ

Հարցեր խորհրդածելու կամ խմբային պարապմունքի համար

1. Ապացույցների այս ութ փորձարկումներին տրված Բլոմբերգի պատասխանները ինչպե՞ս և ինչո՞ւ են ազդել ավետարանների հավաստիության մասին ձեր կարծիքի վրա:
2. Այս ութ փորձարկումներից ո՞րն եք համարում առավել համոզիչ և ինչո՞ւ:
3. Երբ տարբեր մարդիկ փոքր-ինչ տարբեր մանրամասներով են պատմում միևնույն իրադարձությունը, կասկածո՞ւմ եք նրանց հաղորդածի արժանահավատությանը, թե՞ փորձում եք ապացույցները համադրելու խելամիտ եղանակ գտնել: Որքանո՞վ էր համոզիչ Բլոմբերգի վերլուծությունը ավետարանների առերևույթ հակասությունների վերաբերյալ:

թվայնացրել է 1915.info կայքը

ԳԼՈՒԽ 3

Փաստագրական ապացույցներ

Քրիստոսի կենսագրություններն անխաթար են հասել մեզ

Որպես Chicago Tribune-ի լրագրող, ես «փաստաթղթեր կրծող էի»: Անհամար ժամեր էի անցկացնում դատական գործերը քրքրելով ու հոտոտելով, որ նորության պատառիկ գտնեմ: Դա ջանք ու ժամանակ էր պահանջում, բայց հատուցվում էր: Ինձ հաջողվում էր մրցակիցներիցս առաջ անցնել՝ առաջին էջին կանոնավոր հայտնվող պատմություններով:

Օրինակ՝ մի անգամ ինձ հաջողվեց գտնել ատենակալների ինչ-որ խիստ գաղտնի սղագրություն, որը պատահաբար դրվել էր հանրային գործերի մեջ: Դրանից հետո մի քանի հոդված գրեցի խոշոր խարդախության մասին՝ բացահայտելով ուռճացրած ծախսերը որոշ շինարարական նախագծերի (ներառյալ ամենամեծ ավտոճանապարհների կառուցումը), որոնք ֆինանսավորվում էին քաղաքային բյուջեից:

Բայց փաստաթղթերի ամենաանհավատալի թաքստոցը, որ երբևէ հայտնաբերել եմ, գտնվեց մի հիշարժան գործի մեջ, որով Ford Motor ընկերությունը մեղադրվում էր անզգուշությամբ մահ պատճառելու մեջ, երբ երեք դեռահաս այրվեցին և մահացան փոքրիկ երկդռնանի Pinto-ում: Առաջին անգամ ամերիկյան արտադրողին քրեական հանցագործության մեղադրանք էր ներկայացվում ենթադրաբար վտանգավոր ապրանք շուկա մտցնելու համար:

Թերթելով այս գործն Ինդիանա նահանգի փոքրիկ Ուինամակ քաղաքի դատարանում՝ գտա Ford-ի բազմաթիվ ներքին փաստաթղթեր, որոնք բացահայտում էին, որ ավտոարտադրողին նախապես էր հայտնի, որ Pinto-ն կարող էր պայթել, եթե, ժամում 30 կմ արագությամբ ընթանալիս, հետևից հարվածեին: Փաստաթղթերը ցույց էին տալիս, որ ավտոարտադրողը որոշել էր չբարելավել մեքենայի անվտանգությունը՝ յուրաքանչյուր մեքենայից մի քանի դոլար խնայելու և բեռնախցիկի ծավալն ավելացնելու համար:

թվայնացրել է 1915.info կայքը

Ford-ի իրավաբաններից մեկը, որ պատահաբար անցնում էր իմ կողքով, նկատեց, որ պատժենում եմ փաստաթղթերը, և գլխապատառ նետվեց դատավորի մոտ՝ պահանջելով փակել այդ թղթապանակի հասանելիությունը:

Բայց արդեն ուշ էր: Իմ հոդվածը, որ վերնագրված էր «Ford-ն անտեսել է Pinto-ի հրկիզման վտանգը. գաղտնի զեկուցագրեր», լույս տեսավ Tribune-ում և արագ տարածվեց երկրով մեկ[15]:

Ստուգելով փաստաթղթերի իսկությունը

Սակայն կորպորացիայի գաղտնի փաստաթղթերը ձեռք բերելը գործի կեսն է միայն: Նախքան լրագրողը դրանք կիրապարակի, դատախազը կընդունի որպես ապացույց, անհրաժեշտ է ստուգել դրանց իսկությունը:

Օրինակ՝ նույն «Pinto-ի թղթերը». կեղծված չեն Ford-ի ֆիրմային բլանկները, որոնց վրա դրանք գրվել են: Ստորագրություններն իրական են: Ինչպես կարող էի հաստատ իմանալ: Ու քանի որ ակնհայտորեն փաստաթղթերը շատ անգամ պատժենահանվել են, այդ ընթացքում չեն սպրդել աղճատումներ: Այլ խոսքով, ինչպես կարող էի վստահ լինել, որ պատժեններից յուրաքանչյուրը նույնական է բնօրինակի հետ, որը ես չեմ տեսել:

Ավելին, ինչպես կարող էի վստահ լինել, որ այդ փաստաթղթերն արտացոլում են իրադրությունն ամբողջությամբ: Ի վերջո, դրանք ներկայացնում էին Ford Corporation-ի ներքին գրագրության միայն մի փոքր մասը: Գուցե կան այլ փաստաթղթեր՝ հանրության աչքից դեռևս թաքցված, որ բոլորովին այլ լույս կսփռեին խնդրի վրա, եթե հայտնաբերվեին:

Նույնքան կարևոր հարցեր են ծագում Նոր Կտակարանի ուսումնասիրության ժամանակ: Երբ բացում եմ Աստվածաշունչը, իմ ձեռքում հին պատմական փաստաթղթերի պատժեններն են: Հիսուսի կենսագրությունների իսկական ձեռագրերը՝ Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի ու Հովհաննեսի, Հին Կտակարանի մյուս բոլոր գրքերի բնօրինակները վաղուց փոշի են դարձել: Ուրեմն ինչպես կարող եմ վստահ լինել, որ այս «ժամանակակից տարբերակը»՝ դարերի ընթացքում արված անհամար պատժենների արդյունքը, որևէ նմանություն ունի նրան, ինչ հեղինակները գրել են սկզբնապես:

Ինչպե՞ս կարող եմ իմանալ նաև՝ այս չորս կենսագրություններում ամբո՞ղջ պատմությունն է շարադրված: Իսկ եթե Հիսուսի այլ կենսագրություններ էլ են եղել, որոնք գրաքննության են ենթարկվել, որովհետև վաղ եկեղեցուն դուր չէր գալիս Հիսուսի՝ դրանց պատկերած կերպարը: Ինչպե՞ս կարող էի վստահ լինել, որ եկեղեցական քաղաքականությունը չի ոչնչացրել Հիսուսի կենսագրությունները՝ ոչ պակաս ճշգրիտ, քան այն չորսը, որ վերջում ներառվել են Նոր Կտակարանում, և որոնք կարևոր, նոր լույս կսփռեին Նազարեթցի հյուսնի՝ այս հակասական Անձի խոսքերի ու գործերի վրա:

Այսպիսով, իմ առջև ամենաուշադիր քննարկման արժանի երկու հարց կար՝ չե՞ն աղճատվել Հիսուսի կենսագրությունները մինչև մեզ հասնելը, և եկեղեցին չի՞ ոչնչացրել այլ՝ ոչ պակաս ճշգրիտ և վստահելի կենսագրություններ: Գիտեի, որ կա մի գիտնական, որն այս հարցերում ճանաչված հեղինակություն է համարվում: Նրան հանդիպելու համար թռա Նյուարք և մեքենա վարձելով շարժվեցի Փրինսթոն:

2-ՐԴ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ
Բրյուս Մ. Մեցգեր, փիլիսոփայության դոկտոր

84-ամյա Բրյուս Մեցգերին շաբաթ երեկոյան գտա իր սովորական ժամանցի վայրում՝ Փրինսթոնի Աստվածաբանական սեմինարիայի գրադարանում:

— Սիրում եմ սրբել գրքերի փոշին,– ժպտաց:

Այդ գրքերից շատերը գրել է հենց ինքը, մասնավորապես՝ գերազանց գրքեր Նոր Կտակարանի մասին: Ընդհանուր առմամբ, դոկտոր Մեցգերը գրել ու խմբագրել է 50 գիրք, որոնց թվում են «Նոր Կտակարանը. ծագումը, զարգացումն ու բովանդակությունը», «Նոր Կտակարանի տեքստը», «Նոր Կտակարանի կանոնը», «Հունարեն Աստվածաշնչի ձեռագրերը», «Հունարեն Նոր Կտակարանի տեքստային մեկնաբանություններ», «Պարականոն գրքերի ներածություն», «Աստվածաշնչի օքսֆորդյան ուղեցույց»: Մի քանիսը թարգմանվել են գերմաներեն, չինարեն, ճապոներեն, կորեերեն, մալգաշերեն և այլ լեզուներով: Դոկտոր Մեցգերը Նոր օքսֆորդյան ծանոթագրություններով Աստվածաշնչի խմբագրական կոլեգիայի

թվայնացրել է 1915.info կայքը

անդամ է (այս կոլեգիան ներառում է նաև պարականոն գրքերը) և «Նոր Կտակարանի ուսումնասիրություն և վերլուծության մեթոդներ» շարքի ավելի քան 25 հատորների պատասխանատու խմբագիրը:

Բրյուս Մեցգերը ստացել է մագիստրոսի կոչում Փրինսթոնի աստվածաբանական սեմինարիայում, իսկ մագիստրոսի կոչում և դոկտորական աստիճան՝ հեղինակավոր Փրինսթոնի համալսարանում: Նա հինգ քոլեջների ու համալսարանների պատվավոր դոկտոր է, որոնց թվում են Սբ Անդրեասի ամենահին շոտլանդական համալսարանը, Մյունստերի համալսարանը (Գերմանիա) և Պոչեֆստրում համալսարանը (Հարավային Աֆրիկա):

1969-ին նա հրավիրված գիտաշխատող էր Թինդեյլ Հաուս հրատարակչությունում (Քեմբրիջ), 1974-ին՝ արտահաստիքային գիտաշխատող Քլեր Հոլում (Քեմբրիջ), իսկ 1979-ին՝ Ուոլֆսոնի քոլեջում (Օքսֆորդ): Բրյուս Մեցգերը Փրինսթոնի աստվածաբանական սեմինարիայի պատվավոր պրոֆեսոր է, որտեղ 46 տարի դասավանդել է Նոր Կտակարանը[16]:

Մեցգերն Աստվածաշնչի Նոր, վերանայված ստանդարտ տարբերակի (NRSV) հանձնաժողովի նախագահն էր, Բրիտանական ակադեմիայի թղթակից անդամ, Գերմանիայի Բերոնի աբբայության Vetus Latina ինստիտուտի համադրող: Նախագահում էր Աստվածաշնչյան գրականության ընկերությունը, Նոր Կտակարանի հետազոտության միջազգային ընկերությունն ու Հայրաբանության Հյուսիսամերիկյան ընկերությունը:

Բացեք Նոր Կտակարանի տեքստին վերաբերող որևէ հեղինակավոր աշխատության ծանոթագրությունները և, անկասկած, կտեսնեք, որ կրկին ու կրկին հղում են անում Մեցգերին: Նրա գրքերը պարտադիր ընթերցանության նյութ են աշխարհի տարբեր համալսարաններում ու սեմինարիաներում: Աստվածաբանական տարբեր հայացքների տեր գիտնականները նրան չափազանց բարձր են գնահատում:

Բրյուս Մեցգերը ծնվել է 1914-ին: Նրա ոճը հիշեցնում է անցած ժամանակները: Ահա նա դուրս է գալիս մոխրագույն բյուիկից, որն անվանում է «իմ բենզինով սայլը», հագին մուգ մոխրագույն պիջակ ու կապույտ պեյզլի փողկապ է: Սա նրա ամենօրյա հանդերձանքն է, որով գրադարան է գնում և՛ աշխատանքային, և՛ հանգստյան օրերին: Ալեխառն մազերը կոկիկ սանրած են, աչքերը պայծառ են և ուշադիր, առանց շրջանակի ակնոցով է: Դոկտոր Մեցգերն այլևս նախկինի պես արագ չի քայլում, բայց դեռ

հեշտությամբ բարձրանում է երկրորդ հարկ, իր ասկետական աշխատասենյակը, որտեղ գիտական աշխատանք է կատարում:

Ամենևին չի կորցրել հումորի զգացումը: Նա ինձ ցույց տվեց թիթեղյա տուփ, որ ժառանգել էր որպես NRSV հանձնաժողովի նախագահ: Մեցգերը բաց արեց կափարիչը և ցույց տվեց մոխիրը՝ RSV Աստվածաշնչի, որը խարույկի վրա այրել էր ուղղափառ քարոզիչը 1952-ին, ի նշան բողոքի:

— Նրան կարծես դուր չէր եկել, որ Եբրայեցիներին 1:9-ում հանձնաժողովը Ջեյմս թագավորի տարբերակի «գործակիցներին» բառը փոխել և դարձրել էր «ընկերներին»,- ծիծաղելով բացատրեց Մեցգերը: — Նրանց մեղադրում էր կոմունիստ լինելու մեջ:

Մեցգերը դանդաղ է խոսում, բառերը փնտրելով, պատասխանում է հնաոճ արտահայտություններով, ասենք՝ «միանգամայն այդպես է», բայց այն ամենում, ինչ վերաբերում է Նոր Կտակարանին, առաջվա պես գիտական մտքի առաջնագծում է: Երբ որոշ վիճակագրական տվյալներ խնդրեցի, նա չդիմեց 1992-ին հրատարակված իր գրքին, այլ լրացուցիչ հետազոտություն արեց՝ ինձ ավելի թարմ տեղեկություններով ապահովելու համար: Նրա աշխույժ միտքն առանց դժվարության մանրամասներ է հիշում մարդկանց ու վայրերի վերաբերյալ, ուշադրությունից չի վրիպում Նոր Կտակարանը հետազոտողների բանավեճերի և ոչ մի մանրամասն: Գործընկերները բարձր են գնահատում նրա իմաստությունն ու ներըմբռնումը:

Նրա աշխատասենյակը, որ բանտախցի չափ էր, պատուհաններ չուներ ու ներկված էր գերատեսչություններին հատուկ մոխրագույնով: Երկու հասարակ, փայտե աթոռ կար: Պնդեց, որ նստեմ ավելի հարմարավետին: Այս ամենի մեջ շատ հուզիչ ինչ-որ բան կար: Տեսնելով նրա բարությունը, համեստությունն ու խոնարհությունը՝ ցանկանում ես ծերանալ նույնպիսի մեղմ վայելչությամբ:

Ծանոթության առթիվ մի քանի խոսք փոխանակելուց հետո անցա ինձ հետաքրքրող հարցերից առաջինին՝ ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ Հիսուսի՝ մեզ հասած կենսագրությունները վստահելի են:

թվայնացրել է 1915.info կայքը

Կրկնօրինակների կրկնօրինակների կրկնօրինակները

— Ձեզ հետ անկեղծ կլինեմ,– ասացի Մեցգերին,– երբ առաջին անգամ պարզեցի, որ Նոր Կտակարանի որևէ բնօրինակ չի պահպանվել, իսկապես թերահավատորեն տրամադրվեցի: Մտածեցի՝ եթե ամբողջ ունեցածներս կրկնօրինակների կրկնօրինակներ են, ինչպե՞ս կարող եմ վստահ լինել, որ Նոր Կտակարանը, որն ունենք այսօր, որևէ նմանություն ունի նրա հետ, որը գրվել է սկզբում: Ի՞նչ կասեք:

— Այդ խնդիրը վերաբերում է ոչ միայն Աստվածաշնչին. այդ հարցը կարող ենք տալ հնուց մեզ հասած շատ այլ փաստաթղթերի մասին,– պատասխանեց նա: — Բայց Նոր Կտակարանի օգտին է խոսում այն, որ հնագույն այլ գործերի համեմատ պահպանվել են աննախադեպ մեծ թվով կրկնօրինակներ:

— Ինչո՞ւ է դա կարևոր,– հարցրի:

— Որքան կրկնօրինակներն ավելի հաճախ համապատասխանեն միմյանց, հատկապես եթե երևան են եկել տարբեր աշխարհագրական տարածքներում, այնքան ավելի շատ հնարավորություններ կան դրանց փոխադարձ համեմատության համար, ինչը հնարավորություն է տալիս պարզել, թե փաստաթղթի բնօրինակն ինչպիսին է եղել: Իսկ դրանք կարող են համապատասխանել միայն այն դեպքում, եթե պատկանեն նույն «տոհմածառին», որը ներկայացնում է ձեռագրերի ծագումը:

— Հասկանալի է,– ասացի,– որքան շատ ձեռագրեր տարբեր վայրերից, այնքան լավ: Բայց ի՞նչ կասեք փաստաթղթերի տարիքի մասին: Դա նույնպես կարևոր է, այնպես չէ՞:

— Միանգամայն իրավացի եք,– պատասխանեց: — Եվ սա ևս Նոր Կտակարանի օգտին է խոսում: Ունենք կրկնօրինակներ, որոնք բնագրից ընդամենը մի քանի սերունդ հեռավորության վրա են, մինչդեռ այլ հին տեքստերի դեպքում՝ գուցե հինգ, ութ կամ տասը դար է բաժանում բնօրինակը պահպանված ամենավաղ կրկնօրինակից: Բացի հունարեն ձեռագրերից՝ ավետարանների բավականին հին թարգմանություններ կան նաև այլ լեզուներով՝ լատիներեն, ասորերեն ու ղպտերեն: Կան նաև, այսպես կոչված, երկրորդային թարգմանություններ, որոնք արվել են քիչ ավելի ուշ, օրինակ՝ հայերենն ու գոթերենը: Եվ շատ այլ, ամենաբազմազան լեզուներով թարգմանություններ կան՝ վրացերեն, եթովպերեն:

— Ինչպե՞ս կարող է դա օգնել:

— Նույնիսկ եթե հունարեն տեքստերը մեզ չհասնեին, կկարողանայինք վերականգնել Նոր Կտակարանի բովանդակությունը՝ համադրելով այս համեմատաբար վաղ թարգմանությունների տեղեկությունները: Եվ նույնիսկ եթե կորցնեինք բոլոր հունարեն ձեռագրերն ու վաղ թարգմանությունները, միևնույն է, կկարողանայինք վերարտադրել Նոր Կտակարանի բովանդակությունը վաղ եկեղեցու հայրերի բազմաթիվ մեջբերումներից, որ կատարել են իրենց մեկնություններում, քարոզներում, նամակներում:

Այս ամենը տպավորիչ էր հնչում, բայց ոչ լիովին համոզիչ: Նոր Կտակարանի իսկությունն ավելի լավ գնահատելու համար ավելի լայն համատեքստ էր պետք: Օրինակ՝ ինչպիսի՞ն է այն հին ժամանակների այլ գործերի համեմատ:

Ձեռագրերի լեռ

— Դուք խոսում եք Նոր Կտակարանի բազմաթիվ ձեռագրերի մասին,– սկսեցի ես: — Եկեք քանակական համեմատություն անենք այլ հին գրքերի հետ, որոնք գիտությունը հավաստի է ճանաչում: Պատմեք, օրինակ, Հիսուսի ժամանակների հեղինակների գործերի մասին:

Մեցգերը մի հայացք նետեց իր գրառումներին, որոնք հետն էր բերել՝ ասես կանխատեսելով այս հարցը:

— Դիտարկենք Տակիտոսին՝ հռոմեացի պատմաբանին, որն իր «Տարեգրությունները»՝ կայսերական Հռոմի պատմությունը, գրել է Ք. հ. մոտ 116-ին: Տարեգրության առաջին վեց գրքերը պահպանվել են միայն մեկ ձեռագրով և կրկնօրինակվել Ք. հ. մոտ 850-ին: 11-16-րդ գրքերը պահպանվել են 11-րդ դարի ձեռագրերում: 7-10-րդ գրքերը չեն պահպանվել: Տեսեք, թե քանի դար է անցել այն ժամանակաշրջանից, երբ Տակիտոսը նյութեր հավաքեց ու գիրք գրեց մինչև պահպանված մի քանի ձեռագրերը ստեղծվելը: Կամ, ասենք, 1-ին դարի պատմիչ Հովսեփոս Փլաբիոսը: Մենք ունենք նրա «Հրեական պատերազմի» ինը հունարեն ձեռագիր, և այդ կրկնօրինակները գրվել են 10-րդ, 11-րդ, 12-րդ դարերում: Ունենք նաև 4-րդ դարի լատիներեն թարգմանություն և 11-12-րդ դարերի հին ռուսերեն փաստաթղթեր:

թվայնացրել է 1915.info կայքը

Ապշած էի: Պարզվում է՝ ընդամենը մի բարակ ձեռագիր թել է կապում հնագույն ստեղծագործությունները ժամանակակից աշխարհի հետ:

— Իսկ հիմա համեմատության համար,– հարցրի ես,– Նոր Կտակարանի քանի՞ հունարեն օրինակ է պահպանվել մինչև օրս:

Մեցգերի աչքերը փայլեցին, իսկ ձայնը ոգևորությունից մի օկտավա բարձրացավ:

— 5000-ից ավելին կատալոգավորված է[17]:

Դա ձեռագրերի մի ամբողջ լեռ էր Տակիտոսի ու Հովսեփոսի մրջնաթումբերի համեմատ:

— Հին աշխարհում դա արտասովոր էր: Իսկ ո՞վ է երկրորդ տեղում,– հարցրի:

— Այլ հնագույն աշխատությունների համեմատ Նոր Կտակարանի նյութերի քանակն ուղղակի ապշեցնող է,– ասաց նա: — Գրավոր ապացույցների թվով հաջորդը Հոմերոսի Իլիականն է՝ հին հույների յուրատեսակ Աստվածաշունչը: Այն մեզ հասել է 650-ից պակաս ձեռագրերով, հաճախ միայն հատվածաբար: Ամենավաղ օրինակները թվագրվում են Ք. հ. 2-3-րդ դարերով: Եթե հիշենք, որ Հոմերոսն իր էպոսը ստեղծել է Ք. ա. մոտ 800 թվականին, ապա խզվածքը շատ մեծ է:

«Շատ մեծ է», մեղմ ասած. դա հազար տարի էր: Իրականում անհամեմատելի էր: Նոր Կտակարանի գրավոր ապացույցների թիվը վիթխարի է այլ պատկառելի հնագույն աղբյուրների համեմատ, գրքեր, որոնց իսկությանը գիտնականները կասկած չունեն:

Նոր Կտակարանի ձեռագրերի հանդեպ իմ հետաքրքրությունը բորբոքվեց, և Մեցգերին խնդրեցի նկարագրել դրանցից մի քանիսը:

— Դրանցից ամենահինը պապիրուսի կտորներ են. թղթի այս հնագույն նախատիպը պատրաստում էին Եգիպտոսում՝ Նեղոսի դելտայի ճահճուտներում աճող պապիրուս բույսից,– ասաց նա: — Մեզ են հասել պապիրուսի 99 կտորներ, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է մի փոքրիկ հատվածից մինչև Նոր Կտակարանի մի քանի գրքեր: Ամենանշանակալի գտածոն, այսպես կոչված, «Չեստեր Բիթի աստվածաշնչյան պապիրուսն» է, որ հայտնաբերվել է 1930-ին: Համար մեկ պապիրուսը, որը թվագրվում է 3-րդ դարով, պարունակում է հատվածներ չորս ավետարաններից և «Գործք առաքելոց» գրքից: Համար երկու պապիրուսը, որը թվագրվում է մոտ 200 թվականով, պարունակում է երկու մեծ

հատված Պողոս առաքյալի ութ նամակներից և Եբրայեցիներին ուղղված նամակի հատվածներ: Համար երեք պապիրուսը, որը թվագրվում է երրորդ դարով, մեծ հատված ունի Հայտնության գրքից: Կարևոր պապիրուսե ձեռագրերի մեկ այլ խումբ ժամանակին ձեռք է բերել շվեյցարացի մատենասեր Մարտին Բոդմերը: Սրանցից ամենահինը՝ մոտ 200 թվականի, պարունակում է Հովհաննեսի ավետարանի գրեթե երկու երրորդը: Մեկ այլ պապիրուս, որը Ղուկասի ու Հովհաննեսի ավետարաններից մասեր է պարունակում, թվագրվում է 3-րդ դարով:

Ստացվում է, որ Հիսուսի կենսագրությունները գրվելու և ամենավաղ ձեռագրերն ի հայտ գալու միջև եղած ժամանակային տարբերությունը չափազանց փոքր է: Բայց ո՞րն է մեր ունեցած ամենահին ձեռագիրը: Որքա՞ն կարող ենք մոտենալ բնօրինակների ժամանակներին, որոնք փորձագետները «բնագրեր» են անվանում:

Պապիրուսի պատառիկը, որը փոխեց պատմությունը

— Նոր Կտակարանի ընդօրինակություններից ո՞րն է համարվում ամենահինը,– հարցրի ես:

Մեցգերը պատասխանի շուրջ մտածելու կարիք չուներ:

— Հովհաննեսի ավետարանի 18-րդ գլխից մի հատված,– ասաց: — Հինգ տող ունի, երեքը՝ մի կողմում, երկուսը՝ մյուս, չափսերն էլ՝ մոտ 6x9 սմ:

— Ինչպե՞ս է հայտնաբերվել:

— Եգիպտոսում են գտել դեռ 1920-ին, բայց տարիներով աննկատ մնացել է պապիրուսի նմանատիպ կտորների միջև: 1934-ին պատահաբար այն նկատեց Քոլին Ռոբերտսը՝ Օքսֆորդի Սուրբ Հովհաննես քոլեջից, երբ Մանչեստրի Ջոն Ռայլանդսի գրադարանում պապիրուսներն էր զննում: Անմիջապես հասկացավ, որ Հովհաննեսի ավետարանի պահպանված մաս է: Ձեռագրի բնույթով կարողացավ որոշել այս փաստաթղթի տարիքը:

— Եվ ի՞նչ եզրակացության եկավ,– հարցրի,– որքա՞ն հին է այն:

— Նա եզրակացրեց, որ գրվել է Ք. հ. 100-150 թթ.: Հայտնի շատ հնագրագետներ՝ սըր Ֆրեդերիկ Քենյոնը, սըր Հարոլդ Բելը, Ադոլֆ Դեյսմանը, Հաթչը, Ուլրիխ Վիլկենն ու այլք, համաձայնել են նրա գնահատականի

թվայնացրել է 1915.info կայքը

հետ: Դեյսմանը վստահ էր, որ այն գրվել է առնվազն կայսր Ադրիանոսի (117–138) կամ նույնիսկ Տրայանոսի (98–117) իշխանության տարիներին:

Դա ապշեցուցիչ բացահայտում էր: Չէ՞ որ 19-րդ դարի գերմանացի սկեպտիկ աստվածաբանները եռանդուն պնդում էին, որ չորրորդ ավետարանը գրվել է 160 թվականից ոչ շուտ, հետևաբար չի կարող համարվել հուսալի պատմական փաստաթուղթ: Հիսուսի երկրային կյանքի ժամանակից չափազանց շատ տարիներ են անցել: Այս տեսակետն այնքան է արմատավորվել, որ գիտնականների ամբողջ սերունդներ բացահայտ անվստահությամբ են վերաբերվել Հովհաննեսի ավետարանին:

— Ստացվում է, որ գիտնականները ստիպված էին ամբողջությամբ վերանայել իրենց տեսակետները,– նկատեցի ես:

— Անկասկած,– համաձայնեց Մեցգերը: — Հովհաննեսի ավետարանի այս ամենահին օրինակը պատկանում էր Եգիպտոսի քրիստոնեական համայնքին, որը բավական հեռու է Փոքր Ասիայի Եփեսոսից, որտեղ ենթադրաբար ստեղծվել է բնօրինակը:

Այս գտածոն բառացիորեն շրջեց այն ժամանակվա պատմական հայացքները՝ Հովհաննեսի ավետարանը գրելու ժամանակը շատ ավելի մոտեցնելով Հիսուսի՝ երկրի վրա գտնվելու օրերին: Մտքումս նշեցի, որ հնագետից պետք է ճշտել, թե կա՞ն չորրորդ ավետարանի իսկությունը հաստատող այլ գտածոներ:

Ապացույցների առատություն

Նոր Կտակարանի ամենահին ընդօրինակությունները գրված են պապիրուսի վրա, բայց կան նաև ձեռագրեր մագաղաթի վրա, որ պատրաստվում էր հորթի, ոչխարի, այծի ու այծքաղի կաշվից:

— Կան, այսպես կոչված, ունցիալ ձեռագրեր, որոնք գրված են միայն հունարեն մեծատառերով,– բացատրեց Մեցգերը: — Այսօր մեր տրամադրության տակ կա 306 նման ձեռագիր. մի քանիսը թվագրվում են դեռ 3-րդ դարով: Դրանցից ամենաարժեքավորներն են «Սինայի ձեռագիրը»՝ Նոր Կտակարանի միակ ամբողջական օրինակն ունցիալ գրությամբ, և ոչ ամբողջական՝ «Վատիկանի ձեռագիրը»: Երկուսն էլ թվագրվում են մոտ 350 թվականով: Մոտավորապես 800 թվականին առաջացավ

գրի մի նոր ոճ, որն ավելի մոտ էր շեղագրին և կոչվում էր մինուսկուլա. այդպիսի մոտ 2856 ձեռագիր կա: Կան նաև լեկցիոնարներ, որոնք Նոր Կտակարանի գրություններ են պարունակում այն հերթականությամբ, որով պիտի ընթերցվեր վաղ եկեղեցում պատշաճ ժամանակ, տարվա ընթացքում: Ընդհանուր թվով 2403 նման ձեռագիր գրանցվել է կատալոգներում: Դա հունարեն ձեռագրերի ընդհանուր թիվը հասցնում է 5664-ի:

Հունարեն փաստաթղթերից բացի՝ կան Նոր Կտակարանի հազարավոր հին ձեռագրեր այլ լեզուներով, 8000-10,000 լատինական վուլգատա ձեռագրեր և մոտ 8000 եթովպական, սլավոնական ու հայկական օրինակներ: Ընդհանուր առմամբ, գոյություն ունի մոտ 24,000 ձեռագիր:

— Ուրեմն ո՞րն է Ձեր եզրակացությունը,– հարցրի ես՝ ցանկանալով համոզվել, որ նրան ճիշտ եմ հասկացել: — Ելնելով ձեռագրերի թվից, նաև բնօրինակների ու առաջին պահպանված ընդօրինակությունների միջև ժամանակային ընդմիջումից՝ ինչպիսի՞ն է Նոր Կտակարանը այլ հին գործերի համեմատ:

— Ուղղակի հիանալի,– պատասխանեց: — Կարող ենք մեծապես վստահել մեզ հասած տեքստի ստույգությանը, հատկապես որևէ այլ հին գրական գործի համեմատ:

Այդ եզրակացության հետ համամիտ են տարբեր երկրների ականավոր գիտնականներ: Ահա թե ինչ է գրել Մանչեստրի համալսարանի ականավոր պրոֆեսոր, «Նոր Կտակարանի փաստաթղթերը. վստահելի՞ են դրանք» գրքի հեղինակ, հանգուցյալ Ֆ. Ֆ. Բրյուսը. «Ամբողջ հին գրականության մեջ չկա որևէ տեքստ, որն արժանահավատ փաստագրական վավերացումների այնպիսի ծավալ ունենար, որքան Նոր Կտակարանը»[18]:

Մեցգերն արդեն նշել էր Բրիտանական թանգարանի նախկին տնօրեն և «Հունական պապիրուսների հնագրության» հեղինակ սըր Ֆրեդերիկ Քենյոնի անունը, որի խոսքով՝ «ուրիշ որևէ դեպքում գիրքը գրելու և ամենավաղ ձեռագրերի միջև ժամանակային միջակայքն այնքան կարճ չէ, որքան Նոր Կտակարանի պարագայում»[19]: Այնուհետև նա եզրակացնում է. «Կասկածի վերջին հիմնավորումը, որ Սուրբ գրերը մեզ են հասել հիմնականում այնպես, ինչպես գրվել են, հիմա վերացված է»[20]:

Իսկ ձեռագրերի միջև անհամապատասխանությունները: Այն ժամանակ պատճենահանող սարքեր չկային, ձեռագրերն արտագրում էին

թվայնացրել է 1915.info կայքը

գրիչները, տառ առ տառ, բառ առ բառ, տող առ տող՝ ոչ առանց սխալնե-
րի: Կարող էին այդ սխալները կրկնվել ու հասնել մինչև մեր օրերը:

Սխալների քննություն

— Եթե հաշվի առնենք, որ հունարեն որոշ տառեր գրությամբ շատ նման են միմյանց, նաև այն, թե ինչ սուղ պայմաններում էին աշխատում գրիչնե-
րը, անխուսափելիորեն տեքստում սխալներ կլինեին,– ասացի ես:

— Միանգամայն իրավացի եք,– ընդունեց Մեցգերը:

— Մեզ հասած ձեռագրերում բառացիորեն տասնյակ հազարավոր տարբերություններ կան, այնպես չէ՞:

— Այո, այդպես է:

— Դրանից չի՞ հետևում, որ դրանց վստահել չենք կարող,– հարցրի ավե-
լի շուտ մեղադրական, քան հարցական տոնով:

— Ոչ, սը՛ր, չի հետևում,– աներկբա պատասխանեց Մեցգերը: — Թույլ տվեք հիշեցնել՝ ակնոցը հորինվել է միայն 1373-ին, Վենետիկում, իսկ հին դպիրների մեջ, վստահ եմ, եղել են նաև կարճատես մարդիկ: Դրան գումարվում էր այն, որ ամեն պարագայում դժվար էր ընթերցել խունա-
ցած ձեռագրերը, որոնց վրա թանաքը որոշ չափով մաքրվել էր: Այլ դժվա-
րություններ էլ կային, օրինակ՝ գրիչների անուշադրությունը: Այնպես որ, այո, թեև գրիչները մեծ մասամբ բծախնդիր ու զգուշավոր էին, սխալներ իսկապես սպրդել են: Բայց,– անմիջապես ավելացրեց նա,– կային գործոն-
ներ, որոնք չեզոքացնում կամ հարթում էին այդ սխալները: Ենթադրենք, գրագրի տեսողական հիշողությունը դավաճանել է նրան, և նա խառնել է բառերի հերթականությունը: Այս դեպքում անհանգստանալու կարիք չկա, որովհետև հունարենը, ի տարբերություն անգլերենի, թեքական լեզու է:

— Եվ դա նշանակում է...

— Նշանակում է, որ անգլերենում, որտեղ բառերի դասավորությունը կարևոր է, հսկայական տարբերություն կա, ասենք, «Մարդուն կծել է շունը» կամ «Մարդը կծել է շանը» նախադասությունների միջև, բայց հունարենում չկա: Ենթական մնում է ենթակա՝ անկախ նախադասության մեջ տեղից, հետևաբար, եթե նույնիսկ բառերը գրվել են սխալ հերթակա-
նությամբ, նախադասության իմաստը չի աղավաղվել: Այնպես որ, այո,

ձեռագրերի միջև կան որոշ տարբերություններ, բայց դրանք մեծ մասամբ աննշան անհամապատասխանություններ են: Ուղղագրական տարբերությունները ևս մի օրինակ են[21]:

Անցա ամենակարևոր հարցին:

— Եկեղեցու քանի՞ դրույթ է հայտնվել վտանգի տակ՝ տարբերակների պատճառով:

— Ինձ հայտնի չէ որևէ դրույթ, որը վտանգված լինի,– վստահ պատասխանեց նա:

— Ոչ մեկը:

— Ոչ մեկը,– կրկնեց: — Իհարկե, Եհովայի վկաները գալիս են մեզ մոտ և ասում. «Ջեյմս թագավորի ձեր Աստվածաշունչը սխալ է: Ա Հովհաննես 5:7-8-ում ասվում է՝ Հայրը, Բանը և Սուրբ Հոգին. և այս երեքը մի են, մինչդեռ ամենահին ձեռագրերում սա չկա: Եվ նրանք որոշակի առումով իրավացի են: Այս բառերը հանդիպում են միայն յոթ կամ ութ կրկնօրինակներում, և բոլորը 15-րդ կամ 16-րդ դարերի են: Ընդունում եմ, որ այս խոսքերն ի սկզբանե մաս չեն կազմել նրա, ինչ Ա Հովհաննեսի հեղինակը ներշընչմամբ գրել է: Բայց դա չի սասանում Երրորդության հիմնադրույթի դիրքը, որը հստակորեն հաստատված է Աստվածաշնչում: Հիսուսի մկրտության ժամանակ Հայր Աստված ասում է. «Դա է իմ սիրելի որդին, և Սուրբ Հոգին իջնում է նրա վրա»: Իսկ Պողոս առաքյալը Բ Կորնթացիներին եզրափակում է հետևյալ կերպ. «Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, Աստծո սերը և Սուրբ Հոգու հաղորդությունը թող ձեզ հետ լինեն: Ամեն»: Երրորդության մասին Աստվածաշնչում շատ տեղերում է խոսվում:

— Այսինքն, երբ տարբերություններ են հանդիպում, դրանք սովորաբար էական ու բովանդակային չեն:

— Այո, այո, ճիշտ է, և գիտնականները շատ զգույշ են աշխատում՝ փորձելով լուծումը գտնել ու վերադառնալ սկզբնական իմաստին: Բայց նույնիսկ ամենաէական տարբերությունները չեն խարխլում եկեղեցու որևէ հիմնադրույթ: Աստվածաշնչի յուրաքանչյուր լավ հրատարակություն ունի ծանոթագրություններ, որոնք զգուշացնում են ընթերցողին էական հակասությունների մասին, որոնք, կրկնում եմ, չափազանց հազվադեպ են:

Բայց եթե նույնիսկ Նոր Կտակարանը դարերի ընթացքում հասել է մեզ՝ չկորցնելով իր ստույգությունը, ինչպե՞ս իմանանք, որ ունենք ամբողջական պատկեր: Եկեղեցին մեղադրվել և մեղադրվում է նրանում, որ նրա

թվայնացրել է 1915.info կայքը

հիերարխիաները ոչնչացրել են այլ, ոչ պակաս վստահության արժանի փաստաթղթեր, որոնք լուսաբանել են Հիսուսի կյանքն այլ լույսի ներքո: Ի՞նչ իմանանք, որ Նոր Կտակարանի 27 գրքերում ներկայացված են ամենավստահելի տեղեկությունները: Ինչո՞ւ են մեր Աստվածաշնչում ներառված Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի ավետարանները, մինչդեռ շատ այլ հին կենսագրություններ՝ Փիլիպոսի ավետարանը, Եգիպտական ավետարանը, Ճշմարտության ավետարանը, Մարիամի ծննդյան ավետարանը, չեն ներառվել:

Ժամանակն է անցնել կանոնի հարցին. այս եզրույթը ծագում է հունարեն բառից, որը նշանակում է «կանոն, նորմ, տիպօրինակ» և վերաբերում է գրքերին, որոնք եկեղեցին պաշտոնապես ընդունել և ընդգրկել է Նոր Կտակարանում[22]: Մեցգերն այդ ոլորտում առաջատար հեղինակություն է:

Մեծ միաձայնություն

— Ինչպե՞ս են վաղ եկեղեցու առաջնորդները որոշել՝ որ գրքերը համարել հեղինակավոր ու որոնցից հրաժարվել,– հարցրի: — Ի՞նչ չափանիշներով են որոշել, թե որ փաստաթղթերը պետք է ներառվեն Նոր Կտակարանում:

— Վաղ եկեղեցին երեք չափանիշ էր կիրառում,– ասաց: — Նախ գրքերը պետք է գրած լինեին հենց առաքյալները, որոնք ականատես են եղել իրենց նկարագրած իրադարձություններին, կամ առաքյալների հետևորդները: Թեև Մարկոսն ու Ղուկասը 12 առաքյալների թվում չէին, սակայն վաղ քրիստոնեական ավանդույթը Մարկոսին համարում է Պետրոսի օգնականը, իսկ Ղուկասին՝ Պողոսի ընկերակիցը:

Երկրորդ չափանիշը, այսպես կոչված, հավատի կանոնի պահպանումն էր: Այսինքն՝ փաստաթուղթը համապատասխանո՞ւմ էր քրիստոնեական հիմնական ավանդույթին, որը եկեղեցին ճանաչում էր նորմատիվ: Եվ, վերջապես, երրորդ չափանիշը՝ ի՞նչ վաղեմությամբ է եկեղեցին ամբողջությամբ ընդունել ու կիրառել փաստաթուղթը:

— Եվ ի՞նչ, նրանք պարզապես զատեցին այն ամենը, ինչը չէր համապատասխանում այս չափանիշների՞ն:

— Ճիշտ չի ասելը, որ այս չափանիշներն ուղղակի մեխանիկորեն են կիրառվել,– պատասխանեց Մեցգերը: — Անշուշտ, տարբեր կարծիքներ

թվայնացրել է 1915.info կայքը

կային, թե դրանցից որն է ավելի ծանրակշիռ: Բայց ուշագրավ է, որ չնայած կանոնի սահմանները որոշ ժամանակ անորոշ մնացին, առաջին երկու դարերում եկեղեցին ընդունեց Նոր Կտակարանի մեծ մասն առավելագույն միաձայնությամբ: Իսկ չէ՞ որ խոսքը հսկայական տարածքի վրա սփռված խիստ տարբեր համայնքների մասին է:

— Ստացվում է, որ չորս ավետարանները, որ այսօր ներառված են Նոր Կտակարանում, համապատասխանում էին այդ չափանիշներին, մյուսները՝ ոչ:

— Այո: Եթե կարելի է այդպես ասել, գոյատևեցին ուժեղագույնները: Կանոնի մասին խոսելիս Արթուր Դարբի Նոքը Հարվարդի իր ուսանողներին ասում էր. «Եվրոպայի ամենաբանուկ ճանապարհները լավագույն ճանապարհներն են, ահա թե ինչու են բոլորը դրանցով ճանապարհորդում»: Լավ համեմատություն է: Աստվածաշնչի բրիտանացի մեկնաբան Ուիլյամ Բարքլին այդ մասին այսպես է արտահայտվել. «Զուտ ճշմարտություն է, որ Նոր Կտակարանի գրքերը կանոնական են դարձել հենց այն պատճառով, որ ոչ ոք չի կարողացել դրանց խանգարել»: Եթե խոսենք քրիստոնեական պատմության և քրիստոնեական վարդապետության մեջ ունեցած դերի մասին, ապա այդ ժամանակների ոչ մի գիրք, իհարկե, չի կարող համեմատվել Նոր Կտակարանի հետ: Ուսումնասիրելով կանոնի ձևավորման պատմությունը՝ գալիս ես այն եզրակացության, որ Նոր Կտակարանը պարունակում է Հիսուսի պատմության լավագույն աղբյուրները: Նրանք, ովքեր զատորոշում էին կանոնի սահմանները, հստակ և ներդաշնակ պատկերացում ունեին Քրիստոսի Պատգամի մասին: Ինքներդ կարդացեք մյուս փաստաթղթերը: Դրանք գրվել են չորս ավետարաններից շատ ավելի ուշ՝ 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, նույնիսկ 6-րդ դարերում, և, ընդհանուր առմամբ, բավական տաղտկալի են: Դրանց անունները, օրինակ՝ Պետրոսի ավետարան կամ Մարիամի ավետարան, կապ չունեն դրանց իրական հեղինակի հետ: Չորս ավետարանները, հակառակը, զարմանալի միաձայնությամբ ճանաչվեցին իսկական:

Այնուամենայնիվ, գիտեի, որ որոշ ազատական աստվածաբաններ, որոնց մեծ մասը հայտնի «Հիսուսի սեմինարի» ներկայացուցիչներ են, կարծում են, թե Թովմասի ավետարանն արժանի է նույն կարգավիճակին, ինչ չորս կանոնական ավետարանները: Այս խորհրդավոր ավետարանը գուցե զոհ դարձավ եկեղեցական քաղաքական պատերազմներին և, ի վերջո,

թվայնացրել է 1915.info կայքը

մերժվեց իր «ոչ հարմար» բովանդակության պատճառով: Որոշեցի, որ ավելի լավ է այս հարցը քննարկել Մեցգերի հետ:

Հիսուսի «գաղտնի խոսքերը»

— Դոկտո՛ր Մեցգեր, ուզում եմ հարցնել Թովմասի ավետարանի մասին, որը գտնվել է 1945-ին Եգիպտոսում, Նագ Համադիի փաստաթղթերի շարքում: Դրանում ասվում է, որ այն պարունակում է «գաղտնի ասույթներ, որ Հիսուս ասել է Իր երկրային կյանքում, իսկ Թովմաս Երկվորյակը գրի է առել»: Ինչո՞ւ եկեղեցին այն դուրս թողեց:

Պարզվեց՝ Մեցգերը մանրակրկիտ ուսումնասիրել է Թովմասի ավետարանը:

— Թովմասի ավետարանն ի հայտ եկավ 5-րդ դարի ղպտերեն կըրկնօրինակում, որը ես թարգմանել եմ անգլերեն: Այն պարունակում է 114 ասույթ, որոնք վերագրվում են Հիսուսին, բայց ոչինչ չի պատմում նրա գործերի մասին: Ամենայն հավանականությամբ, Թովմասի ավետարանը գրվել է հունարեն, Ասորիքում, Ք. հ. մոտ 140 թվականին[23]: Կարծում եմ, որոշ դեպքերում այս տեքստը ճիշտ է հաղորդում Հիսուսի խոսքերը, թեև որոշ փոփոխություններ կան:

Սա, իհարկե, հետաքրքրաշարժ պնդում էր:

— Խնդրում եմ, ավելի մանրամասն պատմեք,– ասացի:

— Օրինակ՝ Թովմասի ավետարանում Հիսուս ասում է. «Քաղաքը, որը բարձր լեռան վրա է, չի կարող թաքնվել»: Այստեղ ավելացված է բարձր ածականը, բայց մնացածը նույնն է, ինչ Մատթեոսի ավետարանում: Կամ Հիսուս ասում է. «Կեսարինը տվեք Կեսարին, Աստծունը՝ Աստծուն, իմը՝ ինձ»: Այս դեպքում վերջին արտահայտությունն է ավելացվել: Բայց Թովմասի ավետարանում կան բաներ, որ բոլորովին խորթ են կանոնական ավետարաններին: Օրինակ՝ Հիսուս այնտեղ ասում է. «Ճեղքիր ծառը, ես այնտեղ եմ: Բարձրացրու քարն ու ինձ այնտեղ կգտնես»: Սա պանթեիզմ է, համոզմունք, որ Հիսուս լուծված է բնության մեջ: Նրա մասին այսպիսի պատկերացումը բոլորովին չի համապատասխանում կանոնական ավետարաններին: Եվ ավարտվում է Թովմասի ավետարանն այսպես. «Թող Մարիամը հեռանա մեզնից, որովհետև կանայք արժանի չեն կյանքի»:

Այնտեղ Հիսուսին վերագրվում են հետևյալ բառերը. «Ահա, ես նրան կառաջնորդեմ, որպեսզի արու դարձնեմ, որպեսզի նա էլ կենդանի հոգի դառնա ձեզ՝ տղամարդկանց նման: Որովհետև ամեն կին, որ իրեն տղամարդ է դարձնում, կմտնի երկնքի արքայություն»,– Մեցգերն ունքերը բարձրացրեց՝ կարծես ապշած իր խոսքից: — Սա այն Հիսուս չէ, որին ճանաչում ենք չորս կանոնական ավետարաններից,– ընդգծեց նա:

— Ինչ կասեք այն մեղադրանքի մասին, որ եկեղեցական ժողովները միտումնավոր լռության դավադրություն են կազմակերպել Թովմասի ավետարանի շուրջ:

— Դա պատմականորեն սխալ եզրակացություն է,– եղավ Մեցգերի պատասխանը: — 5-րդ դարում ու դրանից հետո սինոդներն ու ժողովները միայն հաստատեցին այն, ինչ արդեն ընդունել էին թե՛ եկեղեցու նվիրապետությունները, թե՛ սովորական հավատացյալները: Ճիշտ չէ ասել, որ Թովմասի ավետարանը բացառվել է եկեղեցական ժողովի ինչ-որ որոշմամբ: Ավելի շուտ այն ինքն իրեն բացառեց, քանի որ չէր համապատասխանում Հիսուսի մասին այլ վկայություններին, որոնք վաղ քրիստոնյաներն արժանահավատ էին ճանաչում:

— Ուրեմն համաձայն չե՞ք նրանց հետ, ովքեր կցանկանային Թովմասի ավետարանը հավասարեցնել աստվածաշնչյան չորս ավետարաններին,– հարցրի:

— Այո, կտրականապես դեմ եմ: Կարծում եմ՝ վաղ եկեղեցին խելամիտ է վարվել՝ մերժելով այն: Իսկ ճանաչել այն հիմա, իմ կարծիքով, կնշանակի ընդունել մի բան, որը մյուս ավետարաններից նվազ հիմնավոր է,– պատասխանեց նա: — Ինձ սխալ չհասկանաք: Կարծում եմ, որ Թովմասի ավետարանը հետաքրքիր փաստաթուղթ է, բայց այն ներառում է պանթեիստական ու կնատյացության պնդումներ և վտարում է իրեն վստահելի տեքստերի շարքից: Պետք է հասկանալ, որ կանոնը եկեղեցական ինտրիգներով սրված «մրցակցային ընտրության» արդյունք չէր, այլ հենց քրիստոնյա հավատացյալների ներընմբռնողական ընտրություն: Հովհաննեսի ավետարանում նրանք հստակորեն լսեցին Բարի Հովվի ձայնը, իսկ Թովմասի ավետարանում այդ ձայնը հնչում էր խուլ և աղավաղված՝ այն էլ օտար խառնուրդներով: Կանոնի վերաբերյալ պաշտոնական որոշումը միայն հաստատեց այն, ինչ արդեն որոշված էր ամբողջ եկեղեցու ընդհանուր զգացումով: Գիտեք ինչ, կանոնն ավելի շուտ հեղինակավոր

թվայնացրել է 1915.info կայքը

գրքերի ցուցակ է, քան գրքերի հեղինակավոր ցուցակ: Այս փաստաթղթերը հեղինակություն ձեռք բերեցին ոչ այն պատճառով, որ ընտրվեցին և կանոնացվեցին: Դրանցից յուրաքանչյուրը հեղինակավոր էր, մինչև որևէ մեկը կմեկնեղեր դրանք: Վաղ եկեղեցին պարզապես լսեց և զգաց, որ այդ աղբյուրներին կարելի է վստահել: Եվ ասել, թե աստվածաշնչյան կանոնն ի հայտ եկավ ժողովների ու սինոդների համապատասխան որոշումների արդյունքում, նույնն է, ինչ ասենք՝ երաժշտական ակադեմիաները պաշտոնապես հայտարարեն, որ Բախի ու Բեթհովենի երաժշտությունը հրաշալի է: Շնորհակալություն, պետք չէ: Մենք մինչև հայտարարությունն էլ գիտեինք դա: Մեզ զգացողությամբ է հայտնի, թե որն է լավ երաժշտություն, որը՝ ոչ: Նույնը վերաբերում է աստվածաշնչյան կանոնին:

Այնուամենայնիվ, նկատեցի, Նոր Կտակարանի որոշ գրքեր՝ Հակոբոսի, առ Եբրայեցիս թղթերը և Հայտնությունը, ավելի դժվարությամբ ու դանդաղ ընդունվեցին կանոնում, քան մյուսները:

— Ուրեմն պիտի կասկածենք դրանց,– հարցրի:

— Կարծում եմ, դա միայն ցույց է տալիս, թե որքան ուշադիր և զգույշ են այդ հարցին մոտեցել վաղ քրիստոնյաները,– պատասխանեց նա: — Նրանք դյուրահավատ չէին և ձեռք չէին գցում ամեն վերջին փաստաթղթի, որում պատահաբար Հիսուսի մասին որևէ բան էր լինում: Սա նրանց խոհեմության ու բծախնդրության մասին է վկայում: Բայց նույնիսկ այսօր էլ սիրիացի քրիստոնյաների մի մասը չի ընդունում Հայտնության գիրքը, այնինչ այդ եկեղեցուն պատկանողները քրիստոնյա հավատացյալներ են: Իմ կարծիքով՝ Հայտնությունը հրաշալի գիրք է:

Նա գլուխն օրորեց:

— Ինձ թվում է՝ այն չընդունելով այդ մարդիկ իրենք իրենց զրկում են:

«Անմրցելի» Նոր Կտակարանը

Մեցգերի փաստարկները բավական համոզիչ էին: Իմ բոլոր կասկածները, թե Նոր Կտակարանի տեքստը մեզ հասել է սկզբնական տեսքով, փարատվեցին: Բենջամին Ուորֆիլդը՝ Մեցգերի նշանավոր նախորդներից մեկը Փրինսթոնի Աստվածաբանական սեմինարիայում, որը չորս դոկտորական ատենախոսություն էր պաշտպանել ու համակարգային

աստվածաբանություն դասավանդել մինչև իր մահը՝ 1921-ը, այսպես է ձևակերպել դա.

> «Եթե Նոր Կտակարանի տեքստի ներկա վիճակը համեմատենք որևէ այլ հնագույն աշխատության հետ, պետք է խոստովանենք, որ այն ապշեցուցիչ ճիշտ է: Դրա համար պարտական ենք այն մանրակրկիտ հոգածությանը, որով արտագրել են Նոր Կտակարանը, հոգածություն, որը, անկասկած, բխել է նրա սուրբ խոսքերի հանդեպ ճշմարիտ ակնածանքից: Տեքստի փոխանցման մաքրության և պահպանվածության առումով Նոր Կտակարանը հնագույն գրվածքների մեջ հավասարը չունի»[24]:

Դիտարկելով Նոր Կտակարանում ներառված փաստաթղթերը՝ նշենք, որ նրա 27 գրքերից 20-ի հավաստիությունը երբեք լուրջ կասկածներ չի հարուցել: Այդ գրքերն են Մատթեոսի ավետարանից մինչև Փիլիմոնին ուղղված նամակը, Ա Պետրոս և Ա Հովհաննես թղթերը: Սա, բնականաբար, ներառում է չորս ավետարանները, որ Հիսուսի կենսագրություններն են[25]: Մնացած յոթ գրքերը, որոնց իսկությունը ժամանակին կասկածի տակ են դրել վաղ եկեղեցու որոշ առաջնորդներ, ըստ Գեյսլերի և Նիքսի, «վերջնականապես և լիովին ճանաչել է եկեղեցին որպես ամբողջություն»[26]:

Ինչ վերաբերում է ապոկրիֆներին, բազմաթիվ ավետարաններ, առաքելական նամակներ ու հայտնություններ, որոնք տարածվել են Քրիստոսի Ծնունդից հետո առաջին մի քանի դարերում, այդ թվում՝ Նիկոդեմոսի, Բառնաբասի, Բարդուղիմեոսի, Անդրեասի ավետարանները, Պողոսի նամակը Լաոդիկիեցիներին, Ստեփանոսի հայտնությունը և այլ գրվածքներ, ապա դրանք «հորինված են ու հերետիկոսական... ոչ իսկական են, ոչ էլ, որպես ամբողջություն, արժեքավոր», և «եկեղեցու ոչ մի ուղղափառ հայր, կանոն կամ խորհուրդ չի համարել դրանք վստահելի կամ արժանի Նոր Կտակարանում ընդգրկվելու»[27]:

Ի դեպ, հետևեցի Մեցգերի խորհրդին և ապոկրիֆներից շատերը կարդացի: Ականատեսներ Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի ճշգրիտ, բծախնդիր ու ողջամիտ վկայությունների համեմատ այս գրվածքներն իսկապես արժանի էին վաղ եկեղեցու պատմաբան Եվսեբիոսի բնորոշմանը. «Բացարձակապես անհեթեթ ու սրբապիղծ»[28]: Իմ հետաքննության համար դրանք անօգուտ էին, չափազանց հեռացած Հիսուսի

թվայնացրել է 1915.info կայքը

երկրային ծառայությունից, գրվել էին 5-6-րդ դարերից ոչ վաղ, և այնտեղ չափազանց շատ մտացածին բան կար, որ զրկում էր դրանք պատմական արժանահավատությունից:

Ժամանակն էր անցնել իմ հետաքննության հաջորդ փուլին: Ուզում էի իմանալ, թե 1-ին դարում ապրած այս հրաշագործ հյուսնի օգտին որքա՞ն ապացույցներ կան ավետարաններից դուրս: Հին պատմաբանները հաստատո՞ւմ են, թե՞ հերքում այն, ինչ ասվում է Նոր Կտակարանում նրա կյանքի, ուսմունքի կամ հրաշքների մասին: Գիտեի, որ պետք է ուղևորվեմ Օհայո՝ այս ոլորտում լավագույն ամերիկացի գիտնականներից մեկին այցելելու:

Երբ ոտքի ելանք, դոկտոր Մեցգերին շնորհակալություն հայտնեցի անգնահատելի օգնության և ինձ տրամադրած ժամանակի համար: Ձերմ ժպտաց ու առաջարկեց ինձ ներքև ուղեկցել: Չէի ուզում չարաշահել նրա հյուրընկալությունը շաբաթ օրվա նախօրեին, բայց չէի կարող հեռանալ Փրինսթոնից՝ առանց ևս մեկ հարց տալու:

— Դուք տասնամյակներ շարունակ ուսումնասիրություններ եք անում, հետազոտում, դասագրքեր գրում, խորանում Նոր Կտակարանի տեքստերի մանրամասների մեջ. այս ամենն ազդե՞լ է Ձեր հավատի վրա:

— Օ՛, այո,- ասաց կարծես ուրախացած, որ այդ թեման է քննարկվում,- իմ հավատի հիմքն ավելի ամրացավ, երբ տեսա, թե ինչ ճշգրտությամբ են այս նյութերը հասել մեզ, բազմաթիվ կրկնօրինակներով, որոնցից որոշները շատ հին են:

— Ուրեմն գիտական հետազոտությունը չի թուլացրել Ձեր հավատը...

Նա ընդհատեց, նախքան նախադասությունը կավարտեի:

— Հակառակը,- շեշտեց,- ամրացրեց այն: Ամբողջ կյանքում հարցեր եմ տվել, խորացել տեքստի մեջ, ուսումնասիրել մինչև վերջ և այսօր հաստատ գիտեմ, որ Հիսուսի հանդեպ իմ հավատն ամուր հիմքի վրա է:

Նայելով ինձ դադար տվեց և ոգևորված ավելացրեց.

— Շատ ամուր հիմքի վրա:

թվայնացրել է 1915.info կայքը

Քննարկումներ

Հարցեր խորհրդածելու կամ խմբային պարապմունքի համար

1. Դոկտոր Մեցգերի հետ հարցազրույցը կարդալով՝ ի՞նչ եք կարծում, որքանո՞վ են հավաստի փոխանցվել Նոր Կտակարանի տեքստերն արտագրելու ընթացքում: Ինչո՞ւ եք այդ պրոցեսը համարում վստահելի կամ ոչ վստահելի:
2. Նոր Կտակարանի ձեր օրինակում փնտրեք անհամապատասխանությունների մասին նշումներ: Ի՞նչ տարբերակներ եք գտել: Ինչպե՞ս են այդ նշումներն ազդում տեքստի ձեր ընկալման վրա:
3. Ողջամի՞տ եք համարում Նոր Կտակարանի կանոնի ստեղծման չափանիշները: Բացատրեք ինչո՞ւ: Կարո՞ղ եք առաջարկել այլ՝ լրացուցիչ չափանիշներ: Ի՞նչ դժվարությունների են հանդիպում ժամանակակից գիտնականները, երբ փորձում են պարզել, թե ինչու որոշ փաստաթղթեր ընդգրկվեցին կանոնի մեջ, որոշները՝ ոչ:

թվայնացրել է 1915.info կայքը

ԳԼՈՒԽ 4

Հավելյալ ապացույցներ

Ավելի շատերից դուրս կան վստահելի վկայություններ Հիսուսի մասին

Հարրի Ալեմանը շրջվեց ու մատը տնկեց իմ ուղղությամբ:
— Դու,– կատաղած ու զզվանքով ֆշշացրեց նա,– ինչո՞ւ ես անընդհատ իմ մասին էդ բաները գրում:

Հետո պտտվեց ու անհետացավ՝ իջնելով հետևի աստիճաններով, որպեսզի խուսափի լրագրողներից, որոնք դատարանի շենքով մեկ նրան էին հետապնդում:

Իրականում, 1970-ականներին անհնար էր լինել քրեական քրոնիկոնի թղթակից Չիկագոյում ու չգրել Հարրի Ալեմանի մասին: Նա, ի վերջո, առանցքային հանցագործ սինդիկատի վարձու մարդասպանն էր: Իսկ Չիկագոյի բնակիչներն իրենց խեղաթյուրված ճաշակով սիրում են կարդալ կազմակերպված հանցավորության մասին:

Դատախազներն ապարդյուն ուզում էին Ալեմանին բանտ նստեցնել հերթական սառնասիրտ սպանության համար, որը, կասկածում էին, որ նա կատարել է սինդիկատի իր շեֆերի հրահանգով: Խնդիրը, իհարկե, վկաների բացակայությունն էր, վկաներ, որոնք պատրաստ կլինեին ցուցմունք տալ նման սարսափելի համբավ ունեցող ոճրագործի դեմ:

Հետո գործի մեջ բեկում եղավ: Ալեմանի նախկին հանցակիցներից մեկը՝ Լուիս Ալմեյդան, ձերբակալվեց Փենսիլվանիայում արհմիութենական մի գործչի սպանելու փորձի ժամանակ: Զինված հարձակման համար 10 տարվա ազատազրկման դատապարտված Ալմեյդան, մեղադրող կողմի մեղմ վերաբերմունքի դիմաց համաձայնեց ցուցմունք տալ Ալեմանի դեմ՝ Չիկագոյում բեռնատարների վարորդների արհմիության ներկայացուցչի չբացահայտված սպանության գործով: Այսպիսով, Ալմեյդան համագործակցելու շարժառիթ ուներ, որն անկասկած որոշակիորեն նվազեցրեց նրա ցուցմունքների արժեքը: Դատախազները հասկանում էին, որ անհրաժեշտ է ամրապնդել մեղադրող կողմի դիրքերը, ու փնտրում էին մեկին, որ կհաստատեր Ալմեյդայի պատմածը:

Վեբստերի բառարանը «հաստատել» բառն այսպես է սահմանում. ավելի հավաստի դարձնել, վավերացնել: Նա հաստատեց պատահարի իմ պատմությունը[29]: Հավելյալ ապացույցները հաստատում են այլ վկայությունները, հաստատում կամ ամրացնում ականատեսի վկայության էական տարրերը: Դա կարող է լինել հանրային արձանագրություն, լուսանկար կամ լրացուցիչ վկայություն երկրորդ կամ երրորդ անձից: Այն կարող է հաստատել անձի ամբողջ վկայությունը կամ պարզապես դրա կարևոր մասերը:

Փաստորեն, հավելյալ ապացույցները գործում են, ինչպես ամրացնող լարերը, որոնք բարձր ալեհավաքը պահում են ամուր ու անխախտելի: Որքան շատ լինեն հավելյալ ապացույցները, այնքան գործն ավելի ամուր է ու հիմնավոր:

Բայց որտեղից կարող էին մեղադրողները գտնել Ալմեյդայի պատմածի հավելյալ ապացույցները: Դրանք եկան զարմանալի աղբյուրից և միանգամայն անսպասելի: Բոբի Լոու անունով, համեստ, օրինապահ քաղաքացին հետաքննողներին պատմեց, որ զբոսնում էր շան հետ, երբ տեսավ, թե ինչպես Ալեմանը սպանեց արիմիության աշխատակցին: Չնայած Ալեմանի չարագույժ համբավին՝ Լոուն համաձայնեց վկայություն տալ գանգստերի դեմ՝ հաստատելով Ալմեյդայի պատմածը:

Հավելյալ ապացույցների ուժը

Ալեմանի դատավարության ժամանակ Լոուն ու Ալմեյդան շատ ուժեղ տպավորություն գործեցին ատենակալների վրա իրենց պատմությամբ: Ալմեյդայի պատմությունը, որ ինքը վարել է մեքենան, որով պիտի փախչեին, համընկնում էր Լոուի հստակ նկարագրության հետ, թե ինչպես Ալեմանը սպանեց իր զոհին մայթի վրա, 1972-ի սեպտեմբերի 27-ին:

Դատախազները կարծում էին, թե անխոցելի գործ են պատրաստել և որ վախեցած մարդասպանը չի կարող դուրս պրծնել իրենց հյուսած ապացույցների ցանցից, բայց ամբողջ դատավարության ընթացքում զգում էին, որ ինչ-որ բան այն չէ: Կասկածն առաջին անգամ ծագեց, երբ Ալեմանը հրաժարվեց ատենակալներով դատավարությունից՝ ընտրելով, որ դատավորը քննի իր գործը:

թվայնացրել է 1915.info կայքը

Դատախազների վատագույն կասկածներն արդարացան: Չնայած Լոուի ու Ալմեյդայի անհերքելի ցուցմունքներին՝ դատավորն Ալեմանին անմեղ ճանաչեց ու ազատ արձակեց:

Ինչ էր կատարվել: Մի՛ մոռացեք, որ սա տեղի էր ունենում Չիկագոյում, Կուկ շրջանում, որտեղ կոռուպցիան հաճախ է դարանակալում: Տարիներ անց բացահայտվեց, որ դատավորն արդարացման դիմաց 10,000 դոլար էր ստացել: Երբ ՀԴԲ լրտեսը բացահայտեց կաշառքի պատմությունը, դատավորը, որն այդ ժամանակ թոշակի էր անցել, ինքնասպանություն գործեց, ու դատախազները վերաբացեցին Ալեմանի դեմ գործը:

Երկրորդ դատավարության ժամանակ օրենքը փոխվել էր, և դատախազները կարող էին պահանջել, որ ատենակալները լսեն գործը: Այդպես էլ արեցին, ու, ի վերջո, սպանությունից 25 տարի անց Ալեմանը մեղավոր ճանաչվեց ու դատապարտվեց[30]:

Չնայած բոլոր ձգձգումներին՝ Ալեմանի գործը ցույց է տալիս, թե որքան կարևոր են հավելյալ ապացույցները: Նույնը վերաբերում է նաև պատմական խնդիրներին: Դոկտոր Կրեյգ Բլոմբերգի վկայությունից հայտնի է, որ ավետարաններում Հիսուսի կյանքի, ուսմունքի, մահվան ու հարության մասին գերազանց վկայություններ կան: Բայց դրանք հաստատող հավելյալ ապացույցներ կա՞ն: Ավետարաններից դուրս գրվածքներ կա՞ն, որ հաստատում կամ ամրացնում են Հիսուսի կամ վաղ քրիստոնեության մասին հիմնական տեղեկությունները:

Այլ խոսքով, կա՞ն լրացուցիչ փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս վերջնականապես «վճռել» Քրիստոսի գործը, ինչպես Բոբի Լոուի ցուցմունքը վերջնականապես որոշեց Ալեմանի դեմ դատավարության ճակատագիրը: Ըստ մեր հաջորդ «վկայի»՝ նման ապացույցներ կան, իսկ այդ փաստերի քանակն ու որակը կարող են զարմացնել:

3-ՐԴ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Էդվին Մ. Յամաուչի, փիլիսոփայության դոկտոր

Էդվին Յամաուչին աշխատում է Մայամիի համալսարանում, որը գտնվում է Օհայո նահանգի գեղատեսիլ Օքսֆորդ քաղաքում: Քայլերս ուղղելով դեպի տպավորիչ աղյուսե շենքը, որտեղ գտնվում է նրա գրասենյակը,

անցա քարե կամարի տակով, որի վրա փորագրված էր. «Ճանաչիր ճշմարտությունը, և ճշմարտությունը քեզ ազատ կդարձնի»: Ցամաուչին՝ հնագույն պատմության բնագավառի լավագույն ամերիկացի մասնագետներից մեկը, իր կյանքի մի մեծ մասն անցկացրել է պատմական ճշմարտության որոնումների մեջ:

Էդվին Ցամաուչին՝ Օկինավայից ներգաղթյալների որդին, ծնվել է 1937 թվականին Հավայան կղզիներում: Կյանքը նրան երես չի տվել. հայրը մահացել է Պերլ Հարբորի վրա ճապոնացիների հարձակումից անմիջապես առաջ, իսկ մայրը, մնալով առանց ապրուստի միջոցի, սպասուհի է աշխատել հարուստ ընտանիքներում: Կրթություն չուներ, սակայն խրախուսում էր որդուն կարդալ ու սովորել՝ նրան նվիրելով գեղեցիկ նկարազարդ գրքեր, որոնք նրա մեջ ամբողջ կյանքում սովորելու սեր արմատավորեցին:

Դոկտոր Ցամաուչիի գիտական նվաճումները, իհարկե, շատ տպավորիչ են: Եբրայերենի ու հելլենագիտության բակալավրի կոչում ձեռք բերելուց հետո նա դոկտորի կոչում ստացավ Բրանդեյի համալսարանում՝ Միջերկրածովյան թեմաներով ուսումնասիրությունների համար:

Ութ կրթաթոշակ է ստացել Ռուտգերսի համալսարանի գիտական խորհրդից, Հումանիտար գիտությունների ազգային հիմնադրամից, Ամերիկյան փիլիսոփայական ընկերությունից: Ուսումնասիրել է 22 լեզու, այդ թվում՝ արաբերեն, չինարեն, եգիպտերեն, ռուսերեն, ասորերեն, ուգարերեն, նույնիսկ կոմանչերեն:

Գիտական հասարակության առաջ 71 անգամ հանդես է եկել զեկույցներով, դասախոսություններ է կարդացել ավելի քան 100 ճեմարաններում, համալսարաններում ու քոլեջներում, այդ թվում՝ Եյլում, Փրինսթոնում ու Կոռնելում, պաշտոնավարել է որպես Աստվածաշնչյան հետազոտությունների ինստիտուտի նախագահող, ապա նախագահ, նաև Հավատի ու պատմության հարցերի համաժողովի նախագահ, 80 հոդված է հրապարակել 37 գիտական ամսագրերում:

1968-ին մասնակցել է Երուսաղեմում Հերովդեսի տաճարի առաջին պեղումներին, երբ հայտնաբերվեցին ապացույցներ, որ տաճարն ավերվել է Ք. հ. 70 թվականին: Գրել է նաև մի շարք գրքեր հնագիտական թեմաներով, այդ թվում՝ «Քարերը և Աստվածաշունչը», «Աստվածաշունչը և հնագիտությունը», «Առաջին քրիստոնյաների աշխարհը»:

թվայնացրել է 1915.info կայքը

Էդվին Յամաուչին, որը մեծացել է բուդդիստական միջավայրում, քրիստոնեություն ընդունել է 1952-ին, հենց այն տարում, երբ ծնվել եմ ես: Ինձ հատկապես հետաքրքրում էր, թե Քրիստոսի հանդեպ նրա երկարամյա հավատն ինչպես է անդրադարձել պատմական փաստերի նրա գնահատականի վրա: Այլ խոսքով, որքանո՞վ է նա հավատարիմ փաստերին, չի՞ տրվում գայթակղությանը՝ ավելի հեռուն գնալ իր եզրակացություններում, քան թույլ են տալիս փաստերը:

Պրոֆեսոր Յամաուչին մեղմ ու համեստ մարդ է: Խոսում է հանդարտ, խիստ կենտրոնացած, հարցերին պատասխանում է ամբողջական ու մանրամասն՝ ժամանակ առ ժամանակ ընդհատելով, որպեսզի ցույց տա այդ թեմայով գրած իր գիտական հոդվածները: Լավ գիտնականը գիտի, որ տվյալները երբեք չափից շատ չեն լինում:

Նստած էինք նրա՝ գրքերով լի գրասենյակում, աշնանային գույներով բոցավառվող ծառերի մեջ կորած համալսարանական քաղաքի սրտում և խոսում էինք մի թեմայից, որից նրա աչքերը դեռ փայլում են, նույնիսկ հետազոտություններից ու դասավանդումից այսքան տարիներ անց:

Ավետարանների հաստատումներ

Բլոմբերգի հետ զրույցից հետո չէի ուզում ենթադրություն անել, որ Հիսուսի վերաբերյալ վստահելի փաստեր գտնելու համար պետք է ավետարանների շրջանակից դուրս գալ: Ուստի սկսեցի հետևյալ հարցով.

— Որպես պատմաբան, կարո՞ղ եք գնահատել ավետարանների պատմական արժանահավատությունը:

— Ավետարանները, ընդհանուր առմամբ, գերազանց աղբյուրներ են,– պատասխանեց Յամաուչին: — Դրանք Հիսուսի մասին տեղեկության ամենաարժանահավատ, ամբողջական ու վստահելի աղբյուրներն են: Լրացուցիչ աղբյուրներն ավելի քիչ մանրամասներ են պարունակում, բայց արժեքավոր են որպես հավելյալ ապացույցներ:

— Լավ, հենց դա եմ ուզում քննարկել՝ հավելյալ ապացույցները,– ասացի: — Եկեք ազնիվ լինենք, ոմանք ակնարկում են, որ այդպիսիք ընդհանրապես չկան: Օրինակ՝ 1979-ին լույս տեսավ Չարլզ Թեմփլթոնի վեպը՝

«Աստծո գործը», որի կերպարներից մեկը՝ հնագետը պնդում է անում, որը բավական տարածված տեսակետ է:

Հանեցի գիրքն ու կարդացի համապատասխան պարբերությունը.

«(Քրիստոնեական) եկեղեցու կանխադրույթները մեծ մասամբ հիմնված են փրկչի հավակնություններով մի անհայտ հրեա երիտասարդի ուսմունքի վրա, որը, ընդունենք, այնքան էլ մեծ տպավորություն չի թողել ժամանակակիցների վրա: Աշխարհիկ պատմության մեջ նրա մասին մի բառ անգամ չկա: Ոչ մի բառ: Հռոմեացի պատմաբանները նրան չեն հիշատակում: Հովսեփոսը նրան անգամ հղում էլ չի անում»[31]:

— Ուրեմն,– փոքր-ինչ կտրուկ ասացի ես,– սրանից հետևում է, որ Աստվածաշնչից դուրս Հիսուսի կյանքի մասին հավելյալ ապացույցները կարծես այնքան էլ շատ չեն:

Յամաուչին ժպտաց և օրորեց գլուխը:

— Թեմփլթոնի հնագետն ուղղակի սխալվում է,– ասաց հանդարտ, բայց առարկություն չընդունող տոնով,– որովհետև Հովսեփոսն ու Տակիտոսը շատ կարևոր հղումներ են անում Հիսուսին: Ավետարաններն ասում են, որ շատերը, որոնք լսում էին Նրան, նույնիսկ Նրա մերձավոր ազգականները, Հիսուսին իր կյանքի ընթացքում չէին հավատում, այնուամենայնիվ, Նա այնպիսի տպավորություն է թողել, որ այսօր Հիսուս հայտնի է ամենուր, այնինչ Հերովդես Մեծը, Պոնտացի Պիղատոսն ու այլ հին տիրակալներ այդքան լայն ճանաչում չունեն: Այնպես որ, անշուշտ, Նա մեծ տպավորություն է թողել իրեն հավատացողների վրա:

Դադար տվեց, ապա ավելացրեց.

— Իհարկե, ոչ նրանց շրջանում, ովքեր չէին հավատում նրան:

Դավաճանի վկայությունը

Եվ Թեմփլթոնը, և Յամաուչին հիշատակել էին Հովսեփոսին՝ առաջին դարի պատմաբանին, որը լավ հայտնի է գիտական շրջանակներում, բայց որի անունն այսօր անծանոթ է մարդկանց մեծ մասին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Մի փոքր պատմեք նրա մասին,– ասացի,– պատմեք, թե նրա վկայությունն ինչպես է հավելյալ ապացույցներ ապահովում Հիսուսի համար:

— Այո, իհարկե,– պատասխանեց Յամաուչին՝ ոտքերը խաչելով ու ավելի խորը նստելով աթոռին: — Հովսեփոս Փլաբիոսը 1-ին դարի շատ հայտնի հրեա պատմաբան է: Ծնվել է Ք. հ. 37 թվականին ու իր չորս աշխատությունների մեծ մասը գրել է մինչև դարի վերջը: Իր ինքնակենսագրականում նա արդարացնում է իր գործողությունները հրեական պատերազմի ժամանակ, որը տեղի է ունեցել Ք. հ. 66–74 թթ.: Յոտապատայի պաշարման ժամանակ նա հանձնվել է հռոմեացի զորավար Վեսպասիանոսին, թեև նրա զինակիցներից շատերն ինքնասպանություն էին գործել ու չէին հանձնվել,– պրոֆեսորը ծիծաղելով ասաց,– Հովսեփոսը որոշեց, որ Աստված չի ցանկանում, որ ինքն ինքնասպանություն գործի: Հետագայում նա հռոմեացիների պաշտպանը դարձավ:

Հովսեփոսը կոլորիտային կերպար էր թվում, ես նրա մասին էլի մանրամասներ խնդրեցի, որպեսզի կարողանամ ավելի լավ հասկանալ շարժառիթներն ու նախապաշարումները:

— Ավելին պատմեք նրա մասին, ինչպիսի՞ մարդ էր,– հարցրի:

— Քահանա էր, փարիսեցի ու եսասեր: Նրա ամենահայտնի աշխատությունը կոչվում է «Հրեական հնախոսություններ», որը հրեա ժողովրդի պատմությունն է՝ արարչագործությունից մինչև իր ժամանակները: Այն հավանաբար ավարտել է Ք. հ. մոտ 93-ին: Ինչպես կարող եք պատկերացնել ատելի հռոմեացիների հետ նրա համագործակցությունից, Հովսեփոսին նրա հայրենակից հրեաները սաստիկ չէին սիրում: Բայց քրիստոնյաների շրջանում նա մեծ ժողովրդականություն էր վայելում, որովհետև իր ստեղծագործություններում հիշատակում է Հակոբոսին՝ Հիսուսի եղբորը, ու հենց Հիսուսին:

Ահա և ոչ ավետարանական հավելյալ ապացույցի մեր առաջին օրինակը Հիսուսի մասին:

— Պատմեք այդ հիշատակումների մասին,– խնդրեցի:

— «Հրեական հնախոսություններ» գրքում,– սկսեց Յամաուչին,– նկարագրում է, թե ինչպես Անանիա անունով քահանայապետն օգտվեց հռոմեացի կառավարիչ Ֆեստոսի մահից, որ նույնպես հիշատակվում է Նոր Կտակարանում, որպեսզի մահվան մատնի Հակոբոսին:

Նա թեքվեց դեպի իր գրադարակը, մի հաստ հատոր դուրս բերեց ու թերթելով հասավ մի էջի, որի տեղը կարծես անգիր գիտեր:

— Ահա, գտա,– ասաց: — «Նա սինեդրիոնի ժողով գումարեց, նրա առաջ բերեց Հակոբոս անունով մի մարդու՝ եղբորը Հիսուսի, որին Քրիստոս էին անվանում, ու էլի ոմանց: Նրանց մեղադրեց օրենքը խախտելու մեջ ու հանձնեց քարկոծման»[32]: — Ինձ հայտնի չէ որևէ գիտնական,– վստահ պնդեց Յամաուչին,– որ կկարողանար վիճարկել այս հատվածը: Լ. Հ. Ֆելդմանը նշել է, որ եթե սա քրիստոնեական ժամանակների հետագա լրացում լիներ տեքստին, Հակոբոսի նկատմամբ ավելի գովասանական երանգ կունենար: Այսպիսով, այստեղ հիշատակվում է Հիսուսի եղբայրը, որը հավանաբար դարձի է եկել Հարություն առած Հիսուսի հայտնությամբ (տե՛ս Հովհաննես 7:5-ն ու Ա Կորնթացիներին 15:7-ը), և հաստատվում ու հավելյալ ապացուցվում է փաստը, որ ոմանք Հիսուսին համարում էին Քրիստոս, որը նշանակում է «օծյալ» կամ «փրկիչ»:

Այդ ժամանակ ապրում էր Հիսուս...

Գիտեի, որ Հովսեփոսը Հիսուսի մասին ավելին է գրել, այսպես կոչված, «Փլաբիոսի վկայությունում»: Նաև գիտեի, որ այս հնագույն տեքստը, որը պարունակում է Հիսուսի կյանքի, հրաշքների, մահվան և Հարության հստակ և ծավալուն հաստատումներ, դարեր շարունակ հատկապես բուռն քննարկումների տեղիք է տվել: Բայց այն իսկակա՞ն է, թե՞ տարիների ընթացքում Հիսուսի համակիրները կեղծել են:

Յամաուչիից կարծիք հարցրի, ու անմիջապես պարզ դարձավ, որ նրա համար մեծ հետաքրքրություն ներկայացնող ոլորտ եմ մտել: Մի ոտքն իջեցրեց մյուսի վրայից և ուղիղ նստեց աթոռին:

— Սա ապշեցուցիչ հատված է,– խանդավառությամբ ասաց՝ գիրքը ձեռքին առաջ հակվելով,– բայց, այո, վիճելի է:

Հատվածը կարդաց ինձ համար:

> «Մոտավորապես այդ ժամանակ ապրում էր Հիսուս՝ իմաստուն մարդ, եթե կարող ենք նրան մարդ անվանել: Որովհետև նա մեկն էր, որ զարմանալի հրաշքներ էր գործում, ու այնպիսի մարդկանց ուսուցիչն էր, որոնք

թվայնացրել է 1915.info կայքը

ճշմարտությունն ուրախությամբ են ընդունում: Եվ նա իր կողմը գրավեց շատ հրեաների ու շատ հույների: Նա Քրիստոսն էր: Երբ Պիղատոսը, լսելով, որ մեր մեջ ամենաբարձր դիրքի մարդիկ մեղադրում են նրան, նրան խաչելության դատապարտեց, նրանք, ովքեր ի սզբանե սիրել էին նրան, չդադարեցին սիրել: Երրորդ օրը նա հայտնվեց նրանց՝ կրկին ողջ, ինչպես Աստծո մարգարեներն ասել էին սա և անհամար այլ հրաշալի բաներ նրա մասին: Մինչև օրս չեն դադարել նրա աղանդի հետևորդներն իրենց նրա անունով քրիստոնյաներ կոչել»[33]:

Սա ակնհայտ հզոր, հավելյալ ապացույց էր Հիսուսի օգտին:

— Դուք համաձայնեցիք, որ սրանում վիճելի տեղեր կան. ի՞նչ են ասում գիտնականներն այս մասին,– հարցրի:

— Գիտության մեջ սրա մասին երեք մոտեցում է փոխվել,– ասաց: — Վաղ քրիստոնյաները հասկանալիորեն այն համարում էին Հիսուսի և Նրա Հարության հրաշալի ու անհերքելի ճշմարիտ վկայություն: Այն նրանց սրտով էր: Հետո Լուսավորության դարաշրջանում առնվազն մի քանի գիտնական կասկածի տակ առան այն: Բայց այսօր ուշագրավ համաձայնություն կա թե՛ հրեա, թե՛ քրիստոնյա գիտնականների միջև, որ հատվածը, ընդհանուր առմամբ, վավերական է, թեև որոշ ընդմիջարկումներ կարող են լինել:

Հարցական նայեցի նրան:

— Ընդմիջարկումնե՞ր, կբացատրե՞ք, թե ինչ նկատի ունեք:

— Դա նշանակում է, որ քրիստոնյա դպիրներն ավելացրել են արտահայտություններ, որոնք հրեա գրող Հովսեփոս Փլաբիոսը չէր կարող գրել:

Ցամաուչին մատնացույց արեց գրքից մի նախադասություն:

— Օրինակ՝ առաջին տողում ասվում է. «Մոտավորապես այդ ժամանակ ապրում էր Հիսուս՝ իմաստուն մարդ»: Քրիստոնյաները սովորաբար Հիսուսի մասին այդ արտահայտությունը չեն անում, ուրեմն հավանաբար հեղինակը Հովսեփոսն է: Բայց հաջորդ արտահայտությունը՝ «եթե կարող ենք նրան մարդ անվանել», ակնարկում է Հիսուսի գերմարդկային էությունը, ուստի հնարավոր է, որ այս խոսքերն ավելի ուշ են մտցվել:

Գլխով արի՝ ցույց տալով, որ առայժմ հասկանում եմ նրա մտքի ընթացքը:

— Շարունակության մեջ ասվում է. «Որովհետև նա մեկն էր, որ զարմանալի հրաշքներ էր գործում, ու այնպիսի մարդկանց ուսուցիչն էր, որոնք

ճշմարտությունն ուրախությամբ են ընդունում: Նա իր կողմը գրավեց շատ հրեաների ու շատ հույների»: Դա կարծես բավական համահունչ է այն բառապաշարին, որ Հովսեփոսը գործածում է այլուր, ու սովորաբար վավերական է համարվում: Բայց դրան հաջորդում է ոչ երկիմաստ պնդում. «Նա Քրիստոսն էր»: Դա կարծես ընդմիջարկում է, որովհետև...

— Որովհետև,– ընդհատեցի,– Հակոբոսին հիշատակելիս Փլաբիոսն ասում է, որ Հիսուսին «Քրիստոս էին անվանում»:

— Ճիշտ նկատեցիք,– ասաց Յամաուչին: — Անհավանական է, որ Փլաբիոսն այստեղ ուղիղ ասեր՝ Հիսուս փրկիչն է, երբ մի այլ տեղում ասում է, որ նրան փրկիչ էին համարում հետևորդները: Փլաբիոսի վկայության հաջորդ մասը, որում խոսվում է դատավարության, խաչելության, նաև այն փաստի մասին, որ Հիսուսի հետևորդները դեռ սիրում էին նրան, առարկելի չէ ու համարվում է իսկական: Բայց հետո այս արտահայտությունն է. «Երրորդ օրը նա հայտնվեց նրանց՝ կրկին ողջ»: Սա Հարության հանդեպ հավատի հստակ հայտարարություն է, ուրեմն քիչ հավանական է, որ Հովսեփոսը գրած լինի այն: Այսպիսով, երեք դրվագ այս տեքստում, ըստ երևույթին, ավելի ուշ է ներդրվել:

— Եվ ո՞րն է, ընդհանուր առմամբ, Ձեր եզրակացությունը,– հարցրի:

— «Փլաբիոսի վկայությունը» իսկապես գրել է Հովսեփոս Փլաբիոսը՝ բացառությամբ մեր նշած երեք ընդմիջարկումների: Բայց նույնիսկ այդ դեպքում Հովսեփոսը Հիսուսի մասին կարևոր տեղեկություններ է հավաստում: Նա ստեղծեց եկեղեցին Երուսաղեմում: Նա իմաստուն ուսուցիչ էր, որն Իրենից հետո թողեց բազմաթիվ հավատարիմ հետևորդներ՝ չնայած հանգամանքին, որ խաչվեց Պիղատոսի օրոք, հրեա առաջնորդների հրահրումով:

Փլաբիոսի վկայության նշանակությունը

Թեև սրանք կարևոր անկախ հաստատումներ են, այնուամենայնիվ տարօրինակ էր, թե ինչու Հովսեփոսի պես պատմագիրն ավելին չի ասել առաջին դարի այդքան կարևոր կերպարի մասին: Գիտեի, որ որոշ սկեպտիկներ, օրինակ՝ փիլիսոփա Մայքլ Մարտինը Բոստոնի համալսարանից,

թվայնացրել է 1915.info կայքը

նույն տարակուսանքն են հայտնել: Մարտինը գրում է, որ ընդհանրապես չի հավատում Հիսուսի գոյությանը. «Եթե Հիսուս գոյություն ունենար, կարելի էր ենթադրել, որ Հովսեփոսը... ավելին կգրեր նրա մասին... շատ տարօրինակ է, որ Հովսեփոսը հիշատակում է նրան թեթևակի, մինչդեռ մյուս մեսիական կերպարներն ու Հովհաննես Մկրտիչը մանրամասն նկարագրված են»[34]:

Ես Յամաուչիին հարցրի, թե ինչպես է նա վերաբերվում Մարտինի հայտարարությանը: Նրա պատասխանն անսպասելի կտրուկ էր:

— Ժամանակ առ ժամանակ ոմանք փորձել են ժխտել Հիսուսի գոյությունը, բայց սա իրականում տանուլ տրված գործ է,– ասաց վրդովմունքով: — Հիսուսի գոյության անհերքելի ապացույցներ կան, և բոլոր այս ենթադրական դատողությունները պարզապես օդից են վերցված: Ամեն դեպքում կպատասխանեմ՝ Հովսեփոսին հետաքրքրում էին քաղաքական հարցերն ու Հռոմի դեմ պայքարը: Նրա համար Հովհաննես Մկրտիչն ավելի կարևոր էր, որովհետև նա կարծես ավելի մեծ քաղաքական վտանգ էր ներկայացնում, քան Հիսուսը:

Ես ընդհատեցի:

— Մի վայրկյան: Մի՞թե որոշ գիտնականներ չեն պնդում, որ Հիսուսը զելոտ էր կամ առնվազն զելոտների համակիր,– հարցրի՝ նկատի ունենալով 1-ին դարի հեղափոխական խմբին, որը քաղաքականապես ընդդիմանում էր Հռոմին:

Յամաուչին ձեռքի շարժումով մերժեց առարկությունը:

— Այդ վարկածը չի հաստատվում ավետարաններով,– պատասխանեց,– մի՛ մոռացեք, որ Հիսուս նույնիսկ դեմ չէր հռոմեացիներին հարկեր վճարելուն: Եվ քանի որ Հիսուս ու նրա հետևորդներն անմիջական քաղաքական վտանգ չէին ներկայացնում, Հովսեփոսը բնականաբար այդքան էլ հետաքրքրված չէր այս աղանդով, թեև հետ նայելիս պարզվեց, որ այն իսկապես շատ կարևոր էր:

— Ուրեմն, Ձեր գնահատմամբ, որքա՞ն կարևոր են Հովսեփոսի այս երկու հիշատակումները:

— Շատ կարևոր են,– պատասխանեց Յամաուչին,– քանի որ հրեական պատերազմի մասին նրա պատմածները, ինչպես պարզվել է, շատ ճշգրիտ են, դրանք հաստատվել են Մասադայի հնագիտական պեղումների տվյալներով, նաև Տակիտոսի պես պատմաբանների միջոցով: Հովսեփոսը

բավական վստահելի պատմագիր է համարվում, և Հիսուսի նրա հիշատակումը ծայրաստիճան կարևոր է:

Կործանարար սնահավատություն

Յամաուչին հիշատակեց առաջին դարի ամենահայտնի հռոմեացի պատմագրին, և ես ուզում էի քննարկել, թե ինչ է ասել Տակիտոսը Հիսուսի ու քրիստոնեության մասին:

— Հիսուսի մասին բոլոր ոչ աստվածաշնչային նյութերից թերևս ամենակարևորներն արձանագրել է Տակիտոսը,– ասաց Յամաուչին: — 115 թվականին նա ամենայն վստահությամբ գրում է, որ Ներոնը քրիստոնյաներին հալածում էր որպես քավության նոխազներ, որպեսզի կասկածն իրենից հեռացնի և 64 թվականին Հռոմն ավերած մեծ հրդեհի մեղքը նրանց վրա գցի:

Յամաուչին կանգնեց ու քայլեց դեպի գրադարակներից մեկը՝ փնտրելով անհրաժեշտ գիրքը:

— Ահա, այն,– ասաց՝ մի հաստ հատոր հանելով: Թերթելով գտավ անհրաժեշտ հատվածը, որն էլ կարդաց ինձ համար:

> «Ներոնը (հրդեհի) մեղքը գցեց ու ամենածանր տանջանքների ենթարկեց իրենց գարշելիությունների պատճառով ատելի մի դասի վրա, որին բնակչությունը քրիստոնյա էր անվանում: Քրիստոսը, որից ծագել էր անունը, Տիբերիոսի տիրապետության ժամանակ կառավարիչներից մեկի՝ Պոնտացի Պիղատոսի ձեռամբ մահապատժի ենթարկվեց: Այսպիսով, կործանարար սնահավատությունը, այդ պահին կասեցվելով, կրկին բռնկվեց ոչ միայն Հրեաստանում, որտեղ ծագեց այս չարիքը, այլև Հռոմում: Հետևաբար, ձերբակալվեցին բոլոր նրանք, ովքեր իրենց մեղավոր ճանաչեցին, հետո նրանց տեղեկությունների հիման վրա մի հսկայական բազմություն դատապարտվեց ոչ այնքան քաղաքը հրդեհելու հանցանքի, որքան մարդկության դեմ ատելության համար»[35]:

Արդեն ծանոթ էի այդ տեքստին և ուզում էի իմանալ, թե Յամաուչին ինչպես կպատասխանի հայտնի գիտնական Ջ. Անդերսոնի դիտարկմանը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Անդերսոնը ենթադրում է, որ Տակիտոսի խոսքերը «կործանարար սնահավատության» մասին, որն է՝ «այդ պահին կասեցվելով» հետո կրկին «բռնկվեց», ակամա վկայում են վաղ քրիստոնյաների հավատի մասին, այն է՝ Հիսուս խաչվեց, հետո Հարություն առավ մեռելներից: Համաձայն եք:

Յամաուչին մի պահ մտասուզվեց:

— Այո, որոշ գիտնականներ այդպես են մեկնաբանում սա,– պատասխանեց՝ ասես խուսափելով կարծիք հայտնելուց: Հետո որոշակիացրեց միտքը,– ինչ էլ նկատի ունենար Տակիտոսը, մեզ շատ ուշագրավ փաստ է տրամադրում, որը հետևյալն է. խաչելությունն ամենանողկալի ճակատագիրն էր, որին կարող էր ենթարկվել ինչ-որ մեկը, և այնքան էլ հեշտ չէ բացատրել փաստը, որ կար շարժում՝ հիմնված խաչված մարդու պաշտամունքի վրա: Ինչպես կարող էր տարածվել կրոնը՝ հիմնված մի մարդու պաշտամունքի վրա, որը հնարավոր ամենաամոթալի և անարգ մահով մեռավ: Իհարկե, պատճառն այն է, որ Հիսուս Հարություն առավ: Մյուսները, եթե դրան չեն հավատում, պիտի այլընտրանքային տեսություն առաջարկեն: Բայց, իմ կարծիքով, դժվար թե դրանք համոզիչ լինեն:

Խնդրեցի գնահատել Հիսուսի մասին Տակիտոսի գրածների կշիռը:

— Սա ոչ համակիր վկայի կարևոր վկայություն է քրիստոնեության հաջողության ու տարածման մասին՝ հիմնված պատմական անձի՝ Հիսուսի վրա, որը խաչվեց Պոնտացի Պիղատոսի օրոք,– ասաց: — Հատկապես ուշագրավ է, որ Տակիտոսը խոսում է մարդկանց մի «հսկայական բազմության» մասին, որն այնքան ամուր էր կառչած իր համոզմունքներից, որ պատրաստ էր մեռնել, քան հրաժարվել դրանցից:

Փառաբանելով Քրիստոսին «որպես Աստված»

Գիտեի, որ մեկ այլ հռոմեացի՝ Պլինիոս Կրտսերը, նույնպես իր գրվածքներում հղում է արել քրիստոնեությանը:

— Նա որոշ կարևոր բաներ է հաստատել, այնպես չէ՞,– հարցրի:

— Ճիշտ է: Նա եղբորորդին էր Պլինիոս Ավագի՝ բանաքաղի, որը մահացավ 79-ին՝ Վեզուվի ժայթքումից: Պլինիոս Կրտսերը դարձավ Բիթանիայի (ժամանակակից Թուրքիայի հյուսիս արևմուտք) կառավարիչը:

Պահպանվել է ընկերոջ՝ կայսր Տրայանոսի հետ նրա նամակագրության մեծ մասը:

Յամաուչին ինձ մեկնեց գրքի մի էջի լուսապատճենը՝ ասելով.

— Այս նամակագրության մեջ նա հատուկ անդրադառնում է այն քրիստոնյաներին, որոնց ձերբակալել է:

> «Նրանց հարցնում էի՝ քրիստոնյանե՞ր են: Խոստովանողներին երկրորդ ու երրորդ անգամ էի հարցնում՝ նախազգուշացնելով, որ նրանց պատիժ է սպասվում: Ովքեր համառում էին, հրամայում էի, որ նրանց մահապատժի ենթարկեն: Չէի կասկածում, որ, ինչ էլ լինի նրանց խոստովանության էությունը, նրանք պետք է պատժվեն իրենց համառության ու անդրդվելի անզիջողության համար...

Նրանք պնդում էին, որ իրենց ամբողջ մեղքը կամ մոլորությունն այն է, որ սովորաբար որոշ օրերի հավաքվում են լուսաբացից առաջ և իրար հաջորդելով գովերգում Քրիստոսին, որպես Աստված, և երդվում են, որ պարտավորվում են չգործել հանցագործություններ, այլ զերծ մնալ գողությունից, կողոպուտից ու շնությունից...

Սա ինձ ստիպեց որոշել, որ անհրաժեշտ է ճշմարտությունը կտտանքով կորզել երկու ստրկուհուց, որոնց նրանք անվանում էին սարկավագուհի: Ոչինչ չհայտնաբերեցի՝ բացի մի տեսակ այլասերված աղանդից, որն արտառոց չափերի է հասել»[36]:

— Որքանո՞վ է կարևոր այս տեղեկությունը,– հարցրի:

— Շատ կարևոր է: Այն գրվել է հավանաբար Ք. հ. 111 թվականին ու վկայում է քրիստոնեության արագ տարածման մասին թե՛ քաղաքում, թե՛ գյուղական վայրերում, բոլոր խավերում, ստրկուհիների, նաև Հռոմի քաղաքացիների շրջանում, քանի որ նա նաև ասում է, որ քրիստոնյաներին, որոնք Հռոմի քաղաքացի են, դատավարության համար Հռոմ է ուղարկում: Այնտեղ խոսվում է Հիսուսի աստվածության հանդեպ հավատի, բարոյական բարձր չափանիշներին քրիստոնյաների հավատարմության մասին, այն մասին, որ հեշտ չէ շեղել նրանց իրենց հավատից:

թվայնացրել է 1915.info կայքը

Օրը, երբ երկիրը խավարեց

Ինձ համար Նոր Կտակարանի ամենախնդրահարույց հիշատակումներից մեկն այն է, որ ավետարանների հեղինակները պնդում են, որ երկիրը խավարեց այն ժամանակ, երբ Հիսուս գամված էր խաչին: Սա ընդամենը գրական հնար չէ՞ր շեշտելու համար խաչելության նշանակությունը, և ոչ իրական պատմական իրադարձության հիշատակում: Ի վերջո, եթե խավարը պատել էր երկիրը, այս արտասովոր իրադարձության առնվազն որևէ հիշատակություն չէ՞ր լինի Աստվածաշնչից դուրս:

Դոկտոր Գարի Հաբերմասը գրում է պատմաբան Թալլուսի մասին, որը Ք. հ. 52-ին գրել է մի գիրք արևելյան Միջերկրածովյան պատմության մասին՝ Տրոյական պատերազմից սկսած: Թեև Թալլուսի աշխատությունը կորել է, Հուլիոս Աֆրիկացին Ք. հ. 221-ին մեջբերում է արել դրանից, որում հիշատակվում է այն խավարը, որի մասին ավետարանները գրել էին[37]:

— Կարելի՞ է սա համարել աստվածաշնչյան այս պնդման անկախ հաստատում,– հարցրի:

— Հուլիոս Աֆրիկացին ասում է, որ Թալլուսն իր պատմության երրորդ գրքում խավարը բացատրում է որպես արևի խավարում, ինչի հետ ինքը համաձայն չէ: Այսպիսով, Թալլուսը հաստատում է, որ խավարը ծածկել է երկիրը խաչելության ժամանակ, և ենթադրում է, որ պատճառն արևի խավարումն է: Աֆրիկացին, սակայն, հերքում է այս բացատրությունը՝ հիմնվելով խաչելության ամսաթվի վրա:

Յամաուչին ձգվեց դեպի իր գրասեղանը՝ թղթի մի կտոր վերցնելու:

— Թույլ տվեք մեջբերել այն, ինչ ասում է գիտնական Փոլ Մայերն այս խավարի մասին 1968-ի իր «Պոնտացի Պիղատոսը» գրքի ծանոթագրությունում:

> «Այս երևույթն ակնհայտորեն դիտվել է Հռոմում, Աթենքում և Միջերկրածովյան այլ քաղաքներում: Ըստ Տերտուղիանոսի՝ դա «տիեզերական» կամ «համաշխարհային իրադարձություն էր»: Ֆլեգոնը՝ կարիացի հույն հեղինակը, որը Ք. հ. 137-ից քիչ անց ժամանակագրություն է գրել, հաղորդել է, որ 202-րդ Օլիմպիադայի չորրորդ տարում (այսինքն՝ 33 թվականին) եղել է «արևի ամենամեծ խավարումը», և « գիշերն ընկել է օրվա վեցերորդ ժամին

(այսինքն՝ կեսօրին), այնպես որ աստղերը հայտնվեցին երկնքում: Բյութանիայում մեծ երկրաշարժ եղավ, ու շատ բան գլխիվայր շրջվեց Նիկիայում»[38]:

— Այսպիսով,– եզրափակեց Յամաուչին,– Փոլ Մայերը նշում է, որ կան ոչ աստվածաշնչյան ապացույցներ խավարի մասին, որ ծածկել էր երկիրը Հիսուսի խաչելության ժամանակ: Հավանաբար ոմանք հարկ են համարել բնական բացատրություն գտնել, երբ ասել են, որ դա խավարում էր:

Պիղատոսի կերպարը

Երբ Յամաուչին հիշատակեց Պիղատոսին, հիշեցի, որ որոշ քննադատներ կասկածի տակ են առել ավետարանների ճշգրտությունն այն պատճառով, թե ինչպես են դրանք պատկերում հռոմեացի առաջնորդին: Ըստ Նոր Կտակարանի, Պիղատոսը տատանվում է, հետո ենթարկվում հրեաների ամբոխին, որը պահանջում է Հիսուսին խաչել: Պատմական այլ փաստաթղթերում Պիղատոսը պատկերված է որպես կարծր և անզիջող մարդ:

— Աստվածաշունչն ու աշխարհիկ պատմաբաններն այս դեպքում չե՞ն հակասում միմյանց,– հարցրի:

— Ոչ, իրականում չեն հակասում,– ասաց Յամաուչին: — Մայերը Պիղատոսի մասին իր ուսումնասիրության մեջ նշում է, որ նրա պաշտպանն ու հովանավորը Սեյանուսն էր, որը կորցրեց իշխանությունը 31 թվականին՝ կայսեր դեմ դավադրության մասնակցելու պատճառով:

— Դա ի՞նչ կապ ունի,– զարմացա:

— Դրանից հետո, Քրիստոսի ծննդյան 33-րդ տարում, երբ նրան խաչեցին, Պիղատոսի դիրքը շատ անկայուն էր,– պատասխանեց պրոֆեսորը: — Այնպես որ, անշուշտ, հասկանալի կլիներ, եթե Պիղատոսն այդ ժամանակ տատանվեր հրեաներին վիրավորանք հասցնելու և կայսեր հետ խնդիրների մեջ ավելի խրվելու հարցում: Դա նշանակում է, որ Պիղատոսի աստվածաշնչյան նկարագրությունը, ամենայն հավանականությամբ, համապատասխանում է իրականությանը[39]:

թվայնացրել է 1915.info կայքը

Հրեական այլ աղբյուրներ

Մինչև այժմ խոսում էինք հիմնականում Հիսուսի մասին հռոմեական վկայություններից: Բայց հրեական աղբյուրներում Հովսեփոսից բացի այլ ապացույցներ կան: Յամաուչիին հարցրի, թե Հիսուսի մասին հիշատակություններ կա՞ն Թալմուդում՝ հրեական կարևոր գրքում, որն ավարտվել է Ք. հ. մոտ 500 թվականին և ներառում է Միշնան, որը կազմվել է Ք. հ. մոտ 200-ին:

— Հրեաները սովորաբար շատ մանրամասների մեջ չէին մտնում, երբ խոսքը հերետիկոսների մասին էր,– պատասխանեց նա: — Թալմուդում Հիսուս հիշատակվում է մի քանի տեղ. նրան անվանում են կեղծ փրկիչ, որը կախարդություն է արել և արդարացիորեն դատապարտվել է մահվան: Նաև կրկնում են բամբասանքը, թե Հիսուս ծնվել է հռոմեացի զինվորից ու Մարիամից, ինչից ենթադրվում է, որ Հիսուսի ծննդյան հետ կապված ինչ-որ անսովոր բան կար:

— Ստացվում է,– ասացի,– այս հրեական աղբյուրները, չնայած Հիսուսի հանդեպ բացասական վերաբերմունքին, այնուամենայնիվ, հաստատում են որոշ փաստեր:

— Այո, ճիշտ է,– պատասխանեց նա: — Հենց այդ մասին է գրում պրոֆեսոր Մ. Ուիլկոկսը գիտական տեղեկատուի համար իր հոդվածում:

«Չնայած հրեական ավանդական գրականության մեջ Հիսուսի մասին հիշատակումները բավական ժլատ են և պետք է օգտագործվեն զգուշությամբ, այնուամենայնիվ, դրանք հաստատում են ավետարանի խոսքը, որ Նա բժշկում ու հրաշքներ էր գործում, ինչը, սակայն, բացատրվում էր կախարդությամբ: Նաև ասվում է, որ Նա ուսուցիչ էր, ուներ աշակերտներ (հինգ), և առնվազն ռաբունական շրջանի սկզբում բոլոր իմաստունները չէ, որ նրան համարում էին հերետիկոս ու խաբեբա»[40]:

Աստվածաշնչից դուրս ապացույցներ

Բավական շատ հիշատակումներ գտանք Հիսուսի մասին ավետարաններից դուրս, բայց ինձ թվում էր, թե դրանք պետք է ավելին լինեն: Թեև

գիտեի, որ 1-ին դարի փոքրաթիվ պատմական փաստաթղթեր են պահպանվել, այնուամենայնիվ, հարցրի.

— Ընդհանուր առմամբ, չպետք է ակնկալեինք, որ Հիսուսի մասին ավելին կգտնենք Աստվածաշնչից դուրս, հին գրվածքներում:

— Կրոնական շարժումների հիմնադիրների մասին գրավոր փաստաթղթերը հաճախ հայտնվում են նրանց կյանքից մի քանի սերունդ հետո,– ասաց Յամաուչին,– սակայն Հիսուսի մասին ավելի շատ պատմական ապացույցներ են պահպանվել, քան որևէ այլ հին կրոնի հիմնադրի մասին. սա անհերքելի փաստ է:

Դա ինձ անակնկալի բերեց:

— Իսկապես: Կարող եք մանրամասնել:

— Օրինակ՝ թեև հայտնի «զրադաշտական գատաները», որ թվագրվում են Ք. ա. 1000 թվականով, համարվում են իսկական, զրադաշտական գրությունների մեծ մասը գրի է առնվել Ք. հ. 3-րդ դարից հետո: Իսկ Զրադաշտի պարսկական կենսագրություններից ամենահայտնին, որ գրել են նրա հետևորդները, գրվել է 1278-ին: Ք. ա. 6-րդ դարում ապրած Բուդդայի ասույթները գրի են առնվել միայն քրիստոնեական դարաշրջանից հետո, իսկ Բուդդայի առաջին կենսագրությունը գրվել է Ք. հ. 1-ին դարում: Թեև Ղուրանը պարունակում է Մուհամեդի (570-632) բոլոր ասույթները, նրա առաջին կենսագրությունը գրվել է միայն Ք. հ. 767-ին, նրա մահից ավելի քան 100 տարի անց: Այսպիսով, Հիսուսի դեպքում դրությունը եզակի է և բավական տպավորիչ այն առումով, թե որքան շատ կարող ենք իմանալ նրա մասին Նոր Կտակարանից դուրս:

Ուզում էի ամփոփել այն, ինչ պարզել էի այս զրույցի ընթացքում:

— Պատկերացնենք, որ չունենք Նոր Կտակարան կամ այլ քրիստոնեական տեքստեր,– ասացի,– ինչ կարող էինք իմանալ Հիսուսի մասին՝ միայն ոչ քրիստոնեական աղբյուրներից, ելնելով Հովսեփոսի, Թալմուդի, Տակիտոսի, Պլինիոս Կրտսերի և այլոց հաղորդած տեղեկություններից:

— Մենք, միևնույն է, կունենայինք մեծ թվով կարևոր պատմական փաստեր,– ժպտաց Յամաուչին,– և դրանք միանգամայն բավարար կլինեին Հիսուսի կյանքն ուրվագծելու համար:

Հետո շարունակեց թվարկել՝ ամեն կետն ընդգծելու համար մատը բարձրացնելով:

թվայնացրել է 1915.info կայքը

— Նախ կիմանայինք, որ Հիսուս հրեա ուսուցիչ էր: Երկրորդ, շատերը հավատում էին, որ Նա բժշկում է մարդկանց և հանում չար ոգիներին: Երրորդ՝ ոմանք հավատում էին, որ Նա Մեսիան է: Չորրորդ՝ հրեա առաջնորդները մերժեցին Նրան: Հինգերորդ՝ Տիբերիոսի տիրապետության ու Պոնտացի Պիղատոսի կառավարման օրոք Նրան խաչեցին: Վեցերորդ՝ չնայած Նրա ամոթալի մահվանը, հետևորդները, որոնք հավատում էին, որ Նա դեռ ողջ է, սփռվեցին Պաղեստինից այն կողմ, այնպես որ Հռոմում մինչև Ք. հ. 64 թվականը քրիստոնյաներ կային: Եվ, վերջապես, յոթերորդ՝ մարդիկ՝ քաղաքներից ու գյուղերից, տղամարդիկ ու կանայք, ստրուկ թե ազատ, Նրան պաշտում էին որպես Աստված:

Անկախ ապացույցների քանակն իսկապես տպավորիչ էր: Մենք կարող ենք վերականգնել Հիսուսի կյանքի ընդհանուր ուրվագծերը՝ նույնիսկ առանց ավետարանների: Ավելին, ունենք տեղեկություններ, որոնք այնքան հին են, որ, փաստորեն, նախորդում են ավետարաններին:

Հավելյալ ապացույցներ՝ առավել վաղ աղբյուրներից

Պողոս առաքյալը Հիսուսի մահից առաջ երբեք չի հանդիպել նրան, բայց ասել է, որ հանդիպել է Հարություն առած Քրիստոսին ու ավելի ուշ խորհրդակցել ականատեսներից ոմանց հետ՝ հավաստիանալու համար, որ քարոզում է նույն պատգամը, ինչ նրանք: Քանի որ նա Նոր Կտակարանի իր նամակները սկսել էր գրել ավետարանների գրի առնվելուց տարիներ առաջ, դրանք Հիսուսի մասին շատ վաղ հաղորդումներ են պարունակում, այնքան վաղ, որ ոչ ոք չի կարող վստահորեն պնդել, որ հետագա առասպելաբանական շերտերը լրջորեն աղավաղել են դրանք:

— Էմորիի համալսարանի գիտաշխատող Լյուկ Թիմոթի Ջոնսոնը պնդում է, որ Պողոսի նամակները Հիսուսի մասին ավանդույթների «հնության ու տարածվածության արժեքավոր արտաքին հաստատումն» են[41],– ասացի Յամաուչիին: — Համաձայն եք նրա հետ:

Բավական ժամանակ էր, ինչ խոսում էինք: Պրոֆեսորը կանգնեց, ընդարմացած ոտքերը երկարեց ու նորից նստեց:

թվայնացրել է 1915.info կայքը

— Պողոսի նամակները, անկասկած, Նոր Կտակարանում ամենահինն են,– ասաց,– և Հիսուսի կյանքի վերաբերյալ կարևորագույն փաստեր են պարունակում:

— Կարո՞ղ եք մանրամասնել,– հարցրի:

— Պողոսը գրում է, որ Հիսուս Դավիթ թագավորի հետնորդն էր, որ Նա Մեսիան էր, որ Նրան դավաճանեցին, տանջեցին, խաչեցին մեր մեղքերի համար ու թաղեցին, ու որ Նա Հարություն առավ երրորդ օրը, ու շատերը տեսան Նրան՝ ներառյալ Հակոբոսը՝ Հիսուսի եղբայրը, որը նախքան խաչելությունը Նրան չէր հավատացել:

Հետաքրքիր է, որ Պողոսը չի հիշատակում ավետարանների որոշ ամենակարևոր պահեր, օրինակ՝ Հիսուսի առակներն ու հրաշքները, այլ կենտրոնանում է Հիսուսի քավող մահվան ու Հարության վրա: Պողոսի համար դրանք Հիսուսին վերաբերող ամենակարևոր բաներն էին, և դրանք իսկապես Պողոսին քրիստոնյաներին հալածողից վերափոխել, դարձրել էին մեծագույն քրիստոնյա քարոզիչ, որը պատրաստ էր ամեն տեսակ դժվարության ու զրկանքի միջով անցնել հանուն հավատի:

Պողոսը նաև հաստատում է Հիսուսի բնավորության որոշ կարևոր կողմեր՝ խոնարհությունը, հնազանդությունը, սերը մեղավորների հանդեպ: Փիլիպեցիներին ուղղված նամակի երկրորդ գլխում նա քրիստոնյաներին կոչ է անում մտածել Հիսուսի նման: Սա հայտնի տեքստ է, որում Պողոսը հավանաբար մեջբերում է անում վաղ քրիստոնեական օրհներգից՝ Քրիստոսի նվաստացման մասին, որը հավասար էր Աստծուն, բայց վերցրեց մարդու, ծառայի կերպարանք ու ենթարկվեց դաժան մահապատժի՝ խաչելության: Այնպես որ Պողոսի նամակները Քրիստոսի աստվածության կարևոր վկայություն են. նա Քրիստոսին անվանում է «Աստծո Որդի» և «Աստծո պատկեր»:

— Նաև շատ կարևոր է,– ընդհատեցի ես,– որ Պողոսը, որը ծագումով միաստվածական հրեական միջավայրից էր, երկրպագում էր Հիսուսին որպես Աստծո:

— Իհարկե,– ասաց Յամաուչին,– և դա հերքում է տարածված տեսությունը, որ Քրիստոսի աստվածության գաղափարը քրիստոնեություն է ներմուծվել ավելի ուշ՝ հեթանոսական հավատալիքներից: Դա այդպես չէ: Նույնիսկ Պողոսը քրիստոնեության հենց արշալույսին արդեն պաշտում էր Հիսուսին, որպես Աստված: Այս բոլոր վավերացումները Պողոսի

թվայնացրել է 1915.info կայքը

նամակներում չափազանց կարևոր են: Բայց ունենք նաև այլ վաղ նամակներ, որ գրել են Հակոբոսն ու Պետրոսը, որոնք անձամբ տեսել են Հիսուսին: Հակոբոսը, օրինակ, հիշում է Նրա Լեռան քարոզը:

Իսկապես մեռելներից Հարություն առավ

Մեզ հասել են «առաքելական հայրերի»՝ ավելի ուշ ժամանակների վաղ քրիստոնեական հեղինակների բազմաթիվ գրվածքներ: Դրանցից են Կղեմես Հռոմեացու, Իգնատիոսի, Պողիկարպոսի, Բառնաբասի նամակները և ուրիշներ: Այս գրվածքները հաստատում են Հիսուսի մասին հիմնական տեղեկությունները, հատկապես Նրա ուսմունքի, Խաչելության, Հարության ու աստվածային բնույթի մասին:

— Դրանցից որո՞նք եք համարում առավել նշանակալի,– հարցրի:

Մի պահ մտածելուց հետո Յամաուչին ոչ մի անուն չնշեց, այլ վկայակոչեց Իգնատիոսի յոթ նամակները, որպես առաքելական հայրերի գրվածքների մեջ ամենակարևորներից: Իգնատիոսը՝ ասորական Անտիոք քաղաքի եպիսկոպոսը, նահատակվեց Տրայանոս կայսեր օրոք՝ նախքան Ք. հ. 117 թվականը:

— Իգնատիոսի նամակներում էականն այն է,– ասաց Յամաուչին,– որ նա ընդգծում է Հիսուսի թե՛ աստվածությունը, թե՛ մարդեղությունը՝ ի հակադրություն դոկետական հերետիկոսության, որը ժխտում էր, որ Հիսուսն իսկապես մարդ էր: Նա նաև շեշտում էր, որ քրիստոնեությունը պատմական հիմքեր ունի. մահապատժի ճանապարհին գրված մի նամակում նա պնդում է, որ Հիսուս իսկապես հալածվել է Պիղատոսի օրոք, իսկապես խաչվել է, իսկապես Հարություն է առել մեռելներից, ու Նրան հավատացողները նույնպես Հարություն են առնելու[42]:

Այս ամենը միավորելով՝ Հովսեփոսի, հռոմեացի պատմաբանների ու պաշտոնյաների վկայությունները, հրեական գրքերը, Պողոսի և առաքելական հայրերի նամակները, ստանում ենք համոզիչ փաստեր, որոնք հաստատում են Հիսուսի կենսագրություններում հանդիպող բոլոր էական տարրերը: Նույնիսկ եթե չունենայինք ավետարանների և ոչ մի էջ, միևնույն է, կստանայինք Հիսուսի, որպես Աստծո Միածին Որդու անսովոր վառ ու համոզիչ պատկեր:

թվայնացրել է 1915.info կայքը

Ոտքի ելա ու Յամաուչիին շնորհակալություն հայտնեցի, որ մեզ հետ բաժանեց իր ժամանակն ու գիտելիքը:

— Գիտեմ, որ շատ ավելին կա, ինչի մասին կարող էինք խոսել, քանի որ այս թեմայով ամբողջ գրքեր են գրվել,– ասացի: — Բայց ավարտելուց առաջ կուզեի մի վերջին հարց տալ: Անձնական հարց, եթե դեմ չեք:

Պրոֆեսորը ևս կանգնեց:

— Այո, խնդրեմ,– ասաց:

Շուրջս նայեցի՝ նրա համեստ գրասենյակին, որը ծայրեծայր լի էր գրքերով ու ձեռագրերով, գրառումներով ու գիտական ամսագրերով, համակարգչային սկավառակներով ու թղթերով. ամբողջը հեռավոր անցյալի, մի ամբողջ կյանք տևած գիտական հետազոտության արդյունքն էր:

— Դուք 40 տարի անցկացրել եք հին աշխարհի պատմություն ու հնագիտություն ուսումնասիրելով,– ասացի,– ո՞րն է եղել արդյունքը Ձեր անձնական հոգևոր կյանքում: Ձեր ուսումնասիրություններն ամրապնդե՞լ, թե՞ թուլացրել են Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատը:

Մի պահ հայացքն իջեցրեց, հետո նայեց ուղիղ աչքերիս և հաստատակամ ու անկեղծ ասաց.

— Անկասկած, այս ուսումնասիրությունները մեծապես ընդլայնել ու հարստացրել են իմ հոգևոր կյանքը: Դրանց շնորհիվ ավելի լավ ըմբռնեցի այդ իրադարձությունների մշակութային ու պատմական համատեքստը: Իհարկե, կան չլուծված խնդիրներ, դա շատ լավ հասկանում եմ: Երկրային կյանքում չենք կարողանում լիարժեք գիտելիքներ ձեռք բերել: Բայց դա ամենևին չի խաթարում իմ հավատն ավետարանների ու Նոր Կտակարանի մյուս բոլոր գրքերի ճշմարտացիության հանդեպ: Իսկ քրիստոնեության տարածումը սոցիոլոգիական կամ հոգեբանական պատճառներով բացատրելու բոլոր փորձերն ինձ անհամոզիչ են թվում,– նա օրորեց գլուխը,– շատ անհամոզիչ:

Հետո լռեց ու ավելացրեց.

— Պատմական փաստերը միայն ամրապնդեցին իմ համոզմունքը, որ Հիսուս Քրիստոս Աստծո Որդին է, Նա սիրում է մեզ, Նա իր կյանքը տվեց մեզ համար ու Հարություն առավ մեռելներից: Ամեն ինչ այնքան պարզ է:

թվայնացրել է 1915.info կայքը

Ճշմարտություն, որ մեզ ազատ է դարձնում

Համալսարանի շենքից դուրս գալով՝ հայտնվեցի հաջորդ դասին հասնելու համար մի տեղից մյուսը շտապող ուսանողների ծովում. մտածում էի, թե որքան արդյունավետ էր Օհայո՝ Օքսֆորդ փոքրիկ քաղաք կատարածս ուղևորությունը: Եկել էի Հիսուսի մասին հավելյալ ապացույցներ փնտրելու և հեռանում էի նյութերի մի հարուստ շտեմարանով, որը հաստատում է նրա կյանքի բոլոր կարևոր փաստերը, հրաշքները, աստվածությունն ու մահվան նկատմամբ հաղթանակը:

Գիտեի, որ մեր կարճ զրույցը միայն հարցերի մակերեսն է շոշափել: Թևիս տակ «Պատմության դատավճիռը» գիրքն էր, որը վերընթերցել էի հարցազրույցիս համար պատրաստվելիս[43]: Դրանում պատմաբան Գարի Հաբերմասը մանրամասն ներկայացնում է 39 հնագույն աղբյուր, որոնցում կա ավելի քան 100 հղում Հիսուսի կյանքի, ուսմունքի, Խաչելության ու Հարության մասին[44]:

Ավելին, 24 աղբյուր, որոնցից Հաբերմասը մեջբերում է անում, ներառյալ 7 աշխարհիկ աղբյուրներն ու մի քանի վաղ քրիստոնեական հավատի հիմնադրույթները, վերաբերում են Հիսուսի աստվածային բնույթին: «Հավատի այդ հիմնադրույթները ցույց են տալիս, որ եկեղեցին ընդունել է Հիսուսի աստվածության հիմնադրույթը ոչ թե մեկ սերունդ անց, ինչպես հաճախ կրկնում են ժամանակակից աստվածաբանները, այլ այս վարդապետությունն արդեն եղել է ամենավաղ եկեղեցում,– գրում է Հաբերմասը և եզրակացնում,– հավատի այդ խորհրդանիշերն առաջ են եկել հենց այն պատճառով, որ նույնական են ներկայացնում Հիսուսի ուսմունքը»[45]: Ի՞նչ է սա, եթե ոչ մեծագույն Մարդու ամենակարևոր պնդման ապշեցուցիչ ապացույց:

Բաճկոնս կոճկելով քայլեցի դեպի մեքենան: Հրաժեշտի համար շրջվելով տեսա, թե ինչպես է հոկտեմբերյան արևը լուսավորում քարի վրայի գրությունը, որն առաջին անգամ նկատել էի, երբ մտնում էի այս միանգամայն աշխարհիկ համալսարան. «Ճանաչիր ճշմարտությունը, և ճշմարտությունը քեզ ազատ կդարձնի»:

թվայնացրել է 1915.info կայքը

Քննարկումներ

Հարցեր խորհրդածելու կամ խմբային պարապմունքի համար

1. Երբևէ կասկածե՞լ եք որևէ մեկի պատմությանը, մինչ նա հավելյալ ապացույց է ներկայացրել: Յամաուչիի ներկայացրած հավելյալ ապացույցների հետ զուգահեռներ տեսնո՞ւմ եք:
2. Ո՞րն եք համարում ամենահամոզիչ ապացույցը, որի մասին խոսել է Յամաուչին: Ինչո՞ւ:
3. Հին աղբյուրները վկայում են, որ առաջին քրիստոնյաները չէին հրաժարվում իրենց հավատից նույնիսկ տանջալից մահվան սպառնալիքի տակ: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ էին նրանց համոզմունքներն այդքան ամուր:

թվայնացրել է 1915.info կայքը

ԳԼՈՒԽ 5

Գիտական ապացույցներ

Հնագիտությունը հաստատո՞ւմ, թե՞ հերքում է Հիսուսի կենսագրությունները

Ինչ-որ սյուրռեալիստական բան կար դոկտոր Ջեֆրի Մակդոնալդի հետ մեր նախաճաշի ամբողջ տեսարանում: Ահա նա նստած է Հյուսիսային Կարոլինայի դատարանի խորհրդակցությունների սրահում, անվրդով ծամում է իր սենդվիչը՝ թյունաձկով ու կարտոֆիլի ֆրիով, անհոգ դատողություններ է անում ու ակնհայտորեն վայելում է կյանքը: Իսկ կողքի սենյակում ընդմիջում են անում 12 երդվյալ ատենակալ. նրանք հենց նոր են լսել սոսկալի ցուցմունքներ այն մասին, թե ինչպես է Մակդոնալդը դաժանաբար սպանել կնոջն ու երկու մանկահասակ դուստրերին:

Ճաշի ընդմիջումը մոտենում էր ավարտին, երբ չկարողացա ինձ զսպել և զարմանքով ու վրդովմունքով հարցրի Մակդոնալդին.

— Ինչպե՞ս կարող եք Ձեզ այնպես պահել, ասես ոչինչ չի եղել: Ձեզ բոլորովին չի՞ հուզում, որ ատենակալները Ձեզ մեղավոր են ճանաչելու:

Մակդոնալդը կիսով չափ կերած սենդվիչով անփութորեն ատենակալների սենյակի կողմը ցույց տվեց:

— Սրա՞նք,– քմծիծաղեց,– սրանք ինձ երբեք չեն դատապարտի:

Հետո, հավանաբար գիտակցելով, թե այդ բառերը որքան ցինիկ հնչեցին, արագ ավելացրեց.

— Հասկանո՞ւմ եք, ես անմեղ եմ:

Այլևս նրա ծիծաղը չլսեցի: Մի քանի օր անց Մակդոնալդը՝ նախկին դեսանտայինն ու շտապօգնության բժիշկը, մեղավոր ճանաչվեց կնոջը՝ Կոլետին և դուստրերին՝ 5-ամյա Քիմբերլիին ու 2-ամյա Քրիստիին դանակով սպանելու մեջ: Նրան դատապարտեցին ցմահ բանտարկության ու դատարանի դահլիճից ձեռնաշղթաներով տարան:

Մակդոնալդը, որի պատմությունը վարպետորեն պատմել է Ջո Մակգինեսը «Ճակատագրական տեսիլք» գրքում և հեռուստաֆիլմում, բավական վստահ էր, որ իր ալիբին իրեն կօգնի գլուխն ազատել սպանության մեղադրանքից:

թվայնացրել է 1915.info կայքը

Նա քննիչներին ասել է, որ բազմոցի վրա քնած է եղել, երբ կեսգիշերին տուն են ներխուժել թմրանյութից խելքները գցած հիպիներ ու արթնացրել իրեն: Ասել է նաև, որ կռվելով փորձել է հակահարված տալ, սակայն դանակի հարված է ստացել ու կորցրել գիտակցությունը: Երբ ուշքի է եկել, ընտանիքին սպանված է գտել:

Խուզարկուներն ի սկզբանե կասկածեցին նրա ցուցմունքներին: Հյուրասենյակում, որտեղ, Մակդոնալդի ասելով, քնած է եղել, կենաց-մահու կռվի նշաններ առանձնապես չկային: Մակդոնալդի վերքերը մակերեսային էին: Թեև տեսողությունը թույլ էր, և գիշերն էլ առանց ակնոցի էր, չգիտես ինչպես կարողացել էր մանրամասն նկարագրել իր վրա հարձակվողներին:

Բայց հնարավոր չէ մեղադրանք ներկայացնել միայն կասկածների հիման վրա, դրա համար ծանրակշիռ ապացույցներ են պետք: Մակդոնալդի գործով՝ ստերի կծիկը քանդելու և սպանությունների մեջ նրան մեղադրելու համար քննիչները դիմեցին գիտական փաստերի:

Քրեագիտությունն օգտագործում է հետազոտության մի շարք գիտական մեթոդներ՝ սկսած ԴՆԹ-ի նույնականացումից մինչև դատաբժշկական մարդաբանություն ու թունաբանություն: Մակդոնալդի դեպքում շիճուկաբանական (արյան և դրա հետքերի) հետազոտությունների վերլուծությունը նրան բանտ ուղարկեց:

Քննիչների բախտը բերել էր այն առումով, որ Մակդոնալդների ընտանիքի բոլոր անդամների արյան խմբերը տարբեր էին: Վերլուծելով, թե բնակարանում որտեղ են եղել արյան բծերը, դատաբժշկական փորձագետները կարողացան վերականգնել այդ սոսկալի գիշերվա իրադարձությունների հաջորդականությունը: Արդյունքները լիովին հակասում էին Մակդոնալդի ներկայացրած տարբերակին:

Տնով մեկ ցրված կապույտ գիշերազգեստի մանրագույն թելերը նույնպես հերքեցին նրա ալիբին: Իսկ նրա գիշերազգեստի մանրադիտակով զննությունը ցույց տվեց, որ դրա վրայի անցքերը չէին կարող բացվել, ինչպես նա էր պնդում, սառույց կոտրելու դանակով, որ, իբր, արել էին տուն ներխուժողները: Կարճ ասած, Մակդոնալդի դատապարտության հետևում իրականում ՀԴԲ լաբորատորիաների սպիտակ խալաթներով աշխատակիցներն էին[46]:

Գիտական հետազոտությունները կարող են նաև որոշակիություն մտցնել այն հարցում, թե որքանով են ճշգրիտ Հիսուսի մասին Նոր Կտա-

թվայնացրել է 1915.info կայքը

կարանի պատմությունները: Իհարկե, շիճուկաբանությունն ու թունաբանությունը չեն կարող լույս սփռել այս հարցի վրա, բայց մեկ այլ գիտակարգ՝ հնագիտությունը, ուղղակիորեն առնչվում է ավետարանների հավաստիության հարցին:

Հնագիտությունը, որը երբեմն անվանում են դիմացկուն աղբն ուսումնասիրող գիտություն, հայտնաբերում և հետազոտում է նյութական մշակույթի առարկաներ, ճարտարապետական կառույցների և արվեստի գործերի բեկորներ, մետաղադրամներ, հուշարձաններ, փաստաթղթեր և հնագույն մշակույթների այլ հետքեր: Մասնագետներն ուսումնասիրում են այս մասունքներն ու պարզում, օրինակ, ինչպես էին ապրում մարդիկ այն օրերին, երբ Հիսուս քայլում էր հին Պաղեստինի փոշոտ փողոցներով:

Առաջին դարի 100-ավոր հնագիտական գտածոներ են պեղվել, ու ինձ հետաքրքրում էր՝ դրանք հաստատե՞լ, թե՞ հերքել են ականատեսների վկայությունները Հիսուսի մասին: Հետաքրքրությունս, սակայն, միախառնված էր թերահավատության հետ. շատ հաճախ քրիստոնյաները չափազանցրել են հնագիտական ապացույցների արժեքը: Չեմ ցանկանա նորից նման բանի հանդիպել:

Այդ պատճառով փնտրում էի այնպիսի մասնագետի, որն ինքն է պեղել Մերձավոր Արևելքի ավերակները, հանրագիտարանային գիտելիքներ ունի հին գտածոների հարցում ու բավականաչափ գիտական զսպվածություն՝ ընդունելու համար հնագիտության սահմանները, միաժամանակ կարող է բացատրել, թե ինչ է հաղորդում այն առաջին դարում կյանքի մասին:

4-ՐԴ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Ջոն Մակրեյ, փիլիսոփայության դոկտոր

Շատ գիտնականներ և ուսանողներ հնագիտություն ուսումնասիրելիս օգտվում են Ջոն Մակրեյի մանրակրկիտ ու անկողմնակալ 432-էջանոց դասագրքից, որի վերնագիրն է «Հնագիտությունն ու Նոր Կտակարանը»: Երբ Գեղարվեստական և ժամանցային հաղորդումների հեռուստացանցը (A&E TV Network) ուզում էր համոզվել «Աստվածաշնչի առեղծվածները» հաղորդաշարի ճշգրտության մեջ, Մակրեյին հրավիրեց որպես խորհրդատու:

թվայնացրել է 1915.info կայքը

Իսկ երբ National Geographic-ը փնտրում էր մասնագետ, որը կկարողանար բացատրել աստվածաշնչյան աշխարհի խճճվածությունները, հեռախոսը կրկին զնգաց Չիկագոյի Ուիթոն քոլեջի՝ Մակրեյի գրասենյակում:

Նա սովորել է եբրայագիտության համալսարանում, Երուսաղեմի աստվածաշնչյան և հնագիտության ֆրանսիական լիցեյում, Վանդերբիլտի համալսարանի աստվածաբանության դպրոցում և Չիկագոյի համալսարանում, որտեղ 1967-ին դոկտորական ատենախոսություն է պաշտպանել: Մակրեյն Ուիթոն քոլեջում ավելի քան 15 տարի Նոր Կտակարան ու հնագիտություն էր դասավանդում: Նրա հոդվածները կարելի է գտնել 17 հանրագիտարաններում ու բառարաններում, նրա ուսումնասիրությունն ընդգրկվել է «Մերձավոր Արևելքի հնագիտական ընկերության տեղեկագրում» և այլ գիտական ամսագրերում, նա 29 գիտական հոդված է ներկայացրել մասնագիտական ընկերություններում:

Մակրեյը նաև Երուսաղեմի Օլբրայթ Հնագիտական հետազոտությունների ինստիտուտի նախկին գիտաշխատող է և հոգաբարձու, Արևելյան հետազոտությունների ամերիկյան դպրոցի նախկին հոգաբարձու: Այժմ Մերձավոր Արևելքի հնագիտական ընկերության խորհրդի անդամ է և Աստվածաշնչի ուսումնասիրությունների ինստիտուտի հրատարակած «Հնագիտությունն աստվածաշնչյան աշխարհում» և «Աստվածաշնչյան հետազոտությունների տեղեկագրի» խմբագրական խորհուրդների անդամ:

Մակրեյը սիրում է դասավանդել ու գրել հին աշխարհի մասին, նաև սիրում է հնագիտական պեղումներ: Ավելի քան ութ տարի Իսրայելում ղեկավարել է արշավախմբեր, որոնք պեղումներ էին անում Կեսարիայում, Սեփորիսում ու Հերոդիումում: Նա ուսումնասիրել է Անգլիայի և Ուելսի հռոմեական հնագիտական հուշարձանները, պեղումներ է հետազոտել Հունաստանում և կրկնել Պողոս առաքյալի ուղևորություններից շատերի երթուղին:

Մակրեյը 66 տարեկան է, նրա մազերն արդեն ճերմակել են, ակնոցի ապակիները՝ հաստացել, բայց առաջվա պես ճառագում է արկածախնդրության ոգով: Նրա աշխատասենյակի գրասեղանի վերևում, ննջասենյակի մահճակալի վերևում նույնպես, Երուսաղեմի մանրամասն համայնապատկերն է:

— Ապրում եմ այս քաղաքի ստվերում, ասաց նա՝ լուսանկարի վրա կարոտով ցույց տալով պեղումների որոշ տեղանքներ ու հնագիտական կարևոր գտածոներ:

թվայնացրել է 1915.info կայքը

Ես տեղավորվեցի նրա աշխատասենյակի հարմարավետ բազմոցին, որպիսին հաճախ կարելի է տեսնել գյուղական տան պատշգամբում, իսկ Մակրեյը, անփույթ, կոճակներն արձակած վերնաշապիկով ու սպորտային բաճկոնով, որը քիչ մաշված տեսք ուներ, նստեց գրասեղանի մոտ:

Ցանկանալով պարզել՝ նա հակված է գերագնահատել հնագիտության ազդեցությունը, որոշեցի մեր հարցազրույցը սկսել ոչ սովորական հարցով՝ ինչ չի կարող ասել մեզ հնագիտությունը Նոր Կտակարանի հավաստիության մասին: Ի վերջո, ինչպես ինքը՝ Մակրեյն է գրում դասագրքում, նույնիսկ եթե հնագետները հաստատեն, որ 6-7-րդ դարերի արևմտյան Արաբիայում իսկապես գոյություն ունեցել են Մեքքա ու Մեդինա քաղաքները, դեռ չի ապացուցվում, որ Մուհամեդն այնտեղ է ապրել, կամ որ Ղուրանը ճշմարիտ է:

— Հնագիտական ապացույցներն արժեքավոր են, բավական արժեքավոր,- սկսեց նա դանդաղ ու ծորուն արտասանությամբ, որը հատուկ է հարավարևելյան Օկլահոմայում ծնվածներին,- բայց դա, իհարկե, չի կարող ապացուցել, որ Նոր Կտակարանն Աստծո խոսքն է: Եթե Իսրայելում պեղումներ ենք անում և գտնում ենք հնագույն բնակավայրեր, որոնց տեղադրությունը համապատասխանում է Աստվածաշնչում նշվածին, դա միայն ցույց է տալիս, որ այնտեղ ներկայացված պատմությունն ու աշխարհագրությունը ճշգրիտ են: Այնուամենայնիվ, դա չի հաստատում, որ այն, ինչ Հիսուս Քրիստոս ասել է, ճիշտ է: Հոգևոր ճշմարտությունները հնագիտական հայտնագործություններով ապացուցել կամ հերքել հնարավոր չէ:

Համեմատության համար նա օրինակ բերեց Հայնրիխ Շլիմանի պատմությունը, որը Տրոյան էր փնտրում՝ ջանալով ապացուցել Հոմերոսի «Իլիականի» պատմական ճշգրտությունը:

— Նա գտավ Տրոյան,- մեղմ ժպիտով նկատեց Մակրեյը,- բայց դա չի նշանակում, որ յուրաքանչյուր բառ «Իլիականում» ճշմարտություն է: Նշանակում է միայն, որ Հոմերոսը ճշգրիտ նշել է քաղաքի կոորդինատները:

Հենց որոշ սահմաններ դրեցինք, թե ինչ չի կարող հաստատել հնագիտությունը, անհամբերությամբ սկսեցի պարզել, թե ինչ կարող է այն պատմել Նոր Կտակարանի մասին: Որոշեցի սկսել մի դիտարկմամբ, որը հիմքում իրավական կրթությամբ հետաքննող լրագրողի իմ փորձն էր:

թվայնացրել է 1915.info կայքը

Ճշմարտությունը պեղելիս

Փորձելով պարզել՝ վկան ասո՞ւմ է ճշմարտությունը, լրագրողներն ու փաստաբանները ստուգում են այն ամենը, ինչը հնարավոր է ստուգել նրա ցուցմունքներում: Մանրուքներում հայնաբերված անճշտությունները կասկած են հարուցում ամբողջ պատմության իսկության վերաբերյալ: Բայց եթե մանրամասները քննությունն անցնում են, սա նշան է, ոչ թե վերջնական ապացույց, որոշակի փաստ, որ վկայի ամբողջ պատմությունը վստահելի է:

Օրինակ՝ եթե մեկը պատմում է Սենթ Լուիսից Չիկագո կատարած ուղևորության մասին ու հիշատակում, որ կանգ է առել Սփրինգֆիլդում՝ Իլինոյսում, Օդեոն կինոթատրոնում դիտել է «Տիտանիկը» ու մի մեծ «Քլարկ» շոկոլադե սալիկ կերել, քննիչները կարող են պարզել՝ գոյություն ունի՞ նման կինոթատրոն Սփրինգֆիլդում, այդ ֆիլմը ցուցադրվե՞լ է այնտեղ, կոնկրետ այդ ֆիրմայի ու չափի սալիկ վաճառվե՞լ է այն ժամանակ, երբ նա այնտեղ էր: Եթե հետաքննության արդյունքները հակասում են վկայի խոսքերին, դա լրջորեն խաթարում է վստահությունը նրա նկատմամբ: Եթե բոլոր մանրամասները համընկնում են, իհարկե, չի նշանակում, որ ամբողջ պատմությունը ճիշտ է, բայց մեծացնում է դրա արժանահավատությունը:

Ինչ-որ իմաստով այդպես են գործում նաև հնագետները: Նրանք ելնում են այն համոզմունքից, որ եթե հաստատվում են հնագույն պատմաբանի գրքի երկրորդական մանրամասները, ավելանում է վստահությունը տվյալների նկատմամբ, որոնք ավելի դժվար է ստուգել:

Այս մասին Մակրեյից իր մասնագիտական կարծիքը հարցրի:

— Հնագիտությունը հաստատո՞ւմ, թե՞ հերքում է Նոր Կտակարանը, երբ ստուգում է այդ պատմությունների մանրամասները:

— Անկասկած, վստահությունը Նոր Կտակարանի հավաստիության հանդեպ մեծանում է,– առանց վարանելու պատասխանեց Մակրեյը,– յուրաքանչյուր հնագույն փաստաթղթի արժանահավատությունը մեծանում է միայն այն ժամանակ, երբ հնագետները պարզում են, որ հեղինակը տվյալ վայրը կամ իրադարձությունը նկարագրել է ճշգրիտ և մանրամասն:

Որպես ապացույց, բերեց Կեսարիայի օրինակը՝ Իսրայելի միջերկրածովյան ափին գտնվող հնագույն քաղաքի, որտեղ ինքը մասնակցել է Հերովդես Մեծի նավահանգստի պեղումներին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Տևական ժամանակ գիտնականները կասկածում էին առաջին դարի պատմիչ Հովսեփոս Փլաբիոսի այն պնդման հիմնավորությանը, որ այս նավահանգիստն այնքան մեծ էր, որքան Պիրեոսը՝ Աթենքի գլխավոր նավահանգիստը: Մարդիկ կարծում էին, որ Հովսեփոսը սխալվում է, քանի որ այսօր ծոցը բավական փոքր է թվում, քարերը դուրս են ցցվել ջրի մակերևույթից: Բայց երբ սկսեցինք ստորջրյա պեղումները, պարզվեց, որ նավահանգիստը շատ ավելի խորն է և շատ ավելի հեռուն է ձգվում ջրի տակ, պարզվեց՝ այն սուզվել է, ու դրա ընդհանուր չափերն իսկապես համեմատելի են Պիրեոսի նավահանգստի հետ: Այնպես որ Փլաբիոսը միանգամայն ճիշտ էր, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ նա գիտեր, թե ինչի մասին է խոսում:

Իսկ Նոր Կտակարանը գրողները գիտե՞ն, թե ինչի մասին են խոսում: Սա այն է, ինչ հույս ունեի պարզել:

Ղուկասը որպես պատմիչ. նա ճշգրիտ և վստահելի՞ է

Բժիշկ և պատմիչ Ղուկասը գրել է և՛ ավետարանը, որ իր անունով է կոչվել, և՛ «Գործք առաքելոց» գիրքը, որոնք միասին կազմում են ամբողջ Նոր Կտակարանի գրեթե մեկ քառորդը: Հետևաբար չափազանց կարևոր է հարցը, թե նրան կարելի՞ է վստահել:

— Ի՞նչ են պարզել հնագետները՝ ստուգելով նրա գրածների մանրամասները,– հարցրի ես,– նա ճշգրի՞տ էր, թե՞ անփույթ:

— Թե՛ ազատական, թե՛ պահպանողական հետազոտողները համաձայն են, որ Ղուկասը, որպես պատմաբան, շատ ճշգրիտ է և բծախնդիր,– պատասխանեց Մակրեյը: — Նա կարդացած է, պերճախոս, նրա հունարենը մոտ է դասականին, գրում է կրթված մարդու պես, իսկ հնագիտական հետազոտությունները կրկին ու կրկին հաստատում են, որ Ղուկասը ճշգրիտ է իր ասելիքում: Նաև մի քանի դեպք է եղել Կեսարիայի նավահանգստի պատմության նման, երբ գիտնականները սկզբում կարծել են, թե Ղուկասը սխալվել է, բայց հետագա գտածոները հաստատել են, որ նրա գրածը ճիշտ է:

Օրինակ՝ Ղուկաս 3:1-ում ասվում է, որ մոտավորապես 27 թվականին Լյուսանիասն Աբիլինեի չորրորդապետն էր: Պատմաբանները երկար

տարիներ սա մատնացույց են արել որպես փաստ, որ Ղուկասը չգիտեր, թե ինչի մասին է խոսում. ինչպես հայտնի է, Լյուսանիասը ոչ թե չորրորդապետ էր, այլ Քաղկիսի կառավարիչը, ընդ որում, կես դար առաջ: Եթե Ղուկասն այդ կարևոր փաստը չի կարողացել ճիշտ հաղորդել, ենթադրում էին նրանք, ինչպե՞ս կարելի է վստահել նրան: Այդ ժամանակ էր, որ հնագիտությունը միջամտեց:

— Հետո մի արձանագրություն գտնվեց Տիբերիոսի ժամանակներից, որը կառավարել է 14–37 թթ.: Այստեղ Լյուսանիասը կոչվում է Դամասկոսի մոտ գտնվող Աբիլինեի չորրորդապետ, ճիշտ ինչպես Ղուկասը գրել էր,– բացատրեց Մակրեյը: — Պարզվեց, որ Լյուսանիաս անունով երկու կառավարական պաշտոնյա է եղել: Այնպես որ Ղուկասը հերթական անգամ իրավացի դուրս եկավ:

Մեկ այլ օրինակ է «Գործք առաքելոց» 17:6-ում Ղուկասի հղումը Թեսաղոնիկե քաղաքի պոլիտարքներին (սա Նոր միջազգային մեկնակերպով թարգմանվում է որպես քաղաքային պաշտոնյաներ):

— Երկար ժամանակ ենթադրվում էր, որ Ղուկասը սխալվել է, որովհետև պոլիտարքների մասին որևէ հիշատակում չէր հայտնաբերվել հին հռոմեական այլ փաստաթղթերում,– ասաց Մակրեյը: — Բայց հետո հնագետները մի արձանագրություն գտան առաջին դարի կամարի վրա, որը սկսվում է «Պոլիտարքների ժամանակ...» բառերով: Այն կարող եք ինքներդ տեսնել Բրիտանական թանգարանում: Հետո հնագետները գտան, ուշադրություն, ավելի քան 35 գրություն, որոնք հիշատակում են պոլիտարքներին, այդ թվում՝ Թեսաղոնիկեից և հենց նույն ժամանակաշրջանի, որի մասին գրում է Ղուկասը: Կրկին քննադատները սխալ դուրս եկան, Ղուկասը՝ ճիշտ:

Մի առարկություն հիշեցի:

— Այո, բայց իր ավետարանում Ղուկասն ասում է, որ Հիսուս մոտենում էր Երիքովին, երբ բուժեց կույր Բարտիմեոսին, մինչդեռ Մարկոսն ասում է, որ նա Երիքովից դուրս էր գալիս, երբ դա կատարվեց[47]: Սա պարզորոշ հակասություն չէ՞, որը խաթարում է հավատը Նոր Կտակարանի հանդեպ:

— Ամենևին,– անվրդով պատասխանեց նա: — Դա միայն թվում է հակասություն: Դուք մտածում եք ժամանակակից հասկացություններով, երբ քաղաքները կառուցվում են մեկընդմիշտ և նույն տեղում: Բայց հնում այլ կերպ էլ էր լինում: Հին Երիքովն առնվազն չորս տարբեր վայրերում էր, մի-

թվայնացրել է 1915.info կայքը

մյանցից 400 մ հեռավորության վրա: Քաղաքն ավերվում ու վերաբնակեցվում էր ջրի նոր այլ պաշարի, նոր ճանապարհի կամ մի լեռան ավելի մոտ: Եվ հնարավոր էր գնալ մի Երիքովից մյուսը, ինչպես գնում ենք Չիկագոյի մի արվարձանից մյուսը:

— Ուզում եք ասել, որ Ղուկասն ու Մարկոսը կարող էին միաժամանակ ճիշտ լինել,– հարցրի:

— Ճիշտ եք: Հիսուսը կարող էր Երիքովի մի տարածքից դուրս գալ ու միաժամանակ մի ուրիշը մտնել:

Եվ կրկին հնագիտությունը հաստատում էր Ղուկասի ճշմարտացիությունը: Քանի որ Նոր Կտակարանի զգալի մասը նա է գրել, չափազանց կարևոր է իմանալ, որ Ղուկասը բծախնդիր և ճշգրիտ էր նույնիսկ ամենափոքր մանրամասներում: Մի նշանավոր հնագետ մանրակրկիտ ուսումնասիրեց Ղուկասի «աշխարհագրությունը»՝ 32 երկիր, 54 քաղաք, 9 կղզի, և ոչ մի սխալ չգտավ[48]:

Եզրակացությունը հետևյալն է. «Եթե Ղուկասն այդքան բծախնդրորեն ճշգրիտ էր իր պատմությունը հաղորդելիս,– ասված է այդ թեմայով մի գրքում,– ի՞նչ տրամաբանական հենքի վրա ենք ենթադրում, որ նա դյուրահավատ կամ ոչ ճշգրիտ է անհամեմատ ավելի կարևոր բաները հաղորդելիս, կարևոր ոչ միայն իր, այլև ուրիշների համար»[49]:

Օրինակ՝ Հիսուսի հարության մասին, որը նրա աստվածայնության ամենակարևոր ապացույցն է՝ հաստատված, Ղուկասի խոսքով, «բազում ձևերով ու ապացույցներով»: («Գործք առաքելոց» 1:3):

Հովհաննեսի ու Մարկոսի ավետարանների հավաստիությունը

Հնագիտությունը հաստատում է, որ Ղուկասին կարելի է վստահել, բայց նա Նոր Կտակարանի միակ հեղինակը չէ: Ինձ հետաքրքրում էր, թե գիտնականներն ինչ ունեն ասելու Հովհաննեսի մասին, որի ավետարանը երբեմն համարվել է կասկածելի, քանի որ նա խոսում է վայրերի մասին, որոնց տեղադրությունը հնարավոր չէ ստուգել: Որոշ գիտնականներ նույնիսկ պնդում են, որ եթե Հովհաննեսի ավետարանում որոշակի մանրամասներ բացակայում են, նշանակում է նա քիչ բան գիտեր Հիսուսի կյանքի իրադարձությունների մասին:

թվայնացրել է 1915.info կայքը

Բայց այդ եզրակացությունը վերջին տարիներին ամբողջովին վերանայվել է:

— Ի հայտ են եկել որոշ բացահայտումներ, որոնք ապացուցում են, որ Հովհաննեսը շատ ճշգրիտ է,– նշեց Մակրեյը: — Օրինակ՝ Հովհաննես 5:1-15-ում պատմվում է, թե ինչպես է Հիսուս Բեթհեզդայի ավազանի մոտ բժշկում մի անդամալույծի: Հովհաննեսը մի մանրամասն է ասում, որ ավազանը հինգ սյունասրահ ուներ: Երկար ժամանակ սա մեջբերում էին որպես օրինակ, որ Հովհաննեսն անճշտություն է թույլ տվել, որովհետև ոչ մի նման վայր չէր գտնվել: Բայց վերջերս պեղել են Բեթհեզդայի ավազանը. այն ծածկված էր ավելի քան 10 մետր հողի շերտով, և, պարզվեց, իսկապես, ուներ հինգ սյունասրահ, այսինքն՝ կամարակապ սրահներ կամ սյուներով մուտքեր, ճիշտ ինչպես Հովհաննեսն էր նկարագրել: Եվ մյուս հայտնագործությունները ևս՝ Սիլոամի ավազանը (Հովհաննես 9:7), Հակոբի ջրհորը (Հովհաննես 4:12), Քարահատակը Յաֆայի դարպասի մոտ, որտեղ Հիսուս կանգնում է Պիղատոսի առաջ (Հովհաննես 19:13), նույնիսկ իր՝ Պիղատոսի ինքնության նույնականացումը հաստատում են Հովհաննեսի ավետարանի պատմական արժանահավատությունը:

— Ասում են՝ Հովհաննեսի ավետարանը չի կարող ճշգրիտ լինել, քանի որ գրվել է Հիսուսի կյանքից շատ ավելի ուշ: Ստացվում է, որ այդպես չէ՞,– հարցրի ես:

— Միարժեքորեն,– պատասխանեց նա:

Ի պատասխան՝ Մակրեյը կրկնեց Բրյուս Մեցգերի պատմությունն այն մասին, թե ինչպես են հնագետները գտել Հովհաննեսի ավետարանի 18-րդ գլխի մի հատված, որն առաջատար մասնագետները թվագրել են Ք. հ. մոտ 125 թվականով: Ցույց տալով, որ Հովհաննեսի ավետարանի կրկնօրինակները գոյություն են ունեցել այսքան վաղ և տարածվել են մինչև Եգիպտոս, հնագետները հաջողությամբ հերքեցին այն ենթադրությունը, թե Հովհաննեսի ավետարանը գրվել է 2-րդ դարում՝ Հիսուսի կյանքից չափազանց երկար ժամանակ անց, որպեսզի վստահելի լինի:

Այլ գիտնականներ սուր քննադատել են Մարկոսի ավետարանը, որն ընդհանրապես համարվում է Հիսուսի կյանքի մասին գրված առաջին պատմությունը: Աթեիստ Մայքլ Մարտինը Մարկոսին մեղադրում է Պաղեստինի աշխարհագրությունը չիմանալու մեջ, ինչը, ըստ նրա, ցույց է տալիս, որ Մարկոսը չի ապրել այս վայրերում Հիսուսի ժամանակ: Մաս-

թվայնացրել է 1915.info կայքը

նավորապես մեջբերում է Մարկոս 7:31-ը. «Դուրս ելնելով Տյուրոսի ու Սիդոնի սահմաններից՝ Հիսուս դարձյալ եկավ Գալիլեայի լճի եզերքը, Դեկապոլիի սահմաններից ներս»: «Ապացուցված է,– գրում է Մարտինը,– որ եթե Հիսուս գնար այս ուղղությամբ, պարզապես կհեռանար Գալիլեայի ծովից»[50]:

Լսելով Մարտինի քննադատությունը՝ Մակրեյը խոժոռվեց, գրադարակից դուրս բերեց Մարկոսի ավետարանի հունարեն տարբերակը, մի ամբողջ կույտ տեղեկատու գրքեր և բաց արեց հին Պաղեստինի հսկայական քարտեզը:

— Ձեր այդ քննադատն այնպես է խոսում, ասես Հիսուսը նստում էր իր լիմուզինն ու սլանում դաշնային մայրուղով,– ասաց նա:

Հիմնվելով բնագրի տեքստի վրա, հաշվի առնելով լեռնային տեղանքն ու տարածաշրջանում ճանապարհների հավանական դիրքը, նաև «Դեկապոլիս» հասկացության անորոշությունը (այն վերաբերում էր տասը քաղաքների միավորմանը, որոնց կազմը ժամանակ առ ժամանակ փոխվում էր)՝ Մակրեյը քարտեզի վրա գծեց ամենահավանական երթուղին, որը ճշգրիտ համապատասխանում էր Մարկոսի նկարագրությանը:

— Երբ ամեն ինչ դրվում է պատշաճ համատեքստում,– եզրակացրեց նա,– Մարկոսի պատմածը խնդիր չի հարուցում:

Կրկին հնագիտական տվյալներն օգնեցին պարզել այն, ինչը սկզբում Նոր Կտակարանում գայթաքար էր թվացել:

— Իսկ երբևէ հանդիպե՞լ եք հնագիտական գտածոների, որոնք ակնհայտորեն հակասել են Նոր Կտակարանի որևէ տեղեկության,– հարցրի Մակրեյին:

Նա գլուխն օրորեց:

— Հնագիտությունը ոչինչ չի գտել, որն անհերքելիորեն հակասում է Աստվածաշնչին,– վստահ պատասխանեց նա: — Ընդհակառակը, ինչպես տեսանք, սկեպտիկ գիտնականների բազմաթիվ կարծիքներ են եղել, որոնք տարիների ընթացքում կոդավորվել-վերածվել են «փաստի», թեև հնագիտությունը ցույց է տվել, որ սխալ են:

Բայց դեռ մի քանի անպատասխան հարցեր ունեի: Բաց արեցի գրառումներս, որպեսզի Մակրեյին հարցնեմ երեք հին հանելուկներ, որոնք, կարծում էի, հնագիտությունը դժվարությամբ է բացատրելու:

թվայնացրել է 1915.info կայքը

ԱՌԵՂԾՎԱԾ N 1. Մարդահամար

Հիսուսի ծննդյան պատմություններում ասվում է, որ Մարիամն ու Հովսեփը պետք է վերադառնային Հովսեփի հայրենի քաղաք Բեթղեհեմ՝ մասնակցելու մարդահամարին:

— Թույլ տվեք կտրուկ արտահայտվել՝ առաջին հայացքից սա անհեթեթ է թվում,– ասացի ես: — Ինչպե՞ս կարող էր կառավարությունն իր բոլոր քաղաքացիներին հարկադրել, որ վերադառնան իրենց ծննդավայրերը: Կամ որևէ հնագիտական վկայություն, որ երբևէ նման մարդահամար տեղի է ունեցել:

Մակրեյը դարակից անխռով հանեց իր հեղինակած գրքի օրինակը:

— Փաստն այն է, որ հայտնաբերվել են հին փաստաթղթեր, որոնք լույս են սփռում, թե ինչ կարգով է անցկացվել մարդահամարը,– ասաց էջերը թերթելով: Գտնելով այն, ինչ փնտրում էր, կարդաց 104 թվականի կառավարական հրամանագրից մի հատված.

> Գայոս Վիբիոս Մաքսիմոսը՝ Եգիպտոսի պրեֆեկտը (ասում է). «Տեսնելով, որ եկել է տնետուն մարդահամար անցկացնելու ժամանակը, անհրաժեշտ է հարկադրել բոլորին, ովքեր, ինչ պատճառով էլ լինի, բնակվում են իրենց նահանգներից դուրս, իրենց սեփական տները վերադառնալ, որպեսզի հնարավոր լինի սովորական կարգով իրականացնել մարդահամար, նաև հոգ տանել հողահատկացումների մշակման մասին[51]:

— Ինչպես տեսնում եք,– ասաց նա՝ գիրքը փակելով,– այս փաստաթղթով հաստատվում է, որ այդպիսի մարդահամար իսկապես իրականացվել է, թեև մարդկանց հաշվելու այս եղանակը կարող է արտառոց թվալ: Մեկ այլ պապիրուսում, այս մեկը Ք. հ. 48 թվականից է, նշված է, որ մարդահամարին պետք է մասնակցի ամբողջ ընտանիքը:

Ավելին, հայտնի է, որ բնակչությանը բորբոքելուց խուսափելու համար հռոմեացիները երբեմն թույլ էին տալիս, որ մարդահամարն անցկացվի տեղական ավանդույթների հիման վրա: Հրեական մշակույթում դա կնշանակեր, որ Մարիամն ու Հովսեփը պիտի հաշվառվեն իրենց նախնիների տանը[52]:

Այնուամենայնիվ, սրանով հարցը լիովին չլուծվեց: Ղուկասն ասում է, որ մարդահամարը, որի պատճառով Հովսեփն ու Մարիամը գնացին Բեթղե-

թվայնացրել է 1915.info կայքը

հեմ, իրականացվել է, երբ Կյուրենիոսը կուսակալ էր Ասորիքում Հերովդես Մեծի օրոք:

— Դա էական խնդիր է առաջացնում,– նշեցի ես,– որովհետև Հերովդեսը մահացել է Ք. ա. 4 թվականին, իսկ Կյուրենիոսն Ասորիքի կառավարիչ դարձավ միայն Ք. հ. 6 թվականին և կարճ ժամանակ անց մարդահամար անցկացրեց: Այստեղ մեծ բաց կա. ինչպե՞ս կբացատրեք տարեթվերի այսպիսի լուրջ անհամապատասխանությունը:

Ես բարձրացրի մի հարց, որը լուծելու համար գիտնականները տարիներ շարունակ գլուխ են կոտրել: Ահա թե ինչ պատասխանեց Մակրեյը.

— Այս հարցում մեծ աշխատանք է կատարել հնագետ Ջերի Վարդամանը: Նա գտել է մետաղադրամ, որի վրա գրված է Կյուրենիոսի անունը՝ շատ փոքր տառերով. նման մակագրություններն անվանում ենք միկրոգրաֆիա: Այն ցույց է տալիս, որ Կյուրենիոսը եղել է Ասորիքի և Կիլիկիայի կառավարիչը Ք. ա. 11 թվականից և պրոկոնսուլ մնաց Հերովդեսի մահից հետո մի որոշ ժամանակ:

— Եվ ի՞նչ է դա նշանակում,– հարցրի տարակուսած:

— Դա նշանակում է, որ, ըստ երևույթին, երկու տարբեր պաշտոնյա է եղել Կյուրենիոս անունով: Մարդահամարն իրականացվել է առաջին Կյուրենիոսի օրոք, Հերովդեսի տիրապետության ընթացքում: Եվ քանի որ մարդահամարներն անցկացվում էին 14 տարին մեկ, ամեն ինչ համընկնում է:

Ենթադրության վրա կառուցված այս տեսությունն ինձ այնքան էլ համոզիչ չթվաց, բայց որոշեցի ավելի ուշ անդրադառնալ դրան:

Ինչպես պարզվեց, Մակրեյի նշած հնագետը մահացել է իմ ու Մակրեյի զրույցից քիչ ժամանակ անց: Նա երբեք իր գյուտի մասին որևէ գրախոսված հոդված չի գրել, ու ոչ ոք նրա գյուտը չի տիրաժավորել: Մասնագետները, ի վերջո, մերժեցին նրա պնդումը:

Երբ որոշ լրացուցիչ հետազոտություն արեցի, պարզվեց, որ սըր Ուիլյամ Ռամզին՝ հանգուցյալ հնագետը, Օքսֆորդի և Քեմբրիջի համալսարանների պրոֆեսորը, ժամանակին նման տեսություն է առաջ քաշել: Ջննելով տարբեր արձանագրություններ եկել է եզրակացության, որ մի Կյուրենիոս է եղել, սակայն կառավարել է Ասորիքը երկու անգամ, այդ թվում՝ մարդահամարի ժամանակ, որն ըստ Ռամզիի տեղի է ունեցել Ք. ա. 8/7 թվականին[53]:

Բայց այս ավելի վաղ մարդահամարը որևէ տեղ պատմական արձանագրություններում չի հիշատակվում: Այնուամենայնիվ, դա զարմանալի

չէր լինի, եթե եղած չլինեին խռովություններ, որոնք հարուցել էին Հովսեփոսի կամ այլ հին պատմաբանների ուշադրությունը:

Հարցեր են բարձրացվել նաև այն մասին, թե հռոմեացիները Սիրիայում մարդահամար պատվիրած կլինեի՞ն, երբ այն դեռևս լիարժեք չէր ընդգրկվել Հռոմեական կայսրության մեջ: Կա նախադեպ, որ Հռոմը մարդահամարի հրաման է արձակել հաճախորդ երկրներում[54]:

Հարոլդ Ուոլտեր Հոնները, որն իր դոկտորի աստիճանը ստացել է Քեմբրիջում, մատնանշել է, որ Հերովդեսը հիվանդ էր և հակամարտության մեջ էր մտել հռոմեացի կայսր Օգոստոսի հետ Ք. ա. 8/7 թվականին:

— Անկայունությունն ու առողջական վատ դրությունը հաշվի առնելով՝ Օգոստոսի համար մարդահամար անցկացնելու ժամանակը բարենպաստ էր իրադրությունը մինչև Հերովդեսի մահը գնահատելու համար,– ասաց նա: — Հետևաբար Հերովդեսի տիրապետության վերջին մեկ կամ երկու տարվա ընթացքում մարդահամարը խելամիտ կլիներ ու խիստ հավանական[55]:

Նոր Կտակարանն ուսումնասիրող պրոֆեսոր Դարել Լ. Բոկն ասել է. «Հերովդեսի ժամանակ մարդահամարը, որը պահանջում էր Հովսեփի ու Մարիամի ուղևորությունը, հավանական է, եթե հիմնվենք նրա վրա, ինչ գիտենք հռոմեական պրակտիկայի մասին: Էական խնդիր չէ, որ ոչ մի ուրիշ աղբյուր չի հիշատակում այսպիսի մարդահամարի մասին, քանի որ բազմաթիվ հին աղբյուրներ են հիշատակում իրադարձություններ, որոնք այլուր հաստատված չեն, նաև այն պատճառով, որ Ղուկասը վստահելի է այն փաստերը հաղորդելիս, որոնք հնարավոր է ստուգել: Քանի որ մարդահամարի մանրամասները համապատասխանում են հարկման ընդհանուր հռոմեական քաղաքականությանը, հարկ չկա կասկածի տակ առնել, որ դա կարող էր տեղի ունենալ Հերովդեսի ժամանակ»[56]:

Այլ գիտնականներ էլ նշել են, որ Ղուկասի ավետարանի տեքստը կարող է թարգմանվել նաև այսպես. «... մարդահամարը տեղի ունեցավ նախքան Կյուրենիոսի՝ Սիրիան կառավարելը», ինչը նույնպես խնդիրը կլուծեր[57]: Հոներ ն ասել է. «Սա տեքստի իմաստը փոխում է»[58], թեև որոշ գիտնականներ համաձայն չեն այս մեկնաբանության հետ:

Այլ տարբերակներ էլ են քննարկվել: «Կյուրենիոսի խնդրի տարբեր լուծումներ են առաջարկվել,– ասել է Բոկը,– բայց որևէ մեկն ակնհայտ առավելություն չունի մյուսների նկատմամբ, որպեսզի լուծի խնդիրը:

թվայնացրել է 1915.info կայքը

Ստացվում է՝ կան լուծման տարբերակներ, որոնցից յուրաքանչյուրը կարող է ճիշտ լինել»[59]:

Բայց մի փաստ ինձ հատկապես համոզիչ թվաց. Ղուկասը չէր կարող 6 թվականին անցկացված մարդահամարը նկատի ունենալ, քանի որ ինքն իրեն կհակասեր:

Ինչպե՞ս: Հոները նկատում է, որ Ղուկասը քաջատեղյակ էր 6 թվականի մարդահամարից, քանի որ դրան հղում է անում Գործք 5:37-ում[60]: Բայց Ղուկասը նաև գիտեր, որ Հիսուս ավելի վաղ էր ծնվել. թե՛ Ղուկասը, թե՛ Մատթեոսը Հիսուսի ծնունդը թվագրում են Հերովդեսի կառավարման շրջանով (տե՛ս Ղուկաս 1:5 և Մատթեոս 2:1): Ավելին, Ղուկասն ասում է, որ Հիսուս մոտ 30 տարեկան էր, երբ սկսեց ծառայությունը (Ղուկաս 3:23): Դա Հովհաննես Մկրտչի ծառայությունից կարճ ժամանակ անց էր, որը Ղուկասը թվագրում է 27-29 թվականներով (տե՛ս Ղուկաս 3:1-2)[61]:

Եզրակացությունը հստակ է՝ եթե մարդահամարը 6 թվականին լիներ, Հիսուս ընդամենը 21-23 տարեկան կլիներ, երբ սկսեց ծառայությունը: Բայց Ղուկասը գիտեր, որ նա ավելի մեծ էր: Հետևաբար, ըստ Հոների, Հիսուսի ծնունդի մասին պատմելիս, Ղուկասը չէր կարող 6 թվականի մարդահամարին հղում անել: «Ինչ խոսք, Ղուկասը պահում էր ժամանակագրությունը»[62]:

Տրամաբանական է: Ղուկասը վարժ պատմագետ էր, այդպիսի լուրջ սխալ թույլ չէր տա ու չէր հակասի ինքն իրեն: Հավանաբար ավելի վաղ ևս մարդահամար է անցկացվել, որը Հովսեփին ու Մարիամին մղել է փախուստի, Հերովդեսի օրոք, ինչպես հաղորդում է Ղուկասը:

Տարբեր սցենարներ դիտարկելով՝ Բոկը եզրակացրեց, որ «Ղուկասի ավետարանում հիշատակվող մարդահամարը պատմական անճշտության վերագրելը վաղաժամ է և սխալ»[63]:

ԱՌԵՂԾՎԱԾ N 2. Եղե՞լ է Նազարեթը

Շատ քրիստոնյաներ տեղյակ չեն, որ երկար ժամանակ թերահավատները վստահեցնում էին. «Նոր Կտակարանը սովորեցնում է, որ Հիսուս մեծացել է Նազարեթում, բայց այն ժամանակ Նազարեթ չկար»:

«Որտեղ Հիսուս երբեք ոտք չի դրել» հոդվածում աթեիստ Ֆրենկ Զինդլերն ասում է, որ Նազարեթը չի հիշատակվում ո՛չ Հին Կտակարանում,

ոչ Պողոս առաքյալի նամակներում, ոչ Թալմուդում (թեև այնտեղ Գալիլեայի 63 այլ քաղաքների անուններ կան), ոչ էլ Հովսեփոսի գործերում (որը թվարկել է Գալիլեայի ևս 45 քաղաք ու գյուղ՝ ներառյալ Յաֆան, որը ժամանակակից Նազարեթի տարածքից ընդամենը 1.5 կմ հեռավորության վրա է): Որևէ պատմագիր կամ աշխարհագրագետ չի հիշատակում Նազարեթը մինչև 4-րդ դարի սկիզբը[64]: Այս անունը հրեական գրականության մեջ առաջին անգամ հայտնվում է՝ Ք. հ. 7-րդ դարում գրված բանաստեղծության մեջ[65]:

Հիշատակումների այս բացակայությունը կասկածելի պատկեր է ստեղծում, ուստի ուղղակի հարցրի Մակրեյին.

— Կա՞ որևէ հնագիտական ապացույց, որ Նազարեթը գոյություն է ունեցել առաջին դարում:

Հարցը Մակրեյի համար անակնկալ չէր:

— Այս ոլորտի մասնագետ Դոկտոր Ջեյմս Սթրեյնջը՝ Հարավային Ֆլորիդայի համալսարանից, ասում է, որ Նազարեթը շատ փոքր բնակավայր էր՝ մոտ 240 կմ^2, և առաջին դարի սկզբին այնտեղ ապրում էր առավելագույնը 480 մարդ[66]:

Սա եզրակացություն էր, ես ապացույց էի ուզում:

— Նա որտեղի՞ց գիտի:

— Սթրեյնջը նշում է, որ Ք. հ. 70 թվականին, երբ Երուսաղեմն ընկավ, Տաճարն ավերվեց, քահանաների ընտանիքները տեղափոխվեցին տարբեր վայրեր, այդ թվում՝ հյուսիս, Գալիլեա: Հնագետներն 1962-ին արամեերեն ցուցակ են գտել, որտեղ թվարկված է տեղափոխված քահանայական 24 ընտանիք, և նշվում է, որ նրանցից մեկն ուղարկվել է Նազարեթ: Ուստի այս քաղաքն այն ժամանակ արդեն գոյություն ուներ:

Մակրեյը նաև նշեց, որ Նազարեթի շրջակայքում իրականացված հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերվել են առաջին դարի թաղումներ: Երկու գերեզմաններում հայտնաբերվել են 1-ին, 3-րդ և 4-րդ դարերի առարկաներ՝ կավե ճրագներ, ապակե անոթներ ու սկահակներ:

Մակրեյը բացեց հայտնի հնագետ Ջեք Ֆինեգանի գիրքը, որը տպագրել էր Փրինսթոնի համալսարանի հրատարակչատունը, և բարձրաձայն կարդաց. «Գերեզմանների պեղումներից կարելի է եզրակացնել, որ Նազարեթը մեծ մասամբ հրեաներով բնակեցված բնակավայր էր՝ հռոմեական դարաշրջանում»[67]:

թվայնացրել է 1915.info կայքը

Հետո հայացքը դարձրեց ինձ:

— Այո, գիտնականները վիճել են առաջին դարի որոշ վայրերի տեղադրության շուրջ, օրինակ, թե որոշակիորեն որտեղ է գտնվում Հիսուսի գերեզմանը, սակայն Նազարեթի տեղադրության վերաբերյալ երբեք լուրջ կասկած չի եղել հնագետների շրջանում: Կարելի է հսկայական քանակով ապացույցներ ներկայացնել նրանց, ովքեր վիճարկում են դրա գոյությունը:

Հաջորդ տարիներին հայտնաբերվեց առաջին դարի նազարեթյան երկու տուն, ու խնդիրն ավելի բարդացավ: 2006-ին Նազարեթի հնագիտական նախագիծը պեղումներ սկսեց Նազարեթուհիների վանքում, որը հայտնի էր 1880 թվականից: Նախագծի ղեկավարը Ռեդինգի համալսարանից Քեն Դարքն էր: Նա այսպես է նկարագրել առաջին դարի գտածոն. «Միասին վերցրած՝ պատերը համապատասխանում էին, այսպես կոչված, բակային տան նախագծին, ինչը բնորոշ էր Գալիլեայում վաղ հռոմեական շրջանի տներին»[68]:

Հնէաբանները հայտնաբերեցին դռներ ու պատուհաններ, տարաներ, իլիկներ, կրաքարից տարաների կտորներ, որոնք, ինչպես հավատացած էին հրեաները, չեն կարող պղծվել: Գտածոները վկայում էին, որ այստեղ հրեաների ընտանիք է ապրել:

«Տունն ամենաուշը առաջին դարի է,- եզրակացրել էր Դարքը,- ավելի վաղ կամ ավելի ուշ տանը հռոմեական շրջանի շերտավոր կերամիկա չի հայտնաբերվել»[69]:

Նմանատիպ կառուցվածքով առաջին դարի ևս մի տուն 2009-ին պեղել է Յարդենա Ալեքսանդրն Իսրայելի հնագետների միությունից[70]:

«Այս գտածոն համապատասխանում է այլ վայրերում գտնված հռոմեական, այսպես կոչված, «փոքր քաղաքի» կոնցեպտին,- ասել է Դարքը,- փաստերը ցույց են տալիս, որ Հիսուսի մանկությունն անցել է հրեական պահպանողական համայնքում, որը գրեթե չի առնչվել հունական կամ հռոմեական մշակույթին»:

Ոմանք կասկածում են, որ Դարքի թիմն իսկապես գտել է այն տունը, որտեղ անցել է Հիսուսի մանկությունը: Թեև հետագա դարերից եկող որոշ նախանշաններից կարելի է եզրակացնել, որ բյուզանդացիները կարող էին հավատալ, որ դա Հիսուսի մանկության տունն էր, այնուամենայնիվ, Դարքը եզրակացրել է, որ դա հնարավոր չէ որոշել պեղումներով: Մյուս կողմից չկա այդ պնդումը հերքելու հնագիտական հիմք:

թվայնացրել է 1915.info կայքը

Առաջին դարում Նազարեթի գոյության փաստարկները տարիների ընթացքում ավելի են ամրացել:

ԱՌԵՂԾՎԱԾ N 3. Կոտորած Բեթղեհեմում

Մատթեոսի ավետարանն ահարկու տեսարան է պատկերում: Հրեաստանի թագավոր Հերովդես Մեծը, վախեցած մանկան ծնունդի մասին մարգարեությունից (երեխան ապագայում գրավելու էր իր գահը), ուղարկում է իր զինվորներին՝ սպանելու Բեթղեհեմի՝ երկու տարեկանից փոքր բոլոր երեխաներին: Հրեշտակից նախազգուշացվելով՝ Հովսեփը Մարիամի ու Հիսուսի հետ փախչում է Եգիպտոս: Եվ միայն Հերովդեսի մահից հետո նրանք վերադառնում են Նազարեթ: Այս ամբողջ պատմությունը Փրկչի մասին հնագույն երեք մարգարեությունների իրականացումն է (տե՛ս Մատթեոս 2:13-23):

Խնդիրն այն է, որ չկա անկախ հաստատում, որ այս զանգվածային սպանությունը տեղի է ունեցել: Հովսեփոսի կամ այլ պատմաբանների գրվածքներում այս մասին ոչինչ չկա: Հնագիտությունը ևս լռություն է պահպանում: Չկան արձանագրություններ կամ փաստաթղթեր:

— Բայց այս մասշտաբի իրադարձությունը, անշուշտ, կնկատեր Մատթեոսից բացի նաև մեկ ուրիշը,– պնդեցի ես: — Իսկ եթե պատմությունն ու հնագիտությունը լռում են, տրամաբանական չէ՞ եզրակացնել, որ Բեթղեհեմում կոտորած չի եղել:

— Հասկանում եմ, ինչու եք ասում դա,– պատասխանեց Մակրեյը: — Եթե այսօր նման բան լիներ, աշխարհի բոլոր հեռուստաընկերություններն ու թերթերը կշեփորահարեին այդ մասին:

Այն էլ ինչպես: Հիշում եմ 1997-1998 թթ. լուրերի չդադարող հոսքը մուսուլմանական ծայրահեղականների ասպատակությունների մասին: Նրանք ամբողջ գյուղեր կոտորեցին Ալժիրում՝ չխնայելով ո՛չ կանանց, ո՛չ երեխաներին:

— Հիմա,– ասաց Մակրեյը,– ենթադրենք, թե տեղափոխվել եք առաջին դար: Նախ՝ Բեթղեհեմը Նազարեթից մեծ չէր: Ի՞նչ եք կարծում, այդ տարիքի քանի՞ երեխա կարող էր լինել 5-6 հարյուր բնակիչ ունեցող գյուղում: Ո՛չ 1000, ո՛չ էլ նույնիսկ 100: Երկրորդ, Հերովդես Մեծն արյան ծարավ թագա-

թվայնացրել է 1915.info կայքը

վոր էր. նա սպանել է նույնիսկ իր արյունակիցներին, մահապատժի ենթարկել շատերին, որոնք, նրա կարծիքով, կարող էին իրեն մարտահրավեր նետել: Այնպես որ Բեթղեհեմում մի քանի երեխաների սպանությունը դժվար թե ուշադրություն գրավեր հեռավոր Հռոմում: Պատմիչներն առանց այդ էլ գրելու բան ունեին:

Լրագրողի համար սա պատկերացնելը բավական բարդ էր:

— Սա առանձնապես մեծ պատմություն չէ՞ր,– հարցրի փոքր-ինչ թերահավատորեն:

— Ինձ թվում է՝ ոչ, գոնե ոչ այդ ժամանակ,– ասաց նա: — Հերովդեսի պես խելագարի համար սովորական էր սպանել յուրաքանչյուրին, որ իրեն հնարավոր սպառնալիք էր թվում: Հետագայում, իհարկե, քրիստոնեության ծավալմանը զուգահեռ, այս միջադեպն ավելի կարևոր դարձավ, բայց կզարմանայի, եթե սա այն ժամանակ այդպիսի մեծ արձագանք գտներ:

Գուցե այդպես էր, բայց, որպես լրագրող, որը սովոր է սենսացիաներ փնտրել, և ապրում է բարձր տեխնոլոգիաների ու աշխարհով մեկ տեղեկության ակնթարթային տարածման դարաշրջանում, շատ դժվար էր նման բան պատկերացնել: Այնուամենայնիվ, գիտեի, թե որքան արյունալի է եղել հին Պաղեստինի պատմությունը, և Մակրեյի բացատրություններն ինձ բավական խելամիտ թվացին:

Մնում էր մեկ այլ ոլորտ, որ ուզում էի հետաքննել: Ու ինձ համար դա ամենահետաքրքիր հարցն էր, որն ուզում էի պարզել:

Մեռյալ ծովի ձեռագրերի առեղծվածը

Հնագիտությունը, անկասկած, հրապուրիչ ոլորտ է: Հնագույն թաղումներ, առեղծվածային գրություններ քարի կամ պապիրուսի վրա, խեցեղենի բեկորներ, մաշված մետաղադրամներ. սրանք գրավիչ բանալիներ են անդուլ հետազոտողի համար: Անցյալի փոքրաթիվ գտածոներն այնքան մեծ հետաքրքրություն են առաջացրել, որքան Մեռյալ ծովի մագաղաթները՝ հարյուրավոր ձեռագրեր, որոնք գրվել են Ք. ա. 250-ից մինչև Ք. հ. 68 թվականը և գտնվել են 1947-ին Երուսաղեմից 30 կմ դեպի արևելք գտնվող քարանձավներում: Դրանք հավանաբար թաքցրել է եսայիների հրեական խստակյաց աղանդը, նախքան հռոմեացիները կոչնչացնեին նրանց բնակավայրը:

թվայնացրել է 1915.info կայքը

Ինչ արտառոց պնդումներ ասես, որ չեն արվել այս ձեռագրերի շուրջ՝ ներառյալ Ջոն Մարկո Ալեգրոյի անհեթեթ գիրքը, որում նա ենթադրում է, որ քրիստոնեությունն առաջացել է պտղաբերության պաշտամունքից, որի հետևորդները ցնորական վիճակի մեջ էին ընկնում հալյուցինածին սնկերից[71]: Իսկ պապիրուսագետ Խոսե Օ'Քալահանն ավելի տրամաբանական, բայց ոչ պակաս հակասական պնդում է արել, որ ձեռագրերի հատվածներից մեկը Մարկոսի ավետարանի՝ երբևէ գտնված ամենավաղ օրինակի մասն է, որը գրվել է Հիսուսի խաչելությունից ընդամենը 17-20 տարի անց: Բայց գիտնականների մեծ մասը թերահավատորեն արձագանքեց այս վարկածին[72]:

Ամեն դեպքում առաջին դարի հնագիտական ոչ մի հետաքննություն չի կարող լիարժեք լինել՝ առանց հիշատակելու Մեռյալ ծովի ձեռագրերը:

— Դրանք մեզ Հիսուսի մասին ուղղակիորեն որևէ բան պատմո՞ւմ են,– հարցրի Մակրեյին:

— Ոչ, ձեռագրերից որևէ մեկում Հիսուսն ինքը չի հիշատակվում,– պատասխանեց նա: — Այդ փաստաթղթերը հիմնականում պատկերացում են տալիս այն ժամանակների հրեաների կյանքի ու սովորույթների մասին: — Հետո դուրս բերեց որոշ թղթեր և մատնացույց արեց 1997-ին տպագրված մի հոդված՝ ավելացնելով, որ այստեղ շատ հետաքրքիր տեղեկություններ կան 4Q521 ձեռագրի մասին, որը լույս է սփռում այն հարցին, թե, Հիսուսի պնդմամբ, ով էր ինքը:

Դա բացեց իմ ախորժակը:

— Պատմե՛ք ինձ դրա մասին,– ասացի փութկոտ:

Ահա ինչ ասաց Մակրեյը: Մատթեոսի ավետարանը պատմում է, թե ինչպես Հովհաննես Մկրտիչը՝ բանտարկված, տանջվելով Հիսուսի էության վերաբերյալ կասկածներից, իր հետևորդներին ուղարկեց Նրա մոտ՝ հարցերի հարցով. «Դո՞ւ ես, որ գալու էր, թե՞ ուրիշի սպասենք» (Մատթեոս 11:3): Հովհաննես Մկրտիչն ուղղակիորեն հարցրեց, թե Հիսուս իսկապես երկար սպասված Մեսիան էր:

Դարեր շարունակ քրիստոնյաներին զարմացրել է Հիսուսի առեղծվածային պատասխանը: Ուղիղ այո կամ ոչ ասելու փոխարեն Հիսուս պատասխանեց. «Գնացե՛ք, պատմե՛ք Հովհաննեսին այն, ինչ լսեցիք ու տեսաք. կույրերը տեսնում են, կաղերը՝ քայլում, բորոտները՝ մաքրվում, խուլերը՝ լսում, մեռելները՝ Հարություն առնում, և աղքատներն ավետարանվում են»

թվայնացրել է 1915.info կայքը

(Մատթեոս 11:4–5): Հիսուս այստեղ ակնարկում է Եսայի 35-ը, բայց ինչ-որ պատճառով դրանում ավելացնում է «մեռելները Հարություն են առնում» արտահայտությունը, որն ակնհայտորեն բացակայում է Հին Կտակարանի տեքստում: Ահա այստեղ էլ ուժի մեջ է մտնում 4Q521 փաստաթուղթը: Մեռյալ ծովի մագաղաթների հավաքածուից այս ոչ աստվածաշնչյան ձեռագիրը, որ գրված է եբրայերեն և թվագրվում է Հիսուսի ծնունդից 30 տարի առաջ, պարունակում է Եսայի 61-ի մի տարբերակ, որում կա բացակայող արտահայտությունը՝ «մեռելները Հարություն են առնում»:

— Կրեյգ Էվանսը, որն ուսումնասիրել է ձեռագրերը, ընդգծում է, որ 4Q521-ի այս արտահայտությունը, անկասկած, մեսիական նշանակություն ունի,– ասաց Մակրեյը: — Այն հիշատակում է հրաշքները, որ Մեսիան կգործի, երբ գա, ու երբ երկինքն ու երկիրը հնազանդվեն Նրան: Այսպիսով, Հիսուսի պատասխանը Հովհաննեսին ամենևին էլ անորոշ կամ երկիմաստ չէր: Հովհաննես Մկրտիչն անմիջապես հասկացավ Նրա խոսքերը որպես պարզորոշ պնդում, որ Հիսուս Մեսիան է:

Մակրեյն ինձ մեկնեց մի հոդված, որում մեջբերվում էր Էվանսի եզրակացությունը. «4Q521 փաստաթղթից պարզ է դառնում, որ (Հիսուսի) հղումը Եսայի 35-ին իսկապես մեսիական է: Հիսուսը Հովհաննեսին իր սուրհանդակների միջոցով ասում է, որ մեսիական գործեր են կատարվում: Ուրեմն դա (Հովհաննեսի) հարցի պատասխանն է. *Այո՛, Նա է, որ գալու էր*»[73]:

Ապշեցուցիչ էր: Ժամանակակից հնագիտությունը բացահայտել է 2000 տարվա վաղեմության մի դրույթի իմաստը, որտեղ Հիսուս պարզորոշ հաստատում է, որ ինքն իսկապես Աստծո Օծյալն է:

Զարմանալի ճշգրիտ սկզբնաղբյուր

Հնագիտական ապացույցները հետևողականորեն հաստատում են Նոր Կտակարանի ճշգրտությունը՝ վկայելով դրա հավաստիությունը, հատկապես ի հակադրություն Մորմոնի գրքի, որից հնագիտությունը քարը քարի վրա չի թողնում:

Թեև Ջոզեֆ Սմիթը՝ Մորմոնական եկեղեցու հիմնադիրը, պնդում է, որ իր «Մորմոնի գիրքը» «երկրի վրա բոլոր գրքերից ամենաճշմարիտն է»[74], նրա հայտարարությունները, սակայն, ամերիկյան մայրցամաքում անցյալում

տեղի ունեցած իրադարձությունների մասին հնագիտական հաստատում չեն գտնում:

Ես կապ եմ հաստատել Սմիթսոնյան ինստիտուտի հետ և հարցրել, թե կա՞ որևէ փաստ, որը հիմնավորում է մորմոնականության պնդումները, և ստացել եմ միարժեք պատասխան, որ ինստիտուտի հնագետները «ուղիղ կապ չեն տեսնում Նոր Աշխարհի հնագիտության և Մորմոնի գրքի բովանդակության միջև»:

Ջոն Անկերբերգն ու Ջոն Ուելդոնն այդ թեմայով իրենց գրքում եզրակացրել են. «Այլ խոսքով, տեղանունները, որոնց հղում է անում Մորմոնի գիրքը, չեն հայտնաբերվել, որևէ անձ, որևէ վայր, ազգ կամ անուն, որ հնչել է այդ գրքում, երբևէ չի գտնվել, որևէ գտածո, որևէ ձեռագիր, որևէ գրություն... երբևէ չի գտնվել որևէ ապացույց, որ Մորմոնի գիրքն առասպել կամ հորինվածք չէ»[75]:

Նոր Կտակարանի պարագայում ամեն բան միանգամայն այլ է: Մակրեյի եզրակացություններին արձագանքել են բազմաթիվ այլ գիտնականներ, այդ թվում՝ նշանավոր ավստրալացի հնագետ Քլիֆորդ Ուիլսոնը, որը գրել է. «Նրանք, ովքեր փաստերը գիտեն, հիմա ընդունում են, որ Նոր Կտակարանը պետք է ընդունել որպես արտասովոր ճշգրիտ սկզբնաղբյուր»[76]:

Այսպիսով, Կրեյգ Բլոմբերգն ապացուցեց, որ Նոր Կտակարանի տեքստերը վստահելի են, Բրյուս Մեցգերը՝ որ դրանք մեզ հասել են անփոփոխ, Էդվին Յամաուչին՝ որ դրանք հաստատվում են հին պատմիչների վկայություններով և հին ժամանակների տարբեր փաստաթղթերով: Եվ այժմ, երբ Ջոն Մակրեյը համոզիչ կերպով ցույց տվեց հնագիտության ապացույցները հօգուտ Նոր Կտակարանի, ինձ մնում էր միայն համաձայնել Ուիլսոնի խոսքերի հետ: Հօգուտ Քրիստոսի դատական գործը, թեև հեռու էր լիարժեք լինելուց, կառուցվում էր ամուր հիմքի վրա:

Միաժամանակ գիտեի, որ կային որոշ նշանավոր պրոֆեսորներ, որոնք չէին համաձայնի այս գնահատականի հետ: Նրանցից մեջբերումներ է անում Newsweek ամսագիրը, նրանք հարցազրույցներ են տալիս երեկոյան լուրերի ժամանակ, որտեղ խոսում են Հիսուսի անձն արմատապես վերագնահատելու անհրաժեշտության մասին: Այս խնդիրը լուծելու ժամանակը հասել էր: Այդ պատճառով ուղևորվում էի Մինեսոտա՝ հարցազրույց վարելու Գրեգորի Բոյդ անունով եռանդուն, Եյլում կրթություն ստացած գիտնականի հետ:

թվայնացրել է 1915.info կայքը

Քննարկումներ

Հարցեր խորհրդածելու կամ խմբային պարապմունքի համար

1. Ի՞նչ եք կարծում, որո՞նք են Նոր Կտակարանը հաստատելու համար հնագիտական տվյալների օգտագործման դրական և բացասական կողմերը:
2. Ինչպես պարզվեց, Ղուկասը և Նոր Կտակարանի մյուս գրողները ճշգրիտ էին երկրորդական մանրամասներ հաղորդելիս: Դրանից ելնելով կարելի՞ է համարել, որ նրանք նույնքան ճշգրիտ էին նաև առավել էական հարցերում: Բացատրեք ձեր դիրքորոշումը:
3. Համոզիչ համարո՞ւմ եք դոկտոր Մակրեյի բացատրությունը մարդահամարի, Հին Նազարեթի, Բեթղեհեմի մանուկների կոտորածի առեղծվածների վերաբերյալ:
4. «Քրիստոսի գործը» հետաքննելիս՝ ծանոթացել եք ականատեսների վկայությունների, փաստագրական, հավելյալ և գիտական ապացույցների: Այժմ փորձեք ինքներդ եզրակացություններ անել: Ինչպե՞ս կգնահատեք ավետարանների իսկությունը 10-բալանոց սանդղակով, որտեղ 0 նիշը կլինի «չեմ վստահում», 10-ը՝ «վստահում եմ անվերապահորեն»: Հիմնավորեք ձեր որոշումը:

թվայնացրել է 1915.info կայքը

ԳԼՈՒԽ 6

Հերքող ապացույցներ

Պատմական Քրիստոս նո՞ւյնն է, ինչ հավատի Քրիստոս

Ամերիկյան դրամատիկ դետեկտիվ հեռուստասերիալներում սա մշտապես պատահում է, բայց իրական կյանքի իրավական դրամաներում խիստ հազվադեպ է: Այնպես որ, երբ դատավարության ժամանակ սպանության ականատեսը հրաժարվեց ցուցմունք տալ մեղադրյալի դեմ ու փոխարենը խոստովանեց, որ մարդասպանն ինքն է եղել, դատարանի դահլիճը զարմանքից քարացավ, իսկ ես, բնականաբար, շտապեցի արագ մի աղմկահարույց ռեպորտաժ թխել Chicago Tribune-ի համար:

Ամբաստանյալ Ռիչարդ Մոսը մեղադրվում էր Չիկագոյի հյուսիս-արևմուտքում գտնվող մի պանդոկում 19-ամյա տեղացի երիտասարդին սպանելու համար: Մոսի մանկության ընկերը՝ Էդ Պասերին, կանչվեց վկայի ամբիոնի առաջ, որ նկարագրի սպանության պատճառ դարձած վեճը:

Պասերին նկարագրեց Ռասթի Նեյլ պանդոկից դուրս տեղի ունեցած վեճի տեսարանը, իսկ պաշտպանը հարցրեց, թե հետո ինչ պատահեց տուժողի հետ: Առանց աչք թարթելու՝ Պասերին պատասխանեց.

— Նա հարվածեց ինձ մկրատով, և ես կրակեցի նրան:

Դատական քարտուղարի բերանը բաց մնաց, դատախազները ձեռքերն իրար զարկեցին, դատավորն անմիջապես դադարեցրեց դատաքննությունը, որպեսզի Պասերիին զգուշացնի ինքն իր դեմ ցուցմունք չտալու իր սահմանադրական իրավունքի մասին: Իսկ հետո նաև ամբաստանյալը հաստատեց՝ այո, Պասերին է գործել հանցանքը:

— Պասերիի խոստովանությունը խիզախ քայլ էր,- հայտարարեց պաշտպանական կողմի փաստաբանը, բայց մեղադրողները չհամոզվեցին:

— Ի՞նչ խիզախություն,- նկատեց նրանցից մեկը: — Պասերին լավ գիտի, որ դատական հետապնդման վտանգ իրեն չի սպառնում, որովհետև մեր ունեցած միակ ապացույցը Ռիչարդ Մոսին է մատնացույց անում:

Կասկած չունենալով, որ մեղավորը Մոսն է, դատախազները գիտեին, որ պիտի ծանրակշիռ ապացույցներ ներկայացնեն, որպեսզի Պասերիի

թվայնացրել է 1915.info կայքը

պնդումը հերքվի: Իրավական եզրութաբանությամբ՝ նրանց հարկավոր էին «հերքող ապացույցներ», որոնք ցույց են տալիս վկայի ցուցմունքների անհիմն լինելը[77]:

Հաջորդ օրը մեղադրող կողմը հարցաքննեց երեք այլ վկայի, որոնք հաստատեցին, որ կրակել է Մոսը: Այս ու այլ փաստերի հիման վրա ատենակալները, իհարկե, Մոսին մեղավոր ճանաչեցին[78]:

Մեղադրող կողմն իրավացիորեն կասկածում էր Պասերիի չհիմնավորված հայտարարությանը: Նա ակնհայտորեն ցանկանում էր օգնել ընկերոջը, մինչդեռ ապացույցները միարժեքորեն մատնանշում էին նրա մեղքը:

«Հիսուսի սեմինար». հերքումներ կա՞ն

Բայց ի՞նչ առնչություն ունեն հերքող ապացույցները Հիսուսին վերաբերող իմ հետաքննության հետ:

Ես զրուցել էի ականավոր մասնագետների հետ և նրանցից համոզիչ ու շատ տրամաբանական փաստարկներ էի լսել: Այժմ պետք է ուսումնասիրեի գիտնականների մի ոչ մեծ խմբի տրամագծորեն հակառակ դիրքորոշումը, տեսակետներ, որոնք երբեմն դառնում են նորությունների պտտահողմի թեմա:

Հավանաբար, հանդիպել եք դրանց մասին հոդվածների: Վերջին տարիներին լրատվամիջոցները շատ ու եռանդով են խոսում «Հիսուսի սեմինարի» մասին: Սա Նոր Կտակարանի հետազոտողների շատ փոքր խումբ է, ոչ այնքան ազդեցիկ, սակայն նրա նկատմամբ հետաքրքրությունը մամուլում անհամաչափ մեծ է: Լրագրողների համար ոչ պակաս գրավիչ էր քվեարկության անսովոր կարգը. երբ քննարկում էին, թե Հիսուս իսկապես ասե՞լ է այն, ինչ գրված է Նոր Կտակարանում, «Հիսուսի սեմինարի» մասնակիցները քվեարկում էին գունավոր ուլունքներով: Կարմիր ուլունքը նշանակում էր, որ Հիսուս անկասկած ասել է սա կամ սրա նման մի բան, վարդագույն ուլունքը նշանակում էր, որ նա հավանաբար ասել է դա, մոխրագույն ուլունքը նշանակում էր, որ նա դա չի ասել, բայց գաղափարները մոտ են նրա սեփականին, իսկ սև ուլունքը նշանակում էր, որ նա այդ բառերն ամենևին չի արտաբերել:

թվայնացրել է 1915.info կայքը

Արդյունքում նրանք եզրակացրին, որ Հիսուս չի ասել այն ամենի 82 տոկոսը, ինչ ավետարանները վերագրում են նրան: Մնացած 18 տոկոսի մեծ մասը որոշ չափով կասկածելի համարվեց, Հիսուսի ասածների միայն 2 տոկոսը վստահաբար իսկական համարվեց[79]: Հակասություններ փնտրելով ու չունենալով Սեմինարի մեթոդաբանությունը գնահատելու համար բավարար գիտելիք՝ լրագրողներն այս պատմության վրա թանաքի ծով մսխեցին:

Հետո Սեմինարը հրատարակեց «Հինգ ավետարանները», որը պարունակում է չորս կանոնական ավետարանները գումարած Թովմասի վիճելի ավետարանը, որտեղ Հիսուսի խոսքերը ներկված էին տարբեր գույներով՝ ըստ խմբի բացահայտումների: Թերթեք այս գիրքը և կտեսնեք ամբողջովին սև էջեր՝ տեղ-տեղ կարմիրի հազվադեպ բծերով: Օրինակ՝ Տերունական աղոթքում միակ բառերը, որ ըստ Սեմինարի, Հիսուս է ասել, «Հայր մերն» է:

Բայց այս ամենը մակերեսին էր, ճչան վերնագրերի մակարդակում, իսկ ես ուզում էի ավելի խորանալ ու պարզել՝ կա՞ որևէ վստահելի ապացույց, որը կհերքի այս մտահոգիչ ու լայնորեն հանրայնացված կարծիքները: Սեմինարի գյուտերը հիմնվածՔ են անաչառ գիտական հետազոտությունների վրա, թե՞ նման են Պասերիի չարաբաստիկ վկայությանը՝ լավ մղումներով, բայց, վերջին հաշվով, անհիմն:

Պատասխաններ փնտրելու համար 6 ժամում մեքենայով հասա Սենթ Փոլ, Մինեսոտա՝ խորհրդակցելու համար դոկտոր Գրեգորի Բոյդի՝ Այվի Լիգայում կրթություն ստացած աստվածաբանության պրոֆեսորի հետ, որի գրքերն ու հոդվածները հակադրվում են «Հիսուսի սեմինարին»:

5-ՐԴ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ
Գրեգորի Ա. Բոյդ, փիլիսոփայության դոկտոր

Բոյդի առաջին բախումը «Հիսուսի սեմինարի» հետ տեղի ունեցավ 1996-ին, երբ նա, քարը քարին չթողնելով, քննադատեց Հիսուսի վերաբերյալ ազատական տեսակետները: Նրա աշխատությունը կոչվում էր «Ցինիկ իմաստո՞ւն, թե՞ Աստծո Որդի. վերադարձ իրական Հիսուսին ռևիզիոնիզմի դարաշրջանում»: Ընդարձակ ծանոթագրություններով, 416-էջանոց այս

թվայնացրել է 1915.info կայքը

հատորն արժանացավ Christianity Today-ի ընթերցողների գնահատանքին և ճանաչվեց տարվա լավագույն գրքերից մեկը: Բոյդի մյուս հայտնի գիրքը՝ «Հիսուս պաշարման մեջ», շարունակում է նույն թեմաները՝ ավելի հանրամատչելի մակարդակով:

Բոյդը հեղինակել է նաև մրցանակակիր «Նամակներ սկեպտիկից» գիրքը, որում նա և իր հայրը՝ այն ժամանակ դեռ անհավատ, բանավիճում են քրիստոնեության բարդ հարցերի շուրջ (ինչի արդյունքում հայրը դառնում է համոզված քրիստոնյա), նաև «Աստված պատերազմի մեջ. Աստվածաշունչն ու հոգևոր հակամարտությունը» գիրքը: Երբ ստեղծվում էր Աստվածաշնչի հատուկ հրատարակություն այն մարդկանց համար, որոնք ինտելեկտուալ հարցեր են տալիս քրիստոնեական հավատի մասին, Բոյդը հրավիրվեց որպես գիտական խորհրդատու[80]:

Մինեսոտայի համալսարանում փիլիսոփայության բակալավրի կոչում ստանալուց հետո Բոյդը գերազանցությամբ ավարտել է Եյլի համալսարանի աստվածաբանության բաժինը՝ ստանալով մագիստրոսի կոչում, հետո փայլուն դոկտորական ատենախոսություն է պաշտպանել Փրինսթոնի աստվածաբանական սեմինարիայում:

Այդուհանդերձ, նա փղոսկրե աշտարակում ապրող մտավորական չէ: Ամրակազմ, ջղուտ, ալիքաձև, սև մազերով ու հեգնական ժպիտով Բոյդն ավելի շատ նման է կատակերգուի, որը գիտնականի դեր է խաղում: Եվ, ինչպես հատուկ է կատակերգուին, նրանից էներգիա է հորդում: Բոյդը խոսում է առանց դադարի, գլխապտույտ արագությամբ ամենաբարդ տեսություններ ու աստվածաբանական հասկացություններ շարադրելով: Շարժուն է, ժեստեր է անում, անհանգիստ շուռումուռ է գալիս իր աթոռի վրա: Ժամանակ չկա, որ վերնաշապիկը մինչև վերջ տաբատի տակ դնի, գրասենյակով մեկ սփռված բազմաթիվ թղթերը տեղավորի թղթապանակներում կամ գետնին անփույթ կույտերով դրված գրքերը գրադարակների վրա դասավորի: Նա չափից դուրս զբաղված է. մտածում է, բանավիճում, քննում, զարմանում, երազում, խորհում, հորինում ու մեկը մյուսի հետևից նախագծեր իրականացնում:

Իրականում միայն գիտական գործունեությունը քիչ է նրա համար: Նա ոչ միայն աստվածաբանության պրոֆեսոր է Բեթել քոլեջում, այլև քարոզիչ Վուդլենդ Հիլզ եկեղեցում, որտեղ նրա ոգեշունչ քարոզչության շնորհիվ

ծխականների թիվը 1992-ի 42-ից այսօր հասել է 2500-ի: Մշտական շփումը ծխականների հետ նրան թույլ չի տալիս կտրվել իրականությունից:

Նա բանավիճում է աթեիստների հետ՝ զուտ հետաքրքրությունից մղված: Բանավիճել է հանգուցյալ Գորդոն Շտայնի հետ «Գոյություն ունի՞ Աստված» թեմայով: «Հիսուս հարությո՞ւն է առել մեռելներից» թեմայով բանավիճել է հավատը կորցրած պաստոր Դեն Բարքերի հետ: Իսկ Մինեսոտայի իսլամական կենտրոնի հովանավորած մի ծրագրում մահմեդականների հետ բանավեճ է մղել «Եռամիասնական Աստված» թեմայով: Աշխույժ ու ճկուն միտքը, հնարամտությունը, զրուցակցի հանդեպ դյուրազգացությունը, աստվածաշնչյան ուսումնասիրությունների և փիլիսոփայության հանրագիտարանային իմացությունը նրան դարձնում են ահեղ ախոյան:

Ավելին, նա ինձ հայտնի մարդկանցից ամենալավն է կարողանում համադրել գիտական և հանրամատչելի գիտելիքը: Ֆուտբոլը նույնքան լավ գիտի, որքան ծանոթագրությունները: Նախադասությունը կարող է սկսել նոր ֆիլմի մասին անփույթ դիտարկումով ու ավարտել խորը փիլիսոփայական գլուխկոտրուկ վկայակոչելով: Նա կոմիքսներ է կարդում կամ նորաձև երգիծական հաղորդում դիտում նույնքան տարված, որքան իր տպավորիչ գիրքը գրելիս՝ «Երրորդություն և զարգացում. Հարթսհորնի երկբևեռ դեիզմի քննադատությունն ու վերակառուցումը երրորդության մետաֆիզիկայի դրույթով»:

Նրա անկաշկանդ, անլուրջ ոճը (ուրիշ ի՞նչ աստվածաբան կմարսեր «ղզիկ» կամ «կտցրած» բառերը) ինձ օգնեց արագ հարմարվել նրա աշխատասենյակում: Շուտով պարզ դարձավ, որ Բոյդը կազմ ու պատրաստ է սկսել:

Ուլտրաձախ արմատականներ

Որոշեցի սկսել նորությունների միջին սպառողի տեսանկյունից:

— Մարդը բացում է թերթ կամ ամսագիր, կարդում «Հիսուսի սեմինարի» մասին և գալիս եզրակացության, որ Նոր Կտակարանի մասին այսպիսի տեսակետը հաստատվել է գիտական աշխարհում,– ասացի,– բայց այդպե՞ս է իրականում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ոչ,– ասաց այնպիսի տեսքով, ասես հենց նոր ինչ-որ թթու սնունդ էր կերել: — Ոչ, այդպես չէ: Բայց ճիշտ եք, մարդիկ այդ տպավորությունն են ստանում:

Աթոռի մեջ շուռումուռ եկավ, մինչև բավականաչափ հարմարավետ տեղավորվեց և սկսեց իր պատմությունը:

— Երբ Time-ում լույս տեսավ «Հիսուսի սեմինարի» մասին առաջին մեծ հոդվածը,– ասաց,– հենց այդ ժամանակ քրիստոնեության մասին զրույցներ էի վարում մի տղայի հետ, որը շատ թերահավատ էր ու բավական տարված Նյու Էյջի գաղափարներով: Մեր ընդհանուր ընկերը հիվանդանոցում էր, ու, երբ գնացի նրան տեսության, այս մյուս տղան արդեն այնտեղ էր և Time էր կարդում: Երբ սենյակ մտա, բացականչեց. «Դե, Գրեգ, կարծես թե գիտնականները համաձայն չեն քեզ հետ»: Ու ամսագիրն իմ կողմը նետեց:

Բոյդը տխուր ու տարակուսած օրորեց գլուխը:

— Հասկանում եք, հոդվածը պատճառ էր դարձել, որ նա դադարի ինձ լուրջ ընդունել: Իհարկե, գիտեր, որ գիտնական եմ, բայց այդ հոդվածից հետևում էր, որ այդ տեսակետին է գիտնականների մեծամասնությունը, դե, ցնդած արմատականներից բացի:

Հասկանում էի նրա զգացմունքները. իմ ծանոթներից շատերը ևս հավասարության նշան էին դնում «Հիսուսի սեմինարի» և Աստվածաշունչն ուսումնասիրող գիտնականների միջև:

— Կարծում եք, այդ տպավորությունը պատահականությո՞ւն է,– հարցրի:

— Դե, ոչ, իհարկե: «Հիսուսի սեմինարը» միտումնավոր իրեն այդպես է ներկայացնում,– պատասխանեց Բոյդը: — Ի դեպ, սա զայրացնում է ոչ միայն ավետարանական քրիստոնյաներին, այլև գիտնականներին ընդհանրապես: Նայեք նրանց «Հինգ ավետարանները» գիրքը: Այնտեղ խոսվում է «գիտականության յոթ սյուների» մասին, կարծես իսկական գիտական դառնալու միակ ճանապարհը նրանց մեթոդաբանությանը հետևելն է: Բայց տարբեր ոլորտների շատ մասնագետներ լուրջ վերապահումներ ունեն այդ «սյուների» դեմ: Բացի այդ, «Հիսուսի սեմինարը» Աստվածաշնչի իրենց թարգմանությունն անվանում է «գիտական տարբերակ», ի՞նչ է դա նշանակում: Մյուս թարգմանությունները գիտական չե՞ն:

Նա մի պահ դադար տվեց, հետո դարձավ հարցի էությանը:

— Իրականում «Հիսուսի սեմինարը» արմատական գիտնականների փոքրաթիվ խումբ է, որը ծայրահեղ ձախ դիրքորոշում է ընդունում Նոր

Կտակարանի վերաբերյալ: Այն ընդհանրապես չի ներկայացնում գիտական հիմնական հոսանքը: Եվ, որ ամենազավեշտալին է, հենց նրանք են կրում ֆունդամենտալիզմի դրոշմը: Ասում են, որ ճիշտ են, ու վերջ: Ավելին, հնարավոր է, որ նրանք բավական սահմանափակ մարդիկ են: Ինչո՞ւ ոչ,– ժպտաց ու ծիծաղելով ավելացրեց,– հանուն բազմազանության:

«Իրական» Հիսուսի որոնումներով

— Մյուս կողմից,– նկատեցի ես,– «Հիսուսի սեմինարի» մասնակիցները շատ համառ են իրենց նպատակներին հասնելու հարցում:

— Այո, այդպես է: Բացահայտ ասում են, որ ուզում են Աստվածաշունչը փրկել ֆունդամենտալիզմից, իսկ ամերիկացիներին ազատել «պարզամիտ» հավատից, թե Աստվածաշնչի Հիսուս «իրական» է: Նրանք ասում են, որ մեզ պետք է ժամանակակից Հիսուս, այսօրվա Հիսուսը: Նրանցից մեկն ասել է, որ ավանդական Հիսուս չի պատասխանում բնապահպանական, միջուկային, ֆեմինիստական ճգնաժամերի հարցերին, ուստի մեզ անհրաժեշտ է Հիսուսի նոր կերպար կամ, ինչպես արտահայտվեց նրանցից մեկը, «նոր հնարանք»: Նրանց հնարքներից մեկն այն է, որ ուղիղ դիմում են զանգվածներին և ոչ թե այլ գիտնականների: Ուզում են իրենց գյուտերը դուրս բերել փողոսկրե աշտարակներից ու մտցնել շուկա՝ հանրային կարծիքի վրա ազդելու համար: Ու նրանց մտքինը քրիստոնեության բոլորովին նոր ձև է:

Նոր Հիսուսի, նոր հավատի, նոր քրիստոնեության գաղափարն ինձ հետաքրքիր թվաց:

— Եվ, ինչպիսի՞ Հիսուս է մեզ առաջարկում Սեմինարը,– հարցրի:

— Նրանք բացահայտել են այն, ինչ ձեռնամուխ էին եղել գտնելու: Ոմանք նրանց քաղաքական հեղափոխական են համարում, ոմանք՝ կրոնական մոլեռանդ, ոմանք՝ հրաշագործ, ոմանք՝ ֆեմինիստ, ոմանք՝ հավասարական, ոմանք՝ ապստամբ. բազմազանությունն ապահովված է: Բայց բոլորը մի բանում համաձայն են. Հիսուս, առաջին հերթին, պետք է լինի «բնական»: Այլ խոսքով, ինչ էլ որ ասվում է նրա մասին, Հիսուս ինձ ու ձեզ պես մարդ էր: Գուցե արտասովոր մարդ էր, գուցե դիպավ մեր սրտերին այնպես, ինչպես ոչ ոք երբևէ, բայց նրա մեջ գերբնական ոչինչ

թվայնացրել է 1915.info կայքը

չկար: Հետևաբար, նրանք պնդում են, որ Հիսուս, ինչպես և նրա առաջին աշակերտները, նրան չէին համարում Աստված կամ Մեսիա ու չէին համարում, որ նրա մահը որևէ առանձնահատուկ նշանակություն ունի: Նրա խաչելությունը, իհարկե, շատ ցավալի էր, անժամանակ, և նրա վշտացած հետևորդները, որպես մխիթարություն, հորինեցին հեքիաթը հրաշագործ հարության մասին: Այդպես են մտածում:

Անկողմնակալ մոտեցում փաստերին

Հաջորդ հարցս ձևակերպելիս՝ կանգնեցի ու մոտեցա նրա գրապահարանին:
— Լավ, բայց Դուք անձամբ հավատում եք, որ Հիսուս հարություն է առել, և գուցե Ձեր հավատը չափից դուրս աղավաղում է Ձեր տեսակետը,– ասացի: — «Հիսուսի սեմինարի» մասնակիցները հայտարարում են, որ, ի տարբերություն խորը հավատի տեր մարդկանց, ինչպիսին Դուք եք, օրինակ, նրանք չունեն աստվածաբանական նախապաշարումներ և անաչառ են պահում իրենց ճշմարտությունը փնտրելիս:

Բոյդը դեմքով դեպի ինձ շրջվեց:

— Օ՛, բայց իրականում այլ բան է կատարվում,– ասաց վրդովված: — Սեմինարի անդամները ոչ պակաս կողմնակալ են, քան ավետարանական քրիստոնյաները, ես կասեի՝ էլ ավելի: Նրանք առաջադրում են մտահայեցողական ենթադրություններ, ինչը, անշուշտ, բոլորս էլ որոշ չափով անում ենք: Բայց նրանք նման ենթադրությունների մի ամբողջ փաթեթ ունեն: Նրանց հիմնական ենթադրությունը, որը, ի դեպ, շատ դժվար է անաչառ անվանել, այն է, որ ավետարանները սկզբունքորեն և, ընդհանուր առմամբ, արժանահավատ չեն: Հենց սրանից է Սեմինարը ելնում իր հետազոտություններում: Դե, իհարկե, չէ՞ որ ավետարաններում նկարագրված են հրաշքներ՝ ջրի վրայով քայլել, մեռելների հարություն և այլն: Այս բաները, ասում են նրանք, ուղղակի չեն լինում, նման իրադարձությունները պատմականորեն անհավանական են: Սա տիպիկ նատուրալիստական մոտեցում է, որն ասում է, որ յուրաքանչյուր երևույթ մեր աշխարհում ունի բնական պատճառ:

— Այո, բայց չէ՞ որ մարդիկ սովորաբար այդպես են ապրում: — Դուք նկատի ունեք, որ ամեն իրադարձության հետևում պիտի գերբնական բացատրություններ փնտրենք:

թվայնացրել է 1915.info կայքը

— Իհարկե, չես դիմի գերբնական պատճառների, եթե ստիպված չես,– ասաց Բոյդը,– բայց այս գիտնականներն ավելի հեռուն են գնում, ասում են՝ երբեք չպետք է դիմես: Նրանք ելնում են այն ենթադրությունից, որ պատմության մեջ ամեն ինչ կատարվել է իրենց փորձառության համաձայն: Հետևաբար, եթե նրանք երբեք չեն տեսել հրաշքներ, ապա պատմության մեջ հրաշքներ երբեք չեն պատահել: Տեսեք, թե ինչ են անում նրանք. ի սկզբանե բացառում են գերբնականի հավանականությունը, հետո ասում են. «Հիմա բերեք Հիսուսի մասին փաստերը: Զարմանալի չէ, որ ստանում են այն արդյունքները, ինչ ունեն»[81]:

— Լավ, այդ դեպքում ինչպե՞ս եք հակաճառում:

— Ընդունում եմ, որ պետք չէ գերբնական բացատրություններ փնտրել, քանի դեռ նման անհրաժեշտություն չի առաջացել: Սկզբում փնտրում ենք իրադարձությունների բնական պատճառները: Ես մշտապես այդպես էլ անում եմ: Եթե ծառն ընկել է, հնարավոր է, որ տերմիտներն են կրծելով մաշել: Հրեշտակը կարո՞ղ էր այն տապալել: Ես չէի դիմի նման բացատրության, մինչև դրա համար որոշակի փաստեր չունենայի: Բայց շատ քիչ բան գիտենք տիեզերքի մասին, որպեսզի ասենք, որ Աստված, եթե Աստված գոյություն ունի, երբեք գերբնական ճանապարհով մուտք չէր գործի մեր աշխարհ: Դա շատ ամբարտավան ենթադրություն է: Վերացական եզրակացություն, որը հիմնված չէ իրական իրադարձությունների վրա: Կարծում եմ, գիտնականը մի քիչ խոնարհություն պիտի ունենա. Այդ դեպքում նա կարող է ասել. «Գիտե՞ք ինչ, հնարավոր է, որ Հիսուս Քրիստոս իսկապես հարություն է առել մեռելներից: Հնարավոր է, որ նրա աշակերտներն իսկապես տեսել են այն, ինչի մասին գրում են ավետարաններում: Եվ անհրաժեշտ է հետաքննել այս հնարավորությունը, եթե այլ կերպ հնարավոր չէ բացատրել փաստերը: Դա է, իմ կարծիքով, անաչառությունը:

Չափանիշների քննադատություն

Պնդելով, որ Հիսուս երբեք չի ասել ավետարաններում իրեն վերագրվող խոսքերի մեծ մասը, Սեմինարի անդամները ելնում են սեփական նախադրյալներից ու չափանիշներից: Բայց օբյեկտի՞վ են այդ չափանիշները, թե՞, ինչպես խաղախարդախի զառերը, անընդհատ ընկնում են «պետք եղած» կողմով:

թվայնացրել է 1915.info կայքը

— Նրանց ենթադրություններն ու չափանիշները համատարած խնդրահարույց են,– սկսեց Բոյդը՝ խմբի մոտեցումը վերլուծելիս: — Օրինակ՝ Սեմինարը ենթադրում է, որ Հիսուսի բոլոր խոսքերն իրականում վաղ եկեղեցին է նրան վերագրել: Այդ ենթադրության արմատներն ավետարանների հանդեպ նրանց կասկածամտության մեջ է, իսկ դա իր հերթին հիմնված է մեկ այլ ենթադրության վրա՝ հրաշքներ չեն լինում: Պատմագիտության մեջ գոյություն ունի անմեղության կանխավարկած. համարվում է, որ պատմաբանը պետք է ապացուցի, որ այսինչ բանը կեղծ է կամ անհավանական, քանի որ մարդիկ, ընդհանուր առմամբ, հակված չեն ստելու: Առանց այս կանխավարկածի շատ քիչ բան կիմանանք հին պատմության մասին: «Հիսուսի սեմինարը» գլխիվայր շրջում է այս փաստարկը. նրանց կարծիքով՝ պետք է ապացուցեք, որ այս կամ այն խոսքերը պատկանում են Հիսուսին, և միայն դրանից հետո նրանք դուրս կգան բեմահարթակ և կջարդեն Ձեր ապացույցները՝ ելնելով իրենց շատ կասկածելի չափանիշներից: Անշուշտ, գիտնականներն իրավունք ունեն պարզելու՝ Հիսուս ասե՞լ է այս կամ այն արտահայտությունը: Լիովին համաձայն եմ, բայց դեմ եմ մտքի հետևյալ ընթացքին. եթե Հիսուս չի բավարարում այս չափանիշները, ուրեմն չէր կարող ասել այս ամենը:

Տեսական դատողությունների այս ոլորտն ամեն բան ավելի մշուշապատ էր դարձնում, քան պարզություն էր բերում: Եվ ես կոնկրետ օրինակների կարիք ունեի, որպեսզի կարողանայի հասկանալ Բոյդի միտքը:

— Խոսե՛ք նրանց օգտագործած որոշ կոնկրետ չափանիշների մասին,– խնդրեցի:

— Դե, օրինակ, այսպես կոչված, կրկնակի անհամապատասխանության չափանիշը,– սկսեց Բոյդը: — Այսինքն՝ նրանք կարող են հավատալ, որ Հիսուս ասել է տվյալ խոսքը, եթե այն նման չէ որևէ ռաբբիի կամ եկեղեցու հայրերի ասածներին: Հակառակ դեպքում նրանք եզրակացնում են, որ այդ խոսքը փոխառված է հրեական կամ քրիստոնեական աղբյուրից:

Ակնհայտ խնդիրն այստեղ այն է, որ Հիսուս հրեա էր և քրիստոնեության հիմնադիրը, ուրեմն չպետք է զարմանալի թվա, եթե նա հրեայի կամ քրիստոնյայի պես է խոսում: Այդուհանդերձ, այս չափանիշից ելնելով, Սեմինարը «մերժեց» Հիսուսի շատ ասույթներ: Կա նաև «բազմակի վկայության» չափանիշ, որը նշանակում է, որ կարող ենք վստահ լինել, որ Հիսուս տվյալ միտքն ասել է, եթե դա գտնում ենք մեկից ավելի աղբյուրներում:

թվայնացրել է 1915.info կայքը

Այնուամենայնիվ, ինչո՞ւ վիճել հակառակ ուղղությամբ. եթե այն հանդիպում է միայն մեկ աղբյուրում, ուրեմն վավերական չէ՞: Իրականում հին պատմության մեծ մասը հիմնված է եզակի աղբյուրների վրա: Ընդհանրապես, եթե աղբյուրը վստահելի է համարվում, իսկ ես պատրաստ եմ ապացուցել, որ ավետարանները կարելի է վստահելի համարել մի շարք պատճառներով, ապա այն վստահելի է, նույնիսկ եթե հնարավոր չէ հաստատել այլ աղբյուրներով:

Նույնիսկ երբ Հիսուսի խոսքերը կրկնվում են երկու կամ երեք ավետարաններում, չի համարվում, որ դրանք «բազմակի վկայության» փորձությունն անցան: Եթե ասույթը հանդիպում է Մատթեոսի, Մարկոսի ու Ղուկասի մոտ, նրանք դա միայն մեկ աղբյուր են համարում, որովհետև ենթադրում են, որ Մատթեոսն ու Ղուկասն ավետարանները գրելիս օգտագործել են Մարկոսինը: Չեն կարողանում ընդունել, որ ավելի ու ավելի շատ գիտնականներ լուրջ վերապահումներ են հայտնում այս տեսության վերաբերյալ: Բազմակի հաստատման այս չափանիշին գործնականում անհնար է համապատասխանել:

Բոյդը պատրաստ էր շարունակել, բայց ընդհատեցի նրան և ասացի, որ արդեն հասկացել եմ նրա հիմնական միտքը. սխալ չափանիշները, ինչպես խարդախի զառերը, անխուսափելիորեն շրջվում են «պետք եղած» կողմով:

Հիսուս հրաշագործը

Սեմինարի մոտեցումներից մեկն է զուգահեռներ փնտրել Հիսուսի և հին պատմության մյուս կերպարների միջև, ցույց տալու համար, որ նրա խոսքերն ու գործերը եզակի չեն, և Հիսուս շատերից մեկն է:

— Ի՞նչ կասեք սրան,– հարցրի Բոյդին: — Եբրայեցի իմաստունների մեջ եղել են այնպիսիք, որ դևեր են հանել կամ աղոթել են անձրևի համար, ու անձրևել է, ուստի որոշ գիտնականներ ասում են, որ Հիսուս ընդամենը ևս մեկ հրեա հրաշագործ էր: Ձեր կարծիքով՝ ընդունելի՞ են նման զուգահեռները:

Եվ այդ ժամանակ ես տեսա բանավիճող Բոյդին իր ամբողջ հմայքով: Նա կետ առ կետ պատասխանում էր բարդ հարցի՝ առանց նշումների օգնության: Ուրախ էի, որ մեր զրույցը ձայնագրում եմ, իմ գրառումներով երբեք չէի հասցնի նրա սրընթաց խոսքի հետևից:

թվայնացրել է 1915.info կայքը

— Իրականում բոլոր զուգահեռներն արագ փոշիանում են, երբ ավելի ուշադիր ես նայում,– սկսեց նա՝ ընթացքում արագություն հավաքելով: — Նախ, գերբնականը կենտրոնական և որոշիչ է եղել Հիսուսի կյանքում, և Նա նմանը չունի հրեական պատմության մեջ:

Երկրորդ, Նրա հրաշքների արմատական բնույթն առանձնացնում է նրան: Սա պարզապես անձրև չէ, որ առաջացել է աղոթքով, այլ կույրերի, համրերի, բորոտների բժշկություն, փոթորկի խաղաղեցում, հացի ու ձկան բազմացում, մեռելներից հարություն: Ի՞նչ զուգահեռներ այստեղ կարող են լինել:

Երրորդ, Հիսուսի ամենամեծ տարբերությունն այն է, որ հրաշքներ գործեց սեփական իշխանությամբ: Նա էր, որ ասաց. «Եթե ես դևերին հանում եմ Աստծո զորությամբ, ապա Աստծո արքայությունը հասել է». և Նա դա ասաց Իր մասին: Հիսուս ասում է. «Նա օծեց Ինձ... գերիներին ազատություն քարոզելու»: Նա Հայր Աստծուն արժանին է մատուցում նրա համար, ինչ անում է, բայց երբեք չեք գտնի, որ Հայր Աստծուն խնդրի անել դա, նա անում է դա Հայր Աստծո՝ Իրեն տրված զորությամբ: Իսկ դրա համար զուգահեռ ուղղակի չկա:

Այս ամենը լիովին համապատասխանում է այն տարբերվող կերպին, որով Հիսուս խոսում է իր մասին. «Ինձ է տրված ամեն իշխանություն երկնքում և երկրի վրա», «եթե մեկն ինձ ծառայի, նրան կպատվի Իմ Հայրը», «երկինքն ու երկիրը կանցնեն, բայց իմ խոսքերը չեն անցնի»: Չեք գտնի մի հրեա ուսուցիչ, որն իր մասին այդպես կասի:

— Լավ, և ո՞րն է Ձեր եզրակացությունը,– փաստարկների այս հոսքն ընդհատելով՝ հարցրի:

Բոյդը ծիծաղեց:

— Հրեա իմաստուն հրաշագործների հետ որևէ զուգահեռ շատ ու շատ չափազանցված է:

Հիսուս և առեղծվածային Ապոլոնիոսը

Բանավիճելու հմտություններով ու եռանդով հանդերձ՝ չէի պատրաստվում նախաձեռնությունը Բոյդին զիջել և որոշեցի անցնել ավելի բարդ հարցի՝ Հիսուսի և մի պատմական գործչի՝ Ապոլոնիոս Թիանացու տեսանելի զուգահեռների մասին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Փաստերը Ձեզ հայտնի են նույնքան լավ, որքան ինձ,– ասացի Բոյդին: — Ահա մեկն առաջին դարից, որը, ինչպես ասում են, մարդկանց բժշկել է ու դևեր հանել, որը հավանաբար փոքր աղջկա է մեռելներից հարություն տվել ու մահից հետո հայտնվել է իր հետևորդներից ոմանց: Մարդիկ դա մատնացույց են անում ու ասում. «Ահա՛: Եթե ընդունելու եք, որ Ապոլոնիոսի պատմությունը լեգենդ է, ինչո՞ւ նույնը չասել Հիսուսի պատմության մասին»:

Բոյդը գլխով էր անում՝ ցույց տալով, որ հետևում է իմ մտքի ընթացքին:

— Ընդունում եմ, որ սկզբում սա տպավորիչ է թվում,– ասաց: — Երբ առաջին անգամ լսեցի Ապոլոնիոսի մասին, քոլեջի ուսանող էի, իսկապես զարմացել էի: Բայց ուշադիր և օբյեկտիվ պատմական հետազոտությամբ պարզվում է, որ զուգահեռներն ուղղակի համեմատելի չեն:

Ինձ հարկավոր էին մանրամասներ, ոչ թե ընդհանրացումներ:

— Շարունակեք,– ասացի ես,– արե՛ք հնարավորը, որ հերքեք դա:

— Այսպես ուրեմն: Նախ նրա կենսագիրը՝ Փիլոստրատոսը, գրել է Ապոլոնիոսի կյանքից մեկուկես դար անց, այնինչ ավետարանները գրվել են Հիսուսին ճանաչող մարդկանց կյանքի օրոք: Որքան իրադարձությանն ավելի մոտ, այնքան ավելի քիչ են լեգենդի զարգացման հավանականությունը, սխալի կամ շփոթության հնարավորությունը:

Երկրորդ, մեր տրամադրության տակ կան չորս ավետարան, որոնք Պողոսը հաստատում է, ու դրանք կարելի է որոշ չափով խաչաձև ստուգել ոչ աստվածաշնչյան հեղինակների՝ Հովսեփոսի և ուրիշների հետ: Ապոլոնիոսի դեպքում գործ ունենք մեկ աղբյուրի հետ: Նաև ավետարաններն անցել են ստանդարտ փորձաքննությունները, որոնցով որոշվում է պատմական ճշգրտությունը, բայց նույնը չենք կարող ասել Ապոլոնիոսի պատմությունների մասին:

Երրորդ, այս կենսագրությունը Փիլոստրատոսը գրել հանձնարարել է կայսրուհին, որը նրա հետևորդներից էր և ուզում էր Ապոլոնիոսի անունով տաճար կառուցել: Ուստի Փիլոստրատոսը ֆինանսապես շահագրգռված էր զարդարել պատմությունն ու կայսրուհուն տալ այն, ինչ նա ցանկանում էր: Մինչդեռ ավետարանիչները ոչինչ չէին շահելու, իսկ կորցնելու շատ բան ունեին Հիսուսի պատմությունը գրելիս, զուրկ էին թաքնված շարժառիթներից, օրինակ, դրամական պարգևներից:

թվայնացրել է 1915.info կայքը

Բացի այդ, Փիլոստրատոսը գրելու եղանակը շատ տարբեր է ավետարանների ոճից: Ավետարանները գրված են վկայի շատ վստահ տեսանկյունից, ասես այնտեղ տեսախցիկ են ունեցել: Մինչդեռ Փիլոստրատոսը հաճախ տեղի է տալիս՝ նշելով. «Ասում են, որ ...» կամ «Ոմանք պնդում են, որ այդ աղջիկը մահացել էր, մյուսներն ասում են, որ նա պարզապես հիվանդացել էր»: Ի պատիվ Փիլոստրատոսի պետք է ասել, որ նա որոշակի հեռավորություն է պահպանում այդ պատմություններից և չի հրամցնում ցանկալին իրականության տեղ:

Եվս մի կարևոր կետ. Փիլոստրատոսը գրում էր 3-րդ դարի սկզբին Կապադովկիայում, որտեղ արդեն որոշ չափով տարածվել էր քրիստոնեությունը: Այնպես որ փոխառություններ արած կլիներ նա, ոչ թե քրիստոնյա հեղինակները: Կարելի է ենթադրել, որ Ապոլոնիոսի հետևորդները քրիստոնյաներին համարել են մրցակիցներ ու ասել. «Հա՛: Ախր, մեր Ապոլոնիոսը նույնն արեց, ինչ Հիսուս»: Դե, ինչպես երեխաներն են ասում. «Իմ հայրը քո հորը կծեծի»:

Եվ վերջինը՝ ամենակարևորը. պատրաստ եմ ընդունել, որ Ապոլոնիոսը հրաշքներ է գործել կամ առնվազն ստիպել է մարդկանց հավատալ դրան: Բայց դա ոչ մի կերպ չի խաթարում Հիսուսի մասին վկայությունների արժեքը:

Հիսուս և հեթանոսական կրոնները

Լավ, մտածեցի ինքս ինձ, արի մի փորձ էլ անենք: Ուսանողների շատ սերունդների սովորեցնում են, որ Հիսուսի կյանքի շատ թեմաներ պարզապես հին կրոնների արձագանքներն են, որոնցում պատմություններ կան մեռնող ու հարություն առնող աստվածների, մկրտության ու հաղորդության ծեսերի մասին:

— Ինչ կասեք այդ զուգահեռների մասին,– հարցրի ես:

— Դարասկզբին դա շատ տարածված փաստարկ էր, բայց, ընդհանուր առմամբ, ուժը կորցրեց, քանի որ վարկաբեկված էր: Նախ, եթե հաշվի առնենք ժամանակի գործոնը, ապա կարող էին այս կրոններին քրիստոնեությունից փոխառություններ անցնել, ոչ թե հակառակը: Երկրորդ, այս կրոնները զարգացել են «վերցրու, ինչ ուզում ես» սկզբունքով և ազատորեն փոխառել գաղափարներ զանազան աղբյուրներից: Հրեաները,

թվայնացրել է 1915.info կայքը

այնուամենայնիվ, խստորեն պաշտպանում էին իրենց հավատն արտաքին ազդեցություններից: Նրանք իրենց առանձնահատուկ ժողովուրդ էին համարում և կտրականապես մերժում էին հեթանոսական գաղափարներն ու ծեսերը:

Ինձ հատկապես հետաքրքրում էին մեռնող ու հարություն առնող աստվածների առասպելների հնարավոր զուգահեռները:

— Այդ պատմությունները նման չե՞ն քրիստոնեական հավատալիքներին,– հարցրի:

— Շատ հեթանոսական կրոններ իսկապես ունեն նման հավատալիքներ, բայց այդ պատմությունները միշտ պտտվել են մահվան ու ծնունդի՝ կյանքի բնական փուլերի շուրջ: Զարմանալով և հիանալով այս շարունակական հրաշքով՝ մարդիկ պատմություններ էին հորինում մեռնող ու հարություն առնող աստվածների մասին: Այս պատմությունները սովորաբար ունենում էին հեքիաթի ձև և պատկերում իրադարձություններ, որոնք կատարվել են «ժուկով-ժամանակով»: Համեմատե՛ք դա ավետարաններում Հիսուս Քրիստոսի պատկերման հետ: Նրանք խոսում են մեկի մասին, որ իրականում ապրել է ընդամենը մի քանի տասնամյակ առաջ, ու անուններ են տալիս. խաչվել է Պոնտացի Պիղատոսի օրոք, երբ Կայիափան քահանայապետ էր, իսկ Սիմոնը՝ Կյուրենից, Ալեքսանդրի ու Ռուֆոսի հայրը, կրում էր խաչը, և այսպես շարունակ: Սա կոնկրետ պատմական փաստաթուղթ է: Ընդհանուր ոչինչ չունի պատմությունների հետ, որոնք ենթադրաբար պատահել են «ժուկով-ժամանակով»:

Քրիստոնեությունը ոչ մի կապ չունի բերքի պաշտամունքի կամ կյանքի հավերժական շրջապտույտի հետ: Այն բխում է հուդայականությունից՝ մեռելների հարության ու հավերժական կյանքի ու Աստծո հետ վերամիավորման հավատից: Հեթանոսական կրոններում նման բան չկա:

Ինչ վերաբերում է այն ենթադրությանը, որ մկրտության ու հաղորդության Նոր Կտակարանի ուսմունքները ծագել են հեթանոսական կրոններից, ուղղակի անհեթեթություն է: Նախ, այս ենթադրյալ զուգահեռների ապացույցներն ի հայտ են գալիս միայն 2-րդ դարից հետո, ուստի կրկին կարելի է խոսել միայն քրիստոնեությունից արված փոխառությունների մասին և ոչ հակառակը: Եվ երկրորդ, եթե ուշադիր քննեք, նմանություններն անհետանում են: Օրինակ՝ Միհրի պաշտամունքում ավելի բարձր աստիճանի հասնելու համար հետևորդները պիտի կանգնեին ցուլի տակ

թվայնացրել է 1915.info կայքը

նրան մորթելու ընթացքում, որպեսզի ողողվեին նրա արյամբ ու աղիներով: Հետո միանում էին մյուսներին՝ ցուլն ուտելու:

Արդ, ենթադրել, թե հրեաները սրա մեջ որևէ գրավիչ բան կգտնեին ու կուզեին ընդօրինակել մկրտությունն ու հաղորդությունն այս բարբարոսական ծեսի նմանությամբ, ծայրաստիճան անհավանական է. ահա թե ինչու գիտնականների մեծ մասը հերքում է այս վարկածը[82]:

Գաղտնի ավետարաններ ու խոսող խաչեր

Ի տարբերություն իր թափթփված ու անկանոն գրասենյակի՝ Բոյդի միտքը սուր էր ու համակարգված: Երևակայական զուգահեռների նրա վերլուծությունը կասկածի քիչ տեղ էր թողնում: Ու որոշեցի առաջ անցնել, մի այլ ոլորտ, որի մասին լրատվամիջոցները հաճախ են գրում՝ «նոր բացահայտումներ», և որոնց հաճախ «Հիսուսի սեմինարի» մասնակիցներն ամբողջ գրքեր են նվիրում:

— Հանրաճանաչ պարբերականներում շատ է գրվում Թովմասի ավետարանի, Մարկոսի գաղտնի ավետարանի, Խաչի ավետարանի ու սկզբնաղբյուր Q-ի մասին,- ասացի: — Իրականում եղել են նոր բացահայտումներ, որոնք պիտի փոխեն Հիսուսի մասին մեր պատկերացումը:

— Ո՛չ,- սրտնեղած հոգոց հանեց Բոյդը: — չկան նոր հայտնագործություններ, որ Հիսուսի մասին որևէ նոր բան են ասում: Թովմասի ավետարանը հայտնաբերվել է շատ վաղուց, բայց միայն հիմա է օգտագործվում Հիսուսի այլընտրանքային կերպար ստեղծելու համար: Թովմասի ավետարանի մասին որոշ վարկածներ կարող են նոր լինել, բայց ավետարանը նոր չէ: Ինչ վերաբերում է Q-ին, այն հայտնագործություն չէ, այլ տեսություն, որը 1.5 դար գոյություն ունի և փորձում է բացատրել Ղուկասի ու Մատթեոսի նյութի ընդհանրությունները: Եթե այստեղ ինչ-որ նոր բան կա, ապա գուցե այն մեթոդներն են, որոնցով ձախ թևի գիտնականներն անխնա կտոր-կտոր են անում այս Q-ն՝ հույս ունենալով գտնել իրենց կանխակալ եզրակացությունների հաստատումը:

Ինձ հայտնի էր, որ Ջոն Դոմինիկ Քրոսենը՝ «Հիսուսի սեմինարի» թերևս ամենաազդեցիկ գիտնականը, մի շարք հավակնոտ պնդումներ է արել Գաղտնի Մարկոս կոչվող մի ավետարանի վերաբերյալ. նա հայտարարեց,

որ սա Մարկոսի ավետարանի ամբողջական, չգրաքննված տեքստն է, որը գաղտնի նյութեր է պարունակում հոգևոր անձանց ներքին շրջանակի համար[83]: Անմիջապես հայտնվեցին մարդիկ, որոնք այս տեքստում գտան ապացույցներ ամենաանհեթեթ գաղափարների համար՝ որ Հիսուս իրականում կախարդ էր, կամ որ մի շարք վաղ քրիստոնյաներ նույնասեռական են եղել: Այս դավադրական սցենարը գրավեց լրատվամիջոցների ուշադրությունը:

— Ինչ ապացույց կա սրա համար,– հարցրի Բոյդին:

— Ոչ մի,– ասաց առանց վարանելու:

Թեև ակնհայտ էր, որ մանրամասնելու կարիք չունի, խնդրեցի բացատրել, թե ինչ նկատի ունի:

— Հասկանում եք, ոչ մի Գաղտնի Մարկոս էլ չկա,– ասաց: — Պարզապես մի գիտնական մեջբերում է գտել Կղեմես Ալեքսանդրացուց (2-րդ դարի վերջ), որը, ենթադրաբար, այս ավետարանից է: Հետո ինչ-որ առեղծվածային ձևով նույնիսկ դա է կորել, անհետացել: Մենք ոչ այդ ավետարանն ունենք, ոչ էլ մեջբերում դրանից, և եթե նույնիսկ մեջբերումն էլ ունենայինք, պատճառ չունենք մտածելու, որ այն մեզ որևէ ճշգրիտ տեղեկություն է տվել պատմական Հիսուսի կամ այն մասին, թե վաղ քրիստոնյաներն ինչ կարծիքի էին նրա մասին: Ի լրումն, հայտնի է, որ Կղեմեսը կեղծված գրվածքները դյուրահավատորեն ընդունելու համբավ ունի: Այսպիսով, Գաղտնի Մարկոսը գոյություն չունեցող գործ է, մեջբերված այժմ գոյություն չունեցող տեքստում 2-րդ դարի վերջի մի հեղինակի, որն այս հարցերում հայտնի է դյուրահավատությամբ: Գիտնականների մեծ մասը սրան հավատ չի ընծայում: Ցավոք, փոքրամասնության կարծիքը լայնորեն լուսաբանվում է, որովհետև լրատվամիջոցները սենսացիաներ սիրում են:

— Քրոսենը բարձր է գնահատում նաև, այսպես կոչված, Խաչի ավետարանը: Ինչ կասեք դրա մասին,– հարցրի:

— Գիտնականների մեծ մասը դրան հավատ չի ընծայում, որովհետև այն արտառոց, առասպելական նյութ է պարունակում: Օրինակ, Հիսուս դուրս է գալիս գերեզմանից, ու նա վիթխարի է՝ գլուխը հասնում է երկնքին, իսկ խաչը դուրս է գալիս գերեզմանից ու ոչ ավելի, ոչ պակաս, խոսում է: Չորս ավետարաններում ակնհայտորեն ավելի ողջամտություն կա, ուստի ավելի վստահելի են, քան որևէ բան, որը կարելի է գտնել այս պատմության մեջ: Խաչի ավետարանը շատ նման է ավելի ուշ գրված պարա-

թվայնացրել է 1915.info կայքը

կանոն տեքստերին: Այն պետք է գրված լինի ավետարաններից ավելի ուշ, քանի որ պայմանավորված է աստվածաշնչյան նյութերով:

Ի տարբերություն Աստվածաշունչն ուսումնասիրող գիտնականների ճնշող մեծամասնության՝ «Հիսուսի սեմինարը» Թովմասի ավետարանին ծայրաստիճան բարձր կարգավիճակ է շնորհել՝ բարձրացնելով այն չորս կանոնական ավետարանների մակարդակին: Դոկտոր Բրյուս Մեցգերը խիստ քննադատեց այդ տեսակետը՝ այն համարելով անհիմն: Հիմա ինձ հետաքրքրում էր Բոյդի կարծիքը:

— Բայց ինչո՞ւ Թովմասի ավետարանը չարժանացնել այդպիսի պատվի:

— Բոլոր մասնագետներն ընդունում են, որ այս ավետարանը կրել է գնոստիցիզմի էական ազդեցությունը, որը կրոնական շարժում էր 2-4-րդ դարերում: Գնոստիկները ենթադրում էին, որ գոյություն ունեն ինչ-որ գաղտնի գիտելիք, մտքի պայծառացում կամ հայտնություն, որոնք մարդկանց տալիս են տիեզերքի գաղտնիքները բացահայտելու բանալին: Համարվում էր, որ փրկությունը տրվում է գիտելիքի միջոցով (gnosis հունարեն նշանակում է «գիտելիք»): Հետևաբար գիտնականների մեծ մասը Թովմասի ավետարանը թվագրում է երկրորդ դարի կեսով, երբ այն լիովին համապատասխանում է մշակութային միջավայրին: Ահա մի օրինակ. մեջբերում են Հիսուսին, իբրև ասել է. «Յուրաքանչյուր կին, որն ինքն իրեն արուի կվերածի, կմտնի երկնքի արքայությունը»: Սա հակասում է այն վերաբերմունքին, որը, ինչպես գիտենք, Հիսուս ուներ կանանց հանդեպ, բայց լավ համապասխանում է գնոստիկ մտածողությանը: Այնուամենայնիվ, «Հիսուսի սեմինարը» կամայականորեն մեկնաբանում է Թովմասի ավետարանի որոշ հատվածներ և պնդում, որ այդ տեքստը ներկայացնում է Հիսուսի մասին տեսակետները, որ ձևավորվել են նախկինում՝ ավելի վաղ, քան գրվել են կանոնական ավետարանները: Քանի որ այս հատվածներից ոչ մեկում Հիսուս չի անում իր անձը մեծարող պնդումներ կամ գերբնական գործեր, նրանք եզրակացնում են, որ սկզբում Հիսուս ընկալվում էր միայն որպես մեծ ուսուցիչ: Բայց սա սխալ եզրակացություն է, տիպիկ արատավոր շրջան: Չէ՞ որ Սեմինարը կառչել է հենց այս հատվածներից, քանի որ դրանք հաստատում են նրա կանխակալ կարծիքը: Եվ ճշմարտությունն այն է, որ լուրջ պատճառ չունենք Թովմասի 2-րդ դարի ավետարանը վեր դասելու 1-ին դարի Նոր Կտակարանի ավետարաններից:

թվայնացրել է 1915.info կայքը

Պատմությո՞ւն, թե՞ հավատ

Հիսուս, որպես պատմական անձ, և Հիսուս, որին հավատում են քրիստոնյաները. Սեմինարը համարում է, որ այդ երկուսի միջև մեծ անդունդ կա: Իրական Հիսուս վառ անհատականություն էր, իմաստուն, սրամիտ, ազատամիտ մարդ, որը երբեք չի պնդել, թե Աստծո Որդին է, այնինչ հավատացյալների համար Հիսուս կենտրոնակետն է պատվիրանների, որոնք մարդկանց օգնում են ճիշտ ապրել, բայց վերջին հաշվով հիմնված են ցանկալին իրականության տեղ ընդունելու վրա:

— Պատմական Հիսուսի ու հավատի Հիսուսի միջև ոչ մի անդունդ էլ չկա,– ասաց Բոյդը, երբ այս մասին հարցրի: — Մարդիկ իրենք են ստեղծում այդ անդունդը՝ հրաժարվելով հավատալ, որ Նրա ուսմունքն աստվածային ծագում ունի և հաշտեցնում է մարդուն Աստծո հետ: Ընդհանրապես, Հիսուսի հանդեպ հավատը Սեմինարն այսպես է բնորոշում. կան որոշակի կրոնական խորհրդանիշեր, որոնք շատ կարևոր են մարդու համար՝ Հիսուսի աստվածային լինելը, խաչելությունը, անձնազոհ սերը, Հարությունը: Մարդը կարող է և չհավատալ, որ դրանք իսկապես կատարվել են և, այդուհանդերձ, դրանք կարող են մարդկանց մղել ճիշտ ապրելու, հաղթահարելու մահվան էկզիստենցիալ վախը, զարգացնելու ներքին նոր հնարավորություններ, հուսահատության մեջ վերակենդանացնելու հույսը և այլն, և այլն, և այլն,– Բոյդն ուսերը թոթվեց: — Կներեք, բայց այս դատարկաբանությունն այնքան եմ լսել, որ ձանձրացել եմ: Եվ ուրեմն այս լիբերալներն ասում են, որ հնարավոր չէ, որ պատմական ուսումնասիրությունը հայտնաբերի հավատի Հիսուսին, որովհետև հավատի Հիսուսի արմատները պատմական չեն: Նա ուղղակի խորհրդանիշ է: Բայց լսեք, Հիսուս որևէ բանի խորհրդանիշ լինել չի կարող, եթե արմատները պատմության մեջ չեն, Նիկիո հավատի հանգանակը չի ասում. «Օ՛, որքա՛ն կցանկանայինք հավատալ, որ այս ամենն իսկապես եղել է»: Այն ասում է, որ Հիսուս Քրիստոս խաչվեց Պոնտացի Պիղատոսի օրոք, ու երրորդ օրը հարություն առավ. հենց այս պատմական փաստերից է բխում քրիստոնեությունը: Աստվածաբանական ճշմարտությունը հիմնված է պատմական ճշմարտության վրա: Նոր Կտակարանն այդպես է կառուցված: Կարդացեք Պետրոս առաքյալի քարոզը «Գործք առաքելոցի» երկրորդ գլխում: Նա կանգնում է ու ասում. «Տղե՛րք, դուք այս ամենին վկա եղաք, դրանք

թվայնացրել է 1915.info կայքը

գաղտնի չեն արվել: Դավիթը մեռավ ու նրա գերեզմանը դեռ կա, բայց Հիսուսին Աստված մեռելներից հարություն տվեց: Ուրեմն Նրան Աստծո Որդի ենք հռչակում»: Եթե հրաշքներ չեն լինում, ուրեմն Հարություն չի եղել. հետո ինչ է մնում քրիստոնեությունից: Պողոս առաքյալն ասաց, որ եթե Հիսուս հարություն չի առել մեռելներից, ուրեմն մեր հավատն իզուր է, անօգուտ և ունայն[84]:

Բոյդը մի պահ կանգ առավ: Նրա ձայնից անհետացավ քարոզի հնչերանգը. իմ առաջ պարզապես մի մարդ էր, որը բացատրում էր իր համոզմունքները:

— Չեմ ուզում կյանքս հիմնել մի խորհրդանիշի վրա,– վճռական ասաց նա: — Իրականությունն եմ ուզում, իսկ քրիստոնեական հավատի արմատները միշտ իրականության մեջ են եղել: Ազատական գիտնականների հավատի արմատներն են, որ իրականության մեջ չեն: Դրանք են, որ անիրականանալի երազանքի են հետևում, բայց քրիստոնեությունը դատարկ երազանք չէ:

Պատմության ու հավատի միավորումը

Երկար խոսեցինք Հիսուսի մասին, ինչպես որ նրան պատկերացնում էին Սեմինարի մասնակիցները՝ խորհրդանշական Հիսուսի, որ անկարող է աշխարհին այլ բան առաջարկել՝ հույսի պատրանքից բացի: Բայց մինչև հրաժեշտ տալն ուզում էի լսել Գրեգորի Բոյդի Հիսուսի մասին: Ուզում էի համոզվել, որ Հիսուս, որի կյանքը նա հետազոտում է ու որի մասին գիտական գրքեր է գրում որպես աստվածաբանության պրոֆեսոր, նույն Հիսուս է, որին քարոզում է իր եկեղեցում կիրակի առավոտները:

— Ձեզ ճիշտ եմ հասկանում,– ասացի,– Ձեր Հիսուս, Նա, որի մասին խոսում եք, միաժամանակ և՛ Աստված է, և՛ պատմական անձ:

Բոյդը բարձրացրեց սեղմած բռունցքը, ասես հենց նոր գոլ էի խփել:

— Այո՛, ճիշտ այդպես, Լի՛,– բացականչեց և, իր աթոռի եզրին նստելով, շարադրեց այն, ինչին հանգեցրել էին իր գիտական աշխատանքն ու հավատը:

— Երբ սիրում ես մեկին, քո սերն աճում է այն ամենից, ինչ գիտես նրա մասին, այսինքն՝ փաստերից: Օրինակ՝ կնոջդ սիրում ես, որովհետև նա

հիանալի, գեղեցիկ, հաճելի, բարի կին է: Այս ամենը փաստեր են: Բայց սերն ավելին է, քան փաստերը: Չէ՞ որ կարող ես իմանալ կնոջ բոլոր արժանիքներն ու չսիրել նրան, չվստահել, բայց դու սիրում ես և վստահում:

Ձեր սերն ավելի բարձր է փաստերից, բայց, այնուամենայնիվ, դրանց վրա է հիմնված:

Նույնն էլ Հիսուսի հանդեպ սիրո դեպքում է: Սերը Քրիստոսի հանդեպ ավելին է, քան նրա մասին պատմական փաստերի իմացությունը, բայց հիմնված է դրանց վրա: Հիսուսի հանդեպ իմ հավատը կառուցված է պատմական փաստերի վրա, բայց Նրա հետ իմ հարաբերությունները շատ ավելին են, քան այդ ապացույցները: Չէ՞ որ ես հավատում եմ նրան, ամեն օր շփվում եմ նրա հետ:

— Այո՛, բայց համաձայնեք,– ընդհատեցի նրան,– որ քրիստոնեությունը Հիսուսի մասին որոշ պնդումներ է անում, որոնց դժվար է հավատալ:

— Այո՛, իհարկե, ընդունում եմ,– պատասխանեց: — Ահա թե ինչու եմ ուրախ, որ այսպիսի հիմնավոր ապացույցներ ունենք, որոնք հաստատում են, որ այդ պնդումները ճշմարիտ են: Ինձ համար ամեն բան հստակ է. չկա ոչ մի անդունդ, ոչ մի խզում: Կան անվիճելի ապացույցներ, որ Հիսուս հենց Նա է, ում մասին աշակերտներն են ասում: Կան Նրա հրաշքների, Նրա Հարության, Նրա ճշմարտության ապացույցները: Ահա այդ ապացույցների և «Հիսուսի սեմինարի» ուլտրաձախերի անհիմն ենթադրությունների միջև իսկապես հազարավոր լուսատարիների անդունդ կա: Այդ գիտնականների ունեցածն ի՞նչ է: Դե, մի կարճ հղում կա՝ կորսված «գաղտնի» ավետարանին, երկրորդ դարի վերջի մի նամակում, որը, ավա՜ղ, տեսել է միայն մի մարդ, իսկ հետո նամակը կորել է: Կա Խաչելության ու Հարության մասին մեկ այլ տեքստ՝ 3-րդ դարով թվագրվող, որտեղ գլխավոր դերում խոսող խաչն է, ու որը միայն մի քանի գիտնականներ են համարում ավելի հին, քան ավետարանները: Կա 2-րդ դարի փաստաթուղթ՝ ակնհայտորեն գնոստիկյան բնույթի, որի մասերը որոշ գիտնականներ հիմա ուզում են վերագրել ավելի վաղ ժամանակաշրջանի, որպեսզի հիմնավորեն իրենց կանխակալ կարծիքը: Ու կա մեկ այլ հիպոթետիկ տեքստ՝ կառուցված հեղհեղուկ ենթադրությունների վրա, որի արժեքն ապացուցման արատավոր շրջանի պատճառով գործնականում զրոյանում է:

Բոյդը հետ ընկավ աթոռին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Չէ, կներեք,– ասաց գլուխն օրորելով,– չեմ ընդունում: Ես չեմ հավատում «Հիսուսի սեմինարին»: Շատ ավելի խելամիտ է վստահել ավետարաններին. նրանք փայլուն անցան պատմական ճշգրտության փորձաքննությունները:

Քննադատների բազմություն

Վերադառնալով հյուրանոց մտովի վերարտադրեցի Բոյդի հետ հարցազրույցը և համաձայնեցի նրա հետ. եթե հավատի Հիսուս նաև պատմության Հիսուս չէ, նա անզոր է և իմաստազուրկ: Եթե հավատը հիմնված չէ պատմության վրա, եթե Հիսուսի աստվածային էությունն ապացուցված չէ Հարության փաստով, ուրեմն Հիսուս ամենակարող Աստված չէ, այլ պարզապես մի դրական խորհրդանիշ, նույնքան ոչ գործուն, որքան Զմեռ պապը:

Այնուամենայնիվ, Նա խորհրդանիշ չէ, և դրա համար կան հավատի ապացույցներ: Ես արդեն լսել էի լավ հիմնավորված վկայություններ, փաստագրական, հավելյալ ու գիտական ապացույցներ, որոնք հիմնավորում էին Նոր Կտակարանի պնդումը, որ նա մարմնավորված Աստված է, ու պատրաստվում էի նորից ճանապարհ ընկնել՝ պատմական նոր փաստաթղթեր փնտրելու՝ Նրա ու Նրա Հարության մասին:

Գիտեի, որ Գրեգ Բոյդը մենակ չէ «Հիսուսի սեմինարի» դեմ իր ելույթներում: Նրա խոսքը միայն մի մասն է այլ գիտնականների հետզհետե ուժգնացող քննադատության, ընդ որում, ոչ միայն պահպանողական ավետարանական քրիստոնյաների, այլև տարբեր աստվածաբանական դպրոցներ ներկայացնող գիտնականների: Ես ստիպված չէի հեռու գնալ օրինակի համար՝ այն իմ մահճակալի կողասեղանին էր: Դա այն գիրքն էր, որ վերջերս էի գնել՝ «Իրական Հիսուսը»: Հեղինակը Լյուկ Թիմոթի Ջոնսոնն է՝ Նոր Կտակարանի և վաղ քրիստոնեության պատմության հայտնի պրոֆեսորն Էմորի համալսարանի Քենդլերի աստվածաբանության դպրոցում: Ջոնսոնը կաթոլիկ է, որը նախքան Աստվածաշնչի գիտակ ու մի շարք ուշագրավ գրքերի հեղինակ դառնալը բենեդիկտական վանական էր:

Ջոնսոնը սուր և խստորեն քննադատում է «Հիսուսի սեմինարը»: Ասում է, որ այն «չի ներկայացնում Նոր Կտակարանի գիտակների սերուցքը»,

թվայնացրել է 1915.info կայքը

որ նրա ամբողջ գործունեությունը հանգում է «ավետարանական ավանդույթների իսկությունը վիճարկելու» փորձերին, ու դրա արդյունքները «վաղօրոք կանխորոշված են»[85]: «Սա լուրջ հետազոտական կամ նույնիսկ քննադատական ուղղություն չէ,– եզրակացնում է Ջոնսոնը,– այլ պարզապես դատարկ ժամանց, որի մասնակիցներն իրենց քմահաճույքներին են անձնատուր լինում»[86]:

Նա շարունակում է մեջբերել այլ ականավոր գիտնականների նմանատիպ կարծիքներ: Այսպես՝ դոկտոր Հովարդ Քլարկ Քին «Հիսուսի սեմինարն» անվանում է «գիտական խայտառակություն», իսկ Ռիչարդ Հեյզը՝ Դյուքի համալսարանից, «Հինգ կտակարանների» իր գրախոսության մեջ պնդում է. «Այս գրքում բերված ապացույցներին ոչ մի դատարան չէր հավատա»[87]:

Գիրքը փակեցի ու լույսն անջատեցի: Վաղը կշարունակեմ փնտրել ապացույցներ, որոնք կդիմանան ցանկացած դատավարության:

Քննարկումներ

Հարցեր խորհրդածելու կամ խմբային պարապմունքի համար

1. Լսե՞լ եք որևէ բան «Հիսուսի սեմինարի» և նրա գործունեության մասին: Ինչպե՞ս եք դրան արձագանքել: Ձեր տպավորությամբ Սեմինարի եզրակացությունները ներկայացնո՞ւմ են գիտնականների մեծ մասի կարծիքը: Ի՞նչ եք կարծում, այսպիսի հարցերում կարելի՞ է ապավինել զանգվածային լրատվամիջոցներին:
2. Հիսուսի մասին սեփական հետաքննություն վարելիս՝ հենց սկզբից կբացառե՞ք գերբնական իրադարձությունների հնարավորությունը, թե՞ քննության կառնե՞ք բոլոր պատմական վկայությունները, նույնիսկ եթե դրանցում խոսքը հրաշքների մասին է: Հիմնավորե՞ք ձեր տեսակետը:
3. «Ես չեմ ուզում կյանքս կառուցել խորհրդանիշի վրա: Ինձ իրականություն է պետք»,– ասում է Բոյդը: Համաձա՞յն եք նրա հետ: Բավարա՞ր եք համարում, որ Հիսուս միայն հույսի խորհրդանիշ լինի, թե՞ կարևոր է վստահ լինել, որ Նրա կյանքը, ուսմունքն ու Հարությունը փաստագրված հետք են թողել պատմության մեջ: Ինչո՞ւ:

թվայնացրել է 1915.info կայքը

ՄԱՍ 2

Հիսուս. հեռաքննություն

թվայնացրել է 1915.info կայքը

թվայնացրել է 1915.info կայքը

ԳԼՈՒԽ 7

Ինքնության փաստեր

Հիսուս իրեն Ասպծո Որդի համարելու հիմքեր ուներ

Ջոն Դուգլասը գերբնական կարողություն ունի՝ կարդալ այն մարդկանց մտքերը, որոնց նախկինում երբեք չի հանդիպել:

Որպես Հետախուզության դաշնային բյուրոյի «հոգեբանական պատկեր» կազմող մասնագետ, Դուգլասը հանցագործության վայրում տեղեկություններ է հավաքում և վերականգնում է դեռևս ազատության մեջ գտնվող հանցագործի պատկերը:

Հենց նա ուրվագծեց «Ճամփեզրի մարդասպան» մականունով հայտնի՝ սերիական մարդասպանի հոգեբանական դիմանկարը, որը 1979-1981 թթ. Սան Ֆրանցիսկոյի շրջակայքի անտառապատ վայրերում հետապնդում էր անցորդներին: Դուգլասը եկավ այն եզրակացության, որ այդ մարդն առանձնանում է ոչ միայն գազանի դաժանությամբ, այլև ունի հրկիզման հակում, խոսում է կակազելով և տառապում անմիզապահությամբ: Երբ հանցագործը, ի վերջո, ձերբակալվեց, Դուգլասի կանխատեսումը լիովին հաստատվեց[88]:

Դուգլասը հոգեբանության դոկտոր է և փորձառու խուզարկու, սակայն մարդու վարքը վերծանելու բնատուր կարողության շնորհիվ նա հայտնի դարձավ առաջին հերթին որպես հոգեբանական կերպարի վարպետ: Նա այս թեմայով մի քանի բեսթսելլերի համահեղինակ է, ու երբ Ջոդի Ֆոսթերն Օսկար ստացավ «Գառների լռության» մեջ իր դերի համար, Դուգլասին հրապարակավ շնորհակալություն հայտնեց՝ նրան համարելով իր հերոսի՝ ՀԴԲ խորհրդատուի հետևում կանգնած իրական կերպարը:

Ինչպե՞ս է Դուգլասը կարողանում կռահել բոլորովին անծանոթ մարդկանց մտքերն ու շարժառիթները: Biography ամսագրում հրապարակված հարցազրույցում նա նշում է. «Վարքն անհատականության արտացոլումն է»[89]:

Այլ խոսքով, Դուգլասն ուշադիր զննում է հանցագործության վայրում մնացած հանցանշանները, հնարավորության դեպքում զրուցում է զոհերի հետ, պարզում, թե ինչպես է գործել, ինչ է ասել հանցագործը, և այս տվյալների հիման վրա ուրվագծում է նրա հոգեբանական դիմանկարը:

թվայնացրել է 1915.info կայքը

Հիմա դառնանք Հիսուսին: Ինչպե՞ս կարող ենք պարզել Նրա շարժառիթներն ու մտադրությունները, եթե երբեք չենք խոսել Նրա հետ: Ինչպե՞ս կարող ենք պարզել, թե Նա ինչ էր մտածում Իր մասին, Ով էր համարում Իրեն, և որն էր համարում Իր առաքելությունը:

Նրա վարքը դիտարկելով՝ կասեր Դուգլասը: Եթե ուզում ենք պարզել, թե Ով էր Հիսուս Իրեն իրականում համարում՝ Մեսիա և Աստծո Որդի, թե պարզապես Ուսուցիչ և Մարգարե, պիտի նայենք, թե ինչ էր անում, ինչ էր ասում ու ինչպես էր հարաբերվում ուրիշների հետ:

Հարցը, թե Հիսուս Իրեն Ով էր համարում, վճռորոշ է: Որոշ հետազոտողներ կարծում են, թե Հիսուսի աստվածությունն առասպել է, որը ստեղծել են Նրա ամենաեռանդուն հետևորդները Նրա մահից տարիներ անց: Իրական Հիսուս, ասում են նրանք, գերեզմանում շուռ կգար, եթե իմանար, որ մարդիկ երկրպագում են իրեն որպես Աստված: Նրանք պնդում են, որ եթե լեգենդները զատենք ու վերադառնանք նրա մասին ամենավաղ նյութին, կտեսնենք, որ նա պարզապես թափառական քարոզիչ էր, երբեմն խռովություններ հրահրող և երբեք Իրեն ուրիշ մեկը չէր պատկերացնում:

Սրանք իրենց տեսակետներն են, բայց պատմությունը հաստատո՞ւմ է դրանք: Պարզելու համար թռա Լեքսինգտոն, Կենտուկի, ոլորապտույտ ճանապարհներով մեքենայով անցա գյուղական գեղատեսիլ տների մոտով ու գնացի այցելելու հայտնի գիտնականին, «Հիսուսի քրիստոսաբանություն» աղմկահարույց գրքի հեղինակին:

6-ՐԴ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Բեն Ուիդրինգտոն 3-րդ, փիլիսոփայության դոկտոր

Էսբերի աստվածաբանական սեմինարիան թերևս միակ տեսարժան վայրն է Կենտուկիի Ուիլմոր փոքրիկ քաղաքում: Այնտեղ գտա Բեն Ուիդրինգտոնի գրասենյակը՝ գաղութային ոճի շենքի չորրորդ հարկում, կենտրոնական փողոցից ոչ հեռու: Հարավցի ջենտլմենի առատաձեռն հյուրընկալությամբ Հյուսիսային Կարոլինայի բնիկն ինձ հարմարավետ աթոռ ու սուրճ առաջարկեց, երբ նստեցինք քննարկելու, թե ով էր Նազարեթցի Հիսուս Իր կարծիքով:

թվայնացրել է 1915.info կայքը

Այս թեման, անկասկած, հարազատ էր զրուցակցիս: «Հիսուսի քրիստոսաբանությունից» բացի՝ նրա գրքերի թվում են «Հիսուս իմաստունը», «Քրիստոսի բազմաթիվ դեմքերը», «Հիսուսի փնտրտուքը», «Հիսուս, Պողոսն ու աշխարհի վախճանը», «Աստվածաշնչի ընթերցում ու ըմբռնում», «Նոր Կտակարանի պատմություն», նաև մեկնաբանություններ Մարկոսի, Հովհաննեսի, «Գործք առաքելոցի» ու Հռոմեացիներին ուղղված նամակի վերաբերյալ: Նրա հոդվածները տեղ են գտել մասնագիտացած բառարաններում ու գիտական ամսագրերում:

Ուսանել է Գորդոն Քոնվելի աստվածաբանական սեմինարիայում, որտեղ գերազանցությամբ ստացել է աստվածաբանության մագիստրոսի կոչում, և Անգլիայի Դարեմի համալսարանում, որտեղ ստացել է աստվածաբանության դոկտորի աստիճան: Նրա ատենախոսությունը վերաբերում էր Նոր Կտակարանին: Ուիդրինգտոնը դասավանդել է Էսբերիում, Էշլենդի աստվածաբանական սեմինարիայում, Դյուկ համալսարանի աստվածաբանության դպրոցում և Գորդոն Քոնվելի ճեմարանում: Անդամակցում է Նոր Կտակարանի հետազոտության ընկերությանը, Աստվածաշնչյան գրականության ընկերությանն ու Աստվածաշնչյան հետազոտությունների ինստիտուտին:

Ուիդրինգտոնը խոսում էր, ինչպես պատշաճ է լուրջ գիտնականին, հստակ ու պարզորոշ, ուշադիր կշռադատելով յուրաքանչյուր բառը: Միայն թե ձայնի երանգը մատնում էր ակնհայտ հիացմունքը, նույնիսկ ակնածանքն իր թեմայի հանդեպ: Այս վերաբերմունքն ավելի նկատելի դարձավ, երբ ինձ տարավ նորագույն տեխնոլոգիաներով հագեցած իր ստուդիան, որտեղ կարելի էր տեսնել Հիսուսի պատկերներն ու լսել Նրա մասին գեղեցիկ երգեր՝ տոգորված կարեկցանքի, զոհաբերության, մարդասիրության ոգով և Նրա կյանքի ու ծառայության մեծությամբ:

Գիտնականի համար, որը գրում է հիմնարար աշխատություններ՝ ծանրաբեռնված ծանոթագրություններով ու մեկնաբանություններով, այս տեսա-երաժշտական ստեղծագործությունը փորձ էր մոտենալու Հիսուսի կյանքի և բնույթի այն կողմին, որն ընկալվում է միայն ստեղծագործական ճանապարհներով:

Ուիդրինգտոնի գրասենյակ վերադառնալով՝ որոշեցի սկսել մի հարցով, որը ծագում է գրեթե յուրաքանչյուրի մտքում, որ առաջին անգամ բացում է ավետարանը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Իրականում Հիսուս փոքր-ինչ առեղծվածային էր իր ինքնության հարցում, այնպես չէ՞,– հարցրի, երբ Ուիդրինգտոնն իր աթոռն իմ դիմաց դրեց: — Նա Իրեն ուղղակիորեն չէր անվանում Մեսիա կամ Աստծո Որդի և խուսափում էր նման պնդումներից: Ինչո՞ւ, որովհետև Իր մասին չէ՞ր մտածում այդ հասկացություններով, թե՞ այլ պատճառներ ուներ:

— Ո՛չ, պատճառն այն չէ, որ իր մասին այդ եզրույթներով չէր մտածում,– ասաց Ուիդրինգտոնը՝ հարմարավետ նստելով ու ոտքը ոտքին գցելով: — Պարզապես եթե Նա ուղղակի հայտարարեր՝ «Բարև՛, ժողովուրդ, ես Աստված եմ», հրեաները դա կընդունեին որպես «Ես Յահվեն եմ»: Չէ՞ որ այդ օրերին դեռ պատկերացում չկար Երրորդության մասին: Մարդիկ ճանաչում էին միայն Հայր Աստծուն, որին անվանում էին Յահվե, այլ ոչ Որդի Աստծուն կամ Սուրբ Հոգի Աստծուն: Եվ եթե որևէ մեկն իրեն Աստված անվաներ, դա կընկալվեր որպես ուղղակի սրբապղծություն, և Հիսուս չէր կարողանա մարդկանց փոխանցել Իր ուսմունքը:

Բազմաթիվ ակնկալիքներ կային, թե ինչպիսին պիտի լինի Մեսիան*, իսկ Հիսուս չէր ուզում, որ իրեն խցկեն ինչ-որ պատկերացումների շրջանակի մեջ: Հետևաբար, շատ զգույշ էր Իր հրապարակային խոսքում: Ինչպես էր շփվում Իր աշակերտների հետ, նեղ շրջանակում՝ առանձին պատմություն է, բայց ավետարանները մեզ հիմնականում պատմում են, թե ինչ էր անում Նա հրապարակավ:

Ամենավաղ վկայությունները

1977-ին անգլիացի աստվածաբան Ջոն Հիքը և նրա մի քանի համախոհներ հրատարակեցին մի գիրք, որը բանավեճերի փոթորիկ առաջացրեց: Հեղինակները պնդում էին, որ Հիսուս ամենևին էլ իրեն չի համարել Մեսիա և մարմնավորված Աստված: Այս գաղափարներն իբր առաջացել են ավելի ուշ և ամրագրվել են ավետարաններում, այդ պատճառով այժմ հավատում ենք, որ Հիսուս Ինքն Իրեն Աստված է անվանել:

---

* Հին Կտակարանի մարգարեները վկայել են Մեսիայի գալստյան մասին: Նա Դավիթ թագավորի հետնորդն էր և պետք է ազատեր Իր ժողովրդին:

թվայնացրել է 1915.info կայքը

Ցանկանալով պարզել՝ այդ պնդումները ճշմարիտ են, Ուիդրինգտոնը «պեղեց» Հիսուսի մասին ամենավաղ վկայությունները, որոնք հայտնվել էին այն ժամանակ, երբ նրա կերպարը դեռ չէր կարող պատվել առասպելներով: Նա գտավ փաստեր, որոնք թույլ են տալիս վստահորեն դատել, թե ինչպես էր Հիսուս ընկալում Ինքն Իրեն, և ես ցանկանում էի իմանալ նրա բացահայտումները:

— Ո՞վ էր Հիսուս համարում իրեն՝ պայմանավորված այլ մարդկանց հետ Նրա հարաբերություններով:

Ուիդրինգտոնը մի պահ մտածեց, ապա պատասխանեց.

— Ուշադրություն դարձրեք առաքյալների հետ Նրա հարաբերություններին: Հիսուս ուներ 12 աշակերտ, բայց նկատեք, որ Ինքը 12-ից մեկը չէր:

Դա կարող է աննշան դետալ թվալ, թեև Ուիդրինգտոնն ասաց, որ էական է:

— Եթե 12-ը ներկայացնում են վերականգնված Իսրայելը, ո՞րն է Հիսուսի տեղը այստեղ,– հարցրեց: — Նա պարզապես Իսրայելի մասը չէ, վերածընված ժողովրդի ներկայացուցիչը չէ, Նա է, ով ստեղծում, ձևավորում է այս ժողովրդին, ճիշտ ինչպես Աստված Հին Կտակարանում ընտրում է իր ժողովրդին ու հաստատում Իսրայելի 12 ցեղերը: Ահա նշան, որը Հիսուս ինքն է մտածել:

Մեկ այլ նշան, ըստ Ուիդրինգտոնի, կարելի է տեսնել Հովհաննես Մկրտչի նկատմամբ Հիսուսի վերաբերմունքում:

— Հիսուս նրան բարձր գնահատեց բոլոր մահկանացուներից. «Կանանցից ծնվածներից Հովհաննեսն ամենամեծն է»: Այդ ասելով հանդերձ՝ ավելի է խորանում ծառայության մեջ, քան Մկրտիչը, օրինակ, հրաշքներ գործելով: Այսպիսով, ի՞նչ էր մտածում Հիսուս Իր մասին:

Կրոնական առաջնորդների հետ նրա հարաբերությունը թերևս ամենաակնհայտն է: Հիսուս անում է այն իսկապես արմատական պնդումը, որ մարդուն պղծում է ոչ թե այն, ինչ նրա բերանն է մտնում, այլ այն, ինչ նրա սրտից է դուրս գալիս: Այս հայտարարությունը խորտակում է կրոնական կյանքի հիմքերը, հակասում Հին Կտակարանի Ղևտական գրքի հսկայական շերտի՝ մաքրության պահպանման իր բծախնդիր կանոններով: Փարիսեցիները վրդովված էին: Նրանք ուզում էին, որ ամեն ինչ մնար այնպես, ինչպես կար, բայց Հիսուս ասաց, որ Աստված նոր, այլ ծրագրեր ունի: Մենք պիտի հարցնենք՝ ո՞վ կարող է համարել, որ իշխանություն ունի

թվայնացրել է 1915.info կայքը

մի կողմ դնելու Աստծո ներշնչած հրեական սուրբ գրություններն ու դրանք փոխարինելու իր սեփական ուսմունքով:

Իսկ նրա հարաբերությունները, եթե կարելի է այդպես անվանել, հռոմեական իշխանությունների՞ հետ: Պիտի հարցնենք, թե ինչու խաչեցին Նրան: Եթե Նա պարզապես անվնաս իմաստուն էր, որը սիրուն, փոքրիկ առակներ է պատմում, ինչպե՞ս հայտնվեց խաչի վրա, հատկապես Պասեքի ժամանակ, երբ հրեաները ներում էին միմյանց և միայն բարիք մաղթում: Ինչու էր նրա գլխավերևում գտնվող տախտակի վրա գրված «Հրեաների թագավոր»:

Ուիդրինգտոնը թույլ տվեց, որ վերջին դիտարկումն օդում կախված մնա, նախքան ինքն էլ կտար բացատրությունը:

— Կա՛մ Հիսուս բանավոր արել է այդ պնդումը,– ասաց,– կա՛մ ակնհայտ է, որ ինչ-որ մեկը համարել է, որ արել է:

Աստծո զորությամբ

Թեև Հիսուսի հարաբերություններն ուրիշների հետ լույս են սփռում այն հարցի վրա, թե Ով էր Նա Իր կարծիքով, այնուամենայնիվ, ըստ Ուիդրինգտոնի, Հիսուսի գործերը, հատկապես հրաշքները, լրացուցիչ պատկերացում են տալիս այդ մասին: Ես ձեռքս բարձրացրի, որ ընդհատեմ նրան:

— Չե՞ք ուզում ասել, որ քանի որ Նա հրաշքներ է գործել, նշանակում է կարծում էր, թե Աստված է: Ավելի ուշ Նրա աշակերտները հետևելով Նրան նույնպես հրաշքներ գործեցին, բայց բնավ չէին պնդում, որ աստվածություն են:

— Կարևոր չէ, որ Նա հրաշքներ է գործել,– պատասխանեց Ուիդրինգտոնը,– կարևոր է, թե ինչպես է մեկնաբանում իր հրաշքները:

— Ի՞նչ նկատի ունեք,– հարցրի:

— Հիսուս ասում է. «Եթե ես Աստծո զորությամբ եմ դևեր հանում, ուրեմն Աստծո արքայությունը հասել է»[90]: Նա նման չէ այլ հրաշագործների: Անկախ նրանից, թե որքան զարմանալի բաներ են անում նրանք, կյանքը շարունակվում է սովորականի պես: Մինչդեռ Հիսուսի համար Իր կատարած հրաշքներն Աստծո արքայության մոտենալու նշան էին, նախանշան, թե

թվայնացրել է 1915.info կայքը

ինչպիսին է լինելու Աստծո արքայությունը: Ու դա առանձնացնում է Հիսուսին, դրանով է Նա տարբերվում մյուսներից:

Կրկին ընդհատեցի:

— Մի փոքր մանրամասնեք: Ինչպե՞ս է դա առանձնացնում նրան:

— Հիսուս համարում է, որ Իր հրաշքներն աննախադեպ ինչ-որ բան են իրագործում՝ Աստծո տիրապետության գալուստը,– պատասխանեց Ուիդրինգտոնը: — Նա Ինքն Իրեն չի համարում պարզապես հրաշագործ, այլ Ինքն Իրեն տեսնում է որպես Մեկը, Որի մեջ ու Որի միջոցով Աստծո խոստումներն են կատարվում: Իսկ դա գերազանցության շատ թափանցիկ քողարկված պնդում է:

Գլխով արի: Հիմա նրա միտքն ինձ հասկանալի դարձավ: Բայց որպեսզի ավելի լավ հասկանամ, թե Ով է Հիսուս Իր պատկերացմամբ, որոշեցի դիմել Իր խոսքերին:

— Հիսուսի հետևորդները նրան րաբունի կամ րաբբի էին անվանում,– ասացի: — Սա չի՞ ենթադրում, որ նա պարզապես ուսուցանում էր մարդկանց, ինչպես Իր դարաշրջանի մյուս իմաստունները:

Ուիդրինգտոնը քմծիծաղ տվեց:

— Իրականում,– ասաց,– Հիսուս ուսուցանում էր արմատականորեն նոր եղանակով: Նա իր խոսքը սկսում էր «Ճշմարիտ եմ ասում ձեզ» արտահայտությամբ, որը նշանակում էր «նախապես երդվում եմ, որ ինչ հիմա ասելու եմ, ճշմարտություն է»: Նման բան նախկինում ոչ ոք չէր լսել, դա իսկական հեղափոխություն էր մտածողության մեջ:

— Ինչպե՞ս,– զարմացա:

— Հուդայականության օրենքների համաձայն՝ անհրաժեշտ էր երկու ականատեսի վկայություն՝ հաստատելու համար, որ մարդը ճշմարտությունն է ասում: Ականատես Ա-ն պետք է հաստատեր ականատես Բ-ի վկայությունն ու հակառակը: Բայց Հիսուս հավաստում է սեփական խոսքերի ճշմարտությունը: Նա հաստատում է Իր ուսմունքը ոչ թե ուրիշի, այլ Իր հեղինակությամբ: Ուրեմն ահա մեկը, որը համարում է, որ Իրեն իշխանություն է տրվել ի վերուստ և ավելի մեծ իշխանություն, քան այն, ինչ ունեին Հին Կտակարանի մարգարեները: Նա հավատում էր, որ Իրեն տրվել է ոչ միայն աստվածային ներշնչանք, ինչպես Դավիթ թագավորին, այլև աստվածային իշխանություն, դրա հետ մեկտեղ՝ Աստծո անունից խոսելու իրավունք:

թվայնացրել է 1915.info կայքը

Բայց Հիսուս սկսում էր Իր խոսքը ոչ միայն «ճշմարիտ է» արտահայտությամբ: Դիմելով Աստծուն՝ Նրան անվանում էր Աբբա, այսինքն՝ Հայր:

— Դա մեզ ի՞նչ է ասում այն մասին, թե Հիսուս Իրեն ով էր համարում,– հարցրի:

— «Աբբա» բառը նաև հոր և որդու հարաբերությունների մտերմության և ջերմության իմաստն է արտահայտում,– ասաց Ուիդրինգտոնը: — Հետաքրքրական է, որ վաղ հուդայականության ժամանակ աշակերտներն այդպես էին դիմում իրենց սիրելի ուսուցչին: Բայց Հիսուս այդ բառով դիմում է Աստծուն, ու, որքան ինձ հայտնի է, Հիսուսից ու Նրա հետևորդներից բացի, ոչ ոք Աստծուն այդ կերպ չէր դիմում:

Խնդրեցի Ուիդրինգտոնին բացատրել, թե ինչու է դա կարևոր համարում: Ի պատասխան ասաց.

— Հիսուսի ժամանակ հրեաների շրջանում ընդունված չէր բացահայտ արտասանել Աստծո անունը: Այդ անունից ավելի սուրբ ու վեհ բառ չկար, մարդիկ դա արտասանում էին չափազանց հազվադեպ, սրտի թրթիռով, վախենալով ասածի մեջ վրիպել: Աստծո մասին խոսում էին երրորդ դեմքով, օրինակ՝ «Սուրբը, օրհնյալ լինի Նա», բայց ոչ ոք չէր ասում Նրա անունը, չէր դիմում անձամբ Նրան:

— Իսկ «Աբբան» անձնական՞ դիմելաձև է,– հարցրի:

— Ավելի քան,– պատասխանեց: — Դա քնքշանք արտահայտող, փաղաքշական բառ է, որով, օրինակ, երեխան դիմում է հորը. «Հայրի՛կ, սիրելի՛ս, ի՞նչ կկամենաս, որ անեմ»:

Բայց ես ակնհայտ անհետևողականություն նկատեցի:

— Մի վայրկյան սպասեք: Հիսուս, աղոթելով առ Աստված, նրան անվանում էր Աբբա: Բայց դա նշանակո՞ւմ է, որ Նա իրեն Աստված էր համարում, որովհետև սովորեցնում էր Իր աշակերտներին միևնույն եզրույթը կիրառել իրենց աղոթքներում, իսկ նրանք իրենց Աստված չէին համարում:

— Կարևորը հետևյալն է,– պատասխանեց Ուիդրինգտոնը,– քանի որ Հիսուս Աստծուն Աբբա է անվանում, նշանակում է, որ Նա Իր նախաձեռնությամբ նոր հարաբերությունների մեջ է մտնում Աստծո հետ, որպիսին նախկինում անհասանելի էր: Հարցն այն է, թե Ով կարող է փոխել Աստծո հետ հարաբերվելու պայմանները: Ի՞նչ տեսակ անձը կարող է Աստծո հետ Նոր Ուխտի հարաբերություն նախաձեռնել:

Նրա տարբերակումն ինձ հասկանալի էր:

թվայնացրել է 1915.info կայքը

— Այսինքն, կարծում եք, որ այն փաստը, որ Հիսուս գործածել է «Աբբա» բառը, իսկապես կարևոր է:

— Չափազանց կարևոր է,– հաստատեց: — Դա ենթադրում է, որ Հիսուս Աստծո հետ մտերմական հարաբերություն ուներ, ինչն աներևակայելի էր իր ժամանակի հուդայականության մեջ: Բայց ահա թե ինչն է գլխավորը: Հիսուս ուսուցանում է, որ Աստծո հետ նման հարաբերություններ, որոնցում Աստված Աբբա է, հնարավոր է միայն Նրա՝ Հիսուսի միջոցով. «Ոչ ոք չի գա Հոր մոտ, եթե ոչ Ինձանով»: Այս արտահայտությունն ավելի քան հասկանալի բացատրում է մեզ, թե Ով է Նա Իրեն համարում:

Ուիդրինգտոնը սկսեց ևս մեկ կարևոր նշան ավելացնել, որ Հիսուս մեկ անգամ չէ, որ Իրեն անվանել է «Մարդու Որդի», բայց նրան տեղեկացրի, որ նախորդ մասնագետներից մեկը՝ Կրեյգ Բլոմբերգը, արդեն բացատրել է, որ դա հղում է Դանիել 7-ին: Այս եզրույթը, համաձայնեց Ուիդրինգտոնը, չափազանց կարևոր է և թույլ է տալիս մեզ հասկանալ, որ Հիսուս գիտակցում էր Իր մեսիական դերն ու այնկողմնային էությունը:

Լռեցի՝ փորձելով ի մի բերել Ուիդրինգտոնի ասածները: Հրաշքները, որ գործեց Հիսուս, Նրա հարաբերությունները մարդկանց հետ, Նրա խոսքերը հստակ տեսանելի են դարձնում Նրա վերաբերմունքն Ինքն Իրեն և Իր դերին: Ամենավաղ վկայությունները Նրա մասին անվերապահորեն հաստատում են, որ Հիսուս Իրեն համարում էր ավելին, քան Հրաշագործ, ավելին, քան Ուսուցիչ, ավելին, քան Մարգարե: Փաստերն առատ էին եզրակացնելու համար, որ Նա տեղյակ էր Իր իշխանության և Իր առաքելության մասին, բայց որքա՞ն արմատական էր այդ ինքնագիտակցումը:

Հովհաննես. Հիսուսի դիմանկարը

Հովհաննեսի ավետարանի առաջին տողերում ավետարանիչը պարզ, ոչ երկիմաստ, միաժամանակ վեհ խոսքով համարձակորեն պնդում է Հիսուսի աստվածությունը:

«Սկզբից էր Բանը, և Բանն Աստծո մոտ էր և Բանն Աստված էր: Նա սկզբից Աստծո մոտ էր: Ամեն ինչ Նրանով եղավ, և առանց Նրա չեղավ ոչինչ, որ եղել է...Եվ Բանը մարմին դարձավ ու բնակվեց մեր մեջ, և տեսանք

նրա փառքը, փառք, որ Հայրն է տալիս Միածնին, լի շնորհով ու ճշմարտությամբ»:

Հովհաննես 1:1–3, 14

Հիշում եմ՝ ինչպես ինձ ապշեցրին այս արքայական խոսքերը, երբ առաջին անգամ կարդացի Հովհաննեսի ավետարանը: Ինքս ինձ հարցրի. «Հետաքրքիր է, ի՞նչ կասեր Հիսուս, եթե կարդար Հովհաննեսի խոսքերն իր մասին: Թերևս սարսափած հետ կքաշվեր ու կասեր. «Հովհաննեսն ինձ լիովին սխալ է հասկացել: Զարդարել ու առասպելաբանել է այն աստիճան, որ նույնիսկ ինքս ինձ չեմ ճանաչում»: Թե՞ հավանությամբ գլխով կաներ ու կասեր. «Այո, այդ ամենն եմ ու նույնիսկ ավելին»:

Հետագայում կարդացի գիտնական Ռեյմոնդ Բրաունի խոսքերը: Նա սեփական եզրակացությունն էր արել. «Կարող եմ համաձայնել այն թեզի հետ, որ եթե Հիսուս... կարդացած լիներ Հովհաննեսի ավետարանը, կպարզեր, որ այն միանգամայն համարժեք արտահայտում է Իր բնույթը»[91]:

Իհարկե, չհապաղեցի Ուիդրինգտոնին հարցնել, թե համաձա՞յն է Բրաունի գնահատականին. նա մի ամբողջ կյանք էր անցկացրել՝ վերլուծելով Հիսուսի ինքնաընկալմանը վերաբերող գիտական մանրամասները:

— Այո՛, համաձայն եմ,– առանց վարանելու պատասխանեց նա: — Ակնհայտ է, որ իրավացի է: Իհարկե, Հովհաննեսը սեփական տեսլականը բերեց Հիսուսի դիմանկարին, բայց կարծում եմ, որ սա Հիսուսի իրական պատկերն է, որպես պատմական կերպար: Եվ ահա, թե ինչ կավելացնեմ: Նույնիսկ եթե հաշվի չառնենք Հովհաննեսի ավետարանը, միևնույն է, մյուս երեք ավետարանները մեզ չնչին պատճառ չեն տալիս կասկածելու, որ Հիսուս Մեսիան է:

Անմիջապես հիշեցի Մատթեոսում գրառված հայտնի զրույցը, որում Հիսուս աշակերտներին հարցնում է. «Ի՞նչ եք ասում իմ մասին, ո՞վ եմ»: Եվ Պետրոսն առանց վարանելու պատասխանում է. «Դու Քրիստոսն ես, կենդանի Աստծո Որդին»: Հիսուս չի խուսափում թեմայից, այլ հաստատում է Պետրոսի իրավացիությունը. «Երանի քեզ, Սիմո՛ն, Հովնանի՛ որդի, որովհետև ոչ թե մարդիկ հայտնեցին քեզ դա, այլ իմ Հայրը, որ երկնքում է» (տե՛ս Մատթեոս 16:15–17):

թվայնացրել է 1915.info կայքը

Չնայած դրան, Հիսուսի որոշ հայտնի պատկերումներ, օրինակ՝ «Հիսուսի վերջին գայթակղությունը» ֆիլմում, նրան ներկայացնում են հիմնականում որպես իր ինքնության ու առաքելության մեջ անհաստատ, անորոշությամբ ու տրտմությամբ ծանրաբեռնված:

— Կամ որևէ փաստ,– հարցրի Ուիդրինգտոնին,– որ Հիսուս երբևէ ինքնության ճգնաժամ է ունեցել:

— Ինքնության ճգնաժամ՝ ոչ, թեև կարծում եմ, որ ինքնության հաստատման պահեր ունեցել է,– պատասխանեց պրոֆեսորը: — Նրա մկրտության, գայթակղության, պայծառակերպության ժամանակ, Գեթսեմանի պարտեզում, երբ Աստված Հիսուսին տվեց Իր էության և Իր առաքելության հաստատումը: Օրինակ, կարծում եմ, պատահական չէ, որ նրա ծառայությունը սկսվում է միայն մկրտության պահից, երբ Նա լսում է Աստծո ձայնը երկնքից, որն ասում է. «Նա է իմ սիրելի որդին, որին հավանեցի»:

— Ո՞րն էր Նա համարում Իր առաքելությունը:

— Նա իր գործն էր համարում Աստծո ժողովրդին ազատելը, ուրեմն նրա առաքելությունն ուղղված էր Իսրայելին:

— Հատկապես Իսրայելի՞ն,– ընդգծեցի ես:

— Այո՛, ճիշտ է,– ասաց Ուիդրինգտոնը: — Շատ քիչ փաստեր կան, որ Նրա ծառայությունը տարածվել է հեթանոսների վրա, դա արդեն եկեղեցու առաքելությունն էր: Հասկանում եք, մարգարեների խոստումներն ուղղված էին Իսրայելի ժողովրդին, ու հենց Իսրայելի ժողովրդին էր, որ Մեսիան եկավ:

Ես և Հայրը մեկ ենք

Ուիլյամ Լեյն Կրեյգը «Խելամիտ հավատ» վերնագրով իր գրքում հիմնավոր փաստերով ցույց է տալիս, որ խաչելությունից հետո առաջին 20 տարում արդեն ձևավորվել է լիարժեք քրիստոսաբանություն, որը Հիսուսին մարմնավոր Աստված էր հռչակում: Իսկ եկեղեցու պատմության մասնագետ Յարոսլավ Պելիկանը նշում է, որ ամենավաղ քրիստոնեական քարոզը, քրիստոնյա նահատակի ամենահին պատմությունն ու ամենահին պատարագային աղոթքը (1 Կորնթ. 16:22) Հիսուսին հիշատակում են որպես Տեր ու Աստված: Պելիկանը գրում է. «Ակնհայտ է, որ դա այն ուղերձն

էր, որին եկեղեցին հավատում էր, ու որը սովորեցնում էր, որ «Աստված» Հիսուս Քրիստոսի պատշաճ անունն է»[92]:

Սա նկատի առնելով՝ Ուիդրինգտոնին հարցրի.

— Ի՞նչ եք կարծում, այսպիսի քրիստոսաբանություն կառաջանա՞ր հատկապես այդքան վաղ, եթե Հիսուս Ինքն Իրեն Աստված և Մեսիա չհամարեր:

— Ոչ,– խիստ պատասխանեց Ուիդրինգտոնը,– եթե միայն պատրաստ չեք պնդել, որ աշակերտները մոռացել են, թե ինչպիսին էր պատմական Հիսուս, ու ոչ մի կապ չունեն այն ավանդույթների հետ, որոնք սկսում են հայտնվել նրա մահից 20 տարի անց: Անկեղծ եմ ասում, որպես պատմաբան, հարցի նման ձևակերպումն ինձ անհեթեթ է թվում:

Պատմության մեջ, ավելացրեց նա, ամեն ինչ հնարավոր է, բայց ամեն հնարավոր չէ, որ հավասարապես հավանական է:

— Հավանական՞ն է, օրինակ,– հարցրեց նա,– որ նման միտք ծագի օդից, երբ Խաչելությունից ընդամենը 20 տարի էր անցել, և մարդիկ, որոնք տեսել և հիշում էին Հիսուսին, դեռ ողջ էին: Որպես պատմական վարկած, դա անհավանական եմ համարում: Հարցն այն է, թե ինչ պատահեց այդ 20 տարում, որ փոխեց այն աշակերտների միտքը, որոնք ժխտել էին, չէին հնազանդվել ու լքել էին Հիսուսին: Ակնհայտ է, որ այս մարդիկ զգացին նույնը, ինչ Հիսուս ապրեց մկրտության ժամանակ. նրանք ստացան հաստատում, որ Հիսուսն այն էր, ինչ հուսացել էին, որ է:

Եվ հատկապես ո՞վ էր նա: Մեր զրույցի ժամանակը սպառվում էր: Ուզում էի, որ Ուիդրինգտոնն ամփոփեր իր բոլոր հետազոտություններն ու եզրակացություն աներ այն մասին, թե Հիսուս Իրեն ով էր համարում: Հարցը տվեցի, հետ նստեցի ու թույլ տվեցի, որ շարադրի, ինչն էլ արեց պերճախոս ու համոզմունքով:

— Հիսուս կարծում էր, թե Ինքը Նա է, որին Աստված ուղարկեց Երկիր մարդկության ամբողջական և վերջնական փրկության համար: Նա գիտեր, որ Աստված ընտրել է իրեն այս առաքելության համար, օժտել է զորությամբ և իշխանությամբ: Նա խոսում էր Աստծո անունից: Այսպիսով, Հիսուսի խոսքերն Աստծո խոսքերն են, Հիսուսի գործերը՝ Աստծո գործերը: Հրեական ավանդույթի համաձայն՝ մարդու գործակիցը նույնն է, ինչ ինքը»: Հիշե՛ք, թե ինչպես Հիսուս ուղարկում էր իր աշակերտներին ու ասում. «Ինչ ձեզ անում են, ինձ են անում»: Ամուր կապ կար մարդու և իր գործակցի միջև, որին նա առաքելության էր ուղարկում: Հիսուս հա-

թվայնացրել է 1915.info կայքը

վատում էր, որ աստվածային առաքելություն ունի, ու այդ առաքելությունն Աստծո ժողովրդին փրկելն է: Ենթատեքստն այն էր, որ Աստծո ժողովուրդը մոլորված է, ու որ Աստված պիտի ինչ-որ բան անի, ինչպես միշտ արել է. միջամտի ու նրանց վերադարձնի ճիշտ ուղի: Բայց այս անգամ տարբերություն կար: Սա վերջին անգամն էր: Վերջին հնարավորությունը:

Հիսուս հավատում էր, որ Աստծո Որդին է, Աստծո Օծյալը: Այո՛, հավատում էր: Իրեն համարում էր Մարդու Որդի: Այո՛: Իրեն համարում էր Փրկիչ: Այո՛, իրեն այդպես էր ընկալում: Հավատում էր, որ Աստծուց փոքր որևէ մեկը կարող է փրկել աշխարհը: Ո՛չ, չեմ կարծում, թե հավատում էր: Ու ահա թե որտեղ է պարադոքսը, որքան հնարավոր է, արտառոց դառնում: Եղանակը, որով Աստված պատրաստվում էր փրկել աշխարհը, նրա Որդու մեռնելն էր: Բոլոր մարդկային գործերից ամենամարդկայինը՝ մեռնելը:

Բայց Աստված, իր աստվածային բնույթով, չի մեռնում: Ուրեմն ինչպե՞ս էր անելու սա: Ինչպե՞ս էր Աստված լինելու մարդկային ցեղի Փրկիչը: Նա այդ հանձնառությունը կատարելու համար պիտի գար որպես մարդ արարած: Մարկոս 10:45-ում Հիսուս ասում է. «Ես չեկա ծառայություն ընդունելու, այլ ծառայելու և իմ կյանքը որպես փրկագին տալու շատերի համար»: Ի՞նչ է սա՝ մեծամոլության բարձրագույն տեսա՞կ, թե՞ Նրա հավատի բարձրագույն դրսևորում: Նա ասել է. «Ես ու Հայրը մեկ ենք»[93]: Այլ խոսքով, Ես իշխանություն ունեմ խոսելու Հոր փոխարեն, իշխանություն ունեմ գործելու Հոր փոխարեն, եթե Ինձ մերժեք, մերժած կլինեք Հորը: Նույնիսկ եթե մի կողմ դնենք Հովհաննեսի ավետարանն ու կարդանք միայն համատես ավետարանները, միևնույն է, այս եզրակացության ենք գալու: Եզրակացությունը, որին Հիսուս կառաջնորդեր մեզ, եթե Աստվածաշնչի ուսումնասիրություն անեինք ու նրան այդ հարցը տայինք:

Հարցնենք ինքներս մեզ՝ ինչո՞ւ առաջին դարի այլ հրեայի միլիոնավոր հետևորդներ այսօր չկան: Ինչո՞ւ քրիստոնեություն և ոչ թե, ասենք, Հովհաննես Մկրտչի շարժում: Ինչո՞ւ այդ դարաշրջանի բոլոր նշանավոր պատմական դեմքերից, այդ թվում՝ հռոմեական կայսրերից, միայն Հիսուսին են մինչև օրս երկրպագում, մինչդեռ մյուսները փոշիացել են պատմության մեջ:

Որովհետև Հիսուս՝ պատմական Հիսուս, նաև կենդանի Տերն է: Ահա թե ինչու: Մյուսները վաղուց անցել-մոռացվել են, իսկ Նա հիմա էլ մեզ հետ է:

թվայնացրել է 1915.info կայքը

Հենց Աստծո տեղում

Շատ գիտնականներ, որոնք մանրամասն ուսումնասիրել են Հիսուսի մասին ամենավաղ փաստերը, հանգել են նույն եզրակացություններին, ինչ Ուիդրինգտոնը: Ահա թե ինչ է գրում Կրեյգը. «Նա մի մարդ էր, որն իրեն համարում էր Աստծո Որդի, որը պնդում էր, որ գործում ու խոսում է աստվածային հեղինակությամբ, որն իրեն համարում էր հրաշագործ ու հավատում էր, որ յուրաքանչյուր մարդու անմահությունը պայմանավորված է նրանով՝ հավատո՞ւմ է Նրան, թե՞ ոչ»[94]:

Այնուհետև Կրեյգն իսկապես բացառիկ հայտարարություն է անում. «Հիսուս գիտեր, որ Ինքը Քրիստոսն է. դա ակնհայտ է Նրա ասույթների 20 տոկոսից, որոնց իսկությունը ճանաչում են նույնիսկ «Հիսուսի սեմինարի» անդամները»[95]:

Աստվածաբան Ռոյս Գորդոն Գրունլերը ևս համաձայն է Կրեյգի հետ. «Հիսուս մտադիր էր կանգնել հենց Աստծո տեղում, և դրա համար կան լիովին համոզիչ փաստեր»[96]:

Հիսուսի պնդումն այնքան արտառոց է, ասում է Կրեյգը, որ անխուսափելիորեն առաջ է բերում նրա հոգեկան առողջության հարցը: Նա նշում է, որ Ջեյմս Դունը, ավարտելով իր հիմնարար ուսումնասիրությունն այս հարցի շուրջ, ստիպված է եղել տալ մի վերջին հարց, որը չի կարելի անտեսել. Հիսուս խելագա՞ր էր[97]:

Լեքսինգտոնի օդանավակայանում Չիկագո թռիչքի սպասելիս, մետաղադրամներ գցեցի հեռախոս-ավտոմատի մեջ ու զանգեցի հոգեբանության առաջատար մասնագետներից մեկին, որ հարցազրույցի համար հանդիպում նշանակեմ:

Պարզելու ժամանակն էր:

Քննարկումներ

Հարցեր խորհրդածելու կամ խմբային պարապմունքի համար

1. Ի՞նչ եք կարծում, ի՞նչ պատճառներով էր Հիսուս խուսափում հրապարակավ բացահայտել, թե ինքն ով է: Ինչպե՞ս կարող էր Նրա աստվածության վաղ բացահայտումը վնասել Նրա առաքելությանը:

թվայնացրել է 1915.info կայքը

2. Ի՞նչ դժվարությունների ենք հանդիպում, երբ փորձում ենք պարզել, թե այս կամ այն պատմական անձն ինչ համարում ուներ իր մասին: Ի՞նչը կարող է լույս սփռել այս հարցին: Համոզի՞չ են, թե ոչ Ուիդրինգտոնի առաջարկած նշաններն այն հարցում, որ Հիսուս Իրեն Աստված ու Փրկիչ է համարում:
3. Հիսուս իր հետևորդներին սովորեցնում էր Աստծուն դիմել «Հայր մեր» կամ «Աբբա» բառերով: Ի՞նչ է սա ասում Հոր հետ Հիսուսի հարաբերության մասին: Ձեզ գրավո՞ւմ են այդ տեսակ հարաբերությունները: Ինչո՞ւ:

թվայնացրել է 1915.info կայքը

ԳԼՈՒԽ 8

Հոգեբանական փաստեր

Հիսուս խելագար էր, երբ պնդում էր, որ Ինքն Աստծո Որդին է

«Երբ հոգեբանը կամ հոգեբույժը վկայություն է տալիս, պետք է կոնաձև գլխարկ դնի՝ առնվազն 60 սմ բարձրությամբ, արծաթյա աստղերով ու կայծակներով զարդարված: Պարտավոր է կպցնել սպիտակ մորուք՝ առնվազն 45 սմ երկարությամբ, ու իր վկայության վճռորոշ կետերն ընդգծել՝ փայտիկով օդը թրատելով: Ամեն անգամ, նախքան հոգեբանը կամ հոգեբույժը կսկսի իր ցուցմունքը, դատական կատարածուն պետք է անհապաղ մարի դատարանի դահլիճի լույսերն ու երկու հարված հասցնի չինական գոնգին»:

Օրենքի նման բարեփոխում էր 1997-ին առաջարկել Նյու Մեքսիկոյից սենատոր Դունկան Սքոթը՝ կասկած չթողնելով իր վերաբերմունքի վերաբերյալ այն մասնագետների հանդեպ, որոնք վկայություն են տալիս, որ մեղադրյալները հոգեկան հիվանդներ են, հետևաբար օրենքի առաջ պատասխանատու չեն իրենց հանցագործությունների համար: Ակնհայտ է, որ Սքոթի ցինիզմը բաժանում էր նրա գործընկերների մեծ մասը. նրանք քվեարկեցին՝ հավանություն տալով նրա ծաղրական առաջարկին: Կատակը հեռուն գնաց՝ հասնելով Ներկայացուցիչների պալատ, որը, ի վերջո, թույլ չտվեց, որ այն օրենք դառնա[98]:

Ճիշտ է, դատարաններում թերահավատություն կա հոգեբույժների ու հոգեբանների հանդեպ, որոնք եզրակացություն են տալիս մեղադրյալների հոգեկան վիճակի, փաստաբանի հետ նրանց համագործակցության կարողության ու նրա վերաբերյալ, թե նա մեղսունակ է եղել հանցանքը գործելիս: Բայց և այնպես, իրավաբանների մեծ մասն ընդունում է, որ հոգեբույժները քրեական արդարադատության համակարգի համար կարևոր եզրակացություններ են առաջարկում:

Հիշում եմ մի դեպք, երբ մեղմաբարո տնային տնտեսուհին կանգնած էր ամուսնուն սպանելու մեղադրանքի առջև: Առաջին հայացքից չէր տարբերվում որևէ մեկի մորից՝ լավ հագնված, հաճելի, բարյացակամ, այն-

թվայնացրել է 1915.info կայքը

պիսի տեսք ուներ, ասես հենց նոր հարևանությամբ ապրող երեխաների համար թխվածքաբլիթներ էր թխել: Արհամարհանքով վերաբերվեցի, երբ հոգեբանը վկայություն տվեց, որ նա հոգեպես ի վիճակի չէ դատարանի առջև կանգնել:

Հետո ամբաստանյալի փաստաբանը նրան հրավիրեց ցուցմունք տալու: Սկզբում նրա վկայությունը պարզ էր, ողջամիտ ու հասկանալի: Բայց այն աստիճանաբար դառնում էր ավելի ու ավելի արտառոց, մինչ նա հանգիստ ու լրջորեն նկարագրում էր, թե ինչպես են հայտնի անհատներ իրար հաջորդելով նրա վրա հարձակում գործել՝ ներառյալ Դուայթ Էյզենհաուերն ու Նապոլեոնի ուրվականը: Նախքան կավարտեր, դատարանում ոչ ոք չէր կասկածում, որ նա լրիվ կորցրել է իրականության զգացումը: Դատավորը վճռեց նրան հանձնել հոգեբուժական հաստատություն, քանի դեռ չի կարող ցուցմունք տալ:

Արտաքինը կարող է խաբուսիկ լինել: Հոգեբանի խնդիրն է տեսնել, թե ինչ կա արտաքին, երևացող շերտի տակ, ու մեղադրյալի հոգեկան վիճակի մասին եզրակացություններ անել: Դա ճշգրիտ գիտություն չէ, ինչը նշանակում է, որ սխալներ ու նույնիսկ չարաշահումներ կարող են տեղի ունենալ, բայց, ընդհանուր առմամբ, հոգեբանական վկայությունը մեղադրյալների համար կարևոր երաշխիքներ է ապահովում:

Այս ամենն ի՞նչ կապ ունի Հիսուսի հետ: Նախորդ գլխում դոկտոր Բեն Ուիդրինգտոն 3-րդը պատմական ամենավաղ փաստաթղթերով համոզիչ ապացուցեց, որ Հիսուս պնդում էր, որ Ինքը մարմնավորված Աստված է: Բնականաբար, հարց է առաջանում՝ Հիսուս խելագա՞ր էր, երբ անում էր այդ պնդումները: Պատասխանի որոնումներն ինձ տարան Չիկագոյի արվարձան, որտեղ ապրում և աշխատում է ԱՄՆ առաջատար հոգեբաններից մեկը:

7-ՐԴ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Գարի Ռ. Քոլինզ, փիլիսոփայության դոկտոր

Գարի Քոլինզը, որը Տորոնտոյի համալսարանում ստացել է հոգեբանության մագիստրոսի, իսկ Պերդյուի համալսարանում բժշկական հոգեբանության դոկտորի կոչում, մոտ կես դար ուսումնասիրել, դասավանդել

թվայնացրել է 1915.info կայքը

ու գրել է մարդու վարքի մասին: Նա երկու տասնամյակ հոգեբանության պրոֆեսոր է եղել Թրինիթիի ավետարանական աստվածաբանության դպրոցում, այդ ժամանակի մեծ մասը՝ նաև հոգեբանության բաժնի վարիչ:

Եռանդուն, անսահման էներգիայով ու խանդավառությամբ լի Քոլինզը բեղուն հեղինակ է: Գիտական ամսագրերի ու այլ պարբերականների համար մոտ 150 հոդված է գրել ու եղել է Christian Counseling Today-ի* խմբագիրն ու Journal of Psychology and Theology-ի** հեղինակ-խմբագիրը:

Նաև 45 ապշեցուցիչ գիրք է գրել հոգեբանությանն առնչվող թեմաներով, այդ թվում՝ «Հրաշալի միտքը», «Ընտանեկան շոկ», «Կարելի՞ է վստահել հոգեբանությանը» և «Քրիստոնեական խորհրդատվություն. համապարփակ ուղեցույց» գրքերը: Վերջինը քրիստոնյա հոգեբանների համար է և արդեն դարձել է դասագիրք: Ի լրումն, նա գլխավոր խմբագիրն էր 30 հատորով «Քրիստոնեական խորհրդատվության ռեսուրսների», որը գրքերի շարք է հոգեբանների համար:

Քոլինզին հանդիպեցի Քրիստոնյա հոգեբանների ամերիկյան ընկերության շենքում, նրա պայծառ ու զով գրասենյակում. Գարին նախագահն էր այս հասարակական կազմակերպության, որը 15 հազար անդամ ունի: Նա վայելչագեղ տեսք ուներ՝ ալեխառն մազեր, արծաթագույն շրջանակով ակնոց, շագանակագույն, բարձր օձիքով սվիտեր, եղևնաձև նախշերով սպորտային բաճկոն ու մոխրագույն, լայնափողք տաբատ (բայց, կներեք, առանց սրածայր գլխարկի կամ երկար, սպիտակ մորուքի):

Մեր հարցազրույցը սկսեցի՝ ձեռքով ցույց տալով պատուհանից այն կողմ, որտեղ ձյունը մեղմ թափվում էր՝ ծածկելով սոճիները:

— Մի քանի կիլոմետր այն կողմ պետական հոգեբուժարան է,– ասացի,- Եթե այնտեղ գնալու լինեինք, վստահ եմ, կգտնեինք ոմանց, ովքեր պնդում են, որ Աստված են: Կասեինք, որ խելագար են: Հիսուս նույնպես ասել է, որ Աստված է, նա նո՞ւյնպես խելագար էր:

— Եթե կարճ պատասխանն եք ուզում,– քրքիջով ասաց Քոլինզը,– ապա՝ ո՛չ:

---

* «Քրիստոնեական խորհրդատվությունն այսօր», Քրիստոնյա հոգեբանների ամերիկյան ընկերության հրատարակած ամսագիրը

** Հոգեբանության և աստվածաբանության ամսագիր

թվայնացրել է 1915.info կայքը

— Բայց,– պնդեցի,– այս թեման արժանի է մանրամասն վերլուծության: Մասնագետներն ասում են, որ զառանցական խանգարումով տառապող մարդիկ կարող են ժամանակի մեծ մասը ողջամիտ թվալ, բայց հավակնոտ համոզմունքներ ունենալ, որ իրենք գերադաս անհատներ են: Ոմանք կարող են անգամ գրավել հետևորդների, որոնք հավատում են, որ նրանք հանճար են: Գուցե հենց դա է պատահել Հիսուսին:

— Ճիշտ է՝ հոգեբանական խնդիրներ ունեցող մարդիկ հաճախ պնդում են, որ ինչ-որ մեկն են,– պատասխանեց Քոլինզը՝ ձեռքերը գլխի հետևում միացնելով: — Մարդը կարող է իրեն հռչակել Հիսուս, ԱՄՆ նախագահ կամ հայտնի որևէ ուրիշ մեկը, օրինակ՝ հայտնի լրագրող Լի Ստրոբելը: Բայց հոգեբանները չեն նայում միայն նրան, թե մարդն ինչ է ասում: Հետևում են նրա հույզերին, որովհետև խանգարում ունեցող անհատները հաճախ անհարկի ընկճախտ են դրսևորում, կարող են սաստիկ զայրանալ կամ գուցե տառապում են անհանգստությունից: Բայց նայե՛ք Հիսուսին: Նա երբեք անհարկի հույզեր չի դրսևորել: Օրինակ՝ արտասվել է իր ընկեր Ղազարոսի մահվան ժամանակ: Հուզականորեն առողջ անհատի համար դա բնական է:

— Բայց Նա երբեմն բարկանում էր,– հիշեցրի:

— Այո՛, բարկանում էր, բայց դա առողջ զայրույթ էր մարդկանց հանդեպ, որոնք շահագործում էին ճնշվածներին՝ տաճարում իրենց գրպանները լցնելով: Նա անիմաստ չէր չարանում, միայն որովհետև ինչ-որ մեկը զայրացնում էր նրան, դա արդար հակազդեցություն էր անարդարությանը, մարդկանց հանդեպ բացահայտ դաժան վերաբերմունքին: Մարդիկ, որոնք պատրանքների ազդեցության տակ են, հաճախ սխալ են ընկալում շրջապատող աշխարհը: Նրանց թվում է, թե իրենց հետևում են կամ ուզում են բռնել, երբ այդպես չէ: Նրանք իրականության հետ կապը կորցնում են: Սխալ են ընկալում ուրիշների գործողություններն ու նրանց մեղադրում են արարքների մեջ, որ նրանք երբևէ գործելու միտք չեն ունեցել: Մենք Հիսուսի մոտ դա չենք տեսնում: Ակնհայտ է, որ նա իրականության հետ կապը չէր կորցրել, մտագար չէր, թեև իրավամբ հասկանում էր, որ իր շուրջը որոշ իրական վտանգներ կան:

Հոգեբանական դժվարություններով մարդիկ կարող են մտածողության խանգարումներ ունենալ, նրանք չեն կարող տրամաբանական զրույց վարել, սխալ եզրակացություններ են անում, անխոհեմ են: Հիսուսի մոտ

թվայնացրել է 1915.info կայքը

սա չենք տեսնում: Նա խոսում էր հստակ, ազդեցիկ, ճարտար: Խելացի էր ու մարդու բնույթը հասկանում էր միանգամայն ապշեցուցիչ խորաթափանցությամբ:

Մտավոր խանգարումների մի այլ նշան է անհամապատասխան վարքը, օրինակ՝ տարօրինակ հագնվելը կամ ուրիշների հետ սոցիալապես հարաբերվելու անկարողությունը: Հիսուսի վարքը միանգամայն համապատասխանում էր նրան, ինչ կարելի էր ակնկալել, ու նա խորն ու տևական հարաբերություններ ուներ հասարակության տարբեր խավերի մարդկանց լայն բազմազանության հետ:

Նա դադար տվեց, թեև զգում էի, որ դեռ չի ավարտել:

— Ուրիշ ի՞նչ եք նկատում նրա մեջ,– հարցրի՝ մղելով նրան, որ շարունակի:

Քոլինզը պատուհանից դուրս նայեց, գեղեցիկ ու խաղաղ, ձյան սավանով պատված տեսարանին: Երբ սկսեց, ասես հին ընկերոջը վերհիշելիս լիներ:

— Նա բարի էր, բայց թույլ չէր տալիս, որ կարեկցանքը գործելու ազատությունից զրկի իրեն: Նրան ծանոթ չէր մեծամտությունը, թեև հաճախ էր շրջապատվում խանդավառ երկրպագուների ամբոխով: Հավասարակշռությունը պահում էր: Չնայած հաճախ դժվարին կենսակերպին՝ գիտեր, թե ինչ է անում և ուր է գնում, խորապես հոգում էր մարդկանց մասին՝ ներառյալ կանայք ու երեխաները, որոնք այն ժամանակ կարևոր չէին համարվում: Կարողանում էր մարդկանց ընդունել՝ միաժամանակ աչք չփակելով նրանց մեղքի վրա: Նա զգայուն էր յուրաքանչյուրի անձնական կարիքների նմատմամբ:

— Այսպիսով, բժի՛շկ, Ձեր ախտորոշումը,– հարցրի:

— Ընդհանուր առմամբ, ուղղակի նշաններ չեմ տեսնում, որ Հիսուս տառապում էր որևէ հայտնի հոգեկան հիվանդությամբ,– եզրակացրեց նա՝ ժպիտով ավելացնելով,– Նա շատ ավելի առողջ էր, քան իմ ճանաչած որևէ մեկը՝ ես ներառյալ:

Դիվահար է և մոլեգնում է

Այսպիսով, նայելով Հիսուսի կյանքին՝ Նրա մեջ հոգեկան հիվանդության նշաններ չենք տեսնում: Բայց ի՞նչ կասեք մարդկանց մասին, որոնք ան-

թվայնացրել է 1915.info կայքը

միջականորեն էին հաղորդակցվում նրա հետ: Ի՞նչ էին տեսնում նրանք՝ իրենց շատ ավելի մոտ դիտանկյունից:

— Առաջին դարում ապրած մարդկանցից ոմանք բուռն կվիճեին Ձեզ հետ,– նշեցի ես: — Նրանք իսկապես եզրակացրել էին, որ Հիսուս խենթ է: Հովհաննես 10:20-ն ասում է, որ շատ հրեաներ համարում էին, որ նա «դիվահար է ու մոլեգնում է»: Կտրուկ է ասված, չէ՞:

— Այո՛, բայց հոգեբույժը նման ախտորոշում չի անի,– հակադարձեց Քոլինզը: — Նայե՛ք, թե որն է այդ բառերի պատճառը՝ Հիսուսի հուզիչ ու խորը ուսմունքը Բարի Հովիվ լինելու մասին: Նրանք դիմադրում էին, որովհետև իր մասին նրա պնդումները կանոնի իրենց ընկալումից հեռու էին, ոչ թե որովհետև Հիսուս իսկապես հոգեպես անհավասարակշիռ էր: Ու նկատե՛ք, որ նրանց դիտողություններին անմիջապես մարտահրավեր նետեցին ուրիշները, որոնք 21-րդ համարում ասացին. «Նրա ասած խոսքերը դիվահարի խոսքեր չեն. մի՞թե դևը կարո՞ղ է կույրի աչքերը բանալ»:

— Ինչո՞ւ է դա կարևոր,– հարցրի:

— Որովհետև Հիսուս պարզապես իր մասին վրդովեցնող պնդումներ չէր անում: Դրանք հիմնավորում էր կարեկցանքի զարմանահրաշ գործերով, ինչպես կույրերի բժշկությունն էր:

Հասկանում եք, եթե պնդեի, որ Միացյալ Նահանգների նախագահն եմ, խենթություն կլիներ: Կնայեիք ինձ ու նախագահի պաշտոնի ոչ մի հատկանիշ չէիք տեսնի: Ես նախագահի տեսք չէի ունենա: Մարդիկ չէին ընդունի հեղինակությունը: Գաղտնի ծառայության որևէ գործակալ ինձ պահպանելիս չէր լինի: Բայց եթե իրական նախագահը պնդեր, որ նախագահն է, խենթություն չէր լինի, որովհետև նա, իրոք, նախագահն է, ու դա հաստատող բազմաթիվ փաստեր կլինեին: Համանմանորեն, Հիսուս պարզապես չէր պնդում, որ Աստված է, նա դա հիմնավորում էր բժշկության զարմանալի գործերով, բնության հանդեպ իշխանության շշմեցուցիչ դրսևորումներով, արտասովոր ու աննախադեպ ուսուցումով, մարդկանց աստվածային ներըմբռնումով ու, վերջապես, սեփական հարությամբ մեռելներից, ինչը բացարձակապես ոչ ոք չի կարողացել կրկնօրինակել: Այնպես որ Հիսուսի հավակնությունը, որ Աստված է, խենթություն չէր: Ճշմարտությունն էր:

Քոլինզը խոսեց Հիսուսի հրաշքների մասին, և դա ինձ հիշեցրեց այլ առարկություններ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ձեր կարծիքով՝ Հիսուսի հրաշքները հաստատում են, որ Նա Աստծո Որդին է, բայց որոշ մարդիկ այլ կերպ են մտածում: Նրանք ասում են՝ հրաշքներ չեն եղել,– ասացի՝ պայուսակիցս մի գիրք դուրս բերելով: Նրա համար կարդացի սկեպտիկ Չարլզ Թեմփլթոնի բառերը:

«Շատ հիվանդություններ այն ժամանակ, ինչպես հիմա, հոգեսոմատիկ էին ու կարող էին «բուժվել», երբ փոխվում էր տառապողի ընկալումը: Պլացեբոն, որը նշանակել է բժիշկը, որին հիվանդը վստահում է, կարող է բարենպաստ ազդեցություն ունենալ հիվանդի վրա: Նույնն էր նաև հին ժամանակներում. հավատը բուժողի հրաշագործ ունակությունների նկատմամբ կարող էր վերացնել անբարենպաստ ախտանշանները: Յուրաքանչյուր հաջողության հետ բժշկողի համբավն ավելանում էր, ու դրա հետ ավելանում էին նրա հրաշագործ կարողությունները»[99]:

— Գուցե այսպես են բացատրվում բոլոր այն հրաշքները, որ ենթադրաբար հիմնավորում են Հիսուսի՝ Աստծո Որդի լինելու հավակնությունը,– ուղիղ հարցրի ես:

Քոլինզի արձագանքը զարմացրեց ինձ:

— Թեմփլթոնի գրածին առանձնապես չէի առարկի:

— Չէիք առարկի:

— Այնքան էլ չէ: Հնարավոր է, որ Հիսուս երբեմն բուժել է ներշնչումով: Դրանում որևէ տարօրինակ բան չեմ տեսնում: Երբեմն հիվանդության հիմքում հոգեբանական պատճառներ են, և, երբ հիվանդը ձեռք է բերում ապրելու նոր իմաստ, նոր ուղի, կյանքի նոր նպատակ, պարզապես մի կողմ է նետում հիվանդությունը: Դուք խոսում եք պլացեբոյի ներգործության մասին: Եթե հիվանդը կարծում է, որ լավանալու է, շատ հաճախ իսկապես լավանում է: Դա լավ հաստատված բժշկական փաստ է: Երբ մարդիկ գալիս էին Հիսուսի մոտ, հավատում էին, որ նա կարող է բուժել իրենց, դրա համար էլ բուժվում էին: Բայց փաստը մնում է փաստ: Անկախ նրանից, թե ինչպես էր անում դա, Հիսուս իսկապես բուժում էր նրանց: Իհարկե,– արագ ավելացրեց նա,– Հիսուսի բոլոր բժշկությունները դրանով չեն բացատրվում: Հաճախ հոգեսոմատիկ բժշկությունը ժամանակ է պահանջում, Հիսուսի բժշկություններն ակնթարթային էին: Շատ ժամանակ հոգեբանորեն բժշկված մարդկանց ախտանիշները մի քանի օր

թվայնացրել է 1915.info կայքը

անց կրկնվում են, բայց սրա որևէ փաստ չենք տեսնում: Մինչդեռ Հիսուս բուժում էր այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են ամբողջական կուրությունն ու բորոտությունը, որոնց համար հոգեսոմատիկ բացատրությունը գրեթե անհավանական է:

Ավելին, նա մեռելներին կենդանություն էր տալիս, իսկ մահը հոգեծին հիվանդություն չէ: Գումարեք նրա բնության հրաշքները՝ ծովի հանդարտեցումը, ջուրը գինու վերածելը: Ակնհայտ է, որ այս հրաշքների բացատրությունը դուրս է բնական պատճառների սահմաններից:

Դե... գուցե: Սակայն ջուրը գինի դարձնելու մասին Քոլինզի հիշատակումը միտքս բերեց Հիսուսի կատարած զարմանալի հրաշքների մեկ այլ մեկնաբանություն:

Հիպնոսող Հիսուս

Երբևէ բեմի վրա տեսել եք հիպնոսողի, որը ջուր է տալիս ինչ-որ մեկին, ում տրանսի մեջ է գցել, հետո ներշնչում է նրան, թե գինի է խմում: Նրանք շրթունքներն են չպպացնում, գլխապտույտ ունենում, հարբածություն զգում, ասես կում-կում էժան Բորդո են խմում:

Բրիտանացի գրող Յան Ուիլսոնը հարց է բարձրացրել, թե Հիսուս այսպես է Կանայում համոզել հարսանիքի հյուրերին, որ կարասների ջուրը փոխակերպել է լավագույն ֆերմենտավորված խմիչքի:

Իրականում Ուիլսոնը քննարկում է հավանականությունը, որ Հիսուս կարող էր վարպետ հիպնոսող լինել, ինչով կարելի էր բացատրել նրա կյանքի՝ ենթադրաբար գերբնական կողմերը: Օրինակ՝ դևերին հանելը, նրա պայծառակերպումը կարելի էր բացատրել հիպնոսով, որի ժամանակ նրա հետևորդներից երեքը տեսել են նրա դեմքի փայլն ու հագուստի՝ լույսի պես սպիտակ շողալն ու նույնիսկ նրա բժշկությունները: Որպես փաստ, Ուիլսոնը մեջբերում է 16-ամյա տղայի ժամանակակից օրինակը, որի լուրջ մաշկային հիվանդությունն անբացատրելիորեն բուժվել է հիպնոտիկ ներշնչումով:

Իսկ եթե Ղազարոսին Հիսուս ոչ թե հարություն տվեց մեռելներից, այլ դուրս բերեց խորը հիպնոսային տրանսից: Ինչ վերաբերում է Հարությանը,– խորհրդածում էր Ուիլսոնը,– ապա Հիսուս կարող էր ծրագրավորել

(առաքյալների մեջ) հալյուցինացիաներ, որոնց ժամանակ նրանք «տեսնում են» Նրան՝ Իր մահից հետո որոշակի ժամանակահատվածում, որոշակի կանխորոշված հանգամանքներում (հացը կտրելը)[100]: Սրանով, ի դեպ նույնիսկ կարելի է բացատրել նաև խորհրդավոր ավետարանական հիշատակումն այն մասին, որ Հիսուս չկարողացավ շատ հրաշքներ գործել իր հարազատ քաղաքում՝ Նազարեթում: Ուիլսոնը գրում է.

«Հիսուս, որպես հիպնոսող, ձախողվեց հենց այնտեղ, որտեղ պետք է ձախողվեր, ծանոթ մարդկանց շրջանում, որոնք տեսել էին՝ ինչպես է Նա մեծացել, և ճանաչում էին Նրան, երբ սովորական երեխա էր: Հիպնոսողի հաջողությունը մեծապես որոշվում է գաղտնիության և ակնածալից վախի քողածածկույթով, որով նա իրեն շրջապատում է: Մինչդեռ Հիսուսի հարազատ քաղաքում այս բավական էական գործոնները բացակայում էին»[101]:

— Ստիպված եք ընդունել,– ասացի Քոլինզին,– որ սա Հիսուսի հրաշքների բավական հետաքրքիր մեկնաբանություն է:

Քոլինզի դեմքը թերահավատություն էր արտահայտում:

— Ինչպիսի՜ հավատ հիպնոսի նկատմամբ,– բացականչեց: — Դե, ինչ: Թեև դա հետաքրքիր վարկած է, սակայն քննադատության ուղղակի չի դիմանում: Այն լի է թերություններով:

Քոլինզը սկսեց մեկ առ մեկ թվարկել դրանք:

— Առաջին, դժվար է հիպնոսել մարդկանց հսկայական բազմությանը: Բոլորը հավասարապես հիպնոսի ենթակա չեն: Ի՞նչ է սովորաբար անում հիպնոսողը. դիմում է լսարանին ձայնի որոշակի, հանգստացնող տոնայնությամբ ու նայում, թե ովքեր են արձագանքում: Հետո հենց այդ մարդկանց է ընտրում որպես կամավորներ, որովհետև նրանք պատրաստակամ ենթարկվում են հիպնոսի: Մեծ ամբոխի դեպքում այս հնարքը չի գործում: Երբ Հիսուս բազմացրեց հացն ու ձուկը, 5000 վկա կար: Ինչպե՞ս կարող էր նրանց բոլորին հիպնոսել:

Երկրորդ, հիպնոսը սովորաբար չի ազդում այն մարդկանց վրա, որոնք թերահավատ են ու կասկածամիտ: Ուրեմն ինչպե՞ս Հիսուս հիպնոսեց իր եղբայր Հակոբոսին, որը չէր հավատում նրան, բայց հետագայում տեսավ հարություն առած Քրիստոսին: Ինչպե՞ս հիպնոսեց Սողոսին Տարսոնից, որը քրիստոնեության հակառակորդն էր, երբեք նույնիսկ չէր հանդիպել

թվայնացրել է 1915.info կայքը

Հիսուսին և առաջին անգամ տեսավ Նրան միայն հարությունից հետո: Ինչպես հիպնոսեց Թովմասին, որն այնքան թերահավատ էր, որ չէր հավատում հարությանը, մինչև մատները դրեց Հիսուսի ձեռքերի մեխերի անցքերին:

Երրորդ, հարության վերաբերյալ. դատարկ գերեզմանը կարելի՞ է բացատրել հիպնոսով:

— Ենթադրում եմ՝ որևէ մեկը կարող էր պնդել, որ աշակերտներին հիպնոսել են, որ երևակայեն, թե գերեզմանը դատարկ է,– առաջարկեցի ես:

— Նույնիսկ եթե դա հնարավոր լիներ,– պատասխանեց Քոլինզը,– Հիսուս հաստատ չէր կարող հիպնոսել փարիսեցիներին ու հռոմեական իշխանություններին, և նրանք ուրախությամբ ցույց կտային նրա մարմինը, եթե այն գերեզմանում մնացած լիներ: Փաստը, որ չեն արել, ասում է, որ գերեզմանն իսկապես դատարկ էր:

Չորրորդ, նայե՛ք ջուրը գինու փոխակերպելու հրաշքին: Հիսուս երբեք չի դիմել հարսանիքի հյուրերին: Նա անգամ չի ակնարկել ծառաներին, որ ջուրը գինու է փոխակերպվել, ընդամենը պատվիրել է նրանց մի քիչ ջուր տանել սեղանապետին: Նա էր, որ համտեսեց այն ու ասաց, որ գինի է, առանց նախնական հուշումների:

Հինգերորդ, մաշկի բժշկությունը, որի մասին Ուիլսոնը խոսում է, ակնթարթային չէր, չէ՞:

— Իրականում,– ասացի,– Բրիտանական բժշկական ամսագրում ասվում է, որ հիպնոսից հետո հինգ օր պահանջվեց, որպեսզի եղջերամաշկը, որն իխտիոզ են անվանում, թափվի պատանու ձախ թևից, ու ևս մի քանի օր, որ մաշկը սովորական տեսք ստանա: Նրա մարմնի մյուս մասերը բժշկելիս՝ հիպնոսը մի քանի շաբաթվա ընթացքում 50-95 տոկոսով հաջողեց[102]:

— Համեմատե՛ք,– ասաց Քոլինզը,– Հիսուսի հետ, որը Ղուկաս 17-ում տասը բորոտի բժշկեց: Նրանք բժշկվեցին անմիջապես ու 100 տոկոսով: Դա ուղղակի հիպնոսով բացատրելի չէ: Ոչ էլ չորացած ձեռքով մարդու բժշկությունը Մարկոս 3-ում: Անգամ եթե մարդիկ տրանսի մեջ էին և ուղղակի կարծում էին, թե նրա ձեռքը բժշկվել է, ի վերջո, ճշմարտությունը կպարզեին: Հիպնոսը երկար չի տևում: Ի վերջո, ավետարաններն ամեն տեսակ մանրամասներ են արձանագրում Հիսուսի ասածների ու արածների մասին, բայց ոչ մի անգամ նրան չեն պատկերում որևէ բան ասելիս

թվայնացրել է 1915.info կայքը

կամ անելիս, ինչից կարելի էր ենթադրել, որ նա հիպնոսում է մարդկանց: Ես կարող եմ անվերջ շարունակել...

Ծիծաղեցի:

— Ասացի, որ հետաքրքիր բացատրություն է, չասացի, որ համոզիչ է,– նկատեցի: — Այնինչ այսպիսի գաղափարներն առաջ մղելու համար ամբողջ հատորներ են գրվում:

— Ինձ ուղղակի ապշեցնում է,– պատասխանեց Քոլինզը,– թե ինչպես են մարդիկ կառչում ցանկացած բանից՝ փորձելով հերքել Հիսուսի հրաշքները:

Դևեր հանող Հիսուս

Նախքան մեր հարցազրույցն ավարտելն ուզեցի օգտագործել Քոլինզի հոգեբանական գիտելիքը ևս մի բնագավառում, որը թերահավատները մտահոգիչ են համարում:

— Հիսուս էկզորցիստ էր,– նկատեցի: — Նա խոսում էր դևերի հետ ու դրանց հանում մարդկանցից, որոնց մեջ ենթադրաբար բնակվում էին: Բայց իսկապե՞ս խելամիտ է հավատալ, որ չար ոգիները պատասխանատու են որոշ հիվանդությունների ու արտառոց վարքի համար:

Քոլինզն ամենևին չվրդովվեց հարցից:

— Ընդունում եմ դևերի գոյությունը: Սա ուղղակիորեն բխում է իմ աստվածաբանական համոզմունքներից,– պատասխանեց նա: — Մենք ապրում ենք մի հասարակության մեջ, որում շատերը հավատում են հրեշտակներին: Նրանք գիտեն, որ հոգևոր ուժեր գոյություն ունեն, ու շատ դժվար չէ եզրակացնել, որ որոշները կարող են չարամիտ լինել: Երբ Աստծո գործերը կատարվեն, այդ ուժերը կարող են կատաղի դիմադրել նրանց, ու Հիսուսի ժամանակ հավանաբար դա էր կատարվում:

Նկատեցի, որ Քոլինզը հիշատակեց իր աստվածաբանական համոզմունքները, բայց ոչ իր մասնագիտական փորձը:

— Որպես հոգեբան, երբևէ դիվականի հստակ ապացույցներ տեսե՞լ եք,– հարցրի:

— Անձամբ չեմ տեսել, բայց իմ ամբողջ կյանքը չէ, որ անցնում է բուժհաստատություններում,– ասաց: — Բուժաշխատող ընկերներս ասել են, որ երբեմն հանդիպել են, և, հավատացնում եմ, դրանք ամենևին էլ այն

թվայնացրել է 1915.info կայքը

մարդիկ չեն, որոնք հակված են որևէ խնդիր բացատրել որպես չար ոգիների միջամտություն: Ավելի շուտ թերահավատներ են: Հոգեբույժ Մ. Սքոթ Փեքն այդ մասին գրել է իր «Ստի մարդիկ» գրքում[103]:

Նշեցի, որ Յան Ուիլսոնը, ենթադրելով, որ Հիսուս կարող էր հիպնոս կիրառել բուժելու համար մարդկանց, որոնց միայն թվում էր, թե դիվահար են, կտրականապես հայտարարում է, որ ոչ մի «ողջամիտ մարդ» չէր բացատրի նման վիճակը որպես «իսկական դևերի գործ»[104]:

— Մարդիկ հակված են տեսնել այն, ինչ ուզում են տեսնել,– ի պատասխան ասաց Քոլինզը: — Նա, ով ժխտում է գերբնական ուժերի գոյությունը, միշտ բացատրություն կգտնի երկրային պատճառների շրջանակում, թեկուզ այն հեռու լինի ճշմարտությունից: Կշարունակեն դեղամիջոցներ տալ, կշարունակեն թունավորել հիվանդին, բայց նա չի լավանա: Կան դեպքեր, որոնք չեն ենթարկվում սովորական դեղորայքային բուժման կամ հոգեբուժությանը:

— Ի՞նչ եք կարծում, այն դեպքերը, երբ Հիսուս դևերին դուրս է հանում, կարելի՞ է հոգեսոմատիկ բուժման օրինակ համարել,– հարցրի:

— Որոշ դեպքերում, այո՛, բայց, կրկնում եմ, պետք է տեսնել իրադարձությունների ամբողջական պատկերը: Օրինակ՝ այն պատմությունը, երբ Հիսուս, դևերին դուրս հանելով, ուղարկեց խոզերի բոլուկի մեջ, և խոզերը ժայռից ցած թափվեցին: Դա հոգեսոմատիկ դրությո՞ւն էր: Կարծում եմ, որ Հիսուս իսկապես դևերին հանեց, ու կարծում եմ, որ ոմանք դա անում են այսօր: Միաժամանակ, համառ և անզիջում հիվանդության հանդիպելիս, չպետք է հապճեպ եզրակացնել, որ խնդիրն անմաքուր ոգիներն են: Ինչպես ասել է Ք. Ս. Լյուիսը, կան «երկու համարժեք և հակառակ սխալ պատկերացումներ դևերի մասին. մեկը դրանց գոյությանը չհավատալն է, մյուսը՝ հավատալն ու չափազանց անառողջ հետաքրքրություն ունենալը դրանց հանդեպ: Դևերը հավասարապես գոհ են երկու սխալից էլ»[105]:

— Գիտեք, Գարի, այդ գաղափարը կարող է անցնել Քրիստոնյա հոգեբանների ամերիկյան ընկերությունում, բայց աշխարհիկ հոգեբանները դժվար թե համաձայնեն, որ ողջամիտ ու տրամաբանական է հավատալ չար ոգիներին:

Այս խոսքերը, իմ կամքին հակառակ, փոքր-ինչ քամահրական հնչեցին: Մտածեցի, որ Քոլինզը կարող է հարցից վիրավորվել, բայց չվիրավորվեց:

— Հետաքրքիր էր, թե ինչպես են փոխվում ժամանակները,– ասաց մտախոհ: — Ժամանակակից հասարակությունը տարված է «հոգևորությամբ»: Այս բառը կարելի է լսել ամենուր, այն նշանակում է գրեթե ամեն ինչ, բացի գերբնականից: Շատ հետաքրքիր է հետևել, թե մեր օրերում ինչի են հավատում հոգեբանները: Ոմանք տարված են արևելյան միստիցիզմով և էզոթերիկայով, ոմանք խոսում են մարդկանց կյանքերի վրա ազդելու շամանների իշխանությունից: Մինչդեռ 25 տարի առաջ բոլոր նրանք, ովքեր կխոսեին դիվահարության մասին, կծաղրվեին. այսօր շատ հոգեբաններ սկսում են ընդունել, որ գուցե երկնքում ու երկրի վրա շատ բաներ կան, որոնք մեր տեսությունները չեն կարող բացատրել:

Անհեթեթ հորինվածք

Քոլինզն ու ես փոքր-ինչ շեղվել էինք մեր հարցազրույցի բուն թեմայից: Երբ մեքենայով տուն վերադառնալիս մտածում էի մեր զրույցի մասին, վերադարձա գլխավոր հարցին, որն ինձ նրա մոտ էր տարել: Հիսուս պնդում էր, որ Աստված է: Ոչ ոք չի ենթադրում, որ նա մտածված մոլորեցնում էր: Իսկ հիմա Քոլինզը եզրակացրել է, 35 տարվա իր հոգեբանական փորձի վրա հիմնվելով, որ նա հոգեկան խանգարում չուներ:

Ինչևէ, իմ հարցը մնում էր՝ Հիսուս ունե՞ր Աստծո բոլոր հատկանիշները: Ի վերջո, աստվածության հավակնելը մի բան է, և բոլորովին այլ բան՝ աստվածային բոլոր հատկանիշները մարմնավորելը:

Կանգ առնելով մի լուսազդանշանի մոտ՝ պայուսակիցս հանեցի նոթատետրս ու ինքս ինձ համար գրառում արեցի՝ գտնել Քարսոնին: Հաջորդ թեման մտադիր էի քննարկել երկրի առաջատար աստվածաբաններից մեկի հետ:

Գարի Քոլինզի հետ զրույցն ինձ մղել էր ուշադիր վերընթերցելու ավետարանները, մասնավորապես այն ամենը, ինչ Հիսուս էր ասել: Ամբողջ երեկո կարդացի, բայց չգտա մի բառ, որը կակնարկեր խելագարության, մտագարությունների կամ խելացնորության մասին: Ընդհակառակը, ինձ կրկին հուզեցին Նրա անսահման իմաստությունը, անկեղծությունն ու խորաթափանցությունը, բանաստեղծական ու հռետորական ճարտա-

թվայնացրել է 1915.info կայքը

ությունը, կարեկցանքի խորությունը: Պատմաբան Ֆիլիպ Շաֆը դա ավելի լավ է ասել, քան ես կարող եմ:

Միթե այսպիսի բանականությունը՝ երկնքի պես պարզ, լեռնային օդի պես մաքուր, սուր ու սրի պես թափանցող, կատարելապես առողջ ու եռանդուն, միշտ զգաստ ու հավասարակշռված, ենթակա է արմատական ու լուրջ մոլորության սեփական բնութագրի ու առաքելության վերաբերյալ: Անհեթեթ հորինվածք[106]:

Քննարկումներ

Հարցեր խորհրդածելու կամ խմբային պարապմունքի համար

1. Հիսուս պնդում էր՝ Ինքն Աստված է, բայց հոգեբուժարանի հիվանդը ևս կարող է իր մասին նույնը հայտարարել: Ո՞րն է այս պնդումների տարբերությունը:
2. Կարդացեք Հիսուսի պատվիրանները, որոնք սովորաբար կոչվում են «Երանիներ» (Մատթեոս 5:1-12): Ի՞նչ կարող եք ասել Նրա մտքի, պերճախոսության, կարեկցելու ընդունակության, մարդկային էության իմացության, խորը ճշմարտություններ ուսուցանելու կարողության և ընդհանուր հոգեբանական առողջության մասին:
3. Դուք կարդացիք Քոլինզի պատասխանն այն տեսությանը, որ Հիսուսի հրաշքները կարելի է հիպնոսով բացատրել: Սա կենսունակ հիպոթեզ համարո՞ւմ եք: Ինչո՞ւ: Բացատրեք ձեր տեսակետը:

թվայնացրել է 1915.info կայքը

ԳԼՈՒԽ 9

Հոգեբանական դիմանկարի փաստը

Հիսուս ուներ Ասպծո բոլոր հատկանիշները

Չիկագոյի բնակարաններից մեկում բժշկական քոլեջի ութ ուսանողուհիների սպանությունից կարճ ժամանակ անց միակ ողջ մնացած աղջիկը դողալով կուչ էր եկել ոստիկանության նկարիչ-քրեագետի կողքին ու մանրամասն նկարագրում էր մարդասպանին, որին տեսել էր իր թաքստոցից. նա կարողացել էր թաքնվել մահճակալի տակ և դրա շնորհիվ ողջ էր մնացել:

Նրա նկարագրությամբ կազմված ուրվանկարն արագ տարածվեց քաղաքում՝ ոստիկանական բաժանմունքներում, հիվանդանոցներում, երկաթուղային կայարաններում, օդանավակայաններում: Շատ չանցած մի շտապօգնության բժիշկ զանգեց քննիչներին՝ հայտնելու, որ բուժում է մի մարդու, որը կասկածելիորեն նման է գծանկարում պատկերված փախստականին՝ նույնպիսի անողոք հայացքով:

Ահա թե ինչպես ոստիկանությունը ձերբակալեց Ռիչարդ Սփեքին՝ անորոշ զբաղմունքի տեր մի մարդու, որը կատարել էր այդ սարսափելի սպանությունները. նա դատապարտվեց և 30 տարի անց մեռավ բանտում[107]:

Սկսած 1889 թվականից, երբ Սքոթլանդ Յարդի փորձագետներն առաջին անգամ վկայի ցուցմունքների հիման վրա նկարեցին ու կազմեցին հանցագործի դիմանկարը, քրեագետ-նկարիչները կարևոր դեր են խաղացել իրավապահ մարմիններում: Այսօր ավելի քան 300 նկարիչ է աշխատում ԱՄՆ ոստիկանական գործակալություններում, և ավելի ու ավելի շատ ոստիկանական բաժանմունքներում է ներդրվում համակարգչայնացված ԴՆԷՄ համակարգ (Դիմային նույնականացման էլեկտրոնային մեթոդ):

Վերջերս մշակված այս տեխնոլոգիան հաջողությամբ կիրառվեց 1997-ին, մի առևանգման փորձ բացահայտելու համար, որը տեղի էր ունեցել առևտրի կենտրոնում, Չիկագոյի արվարձանում գտնվող իմ տնից ընդամենը մի քանի կիլոմետր հեռու: Տուժողը մանրամասն նկարագրել

թվայնացրել է 1915.info կայքը

էր առևանգողի արտաքինը, իսկ համակարգչի առաջ նստած մասնագետը ստացել էր հանցագործի էլեկտրոնային նմանակը՝ ընտրելով քթի, բերանի, սանրվածքի անհրաժեշտ տարատեսակը: Դիմանկարը ֆաքսով ուղարկվեց ոստիկանական բոլոր գործակալություններին, և որպեսզի անց մեկ այլ արվարձանում քննիչներից մեկը, ըստ այդ ճշգրիտ պատճենի, ճանաչեց հանցագործին, որի հետ արդեն գործ էր ունեցել: Այս մեթոդի շնորհիվ առևանգման մեջ մեղադրվողն արագ ձերբակալվեց[108]:

Ինչպե՞ս է այս ամենն առնչվում Հիսուսի մասին ճշմարտությունը պարզելու մեր փորձերին: Ահա թե ինչպես: Հին Կտակարանը շատ մանրամասն նկարագրում է Աստծուն: Նա նկարագրվում է իբրև ամենագո կամ ամենուր ներկա տիեզերքում, իբրև ամենագետ, ամեն ինչ իմացող, ինչ կարելի է իմանալ ամբողջ հավիտենականության մեջ, իբրև ամենակարող կամ ամենազոր, հավիտենական կամ թե՛ ժամանակից դուրս, թե՛ ժամանակի աղբյուր, իբրև հաստատուն կամ իր հատկանիշներում անփոփոխ: Նա սիրող է, Նա սուրբ է, Նա առաքինի է, Նա իմաստուն է, Նա արդար է:

Այսպիսով, Հիսուս պնդում է, որ Աստված է: Բայց Նա ունի՞ աստվածության այս հատկանիշները: Այլ խոսքով, եթե Հիսուսին ուշադիր քննենք, նրա նկարագիրը համընկնո՞ւմ է Աստծո «բանավոր դիմանկարին», որը տրված է Աստվածաշնչում: Եթե չի համընկնում, կարող ենք եզրակացնել, որ Աստված լինելու նրա հավակնությունը կեղծ է:

Սա ծայրաստիճան բարդ ու մտավարժություն պահանջող հարց է: Օրինակ, երբ Հիսուս Կափառնայումից դուրս մի բլրի լանջին Լեռան քարոզն էր անում, միաժամանակ կանգնած չէր Երիքովի կենտրոնական փողոցում, ուրեմն ի՞նչ իմաստով կարելի է նրան ամենագո անվանել: Ինչպե՞ս կարելի է նրան անվանել ամենագետ, երբ պատրաստակամ ընդունում է Մարկոսի 13:32-ում, որ ապագայի մասին ամեն ինչ չէ, որ գիտի: Եթե նա հավիտենական է, ինչո՞ւ է Կողոսացիներին 1:15-ը նրան անվանում «ծնված բոլոր ստեղծվածներից առաջ»:

Առաջին հայացքից այս հարցերը կարծես ենթադրում են, որ Հիսուս նման չէ Աստծո «բանավոր դիմանկարին»: Այդուհանդերձ, տարիների ընթացքում հասկացել եմ, որ առաջին տպավորությունը կարող է խաբուսիկ լինել: Ահա թե ինչու էի ուրախ, որ կկարողանամ այս հարցերը քննարկել դոկտոր Դ. Ա. Քարսոնի՝ աստվածաբանի, և վերջին տարիների ամենահայտնի քրիստոնյա մտածողներից մեկի հետ:

թվայնացրել է 1915.info կայքը

8-ՐԴ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Դոնալդ Ա. Քարսոն, փիլիսոփայության դոկտոր

Դ. Ա. Քարսոնը՝ Նոր Կտակարանի հետազոտող պրոֆեսորը Թրինիթիի Ավետարանական աստվածաբանության դպրոցում, ավելի քան 40 գիրք է գրել կամ խմբագրել՝ ներառյալ «Լեռան քարոզը. էկզեգետիկայի մոլորություններ», «Ավետարան՝ ըստ Հովհաննեսի» ու նրա մրցանակակիր «Աստծո բերանը խցելիս» գրքերը:

Նա կարդում է մեկ տասնյակ լեզուներով (ֆրանսերենի իմացության համար պարտական է Քվեբեկում անցկացրած մանկությանը), Աստվածաշնչյան հետազոտությունների Թինդեյլի ընկերության, Աստվածաշնչյան գրականության ընկերության և Աստվածաշնչյան հետազոտությունների ինստիտուտի անդամ է: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը չափազանց լայն է՝ պատմական վկայություններ Հիսուսի մասին, պոստմոդեռնիզմ, հունարենի քերականություն, Պողոս և Հովհաննես առաքյալների աստվածաբանություն:

Իր հետազոտական կարիերան Քարսոնը սկսել է քիմիայից (բնական գիտությունների բակալավրի աստիճան ստանալով Մակգիլի համալսարանից), հետո զբաղվել է աստվածաբանությամբ ու ստացել մագիստրոսի աստիճան, մեկնել է Անգլիա, որտեղ հեղինակավոր Քեմբրիջի համալսարանում արժանացել է Նոր Կտակարանի դոկտորի աստիճանի: Նախքան 1978-ին Թրինիթիին միանալը դասավանդել է երեք այլ քոլեջներում ու սեմինարիաներում:

Նախկինում երբեք չէի հանդիպել Քարսոնին և, երբ ճանապարհ էի ընկնում դեպի Թրինիթի, սպասում էի, որ կտեսնեմ չոր, խստաբարո գիտնականի: Առաջին հայացքից պարզ դարձավ, որ իմ առաջ թեև ամենահասկական գիտնական է, բայց ոչ չոր ու անհոգի մեկը. ինձ անակնկալի բերեց նրա ջերմ, անկեղծ ու համբերատար տոնը, որով պատասխանում էր որոշ դեպքերում, ինչպես պարզվեց, բավական կծու հարցերի:

Մեր զրույցն անցավ դասախոսների ընդարձակ սենյակում, որտեղ մեզանից բացի ուրիշ մարդ չկար՝ Սուրբ Ծննդյան արձակուրդներ էին: Զրուցակիցս հագել էր սպիտակ բաճկոն, կապույտ ջինս ու «Ադիդաս» մարզակոշիկներ: Մի քիչ զրուցեցինք, կատակեցինք մեր սիրելի Անգլիայի մասին (Քարսոնը երկար տարիներ այնտեղ է ապրել, իսկ նրա կինը՝ Զոյը,

թվայնացրել է 1915.info կայքը

բրիտանացի է), հետո հանեցի նոթատետրս, միացրի ձայնագրիչս ու սկսեցի խոսակցությունը, որի համար եկել էի:

Ապրել ու ներել Աստծո պես

Նախ ուզում էի պարզել, թե ինչու է Քարսոնը կարծում, որ Հիսուս Աստված է:

— Հիսուսի որ խոսքերն ու գործերն են Ձեզ համոզում, որ նա աստվածային է,– հարցրի: Ենթադրում էի, որ կսկսի խոսել հրաշքների մասին: Բայց սխալվում էի:

— Կարելի է մատնացույց անել Նրա գործած հրաշքները,– սկսեց Քարսոնը՝ կարծես կարդալով իմ մտքերը,– բայց ուրիշներն էլ են հրաշքներ գործել, այնպես որ, թեև սա ցուցիչ կարող է լինել, բայց վճռորոշ չէ: Իհարկե, Նրա աստվածային էության հիմնական և սպառիչ ապացույցը Հարությունն է: Բայց նրա կատարած բազմաթիվ գործերից ինձ համար ամենաարտասովորը Նրա՝ մեղքը ներելն էր:

— Ահա թե ինչ,– ասացի՝ շրջվելով աթոռիս վրա, որպեսզի նստեմ նրան դեմ առ դեմ: — Ինչո՞ւ:

— Հասկանում եք… եթե Դուք ինձ վիրավորել եք, Ձեզ ներելու իրավունք ունեմ: Բայց, պատկերացրեք՝ ինձ վիրավորել եք, և հանկարծ հայտնվում է մեկ ուրիշը և ասում. «Ես քեզ ներում եմ»: Դա ի՞նչ հանդգնություն է: Միակը, որ նման բան ասելու իրավունք ունի, Աստված է, որովհետև մեղքը, եթե նույնիսկ այն գործում են այլ մարդկանց հանդեպ, առաջին հերթին Աստծո և նրա օրենքների հանդեպ ոտնձգություն է: Ճնանալով և կազմակերպելով սիրելիի ամուսնու մահը՝ Դավիթ թագավորը զղջում է Աստծո առաջ Սաղմոս 50-ում: Նա գիտակցում է, որ, մեղանչելով իր մերձավորի դեմ, ի վերջո, մեղք է գործել Աստծո դեմ, որ ստեղծել է իրեն՝ Իր պատկերով, հետևաբար Աստծո ներման կարիք ունի:

Ահա հայտնվում է Հիսուս ու ասում մեղավորներին. «Ես ներում եմ ձեզ»: Հրեաներն անմիջապես դրանում սրբապղծություն տեսան և ասացին. «Միայն Աստված կարող է ներել մեղքերը»: Ահա թե ինչու ինձ համար մեղքերի ներումը Հիսուսի արած ամենազարմանալի բանն է:

— Հիսուս ոչ միայն ներեց մեղքերը,– նկատեցի,– այլև պնդեց, որ Ինքն անմեղ է: Իսկ անմեղությունը, անշուշտ, աստվածության հատկանիշ է:

թվայնացրել է 1915.info կայքը

— Այո՛,– պատասխանեց նա: — Մեր մշակույթում պատմականորեն արդար համարվող մարդիկ նաև հատկապես զգայուն են սեփական սխալների ու մեղքերի նկատմամբ: Նրանք գիտակցում են իրենց թերություններն ու թուլությունները, իրենց ցանկություններն ու դժգոհությունները և Աստծո օգնությամբ ձգտում են հաղթահարել դրանք: Եվ դա նրանց հաջողվում է այնքան լավ, որ մյուսները նրանց անվանում են «սուրբ»: Բայց հայտնվում է Հիսուս ու ասում ամենալուրջ հայացքով. «Ձեզնից ո՞վ կարող է ինձ մեղքի մեջ մեղադրել»[109]: Եթե ես դա ասեի, կինս ու երեխաներս, բոլորը, ովքեր ճանաչում են ինձ, ուրախ կլինեին կանգնել ու վկայել, այնինչ ոչ ոք չկարողացավ: Պատասխանը լռություն էր:

Բարոյական կատարելությունն ու մեղքերի թողությունը, անկասկած, աստվածության անհերքելի հատկանիշներ են, սակայն Աստծո «բանավոր դիմանկարին» համապատասխանելու համար Հիսուս պետք է որ ունենար մի քանի այլ հատկանիշներ: Իմ առաջին հարցը բավական անչար ու անվնաս էր. հիմա ես լրջորեն որոշել էի զրուցակցիս անկյուն մղել:

Մարմնավորման առեղծվածը

Թերթեցի իմ նախկին գրառումներն ու Քարսոնի վրա հարցերի տարափ տեղացի:

— Ասացեք, դոկտո՛ր Քարսոն, ինչպես կարելի է խոսել Հիսուսի ամենուր ներկայության մասին, երբ նա չէր կարող լինել միաժամանակ մի քանի վայրերում: — Ինչպե՞ս կարելի է խոսել ամենագետ լինելու մասին, երբ Ինքն ասաց, որ Մարդու Որդին չգիտի Իր վերադարձի ժամը: Ո՞վ կարող է Նրան ամենակարող անվանել, երբ ավետարանները մեզ պարզ ասում են, որ Նա չկարողացավ իր հայրենի քաղաքում շատ հրաշքներ գործել:

Ավելի համոզիչ լինելու համար գրիչս նրա կողմն ուղղեցի ու եզրափակեցի.

— Ազնվորեն ընդունենք՝ Աստվածաշունչն ինքը կարծես հերքում է Նրա հավակնությունը Աստծո դերին:

Քարսոնը չխուսափեց, թեև սկսեց նրանից, որ այդ հարցերն իսկապես պարզ պատասխաններ չունեն: Ի վերջո, դրանց հարվածն ուղղված է մարմնավորման վարդապետության հենց սրտին՝ Աստված դառնում է

թվայնացրել է 1915.info կայքը

մարդ, ոգին մարմին է առնում, անսահմանը դառնում է վերջավոր, հավերժականը՝ ժամանակավոր: Սա ուսմունք է, որն աստվածաբաններին զբաղեցրել է դարեր շարունակ: Եվ Քարսոնը խոսեց այն մասին, թե ինչպես են գիտնականները փորձել պատասխանել այս հարցերին դարերի ընթացքում:

— Պատմականորեն երկու կամ երեք մոտեցում է եղել սրան,– սկսեց նա այնպիսի ձայնով, ասես լսարանում դասախոսություն էր կարդում: — Օրինակ՝ 19-րդ դարի վերջին մեծ աստվածաբան Բենջամին Ուորֆիլդն ուսումնասիրեց ավետարանները՝ Հիսուսի մեջ աստվածայինն ու մարդկայինը բաժանելու նպատակով: Հիսուսի Աստված լինելը ցույց տվող գործողություններն Ուորֆիլդը վերագրեց Նրա աստվածային էությանը: Իսկ այն ամենը, ինչ ենթադրում էր սահմանափակումներ, վախճանականություն կամ մարդկային հատկանիշներ, վերագրվում է նրա մարդկային բնույթին: Օրինակ՝ նրա արցունքները, Աստված լալիս է, ուրեմն Նրա արցունքները խոսում են Նրա մարդկայնության մասին:

Ինձ թվաց, թե այդ մեթոդը լի էր թերություններով:

— Եթե հարցին այդպես մոտենանք, ի վերջո, շիզոֆրենիկ Հիսուս չենք ստանա,– հարցրի:

— Հեշտ է անզգուշաբար սայթաքելը և դրա մեջ ընկնելը,– պատասխանեց: — Բոլոր քրիստոնեական հարանվանությունները համաձայն են, որ Հիսուսի աստվածությունն ու մարդեղությունը տարբեր են, բայց միավորված են մեկ Անձի մեջ: Դուք ուզում եք խուսափել այն եզրակացությունից, որ Նա երկու գիտակցություն ուներ՝ Հիսուսի մարդկային միտքը և Քրիստոսի աստվածային միտքը: Բայց այդպիսի կարծիք կա, ու գուցե դրանում ինչ-որ բան կա:

Կա ևս մեկ բացատրություն՝ kenosis*, որը հունարենից թարգմանաբար նշանակում է «ամայացում»: Սա բխում է Փիլիպեցիներին 2-ից, որտեղ Պողոսն ասում է, որ Հիսուս, «լինելով Աստծո կերպարանքով, Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց, այլ ինքն իրեն ունայնացրեց»: Ավելի ճշգրիտ թարգմանությունը կլիներ «այլ ամայացրեց իրեն»: Նա դարձավ ոչ ոք:

---

* Աստվածաբանական եզրույթ, որը նշանակում է Քրիստոսի աստվածային ինքնախոնարհեցումը մարդացման միջոցով ընդհուպ մինչև Խաչի վրա տառապանքն ու մահը:

Դա ինձ մի փոքր անորոշ թվաց:

— Կարո՞ղ եք ավելի պարզ արտահայտվել,– հարցրի: — Իրեն կոնկրետ ինչի՞ց ամայացրեց:

Կարծես թե ճիշտ նշանին էի խփել: Քարսոնը գոհունակությամբ գլխով արեց:

— Հարցն էլ հենց դա է: Դարեր շարունակ մարդիկ դրան տարբեր պատասխաններ են տվել: Կարո՞ղ էր Նա դատարկվել իր աստվածությունից: Բայց այդ դեպքում նա այլևս Աստված չէր լինի: Գուցե աստվածային հատկանիշների՞ց: Ես այդտեղ նույնպես խնդիր եմ տեսնում. ինչպե՞ս անջատել հատկանիշներն էությունից: Եթե մի կենդանի ունեք, որը նման է ձիու, ձիու հոտ ունի, ձիու նման է քայլում, ունի ձիու բոլոր հատկանիշները, ուրեմն ձեր ունեցածը ձի է: Չեմ հասկանում՝ ինչպես կարելի է ազատվել աստվածության հատկանիշներից և մնալ Աստված: Կա ևս մեկ տեսակետ. «Նա ազատվեց ոչ թե հատկանիշներից, այլ դրանց օգտագործումից», այսինքն՝ խոսքն ինքնասահմանափակման մասին է: Սա ավելի մոտ է, չնայած միշտ չէ, որ այդպես է եղել. Նա ներեց մեղքերը, ինչպես միայն Աստված կարող է ներել. սա աստվածության հատկանիշ է:

Ոմանք ավելի հեռուն են գնում՝ ասելով. «Նա Իրեն դատարկեց աստվածային հատկանիշների ինքնուրույն և անկախ գործածումից»: Այսինքն՝ Նա Աստծո պես վարվեց միայն այն ժամանակ, երբ Նրա Երկնային հայրը թույլ տվեց նրան դա անել: Դե, սա շատ ավելի մոտ է: Միակ խնդիրն այն է, որ որոշակի առումով հավերժական Որդին միշտ գործել է Հոր պատվիրաններին համապատասխան: Չես ուզի կորցնել դա անգամ հավիտենականության անցյալում: Բայց ավելի մոտ է:

Զգում էի, որ թիրախի բուն կենտրոնի մերձակայքում ենք, բայց վստահ չէի, որ շատ ավելի կմոտենայինք: Կարծես թե Քարսոնի զգացողությունն էլ այդ էր:

— Խիստ ասած, Փիլիպեցիներին 2-ը մեզ կոնկրետ չի ասում, թե հավիտենական Որդին կոնկրետ ինչից ունայնացրեց իրեն: Նա ունայնացրեց իրեն, նա դարձավ ոչ ոք: Խոսքն ինչ-որ ունայնացման մասին է, բայց անկեղծ լինենք, խոսում ենք մարմնավորման մասին՝ քրիստոնեական հավատի կենտրոնական առեղծվածներից մեկի:

Գործ ունենք անձև, անմարմին, ամենագետ, ամենագո, ամենակարող Ոգու և վերջավոր, շոշափելի, նյութական, մահկանացու, ժամանակին են-

թվայնացրել է 1915.info կայքը

թակա արարածների հետ: Առաջինը երկրորդի վերածվելու գաղափարը պատված է մեծ առեղծվածով: Հետևաբար քրիստոնեական աստվածաբանության խնդիրը եղել է ոչ թե ամեն ինչի համար բացատրություն և արդարացում գտնելը, այլ աստվածաշնչյան բոլոր փաստերն ի մի բերելը և դրանք համադրելու ուղիներ գտնելը, որոնք կլինեն տրամաբանական և հետևողական, նույնիսկ եթե որոշ տեղեր մնան առանց բացատրության:

Դա խելոք ձև էր ասելու, որ աստվածաբանները կարող են բացատրություններ հնարել, որոնք կարծես թե տրամաբանական են, թեև չեն կարող բացատրել մարմնավորման ամեն նրբերանգը: Ինչ-որ առումով դա խելամիտ էր թվում: Եթե մարմնավորումը ճշմարիտ է, ապա զարմանալի չէ, որ մարդկային սահմանափակ միտքը չի կարողանում այն ամբողջովին ընկալել:

Կարծում եմ՝ եթե Հիսուս կամավոր «ունայնացրեց» Իրեն՝ հրաժարվելով օգտագործել աստվածային հատկանիշները, ապա հասկանալի է, թե ինչու նրա ամենագիտությունը, ամենակարողությունն ու ամենակայությունը սովորաբար չեն դրսևորվում Նրա երկրային գոյության մեջ, թեև Նոր Կտակարանը հստակ ասում է, որ Հիսուս ուներ այս բոլոր հատկությունները:

Բայց դա խնդրի միայն մի մասն էր: Թերթեցի գրառումներիս հաջորդ էջն ու սկսեցի հարցերի մի նոր ուղղություն՝ Աստվածաշնչի այն հատվածների մասին, որոնք, թվում էր, ուղղակիորեն հակասում են Իր աստվածայնության մասին Հիսուսի պնդումներին:

Արարիչ, թե՞ արարած

Աստծո աստվածաշնչյան «բանավոր դիմանկարին» համապատասխանելու համար Հիսուս, մասնավորապես, պիտի լիներ նախահավիտենական և անստեղծ: Եսայի 57:15-ը նկարագրում է Աստծուն որպես «Նա, ով հավիտենապես բնակվում է...»: Բայց, ասացի Քարսոնին, Սուրբ Գրքի որոշ հատվածներ բացահայտորեն ակնարկում են, որ Հիսուս արարված էակ էր:

— Օրինակ,– ասացի,– Հովհաննես 3:16-ը Հիսուսին անվանում է Աստծո «միածին» Որդի, իսկ Կողոսացիներ 1:15-ում ասվում է, որ Նա «անդրանիկն էր ամբողջ արարչագործության»: Սրանք ուղղակի նկատի չունեն, որ Հիսուս արարած էր և ոչ Արարիչ:

թվայնացրել է 1915.info կայքը

Քարսոնի մասնագիտական ոլորտներից մեկը հունարեն քերականությունն է, որին նա դիմեց՝ պատասխանելով իմ հարցին:

— Սկսենք Հովհաննես 3:16-ից,- ասաց: — Հակոբ թագավորի Աստվածաշնչում հին հունարեն բնագրի այս տեքստը թարգմանված է «Նրա Միածին Որդին» բառերով: Նրանք, ովքեր սա համարում են ճիշտ թարգմանություն, սովորաբար դա կապում են հենց մարմնավորման հետ, այսինքն՝ նրա ծնունդը կույս Մարիամի միջոցով: Բայց իրականում հունարեն բառն այլ իմաստ ունի: Այն իրականում նշանակում է «միակ», «եզակի»: Առաջին դարում գործածվում էր «միակ ու սիրելի» իմաստով: Այնպես որ Հովհաննես 3:16-ն ուղղակի ասում է, որ Հիսուս Աստծո միակ ու սիրելի որդին է, կամ, ինչպես Նոր միջազգային տարբերակն է թարգմանում, «միակ ու անկրկնելի որդին», ոչ թե որ գոյաբանորեն ծնվել է ժամանակի մեջ:

— Լավ, իսկ մյուս տողերը,- հարցրի:

— Նայենք Կողոսացիներ 1:15-ը: Հակոբ թագավորի Աստվածաշունչն այստեղ օգտագործում է «առաջնեկ» բառը: Մեկնաբանների ճնշող մեծամասնությունը՝ և՛ պահպանողական, և՛ ազատական, ընդունում է, որ Հին Կտակարանում առաջնեկն օրենքով սովորաբար ստանում էր ժառանգության առյուծի բաժինը կամ, արքայական ընտանիքի դեպքում, դառնում էր թագավոր: Այսպիսով, առաջնեկը ժառանգում էր բոլոր հայրական իրավունքները: Ք. ա. 2-րդ դարում արդեն որոշ շրջաններում այս բառը լիովին կորցրել էր իր սկզբնական՝ առաջինը ծնվելու իմաստը. այն արտահայտում էր միայն իրավահաջորդի դիրքից բխող իշխանության գաղափարը: Հենց այս իմաստով է այն կիրառվում Հիսուսի նկատմամբ, ինչն ընդունում են գրեթե բոլոր գիտնականները: Այս լույսի ներքո «առաջնեկ» բառի սկզբնական իմաստը մեզ որոշակիորեն շեղում է ճշմարտությունից:

— Ո՞ր թարգմանությունը համարժեք կլիներ,- հարցրի ես:

— Կարծում եմ՝ ավելի ճիշտ կլինի թարգմանել «գերագույն ժառանգ»,- պատասխանեց նա:

Թեև դա բացատրում էր Կողոսացիների հատվածը, բայց Քարսոնը դրանով չսահմանափակվեց:

— Կողոսացիներ 1:15-ը մեջբերելիս՝ այն պետք է դիտարկել Կողոսացիներ 2:9-ի համատեքստում, որտեղ նույն հեղինակն ընդգծում է. «...որովհետև մարդացած Քրիստոսի մեջ է բնակվում աստվածային բնության ամբողջ լիակատարությունը»: Հեղինակն ինքն իրեն չէր հակասի: Ահա թե

թվայնացրել է 1915.info կայքը

ինչու «առաջնեկ» եզրույթը չի կարող բացառել Հիսուսի նախահավիտենականությունը. չէ՞ որ այն ներառված է «Աստվածությունն իր լիակատարության մեջ» հասկացությունում:

Պատասխանը սպառիչ էր: Բայց մտահոգիչ այլ հատվածներ էլ կային: Օրինակ՝ Մարկոս 10-ում ինչ-որ մեկը Հիսուսին անվանում է «բարի ուսուցիչ», որին Հիսուս պատասխանում է. «Ինչո՞ւ ես ինձ բարի անվանում: Ոչ ոք բարի չէ, միայն Աստված»:

— Նա իր աստվածությունը չէ՞ր ժխտում սա ասելով,– հարցրի:

— Ո՛չ, կարծում եմ, պարզապես ուզում էր, որ այդ մարդը կանգ առնի ու մտածի իր ասածի մասին,– բացատրեց Քարսոնը: — Զուգահեռ հատվածը Մատթեոսում ավելի ընդարձակ է, ու Հիսուսին ամենևին էլ չենք տեսնում իր աստվածության կարևորությունը նվազեցնելիս: Ինձ թվում է՝ Նա ուզում էր ասել. «Սպասի՛ր, ինչո՞ւ ես ինձ բարի անվանում: Պարզապես քաղաքավարության համա՞ր, ինչպես ասում են՝ «Բարի օ՞ր»: Ի՞նչ նկատի ունես «բարի» ասելով: Ինձ ասում ես բարի ուսուցիչ, որովհետև ուզում ես շողոքորթե՞լ»: Հիմնարար իմաստով միայն մեկը կա, որ բարի է, ու դա Աստված է: Բայց Հիսուս անուղղակի չի ասում. «Ուրեմն ինձ մի՛ անվանիր այդպես»: Նա ասում է. «Իսկապե՞ս հասկանում ես, թե ինչ ես ասում, երբ ասում ես դա: Իսկապե՞ս ինձ վերագրում ես, ինչ միայն Աստծուն է պետք վերագրել»: Դրանից կարելի է հետևյալ իմաստները բխեցնել. «Ես իսկապես այն եմ, ինչ ասում ես, դու ասում ես ավելին, քան գիտես» կամ «Չհամարձակվե՛ս ինձ այդպես անվանել, հաջորդ անգամ բոլորի հետ միասին բղավելու ես՝ «այդ մեղավոր Հիսուսը»: Այսպիսով, ինչպե՞ս պետք է մեկնաբանենք այս արտահայտությունը՝ հաշվի առնելով այն ամենը, ինչ Հիսուս ասում կամ անում է:

Նոր Կտակարանի այլ համարներում Հիսուսին այնքան են անվանում «անմեղ», «սուրբ», «արդար», «մաքուր», «մեղավորներից զատված», որ պատասխանն ակնհայտ էր:

Հիսուս ավելի փո՞քր Աստված էր

Բայց եթե Հիսուս Աստված է, ի՞նչ տեսակ Աստված է նա՝ Հորը հավասա՞ր, թե՞ ինչ-որ կրտսեր Աստված, որն ունի աստվածության բոլոր հատկանիշ-

թվայնացրել է 1915.info կայքը

ներն ու, այդուհանդերձ, ինչ-որ կերպ չի համապատասխանում Հին Կտակարանում նկարագրված Աստծո «բանավոր դիմանկարին»:

— Հովհաննես 14:28-ում Հիսուս ասում է. «Իմ Հայրը մեծ է, քան ես»: Եվ ոմանք սրանից եզրակացնում են, որ Հիսուս հավանաբար ավելի փոքր աստված էր: Նրանք ճիշտ են,– հարցրի:

Քարսոնը հոգոց հանեց:

— Հայրս քարոզիչ էր,– պատասխանեց,– ու մանկությանս տարիներին մեր տանը մի բառախաղ էր ընդունված. «Տեքստն առանց համատեքստի նոր ենթատեքստ է ստանում»: Ձեր մեջբերած հատվածը շատ կարևոր է իր համատեքստում դիտարկել: Հիսուս հայտնում է աշակերտներին, որ շուտով կթողնի նրանց: Տեսնելով, թե որքան հուսահատ ու ընկճված են Իր առաքյալները, Նա ասում է. «Եթե ինձ սիրեիք, ուրախ պիտի լինեիք, որ ես Հոր մոտ եմ գնում, որովհետև իմ Հայրը մեծ է, քան ես»: Այսինքն՝ Հիսուս հասկացնում է, որ վերադառնում է փառքին, որն իրավամբ իրենն է, հետևաբար, եթե աշակերտները հասկանում են, թե ով է Նա ու իսկապես սիրում են Նրան, պետք է ուրախանան, որ Վարդապետը նորից վերադառնում է այն թագավորությունը, որտեղ Նա ավելի մեծ է, քան երկրի վրա: Հովհաննես 17:5-ում Հիսուս ասում է. «Փառավորի՛ր ինձ, Հա՛յր, այն փառքով, որն ունեի քեզ մոտ նախքան աշխարհի լինելը»: «Իմ Հայրը մեծ է, քան ես» արտահայտությունը նույնի մասին է: Ասելով, որ ինչ-որ մեկը մեզնից մեծ է, այսինքն՝ ավելի մեծ, նկատի չենք ունենում գերակայություն գոյաբանական իմաստով: Օրինակ՝ եթե ասեմ, որ ԱՄՆ նախագահն ինձնից ավելի է, չի նշանակում, թե նրան ավելի բարձր էակ եմ համարում: Նա ինձնից ավելի նշանակալից է այն ամենով, ինչ վերաբերում է ռազմական կարողություններին, քաղաքական հմտությանն ու հանրային ճանաչմանը, բայց այնուամենայնիվ, նա նույն մարդն է, ինչ ես:

Այնպես որ, երբ Հիսուսն ասում է «Հայրն ավելի մեծ է, քան ես», պետք է խորամուխ լինել ու մտածել, թե նկատի ունի «Հայրն ավելի մեծ է, քան ես, որովհետև նա Աստված է, իսկ ես՝ ոչ»: Եթե անկեղծ, այդ ասելը բավական անհեթեթ կլիներ: Ենթադրենք՝ կանգնեի որևէ ամբիոնից քարոզելու և ասեի. «Ես պաշտոնապես հայտարարում եմ, որ Աստված ավելի մեծ է, քան ես»: Բավական անօգուտ դիտարկում կլիներ:

Նման համեմատությունն իմաստ ունի միայն մեկ դեպքում, եթե նրանք արդեն միևնույն հարթության վրա են, ու որոշակի սահմանազատում է

թվայնացրել է 1915.info կայքը

տեղի ունենում: Հիսուս սահմանափակված է մարմնավորումով. նա գնում է դեպի խաչը, գնում է մեռնելու, բայց շուտով վերադառնալու է Հոր մոտ ու այն փառքին, որն ուներ Հոր հետ նախքան աշխարհի սկիզբը:

Նա ասում է աշակերտներին. «Դուք լաց եք լինում ինձ համար, դուք պիտի ուրախ լինեք, որովհետև տուն եմ վերադառնում»: Այդ իմաստով է, որ «Հայրն ավելի մեծ է, քան ես»:

— Ուրեմն,– ասացի,– սա նրա աստվածության անուղղակի ժխտում չէ՞:

— Ո՛չ,– վստահ եզրակացրեց նա,– իհարկե, ո՛չ: Սա հստակ բխում է համատեքստից:

Ընդունելով փաստը, որ Հիսուս ոչ պակաս չափով Աստված էր, ես այլ, ավելի զգայուն թեմա ունեի բարձրացնելու՝ ինչպե՞ս կարող էր Հիսուս կարեկից Աստված լինել, բայց հավանություն տալ իրեն մերժողների հավիտենական տառապանքի գաղափարին:

Դժոխք. տանջող հարց

Աստվածաշունչն ասում է, որ Հայրը բարի է և սիրում է Իր զավակներին: Նոր Կտակարանը նույնն է հաստատում Հիսուսի մասին: Բայց կարո՞ղ են նրանք սիրող լինել ու միաժամանակ մարդկանց դժոխք ուղարկել: Բացի այդ, դժոխքի մասին Հիսուսի ուսմունքում ավելի շատ կա, քան ամբողջ Աստվածաշնչում: Դա չի՞ հակասում Նրա բարության, հեզության և ողորմածության մասին պնդումներին:

Քարսոնին ուղղված հարցն ավարտեցի ագնոստիկ Չարլզ Թեմփլթոնի խիստ կտրուկ ու կոշտ բառերով. «Ինչպե՞ս կարող էր կարեկից ու ողորմած Երկնային Հայրն անվերջանալի դժոխք ստեղծել և միլիոնավոր մարդկանց ուղարկել այնտեղ դարերով միայն այն պատճառով, որ նրանք չեն կարող կամ չեն ուզում ընդունել որոշակի կրոնական համոզմունքներ»[110]:

Իր անողոք սրությամբ հանդերձ՝ այս հարցը Քարսոնի զայրույթը չհարուցեց: Սկսեց պարզաբանումով:

— Նախ և առաջ,– ասաց,– վստահ չեմ, որ Աստված մարդկանց դժոխք է նետում պարզապես նրա համար, որ որոշակի դավանանքներ չեն ընդունում:

թվայնացրել է 1915.info կայքը

Մի պահ մտածեց և, փորձելով առավել ամբողջական և հիմնավոր պատասխան տալ, սկսեց հեռվից՝ մի թեմայից, որը ժամանակակից մարդկանց մեծամասնությունը համարում է անհեթեթ անախրոնիզմ: Խոսեց մեղքի մասին:

— Պատկերացրեք Աստծուն արարչագործության սկզբին՝ տղամարդու և կնոջ հետ, որոնք նրա պատկերով են ստեղծված,– ասաց Քարսոնը,– առավոտյան արթնանալուն պես նրանք մտածում են Աստծո մասին: Ճշմարտապես սիրում են նրան: Ուրախանում են՝ կատարելով նրա ուզածը, նրանց ամբողջ հաճույքը դա է: Նրանց հարաբերություններն Աստծո և միմյանց հետ ներդաշնակ են:

Բայց մարդն ընկավ՝ ապստամբեց Աստծո դեմ: Ստեղծված Աստծո պատկերով՝ իրեն պատկերացրեց տիեզերքի կենտրոն: Ոչ բառացի, բայց Ադամն ու Եվան այդպես էին կարծում: Ու մենք էլ ենք այդպես մտածում: Այն ամենը, ինչ անվանում ենք «սոցիալական պաթոլոգիա»՝ պատերազմ, բռնություն, թաքուն նախանձ, ամբարտավանություն, թերարժեքության բարդույթ, առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ կորցրել ենք ներդաշնակությունն Աստծո հետ հարաբերություններում: Մեղքից հետո տառապանքը եկավ աշխարհ:

Աստծո տեսանկյունից, սա չափազանց զզվելի է: Ուրեմն ի՞նչ պիտի անի Աստված դրա հետ: Եթե Նա ասի՝ «Դե, դա ինձ չի հետաքրքրում», կնշանակի, որ նրան չի անհանգստացնում չարիքի գոյությունը: Դա նման կլինի նրան, որ ասենք. «Ա՜խ, հա, Հոլոքոստը, դե, ինձ համար միևնույն է»: Սարսափելի չէ՞ մտածել, որ Աստված կարող է անտարբեր լինել նման բաների նկատմամբ:

Բայց սկզբունքորեն եթե նա այն տեսակ Աստված է, որ այդ հարցերում բարոյական դատողություններ ունի, պիտի բարոյական դատողություններ ունենա այն մեծ խնդրի մասին, որ բոլոր այս՝ աստվածային պատկերը կրողներն իրենց ողորմելի բռունցքներն են թափահարում Նրա դեմքին ու Ֆրենկ Սինատրայի հետ երգում են «Արեցի իմ ձևով»: Դա է մեղքի իրական բնույթը:

Ընդ որում, դժոխքը վայր չէ, որին մատնում են մարդկանց, որովհետև բավական լավ մարդիկ էին, ուղղակի ճիշտ բաների չէին հավատում: Նրանք դժոխքի են դատապարտվում, քանի որ չեն հնազանդվում իրենց Արարչին և ուզում են տիեզերքի կենտրոնը լինել: Դժոխքում ոչ թե ապաշխարող մեղավորներ են, որոնց անբարյացակամ Աստված չի ցանկանում բաց

թվայնացրել է 1915.info կայքը

թողնել այնտեղից, այլ նրանք, ովքեր, արհամարհելով հավերժական կյանքը, ուզում են լինել տիեզերքի կենտրոնը և համառորեն ըմբոստանում են Աստծո դեմ: Ի՞նչ է մնում Աստծուն անել: Եթե ասի, որ Իր համար միևնույն է, ուրեմն դա այն Աստված չէ, որին ծառայում ենք, այլ ինչ-որ ուրիշը՝ անտարբեր ու բացահայտորեն դաժան: Եթե Նա այլ կերպ վարվեր նրանց հետ, ովքեր հանդգնորեն մերժում են Իրեն, կզրոյացներ Իր աստվածությունը:

— Այո,– ընդհատեցի ես,– բայց կարծես մարդիկ սարսափած են հենց այն մտքից, որ Աստված Իր արարածներին դատապարտում է հավերժական տանջանքների: Դաժան է թվում, չէ՞:

— Նախ,– նկատեց Քարսոնը,– Աստվածաշունչն ասում է, որ տարբեր մեղքերի համար տարբեր պատիժներ կան, ուստի վստահ չեմ, որ բոլորը հավասարապես են տառապում:

Երկրորդ, եթե Աստված ձեռք քաշեր այս ընկած աշխարհից, այնպես որ մարդկային չարությունը սահմանափակումներ չունենար, ապա ամեն վատ բան, ամբողջ ստորությունն ու դաժանությունը, որ կան մարդու մեջ, ազատություն կստանային, և այդ ժամանակ դժոխք կստեղծեինք երկրի վրա: Եթե ենթադրենք, որ բոլոր մեղավորները պետք է հավաքվեն մեկ տեղում, որտեղ նրանք չեն կարողանա վնասել ոչ ոքի՝ բացի միմյանցից, ապա ի՞նչ կստանանք, եթե ոչ դժոխքի գաղափարը: Ինչ-որ իմաստով դժոխքն այն է, ինչ մեղավորները ստեղծում են իրենց համար, ինչին նրանք ձգտում են՝ հրաժարվելով զղջալ ու ապաշխարել:

Կարծեցի՝ Քարսոնը պատասխանն ավարտել է, որովհետև մի պահ տատանվեց: Բայց նա ևս մի կարևոր միտք ուներ:

— Աստվածաշնչի պնդումներից մեկն այն է, որ, ի վերջո, ոչ միայն արդարարություն է հաստատվելու, այլև դրա հաստատումը տեսնվելու է, որպեսզի ամեն բերան լռի:

Կառչեցի այդ վերջին պնդումից:

— Այլ կերպ ասած, դատաստանի ժամին աշխարհում ոչ ոք չի՞ կարողանա ասել, որ Աստված անարդար է եղել իր նկատմամբ: Բոլորը կընդունեն, որ Աստված դատում է աշխարհին և մարդկությանը՝ գերագույն արդարության օրենքների համաձայն:

— Այդպես է,– համոզված ասաց Քարսոնը: — Այս աշխարհում ամեն օր բախվում ենք անարդարության: Բայց դատաստանի օրն արդարությունը կկատարվի, և բոլորը դա կտեսնեն: Ոչ ոք չի կարողանալու ասել՝ արդար չէ:

թվայնացրել է 1915.info կայքը

Հիսուս և ստրկությունը

Մի այլ հարց կար, որն ուզում էի քննարկել Քարսոնի հետ: Նայեցի ժամացույցիս:

— Մի քանի րոպե ունեք,– հարցրի:

Երբ վստահեցրեց, որ ունի, անդրադարձա ևս մեկ հակասական թեմայի:

Եթե Հիսուս Աստված է, Նա պիտի բարոյապես կատարյալ լինի: Բայց քրիստոնեության որոշ քննադատներ պնդում են, որ հենց այստեղ է Նա թերանում, որովհետև, ասում են, լուռ հավանություն տվեց ստրկության գարշելի ավանդույթին: Մորթոն Սմիթը գրում է.

> «Հռոմեական պետությունը և ինքը՝ կայսրը, անհամար ստրուկներ ունեին, Երուսաղեմի տաճարն ուներ ստրուկներ, քահանայապետը (նրանցից մեկը Հիսուսին ձերբակալելիս կորցրեց ականջը), բոլոր հարուստներն ու գրեթե ամբողջ միջին դասը ստրուկներ ունեին: Որքան մեզ հայտնի է, Հիսուս երբեք չի քննադատել այս փաստը: Իր երիտասարդության տարիներին ստրուկների ապստամբություններ բռնկվեցին Պաղեստինում ու Հորդանանում: Եթե այսպիսի ապստամբության առաջնորդը հրաշագործ լիներ, մեծ թվով հետևորդների կգրավեր: Եթե Հիսուս դատապարտեր ստրկությունը կամ ազատություն խոստանար, հաստատ կիմանայինք այդ մասին: Սակայն այդ մասին ոչինչ չի ասվում, ուրեմն ամենահավանական ենթադրությունն այն է, որ նա ոչինչ չի ասել»[111]:

Պարզվում է՝ Հիսուս ոչինչ չի արել ստրկությունն արմատախիլ անելու համար: Ինչպե՞ս կարելի է դա համատեղել ամբողջ մարդկության հանդեպ Աստծո սիրո հետ:

— Ինչո՞ւ Հիսուս բարձրաձայն չհայտարարեց, որ ստրկությունը չարիք է,– հարցրի: — Ինչո՞ւ ոչինչ չարեց տապալելու համար այն սոցիալական ինստիտուտը, որը նվաստացնում էր Աստծո պատկերով ստեղծված մարդկանց: Սա չի՞ խոսում Նրա բարոյական թերարժեքության մասին:

Քարսոնն ուղղվեց իր աթոռին:

— Անկեղծ ասած, կարծում եմ, որ այդ հարցը բարձրացնողները բաց են թողնում գլխավորը,– ասաց: — Եթե թույլ տաք, կփորձեմ տալ ստրկության պատկերը՝ հնագույն և ժամանակակից, որովհետև մեր մշակույթում

թվայնացրել է 1915.info կայքը

խնդիրը հասկանալիորեն ստացել է ենթատեքստ, որը հին աշխարհում գոյություն չուներ:

— Շարունակեք, խնդրեմ,– ասացի:

Ազատում ստրկությունից

— Աֆրոամերիկացի գիտնական Թոմաս Սոուելը[112] իր «Ռասա և մշակույթ» գրքում նշում է, որ յուրաքանչյուր խոշոր համաշխարհային մշակույթ մինչև մեր դարաշրջանը, առանց բացառության, ստրկություն ունեցել է,– բացատրեց Քարսոնը: — Թեև դա կապված էր ռազմական նվաճումների հետ, սակայն, առաջին հերթին, տնտեսական դեր ուներ: Մանկության օրենքներ այն ժամանակ չկային, ուստի ով չէր կարողանում փակել իր պարտքերը, իրեն կամ ընտանիքը վաճառում էր ստրկության: Դառնալով ստրուկ ազատվում էր պարտքը վճարելու պարտավորությունից ու ստանում աշխատանք, հետևաբար գոյատևելու հնարավորություն: Ստացվում է, ստրկությունը միշտ չէ, որ ամենավատ ելքն էր դրությունից, գոնե գոյությունը պահպանելու տարբերակ էր:

Խնդրում եմ, ճիշտ հասկացեք, չեմ փորձում ոչ մի առումով ռոմանտիզացնել ստրկությունը: Բայց Հին Հռոմի ժամանակներում ստրուկները շատ տարբեր էին. ոմանք ծառաներ էին, որ սև գործն էին անում, ոմանք դասավանդում էին և ունեին մոտավորապես նույն կրթությունը, ինչ ներկայիս բանասիրության դոկտորը: Ստրկությունը կապ չուներ կոնկրետ ռասայի հետ: Ամերիկայում այլ էր. ստրուկները սևամորթներ էին, միայն սևամորթներ ու բոլոր սևամորթները: Դա սարսափելի էր թեկուզ միայն այն պատճառով, որ ծնեց սպիտակների գերակայության անարդար գաղափարը, նախապաշարում, որի դեմ մեզանից շատերը ստիպված են պայքարել մինչև օրս:

Իսկ աստվածաշնչյան ժամանակների հրեական օրենքի համաձայն ամեն Հոբելյան տարում եբրայեցի ստրուկները պիտի ազատ արձակվեին: Գործնականում դա նշանակում էր, որ ստրկության արգելքն ուժի մեջ էր մտնում յոթ տարին մեկ անգամ: Իրականում այդպես արվում էր, թե ոչ, հայտնի չէ, բայց բոլորը գիտեին՝ Աստված այդպես է պատվիրել, ու Հիսուս դաստիարակվել էր այս գիտելիքով:

թվայնացրել է 1915.info կայքը

Բայց չմոռանանք Նրա առաքելության մասին: Նա չէր եկել երկիր՝ տապալելու հռոմեական իշխանությունը և ոչնչացնելու հռոմեական տնտեսությունը, որը ներառում էր ստրկությունը: Նա եկել էր՝ մարդկանց ազատելու իրենց մեղքերից, նրանց փոխակերպելու, որպեսզի սկսեն Աստծուն սիրել իրենց ամբողջ սրտով, ամբողջ հոգով, ամբողջ մտքով ու ամբողջ ուժով, ու իրենց մերձավորին սիրեն, ինչպես իրենք իրենց: Բնականաբար, դա ազդում է ստրկության գաղափարի վրա:

Տեսեք, ինչ է գրում Պողոս առաքյալը Փիլիմոնին ուղղված իր թղթում՝ Օնեսիմոս անունով փախուստի դիմած ստրուկի վերաբերյալ: Պողոսը չի ասում, որ ստրկությունը պետք է վերացվի. նման խոսքերի համար նրան պարզապես մահապատժի կենթարկեին: Փոխարենը նա համառորեն խնդրում է Փիլիմոնին, որ Օնեսիմոսին վերաբերվի ոչ թե որպես ստրուկի, այլ ինչպես կվերաբերվեր իրեն՝ Պողոսին, և ընդունի նրան իբրև եղբայր Քրիստոսով:

Այսպիսով, ստրկությունից ազատվելու համար բավական չէ փոխել տնտեսական համակարգը. մարդիկ պետք է փոխվեն ավետարանի փոխակերպիչ ուժի ազդեցությամբ: Տեսել ենք, թե ինչով են ավարտվում տնտեսական համակարգի բռնի տապալումն ու նոր կարգի պարտադրումը: Կոմունիստական բոլոր իդեալները հիմնված էին «նոր մարդու» գաղափարի վրա, որը պիտի հաջորդեր «հեղափոխական մարդուն»: Խնդիրն այն է, որ «նոր մարդն» այդպես էլ չգտնվեց: Տապալեցին նրանց, ովքեր կեղեքում էին գյուղացիներին, բայց դա չէր նշանակում, որ գյուղացիներն ազատ են դարձել, պարզապես մի լուծը փոխարինվեց մյուսով: Վերջին հաշվով, եթե տևական փոփոխություն ես ուզում, պիտի մարդ արարածի սիրտը փոխես: Ու Հիսուսի առաքելությունը դա էր:

Սոուելը ևս մեկ կարևոր հարց է բարձրացնում՝ ինչպե՞ս ավարտվեց ստրկությունը: Նա նշում է, որ ստրկության արգելման խթանն ավետարանական զարթոնքն էր Անգլիայում: 19-րդ դարի սկզբին բրիտանացիները խորհրդարանական միջոցներով հասան ստրկության վերացմանն իրենց տանը և աստիճանաբար, ոչ առանց ռազմական ուժի օգնության, ոչնչացրին ստրկավաճառությունն ամբողջ Ատլանտյան օվկիանոսում: Ժամանակին մոտ 11 միլիոն աֆրիկացիներ էին ուղարկվել Ամերիկա, ու շատերը տեղ չէին հասել, ևս 13 միլիոն աֆրիկացիների ստրկություն էր սպասվում արաբական աշխարհում: Եվ կրկին բրիտանացիներն էին՝

թվայնացրել է 1915.info կայքը

այն մարդկանց ազդեցությամբ, որոնց սրտերը Քրիստոս փոխել էր, որ իրենց հրետանավակներն ուղարկեցին Պարսից Ծոց՝ ընդդիմանալու սրան:

Քարսոնի պատասխանը ոչ միայն պատմականորեն էր հիմնավորված, այլև իմ սեփական փորձառությամբ: Օրինակ՝ տարիներ առաջ ճանաչում էի մի բիզնեսմենի, որը կատաղի ռասիստ էր, այլ գույնի ցանկացած մեկի հանդեպ մեծամիտ ու ամբարտավան վերաբերմունք ուներ: Նա գրեթե չէր թաքցնում աֆրոամերիկացիների հանդեպ արհամարհանքը՝ մաղձը թափելով կոպիտ կատակներով ու կծու դիտողություններով: Իսկական մոլեռանդ էր, որի վրա չէր ազդում և ոչ մի ողջամիտ փաստարկ:

Հետո Հիսուսի հետևորդ դարձավ: Ապշած հետևում էի, թե ինչպես էին ժամանակի ընթացքում փոխվում նրա վերաբերմունքը, տեսակետներն ու արժեքները՝ Աստծո փոխակերպած հոգու հետ միասին: Նա սկսեց հասկանալ, որ չի կարող որևէ մեկի հանդեպ չարություն տածել, քանի որ Աստվածաշունչը սովորեցնում է, որ բոլոր մարդիկ ստեղծված են Աստծո պատկերով: Այսօր կարող եմ ազնվորեն ասել, որ նա իսկապես հոգատար է ուրիշների հանդեպ և ընդունում է նրանց այնպիսին, ինչպիսին կան, այդ թվում՝ իրենից տարբերվողներին:

Այս մարդուն չէին փոխել ո՛չ օրենքները, ո՛չ բանականության փաստարկները, ո՛չ նրա լավագույն զգացմունքներին դիմելու փորձերը: Նրան փոխել էր Աստված՝ վճռականորեն, ամբողջովին, ընդմիշտ: Սա իմ տեսած բազմաթիվ օրինակներից մեկն է ավետարանի զորության, որի մասին խոսում էր Քարսոնը, այն ուժի, որը վրեժխնդիր ատելությամբ լցվածներին վերածում է մարդասերների, կարծրասիրտ ժլատներին՝ գթասիրտ նվիրատուների, իշխանատենչներին՝ անձնուրաց ծառաների, իսկ իշխելու և ստրկացնելու հակում ունեցողներին այնպիսիների, որոնք ընդունում են բոլորին: Եվ սա լիովին համապատասխանում է Պողոս առաքյալի խոսքերին Գաղատացիներին 3:28-ում. «Այլևս խտրություն չկա ո՛չ հրեայի և հեթանոսի, ո՛չ ծառայի և ազատի, ո՛չ արուի և էգի, որովհետև ամենքդ մեկ եք Քրիստոս Հիսուսով»:

Աստծո բանավոր դիմանկարը. լիակատար համապատասխանություն

Մեր զրույցը, որ երբեմն հասնում էր բարձր լարվածության, տևեց ավելի քան երկու ժամ: Ստիպված էի մի քանի անգամ փոխել ձայնագրիչի ժապավենը: Իսկ խոսակցությունն ամբողջությամբ գրավոր շարադրելու համար շատ ավելի մեծ տեղ կպահանջեր, քան այս գլուխը զբաղեցնում է: Իմ բոլոր հարցերին Քարսոնը պատասխանում էր մանրամասն ու տրամաբանված, գործի իմացությամբ ու հիմնավոր փաստարկներով: Սակայն հիմնական հարցը՝ ինչ է մարմնավորումը, մնաց անպատասխան: Բայց մարմնավորման բուն փաստը, ըստ Աստվածաշնչի, կասկածից վեր է, նույնիսկ եթե հստակ չգիտենք, թե ինչպես է Հոգին մարմին առնում: Հիսուս Քրիստոսի մեջ, ասում է Նոր Կտակարանը, Աստծո բոլոր հատկանիշները դրսևորվեցին:

– Ամենագիտությունն. Հովհաննես 16:30-ում Հովհաննես առաքյալը հաստատում է Հիսուսի մասին. «Հիմա գիտենք, որ ամեն բան գիտես»:

– Ամենագոյությունն. Հիսուս Մատթեոս 28:20-ում ասաց. «Ես ձեզ հետ եմ բոլոր օրերին, մինչև աշխարհի վախճանը»: Իսկ Մատթեոս 18:20-ում ասաց. «Որտեղ երկու կամ երեք հոգի հավաքված են իմ անունով, այնտեղ՝ նրանց մեջ եմ»:

– Ամենակարողությունն. «Ինձ տրվեց ամեն իշխանություն երկնքում ու երկրի վրա»,– Մատթեոս 28:18-ում ասաց Հիսուս:

– Հավիտենականությունն. Հովհաննես 1:1-ը Հիսուսի մասին հայտարարում է. «Սկզբից էր Բանը, և Բանն Աստծո մոտ էր, և Բանն Աստված էր»:

– Անփոփոխությունն. Եբրայեցիներին 13:8-ում ասվում է. «Հիսուս Քրիստոս նույնն է երեկ, այսօր ու հավիտյան»:

Հին Կտակարանը, գծելով Աստծո դիմանկարը, Նրան անվանում է Ալֆա և Օմեգա, Տեր, Փրկիչ, Թագավոր, Դատավոր, Լույս, Ժայռ, Քավիչ, Հովիվ, Արարիչ, կյանք պարգևող, մեղքերը ներող ու աստվածային հեղինակությամբ խոսող: Զարմանալի է, թե որքան է այս ամենը համապատասխանում Հիսուսի Նոր Կտակարանի նկարագրությանը[113]:

թվայնացրել է 1915.info կայքը

Հիսուս ինքը Հովհաննես 14:7-ում ասում է. «Եթե ինձ ճանաչեիք, կճանաչեիք և իմ Հորը»: Ահա այս հատվածի ազատ թարգմանությունը. «Նայեք Աստծո դիմանկարին Հին Կտակարանում և կտեսնեք, որ Նա նման է ինձ ջրի երկու կաթիլի պես»:

Քննարկումներ

Հարցեր խորհրդածելու կամ խմբային պարապմունքի համար

1. Կարդացեք Փիլիպեցիներին 2:5-8-ը, որտեղ խոսվում է, թե ինչպես Հիսուս «ինքն իրեն ունայնացրեց», «ինքն իրեն խոնարհեցրեց հնազանդ լինելով մինչև մահ, այն էլ խաչի մահ»: Ինչո՞ւ Նա արեց դա: Հետո կարդացեք 9-11 համարները: Ո՞րն էր Նրա առաքելությունը: Ինչի՞ հիման վրա մի օր ամբողջ աշխարհը կհասկանա, որ Հիսուս Տերն է:
2. Դժոխքի գաղափարը խոչընդո՞տ է ձեր հոգևոր ճանապարհին: Ինչպե՞ս կարձագանքեք Քարսոնի բացատրությանը:
3. Քարսոնն անդրադարձավ Աստվածաշնչի որոշ համարների, որոնք առաջին հայացքից թույլ են տալիս ենթադրել, որ Հիսուս արարված էակ էր կամ պակաս չափով էր Աստված: Նրա փաստարկները համոզիչ համարեցի՞ք: Ինչո՞ւ: Այս հարցերի նրա վերլուծությունն ի՞նչ սովորեցրեց սուրբ գրությունները մեկնաբանելու համար պատշաճ տեղեկատվական հենք ունենալու անհրաժեշտության առումով:

թվայնացրել է 1915.info կայքը

ԳԼՈՒԽ 10

Մատնահետքերի փաստը

Համապատասխանում էր Փրկչի ինքնությանը Հիսուս և միայն Հիսուս

Սովորական շաբաթ օր էր: Ճաշից հետո Կլարենս Հիլերը ներկել էր Չիկագոյի իր երկհարկանի տան բազրիքի ճաղաշարը: Այդ երեկո Հիլերները շուտ պառկեցին քնելու: Այն, ինչ տեղի ունեցավ այդ գիշեր, 1910-ի սեպտեմբերի 19-ի գիշերը, մեկընդմիշտ փոխելու էր ամերիկյան քրեական օրենքը:

Հիլեր ամուսիններն արթնացան վաղ առավոտյան և նկատեցին, որ իրենց դստեր ննջարանի կողմի գազի լամպը չի վառվում: Դա նրանց կասկածելի թվաց, և Կլարենսը դուրս եկավ տեսնելու, թե ինչ է պատահել: Քիչ անց նրա կինը լսեց ծեծկռտուքի ձայներ, աստիճաններով ցած գլորվող երկու մարդու թրմփոց, երկու կրակոց ու շքամուտքի դռան շխկոցը: Նա դուրս վազեց ննջասենյակից ու Քլարենսին տեսավ աստիճանների տակ՝ մեռած:

Հիլերների տնից մոտ 1.5 կմ հեռավորության վրա ոստիկանությունը ձերբակալեց Թոմաս Ջենինգսին, որը նախկինում դատապարտվել էր կոտրելու միջոցով գողություն կատարելու համար: Հագուստի վրա արյուն կար, ձախ ձեռքը վնասված էր. երկուսն էլ բացատրեց նրանով, որ տրամվայի տակ է ընկել: Նրա գրպանում ոստիկանները գտան ատրճանակ՝ ճիշտ նույն տիպի, որից կրակել էին Կլարենս Հիլերին, բայց մեղադրանք առաջադրելու համար դա բավարար չէր, և ոստիկանությունը սկսեց մանրակրկիտ խուզարկել Հիլերի տունը՝ լրացուցիչ հանցանշաններ փնտրելով: Շուտով ի հայտ եկավ մի անվիճելի փաստ. մարդասպանը տուն էր մտել բակի կողմից՝ խոհանոցի պատուհանից: Հենց այդ պատուհանի կողքի ճաղերից մեկի վրա էլ խուզարկուները հայտնաբերեցին ինչ-որ մեկի ձախ ձեռքի չորս մատների հստակ հետքեր՝ մեկընդմիշտ տպված սպիտակ ներկի վրա, որը Կլարենսն էր խնամքով քսել բազրիքի ճաղերին, իր մահից ընդամենը մի քանի ժամ առաջ:

Մատնահետքերի հանցանշանն այդ ժամանակ նոր հասկացություն էր: Այն առաջին անգամ ներկայացվեց Սենտ Լուիսում կայացած միջազգային

թվայնացրել է 1915.info կայքը

ոստիկանական ցուցահանդեսում: ԱՄՆ-ում որևէ մեկը դեռ չէր դատապարտվել սպանության համար՝ մատնահետքերի հիման վրա:

Չնայած դատապաշտպանների վճռական առարկություններին, որ այդպիսի հանցանշանները գիտական չեն և անթույլատրելի են, չորս ոստիկան վկայեց, որ ներկի վրա դրոշմված մատնահետքերը կատարելապես համապատասխանում են Թոմաս Ջենինգսի մատնահետքերին: Ատենակալները Ջենինգսին մեղավոր ճանաչեցին, Իլինոյսի Գերագույն դատարանն իր պատմական որոշմամբ հաստատեց դատավճիռը, և Ջենինգսին կախաղան հանեցին[114]:

Մատների դրոշմով մարդու ինքնությունը որոշելու մեթոդը հիմնված է մի պարզ փաստի վրա. յուրաքանչյուր մարդու մատնահետքերը եզակի են և անկրկնելի: Եթե որևէ առարկայի վրա դրոշմված մատնահետքը ճշգրիտ համապատասխանում է մարդու մատի գծապատկերին, քննիչները կարող են գիտական որոշակիությամբ եզրակացնել, որ տվյալ անձը դիպել է այդ առարկային:

Բազմաթիվ քրեական գործերում հիմնական ապացույցի դերը կատարել են հենց մատնահետքերը: Հիշում եմ, թե ինչպես մի դատավարության ժամանակ անհերքելի ապացույց համարվեց մի եզակի բութ մատի հետքը ծխախոտի տուփի պոլիէթիլենային փաթեթի վրա, ինչն էլ քոլեջի ուսանողի սպանության համար 20-ամյա կողոպտիչին դատապարտելու վճռորոշ գործոն դարձավ[115]:

Լավ, բայց ի՞նչ կապ ունի այս ամենը Հիսուս Քրիստոսի հետ: Կա ապացույցի այլ տեսակ, որը, ինչպես մատնահետքերը, հնարավորություն է տալիս ապշեցուցիչ ճշգրտությամբ հաստատել, որ Հիսուս իսկապես Իսրայելի ու աշխարհի Փրկիչն է:

Հրեական սուրբ գրություններում, որոնց քրիստոնյաները Հին Կտակարան են անվանում, մի քանի տասնյակ ամենակարևոր մարգարեություններ կան Փրկչի գալուստի մասին: Նրան Աստված ուղարկելու էր իր ժողովրդին փրկելու: Այս մարգարեությունները, միասին վերցրած՝ ձևավորում են մի տեսակ «մատնահետք», որին միայն Օծյալը կարող է համապատասխանել: Այս կերպ Իսրայելի ժողովուրդը կարող էր բացառել որևէ ինքնակոչի ու հաստատել իրական Փրկչի ինքնությունը:

«Փրկիչ» բառը հունարենում Քրիստոսն է: Բայց Հիսուս իսկապե՞ս Քրիստոսն էր: Նա հրաշքով իրականացրե՞ց Իր ծնունդից 100-ավոր տարիներ

թվայնացրել է 1915.info կայքը

առաջ գրված մարգարեությունները: Ինչպես իմանանք, որ Նա այն միակն է, որին պատկանում են մարգարեական մատնահետքերը:

Այս մասին կարող էի հարցնել ամենատարբեր գիտնականների, որոնք բազմաթիվ կոչումներ ունեին: Բայց ուզում էի զրուցել մեկի հետ, որի համար այս թեման ավելին էր նշանակում, քան զուտ հետազոտական հետաքրքրության առարկան: Այսպես հայտնվեցի Հարավային Կալիֆոռնիայի բավական անսպասելի վայրում:

9-ՐԴ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Լուիս Ս. Լապիդես, աստվածաբանության և գործնական աստվածաբանության մագիստրոս

Լավագույն վայրը որևէ մեկին աստվածաշնչյան թեմաներով հարցեր տալու համար բնականաբար եկեղեցին է: Բայց երբ կիրակնօրյա ծառայությունից հետո հովիվ Լուիս Լապիդեսի հետ նստած էի նրա համայնքի փոքրիկ եկեղեցում, յուրահատուկ, անսովոր զգացում ունեցա: Եկեղեցական նստարաններն ու ապակե նկարներն այն միջավայրը չեն, որտեղ կսպասեիր տեսնել մի լավ հրեա տղայի Նյուարկից, Նոր Ջերսիից:

Ավանդական հրեական միջավայրում մեծացած Լապիդեսի համար հարցը, թե Հիսուս երկար սպասված Փրկիչն է, ակնհայտորեն ոչ թե տեսական, այլ խիստ անձնական, կենսահույզ հարց է, ու հենց դրա համար էլ փնտրում էի Լապիդեսին՝ պարզելու համար նրա սեփական հետաքննության պատմությունը:

Լապիդեսն աստվածաբանության բակալավրի կոչում ստացել է Դալլասի բապտիստական համալսարանում, նաև աստվածաբանության ու գործնական աստվածաբանության մագիստրոսի կոչում՝ Թալբոտի ճեմարանում, մասնագիտանալով Հին Կտակարանի ու սեմական հետազոտություններում: Տասը տարի նրա ծառայությունը կապված էր Ընտրյալ մարդկանց ծառայության* հետ. նա հրեա ուսանողներին սովորեցնում էր Հիսուսի մասին: Դասավանդել է Բիոլայի համալսարանի Աստվածաշնչի

* Մեսիական հրեաներ (անգլ.՝ Chosen People Ministries), ոչ առևտրային կազմակերպություն, որը զբաղվում է հրեաների շրջանում քրիստոնեական ավետարանչությամբ:

թվայնացրել է 1915.info կայքը

ուսումնասիրության ամբիոնում, յոթ տարի ղեկավարել է Ճամփորդություն Աստվածաշնչով* սեմինարները, եղել 15 մեսիական եկեղեցիների համաամերիկյան կազմակերպության նախագահը:

Լապիդեսը բարեկազմ է, նիհար, ակնոց է դնում, խոսում է շատ մեղմ, միշտ ժպտադեմ է ու պատրաստ սրտանց ծիծաղել: Նա ինձ սիրալիր ընդունեց Կալիֆոռնիայի Շերման Օուքս քաղաքի Բեթ Արիել եղբայրությունում: Չէի ուզում անմիջապես անցնել աստվածաշնչյան նրբերանգների վիճարկմանը, դրա փոխարեն Լապիդեսին խնդրեցի պատմել իր հոգևոր ճանապարհի մասին:

Ձեռքերը ծնկներին դրեց, մի պահ նայեց մուգ, փայտե պատերին՝ ասես մտածելով, թե որտեղից սկսի: Եվ լսեցի մի արտասովոր պատմություն, որը մեզ Նյուարկից տարավ Գրինվիչ Վիլիջ, ապա Վիետնամ, Վիետնամից Լոս Անջելես, մի ճանապարհի պատմություն, որը նա անցել էր՝ վարանումներից դեպի հավատ, հուդայականությունից՝ քրիստոնեություն, օտար Հիսուսից մինչև Փրկիչ Հիսուս:

— Ինչպես գիտեք, ծագումով հրեական ընտանիքից եմ,– սկսեց նա: — Յոթ տարի հաճախել եմ պահպանողական հրեական սինագոգ՝ պատրաստվելով Բար Միցվային**: Թեև այդ պարապմունքները շատ կարևոր էինք համարում, մեր ընտանիքի հավատը մեր ամենօրյա կյանքի վրա շատ չէր անդրադառնում: Շաբաթ օրերին աշխատանքը չէինք դադարեցնում, չէինք պահպանում կաշրութի*** կանոնները, բայց, այնուամենայնիվ, հիմնական տոներին հաճախում էինք ավելի խիստ՝ ուղղափառ սինագոգ, որովհետև, չգիտես ինչու, հայրս կարծում էր, որ եթե լրջորեն ենք վերաբերվում Աստծուն, այնտեղ պիտի գնանք:

Երբ ընդհատեցի հարցնելու համար, թե ինչ էին նրան սովորեցրել ծնողները Փրկչի մասին: Լապիդեսի պատասխանը կարճ ու հստակ էր:

— Ոչինչ: Դա երբեք չէր քննարկվում,– պարզապես ասաց նա:

Հավատս չէր գալիս: Սկզբում մտածեցի, որ նրան սխալ եմ հասկացել:

— Ասում եք՝ դա նույնիսկ չէ՞ր քննարկվում,– հարցրի:

---

* Քրիստոնեական կրթական կազմակերպություն (անգլ.՝ Walk Through the Bible)

** Եզրույթ, որը կիրառվում է հուդայականության մեջ կրոնական չափահասության հասած տղային նկարագրելու համար և ուղեկցվում է տոնակատարությամբ, բառացի՝ պատվիրանի որդի:

*** Կաշրութը ծիսական կանոնների համակարգ է, որը որոշում է ինչ-որ բանի համապատասխանությունը հրեական օրենքի՝ Հալախայի պահանջներին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Երբեք,– կրկնեց: — Եվ, որքան հիշում եմ, սինագոգի դասերին նույնպես:

— Իսկ Հիսուսի մասի՞ն,– բոլորովին ապշած հարցրի ես: — Նրա մասին խոսո՞ւմ էին, Նրա անունը երբևէ նշվո՞ւմ էր:

— Միայն անարգանքով,– քմծիծաղ տվեց Լապիդեսը: — Հիմնականում նրան երբեք չէին քննարկում: Հիսուսի մասին իմ տպավորությունները ստանում էի կաթոլիկ եկեղեցիներում. ահա խաչը, փշեպսակը, խոցված կողը, արյան կաթիլները... այն ժամանակ այդ ամենն ինձ անիմաստ էր թվում: Ինչո՞ւ երկրպագել խաչին գամված մարդուն: Երբեք մտքովս չէր անցնում, որ Հիսուս որևէ առնչություն ունի հրեա ժողովրդի հետ: Ուղղակի մտածում էի, որ նա հեթանոսների մի աստված է:

Կռահում էի, որ Լապիդեսի վերաբերմունքը քրիստոնյաների հանդեպ, այնուամենայնիվ, զուտ թյուրիմացության հետևանք չէր:

— Կարծում էիք, որ քրիստոնյանե՞րն են հակասեմիտականության հիմքը դրել,– հարցրի:

— Հեթանոսները քրիստոնյաներին համարժեք էին համարվում ու մեզ սովորեցնում էին զգույշ լինել, որովհետև հեթանոսների մեջ հակասեմիտականություն կարող է լինել,– դիվանագիտորեն արտահայտվեց Լապիդեսը:

— Ուզում եք ասել,– համառեցի,– որ քրիստոնյաները Ձեր մեջ թշնամական զգացո՞ւմ էին առաջացնում:

Այս անգամ նա չմեղմեց բառերը:

— Այո՛, իրականում այդպես էր,– ասաց: — Ավելի ուշ, երբ առաջին անգամ ինձ առաջարկեցին կարդալ Նոր Կտակարանը, անկեղծորեն կարծում էի, թե այն հիմնականում հակասեմիտականության ձեռնարկ է լինելու՝ ինչպես ատել հրեաներին, ինչպես սպանել հրեաներին, ինչպես բնաջնջել նրանց: Կարծում էի, թե ամերիկյան նացիստական կուսակցությունը շատ հանգիստ կկարողանար այն որպես ուղեցույց գործածել:

Գլուխս բացասաբար տարուբերեցի՝ տխրելով այն մտքից, թե որքան շատ այլ հրեա երեխաներ են դաստիարակվել՝ կարծելով, թե քրիստոնյաներն իրենց թշնամիներն են:

թվայնացրել է 1915.info կայքը

Հոգևոր որոնումների սկիզբը

Լապիդեսն ասաց, որ երիտասարդ տարիքում տեղի ունեցած մի քանի իրադարձություններ սասանեցին իր նվիրվածությունը հուդայականությանը: Խնդրեցի մանրամասն պատմել, և նա սկսեց մի պատմությունից, որն ակնհայտորեն մեծագույն տառապանք էր պատճառել իրեն:

— Ծնողներս ամուսնալուծվեցին, երբ 17 տարեկան էի,– նրա դողացող ձայնից կարող էի հասկանալ, որ նույնիսկ այսքան տարի անց, նրան ցավ էր պատճառում այդ մասին խոսելը: — Եվ սա ուժեղ ազդեցություն ունեցավ հավատի վրա, որն այն ժամանակ ապրում էր իմ սրտում: Մտածում էի՝ ո՞ւր է Աստված: Ինչո՞ւ չեն գնում ռաբբիի մոտ խորհուրդ հարցնելու: Ի՞նչ օգուտ կրոնից, եթե այն չի կարող մարդկանց օգնել գործնականում: Այն, ինչ խոսք, չկարողացավ ծնողներիս միասին պահել: Նրանք բաժանվեցին, ու դրա հետ իմ սրտից մի կտոր պոկվեց: Հուդայականության մեջ չէի զգում անձնական կապ Աստծո հետ: Բազմաթիվ գեղեցիկ արարողություններ ու ավանդույթներ կային, բայց Աստված հեռու էր, ինչ-որ տեղ, Սինա լեռան վրա, հեռու և անհասանելի: Նա ասել էր. «Ահա քեզ օրենքը, պահիր, և ամեն ինչ լավ կլինի, ցտեսություն, հետո կհանդիպենք»: Իսկ ես այստեղ էի, երկրի վրա, դեռահաս, որի մեջ մոլեգնում են հորմոնները: Ես մտածում էի՝ Աստծուն հուզո՞ւմ են իմ դժվարությունները: Նա հոգո՞ւմ է իմ մասին, որպես անհատի: Եթե այո, ինչո՞ւ չեմ զգում:

Ծնողների ամուսնալուծությունն առաջ բերեց ընդվզումի ժամանակաշրջան: Երաժշտությամբ տարված և Ջեք Կերուակի ու Թիմոթի Լիի գրվածքների ազդեցության տակ նա չափից դուրս շատ ժամանակ էր անցկացնում Գրինվիչ Վիլիջի* սրճարաններում, որպեսզի քոլեջ գնար, ինչը նրան խոցելի էր դարձնում զորակոչի համար: 1967-ին նա իրեն գտավ աշխարհի մյուս ծայրում՝ բեռնատար նավի վրա, որի պայթյունավտանգ բեռը՝ զինամթերք, ռումբեր, հրթիռներ ու այլ պայթուցիկներ, այն դարձնում էին գրավիչ թիրախ՝ Վիետկոնգի** համար:

---

* Թաղամաս Նյու Յորքում

** Կազմակերպության լրիվ անվանումը՝ Վիետնամի ազգային ազատագրական ճակատ: «Վիետկոնգ» հապավումը հայտնի է դարձել ֆիլմերից:

— Վիետնամում մեզ հրահանգավորելու ժամանակ ասացին. «Ձեր 20 տոկոսը հավանաբար կսպանվի, մյուս 80 տոկոսը հավանաբար սեռական հիվանդություն ձեռք կբերի, կդառնա հարբեցող կամ կտրվի թմրադեղերին»: Ես մտածեցի՝ անգամ 1 տոկոս հավանականություն չկա, որ նորմալ դուրս կգամ: Շատ խավար շրջան էր: Ականատես եղա տառապանքի, տեսա դիապարկեր, տեսա պատերազմի ավերածությունը: Ու հակասեմիտականության հանդիպեցի զինվորներից ոմանց մոտ: Նրանցից մի քանիսը՝ Հարավից, նույնիսկ մի գիշեր վառվող խաչ կառուցեցին: Ես հավանաբար ուզում էի հեռու մնալ իմ հրեական ինքնությունից, գուցե դա էր պատճառը, որ սկսեցի խորանալ Արևելքի կրոնների մեջ:

Ճապոնիայում գտնվելու ընթացքում Լապիդեսը գրքեր էր կարդում արևելյան փիլիսոփայությունների մասին ու այցելում բուդդիստական տաճարներ:

— Ինձ ծայրահեղ անհանգստացնում էր չարիքը, որը տեսել էի, ու փորձում էի գլուխ հանել, թե հավատն ինչպես կարող է հաղթահարել այն,– ասաց նա: — Ասում էի. «Եթե Աստված կա, ինձ հետաքրքիր չէ՝ նրան Սինա լեռան վրա՞ կգտնեմ, թե՞ Ֆուձիյամա: Երկու դեպքում էլ կընդունեմ նրան»:

Նա Վիետնամում ողջ մնաց՝ տուն վերադառնալով մարիխուանայի հանդեպ նոր ձեռք բերած հակումով ու բուդդայական քահանա դառնալու ծրագրերով: Փորձեց ապրել ինքնահրաժարումի ասկետիկ կենսակերպով՝ ձգտելով ազատվել անցյալի սխալների վատ կարմայից, բայց շուտով հասկացավ, որ երբեք չի կարողանալու հատուցել իր բոլոր սխալների համար:

Լապիդեսը մի պահ լուռ էր:

— Հուսահատ էի,– վերջապես ասաց նա: — Հիշում եմ, որ կանգնել էի մետրոյում ու մտածում էի. «Գուցե լուծումը ռելսերի վրա ցատկելն է: Կարող էի ինձ ազատել այս մարմնից և ուղղակի միաձուլվել Աստծո հետ: Շատ շփոթված էի: Ես սկսեցի ԼՍԴ* փորձարկել:

Նոր սկիզբ փնտրելով՝ նա որոշեց տեղափոխվել Կալիֆոռնիա, որտեղ շարունակվեց նրա հոգևոր փնտրտուքը:

— Գնում էի բուդդիստական հավաքների, բայց այնտեղ միայն դատարկություն գտա,– ասաց նա: — Չինական բուդդայականությունն անաստ-

* Հզոր թմրամիջոց, որը փոփոխում ու խեղաթյուրում է իրականության ընկալումը:

թվայնացրել է 1915.info կայքը

ված էր, ճապոնականը պաշտում էր Բուդդայի արձանիկներ, ձեն բուդ-դայականությունը չափից դուրս հպանցիկ էր: Գնում էի սայենթոլոգների հավաքների, բայց դրանք չափազանց մանիպուլատիվ էին ու վերահսկող: Իսկ հինդու աստվածները կազմակերպում էին վայրի օրգիաներ, կամ նույնիսկ պարզվում էր, որ կապույտ փղեր են: Այդ ամենն անիմաստ էր թվում, ու հոգիս խաղաղությամբ չէր լցնում:

Նա նույնիսկ գնացել էր սատանիստական ժողովների:

— Դիտում էի ու մտածում. «Այստեղ ինչ-որ բան է կատարվում, բայց լավ բան չէ»,– շարունակեց նա: — Ինչ-որ բան էր կատարվում իմ թմրած մտքում: Ես ընկերներիս ասացի, որ չարն իրական է, որ այն ապրում է աշ-խարհում և կարող է կառավարել մարդկանց, որ ես զգում եմ դրա ուժը: Առանց դժվարության հավատացի չարին՝ չափից դուրս շատ էի տեսնում այն: — Նա քմծիծաղեց տխուր հեգնանքով: — Կարծես թե սատանայի գո-յությունն ընդունել եմ Աստծուն ընդունելուց շատ առաջ:

Չեմ կարող հավատալ Հիսուսին

1969 թվականն էր: Հետաքրքրասիրությունը Լապիդեսին մղեց այցելելու Սանսեթ Սթրիփ՝ տեսնելու մի քարոզիչի, որն իրեն շղթայակապել էր երեք մետր բարձրությամբ խաչին՝ ի նշան բողոքի տեղական պանդոկատերե-րի դեմ, որոնք հաջողացրել էին նրան վտարել առևտրային կենտրոնում գտնվող ցուցափեղկով ծառայությունից: Այնտեղ, մայթի վրա, Լապիդեսը գտավ որոշ քրիստոնյաների, որոնք նրան ներգրավեցին հանպատրաս-տից հոգևոր բանավեճի մեջ: Փոքր-ինչ ինքնագոհ փորձեց զարմացնել նրանց արևելյան փիլիսոփայությամբ:

— Այնտեղ Աստված չկա,– ասաց նա՝ ժեստով երկինքը ցույց տալով: — Մենք ենք Աստված: Ես եմ Աստված: Դուք եք Աստված: Ուղղակի պիտի գիտակցեք դա:

— Դե, եթե Աստված ես, ինչո՞ւ մի քար չես ստեղծում,– պատասխանեց մի քրիստոնյա: — Ուղղակի այնպես արա, որ մի բան հայտնվի: Աստված դա է անում:

Թմրանյութով լցված իր մտքում Լապիդեսը պատկերացրեց, որ քար է բռնել:

թվայնացրել է 1915.info կայքը

— Հա, դե, քար է,– ասաց նա՝ դատարկ ձեռքը մեկնելով:

Քրիստոնյան ծաղրեց:

— Դա է տարբերությունը քո և իսկական Աստծո միջև,– ասաց: — Երբ Աստված որևէ բան է արարում, բոլորը տեսնում են: Օբյեկտիվ է, ոչ սուբյեկտիվ:

Դա տպավորվեց Լապիդեսի մտքում: Որոշ ժամանակ այդ մասին մտածելուց հետո ինքն իրեն ասաց. «Եթե Աստծուն գտնեմ, նա պիտի օբյեկտիվ լինի: Էլ գործ չունեմ արևելյան փիլիսոփայության հետ, որն ասում է՝ ամեն ինչ իմ մտքում է, ու որ կարող եմ իմ սեփական իրականությունը ստեղծել: Աստված պիտի օբյեկտիվ իրականություն լինի, եթե պիտի իմաստ ունենա իմ սեփական երևակայությունից դուրս:

Երբ քրիստոնյաներից մեկը Հիսուսի անունը հիշատակեց, Լապիդեսը փորձեց նրան հակահարված տալ իր ծամծմված պատասխանով:

— Ես հրեա եմ,– ասաց: — Չեմ կարող հավատալ Հիսուսին:

Այստեղ խոսակցությանը խառնվեց մեկ այլ մարդ՝ քարոզիչ:

— Փրկչի մասին մարգարեությունները գիտե՞ս,– հարցրեց:

Լապիդեսը հանկարծակիի եկավ:

— Մարգարեությունն՞ր,– հարցրեց: — Երբեք չեմ լսել դրանց մասին:

Հոգևորականն ապշեցրեց Լապիդեսին՝ Հին Կտակարանի որոշ մարգարեություններ հիշատակելով: «Սպասիր,– մտածեց Լապիդեսը,– նա հրեական գրություններն է մեջբերում: Ինչպե՞ս կարող է Հիսուս այնտեղ լինել»:

Երբ քարոզիչը նրան Աստվածաշունչ առաջարկեց, Լապիդեսը թերահավատորեն ծռմռվեց:

— Նոր Կտակարանն էլ, իհարկե, մեջն է, չէ՞,– հարցրեց:

Քարոզիչը գլխով արեց:

— Լավ, Հին Կտակարանը կկարդամ, բայց մյուսը չեմ բացելու,– ասաց Լապիդեսը:

Քարոզիչի պատասխանն ապշեցրեց նրան:

— Շատ լավ,– ասաց: — Ուղղակի կարդա՛ Հին Կտակարանն ու խնդրի՛ր Աբրահամի, Իսահակի ու Հակոբի Աստծուն՝ Իսրայելի՛ Աստծուն, որ նշան տա, որ Հիսուս Փրկիչն է: Որովհետև Նա ձեր Փրկիչն է: Նախ Նա եկավ փրկելու հրեա ժողովրդին, հետո դարձավ ամբողջ աշխարհի Փրկիչը:

Լապիդեսի համար սա նոր տեղեկություն էր: Հետաքրքրական տեղեկություն: Ապշեցուցիչ տեղեկություն: Նա վերադարձավ իր բնակարան,

թվայնացրել է 1915.info կայքը

բացեց Հին Կտակարանի առաջին գիրքը՝ Ծննդոցը, ու սկսեց փնտրել Հիսուսին Նազարեթից, հյուսնի ծնունդից հարյուրավոր տարիներ առաջ գրված խոսքերի մեջ:

Մեր մեղքերի համար խոցված

— Շուտով,– շարունակեց Լապիդեսը,– ամեն օր Հին Կտակարան էի կարդում ու օրեցօր նոր մարգարեություններ հայտնաբերում ինձ համար: Օրինակ՝ Բ Օրենքն ասում է, որ կգա մի մարգարե, որ ավելի մեծ կլինի, քան Մովսեսը, և բոլորս կլսենք նրան: Կարդում էի ու մտածում. «Ո՞վ կարող է լինել Մովսեսից մեծ»: Միայն Մեսիան է Մովսեսի պես մեծ ու նույնքան հարգված, բայց ավելի մեծ իմաստության տեր ու ավելի մեծ ուսուցիչ: Ես կառչեցի դրանից ու սկսեցի փնտրել նրան:

Լապիդեսն ագահորեն կարդում էր Հին Կտակարանը, մինչև հասավ Եսայի 53-ին, և զարմանքից քարացավ: Նրա առջև պատկերված էր թափանցիկության աստիճան պարզ և հիանալի հղկված պատկեր, բարձր պոեզիայի տողերով զգեստավորված մարգարեություն. դա Մեսիայի դիմանկարն էր, որը գալիս էր տառապելու և մեռնելու Իսրայելի ու ամբողջ աշխարհի մեղքերի համար. դիմանկար՝ Հիսուսի ծնունդից 700 տարի առաջ նկարագրված[116]:

> Նա հարվածների ենթակա մի մարդ եղավ, որ ցավերին համբերել գիտի,
> Իր երեսը դարձնելով՝ արհամարհվեց ու բանի տեղ չդրվեց:
> Նա մեր մեղքերն էր վերցնում և մեզ համար չարչարվում, սակայն մենք նրա ցավերը, հարվածներն ու չարչարանքները համարեցինք իբրև Աստծուց եկած բան:
> Բայց նա խոցվեց մեր մեղքերի համար և մեր անօրենությունների համար դատապարտվեց, մեր խաղաղության համար նա՛ պատիժ կրեց, և նրա՛ վերքերով մենք բժշկվեցինք:
> Ամենքն էլ մոլորված ոչխարներ են. մարդն իր ճանապարհին մոլորվեց, բայց Տերը Նրան մատնեց մեր մեղքերի համար:
> Ու նա վշտից իր բերանն անգամ չի բացում:

Ինչպես ոչխար, նա մորթվելու տարվեց և, ինչպես գառ, անմռունչ կանգնած է խուզողի առաջ և նրա նման իր բերանը չի բացում:
Խոնարհության շնորհիվ նրա դատաստանը վերացավ, և նրա սերնդից ո՞վ ընդդիմացավ:
Երկրի վրա վերջ տվին նրա կյանքին, իմ ժողովրդի անօրենությունների պատճառով նա մահվան մատնվեց:
Չարերի հետ մահվան մատնվեց ու մահվան մեջ հարուստների հետ եղավ, թեև նա անօրենություն չգործեց, և նենգությունը տեղ չգտավ նրա բերանում:
Նա շատերի մեղքերը կրեց, և նրանց անօրենությունների համար դատապարտվեց:

Եսայի 53:3-9, 12

Լապիդեսն ակնթարթորեն ճանաչեց դիմանկարը: Նազարեթցի Հիսուսն էր: Նա հիմա սկսում էր հասկանալ նկարները, որ տեսել էր կաթոլիկ եկեղեցիներում, որոնց կողքով անցել էր մանուկ հասակում՝ տառապող Հիսուս, խաչված Հիսուս, Հիսուս, որը, հիմա նա հասկացավ, «խոցվել էր մեր հանցանքների համար», մինչ «կրում էր շատերի մեղքը»:

Մինչ հրեաները կենդանիների զոհաբերության համակարգի միջոցով իրենց մեղքերի քավությունն էին փնտրում, ահա Հիսուս՝ վերջին զոհաբերական գառը, որը մեկընդմիշտ վճարեց մեղքի դիմաց: Ահա Աստծո՝ փրկության ծրագրի անձնավորումը:

Այս հայտնագործությունն այնքան շշմեցուցիչ էր, որ Լապիդեսը սկզբում պարզապես վախենում էր հավատալ դրան: Նրա համար ավելի հեշտ էր մտածել, որ դա կեղծիք էր, որ քրիստոնյաները վերաշարադրել են Հին Կտակարանի տեքստն ու այլափոխել Եսայու բառերը, որպեսզի ինչի, ասես մարգարեն Հիսուսին է նախապատկերել:

Եվ Լապիդեսը նպատակ դրեց բացահայտել խաբեությունը:

— Խորթ մորս խնդրեցի ինձ Եբրայերեն Գրություններն ուղարկել, որպեսզի կարողանամ ինքս ստուգել,– ասաց նա: — Ուղարկեց, ու կռահեք, թե ինչ գտա. պարզվեց, որ այնտեղ նույնն է գրված՝ բառ առ բառ: Հիմա իսկապես պիտի ընդունեի դա:

թվայնացրել է 1915.info կայքը

Հիսուսի հրեականությունը

Լապիդեսը կրկին ու կրկին Հին Կտակարանում մարգարեությունների էր հանդիպում՝ ընդհանուր առմամբ, չորս տասնյակ խոշոր մարգարեություն: Եսային բացահայտում էր Մեսիայի ծննդյան եղանակը (անարատ հղիություն), Միքիան մատնացույց էր անում նրա ծննդյան վայրը (Բեթղեհեմ), Ծննդոցն ու Երեմիան՝ հստակեցնում ծագումը (Աբրահամի, Իսահակի ու Հակոբի սերունդը՝ Հուդայի ցեղից, Դավթի տնից), սաղմոսները կանխագուշակում էին դավաճանությունն ու կեղծ վկայությունը, նրա մահվան եղանակը (խոցված ձեռքերն ու ոտքերը, թեև այդ տարիներին դեռ չկար այնպիսի մահապատիժ, ինչպիսին խաչելն էր), Նրա Հարությունը (նա փտություն չէր տեսնելու, այլ համբարձվելու էր) և շատ ավելին[117]: Յուրաքանչյուրը մի կտոր պոկում էր Լապիդեսի թերահավատությունից, մինչև նա վերջապես պատրաստ էր վճռական քայլ անել:

— Որոշեցի բացել Նոր Կտակարանն ու կարդալ առաջին էջը,– ասաց նա: — Ահ ու դողով բացեցի Մատթեոսի ավետարանն ու հայացքս հառեցի երկնքին՝ սպասելով, որ որոտը կթնդա, ու կայծակը կզարկի:

Բայց շանթ ու որոտ չեղավ, իսկ Մատթեոսի առաջին խոսքերից շունչս կտրվեց: «Հիսուս Քրիստոսի՝ Դավթի որդու, Աբրահամի որդու ծննդաբանությունը»:

Տեսնում էի, թե որքան հուզված էր Լապիդեսը միայն հիշողությունից, երբ առաջին անգամ կարդաց այդ նախադասությունը:

— Այ քեզ բան,– մտածեցի,– Աբրահամի որդի, Դավթի որդի... ամեն ինչ բռնում է: Դարձա ծննդյան պատմություններին ու մտածեցի. «Մի տես, է՛, Մատթեոսը ցիտում է Եսայի 7:14-ը. «Կույսը պիտի հղիանա ու որդի ծնի»: Հետո տեսա, որ ցիտում է Երեմիա մարգարեին: Նստած մտածում էի՝ սա հրեա ժողովրդի մասին է: Ի՞նչ կապ ունեն հեթանոսները, չեմ հասկանում: Չէի կարողանում կտրվել ավետարաններից: Մինչև վերջ կարդացի ու հասկացա, որ սա ամերիկյան նացիստական կուսակցության ձեռնարկ չէ, այլ կապող օղակ Հիսուսի ու հրեական աշխարհի միջև: Հասա «Գործք առաքելոց» գրքին, ու, անհավատալի՛ էր, նրանք փորձում էին գլուխ հանել, թե ինչպես կարող են հրեաները Հիսուսի պատգամը բերել հեթանոս հույներին: Ամեն ինչ ճիշտ հակառակն էր:

Ճշգրտությունը, որով իրականացան մարգարեությունները, ցնցեց Լապիդեսին: Նա սկսեց մարդկանց ասել, որ Հիսուս էր երկար սպասված Մեսիան: Այդ ժամանակ հասկանում էր դա միայն մտքով, ոչ սրտով, բայց, այնուամենայնիվ, այս բացահայտումը գլխիվայր շուռ տվեց նրա կյանքը:

— Գիտակցում էի, որ, եթե Հիսուսին իմ կյանք ընդունեմ, կենսակերպիս մեջ արմատական փոփոխություններ պիտի լինեն,– բացատրեց նա: — Պիտի հրաժարվեմ թմրանյութերից, վերանայեմ իմ վերաբերմունքը սեքսի նկատմամբ և այսպես շարունակ: Չէի հասկանում, որ Աստված օգնելու էր ինձ այդ փոփոխություններն անելիս: Թվում էր, որ ստիպված եմ լինելու մենակ մաքրել կյանքս:

Հայտնություն անապատում

Մի անգամ Լապիդեսն ընկերների հետ գնաց Մոհավի անապատ: Նրա հոգին այդ ժամանակ շփոթված ու անհանգիստ էր: Մղձավանջները հանգիստ չէին տալիս՝ նրան պատառոտում էին հսկայական շները, որ հարձակվում էին տարբեր կողմերից: Անապատի մացառուտների մեջ նստած՝ հիշում էր ինչ-որ մեկի բառերը, որ ասվել էին նրան Սանսեթ Սթրիփում. «Կամ Աստծո հետ ես, կամ սատանայի. երրորդ ուղի չկա»:

Նա տեսել էր մարմնացած չարին, հավատացել նրան ու այդ կողմում չէր ուզում լինել: «Աստված,– աղաչեց Լապիդեսը,– ուժասպառ եմ պայքարից: Պիտի հավատամ, որ Հիսուս Մեսիան է, հավատամ այնպես, որ կասկածի ստվեր անգամ չմնա: Գիտեմ, որ դու, Իսրայելի Աստված, ուզում ես, որ հավատամ սրան:

Իր պատմությունը Լապիդեսը մի պահ ընդհատեց՝ դժվարանալով բառերով արտահայտել այն, ինչ տեղի ունեցավ իր հետ հետո: Մի քանի վայրկյան լռությունից հետո շարունակեց.

— Չգիտեմ՝ ինչպես նկարագրեմ: Միայն կարող եմ ասել, որ Աստված խոսեց սրտիս հետ, և դա ամենաօբյեկտիվ իրականությունն էր: Նա ցույց տվեց ինձ, որ գոյություն ունի: Ու այդ պահին, այնտեղ, անապատում, սրտիս մեջ ասացի. «Աստված, Հիսուսին ընդունում եմ իմ կյանք: Չեմ հասկանում, թե ինչ պիտի անեմ նրա հետ, բայց ուզում եմ, որ Նա ինձ հետ լինի: Կյանքս լրիվ փչացրել եմ, խնդրում եմ, որ փոխես ինձ»: Ու Աստված

թվայնացրել է 1915.info կայքը

անսաց իմ աղոթքին: Սկսեցի վերափոխվել, և այդ ընթացքը շարունակվում է մինչև այսօր: Ընկերներս տեսան, որ կյանքս փոխվել է, չէին կարողանում հասկանալ՝ ինչու: Ասում էին. «Անապատում հետդ ինչ-որ բան կատարվեց: Էլ չես ուզում թմրանյութ օգտագործել: Քո մեջ ինչ-որ բան է փոխվել»: Իսկ ես պատասխանում էի. «Չեմ կարող բացատրել՝ ինչ կատարվեց: Միայն գիտեմ, որ իմ կյանքում ինչ-որ Մեկը կա, ու այդ Մեկը սուրբ է ու արդար: Նրա շնորհիվ ուրախությամբ եմ նայում ապագային և ինձ ամբողջական եմ զգում»:

Այս վերջին բառում էր կարծես Լապիդեսի գլխավոր միտքը:

— Ամբողջական, ինչպես երբեք,– ընդգծեց նա ինձ համար:

Չնայած դրական փոփոխություններին՝ լուրը ծնողներին հայտնելը մտահոգում էր նրան: Երբ վերջապես արեց դա, արձագանքը հակասական էր:

— Սկզբում ցնծում էին, որովհետև նկատեցին, որ այլևս թմրանյութերից կախում չունեմ, ու հոգիս հանգիստ է,– հիշեց նա: — Բայց այդ փոփոխությունների պատճառը ցնցեց նրանց, կարծես ասեին. «Ինչո՞ւ պիտի Հիսուս լինի: Ինչո՞ւ չի կարող որևէ այլ բան լինել: Նրանք չգիտեին ինչպես վարվել դրա հետ: Եվ, թվում է, մինչև օրս չգիտեն,– տխուր ավելացրեց նա:

Լապիդեսն աղոթեց, որ Աստված իրեն կին ուղարկի, և իրադարձությունների զարմանալի շղթան հանգեցրեց Դեբորայի հետ հանդիպման, որը նույնպես հրեա էր ու Հիսուսի հետևորդ: Նա Լապիդեսին հրավիրեց իր եկեղեցի, և պարզվեց, որ այս եկեղեցու հովիվը նույն հոգևորականն էր, որը շատ ամիսներ առաջ Սանսեթ Սթրիփում համոզեց Լապիդեսին կարդալ Հին Կտակարանը:

Լապիդեսը ծիծաղեց:

— Պիտի տեսնեիք՝ ինչպես նրա բերանը բաց մնաց, երբ հայտնվեցի եկեղեցու շեմին: Եկեղեցական այս համայնքը լի էր նախկին հիպիներով, նախկին բայքերներով ու նախկին թմրամոլներով Սանսեթ Սթրիփից, նաև մի խումբ վերաբնակիչներ կային հարավից: Նյուարքի երիտասարդ հրեայի համար, որը խուսափում էր իրենից տարբեր մարդկանց հետ շփումից՝ վախենալով հանդիպել հակասեմիտիզմի, «եղբայրների ու քույրերի» նման խայտաբղետ ընկերությունն ամենաօգտակար ազդեցությունն ունեցավ:

Հանդիպումից մեկ տարի անց Լապիդեսն ամուսնացավ Դեբորայի հետ: Երկու որդի ունեցան ու միասին սկիզբ դրեցին Բեթ Արիել եղբայրությանը,

թվայնացրել է 1915.info կայքը

որը դարձավ տուն հրեաների ու ոչ հրեաների համար, որոնք նույնպես ամբողջականություն են գտնում Քրիստոսի մեջ:

Հիսուսի մեսիականության դեմ փաստարկներն ու դրանց հերքումները

Լապիդեսն ավարտեց իր պատմությունն ու հանգիստ հենվեց աթոռի հենակին: Չէի համարձակվում խախտել դադարը: Եկեղեցում խաղաղ էր, Կալիֆոռնիայի արևի տակ վիտրաժները շողշողում էին կարմիր, դեղին ու կապույտ գույներով: Լուռ նստած խորհում էի գտնված հավատի պատմության մասին. պատերազմ և թմրանյութեր, Գրինվիչ Վիլիջ, Սանսեթ Սթրիփ ու ամայի անապատ... այս ամենը բոլորովին չէր զուգորդվում իմ առջև նստած հավասարակշռված ու բարեկեցիկ հոգևորականի հետ:

Բայց նրա պատմությունն առաջ բերեց մի շարք հարցեր, որոնք չէի ուզում անտեսել: Լապիդեսի թույլտվությամբ սկսեցի միտքս եկած առաջին հարցով.

— Եթե մարգարեություններն այդքան ակնհայտ էին Ձեզ համար ու անառարկելիորեն Հիսուսին էին մատնանշում, ինչո՞ւ ավելի շատ հրեաներ չեն ընդունում նրան իբրև իրենց Մեսիա:

Պարզվեց, որ այդ հարցը Լապիդեսն իրեն շատ անգամ է տալիս արդեն 30 տարի, այն պահից սկսած, երբ կարդաց Եբրայերեն Գրություններն անծանոթ քրիստոնյայի առաջարկով:

— Ես ժամանակ հատկացրի դրանք կարդալուն,– ասաց: — Որքան էլ տարօրինակ է, թեև հրեա ժողովուրդը հայտնի է բարձր ինտելեկտով, այս ոլորտում անտեղյակությունը մեծ է: Դրան գումարեք հակամիսիոներական կազմակերպությունների գործունեությունը, որոնք սինագոգներում սեմինարներ են անցկացնում՝ փորձելով հերքել մեսիական մարգարեությունները: Հրեաները լսում են նրանց ու այլևս հարկ չեն համարում ինքնուրույն կարդալ այս մարգարեություններն ու ինքնուրույն եզրակացություններ անել: Նրանք պարզապես ասում են. «Մեր ռաբբին ասաց, որ սա Մեսիան չէ, ու վերջ»:

Նման դեպքերում ասում եմ. «Կարծում եք՝ Ձեր ռաբբին առարկություն է բարձրացրել, որը քրիստոնեությունը նախկինում երբեք չի՞ լսել: Գիտնա-

թվայնացրել է 1915.info կայքը

կանները 100-ավոր տարիներ ուսումնասիրել են այս հարցը: Մեծ ու հիանալի գրականություն կա, որ պատասխաններ է պարունակում բոլոր այդ առարկություններին»: Եթե նրանց հետաքրքրում է, օգնում եմ, որ հաջորդ քայլն անեն:

Ինձ հետաքրքրում էր, թե քրիստոնյա դարձած հրեան ենթարկվո՞ւմ է օստրակիզմի, դառնո՞ւմ է վտարանդի իր միջավայրում:

— Այդ գործոնը, իհարկե, գոյություն ունի, և դա չի կարելի անտեսել,– ասաց նա: — Ոմանք հրաժարվում են հավատալ մեսիական մարգարեությունների իրականացմանը միայն այն պատճառով, որ դրա հետևանքը լինելու է ընտանիքի ու հրեա համայնքի հավանական մերժումը: Իսկ դա, հավատացե՛ք, դժվար փորձություն է: Ես գիտեմ՝ ինչ է դա:

Այնուամենայնիվ, մարգարեությունների դեմ ամենատարածված փաստարկներից մի քանիսը սկզբում կարող են բավական համոզիչ թվալ: Դրանք մեկ առ մեկ թվարկեցի Լապիդեսին՝ սպասելով նրա առարկություններին:

1. Պարզ զուգադիպություն

— Հնարավո՞ր է, որ մարգարեությունների իրականացումը Հիսուսով պարզապես զուգադիպություն է,– հարցրի Լապիդեսին: — Գուցե նա մեկն է շատերից, ում «մատնահետքերը» պատահաբար համապատասխանել են մարգարեական դրոշմին:

— Բացառվում է,– եղավ նրա արձագանքը: — Հավանականությունն այնքան չնչին է, որ բացառում է դա: Ինչ-որ մեկը հաշվարկել է ու պարզել, որ ընդամենը ութ մարգարեության իրականացման հավանականությունը հարյուր միլիոն միլիարդից մեկն է: Այդ թիվը միլիոնավոր անգամ ավելի մեծ է մոլորակի վրա երբևէ ոտք դրած մարդկանց ընդհանուր թվից: Եվ եթե վերցնեք այդ քանակով արծաթե դոլար, դրանք կծածկեն Տեխասի ամբողջ տարածքը մոտ 60 սմ շերտով: Հիմա պատկերացրեք, որ այդ դոլարներից մեկի վրա նշան է արված, և Ձեր աչքերը կապում են ու ասում՝ գտեք այն ամբողջ նահանգի տարածքում: Կա՞ հնարավորություն, որ կհաջողվի: Նույնն է հավանականությունը, որ ինչ-որ մեկի մեջ զուտ պատահականորեն իրականանան թեկուզ ութ մարգարեություն:

Ես ուսումնասիրել էի մաթեմատիկոս Պիտեր Սթոուների՝ այս նույն վիճակագրական վերլուծությունը, երբ ինքս էի ուսումնասիրում մեսիական մարգարեությունները: Սթոուները նաև հաշվարկել էր, որ 48 մարգարեություն իրականացնելու հավանականությունը տրիլիոն, տրիլիոն, տրիլիոն, տրիլիոն, տրիլիոն, տրիլիոն, տրիլիոն, տրիլիոն, տրիլիոն, տրիլիոն, տրիլիոն, տրիլիոնից մեկն է[118]:

Մեր միտքը չի կարող այդքան մեծ թիվ ընկալել: Սա ապշեցուցիչ վիճակագրություն է, որը հավասար է չնչին ատոմների թվին մեր տիեզերքից չափերով տրիլիոն, տրիլիոն, տրիլիոն, միլիարդով մեծ տիեզերքում:

Հենց միայն հավանականությունն ասում է, որ որևէ մեկի համար անհնար կլիներ իրականացնել Հին Կտակարանի մարգարեությունները,– եզրակացրեց Լապիդեսը: — Այնինչ Հիսուսին հաջողվեց դա անել ու միայն Նրան՝ ամբողջ պատմության ընթացքում:

Պողոս առաքյալի բառերը միտքս եկան. «Բայց ինչպես որ Աստված նախօրոք հայտնել էր բոլոր մարգարեների բերանով իր Քրիստոսի չարչարվելը, այդպես էլ կատարեց» (Գործք առաքելոց 3:18):

2. Փոփոխված ավետարանի փաստարկը

— Հնարավոր է, որ ավետարանները գրողները միտումնավոր փոխել են որոշ մանրամասներ, որպեսզի թվա, թե Հիսուս իրագործել է մարգարեությունները,– հարցրի Լապիդեսին: — Օրինակ՝ մարգարեությունն ասում է, որ Մեսիայի ոսկորները չեն կոտրվելու, ուրեմն գուցե Հովհաննեսը հորինել է պատմությունն այն մասին, թե ինչպես հռոմեացի զինվորները կոտրեցին Հիսուսի հետ խաչված ավազակների ոտքերը, բայց չկոտրեցին Նրանը: Մարգարեությունները խոսում են 30 արծաթով դավաճանության մասին, ուրեմն գուցե Մատթեոսը հնարամտորեն կեղծել է փաստերը՝ ասելով, որ Հուդան Հիսուսին մատնեց հենց այդ գումարի համար:

Բայց այդ առարկությունն իմ զրուցակցի վրա ավելի մեծ ազդեցություն չգործեց, քան նախորդը:

— Աստված իր իմաստությամբ զսպող գործոններ ու հակակշիռներ է ստեղծել թե՛ քրիստոնեական համայնքի ներսում, թե՛ դրանից դուրս,– բացատրեց Լապիդեսը: — Երբ ավետարանները շրջանառվում էին, կային

թվայնացրել է 1915.info կայքը

մարդիկ, որոնք ներկա էին եղել, երբ այս ամենը կատարվել էր: Որևէ մեկը Մատթեոսին կասեր. «Դու գիտես, որ դա այդպես չի պատահել: Մենք փորձում ենք արդարության ու ճշմարտության կյանքի հաղորդակից դարձնել, մի՛ արատավորիր այն ստով»: Բացի այդ, եթե ավանդությունները ճիշտ են, որ Մատթեոսը մարտիրոսվել է, ինչո՞ւ պիտի նա իրագործված մարգարեություններ կեղծեր ու հետո պատրաստակամ թույլ տար, որ իրեն մահվան ենթարկեն հետևելու համար մեկին, որ ծածուկ գիտեր՝ իրականում Մեսիան չէր: Դա ոչ մի իմաստ չէր ունենա: Ավելին, եթե ավետարաններում կեղծիքներ լինեին, հրեաները չէին զլանա բացահայտել դրանք: Նրանք կասեին. «Ես այնտեղ էի և տեսա, թե ինչպես հռոմեացի զինվորները Հիսուսի ոսկորները կոտրեցին խաչի վրա»: Բայց նույնիսկ եթե հրեական Թալմուդը Հիսուսին քամահրանքով է հիշատակում, այնտեղ ոչ մի բառ չկա այն մասին, թե մարգարեությունների իրագործումը կեղծվել է: Ոչ մի բառ:

3. Կանխամտածված իրագործման փաստարկը

Որոշ թերահավատներ պնդում են, որ Հիսուս իր կյանքը միտումնավոր այնպես է կազմակերպել, որ համապատասխանի մարգարեություններին:

— Նա չէ՞ր կարող Զաքարիա մարգարեի գրքում կարդացած լինել, որ Մեսիան ավանակի վրա է Երուսաղեմ մտնելու, ու հետո դասավորել, որ հենց դա արվի,– հարցրի ես:

Լապիդեսը փոքրիկ զիջում արեց:

— Որոշ մարգարեությունների դեպքում՝ այո՛, դա, իհարկե, հնարավոր է,– ասաց,– բայց շատերի պարագայում սա ուղղակի հնարավոր չէր լինի: Օրինակ՝ ինչպե՞ս կարող էր Հիսուս կազմակերպել, որ սինեդրիոնը Հուդային 30 արծաթ առաջարկեր Նրան դավաճանելու համար: Ինչպե՞ս կարող էր հարմարեցնել իր տոհմաբանությունը, ծննդավայրը, մահապատժի եղանակը, որ զինվորներն իր հագուստի համար վիճակ գցեին կամ որ ոտքերը չկոտրեին խաչի վրա: Ինչպե՞ս կդասավորեր թերահավատների առաջ հրաշքներ գործելը, Իր Հարությունը և, ամենակարևորը, որ ծնվի հենց այդպիսի պահի:

Վերջին մեկնաբանությունը շարժեց հետաքրքրությունս:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ինչ նկատի ունեք, երբ ասում եք՝ այդպիսի պահի,– հարցրի:

— Դանիել 9:24-26-ը կանխատեսում է, որ Մեսիան կգա որոշ ժամանակ անց, երբ Արտաքսերքսես 1-ին թագավորը հրամանագիր կարձակի, որով բոլոր հրեաներին կհրամայվի վերադառնալ Պարսկաստանից և վերականգնել Երուսաղեմի պարիսպները,– բացատրեց Լապիդեսը:

Նա առաջ հակվեց՝ վճռական եզրակացությունն անելու:

— Այսինքն՝ Մեսիային սպասում էին հուզմունքով և հույսերով՝ պատմության հենց այն պահին, երբ ծնվեց Հիսուս,– ասաց: — Դա, իհարկե, այնպիսի բան չէ, որը կարելի էր նախապես դասավորել[119]:

4. Համատեքստը

Մի այլ տարածված առարկություն կա: Այն հատվածները, որոնք քրիստոնյաները համարում են մեսիական մարգարեություններ, իսկապե՞ս մատնանշում են Օծյալի գալուստը, թե՞ քրիստոնյաները դրանք հանում են համատեքստից ու խեղաթյուրում իմաստը:

Լապիդեսը հառաչեց:

— Գիտե՞ք, ես կարդում եմ գրքեր, որոնց հեղինակները քարը քարին չեն թողնում այն ամենից, ինչին մենք հավատում ենք: Ամենահաճելի ժամանցը չէ, բայց կարդում եմ դրանք, ուսումնասիրում յուրաքանչյուր առարկություն, հետո հետազոտում բնագրի համատեքստն ու բառապաշարը: Ամեն անգամ մարգարեությունները դիմանում են փորձությանն ու ճշմարիտ են դուրս գալիս:

Ահա թե ինչ կասեմ թերահավատներին. խոսքերս մի՛ ընդունեք, բայց մի՛ ընդունեք նաև ձեր ռաբբիի պնդումները: Ժամանակ տրամադրեք ինքնուրույն հետազոտելուն: Այսօր ոչ ոք չի կարող ասել՝ բավարար տեղեկություն չկա: Բազմաթիվ գրքեր կան, որոնք կարող են օգնել:

Ու մի բան էլ: Անկեղծորեն խնդրե՛ք Աստծուն, որ ցույց տա, թե Հիսուս իսկապե՞ս Մեսիան է: Ես դա արել եմ, ու առանց որևէ ուսուցման ինձ համար պարզ դարձավ, թե ով է համապատասխանում Մեսիայի դրոշմին:

թվայնացրել է 1915.info կայքը

Պետք է կատարվի այն ամենը, ինչ գրված է իմ մասին...

Լապիդեսը բավական համոզիչ հերքեց Հիսուսի մեսիանականության դեմ բերվող առարկությունները: Այնուամենայնիվ, նրա հոգևոր ուղևորության պատմությունն էր, որ շարունակում էր պտտվել մտքումս, երբ այդ գիշեր հետ թռա Չիկագո: Մտորում էի, թե քանի անգամ եմ նման պատմություն-ների հանդիպել, հատկապես հաջողակ ու մտածող հրեա մարդկանց շրջանում, որոնք ի սկզբանե որոշել էին ապացուցել իրենց և ուրիշներին, որ Հիսուս Մեսիան չէր:

Հիշեցի Ստեն Թելչինին՝ գործարարին Արևելյան ափից: Նրա դուստրն ընդունվելով քոլեջ ճանաչեց Եշուային* (Հիսուսին) որպես իր Փրկիչ ու Քրիստոս, և հայրը վճռականորեն ձեռնամուխ եղավ քրիստոնեության «պաշտամունքը» պսակազերծելուն: Բայց զարմանքով պարզեց, որ իր ձեռնարկած հետաքննությունը ոչ միայն իրեն, այլև իր կնոջն ու երկրորդ դստերն առաջնորդում է դեպի նույն Մեսիան: Նա ավելի ուշ դարձավ քրիստոնյա հոգևորական, իսկ իր պատմությունը պատմող նրա գիրքը՝ «Դավաճանված» վերնագրով, թարգմանվել է ավելի քան 20 լեզվով[120]:

Նաև հիշեցի Ջեք Ստերնբերգին՝ հայտնի վիրաբույժ-ուռուցքաբանին Արկանզաս նահանգի Լիթլ Ռոք քաղաքից, որին այնքան էր ցնցել Հին Կտակարանում իր գտածը, որ դիմել էր երեք րաբբիի՝ խնդրելով հերքել, որ Հիսուս Մեսիան է: Նրանք չէին կարողացել, ու նա նույնպես հրապա-րակավ հայտարարեց, որ Հիսուսի մեջ ամբողջականություն է գտել[121]:

Վերջապես հիշեցի Փիթեր Գրինսպենին՝ մանկաբարձ-գինեկոլոգին Կանզաս Սիթիից և Միսուրիի համալսարանի բժշկական ֆակուլտետի դո-ցենտին: Ինչպես Լապիդեսի դեպքում, նրա համար ևս հոգևոր որոնում-ները սկսվել էին հուդայականությունից: Սեփական բացահայտումները շփոթեցրին նրան, ու նա դիմեց Թորային ու Թալմուդին՝ ձգտելով հերքել փաստը, որ Հիսուս է իսկական Մեսիան: Փոխարենը եզրակացրեց, որ Հի-սուս իսկապես հրաշքով իրականացրել է մարգարեությունները: Որքան ավելի շատ էր Գրինսպենը կարդում գրքեր, որոնց հեղինակները փոր-ձում էին խարխլել Հիսուսի մեսիականության ապացույցները, այնքան

* Հիսուսի եբրայերեն անունն է: Համապատասխանում է հունարեն Iesous-ին, որից էլ լատիներեն Iesus-ի միջոցով ծագել է անգլերեն Jesus-ը:

ավելի էր տեսնում նրանց փաստարկների թերությունները: «Պարադոքսալ է,– գրում է Գրինսպենը,– բայց ինձ թվում է՝ իրականում Եշուային հավատացի՝ կարդալով, թե ինչ են գրել քննադատները»[122]:

Ինչպես Լապիդեսը և ուրիշներ, Գրինսպենը համոզված էր, որ Ղուկասի ավետարանում Հիսուսի խոսքերն ապացուցվել են. «...պետք է կատարվի այն ամենը, ինչ գրված է իմ մասին Մովսեսի օրենքում, մարգարեությունների մեջ և սաղմոսներում» (Ղուկաս 24:44): Ամեն ինչ կատարվեց, կատարվեց Հիսուսի ու միայն Նրա մեջ, պատմության մեջ միակը, որի «մատնահետքերը» կատարելապես համապատասխանում էին Աստծո Օծյալի մարգարեական մատնահետքերին:

Քննարկումներ

Հարցեր խորհրդածելու կամ խմբային պարապմունքի համար

1. Անկախ նրանից՝ հրեա եք, թե ոչ, երբևէ անցել եք այն փուլերը, որոնց միջով անցել է Լապիդեսն Աստծո ճանապարհին: Կայի՞ն դասեր, որ սովորեցիք Լապիդեսից, թե ինչպես պիտի շարունակել:
2. Լապիդեսն իր հրեական ժառանգությունն ու ոչ սուրբգրային կենսակերպը Հիսուսի հետևորդ դառնալու խոչընդոտ էր համարում: Ձեր կյանքում կա՞ որևէ բան, որը կդժվարացնի քրիստոնյա դառնալը: Որևէ գին տեսնո՞ւմ եք, որը գուցե վճարեք, եթե քրիստոնյա դառնաք: Դրանք համեմատելի՞ են օգուտների հետ:
3. Լապիդեսը կարծում էր, որ քրիստոնյաները հակասեմիտ են: Արևելյան ափի համալսարաններից մեկում վերջերս անցկացված ասոցիացիայի թեստը պարզել է, որ «քրիստոնյա» բառի հետ ամենից հաճախ ասոցացվում է «անհանդուրժողականություն» բառը: Որևէ նախապաշարում ունե՞ք քրիստոնյաների նկատմամբ: Ինչի՞ հետևանք են դրանք: Ինչպե՞ս կարող է դա ազդել Հիսուսի մասին փաստերի ընկալունակության վրա:

թվայնացրել է 1915.info կայքը

ՄԱՍ 3

Հարության քնություն

թվայնացրել է 1915.info կայքը

թվայնացրել է 1915.info կայքը

ԳԼՈՒԽ 11

Բժշկական փաստեր

Հիսուսի մահը կեղծիք էր, հարությունը՝ խաբեություն

Կանգ առա բժշկի աշխատասենյակի դիմաց: Ընդունարանի դռան ցուցանակի վրա գրված էր. «Թող խոսակցությունը դադարի: Թող ծիծաղը չքվի: Այստեղ մահը հոժարությամբ օգնում է ողջերին»:

Ակնհայտ էր, որ սովորական բժիշկ չէ: Այցի էի եկել բժիշկ Ռոբերտ Ստայնին՝ աշխարհահռչակ դատաբժշկական ախտաբաններից մեկին, եռանդուն, խռպոտ ձայնով բժիշկ-քննիչին, որը մշտապես ինձ հրամցնում էր պատմություններ անսպասելի հանցանշանների մասին, որոնք բացահայտել էր դիահերձումների ժամանակ: Նրա հետ մեռածները «խոսում» էին, իրականում պատմում էին պատմություններ, որ հաճախ ողջերին արդարություն էր բերում:

Իլինոյս նահանգի Քուկ շրջանի դատաբժշկական փորձագետ Ստայնը երկարատև պաշտոնավարման ընթացքում ավելի քան 20 հազար դիահերձում էր կատարել՝ ամեն անգամ բծախնդրորեն տեղեկություններ փնտրելով զոհի մահվան հանգամանքների վերաբերյալ: Մանրուքների հանդեպ սուր աչքը, մարդու կազմության խորը իմացությունն ու արտասովոր հետաքննական բնազդն օգնել են նրա բժշկական խուզարկությանը՝ վերականգնել զոհի մահվան պատկերը:

Երբեմն նրա բացահայտումների արդյունքում անմեղ մարդիկ են արդարացվել: Բայց ավելի հաճախ Ստայնի աշխատանքը դառնում էր մեղադրյալի դագաղի վերջին մեխը: Այդպես եղավ Ջոն Ուեյն Գեյսիի դեպքում, որը մահապատժի ենթարկվեց, երբ Ստայնն օգնեց հաստատել նրա մեղադրանքը 33 դաժան սպանության համար:

Ահա թե որքան վճռորոշ կարող են լինել բժշկական փաստերը: Դրանց միջոցով կարելի է պարզել՝ երեխան սպանվե՞լ է, թե՞ մահացել դժբախտ պատահարից, մարդը մահացել է բնական մահո՞վ, թե՞ ինչ-որ մեկը թունավորել է նրան՝ սուրճի մեջ մկնդեղ ավելացնելով: Ըստ մահացածի աչքերում

կալիումի խտության՝ բժիշկները կարող են ճշգրիտ որոշել նրա մահվան ժամանակը և հաստատել կամ հերքել կասկածյալի ալիբին:

Նույնիսկ երբ խոսքը վերաբերում է հին հռոմեական դաժան մահապատժին՝ խաչելությանը, որը տեղի է ունեցել 2000 տարի առաջ, բժշկական հետազոտությունը կարող է վճռորոշ դեր խաղալ ու հերքել նրանց փաստարկները, ովքեր Հիսուսի Հարությունը՝ Նրա աստվածության բարձրագույն ապացույցը, համարում են ուղղակի սրամիտ խաբեություն:

Հարություն թե՞ վերակենդանացում

Միտքը, որ Հիսուս իրականում չի մահացել խաչի վրա, առաջին անգամ հանդիպում է Ղուրանում[123], որը գրվել է 7-րդ դարում. ահմադական մուսուլմանները պնդում են, որ Հիսուս իրականում փրկվել է մահապատժից ու փախել Հնդկաստան: Քաշմիրի[124] Սրինագար քաղաքում մինչև օրս մի դամբարան է պահպանվել, որը կոչվում է Հիսուսի գերեզման[125]:

19-րդ դարի արշալույսին Կարլ Բարդտը, Կարլ Վենտուրինին և այլք փորձեցին ապացուցել, որ Հարություն չի եղել: Հիսուս չի մեռել խաչի վրա, միայն ուժասպառությունից կորցրել է գիտակցությունը, կամ նրան տրվել է ինչ-որ թմրանյութ, որն առաջացրել առերևույթ մահ: Ավելի ուշ սառը, խոնավ գերեզմանում Նա ուշքի է եկել:

Այս վարկածն ամրապնդեցին դավադրության տեսության կողմնակիցները, որոնք ընդգծում էին, որ խաչի վրա Հիսուսին սպունգով ինչ-որ հեղուկ են տվել (Մարկոս 15:36), ու Պիղատոսին զարմացրել էր, թե որքան արագ մահացավ Հիսուս (Մարկոս 15:44): Հետևաբար, նրանք պնդում էին, որ Հիսուսի հայտնվելը հրաշագործ Հարության արդյունք չէր, այլ ապացույց, որ Նա ուշքի է եկել: Իսկ գերեզմանը դատարկ էր, քանի որ Նա այնտեղից գնացել էր:

Գիտնականները վաղուց հերքել են այս, այսպես կոչված, ուշաթափության վարկածը, սակայն այն շարունակում է կրկնվել հանրամատչելի գրականության մեջ: 1929-ին Դ. Հ. Լոուրենսը նույնիսկ մի պատմություն գրեց այն մասին, թե ինչպես է Հիսուս մահապատժի ենթարկվելուց հետո փախել Եգիպտոս ու սիրահարվել Իսիս քրմուհուն[126]:

թվայնացրել է 1915.info կայքը

1965-ին հրատարակված Հյու Շոնֆիլդի «Զատկի Դավադրությունը» ամենավաճառվող գրքի սյուժեի համաձայն՝ միայն հռոմեացի զինվորի անսպասելի հարվածը նիզակով խափանեց խաչից ողջ ազատվելու՝ Հիսուսի բարդ ծրագիրը: Հետո Շոնֆիլդն ընդունեց. «Մենք ամենևին չենք պնդում... որ (գիրքը) ներկայացնում է իրականում կատարվածը»[127]:

Ուշաթափության վարկածը կրկին հայտնվեց Դոնովան Ջոյսի՝ 1972-ին հրատարակված «Հիսուսի մագաղաթը» գրքում, որը, ըստ Հարության հարցի մասնագետ Գարի Հաբերմասի, «անհավանականությունների ավելի անհավատալի շարք է պարունակում, քան Շոնֆիլդինը»[128]: 1982-ին լույս տեսած «Սուրբ արյուն, սուրբ գավաթ»* գրքում հայտնվում է սյուժեի ևս մեկ ճարպիկ շրջադարձ: Պոնտացի Պիղատոսին կաշառում են, և նա թույլ է տալիս, որ Հիսուսին նախքան մեռնելը ցած բերեն խաչից: Սրանով հանդերձ հեղինակները խոստովանեցին. «Մենք չէինք կարող և դեռ չենք կարող ապացուցել մեր եզրակացության ճշգրտությունը»[129]:

Եվ ահա վերջերս, 1992-ին, ավստրալացի Բարբարա Թիրինգը, որը մինչև այդ առանձնապես հայտնի չէր գիտական աշխարհում, հրատարակեց «Հիսուս ու Մեռյալ ծովի մագաղաթների առեղծվածը» գիրքը, որն իսկական իրարանցում առաջացրեց: Ամերիկյան հեղինակավոր հրատարակչության՝ խանդավառությամբ ընդունած գրքում կրկին ի հայտ եկավ ուշաթափության տեսությունը: Այնուամենայնիվ, այս ստեղծագործության քարը քարին չթողեց Էմորի համալսարանի գիտնական Լյուկ Թիմոթի Ջոնսոնը՝ այն անվանելով «մաքուր ցնդաբանություն, ավելի շուտ բորբոքված երևակայություն, քան գիտական վերլուծություն»[130]:

Ուշաթափության վարկածը քաղաքային միֆի նման շարունակում է ծաղկել: Ամեն անգամ լսում եմ այս պատմությունը՝ հոգևոր որոնումների մեջ գտնվող մարդկանց հետ Հարության թեման քննարկելիս: Բայց իրականում ինչ են հաստատում փաստերը: Իրականում ինչ է կատարվել խաչելության ժամանակ: Ո՞րն էր Հիսուսի մահվան պատճառը: Կա՞ որևէ հնարավոր եղանակ, որով նա կարող էր ողջ մնալ այս փորձությունից հետո: Այս հարցերն են, որ, հուսով եմ, բժշկական փաստերը կօգնեն լուծել:

---

* Գավաթը, որից, ըստ ավանդության, Հիսուս խմել է Խորհրդավոր ընթրիքի ժամանակ, և որտեղ հավաքել են նրա արյունը խաչելությունից հետո:

Ահա թե ինչու եկա Հարավային Կալիֆոռնիա ու բախեցի ականավոր բժշկի դուռը: Նա մանրամասն ուսումնասիրել է Նազարեթցի Հիսուսի մահվան պատմական, հնագիտական ու բժշկական տվյալները. թեև դիահերձում չի կատարվել, մահապատժի ենթարկվածի մարմինն առեղծվածային կերպով անհետացել է:

10-ՐԴ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Ալեքսանդր Մեթերել, բժշկական գիտությունների և փիլիսոփայության դոկտոր

Միջավայրը բոլորովին չէր համապատասխանում մեր քննարկման թեմային: Նստած էինք Մեթերելի՝ Կալիֆոռնիայի տան հարմարավետ հյուրասենյակում, գարնանային տաք երեկո էր, օվկիանոսի թեթև քամի էր փչում, և մենք խոսում էինք աննկարագրելի դաժանության մասին, բարբարոսական խարազանման մասին, որ չի տեղավորվում մարդկային գիտակցության մեջ իր վայրենությամբ, մահապատժի այնպիսի այլասերված ձևի մասին, որը գարշելի օրինակ է մարդու հանդեպ մարդու անմարդկայնության:

Մեթերելին փնտրել էի, որովհետև լսել էի, որ գիտական ու բժշկական փաստեր ունի խաչելության մասին: Բայց մի այլ շարժառիթ էլ ունեի: Ինձ ասել էին, որ նա կարող է թեման քննարկել անկողմնապահ և ճշգրիտ: Դա կարևոր էր ինձ համար, որովհետև ուզում էի, որ փաստերն իրենք խոսեն իրենց մասին՝ առանց չափազանցությունների կամ հուզալից խոսքի, ինչը կարող էր շահարկել զգացմունքները:

Մեթերելի խոսքն աչքի էր ընկնում գիտական ճշգրտությամբ, ինչը սպասելի էր մեկից, որ ունի բժշկական կրթություն (Մայամիի համալսարան, Ֆլորիդա) ու դոկտորի աստիճան ճարտարագիտությունից (Բրիստոլի համալսարան, Անգլիա): Նա Ճառագայթաբանության ամերիկյան խորհրդի հավաստագրած ախտորոշող է ու Սրտի, թոքերի ու արյան ազգային ինստիտուտի ու Առողջության ազգային ինստիտուտի խորհրդատու Բեթեզդայում, Մերիլենդում:

Նախկինում Կալիֆոռնիայի համալսարանի գիտնական և դասախոս Մեթերելը խմբագրել է հինգ գիտական մենագրություն ու բազմաթիվ

թվայնացրել է 1915.info կայքը

հոդվածներ հրապարակել պարբերականներում՝ Aerospace Medicine-ից* մինչև Scientific American**: Մկանային կծկումների վերաբերյալ նրա հետազոտությունը տպագրվել է The Physiologist and Biophysics Journal-ում***: Նույնիսկ տեսքն է համապատասխանում բժշկական հեղինակության: Բարեկիրթ է, ալեհեր, քաղաքավարի և գործնական:

Անկեղծ ասած, որոշ պահերի զարմանքով մտածում էի, թե ինչ է կատարվում Մեթերելի ներսում: Նա խոսում էր դանդաղ ու մեթոդիկ, գիտական զսպվածությամբ, առանց ներքին հուզմունքի նշույլի՝ Հիսուսի վախճանի սահմռկեցուցիչ մանրամասները նկարագրելիս: Ամբողջ ցավը, որ լինելով քրիստոնյա չէր կարող չզգալ, խոսելով Հիսուսի՝ խաչի վրա տանջանքների մասին թաքնված էր գիտական լաբորատորիաներում տասնամյակներ անցկացրած մասնագետի անթափանց դիմակի հետևում:

Նա ներկայացրեց մերկ փաստեր: Ի վերջո, հենց դրանք ստանալու համար էի անցել երկրի կեսը:

Խաչելությանը նախորդած չարչարանքները

Նախ ուզում էի Հիսուսի մահվանը նախորդող իրադարձությունների նկարագրությունը ստանալ Մեթերելից: Ուստի որոշ սիրալիրությունների փոխանակումից հետո ցած դրի սառույցով թեյի բաժակն ու, դեմքով դառնալով զրուցակցիս, հարցրի.

— Կարո՞ղ եք ճշգրիտ նկարագրել, թե ինչ կատարվեց Հիսուսի հետ:

Նա կոկորդը մաքրեց:

— Դա սկսվեց վերջին ընթրիքից հետո,– ասաց: — Հիսուս իր աշակերտների հետ գնաց Ձիթենյաց լեռը, ավելի կոնկրետ՝ Գեթսեմանի պարտեզ, և այնտեղ, ինչպես հիշում եք, աղոթեց ամբողջ գիշեր: Այդ ընթացքում կանխատեսում էր հաջորդ օրվա իրադարձությունները: Քանի որ գիտեր տառապանքի չափը, որը պատրաստվում էր կրել, միանգամայն բնական է, որ մեծ, հոգեբանական սթրես էր ապրում:

---

* Ավիացիոն բժշկության գիտական ամսագիր

** Գիտահանրամատչելի ամերիկյան ամսագիր

***Կենսաբժշկական գիտական ամսագիր

Ձեռքս բարձրացրի՝ ընդհատելով նրան:

— Ահա թերահավատների համար պարարտ թեմա,– ասացի: — Ավետարաններն ասում են, որ սկսեց արյան քրտինք հոսել: Գուցե սա ավետարանիչների խռովված երևակայության հետևանքն է: Սա կասկածի տակ չի՞ դնում նրանց պատմության արժանահավատությունը:

Մեթերելն անվրդով օրորեց գլուխը:

— Ամենևին,– պատասխանեց: — Սա հայտնի հիվանդություն է՝ հեմատիդրոզ անվանումով: Այնքան էլ տարածված չէ, բայց կապված է ուժեղ հոգեբանական սթրեսի հետ[131]:

Տեղի է ունենում հետևյալը. սուր անհանգստությունն առաջացնում է քիմիական նյութեր, որոնք պայթեցնում են քրտնագեղձերի մազանոթները: Դրա հետևանքով այս գեղձերում փոքր քանակով արյունահոսություն է առաջանում, ու քրտինքը դուրս է գալիս արյունով ներկված: Խոսքն արյան մեծ քանակի մասին չէ, այլ միայն շատ, շատ փոքր քանակի:

Փոքր-ինչ խրատված՝ պնդեցի.

— Սա այլ ազդեցություն ունենո՞ւմ է մարմնի վրա:

— Դա առաջին հերթին ազդում է մաշկի վրա. այնպես որ հաջորդ օրը, երբ հռոմեացի զինվորը մտրակում էր նրան, մաշկը շատ զգայուն կլիներ:

Ահա թե ինչ, մտածեցի ու լարվեցի՝ փորձելով թույլ չտալ՝ անողոք պատկերները հեղեղեն միտքս: Որպես լրագրող, շատ դիակներ էի տեսել՝ ավտովթարների, հրդեհների ու հանցագործ սինդիկատների վրեժխնդրության զոհեր, բայց հատկապես ահավոր էր լսել, թե ինչպես են ինչ-որ մեկին միտումնավոր խոշտանգում դահիճները՝ առավելագույն տառապանք պատճառելու համար:

— Պատմե՛ք ինձ, ի՞նչ էր խարազանումը,– խնդրեցի:

— Հռոմեական խարազանումը հայտնի էր ահավոր դաժանությամբ,– սկսեց Մեթերելը՝ հայացքն ինձ հառած: — Սովորաբար բաղկացած էր 39 հարվածից, բայց հաճախ շատ ավելին էր՝ հարվածները հասցնող զինվորի տրամադրությամբ պայմանավորված: Զինվորն օգտագործում էր կաշեփոկերից պատրաստված մտրակ, որի մեջ մետաղե գնդիկներ էին հյուսված: Երբ մտրակը հարվածում էր մարմնին, գնդիկները խորը կապտուկներ կամ արյունազեղումներ էին առաջացնում, որոնք բացվում էին հաջորդ հարվածներից: Մտրակի մեջ հյուսվում էին նաև ոսկորի սուր կտորներ, որոնք խորը, շատ խորը կտրում էին մարմինը: Մեջքն այնպես

թվայնացրել է 1915.info կայքը

էր պատառոտվում, որ ողնաշարի մի մասը երբեմն բացվում էր խորը վերքերից: Մտրակն անցնում էր ուսերից մինչև մեջքը, կոնքերը, սրունքները: Սոսկալի էր:

Մեթերելը դադար տվեց:

— Շարունակե՛ք,– խնդրեցի:

— Մի բժիշկ, որն ուսումնասիրել է հռոմեական խարազանումը, գրել է. «Մինչ մտրակումը շարունակվում էր, պատռվածքները հասնում էին կմախքային մկաններին՝ դրանք վերածելով դողդողացող արյունահոսող ծվեների»: Իսկ 3-րդ դարի պատմիչ Եվսեբիոսը մտրակումը նկարագրել է այսպես. «Տառապողի երակները մերկանում էին, ու բացվում էին նույնիսկ մկանները, ջլերն ու աղիները»: Հայտնի է, որ շատերը մեռնում էին այս տեսակ ծեծից նախքան խաչելությունը: Զոհն առնվազն սոսկալի ցավ էր զգում ու հիպովոլեմիկ շոկի մեջ ընկնում:

Մեթերելն անցավ բժշկական եզրույթների, որոնք ես չգիտեի:

— Ի՞նչ է հիպովոլեմիկ շոկը,– հարցրի:

— «Հիպո» նշանակում է «ցածր», «վոլ»՝ ծավալ, «եմիս»՝ արյուն, այսինքն՝ մարդը տառապում է մեծ քանակով արյուն կորցնելու հետևանքով,– բացատրեց բժիշկը: — Սա չորս բան է նշանակում. նախ՝ սիրտը սկսում է ուժեղ բաբախել՝ փորձելով արյուն մղել, որը չկա: Երկրորդ, արյան ճնշումն ընկնում է՝ առաջացնելով ուշաթափություն կամ անգիտակից վիճակ: Երրորդ, երիկամները դադարում են մեզ արտադրել, որ ջրի եղած քանակը պահպանվի: Եվ չորրորդ, մարդը խիստ ծարավ է զգում, մարմինը հեղուկ է պահանջում՝ արյան կորուստը լրացնելու համար:

— Եվ այս շոկի ապացույցը տեսնո՞ւմ եք ավետարաններում:

— Այո՛, ավելի քան բավարար չափով,– պատասխանեց նա: — Հիսուս հիպովոլեմիկ շոկի մեջ էր, երբ երերալով բարձրանում էր մահապատժի վայրը՝ Գողգոթա, տանելով խաչի հորիզոնական գերանը: Ի վերջո, Հիսուս ընկավ, ու հռոմեացի զինվորը պատվիրեց Սիմոնին խաչը տանել նրա փոխարեն: Ավելի ուշ կարդում ենք, որ Հիսուս ասաց. «Ծարավ եմ»: Եվ նրան մի կում գինու քացախ տվեցին:

Այս ծեծի սարսափելի հետևանքների պատճառով Հիսուս արդեն ծանր վիճակում էր, նույնիսկ մինչև մեխերը նրա ձեռքերն ու ոտքերը կմտցնեին:

թվայնացրել է 1915.info կայքը

Հոգեվարք խաչի վրա

Լսում էի խարազանման սրտակեղեք պատմությունը, բայց գիտեի, որ գլխավորը դեռ առջևում է: Բոլոր մատենագիրները միաբերան վկայում են, որ Հիսուս այդ օրը մտրակումից հետո ողջ մնաց, ապա գնաց դեպի խաչը, որտեղ էլ հենց իրական խնդիրն է:

Այսօր, երբ դատապարտված հանցագործներին կապում են, ապա թույն ներարկում կամ ամրացնում փայտե աթոռին ու հոսանքահարում, մահվան բոլոր հանգամանքներն ակնհայտ են ու վերահսկելի: Մահը վրա է հասնում արագ ու կանխատեսելի: Դատաբժիշկները մանրամասն վավերացնում են զոհի վախճանը: Վկաները մոտ տարածությունից սկզբից մինչև վերջ զննում են ամեն ինչ:

Բայց հնարավո՞ր է որևէ որոշակի բան ասել խաչ հանելու՝ այս բիրտ, դանդաղ ու անհասկանալի ելքով մահապատժի մասին: Իրականում շատերը չեն պատկերացնում, թե ինչից է մահանում խաչվածը: Հիսուսի ժամանակ չկային դատաբժշկական փորձագետներ, որոնք պաշտոնապես կհաստատեին, որ մահապատժի ենթարկվածը մահացել է: Ուրեմն՞ հնարավո՞ր է, որ Հիսուս կարող էր ողջ մնալ խաչելությունից հետո:

Այս խնդիրը պարզելու համար անցա իմ հարցումներին:

— Ի՞նչ տեղի ունեցավ, երբ նա հասավ մահապատժի վայրը:

— Հավանաբար պառկեց, և Նրան ձեռքերը տարածած դիրքով մեխեցին խաչափայտի հորիզոնական գերանին. սա կոչվում էր patibulum*: Այս փուլում Նա առանձին էր ուղղահայաց գերանից, որն ամուր ու անշարժ տեղադրվում էր մահապատժի վայրում:

Դժվարանում էի պատկերացնել այդ տեսարանը. ավելի շատ մանրամասների կարիք ունեի:

— Ինչպե՞ս մեխեցին,– հարցրի: — Ինչո՞վ: Ո՞ր մասից:

— Հռոմեացիները խաչելու համար սուր գամեր էին օգտագործում՝ 12-18 սմ երկարությամբ: Դրանք մեխում էին դաստակների մեջ,– ասաց Մեթերելը՝ իր ափից մոտ 3 սմ ներքև ցույց տալով:

— Սպասեք,– ընդհատեցի: — Ինձ թվում էր՝ մեխերը ծակել են նրա

* Հորիզոնական խաչափայտի լատիներեն անվանումը

թվայնացրել է 1915.info կայքը

ափերը: Այդպես է պատկերված բոլոր նկարներում: Այդպես են բոլորը պատկերացնում Խաչելությունը:

— Դաստակների մեջ,– կրկնեց Մեթերելը: — Սա ամուր դիրք էր, որով ձեռքերը պահվում էին: Եթե մեխերն ափերի մեջ մտցնեին, մարմնի ծանրության տակ մաշկն արագ կպատռվեր, ու դատապարտվածը խաչից կընկներ: Այնպես որ մեխերը մտցնում էին դաստակների մեջ: Այն ժամանակ դա ձեռքի մաս էր համարվում: Բայց կարևոր է հասկանալ, որ մեխն անցնում էր այն մասով, որով անցնում է միջին նյարդը: Սա դեպի ձեռք դուրս եկող ամենակարևոր նյարդն է, ու մեխը խփելիս այն ճզմվում էր:

Մարդու կազմության մասին գիտելիքներս շատ համեստ էին, ուստի խնդրեցի պարզաբանել:

— Ինչ տեսակ ցավ կարող էր առաջացնել դա,– հարցրի:

— Այսպես ասեմ,– պատասխանեց,– ինչ տեսակ ցավ եք զգում արմունկը խփելիս, երբ հարվածում եք արմնկոսկորին: Դա իրականում մի այլ նյարդ է, որն արմնկոսկրի նյարդ է կոչվում: Ծայրաստիճան ցավոտ է, երբ պատահաբար հարվածում եք դրան: Դե՛, պատկերացրե՛ք՝ մի զույգ ունելի վերցնեն ու սեղմեն, ջարդեն այդ նյարդը,– ասաց՝ «սեղմել» բառն ընդգծելով, մինչ ունելու երևակայական զույգն էր պտտում: — Այդ ազդեցությունը նման է նրան, ինչ զգում էր Հիսուս:

Պատկերից ցնցվեցի ու ջղաձգվեցի:

— Դա անտանելի ցավ է,– շարունակեց,– իսկապես աննկարագրելի: Հռոմեացիները նույնիսկ նոր բառ են հորինել այն նկարագրելու համար. անգլերեն այն մտավ որպես excruciating, այսինքն՝ «խաչից հետո»: Մտածե՛ք միայն. ստիպված էին հատուկ նոր բառ ստեղծել, որը լեզվում նախկինում չկար, որպեսզի նկարագրեն խաչվածի տառապանքները: Ձեռքերը գամելուց հետո Հիսուսին բարձրացրին, խաչափայտը մեխեցին ուղղահայաց ցցին և ոտքերը խոցեցին: Ոտքերի նյարդերը նույնպես պատռվեցին. կրկին ջղացունց ցավ:

Ճզմված ու կտրված նյարդերը, իհարկե, ինքնին սոսկալի էին, բայց պետք է իմանայի ամեն ինչ դրա ազդեցության մասին և հարցրի.

— Ինչ էր կատարվում նրա մարմնի հետ:

— Նախ նրա ձեռքերն անմիջապես վնասվեցին՝ ձգվելով մոտ 15 սմ, ու երկու ուսն էլ հոդախախտ եղան. սա կարելի է հաշվել պարզ հավասարումներով: Սրանով կատարվեց Հին Կտակարանի մարգարեությունը

թվայնացրել է 1915.info կայքը

Սաղմոս 21-ից, որը կանխագուշակել էր Խաչելությունը՝ դրա տեղի ունենալուց 100-ավոր տարիներ առաջ՝ ասելով. «Իմ բոլոր ոսկորները խախտվեցին»:

Մահվան պատճառը

Մեթերելն ակնառու նկարագրեց այն ցավը, որ զգաց Հիսուս մահապատժի ընթացքում: Բայց ես պետք է հասկանայի, թե ինչն է ուղղակիորեն ընդհատում խաչ հանվողի կյանքը, որովհետև դա է առանցքային հարցը վճռելիս՝ հնարավոր է մահը կեղծել կամ խուսափել դրանից: Մեթերելին հարցրի մահվան պատճառի մասին:

— Երբ մարդուն կախում են ուղղահայաց, ինչպես խաչելիս,– պատասխանեց,– նշանակում է անխուսափելի դանդաղ, տանջալի մահ շնչահեղձությունից: Դրա պատճառն այն է, որ մկանների ու ստոծանու վրա ճնշումը կրծքավանդակը դնում է ներշնչելու դիրքում, ու արտաշնչելու համար հիմնականում պետք է ոտքերով վեր հրել իրեն, որպեսզի մի պահ մկանների վրա ճնշումը թեթևանա: Այդպես անելիս մեխը պատռում է ոտքը՝ սեղմելով նախաթաթի ոսկրերի արանքը: Արտաշնչելուց հետո մարդը պետք է հանգստանա ու նոր շունչ քաշի: Նա կրկին ստիպված կլինի իրեն վեր հրել՝ շնչելու համար արյունոտված մեջքը քերծելով խաչի կոշտ փայտի վրա: Եվ այսպես շարունակ, մինչև ամբողջովին ուժասպառ լինի ու այլևս չկարողանա հրվել ու շնչել:

Երբ շնչառությունը դանդաղում է, մարդն ընկնում է, այսպես կոչված, շնչառական ացիդոզի մեջ. արյան մեջ ածխածնի երկօքսիդը տարրալուծվում է ածխաթթվի՝ պատճառ դառնալով արյան թթվայնության բարձրացման: Սա, ի վերջո, տանում է սրտի զարկերի անկանոնության: Հավանաբար, երբ Հիսուսի սիրտը սկսեց անհավասարաչափ բաբախել, հասկացավ, որ մահվան շեմին է, և կարողացավ ասել. «Հայր, հոգիս քո ձեռքն եմ հանձնում»: Ու մահացավ սրտի կանգից:

Սա ամենահասկանալի բացատրությունն էր, որ երբևէ լսել էի խաչելությամբ մահվան պատճառի մասին, բայց Մեթերելը դրանով չսահմանափակվեց:

— Մահից առաջ, ու սա նույնպես կարևոր է, հիպովոլեմիկ շոկը, ըստ երևույթին, առաջացրել է կայուն արագ սրտխփոց, ինչը նպաստել է սրտի

թվայնացրել է 1915.info կայքը

անբավարարությանը, սրտի շուրջ թաղանթի մեջ հեղուկ է հավաքվել, որը կոչվում է պերիկարդիալ էֆուզիա, նաև՝ թոքերի շուրջ: Սա էլ կոչվում է պլևրալ էֆուզիա:

— Ինչո՞ւ է դա կարևոր:

— Հիշեք, թե ինչ եղավ, երբ հռոմեացի զինվորը մոտեցավ՝ բավական վստահ լինելով, որ Հիսուս մեռած է, հաստատեց դա՝ նիզակը նրա աջ կողը խրելով: Հավանաբար աջն էր, դա հաստատ չէ, բայց նկարագրությունից երևում է, որ աջ կողն էր, կողոսկրերի արանքը: Նիզակը հավանաբար խոցել է աջ թոքը, մտել սիրտը, և երբ զինվորը հանել է այն, որոշ հեղուկ՝ պերիկարդիալ էֆուզիան ու պլեուրալ էֆուզիան, դուրս է եկել: Սա նկարագրել է Խաչելության ականատես Հովհաննես առաքյալը՝ սկզբում ջրի պես թափանցիկ հեղուկ է դուրս ցայտել, հետո՝ շատ արյուն:

Հովհաննեսը հավանաբար գաղափար չուներ, թե ինչու և՛ արյուն, և՛ մաքուր հեղուկ տեսավ արտահոսելիս: Դա, իհարկե, այն չէր, ինչ բժշկությունից անտեղյակ մարդը կարող էր սպասել: Այնինչ Հովհաննեսի նկարագրությունը համապատասխանում է նրան, ինչ պիտի տեղի ունենար ժամանակակից բժշկության տեսանկյունից: Սա նշանակում է, որ Հովհաննեսը վստահելի է որպես ականատես, սակայն ինձ թվաց, որ նրա վկայությունը մի մեծ թերություն ունի: Բացեցի Աստվածաշունչն ու գտա Հովհաննես 19:34-ի էջը:

— Բայց տեսեք, թե ինչ է իրականում գրել Հովհաննեսը,– առարկեցի,– «արյուն ու ջուր հոսեց». նա բառերը դասավորել է այդ հերթականությամբ: Բայց ըստ Ձեզ՝ թափանցիկ հեղուկը պիտի առաջինն արտահոսեր: Ուրեմն այստեղ էական անհամապատասխանություն կա:

Մեթերելը թեթևակի ժպտաց:

— Ես հին հունարենի մասնագետ չեմ,– պատասխանեց,– բայց մասնագետներն ասում են, որ այս լեզվում բառերի դասավորությունը որոշվում էր ոչ թե գործողությունների հաջորդականությամբ, այլ կարևորությամբ: Սա նշանակում է՝ քանի որ ավելի շատ արյուն է եղել, քան ջուր, իմաստ կունենար, որ Հովհաննեսն արյունն առաջինը հիշատակեր:

Միտքն ընդունեցի, բայց մտքումս նշեցի, որ դա դեռ պետք է ապացուցվի:

— Ուրեմն,– ասացի,– ինչ կարելի է ասել Հիսուսի դրության մասին այսքանից հետո:

Մեթերելը հայացքը սևեռեց ինձ և վստահորեն ասաց.

— Կասկած չկա, որ Հիսուս մեռած էր:

թվայնացրել է 1915.info կայքը

Պատասխան թերահավատներին

Բժիշկ Մեթերելի պնդումը կարծես լավ հիմնավորված էր փաստերով: Բայց դեռ որոշ դետալներ կային, որոնց ուզում էի անդրադառնալ: Նրա պատմության մեջ կար նաև առնվազն մի թույլ տեղ, որը կարող էր շատ լավ խարխլել աստվածաշնչյան պատմության արժանահավատությունը:

— Ավետարաններն ասում են, որ զինվորները կոտրել են Հիսուսի հետ խաչված երկու հանցագործների ոտքերը,– ասացի: — Ինչո՞ւ պիտի նրանք անեին դա:

— Ուզում էին արագացնել մահը, ու քանի որ Շաբաթն ու Զատիկը մոտենում էին, հրեա առաջնորդները, իհարկե, ուզում էին վերջացնել դա նախքան արևամուտը. հռոմեացիները կարճ հռոմեական նիզակի պողպատե կոթն էին օգտագործում ջարդելու համար զոհի սրունքները: Սա թույլ չէր տալիս, որ իրեն ոտքերով վեր հրի ու կարողանա շնչել: Շնչահեղձությունից մահը հասնում էր մի քանի րոպեում: Նոր Կտակարանն ասում է, որ Հիսուսի ոտքերը չկոտրվեցին, որովհետև զինվորներն արդեն վճռել էին, որ նա մեռել է, և ուղղակի օգտագործեցին նիզակը՝ հաստատելու համար դա: Այսպիսով, կատարվեց Հին Կտակարանի ևս մի մարգարեություն՝ Մեսիայի ոսկորները չեն կոտրվի:

Նորից միջամտեցի:

— Ոմանք փորձել են կասկածներ սերմանել ավետարանների իսկության վերաբերյալ՝ կենտրոնանալով հենց խաչելության պատմության վրա,– ասացի: — Օրինակ՝ Harvard Theological Review*-ի մի հոդված շատ տարիներ առաջ եզրակացրել է, որ «ապշելու աստիճան քիչ են փաստերը, որ խաչված անձի ոտքերը երբևէ ծակել են մեխերով»[132]: Փոխարենը, ասվում էր հոդվածում, զոհի ձեռքերն ու ոտքերը պարանով էին կապվում խաչին: Չեք ընդունում, որ դա Նոր Կտակարանի նկարագրության վստահելիության խնդիրներ է առաջացնում:

Բժիշկ Մեթերելն առաջ եկավ մինչև իր աթոռի եզրը:

— Ոչ,– ասաց,– ժամանակակից հնագիտությունը վաղուց է հաստատել, որ խաչվածներին մեխում էին, երբեմն էլ կապում:

---

* Հարվարդի աստվածաբանության դպրոցի գիտական ամսագիրն է: Տպագրում է Քեմբրիջի համալսարանի հրատարակչությունը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ինչ փաստեր կան:

— 1968-ին Երուսաղեմում հնագետները գտան երեք տասնյակ հրեայի աճյուն, որոնց հռոմեացիները մահապատժի էին ենթարկել Հրեական պատերազմի ժամանակ, մոտ 70 թվականին: Զոհերից մեկը, որի անունը հավանաբար Յոհանան էր, խաչվել էր: Նրա ոտքերի ոսկորները խոցված էին 18 սմ մեխով, որի վրա պահպանվել էին նույնիսկ խաչի ձիթենու փայտի փոքր կտորներ: Սա խաչելության մասին ավետարանի պատմության կարևոր դետալի գերազանց հնագիտական հաստատում էր:

— Սակայն կասկածի մեկ այլ պատճառ էլ կա,– նշեցի: — Հռոմեացի զինվորները ճիշտ են որոշել, որ Հիսուս մեռած է: Այդ մարդկանց պատկերացումը բժշկության ու մարդու կազմության վերաբերյալ շատ պարզունակ էր: Գուցե նրանք սխալվում էին, և Հիսուս չէր մեռել խաչի վրա:

— Ընդունում եմ, որ այս զինվորները բժշկական կրթություն չունեին: Բայց հիշե՛ք, որ նրանք վարպետացած էին մարդ սպանելու մեջ, դա նրանց գործն էր, որը նրանք շատ լավ էին անում: Անկասկած, գիտեին մահացածի ու ողջ մարդու տարբերությունը, իրականում դրանից գլուխ հանելն այդքան դժվար չէ: Բացի այդ, եթե բանտարկյալը որևէ կերպ փախչեր, մեղավոր զինվորներն էին մահվան ենթարկվում: Այսպիսով, նրանք ծանրակշիռ պատճառ ունեին զգույշ լինելու, որ խաչից հանվեին միայն մահացածները:

Վերջին փաստարկը

Այսպիսով, Հիսուսին չէին կարող ողջ իջեցնել խաչից: Մեթերելը դա համոզիչ ապացուցեց պատմության ու բժշկության, հնագիտության ու հռոմեական ռազմական գիտության օգնությամբ: Բայց իմ հարցերը, միևնույն է, չէին սպառվել:

— Կամ որևէ եղանակ, որևէ հնարավոր եղանակ, որով Հիսուս կարող էր ողջ մնալ դրանից հետո:

Մեթերելն օրորեց գլուխը:

— Ամենևին,– ասաց: — Հիշե՛ք, որ նա արդեն հիպովոլեմիկ շոկի մեջ էր մեծ ծավալով արյան կորստից նույնիսկ մինչև խաչելությունը: Անհնար էր, որ կարողանար կեղծել իր մահը, որովհետև չէր կարող երկար կեղծել

թվայնացրել է 1915.info կայքը

շնչելու անկարողությունը: Բացի այդ, նրա սիրտը խրված նիզակը մեկընդմիշտ կլուծեր հարցը: Իսկ հռոմեացիները չէին պատրաստվում վտանգի ենթարկել սեփական կյանքը՝ թույլ տալով, որ նա ազատ հեռանա:

— Ուրեմն,– ասացի,– երբ որևէ մեկը ենթադրում է, որ Հիսուս պարզապես ուշագնաց եղավ խաչի վրա...

— Նրանց ասում եմ, որ դա անհնար է, գունազարդված տեսություն, որը որևէ հնարավոր փաստական հիմք չունի:

Ուզում էի թեման մինչև վերջ սպառել և, բժշկին զայրացնելու վտանգին ենթարկվելով, ասացի.

— Ենթադրենք՝ կատարվել է անհնարինը, ու Հիսուս ինչ-որ կերպ կարողացել է ողջ մնալ խաչելությունից հետո: Ենթադրենք՝ կարողացել է ազատվել իր պատանքից, գերեզմանի անցքից գլորելով հեռացրել է հսկայական քարն ու անցել հռոմեացի զինվորների կողքով, որոնք պահակ էին կանգնած: Բժշկական առումով ի՞նչ վիճակում կլիներ նա, երբ գտավ իր աշակերտներին:

Մեթերելը, ակնհայտորեն, հարցը սպառված էր համարում:

— Ահա, կրկին,– հառաչեց նա,– արդեն ասացի, ոչ ոք չէր կարող ողջ մնալ խաչվելուց հետո: Բայց նույնիսկ եթե Նա կարողանար, ինչպե՞ս կարող էր շրջել՝ մեխերը ոտքերի մեջ: Ինչպե՞ս կարող էր հայտնվել Էմմաուսի ճանապարհին կարճ ժամանակ անց, երկար տարածություն անցնելով: Ինչպե՞ս կարող էր ձեռքերն օգտագործել, երբ դրանք ձգել էին ու հոդերից դուրս բերել: Հիշե՛ք, նա նաև մեջքի վրա զանգվածեղ վերքեր ուներ ու նիզակի վերք՝ կրծքավանդակին:

Հետո կանգ առավ: Աչքերից երևում էր, որ պատրաստ է վերջ դնել այս պատմությանը և մեկընդմիշտ վերջին գամը խրել ուշաթափության տեսության սիրտը: Նրանից առաջ ոչ ոք չէր կարողացել հերքել փաստարկը, որն առաջին անգամ առաջ էր քաշել գերմանացի աստվածաբան Դեյվիդ Շտրաուսը 1835-ին:

— Լսե՛ք,– ասաց Մեթերելը,– այդպիսի ողորմելի դրության մեջ գտնվող մարդը երբեք չէր ոգեշնչի իր աշակերտներին գնալ ու հռչակել, որ Նա կյանքի Տերն է, երբեք չէր կարող այդ տեսքով համոզել առաքյալներին, որ գնան և աշխարհում փառավորեն Նրան որպես ողջ Աստված՝ հարություն առած մեռելներից: Հասկանո՞ւմ եք՝ ասածս ինչ է: Այդ սարսափելի խոշտանգումից տառապելուց հետո, արյան կորստով ու վնասվածքնե-

թվայնացրել է 1915.info կայքը

ռով հանդերձ, նա այնքան ողորմելի տեսք կունենար, որ կարող էր միայն խղճահարություն ներշնչել աշակերտներին. նրանք կնախընտրեին շտապ բուժել Նրան, քան հռչակել Նրա հաղթանակը մահվան դեմ: Անհեթեթ է ենթադրել, որ առաքյալները, տեսնելով նրան ողբալի վիճակում, կշտապեն քարոզել, որ մի օր բոլորը մարմնով հարություն կառնեն Նրա նման: Դա նրանց մտքով ուղղակի չէր անցնի: Ոչ մի կերպ հնարավոր չէ:

Հարց սրտի համար

Մեթերելը համոզիչ, վարպետորեն հիմնավորեց իր տեսակետը՝ խելամիտ կասկածի տեղ չթողնելով: Նա դա արել էր՝ բացառապես պատասխանելով «ինչպես» հարցին՝ ինչպե՞ս Հիսուսին մահապատժի ենթարկեցին մի եղանակով, որը լիովին ապահովում էր նրա մահը: Բայց երբ ավարտեցինք, զգացի, որ ինչ-որ բան պակասում է: Ես օգտվել էի նրա գիտելիքից, բայց չէի դիպել սրտին: Երբ արդեն շեմին էինք, հասկացա, որ պետք է նրան տալ «ինչո՞ւ» հարցը:

— Ալեքս, թույլ տվեք մի վերջին հարց տալ. ուզում եմ՝ պատասխանեք ոչ որպես գիտնական կամ բժիշկ, այլ պարզապես որպես մարդ:

Զգացի, որ զգոնությունը մի փոքր թուլացրեց:

— Այո՛,– ասաց,– կփորձեմ:

— Հիսուս գիտակցաբար իրեն հանձնեց դավաճանի ձեռքը, չընդդիմացավ ձերբակալությանը, դատավարության ժամանակ չպաշտպանեց իրեն, պարզ էր, որ իր կամքով իրեն ենթարկում է նրան, ինչը նկարագրել եք որպես կտտանքի նվաստացուցիչ ու տառապալի եղանակ: Ուզում եմ իմանալ՝ ինչո՞ւ: Ի՞նչը կարող էր մարդուն մղել համաձայնելու այդ տեսակ մահապատժին:

Ալեքսանդր Մեթերելը՝ մարդը, ոչ բժիշկը, մի պահ մտածեց՝ ճիշտ բառեր փնտրելով:

— Անկեղծ ասած, չեմ կարծում, որ սովորական մարդն ընդունակ է դրան,– վերջապես պատասխանեց,– բայց Հիսուս գիտեր, թե ինչ է սպասվում, ու պատրաստ էր անցնել դրա միջով, որովհետև սա մեզ փրկելու միակ եղանակն էր՝ փոխարինելով մեզ ու վճարելով մահապատժով, որին արժանի ենք Աստծո դեմ մեր ապստամբության պատճառով: Դա էր երկիր գալու նրա առաքելությունը:

թվայնացրել է 1915.info կայքը

Զգում էի, թե ինչպես է Մեթերելի՝ անողոքաբար գործնական ու տրամաբանական միտքը ձգտում իմ հարցը հասցնել աներկբա ու միարժեք պատասխանի:

— Ուրեմն երբ հարցնում եք, թե ինչն էր մղում նրան,– եզրափակեց նա,– կարծում եմ՝ պատասխանը կարելի է մի բառով ամփոփել՝ սերը:

Այդ երեկո մեքենայով հեռանալիս՝ նրա պատասխանը շարունակ պտտվում էր մտքումս:

Ընդհանուր առմամբ, դեպի Կալիֆոռնիա ուղևորությունս խիստ օգտակար էր: Մեթերելը համոզիչ հիմնավորել էր, որ Հիսուս չէր կարող ողջ մնալ խաչվելուց հետո, մահապատիժ, որն այնքան զազրելի էր դաժանությամբ, որ հռոմեացիներն իրենց քաղաքացիներին ազատել էին դրանից՝ բացի պետական դավաճանության դեպքերից:

Մեթերելի եզրակացությունները համապատասխանում էին այլ բժիշկների բացահայտումներին, որոնք մանրամասն ուսումնասիրել են հարցը: Նրանց թվում է դոկտոր Ուիլյամ Դ. Էդվարդսը, որը 1986-ին Journal of the American Medical Association-ում* հրապարակած հոդվածում եզրակացրել է. «Բոլոր պատմական ու բժշկական փաստերը հստակ ցույց են տալիս, որ այն ժամանակ, երբ Հիսուս նիզակով խոցվել է կողքից, արդեն մահացած էր, հետևաբար, մեկնաբանությունները, որ Հիսուս չի մահացել խաչի վրա, ինչպես երևում է, հակասում են ժամանակակից բժշկական գիտությանը»[133]:

Ովքեր ժխտում են Հիսուսի Հարությունը՝ պնդելով, որ նա Գողգոթայում ինչ-որ կերպ խուսափեց մահվան ճիրաններից, պիտի ավելի ճշմարտանման տեսություն առաջարկեն, որը համապատասխանում է փաստերին:

Հետո պիտի, ի վերջո, մտածեն տանջող հարցի շուրջ, որը բոլորս քննելու կարիք ունենք. ի՞նչը կարող էր մղել Հիսուսին գիտակցաբար և կամովի գնալ խաչվելու:

---

* Ամերիկյան բժշկական ընկերության ամսագիր

թվայնացրել է 1915.info կայքը

Քննարկումներ

Հարցեր խորհրդածելու կամ խմբային պարապմունքի համար

1. Մեթերելի հիմնավորումներին ծանոթանալուց հետո տեսնո՞ւմ եք ուշաթափության տեսության որևէ վավերացում: Ինչո՞ւ:
2. 2000 տարի խաչը քրիստոնյաների համար խորհրդանիշ է: Ի՞նչ եք կարծում այդ խորհրդանիշի մասին:
3. Պատրաստ եք տառապել հանուն այլ մարդու: Ո՞ւմ համար և ինչո՞ւ: Ի՞նչը կարող է մղել դրան:
4. Ինչպե՞ս կարձագանքեք նրանց, ովքեր կվիրավորեն, կնվաստացնեն ու կտանջեն ձեզ, ինչպես զինվորներն արեցին Հիսուսին: Ի՞նչը մղեց Հիսուսին խաչելության ժամանակ ասել. «Հայր, ների՛ր նրանց»:

թվայնացրել է 1915.info կայքը

ԳԼՈՒԽ 12

Անհետացած մարմնի փաստը

Իսկապե՞ս Հիսուսի գերեզմանը դատարկ էր

Հսկայական հարստության ժառանգորդ Հելեն Բրաքն աշնանային մի պարզ առավոտ իջավ աշխարհի ամենամեծ օդանավակայանում վայրէջք կատարած օդանավից, խառնվեց ամբոխին ու... անհետացավ: Ավելի քան 20 տարի ոստիկանությունն ու լրագրողներն ապարդյուն փորձում են պարզել, թե ինչ պատահեց այս կարմրահեր բարեգործական ակտիվիստի ու կենդանասերի հետ:

Քննիչները համոզված են, որ նրան սպանել են, սակայն չեն կարողացել պարզել ստույգ հանգամանքները, առաջին հերթին այն պատճառով, որ Հելենի մարմինը չի հայտնաբերվել: Ոստիկանությունը մամուլով որոշ ենթադրություններ է շրջանառության մեջ դրել, իսկ դատավորը վարկած է հայտնել, որ անհետացման մեջ ինչ-որ խարդախ է խառնված: Բայց քանի որ մարմինը չի գտնվել, Հելեն Բրաքի սպանությունը պաշտոնապես մնում է չբացահայտված: Ոչ ոքի երբևէ նրա սպանության համար մեղադրանք չի ներկայացվել:

Բրաքի գործն այն առեղծվածներից է, որ տարիներով ինձ հանգիստ չի տալիս: Ժամանակ առ ժամանակ մտքումս վերադասավորում եմ սակավաթիվ փաստերն ու փորձում հասկանալ, թե ինչ է կատարվել: Սակայն այդ փորձերն ապարդյուն են. ուզում եմ ոչ թե ենթադրել, այլ իմանալ, թե ինչ է պատահել, բայց դրա համար բավարար փաստական նյութ չունեմ:

Դետեկտիվներում ու իրական կյանքում երբեմն մարմիններն անհետանում են, բայց որ մարմինն անհետանա գերեզմանից: Ի տարբերություն Հելեն Բրաքի գործի, Հիսուսի պատմության մեջ խնդիրն այն չէ, որ նա ոչ մի տեղ չերևաց: Այն է, որ նա երևաց մեռած ու ևս մի անգամ երևաց ողջ: Եթե հավատանք ավետարանի պատմություններին, սա անհետացած դիակի պատմություն չէ: Բանն այն է, որ Հիսուս ողջ է, ողջ է մինչև օրս, խաչելության բոլոր սարսափներից հետո, որ այնքան պատկերավոր նկարագրվում է նախորդ գլխում:

թվայնացրել է 1915.info կայքը

Դատարկ գերեզմանը, որպես Հարության հավերժական խորհրդանիշ, Հիսուսի աստվածային էության ամենակարևոր վկայությունն է, որի մասին Նա ինքն է խոսել: Ա Կորնթացիներին 15:17-ում Պողոս առաքյալն ասում է, որ հարությունը քրիստոնեական հավատի առանցքն է. «Եթե Քրիստոս հարություն չի առել, իզուր է ձեր հավատը, և դուք տակավին մեղքերի մեջ եք»:

Աստվածաբան Ջերալդ Օ'Քոլինզն այսպես է ասել. «Խորը իմաստով քրիստոնեությունն առանց Հարության քրիստոնեություն է առանց իր վերջին՝ եզրափակիչ գլխի: Դա ամենևին քրիստոնեություն չէ»[134]:

Հիսուսի Հարությունը Նրա աստվածային ինքնության ու Նրա ուսմունքի աստվածային ներշնչվածության հիմնական հաստատումն է, մեղքի ու մահվան դեմ Նրա հաղթանակի ապացույցը: Նրա Հարությունն Իր հետևորդների հարության նախանշանն է, քրիստոնեական հույսի հիմքը, հրաշքների հրաշքը:

Եթե, իհարկե, դա ճշմարիտ է: Թերահավատները պնդում են, որ Հիսուսի մարմնի անհետացումը դեռևս առեղծված է Հելեն Բրաքի անհետացման պատմության նման, ասում են, որ փաստերը բավարար չեն հաստատ եզրակացություն անելու համար:

Մյուսները պնդում են, որ Հիսուսի մարմնի անհետացման գործը պետք է համարել փակված, որովհետև անհերքելի ապացույցներ կան, որ Զատկի այդ առաջին առավոտը գերեզմանը դատարկ էր: Ու եթե ուզում եք, որ որևէ մեկը համոզիչ ներկայացնի այդ գործը, լավագույն տարբերակն Ուիլյամ Լեյն Կրեյգին այցելելն է, որը Հիսուսի Հարության հարցերի՝ աշխարհի ամենահայտնի մասնագետներից է:

11-ՐԴ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Ուիլյամ Լեյն Կրեյգ, փիլիսոփայության և աստվածաբանության դոկտոր

Բիլ Կրեյգին առաջին անգամ տեսա փոքր-ինչ անսովոր տեսանկյունից: Նստած էի նրա հետևում, երբ ելույթ էր ունենում ի պաշտպանություն քրիստոնեության՝ մոտ 8000-հոգանոց լսարանի առաջ: Նրան լսում էին նաև անհամար ունկնդիրներ ամբողջ երկրում: Կրեյգի ելույթը հեռարձակվում էր հարյուրից ավելի ռադիոկայաններով:

թվայնացրել է 1915.info կայքը

Որպես բանավեճի մրցավար Կրեյգի ու մի աթեիստի միջև, որին ընտրել էր Ամերիկայի աթեիստների միավորումը, հիանում էի, թե որքան քաղաքավարի, բայց վճռականորեն էր Կրեյգը պաշտպանում քրիստոնեության դիրքորոշումը՝ միաժամանակ հերքելով աթեիզմի օգտին փաստարկները: Նստածս տեղից դիտում էի մարդկանց դեմքերը, մինչ նրանք բացահայտում էին, շատերը՝ առաջին անգամ, որ քրիստոնեությունը կարող է դիմանալ խելամիտ վերլուծության ու խիստ քննության:

Վերջում դա այլևս մրցություն չէր: Այդ երեկո, որպես երդվյալ աթեիստ, ագնոստիկ կամ սկեպտիկ, լսարան մտածների 82 տոկոսն այնտեղից դուրս եկավ՝ եզրակացնելով, որ քրիստոնեության օգտին փաստարկներն ամենահամոզիչն են: 47 մարդ մտավ անհավատ ու դուրս եկավ քրիստոնյա: Կրեյգի փաստարկները համոզիչ էին հատկապես աթեիզմի օգտին փաստարկների սակավության համեմատ: Իմիջիայլոց, ոչ ոք աթեիստ չդարձավ[135]:

Այնպես որ երբ թռա Ատլանտա՝ նրա հետ այս գրքի համար հարցազրույց վարելու, անհամբեր սպասում էի նրա պատասխանին Հիսուսի դատարկ գերեզմանին վերաբերող անհավատների պնդումներին:

Նա բոլորովին չէր փոխվել: Կարճ խուզած, սև մորուքով, սուր դիմագծերով, սևեռուն հայացքով Կրեյգը լուրջ գիտնականի տեսք ունի: Խոսում է համոզիչ, մտքի թելը երբեք չի կտրվում, հարցերին պատասխանում է հետևողականորեն, մինչև վերջ, կետ առ կետ, փաստ առ փաստ:

Բայց Կրեյգը չոր ու ցամաք մասնագետ չէ, նրա աստվածաբանության մեջ կենդանի միտք է բաբախում, և այն փայլում է նրա աչքերում, երբ վարկածներն ու տեսությունները կապում է մեկ շղթայի մեջ: Նրա ժեստերը հրավիրում են համաձայնության ու ըմբռնման, իսկ ձայնի մեջ կարելի է լսել կա՛մ անթաքույց ուրախություն որևէ անլուծելի, բարդ աստվածաբանական բացահայտումից, կա՛մ անկեղծ դառնություն ու տարակուսանք՝ ինչու են որոշ գիտնականներ ընդդիմանում փաստերին, որոնք ինքն այդքան համոզիչ է համարում:

Մի խոսքով, աստվածաբանությունը նրա համար ոչ միայն մտքի պահանջ է, այլև սրտի: Իր աթեիստ հակառակորդների մասին նա խոսում է առանց ամբարտավանության կամ թշնամանքի նշույլի՝ ջանալով ընդգծել նրանց արժանիքները. այս մեկը հիանալի հռետոր էր, այն մեկը՝ սքանչելի զրուցակից:

թվայնացրել է 1915.info կայքը

Մեր զրույցի խրթին նրբությունների մեջ զգացի, որ չի ձգտում ընդդիմախոսներին ճնշել փաստարկներով, անկեղծորեն ձգտում է մարդկանց բերել ճշմարտության, քանի որ, իր կարծիքով, նրանք թանկ են Աստծո համար: Եվ նա իսկապես տարակուսում է, երբ ինչ-որ մեկը չի կարողանում կամ չի ուզում գիտակցել, որ Հիսուսի դատարկ գերեզմանն օբյեկտիվ իրականություն է:

Դատարկ գերեզմանի պաշտպանությունը

Հագին կապույտ ջինս, սպիտակ գուլպաներ ու բարձր օձիքով մուգ կապույտ սվիտեր՝ Կրեյգը թիկնեց իր հյուրասենյակի ծաղկանախշերով բազմոցին: Նրա հետևում մեծ նկար էր կախված՝ Մյունխենի բնապատկերը:

Հենց այնտեղ, Մյունխենում, աստվածաբանությունից դոկտորական ատենախոսություն գրելիս, Կրեյգը սկսեց ուսումնասիրել Հարության թեման: Այդ ժամանակ նա արդեն ուներ արվեստների մագիստրոսի կոչում Թրինիթիի Ավետարանական դպրոցից և փիլիսոփայության դոկտորի կոչում Անգլիայի Բիրմինգհեմի համալսարանից: Ավելի ուշ նա դասավանդեց Թրինիթիի Ավետարանական աստվածաբանության դպրոցում, հետո, որպես հրավիրված գիտնական, Բրյուսելի մոտ գտնվող Լյուվենի համալսարանի փիլիսոփայության բարձրագույն ինստիտուտում:

Նրա գրքերի թվում են «Խելամիտ հավատ», «Հեշտ պատասխաններ չկան», «Պարզում ենք ճշմարտությունը Հարության մասին», «Միակ իմաստուն Աստված», «Աստծո գոյությունն ու տիեզերքի սկիզբը», (Քվենտին Սմիթի համահեղինակությամբ) «Թեիզմը, աթեիզմն ու Մեծ պայթյունի տիեզերաբանությունը», որը տպագրել է Օքսֆորդի համալսարանի հրատարակչությունը: Նա նաև համահեղինակն է «Մտավորականներն արտահայտվում են Աստծո մասին», «Հիսուսը կրակի տակ», «Ի պաշտպանություն հրաշքների», «Աստված գոյություն ունի՞» գրքերի: Բացի այդ, նրա գիտական հոդվածները հայտնվել են այնպիսի ամսագրերում, ինչպիսիք են New Testament Studies-ը, Journal for the Study of the New Testament-ը, Gospel Perspectives-ը, Journal of the American Scientific Affiliation և Philosophy-ն: Ինը մասնագիտական ընկերության անդամ է՝ ներառյալ Կրոնի ամերիկյան ակադեմիան ու Ամերիկյան փիլիսոփայական միությունը:

թվայնացրել է 1915.info կայքը

Աշխարհահռչակ գիտնականը, որը հայտնի է գիտության, փիլիսոփայության ու աստվածաբանության մասին իր աշխատություններով, առանց ավելորդ խնդրանքի անցավ մի թեմայի, որը մինչև օրս ստիպում է, որ նրա սիրտն արագ զարկի՝ Հիսուսի Հարությանը:

Հիսուս իսկապե՞ս թաղված էր գերեզմանում

Մինչ պարզելը Հիսուսի գերեզմանի դատարկ լինելը պետք է հաստատվեր, որ նրա մարմինն իսկապես եղել է այնտեղ: Պատմությունն ասում է, որ, որպես կանոն, խաչված հանցագործները թողնվում էին խաչին, որ թռչունները հոշոտեն, կամ նետում էին ընդհանուր գերեզման: Սա «Հիսուսի սեմինարից» Ջոն Դոմինիկ Կրոսսանին մղել է եզրակացնելու, որ Հիսուսի մարմինը հավանաբար հողից հանվել է, ու վայրի շները հոշոտել են այն:

— Բայց եթե դա սովորական պրակտիկա էր,– ասացի Կրեյգին,– միթե խելամիտ չէ ենթադրել, որ, ամենայն հավանականությամբ, սա է պատահել:

— Միայն սովորական պրակտիկայից ելնելով, այո՛, կհամաձայնեի,– պատասխանեց նա: Բայց դա կանտեսեր մասնավոր փաստերն այս գործում:

— Լավ, այդ դեպքում նայենք մասնավոր փաստերը,– ասացի՝ սկսելով ամենաակնհայտ խնդրից: Ավետարաններն ասում են, որ Հիսուսի դին հանձնվել է արիմաթեացի Հովսեփին՝ նույն սինեդրիոնի անդամին, որը քվեարկեց Հիսուսին դատապարտելու օգտին:

— Անհավատալի է, այնպես չէ՞,– հարցրի ավելի կտրուկ տոնով, քան մտադիր էի:

Կրեյգը բազմոցի վրա դիրքը փոխեց՝ պատրաստվելով պատասխանի:

— Ո՛չ, եթե դիտարկենք թաղմանը վերաբերող բոլոր փաստերը,– ասաց նա: — Նախ՝ Հիսուսի թաղման մասին խոսում է Պողոս առաքյալը Ա Կորնթացիներին 15:3-7-ում, որտեղ եկեղեցու շատ վաղ հավատամք է փոխանցում:

Գլխով արեցի, քանի որ դոկտոր Բլոմբերգն արդեն մանրամասն պատմել էր այդ մասին: Կրեյգը, ինչպես Բլոմբերգը, կարծում էր, որ այս հավատամքը սկիզբ է առել Հիսուսի խաչելությունից մի քանի տարի անց, տրվել է Պողոսին նրա դարձից հետո, Դամասկոսում կամ ավելի ուշ՝ Երուսաղեմում, Հակոբոս ու Պետրոս առաքյալների հետ հանդիպման ժամանակ:

թվայնացրել է 1915.info կայքը

Հենց որ Կրեյգը խոսեց վաղ հավատամքի մասին, բաց արի Աստվածաշունչն ու արագ վերընթերցեցի այս հատվածը. «Ես ձեզ ավանդեցի հատկապես այն, ինչն ինքս ընդունեցի. այն, որ Քրիստոս մեռավ մեր մեղքերի համար՝ Սուրբ Գրքի համաձայն, թաղվեց, երրորդ օրը հարություն առավ Սուրբ Գրքի համաձայն»: Հետո առաքյալը հիշատակում է հարություն առած Հիսուսի մի քանի հայտնություններ:

— Այս հավատամքն աներևակայելի վաղ, հետևաբար վստահելի փաստաթուղթ է,– ասաց Կրեյգը: — Այն քառատող դոգմա է: Առաջին տողը վերաբերում է Խաչելությանը, երկրորդը՝ թաղմանը, երրորդը՝ Հարությանը, չորրորդը՝ Հիսուսի հայտնություններին: Ինչպես տեսնում եք, երկրորդ տողը հաստատում է, որ Հիսուս թաղվել է:

Դա ինձ համար չափից դուրս աղոտ էր:

— Սպասեք,– ընդհատեցի: — Նա գուցե թաղվել է, բայց թաղվել է գերեզմանում: Եվ ի՞նչ դեր ունի այստեղ արիմաթեացի Հովսեփը՝ այս առեղծվածային անձը, որը հայտնվում է չգիտես որտեղից՝ միայն մարմինը վերցնելու համար:

Կրեյգը պահպանեց համբերությունը:

— Այս հավատամքն ավետարանական ուսմունքի հակիրճ և ճշգրիտ շարադրանքն է,– բացատրեց նա: — Ավետարաններում չորս անկախ վկայություններ կան թաղման մասին, և բոլոր չորս պատմություններում հիշատակվում է արիմաթեացի Հովսեփը: Ավելին, Մարկոսի վկայությունն այնքան վաղ է, որ նույնիսկ տեսականորեն չէր կարող աղավաղվել բանավոր լեգենդների ազդեցությամբ:

— Ինչպե՞ս եք որոշել, որ այն այդքան վաղ է,– հարցրի:

— Դա երկու ապացույց ունի,– ասաց: — Նախ՝ Մարկոսի ավետարանն ընդհանրապես համարվում է ամենավաղ ավետարանը: Երկրորդ, նրա ավետարանը հիմնականում կազմված է Հիսուսի մասին կարճ պատմություններից՝ ավելի նման շարանի մարգարիտների, քան հարթ, շարունակական պատումի: Բայց երբ հասնում ես Հիսուսի կյանքի վերջին շաբաթին՝ այսպես կոչված, չարչարանքների պատմությանը, տեսնում ես հաջորդական իրադարձությունների շարունակական պատում: Չարչարանքների այս պատմությունը Մարկոսը հավանորեն վերցրել է ավելի վաղ աղբյուրից, որը ներառել է Հիսուսի՝ գերեզմանում թաղված լինելու պատմությունը:

թվայնացրել է 1915.info կայքը

Արիմաթեացի Հովսեփը պատմակա՞ն անձ է

Այս ամենը բավական վստահելի էր թվում, այնուամենայնիվ, Մարկոսի ավետարանում մի անհամապատասխանություն էի տեսնում:

— Մարկոսն ասում է, որ ամբողջ սինեդրիոնը քվեարկեց, որ Հիսուսին դատապարտեն,– ասացի: — Եթե դա ճիշտ է, նշանակում է, որ արիմաթեացի Հովսեփն իր ձայնը տվեց՝ Հիսուսին սպանելու օգտին: Խիստ անհավանական չէ՞, որ հետո կգար Հիսուսին պատվավոր թաղելու:

Դիտարկումս ակնհայտորեն ինձ լավ ընկերակցություն ապահովեց:

— Դա կարծես շփոթության մեջ է գցել ոչ միայն Ձեզ, այլև Ղուկաս ավետարանիչին,– նկատեց Կրեյգը,– թերևս դրա համար էլ նա իր ավետարանում մի կարևոր մանրամասն ավելացրեց՝ երբ սինեդրիոնի դատավճիռը կայացվեց, արիմաթեացի Հովսեփը ներկա չէր: Եվ դա շատ բան է բացատրում: Բայց գլխավորն այն է, որ արիմաթեացի Հովսեփն ամենևին այն կերպարը չէ, որին կհորինեին քրիստոնեական լեգենդը կամ քրիստոնյա հեղինակները:

— Բայց ինչո՞ւ,– հարցրի հիմնավորումների սպասումով:

— Վաղ քրիստոնյաներն ատում էին հրեա երեցներին, որոնք սադրեցին Հիսուսի խաչելությունը,– ասաց,– խիստ անհավանական է, որ հորինեին «լավ» երեց, որը պատվով թաղեց Հիսուսին, հատկապես երբ բոլոր աշակերտները լքել էին նրան: Նաև նրանք չէին հորինի կոնկրետ խմբի կոնկրետ անդամի, որին մարդիկ կարող էին իրենք գտնել, ստուգել ու հերքել: Այնպես որ Հովսեփը, անկասկած, պատմական կերպար է: Ավելին,– շարունակեց Կրեյգը՝ կանխելով իմ հարցը,– եթե Հովսեփի արած այս թաղումը հետագայում մշակված լեգենդ լիներ, կարող էիք սպասել թաղման այլ՝ մրցակից ավանդությունների, այն մասին, թե ինչ պատահեց Հիսուսի մարմնին: Բայց նման բան չենք տեսնում:

Արդյունքում, Նոր Կտակարանի ժամանակակից հետազոտողների մեծ մասը հակված է այն մտքին, որ Հիսուսի թաղման պատմությունն արժանահավատ է: Քեմբրիջի համալսարանի՝ Նոր Կտակարանի մասնագետ, հանգուցյալ Ջոն Ա. Թ. Ռոբինսոնն ասել է. «Հիսուսի պատվավոր թաղումը պատմական Հիսուսի մասին մեր ունեցած ամենավաղ ու լավագույն կերպով հաստատված փաստերից է»:

թվայնացրել է 1915.info կայքը

Կրեյգի փաստարկները համոզեցին ինձ, որ Հիսուսի մարմինն իսկապես դրվել է արիմաթեացի Հովսեփի գերեզմանում: Բայց վերոհիշյալ հավատամքն անորոշությունների տեղ էր թողնում. գուցե նույնիսկ Հարությունից հետո՞ նրա մարմինը գերեզմանում մնաց:

— Վաղ հավատամքն ասում է, որ Հիսուս խաչվեց և թաղվեց, ապա հարություն առավ, այն կոնկրետ չի ասում, որ գերեզմանը դատարկ էր,– նշեցի ես: — Սա տեղ չի՞ թողնում ենթադրելու, որ Հարությունը բնույթով միայն հոգևոր էր, ու որ Հիսուսի մարմինը դեռ գերեզմանում էր:

— Ընդհակառակը,– հակադարձեց Կրեյգը: — Այդ հավատամքը որոշակիորեն ենթադրում է դատարկ գերեզման: Հասկանում եք, հրեաներին բնորոշ էր միայն ֆիզիկական հարության հասկացությունը: Նրանց համար հարության առաջնային առարկան վախճանվածի ոսկորներն էին, նույնիսկ ոչ մարմինը, որն անցողիկ էր համարվում: Երբ մարմինը փտում էր, հրեաները հավաքում էին իրենց ննջեցյալի ոսկորներն ու դնում տուփերի մեջ՝ պահպանելու համար մինչև հարությունը՝ աշխարհի վախճանը, երբ Աստված հարություն էր տալու Իսրայելի արդար ննջեցյալներին, և նրանք միավորվելու էին Աստծո վերջնական թագավորության մեջ:

Այս լույսի ներքո այն ժամանակների հրեաները պարզապես չէին կարող հավատալ, որ մեռելներից հարություն առած մարմինը դեռ գերեզմանում է. դա կլիներ տրամաբանական անհեթեթություն: Ուրեմն, երբ այս վաղ քրիստոնեական հավատամքն ասում է, որ Հիսուս թաղվել և երրորդ օրը հարություն է առել, դա կարող է նշանակել միայն մեկ բան՝ Նրա մարմինը դուրս է եկել գերեզմանից:

Որքա՞ն հուսալի էր պաշտպանված գերեզմանը

Կրեյգը համոզեց ինձ, որ Հիսուս թաղվել է, բայց սրանից անխուսափելիորեն ծագում է երկրորդ հարցը՝ գերեզմանը լա՞վ էր պաշտպանված: Չէ՞ որ մարմինը կարող էին գողանալ:

— Որքա՞ն հուսալի էր պատշպանված Հիսուսի գերեզմանը,– հարցրի:

Կրեյգը սկսեց նկարագրել 1-ին դարի դամբարանի տեսքը՝ ըստ հնագիտական պեղումների տվյալների:

թվայնացրել է 1915.info կայքը

— Գերեզմանի ցածր մուտք տանող թեք ակոս էր փորվում, ու մի մեծ, սկավառակաձև, հարթ քար էին գլորում այդ փորվածքով: Այն ծածկում էր մուտքը,– ասաց՝ նաև ձեռքերով ցույց տալով այն, ինչ ասում էր: — Այդ հարթ քարով պինդ փակելու համար վրան փոքր քար էին հենում: Սկավառակաձև քարը դժվար չէր փորվածքով գլորել, բայց այն բարձրացնելու և գերեզմանը բացելու համար մի քանի մարդ կպահանջվեր: Այդ առումով գերեզմանն ավելի քան պաշտպանված էր:

Այո, բայց որևէ մեկը հսկո՞ւմ էր այն: Գիտեի, որ որոշ թերահավատներ փորձել են կասկածի ենթարկել տարածված համոզմունքը, որ Հիսուսի գերեզմանը շուրջօրյա, աչալուրջ հսկում էին խիստ կարգապահ հռոմեացի զինվորները, որոնք կյանքով կվճարեին, եթե չկատարեին իրենց պարտականությունները:

— Վստա՞հ եք, որ հռոմեացի պահակներ կային,– հարցրի:

— Միայն Մատթեոսն է հաղորդում, որ գերեզմանի շուրջը պահակներ էին կանգնեցվել,– պատասխանեց նա: — Բայց ամեն դեպքում չեմ կարծում, թե պահակների պատմությունը Հարության փաստերի կարևոր կողմ է: Նախ՝ ժամանակակից գիտնականները չափից դուրս շատ են վիճարկում այդ հարցը: Ես նախընտրում եմ իմ փաստարկները հիմնել այն ապացույցների վրա, որոնք լայնորեն ընդունում է գիտնականների մեծամասնությունը. ուրեմն պահակների պատմությունն ավելի լավ է մի կողմ թողնել:

Նրա մոտեցումը զարմացրեց ինձ:

— Դա չի՞ թուլացնում Ձեր փաստարկումը,– հարցրի:

Կրեյգն օրորեց գլուխը:

— Անկեղծ ասած, պահակների պատմությունը գուցե կարևոր է եղել 18-րդ դարում, երբ քննադատները ենթադրում էին, որ աշակերտները գողացել են Հիսուսի մարմինը, բայց այսօր ոչ ոք չի պաշտպանում այդ վարկածը,– պատասխանեց նա և շարունակեց: — Երբ կարդում ես Նոր Կտակարանը, չնչին կասկած չի առաջանում, որ աշակերտներն անկեղծորեն հավատում էին Նրա Հարությանը: Այն միտքը, որ դատարկ գերեզմանն ինչ-որ խաբեության, դավադրության կամ գողության հետևանք է, այսօր ուղղակի մերժվում է: Ուստի պահակների պատմությունը մի տեսակ երկրորդական է դարձել:

թվայնացրել է 1915.info կայքը

Այսուհանդերձ, պահակներ կայի՞ն

Չնայած դրան, հետաքրքիր էր, կա՞ր որևէ փաստ, որը կհաստատեր Մատթեոսի պնդումը պահակների մասին: Թեև հասկանալի էր հարցը մի կողմ դնելու Կրեյգի դիրքորոշումը, փորձեցի պարզել՝ ավետարանիչի խոսքերը հաստատվո՞ւմ են պատմական փաստերով:

— Այո՛,– ասաց նա: — Քննարկենք, օրինակ, Հարության մասին վեճերը հրեաների ու քրիստոնյաների միջև առաջին դարում: Նախ քրիստոնյաները հայտարարեցին. «Հիսուս հարություն է առել»: «Ոչ, աշակերտները պարզապես գողացել են նրա մարմինը»,– պատասխանեցին հրեաները: «Բայց գերեզմանի մոտ պահակներ կային, նրանք կկանխեին այդպիսի գողությունը»,– առարկեցին քրիստոնյաները: «Պահակները քնել էին»,– հակադարձեցին հրեաները: «Ո՛չ, հրեաները կաշառեցին պահակներին, որ բոլորին ասեն, իբր քնել էին»,– հակառակորդի փաստարկը հերքեցին քրիստոնյաները:

Ինքներդ դատեք, եթե գերեզմանի մոտ պահակներ չլինեին, վեճն այլ ուղղությամբ կընթանար. ի պատասխան պահակների մասին քրիստոնյաների պնդման՝ հրեաները վրդովված կհակադարձեին. «Ի՞նչ պահակներ: Խենթ եք: Այնտեղ ընդհանրապես պահակներ չկայի՞ն»: Այնինչ հրեաները նման բան չասացին և խույս տվեցին հարցից՝ հայտարարելով, թե պահակները քնել էին: Սրանից հետևում է, որ պահակների գոյությունն իսկապես պատմական փաստ է, ու հրեաները գիտեին այդ մասին, ահա թե ինչու ստիպված էին հնարել անհեթեթ պատմությունը պահակների մասին, որոնք քնած էին, մինչ աշակերտները վերցրին մարմինը»:

Կրկին մի տանջող հարց ինձ մղեց, որ ընդհատեմ:

— Այստեղ կարծես այլ խնդիր էլ կա,– ասացի դադար տալով, մինչ փորձում էի հնարավորին չափ հակիրճ ձևակերպել առարկությունս: — Նախ՝ ինչո՞ւ պիտի հրեա իշխանավորները գերեզմանի առաջ պահակներ կանգնեցնեին: Եթե նրանք կանխատեսում էին Հարությունը կամ կասկածում էին, որ աշակերտները կկեղծեն այն, նշանակում է, որ նրանք ավելի լավ էին հասկանում Նրա մարգարեությունները, քան աշակերտները: Ի վերջո, այս ամենն անակնկալի բերեց աշակերտներին:

— Ճիշտ եք նկատել,– ընդունեց Կրեյգը: — Բայց գուցե պահակներին կանգնեցրել էին, որ կանխեն գերեզմանի կողոպուտը կամ որևէ այլ

թվայնացրել է 1915.info կայքը

անկարգություն Զատկի ընթացքում. մեզ հայտնի չէ: Լավ փաստարկ եք բերում: Ընդունում եմ դրա ամբողջ ուժը, բայց չեմ կարծում, որ դա անհերքելի է:

Այո՛, բայց դա պահակների պատմության վերաբերյալ իսկապես որոշ կասկած է հարուցում: Դրան գումարած՝ մի այլ առարկություն էլ միտքս եկավ:

— Մատթեոսն ասում է՝ հռոմեացի պահակները զեկուցեցին հրեա իշխանավորներին,– ասացի: — Բայց դա անհավանական չի՞ թվում, չէ՞ որ նրանք հաշվետու էին Պիղատոսի առաջ:

Կրեյգի դեմքին թեթև ժպիտ հայտնվեց:

— Ուշադրություն դարձրեք,– ասաց,– Մատթեոսը չի ասում, թե պահակները հռոմեացի էին: Երբ հրեաները գնում են Պիղատոսի մոտ ու պահակ են խնդրում, Պիղատոսն ասում է. «Պահակազոր ունեք»: Բայց հարցն այն է, թե ինչ նկատի ուներ նա՝ «Լավ, ահա՛ ձեզ հռոմեացի զինվորների մի դասա՞կ», թե՞ «Դուք տաճարի սեփական պահակախումբ ունեք, նրա՛նց օգտագործեք»: Պահակները հրեա՞ էին, թե՞ ոչ. գիտնականները սա շատ են քննարկել: Սկզբում հակված էի, ձեր նշած պատճառով, մտածել, թե պահակները հրեաներ են: Բայց վերանայել եմ դա, որովհետև բառը, որ Մատթեոսն օգտագործում է պահակներին հիշատակելիս, ավելի հաճախ օգտագործվում է հռոմեացի զինվորների վերաբերյալ, ոչ թե տաճարի սպասավորների: Ու հիշե՛ք, Հովհաննեսը պատմում է, որ հռոմեացի հարյուրապետ էր առաջնորդում հռոմեացի զինվորներին՝ ձերբակալելու համար Հիսուսին՝ հրեա առաջնորդների ցուցումով: Ուրեմն կա նախադեպ, որ հռոմեացի պահակները զեկուցել են հրեա առաջնորդներին: Ճշմարտանման է թվում, որ նրանք կարող էին ներգրավված լինել նաև գերեզմանի պաշտպանության մեջ:

Փաստերը կշռադատելով համոզվեցի, որ պահակներ եղել են, բայց քանի որ Կրեյգը, միևնույն է, չէր հենվում պահակների պատմության վրա, որոշեցի մի կողմ թողնել այդ թեմայով հարցերը: Ինձ ավելի շատ մտահոգում էր մեկ այլ, ինչպես ինձ էր թվում, չափազանց համոզիչ փաստարկ այն մտքի դեմ, որ Հիսուսի գերեզմանը Զատկի առավոտյան դատարկ էր:

թվայնացրել է 1915.info կայքը

Իսկ հակասությունն՞ը

Տարիներ ի վեր քրիստոնեության քննադատները սուր քննադատում են դատարկ գերեզմանի պատմությունը՝ ակնհայտ անհամապատասխանություններ նշելով ավետարանների պատմությունների միջև: Օրինակ՝ սկեպտիկ Չարլզ Թեմփլթոնն ասել է. «Իրադարձությունների չորս նկարագրություններն այնքան շատ ու այնքան ցայտուն են տարբերվում, որ նույնիսկ ամենամեծ ցանկության դեպքում, չեն կարող համաձայնեցվել»[136]:

Եթե այս առարկությունն ընդունենք որպես ճշմարտություն, կարելի է եզրակացնել, որ դատարկ գերեզմանի մասին ավետարանի պատմություններն արժանահավատ չեն: Այդ առավոտ Կրեյգի համար կարդացի Բոստոնի համալսարանի դոկտոր Մայքլ Մարտինի հետևյալ բացահայտումները.

«Մատթեոսի ավետարանում, երբ Մարիամ Մագդաղենացին ու մյուս Մարիամը լուսաբացից առաջ գալիս են գերեզմանի մոտ, սաստիկ երկրաշարժ է տեղի ունենում, ու հրեշտակն իջնելով գերեզմանի մուտքի քարը մի կողմ է գլորում: Մարկոսի ավետարանում կանայք գերեզման են հասնում արևածագին ու տեսնում են, որ գերեզմանից քարը գլորված է: Ղուկասի ավետարանում կանայք գալիս են շատ վաղ և նույնպես քարը գլորած են գտնում: Մատթեոսի մոտ հրեշտակը նստած է գերեզմանից դուրս, իր գլորած քարի վրա, իսկ Մարկոսի մոտ գերեզմանում մի երիտասարդ է նստած: Ղուկասի մոտ երկու մարդ են ներսում:

Մատթեոսի ավետարանում գերեզմանի մոտ են գալիս Մարիամ Մագդաղենացին ու մյուս Մարիամը, Մարկոսի ավետարանում՝ երկու Մարիամներն ու Սողոմեն, իսկ Ղուկասի մոտ՝ Մարիամ Մագդաղենացին, Հակոբոսի մայր Մարիամը, Հովհաննան և նրանց հետ ուրիշ կանայք:

Մատթեոսի մոտ երկու Մարիամները գերեզմանից իսկույն դուրս են ելնում վախով ու մեծ ուրախությամբ, վազում են պատմելու աշակերտներին ու ճանապարհին հանդիպում են Հիսուսին: Մարկոսի մոտ նրանք սարսափահար փախչում են գերեզմանից ու ոչ ոքի ոչինչ չեն ասում: Ղուկասի մոտ կանայք այդ ամենը պատմում են առաքյալներին, բայց սրանք չեն հավատում նրանց, իսկ Հիսուսի հետ հանդիպման մասին ակնարկ անգամ չկա»[137]:

թվայնացրել է 1915.info կայքը

— Եվ բացի այդ,– ավելացրի,– Մարտինը նշում է, որ բոլոր երեքին հակասում է Հովհաննեսի ավետարանը: Նա եզրակացնում է. «Այսպիսով, հաջորդ առավոտյան գերեզմանում տեղի ունեցածի մասին պատմություններն անհամատեղելի են, կամ կարելի է համատեղել միայն անհավատալի մեկնաբանությունների համադրությամբ»[138]:

Դադարեցի կարդալ, հայացքս բարձրացրի գրառումներից, նայեցի Կրեյգի աչքերին և ուղղակիորեն հարցրի.

— Այս ամենի լույսի ներքո ինչպե՞ս կարող եք հավատալ դատարկ գերեզմանի պատմությանը:

Զրուցակցիս խոսքն ու պահվածքը նկատելի փոխվեց: Մինչ զրուցում էինք ընդհանուր թեմաներով կամ քննարկում ոչ ամենասուր խնդիրները, նրա տոնը մեղմ-բարեհոգի էր: Բայց որքան ավելի բարդ էին իմ հարցերը, այնքան նա աշխույժ ու կենտրոնացած էր դառնում: Ակնհայտ էր, որ չի համբերում ավելի խորը սուզվել այս՝ թվացյալ վտանգավոր ջրերը:

Կոկորդը մաքրելով՝ Կրեյգը սկսեց.

— Ամբողջ հարգանքով հանդերձ,– ասաց,– Մայքլ Մարտինը, այնուամենայնիվ, փիլիսոփա է, ոչ պատմաբան: Փիլիսոփայի տեսանկյունից, երբ ինչ-որ տեղ ինչ-որ բան չի համընկնում, մեջտեղ է գալիս հակասության օրենքը, որն ասում է. «Սա չի կարող ճիշտ լինել»: Բայց պատմաբանը, համեմատելով այդ պատմությունները, կասի. «Այո, տեսնում եմ որոշ հակասություններ, բայց միաժամանակ տեսնում եմ գլխավորը. բոլորը վերաբերում են երկրորդական մանրամասներին»: Պատմության առանցքը նույնն է. արիմաթեացի Հովսեփը վերցնում է Հիսուսի մարմինը, դնում գերեզմանում, Նրա խաչելությանը հաջորդած կիրակի վաղ առավոտյան մի քանի կին-հետևորդներ գալիս են այնտեղ ու տեսնում, որ գերեզմանը դատարկ է: Հրեշտակները հայտնվում են նրանց և ասում, որ Հիսուս հարություն է առել մեռելներից: Բծախնդիր պատմաբանը, ի տարբերություն փիլիսոփայի, երեխային էլ ջրի հետ մեկտեղ դուրս չի նետի: Նա կասի. «Այս պատմությունները հիմնված են պատմական ճշմարտության վրա, և կարող ենք վստահորեն ապավինել դրանց, որքան էլ մանրամասները հակասական լինեն»: Այսպիսով, լիակատար վստահություն ունենք բոլոր չորս պատմությունների հիմքում եղած պատմական փաստի վրա: Նոր Կտակարանի ժամանակակից հետազոտողների մեծ մասը համաձայն է այս հարցում՝ չնայած կանանց անունների, օրվա ճշգրիտ ժամի, հրեշ-

թվայնացրել է 1915.info կայքը

տակների թվի և այլնի հետ կապված տարբերություններին: Այս ամենը չնչին հակասություններ են, որ չեն անհանգստացնում պատմաբաններին:

Նույնիսկ սովորաբար թերահավատորեն տրամադրված պատմաբան Մայքլ Գրանտը՝ Քեմբրիջի համալսարանի Թրինիթի քոլեջի գիտաշխատողն ու Էդինբուրգի համալսարանի դասախոսը, իր «Հիսուս. պատմաբանի հայացք ավետարաններին» գրքում ընդունում է. «Ճիշտ է, ավետարաններում տարբեր կերպ է նկարագրվում, թե ինչպես հայտնաբերվեց դատարկ գերեզմանը, բայց եթե մոտենանք այս պատմություններին նույն չափանիշներով, ինչ կիրառում ենք հնագույն այլ գրական աղբյուրների դեպքում, կգտնենք վստահելի ապացույցներ, որ Հիսուսի հետևորդներն առավոտյան տեսել են դատարկ գերեզմանը»[139]:

Հնարավո՞ր է ներդաշնակեցնել տարբերությունները

Երբեմն, քրեական դատավարություններ լուսաբանելիս, տեսել եմ, որ երկու վկա ճիշտ նույն վկայությունն են տալիս, ամենափոքր մանրամասների ճշտությամբ՝ կասկած առաջացնելով, որ նախօրոք պայմանավորվել են:

— Ենթադրում եմ,– ասացի Կրեյգին,– որ եթե բոլոր չորս ավետարանները բոլոր մանրուքներում համընկնեին, դավադրության կամ գրագողության կասկած կառաջանար:

— Լավ դիտարկում է,– ասաց նա: — Դատարկ գերեզմանի պատմությունների տարբերությունները ենթադրում են, որ ունենք դատարկ գերեզմանի պատմության բազմակի, անկախ վկայություն: Երբեմն մարդիկ ասում են՝ Մատթեոսն ու Ղուկասը գրագողություն են արել Մարկոսից, բայց երբ ուշադիր համեմատում ես ավետարանները, տեսնում ես տարբերություններ, որոնք ցույց են տալիս, որ նույնիսկ եթե Մատթեոսն ու Ղուկասը ծանոթ էին Մարկոսի վարկածին, այնուամենայնիվ, նրանցից յուրաքանչյուրն ուներ իր առանձին, անկախ աղբյուրները: Այսպիսով, երբ խոսքը վերաբերում է անկախ ապացույցներին, ոչ մի պատմաբան չի հերքի այն՝ երկրորդական մանրամասների անհամապատասխանություններ-ի պատճառով: Ահա մի օրինակ աշխարհիկ պատմությունից: Կա երկու պատմություն այն մասին, թե ինչպես է Հաննիբալն անցել Ալպերը՝ Հռոմի վրա արշավելիս: Այդ պատմություններն անհամատեղելի են: Բայց ոչ մի

պատմաբան չի կասկածում, որ այդ արշավանքը տեղի է ունեցել: Երկրորդական մանրամասների անհամապատասխանությունը չի խարխլում իրադարձությունների պատմական առանցքը:

Սրա հետ չէի կարող չհամաձայնել: Մարտինի նշած տարբերություններն ինձ այլևս չէին թվում անհաշտելի հակասություններ: Սա խոստովանեցի Կրեյգին ու հարցրի՝ կա՞ն այդ տարբերությունները ներդաշնակեցնելու ուղիներ:

— Այո՛, ճիշտ է, կան,– պատասխանեց Կրեյգը: — Օրինակ՝ գերեզման գալու ժամանակը: Մի հեղինակն ասում է, որ դեռ մութ էր, մյուսը՝ որ արդեն լուսանում էր, բայց դա մի տեսակ նման է լավատեսի ու հոռետեսի վեճին, երբ լավատեսն ասում է, որ բաժակը կիսով չափ լիքն է, իսկ հոռետեսն ասում է, որ այն կիսով չափ դատարկ է: Արևածագին մոտ էր, ու նրանք տարբեր բառերով միևնույն բանն էին նկարագրում: Ինչ վերաբերում է կանանց թվին ու անուններին, ավետարաններից ոչ մեկը չի հավակնում, թե լիարժեք ցուցակ է տալիս: Ամենուր հիշատակվում են Մարիամ Մագդաղենացին ու մի քանի այլ կանայք. հավանաբար Հիսուսի հետևորդների մի ամբողջ խումբ է եկել գերեզման, և հեղինակները նշել են նրանցից մի քանիսի անունները միայն: Ինձ թվում է՝ բծախնդրություն կլիներ ասել, որ դա հակասություն է:

— Ի՞նչ կասեք մյուս տարբերությունների մասին,– ձեռք չէի քաշում ես: Մարկոսն ասում է՝ կանայք ոչ ոքի չասացին, իսկ մյուս ավետարանիչները հակառակն են պնդում:

— Դա Մարկոսի աստվածաբանության առանձնահատկությունից է գալիս,– բացատրեց Կրեյգը,– նա սիրում է ընդգծել ակնածալից երկյուղը, որ պատում է մարդուն Աստծո ներկայությամբ: Հենց այս արձագանքը՝ վախից փախան ու ոչ ոքի ոչինչ չասացին, ավելի քան բնորոշ է Մարկոսի աստվածաբանությանն ու գրական ոճին: Բացի այդ, գուցե կանայք երկար չլռեցին: Նրանք կարող էին վերադառնալ ու պատմել մարդկանց իրենց տեսածի մասին,– Կրեյգը քմծիծաղ տվեց,– ոչ թե կարող էին, նրանք հենց այդպես էլ արեցին, այլապես որտեղի՞ց կիմանար Մարկոսն այդ մասին:

Ուզում էի հարցնել մեկ այլ անհամապատասխանության մասին, որը քննադատները հաճախ են նշում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Մատթեոս 12:40-ում Հիսուս ասում է. «Ինչպես որ Հովնանը երեք օր ու երեք գիշեր, մնաց կետի փորի մեջ, նույնպես էլ Մարդու Որդին երեք օր ու երեք գիշեր կմնա երկրի ընդերքում»: Այնինչ ավետարանները հաղորդում են, որ Հիսուս իրականում գերեզմանում մնաց միայն մեկ լրիվ օր, երկու լրիվ գիշեր, և երկու օր՝ մասամբ: Սա չի՞ նշանակում, որ Հիսուս չի կատարել Իր մարգարեությունը:

— Որոշ քրիստոնյաներ բարի մղումներով ենթադրում են, որ Հիսուս խաչվեց ոչ թե ուրբաթ, այլ չորեքշաբթի՝ լրիվ ժամանակը ստանալու համար,– ասաց Կրեյգը: — Սակայն գիտնականների մեծ մասը ելնում է այն փաստից, որ, ըստ ժամանակի հաշվարկի եբրայական համակարգի, օրվա յուրաքանչյուր մասը համարվում էր լրիվ օր: Հիսուս գերեզմանում էր ուրբաթ կեսօրից հետո, ամբողջ շաբաթ օրն ու կիրակի առավոտյան, և այն եղանակով, ինչ հին հրեաներն էին պատկերացնում ժամանակը, դա ավանդաբար համարվում էր երեք օր[140]: Ահա ևս մեկ օրինակ, թե ինչպես կարելի է պարզել կամ նվազագույնի հասցնել այդ անհամապատասխանությունները. ընդամենը հարկավոր է ունենալ որոշ գիտելիքներ և բաց, անկանխակալ միտք:

Ականատեսներին կարելի՞ է վստահել

Ավետարանները համաձայն են, որ դատարկ գերեզմանը հայտնաբերեցին կանայք, որոնք Հիսուսի ընկերներն ու հետևորդներն էին: Մարտինի գնահատմամբ՝ դա նրանց վկայությունը կասկածելի է դարձնում, քանի որ նրանք «հավանաբար անաչառ դիտորդներ չէին»: Ուստի Կրեյգին հարցրի.

— Ի՞նչ եք կարծում, այս կանանց հարաբերությունները Հիսուսի հետ կասկածի տակ չի՞ դնում նրանց վկայության արժանահավատությունը:

Ակամա հարցս ձեռնտու էր զրուցակցիս:

— Իրականում այս փաստարկը հետադարձ հարվածում է նրա կողմնակիցներին,– ի պատասխան ասաց Կրեյգը: — Այդ կանայք, անշուշտ, Հիսուսի ընկերներն էին: Բայց նրանք, ովքեր պատկերացնում են կանանց դերն առաջին դարի հրեական հասարակության մեջ, կարող են միայն զարմանալ, որ այս պատմության մեջ հենց կանայք են առաջինը հայտնաբերել դատարկ գերեզմանը: Առաջին դարի Պաղեստինում կանայք

թվայնացրել է 1915.info կայքը

սոցիալական սանդուղքի շատ ցածր աստիճանի վրա էին: Հին ռաբունական ասույթներ կան. «Ավելի լավ է Օրենքի խոսքերն այրվեն, քան վստահվեն կանանց», «Երանի նրան, ով որդիներ է ծնում, բայց վայ նրան, ով դուստրեր է ծնում»: Կնոջ վկայությունն այնքան անարժեք էր համարվում, որ նրանց սովորաբար չէր թույլատրվում որպես օրինական վկա հանդես գալ հրեական դատարանում: Այս լույսի ներքո հատկապես կարևոր է, որ դատարկ գերեզմանի գլխավոր վկաներն այս կանայք էին, որ Հիսուսի ընկերներն էին: Եթե Հարության վկայությունը հորինված լիներ, ապա այդպիսի բացահայտման պատիվը, անշուշտ, կվերագրվեր արական սեռի աշակերտներին, օրինակ՝ Պետրոսին կամ Հովհաննեսին: Փաստը, որ կանայք դատարկ գերեզմանի առաջին վկաներն են, ամենից ճշմարտանման է բացատրում այն իրականությունը, որ, դուր է գալիս, թե ոչ, նրանք իսկապես դատարկ գերեզմանը հայտնաբերողներն էին: Սա ցույց է տալիս, որ ավետարանիչները հավատարմորեն նկարագրել են նույնիսկ դժվարին կացության մեջ դնող իրադարձությունները: Սա վկայում է, որ նրանց պատմությունները լեգենդ չեն, այլ ճշգրիտ պատմական տարեգրություն:

Ինչո՞ւ կանայք գերեզման գնացին

Կրեյգի բացատրություններից, այնուամենայնիվ, մի հարց դուրս մնաց՝ ինչո՞ւ կանայք գնացին Հիսուսի մարմինն օծելու, եթե գիտեին, որ գերեզմանի մուտքը փակված է քարով:

— Նրանց գործողություններն իրականում տրամաբանակա՞ն են,– հարցրի:

Կրեյգը մի պահ մտածեց ու պատասխանեց այս անգամ ոչ թե բանավիճողի, այլ ավելի մեղմ տոնով:

— Լի, անկեղծորեն համարում եմ, որ չորսիրտ գիտնականները, որոնք չգիտեն, թե ինչ սեր ու նվիրվածություն ունեին այս կանայք Հիսուսի հանդեպ, իրավունք չունեն սառը դատողություններ անել՝ նրանց արարքներում իմաստ կար, թե ոչ: Վշտացած ու որբացած, կորցնելով Նրան, Ում հուսահատորեն սիրում էին և Ում պատրաստ էին հետևել, նրանք եկան գերեզման՝ օծելու Նրա մարմինը, գոնե Նրա համար ինչ որ բան անելու վիատ հույսով... իսկ քննադատներն անցած դարերի բարձունքից նրանց

թվայնացրել է 1915.info կայքը

դիտարկում են որպես անհոգի ռոբոտներ. «Նրանք չպիտի գնային այն-տեղ, քանի որ գիտեին, որ...»,– Կրեյգը թոթվեց ուսերը,– գուցե նրանք կարծում էին, որ շուրջը կլինեն տղամարդիկ, որ կարող են քարը տեղից շարժել: Չգիտեմ: Ակնհայտ է միայն, որ գերեզման գալը և հանգուցյալի մարմինը խնկարկելն ավանդական սովորություն են այն ժամանակվա հրեաների համար. միակ հարցն այն է, թե ով քարը տեղաշարժեց: Չեմ կարծում, թե ճիշտ են դատողություններն այն մասին, որ նրանք պիտի պարզապես տանը մնային, կամ ոչ:

Ինչո՞ւ քրիստոնյաները չէին հիշատակում դատարկ գերեզմանը

Կրեյգի հետ հարցազրույցի պատրաստվելիս, ուսումնասիրելով ոչ հավատացյալների պնդումները՝ նկատեցի, որ Հիսուսի դատարկ գերեզմանի դեմ բերվող հիմնական փաստարկը հետևյալն է. առաքյալներից ոչ մեկը, նաև Պետրոսը, չեն նշել այդ փաստն իրենց քարոզներում: Բայց երբ Կրեյգին հարցրի այս խնդրի մասին, նրա աչքերը զարմանքից լայն բացվեցին:

— Չեմ կարծում, թե դա ճիշտ է,– պատասխանեց և, Աստվածաշունչը ձեռքն առնելով, բաց արեց «Գործք առաքելոցի» երկրորդ գլուխը՝ Պետրոսի քարոզը Հոգեգալստյան օրը: — Դատարկ գերեզմանը հիշատակվում է Պետրոսի խոսքում,– պնդեց Կրեյգը,– 24 գլխում ասում է. «Աստված հարություն տվեց նրան՝ ազատելով մահվան կապանքներից»:

Հետո նա Դավթի սաղմոսից մեջբերում է անում, թե ինչպես Աստված թույլ չի տալու, որ իր սրբի մարմինն ապականվի: Սա գրել է Դավիթը, իսկ Պետրոսն ասում է. «Դավիթ նախահոր մասին պետք է վստահությամբ ասել, որ և՛ մեռավ, և՛ թաղվեց, ու նրա գերեզմանը կա մեր մեջ մինչև այսօր»: Բայց, ասում է նա, Քրիստոսի «հոգին գերեզմանում չմնաց, և ոչ էլ նրա մարմինն ապականություն տեսավ: Աստված այս Հիսուսին հարություն տվեց, ինչին ամենքս վկաներ ենք»,– Կրեյգն աչքերը բարձրացրեց ու ինձ նայեց,– այս խոսքով հակադրում է Դավթի գերեզմանը, որը մնում էր մինչև այդ օրը, այն մարգարեությանը, որում Դավիթն ասում է, որ Քրիստոս հարություն կառնի, նրա մարմինը չի փտի: Այստեղից ակնհայտ է, որ գերեզմանը դատարկ է եղել,– թերթելով մի քանի էջ, Կրեյգը շարունակեց,– Գործք առաքելոց 13:29-31-ում Պողոսն ասում է.

«Երբ կատարեցին նրա մասին գրված ամեն բան, խաչափայտից իջեցնելով գերեզման դրեցին: Բայց Աստված մեռելներից հարություն տվեց նրան, որ բազում օրեր շարունակ երևաց նրանց, ովքեր նրա հետ Գալիլեայից Երուսաղեմ էին բարձրացել»: Այստեղ ևս հստակ ակնարկվում է դատարկ գերեզմանը:

Նա փակեց Աստվածաշունչը, ապա ավելացրեց.

— Կարծում եմ՝ խելամիտ չէ պնդել, որ վաղ քարոզիչները դատարկ գերեզմանը չեն հիշատակել, միայն որովհետև նրանք չեն օգտագործել «դատարկ գերեզման» բառերը: Նրանք, անկասկած, գիտեին, իսկ նրանց լսողները հասկանում էին նրանց քարոզից, որ Հիսուսի գերեզմանը դատարկ է:

Որո՞նք են հաստատող փաստերը

Մեր հարցազրույցի առաջին մասն անցկացրել էի առարկություններ ու փաստարկներ տեղալով Կրեյգի վրա այն փաստի դեմ, որ Հիսուսի գերեզմանը դատարկ է եղել: Բայց հանկարծ հասկացա, որ նրան հնարավորություն չեմ տվել շարադրել իր հաստատող փաստարկները: Թեև նա արդեն նշել էր մի քանի պատճառ, թե ինչու է ինքը հավատում դրան, այնուամենայնիվ առաջարկեցի.

— Վկայակոչե՛ք ևս չորս-հինգ հիմնական ապացույց, որ դատարկ գերեզմանը պատմական փաստ է:

Կրեյգն ընդունեց մարտահրավերն ու մեկ առ մեկ շարադրեց իր փաստարկները՝ հակիրճ ու համոզիչ:

— Նախ, դատարկ գերեզմանի թեման ենթադրվում է վաղ ավանդույթով, որին անդրադարձել է Պողոս առաքյալը Ա Կորնթացիներին 15-ում, իսկ ավանդույթը Հիսուսի մասին պատմական տեղեկությունների շատ հին ու վստահելի աղբյուր է:

Երկրորդ, Հիսուսի գերեզմանի տեղը հայտնի էր թե՛ քրիստոնյաներին, թե՛ հրեաներին: Այնպես որ, եթե այն դատարկ չլիներ, Հարության հանդեպ հավատի վրա հիմնված շարժումը չէր ծագի նույն քաղաքում, որտեղ այս Մարդը հրապարակայնորեն խաչվեց ու թաղվեց:

Երրորդ, Մարկոս ավետարանիչի լեզուն, քերականությունն ու ոճը հուշում են, որ նա դատարկ գերեզմանի պատմությունը՝ իրականում, իր ամբողջ

թվայնացրել է 1915.info կայքը

հուզառատ պատմությունը, վերցրել է ավելի վաղ աղբյուրից: Կան ապացույցներ, որ այն գրվել է մինչև 37 թվականը, երբ բանավոր ավանդույթը դեռ չէր կարող աղավաղվել: Այս միտքը պաշտպանում է նաև Օքսֆորդի համալսարանի ականավոր պատմաբան, Հին Հունաստանի և Հին Հռոմի մասնագետ Ա. Ն. Շերվին Ուայթը:

Չորրորդ փաստարկը Մարկոսի ավետարանում դատարկ գերեզմանի պատմության պարզությունն է: Երկրորդ դարի հորինված պարականոն պատմություններն ամեն տեսակ ծաղկացրած պատմություններ են պարունակում, որոնցում Հիսուս գերեզմանից դուրս է գալիս՝ փառքով ու զորությամբ, բոլորը տեսնում են նրան՝ քահանաները, հրեա առաջնորդներն ու հռոմեացի պահակները ներառյալ: Լեգենդներն այդպես են բարբառում, բայց դրանք առաջանում են իրադարձությունների ականատեսների մահից մի քանի սերունդ հետո: Մարկոսի ավետարանը, ընդհակառակը, ապշեցնում է պարզությամբ ու աստվածաբանական մեկնաբանությունների բացակայությամբ:

Հինգերորդ, միաձայն վկայությունը, որ դատարկ գերեզմանը հայտնաբերեցին կանայք, խոսում է պատմության վավերականության օգտին. եթե դա լեգենդ լիներ, այդ բացահայտման պատիվը, գրեթե կասկած չկա, կվերագրվեր առաքյալներին:

Վեցերորդ, հրեաների ու վաղ քրիստոնյաների բանավեճը հուշում է, որ դատարկ գերեզմանը պատմական փաստ է: Այլ խոսքով, ոչ ոք չի պնդել, որ Հիսուսի մարմինը դեռ գերեզմանում է: Հարցն այլ կերպ էր դրված. «Ի՞նչ եղավ մարմնի հետ»: Հրեաներն անհեթեթ պատմություն են առաջ քաշել, որ պահակները քնով էին ընկել: Ակնհայտ է, որ ծղոտից էին կառչում, բայց նրանք, միևնույն է, ելնում էին փաստից, որ գերեզմանը դատարկ էր: Ինչո՞ւ: Որովհետև գիտեին, որ այդպես էր:

Այլընտրանքային վարկածներ

Ուշադիր լսում էի Կրեյգին ու տեսնում, թե ինչպես են վեց փաստարկները մեկ տպավորիչ դատական գործի վերածում: Բայց նախքան եզրակացնելը, որ այն անհերքելի է, ուզում էի պարզել՝ այն չունի՞ սողանցքներ:

— Բայց Կիրսոփ Լեյքը 1907-ին ենթադրեց, որ կանայք պարզապես սխալ գերեզման էին գնացել,– ասացի: — Նրա ասելով՝ կանայք մոլորվել էին, և մի բաց գերեզմանի մոտ պահակը հարցրեց. «Դուք Նազարեթցի Հիսուսի՞ն եք փնտրում: Նա այստեղ չէ»,– ու նրանք վախեցած փախան: Դա հավանական բացատրություն չէ[141]:

Կրեյգը հոգոց հանեց:

— Լեյքը սրանով հետևորդներ ձեռք չբերեց,– ասաց: — Հիսուսի գերեզմանի տեղը քաջ հայտնի էր հրեա առաջնորդներին: Նույնիսկ եթե կանայք սխալված լինեին, նրանց ցույց կտային ճիշտ գերեզմանն ու կուղղեին աշակերտների սխալը, երբ նրանք սկսեցին հռչակել, որ Հիսուս մեռելներից հարություն է առել: Չեմ ճանաչում որևէ մեկին, որ այսօր հետևում է Լեյքի վարկածին:

Անկեղծ ասած, մյուս տարբերակները ևս շատ հավանական չէին թվում: Ակնհայտ է, որ աշակերտները մարմինը գողանալու, հետո զրկանք ու տառապանք կրելու շարժառիթ չունեին, իսկ հրեա առաջնորդները, ինչ խոսք, չէին վերացնի մարմինը:

— Կա մեկ այլ տեսություն,– ասացի,– որ դատարկ գերեզմանն ավելի ուշ շրջանի հորինվածք էր, ու, երբ այն առասպելի ձև ստացավ, այլևս չէր կարող հերքվել, քանի որ գերեզմանի տեղը վաղուց մոռացվել էր:

— Այդ հարցը քննարկվում է 1835-ից, երբ Դեյվիդ Շտրաուսը Հարության պատմությունը հռչակեց լեգենդ,– պատասխանեց Կրեյգը: — Ահա թե ինչու այսօր այսքան ժամանակ հատկացրինք մեր զրույցին և համոզվեցինք, որ Հիսուսի դատարկ գերեզմանի պատմությունն ընդամենը մի քանի տարով է «երիտասարդ» բուն իրադարձություններից: Այսպիսով, լեգենդի վարկածը կարելի է հանգիստ մերժել: Նույնիսկ եթե որոշ առասպելական տարրեր կան պատմության երկրորդական դետալներում, դրա պատմական հիմքն ամուր է ու հիմնավոր:

Այո, Կրեյգը շատ բան ուներ ասելու այլընտրանքային տեսությունների մասին: Վերլուծելիս վարկածներից յուրաքանչյուրը փլուզվում էր փաստերի ու տրամաբանության ծանրության տակ: Մնում էր միայն մեկ բան՝ հավատալ, որ խաչված Հիսուս Հարություն է առել մեռելներից: Բայց սա հենց այն է, ինչին շատերը հատկապես դժվարանում են հավատ տածել: Զգուշորեն ընտրելով բառերը՝ դիմեցի Կրեյգին.

թվայնացրել է 1915.info կայքը

— Թեև այս այլընտրանքային վարկածներն ունեն խոցելի կողմեր, դրանք ավելի ճշմարտանման չեն, քան բացարձակ անհավատալի գաղափարը, որ Հիսուս մարմնավոր Աստված է՝ հարություն առած մեռելներից:

— Բանն էլ հենց դա է,– ասաց առաջ հակվելով: — Ինձ թվում է, որ այս այլընտրանքային վարկածներն առաջ մղողները կընդունեին. «Այո՛, մեր վարկածներն անհավանական են, բայց ոչ այնքան անհավատալի, որքան Հարության հրաշքը»: Բայց այստեղ պատմությունից արդեն անցնում ենք փիլիսոփայական հարցի՝ որքանո՞վ են հավանական հրաշքները:

— Ի՞նչ կպատասխանեիք դրան,– հարցրի:

— Կպնդեի, որ ամենևին էլ անհավանական չէ վարկածը, որ Աստված Հիսուսին հարություն է տվել: Ի վերջո, սա իրադարձությունների լավագույն բացատրությունն է, նաև փաստերի վրա հիմնված: Բայց վարկածը, որ Հիսուսի մարմինն ինքնին հարություն է առել, համաձայն եմ, բավական տարօրինակ է: Յուրաքանչյուր բացատրություն ավելի հավանական է, քան միտքը, որ մարմինը հանկարծակի կյանքի է կոչվել: Բայց վարկածը, որ Աստված հարություն է տվել Հիսուսին, չի հակասում ո՛չ գիտությանը, ո՛չ պատմությանը: Միակ նախադրյալը, որ պահանջվում է, Աստծո գոյության հանդեպ հավատն է, բայց դրա համար, կարծում եմ, շատ անկախ ապացույցներ կան[142]: Եթե Աստծո գոյությունը սկզբունքորեն հնարավոր է,– ոգևորված եզրակացրեց Կրեյգը,– ապա հնարավոր է նաև, որ նա հարություն է տվել Հիսուսին մեռելներից:

Եզրակացություն. գերեզմանը դատարկ էր

Կրեյգի փաստարկները միանգամայն համոզիչ էին: Բոլոր փաստերը ցույց են տալիս, որ Հիսուսի գերեզմանը դատարկ էր թաղման հաջորդ առավոտյան, և սա ամենամեծ հրաշքն է: Բայց դատարկ գերեզմանը Հարության բազմաթիվ ապացույցներից մեկն է միայն: Ատլանտայից պատրաստվում էի թռչել Վիրջինիա՝ հարցազրույց վարելու հարություն առած Հիսուսի հայտնությունների հայտնի մասնագետի հետ, հետո՝ Կալիֆոռնիա՝ խոսելու մեկ այլ գիտնականի հետ, որից ակնկալում էի ստանալ կարևոր, անուղղակի ապացույցներ:

Շնորհակալություն հայտնելով Կրեյգին ու նրա կնոջը՝ Ջենին, հյուրընկալության համար, ինքս ինձ մտածում էի, որ կապույտ ջինսով ու սպիտակ գուլպաներով այս մարդը չուներ այն զարհուրելի ընդդիմախոսի տեսքը, որը տապալում էր հարության՝ աշխարհի լավագույն քննադատներին: Բայց բանավեճերի ձայնագրություններն ինքս էի լսել:

Քրիստոնեության հակառակորդները, չնայած բոլոր ջանքերին, չկարողացան «վերադարձնել» Հիսուսի մարմինը գերեզման: Նրանք կաշվից դուրս են գալիս, կառչում ծղոտներից, հակասում իրենք իրենց, դիմում հուսահատ ու արտառոց վարկածների, բայց գերեզմանը մնում է դատարկ:

Հիշեցի բոլոր ժամանակների մեծագույն իրավաբաններից մեկի՝ սըր Նորման Անդերսոնի խոսքերը: Նա սովորել է Քեմբրիջում, դասավանդել Փրինսթոնում, ցկյանս պրոֆեսորի կոչում ստացել Հարվարդում ու պաշտոնավարել որպես Լոնդոնի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դեկան: Նա ամբողջ կյանքում այս հարցն իրավական տեսակետից վերլուծելուց հետո ամփոփել է մի նախադասությամբ. «Դատարկ գերեզմանն իսկական ժայռ է, որին դիպչելով ջարդուփշուր են լինում Հարության բոլոր ռացիոնալիստական տեսությունները»[143]:

Քննարկումներ

Հարցեր խորհրդածելու կամ խմբային պարապմունքի համար

1. Ո՞րն է ձեր սեփական եզրակացությունը. Ջատկի առավոտյան Հիսուսի գերեզմանը դատարկ էր: Այդ եզրակացությունն անելիս ո՞ր փաստարկն է ամենահամոզիչը:
2. Կրեյգը նշում է, որ հին աշխարհում բոլորն ընդունում էին, որ գերեզմանը դատարկ է, հարցն այն էր, թե ինչպես էր այն դատարկվել: Կարո՞ղ եք որևէ այլ ողջամիտ և տրամաբանական բացատրություն տալ այս փաստին՝ բացի Հիսուսի Հարությունից: Եթե այո, ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս կարձագանքեր Կրեյգը ձեր վարկածին:
3. Կարդացե՛ք Մարկոս 15:42-16:8-ը՝ Հիսուսի թաղման ու դատարկ գերեզմանի ամենավաղ պատմությունը: Համաձա՞յն եք Կրեյգի հետ, որ «պարզությամբ կատարյալ է, ու պճնազարդված չէ աստվածաբանական մտքերով»: Ինչո՞ւ:

թվայնացրել է 1915.info կայքը

ԳԼՈՒԽ 13

Հայտնությունների փաստը

Մահից հետո խաչի վրա Հիսուսին ողջ տեսել են

1963-ին 14-ամյա Էդի Մեյ Քոլինզը՝ մեկը սևամորթ չորս աղջիկներից, որոնք ողբերգականորեն զոհվեցին եկեղեցում խայտառակ ռասիստական ջարդի ժամանակ, թաղվեց Բիրմինգհեմում (Ալաբամա, ԱՄՆ): Տարիներ շարունակ ընտանիքի անդամները գալիս էին գերեզմանի մոտ՝ աղոթելու և ծաղիկներ դնելու: 1998-ին նրանք որոշեցին դիակը վերաթաղել այլ գերեզմանատանը, և, երբ բանվորներ ուղարկեցին մարմինը հանելու, նրանք վերադարձան ցնցող լուրով՝ գերեզմանը դատարկ էր:

Ընտանիքը շփոթված ու սարսափած էր: Պարզվեց, որ մատյաններն անփույթ են գրանցվել. գերեզմանատան աշխատակիցները փորձում էին գլուխ հանել, թե ինչ է կատարվել: Առաջին և հիմնական վարկածն այն էր, որ գերեզմանաքարը սխալ տեղում է դրվել[144]: Դիտարկվեցին նաև այլ տարբերակներ, սակայն ոչ ոք չենթադրեց, թե փոքրիկ Էդի Մեյը հարություն է առել ու վերադարձել երկիր: Ինչո՞ւ: Որովհետև միայն դատարկ գերեզմանն ինքնին հարություն չի ենթադրում:

Դոկտոր Ուիլյամ Կրեյգը համոզիչ ապացուցեց, որ Խաչելությունից հետո, առավոտյան, Հիսուսի գերեզմանը դատարկ էր: Գիտեի, որ սա Նրա Հարության կարևոր ու անհրաժեշտ վկայությունն է, բայց միաժամանակ գիտակցում էի, որ մարմնի անհետացումը դեռ անհերքելի ապացույց չէ: Այլ փաստեր էին հարկավոր հաստատելու համար, որ Հիսուս իսկապես հարություն է առել մեռելներից:

Ահա թե ինչը դրդեց, որ Վիրջինիա ուղևորվեմ: Երբ օդանավը սահուն վայրէջք էր կատարում անտառածածկ բլուրների վրայով, ավարտում էի Բոստոնի համալսարանի պրոֆեսոր և քրիստոնեության մոլի հակառակորդ Մայքլ Մարտինի գրքի ընթերցումը: Ժպտացի, երբ հասա այս բառերին. «Թերևս Հարության գաղափարի ամենաբարդ ու հնարամիտ պաշտպանությունը պատրաստել է Գարի Հաբերմասը»[145]:

թվայնացրել է 1915.info կայքը

Նայեցի ժամացույցիս: Հաբերմասի հետ հանդիպումը նախատեսված էր ժամը 2-ին: Մեքենայով օդանավակայանից Լինչբուրգ հասնելու ժամանակ ունեի:

12-ՐԴ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ
Գարի Հաբերմաս, փիլիսոփայության և գործնական աստվածաբանության դոկտոր

Հաբերմասի գրասենյակը կահավորված էր ասկետական պարզությամբ, բայց պատին հոկեյիստների ինքնագրերով երկու լուսանկար կար՝ սառույցի վրա թեժ գոտեմարտի պահին: Մեկը պատկերում էր Չիկագո Բլեքհոքսի անմահ Բոբի Հալին, մյուսը՝ Դեյվ «Համմեր»* Շուլցին՝ Ֆիլադելֆիա Ֆլայերսի կռվարար, անպարտելի հարձակվողին:

— Հալն իմ սիրելի հոկեյիստն է,– բացատրեց Հաբերմասը,– Շուլցը՝ իմ սիրելի մարտիկը,– ապա լայն ժպտալով ավելացրեց,– տարբերություն կա:

Կոպտավուն, մորուքով, ուղղախոս Հաբերմասը նույնպես մարտիկ է՝ ակադեմիական պիտբուլ, որն ավելի շատ նման է գիշերային ակումբի դռնապանի, քան փղոսկրե աշտարակի** մտավորականի: Ածելու պես սուր ու պատմական փաստարկներով զինված՝ նա չի վախենում ուժի ցուցադրությունից և մարտի մեջ է մտնում:

Աշխարհի ամենահայտնի աթեիստ փիլիսոփաներից մեկը՝ Էնթոնի Ֆլուն, դա պարզեց, երբ Հաբերմասի հետ ներգրավվեց խոշոր բանավեճի մեջ «Հիսուս հարություն առավ մեռելներից» թեմայով: Արդյունքը, անկասկած, հստակ էր: Տարբեր համալսարաններից ու քոլեջներից բանավեճի բովանդակության դատավոր հինգ անկախ փիլիսոփաներից չորսը եզրակացրին, որ Հաբերմասը հաղթել է: Մեկը մրցության արդյունքը ոչ-ոքի համարեց: Ոչ ոք Ֆլուի օգտին չքվեարկեց: Մի դատավոր նշեց. «Զարմացա («ցնցվելը» ավելի ճշգրիտ բառ կլիներ), երբ տեսա, թե որքան թույլ և խոցելի էին Ֆլուի փաստարկները... մնում էր այս եզրակացությունն անել՝

---

* Dave Schultz, Դեյվ Շուլց - բիզնեսմեն, հոկեյի նախկին մարզիչ ու խաղացող: «Համեր» (թարգմ.՝ մուրճ) մականունը ստացել է ագրեսիվ խաղաոճի համար:

** Վայր, որտեղ մարդիկ սիրով մեկուսանում են աշխարհից՝ հոգևոր փնտրտուքի, գիտական աշխատանքով և այլնով զբաղվելու համար:

թվայնացրել է 1915.info կայքը

եթե Հարության դեմ փաստարկներն ավելի ծանրակշիռ չեն, քան այն, ինչ ներկայացրեց Էնթոնի Ֆլուն, ուրեմն ժամանակն է, որ սկսեմ այդ գաղափարին լուրջ վերաբերվել»[146]:

Մասնագիտական բանավեճի մեկ այլ դատավոր, որը գնահատեց մրցակիցների փաստարկման մեթոդները (Հաբերմասը կրկին հաղթեց), հարկադրված էր գրել. «Եզրակացնում եմ, որ պատմական փաստերն անթերի չեն, սակայն բավական ծանրակշիռ են, որպեսզի ողջամիտ մարդիկ հանգեն եզրակացության, որ Քրիստոս իսկապես մեռելներից Հարություն առավ... Հաբերմասն իսկապես «չափազանց վստահելի ապացույցներ» է տրամադրում Հարության օգտին որպես պատմական փաստ՝ «արժանահավատ «դեմ» փաստերի բացակայության պայմաններում»: Հետևաբար Հաբերմասը, իմ կարծիքով, հաղթում է բանավեճում»[147]:

Միչիգանի համալսարանից դոկտորի աստիճան ստանալուց հետո (այստեղ նա գրել է Հարության վերաբերյալ իր ատենախոսությունը), Հաբերմասն Անգլիայում, Օքսֆորդի Էմանուել քոլեջում, գործնական աստվածաբանության դոկտորի աստիճան է ստանում: Նա Հիսուսի Հարության մասին յոթ գրքի հեղինակ է: Գրել է «Հիսուսի Հարությունը. տրամաբանական հետազոտություն», «Հիսուսի Հարությունը. ջատագովություն», «Հիսուս որպես պատմական դեմք», «Ճիշտ է, որ Հիսուս հարություն առավ մեռելներից. հարության բանավեճը», որը հիմնված էր Ֆլուի հետ նրա բանավեճի վրա: Նրա մյուս գրքերն են «Ինչպես հաղթահարել կասկածները» և (Ջ. Պ. Մորլենդի հետ) «Մահից այն կողմ. անմահության փաստարկների ուսումնասիրություն»:

Նա նաև համատեղ խմբագրել է «Ի պաշտպանություն հրաշքների» գիրքը և ներդրում է ունեցել «Հիսուս կրակի տակ» ու «Հավատով ապրելիս. փակելով մտքի ու սրտի միջև ճեղքվածքը» գրքերում: Նրա 100 հոդվածները հայտնվել են հանրամատչելի պարբերականներում (օրինակ՝ Saturday Evening Post), գիտական ամսագրերում (ներառյալ Faith and Philosophy-ն և Religious Studies-ը), տեղեկատուներում (օրինակ՝ The Evangelical Dictionary of Theology-ն): Նաև Ավետարանական փիլիսոփայական ընկերության նախկին նախագահն է:

Հաբերմասին այս գլխի սկզբում նկարագրելիս մտադիր չէի ակնարկել, որ նա ագրեսիվ ու կռվարար է. սովորական զրույցներում նա սիրալիր է ու պարկեշտ: Բայց ես չէի ցանկանա լինել նրա հակառակորդը հոկեյի

թվայնացրել է 1915.info կայքը

դաշտում կամ փիլիսոփայական վեճում: Նա իր մեջ կարծես ռադար ունի, որն օգնում է թիրախավորել իր հակառակորդի խոցելի տեղերը: Նաև անսպասելիորեն պարզեցի, որ նրան խորթ չեն քնքշությունն ու նույնիսկ սենտիմենտալությունը:

Հաբերմասը Լիբերթի համալսարանի իր գրասենյակում էր: Այստեղ նա դասավանդում է, նախագահում փիլիսոփայության ու աստվածաբանության բաժինը, ղեկավարում ջատագովության մագիստրոսական ծրագիրը: Գրասենյակը՝ թղթապանակներով լի սև պահարաններով, արհեստական փայտից ու մետաղից գրասեղանով, մաշված գորգով ու ծալովի աթոռներով, ինչ խոսք, դիտարժան չէր: Այն գործնական էր ու հավակնություններից զերծ, ճիշտ իր տիրոջ պես:

Մեռելները դա չեն անում

Հաբերմասը նստեց գրասեղանի մոտ՝ ծալելով կապույտ վերնաշապիկի թևերը, ես միացրի ձայնագրիչն ու դատախազի անառարկելի տոնով սկսեցի.

— Ճի՞շտ է, որ Հիսուսի Հարության ոչ մի ականատես չկա:

— Հենց այդպես է, այդ իրադարձությունը ոչ ոք չի նկարագրել:

Հաբերմասի հանգիստ պատասխանը, անշուշտ, կզարմացներ մարդկանց, որոնք թեման միայն մակերեսային գիտեն: Երբ երիտասարդ էի, Ք. Ս. Լուիսի մի գրքում կարդացի, որ Նոր Կտակարանում Հարության մասին ոչ մի բառ չկա: Լուսանցքում մի մեծ «Ոչ» գրեցի: Հետո հասկացա, թե նա ինչ նկատի ուներ. ոչ ոք չէր նստել գերեզմանում ու տեսել, թե ինչպես է մարմինը ցնցվում, շարժվում, կանգնում, հանում պատանքը, ծալում, հետ գլորում քարը, շշմեցնում պահակներին ու հեռանում:

— Սա չի՞ նշանակում, որ Հարությունը պատմական փաստ հայտարարելու Ձեր բոլոր փորձերը դատապարտված են ձախողման,– հարցրի:

— Ո՛չ, ամենևին, գիտությունն ուսումնասիրում է պատճառներն ու հետևանքները: Մենք չենք տեսնում դինոզավրեր, ուսումնասիրում ենք բրածոները: Գուցե չգիտենք, թե ինչպես է առաջանում հիվանդությունը, բայց ուսումնասիրում ենք դրա ախտանիշները: Ավելի հաճախ հանցագործությունները կատարվում են առանց վկաների, բայց ոստիկանությունը հավաքում է ապացույցներն ու կառուցում եզրակացությունների շղթա: Ուստի

թվայնացրել է 1915.info կայքը

Հարության հարցը բաժանում եմ երկու մասի: Նախ՝ Հիսուս մահացավ խաչի վրա, երկրորդ, հետո հայտնվեց մարդկանց: Այս հարցերին դրական պատասխան տալով՝ ապացուցում ենք Հարության փաստը, քանի որ մահացածներն իրենց չեն պահում այնպես, ինչպես Հիսուս արեց Խաչելությունից հետո:

Պատմաբաններն ապացուցել ու ճանաչել են խաչելության փաստը, դոկտոր Ալեքսանդր Մեթերելը նախորդ գլխում ցույց տվեց, որ Հիսուս չէր կարող այդ անողոք մահապատժից հետո ողջ մնալ: Այսպիսով, մնում է մեկ հարց՝ Հիսուս հետագայում իսկապես հայտնվեց:

— Ի՞նչ ապացույցներ կան, որ մարդիկ տեսել են նրան,– հարցրի:

— Կսկսեմ փաստերից, որ ընդունում են գրեթե բոլոր մասնագետները,– ասաց նա՝ բացելով իր առջև դրված Աստվածաշունչը: — Ոչ ոք չի կասկածում, որ Պողոսն է գրել Կորնթացիներին ուղղված առաջին թուղթը: Այդ նամակում նա երկու անգամ նշում է, որ տեսել է հարություն առած Քրիստոսին: Կորնթ.Ա 9:1-ում նա ասում է. «...չէ՞ որ առաքյալ եմ, չէ՞ որ իմ աչքերով տեսա Հիսուս Քրիստոսին՝ մեր Տիրոջը»: Ա Կորնթացիներին 15:8-ում ասում է. «Բոլորից հետո երևաց նաև ինձ»:

Գիտեի, որ վերջին մեջբերումը վերաբերում է վաղ եկեղեցու հավատամքին, որը Կրեյգ Բլոմբերգն ու ես արդեն քննարկել էինք: Ուիլյամ Լեյն Կրեյգը հետագայում նշեց, որ այս հավատամքի սկիզբը (3-4 համարները) խոսում է Հիսուսի մահապատժի, թաղման ու հարության մասին: Վերջին մասը (5-8 համարները) վերաբերում է Հարությունից հետո Նրա հայտնվելուն. «(Քրիստոս) երևաց Կեփասին, ապա տասներկուսին: Հետո երևաց միանգամից ավելի քան 500 եղբայրների, որոնցից շատերը մինչև օրս ապրում են, ոմանք էլ ննջեցյալ դարձան: Այնուհետև երևաց Հակոբոսին, ապա բոլոր առաքյալներին: Բոլորից հետո երևաց նաև ինձ, որպես մի անարգի»:

Առաջին հայացքից սա չափազանց ծանրակշիռ ապացույց է, որ Հիսուսին մահից հետո ողջ են տեսել: Ահա այն մարդկանց անունները կամ ամբողջ խմբեր, որոնք տեսել են նրան՝ գրված մի ժամանակ, երբ մարդիկ դեռ կարող էին ստուգել դրանք, եթե հաստատում ուզեին: Քանի որ գիտեի, որ այս հավատամքը համարվում է Հարության օգտին հիմնարար փաստարկը, որոշեցի այն ավելի խորը զննության ենթարկել: Ինչո՞ւ են պատմաբանները համոզված, որ դա հավատամք է: Վստահելի՞ է այն: Ե՞րբ է գրվել:

թվայնացրել է 1915.info կայքը

— Դեմ չեք, եթե մի տեսակ խաչաձև հարցաքննություն սկսեմ դրա վերաբերյալ,– հարցրի:

Հաբերմասը լայն տարածեց ձեռքերը:

— Համեցեք,– քաղաքավարի ասաց նա,– շնորհ արեք:

Համոզե՛ք ինձ, որ հավատամք է

Նախ ուզում էի պարզել, թե ինչու են Հաբերմասը, Կրեյգը, Բլոմբերգն ու մյուսները վստահ, որ այս տեքստը վաղ եկեղեցու հավատամքն է, ոչ թե պարզապես հատված Պողոսի՝ կորնթացիներին ուղղված նամակից: Ուստի առանց ավելորդաբանության ասացի.

— Համոզեք ինձ, որ սա իսկապես հավատամք է:

— Դա ծանրակշիռ ապացույցներ ունի: Նախ, Պողոս առաքյալն ազդարարում է այս տեքստը «ավանդեցի» և «ընդունեցի» բառերով. սրանք բաբունական եզրույթներ են, որ ցույց են տալիս, որ նա սուրբ ավանդույթ է փոխանցում: Երկրորդ, տեքստի ոճական առանձնահատկություններն ու շարահյուսական զուգահեռականությունն են վկայում, որ սա դավանանք է: Երրորդ, բնագիրն օգտագործում է Կեփաս՝ Պետրոսի փոխարեն, որն անվան արամեերեն տարբերակն է: Արամեերենի կիրառումն արդեն խոսում է տեքստի հնության մասին: Չորրորդ, այստեղ օգտագործվում են մի քանի արտահայտություններ, որոնք բնորոշ են ոչ թե Պողոսին, այլ վաղ քրիստոնեությանը՝ «տասներկուսը», «երրորդ օրը», «հարություն առավ» և այլն: Հինգերորդ, որոշ բառերի գործածությունը նման է արամեերենի ու միշնայական շրջանի եբրայերենի պատմողական միջոցներին... Շարունակեմ,– հարցրեց:

— Լա՛վ, լա՛վ,– հանձնվեցի: — Այսինքն, որպես պահպանողական ավետարանական քրիստոնյա, այս փաստերը համոզում են, որ Ձեր առաջ վաղ հավատամք է:

Հաբերմասը կարծես վիրավորվեց «ընդունում եմ» փոքր-ինչ խայթող դիտողությունից:

— Այս փաստերը համոզում են ոչ միայն պահպանողական քրիստոնյաներին,– պնդեց վրդովված: — Այդ գնահատականին է աստվածաբանական տարբեր հայացքների տեր պատմաբանների լայն շրջանակ:

թվայնացրել է 1915.info կայքը

Հռչակավոր գիտնական Հովակիմ Երեմիան այս հավատամքն անվանում է «ավանդույթներից ամենահինը»: Ուլրիխ Ուիլքինսը գրում է. «Այն անկասկած սկիզբ է առնում վաղ քրիստոնեության պատմության ամենահին ժամանակաշրջանից»:

— Կարո՞ղ եք ավելի որոշակի նշել տարեթիվը,– հարցրի:

— Մեզ հայտնի է, որ Պողոսն Ա Կորնթացիներին գրել է 55-57 թթ.: Այդ նամակի 15:1-4-ում նա ընդգծում է, որ այս հավատամքը նախկինում քարոզել է Կորնթոսի եկեղեցուն, ինչը նշանակում է, որ այն նախորդել է նրա՝ այնտեղ կատարած այցին՝ 51 թվականին: Հետևաբար հավատամքը ձևավորվել է Հարությունից հետո 20 տարվա ընթացքում, ինչը բավական վաղ է: Բայց ես կհամաձայնեի այն հետազոտողների հետ, որոնք ավելի վաղ են թվագրում՝ Հարությունից 2-8 տարի անց, այսինքն՝ մոտ 32-38 թթ., երբ Պողոսն այս ուսմունքը ստացավ Դամասկոսում կամ Երուսաղեմում: Այնպես որ սա անհավատալի վաղ նյութ է, նախնական, անպաճույճ վկայությունը փաստի, որ Հիսուս ողջ հայտնվել է Պողոսի ու Հակոբոսի պես անհավատներին, նաև Պետրոսին ու մյուս աշակերտներին[148]:

Հետագայում իմանալու էի, որ Նոր Կտակարանի ականավոր հետազոտող, Բրիտանական ակադեմիայի անդամ Ջեյմս Դ. Գ. Դանը (Դուրհամի համալսարան) ասել է. «Մենք կարող ենք վստահ լինել, որ այս ավանդույթը, որպես ավանդույթ, ձևակերպվել է Հիսուսի մահից հետո ամիսների ընթացքում»[149]:

— Բայց,– առարկեցի,– այս տեղեկությունն առաջին ձեռքից չէ: Պողոսը երկրորդ կամ երրորդ ձեռքից է տրամադրում ցուցակը: Սա չի՞ պակասեցնում դրա ապացուցողական արժեքը:

Հաբերմասի համար՝ ոչ, ամենևին:

— Հիշե՛ք, որ Պողոսն անձամբ է հաստատում, որ Հիսուս իրեն նույնպես հայտնվել է, ու սա առաջին ձեռքից վկայություն է ապահովում: Պողոսն այս ցուցակն ուղղակի փողոցի անծանոթներից չի վերցրել: Առաջատար տեսակետն այն է, որ նա անձամբ ստացել է հենց ականատեսներից՝ Պետրոսից ու Հակոբոսից, և դրա ճշգրտությունը հաստատելու համար մեծ ջանք է գործադրել:

Ծանրակշիռ պնդում էր:

— Որտեղի՞ց գիտեք,– հարցրի:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ես հակված եմ համաձայնել այն գիտնականների հետ, որոնք կարծում են, որ Պողոսն այս նյութը ստացել է իր դարձից երեք տարի անց, երբ ուղևորվեց Երուսաղեմ ու հանդիպեց Պետրոսին ու Հակոբոսին: Պողոսն այս ուղևորությունը նկարագրում է Գաղատացիներին 1:18-19-ում, որտեղ շատ հետաքրքիր հունարեն բառ է օգտագործում՝ historeo:

Բառն անծանոթ էր:

— Ինչո՞ւ է դա ուշագրավ:

— Որովհետև այդ բառը ցույց է տալիս, որ նա ուղղակի ջուր չի ծեծել, երբ հանդիպել է նրանց: Սա ցույց է տալիս, որ դա հետաքննական հարցուփորձ էր: Ինչ-որ իմաստով Պողոսը խաղում էր խիստ քննողի, փաստերն ուշադիր ստուգող-հետազոտողի դեր: Այսպիսով, Պողոսը վարդապետական հարցեր էր քննարկում հավատո հանգանակում հատուկ նշված երկու ականատեսների՝ Պետրոսի ու Հակոբոսի հետ, ինչը լրացուցիչ կշիռ է տալիս տեքստին: Նոր Կտակարանի սակավաթիվ հրեա հետազոտողներից մեկը՝ Պինկաս Լապիդը պնդում է, որ այս դավանանքի փաստարկներն այնքան ամուր են, որ այն «կարելի է նույնացնել ականատեսների վկայության հետ»[150]: Քեմբրիջում ավագ գիտնական Ռիչարդ Բոքհամն ասել է. «Կասկած լինել չի կարող, որ Պողոսը մեջբերում է այն ականատեսների վկայությունը, որոնք Հարության հայտնություններ են ստացել»[151]: Իսկ փոքր-ինչ ներքև՝ Ա Կորնթացիներին 15:11-ում,– ավելացրեց Հաբերմասը՝ կռահելով իմ հարցը,– Պողոսն ընդգծում է, որ մյուս առաքյալները համաձայնեցին քարոզել միևնույն ավետարանը՝ Հարության մասին այս միևնույն ուղերձը: Սա նշանակում է, որ ականատես Պողոսի ասածը ճիշտ նույն է, ինչ ասում են ականատեսներ Պետրոսն ու Հակոբոսը:

Ընդունում եմ, որ այս ամենը շատ համոզիչ է հնչում: Բայց հավատամքի մասին որոշ վերապահումներ ունեի և չէի ուզում, որ Հաբերմասի վստահ պնդումները խանգարեն շարունակել հետաքննությունս:

500-ի առեղծվածը

Ա Կորնթացիներին 15-ի հավատամքը միակ տեղն է հին գրականության մեջ, որը պնդում է, որ Հիսուս հայտնվել է միանգամից 500 մարդու: Այս փաստի հաստատումը հնարավոր չէ գտնել ավետարաններում: Ոչ մի աշ-

թվայնացրել է 1915.info կայքը

խարհիկ պատմաբան չի հիշատակում դա: Ինձ համար դա տագնապի ազդանշան է:

— Եթե դա իսկապես եղել է, ինչո՞ւ ուրիշ ոչ ոք չի խոսում այդ մասին,– հարցրի Հաբերմասին: — Թվում է՝ առաքյալներն ամենուր պետք է վկայեին այս իրադարձության մասին: Աթեիստ Մայքլ Մարտինը գրում է. «Մնում է եզրակացնել, որ նման ծավալի իրադարձությունը չափազանց անհավանական է և անուղղակիորեն ստվեր է գցում Պողոս առաքյալի վրա՝ ստիպելով կասկածել նրա վկայությունների հավաստիությանը»[152]:

Այդ դիտարկումն ակնհայտորեն անհանգստացրեց Հաբերմասին:

— Դե, ուղղակի հիմարություն է ասել, որ սա կասկած է գցում Պողոսի վրա,– պատասխանեց նա՝ միաժամանակ զարմացած ու վրդովված, որ որևէ մեկը կարող է դա պնդել: — Նախ, թեև միայն մեկ աղբյուրում է խոսվում այս իրադարձության մասին, բայց այդ աղբյուրն ամենավաղն է, դրա իսկությունը լավագույն կերպով հաստատված է, և սա ինչ-որ բան ասում է: Երկրորդ, Պողոսն ակնհայտորեն ճանաչում էր այս մարդկանց: Նա գրում է. «Որոնցից շատերը դեռ ողջ են, թեև ոմանք մահացել են»: Կամ Պողոսը ճանաչում էր այս մարդկանցից ոմանց, կամ նրանց ճանաչող որևէ մեկը նրան ասել էր, որ դեռ ողջ են ու պատրաստ են հարցերի պատասխանել: Հիմա մտածեք՝ կգրեիք նման արտահայտություն, եթե լիովին վստահ չլինեիք, որ մարդիկ, որոնց մասին խոսում եք, կարող են հաստատել, որ տեսել են ողջ Հիսուսին: Նկատի ունեմ՝ Պողոսը փաստորեն հրավիրում էր, որ մարդիկ իրենք ստուգեն: Սա չէր ասի, եթե չիմանար, որ իրեն կսատարեն: Երրորդ, երբ միայն մեկ աղբյուր ունեք, իհարկե, կարող եք հարցնել. «Ինչո՞ւ չկան ուրիշները»: Բայց իրավունք չունեք մերժել այդ աղբյուրը միայն այն հիմքով, որ այն մեկն է: Այդ միակ աղբյուրը չեք կարող այդպես որակազրկել: Այնպես որ, մեկ աղբյուրի հավաստիությունը կասկածից վեր է: Հավատացեք, որ Մարտինը հաճույքով կաներ դա, եթե կարողանար, բայց նա դրա համար օրինական հիմքեր չունի: Ի դեպ, սա քննադատի տիպիկ օրինակ է, որ փորձում է միանգամից երկու աթոռի վրա նստել: Որպես կանոն, քննադատները բավական բարձր են դասում Պողոսի հեղինակությունը և, ի հաշիվ նրա նամակների, փորձում են նսեմացնել Հարության մասին ավետարանական պատմությունները: Բայց այս հարցում նրանք կասկածում են Պողոսի վկայության իսկությանը և դրան հակադարձում են տեքստերով, որոնց իրենք էլ չեն վստահում: Լավ, դրանից հետո ինչ կարելի է մտածել նրանց մեթոդների մասին:

Այնուամենայնիվ, դեռ դժվարությամբ էի պատկերացնում Հիսուսի հայտնությունը մեծ ամբոխին:

— Որտեղ կարող էր տեղի ունենալ 500 մարդու հետ այս հանդիպումը,– հարցրի ես:

— Հավանաբար ինչ-որ տեղ՝ բաց տարածքում, Գալիլեայում,– ենթադրեց Հաբերմասը: — Եթե Հիսուս կարող էր կերակրել 5000 մարդու, ինչո՞ւ չէր կարող քարոզել 500-ի: Մատթեոսն էլ գրում է, որ Հիսուս հայտնվեց Գալիլեայում, լեռան վրա. գուցե միայն 11 աշակերտները չէին, որ տեսան Նրան:

Տեսարանը մտքումս պատկերացնելով՝ դեռ չէի կարող չմտածել, թե ինչու մեկ ուրիշը չի հաղորդել այս իրադարձությունը:

— Հավանական չէ՞ր լինի, որ պատմիչ Հովսեփոսը հիշատակեր այդչափ նշանակալի իրադարձությունը:

— Ո՛չ, պարտադիր չէ: Հովսեփոս Փլաբիոսը գրում էր 60 տարի անց: Որքա՞ն ժամանակ են շրջանառվում տեղական նորությունները, մինչև սկսում են մարել,– հարցրեց Հաբերմասը: — Այնպես որ կամ Հովսեփոսը չգիտեր դա, ինչը հնարավոր է, կամ նախընտրել էր չհիշատակել դա, ինչը տրամաբանական կլիներ, քանի որ Հովսեփոսը Հիսուսի հետևորդ չէր ու դժվար թե ինչ-որ բան գրեր Նրա օգտին:

Լռեցի, ու Հաբերմասը շարունակեց.

— Տեսե՛ք, ես նույնպես ցանկանում եմ ունենալ առնվազն հինգ աղբյուր: Բայց կա միայն մեկը. և այն արժանի է վստահության՝ հավատամքը, որն այնքան լավն է, որ գերմանացի պատմաբան Հանս ֆոն Կամպենհաուզենը դրա մասին գրում է. «Այս պատմությունը բավարարում է պատմական արժանահավատության բոլոր պահանջները, որ կարելի է ներկայացնել այսպիսի տեքստին»: Բացի այդ, Հարության փաստն ապացուցելու համար կարիք չկա հենվել 500-ի հիշատակման վրա: Սովորաբար ես չեմ էլ օգտագործում այդ փաստարկը:

Հաբերմասի պատասխանի մեջ որոշ տրամաբանություն կար: Բայց հավատամքի մի ուրիշ կողմ էլ կար, որը ճնշում էր ինձ: Այն ասում է՝ Հիսուս առաջինը հայտնվեց Պետրոսին, մինչդեռ Հովհաննեսն ասել է, որ նա առաջինը հայտնվեց Մարիամ Մագդաղենացուն: Իրականում հավատամքը որևէ կնոջ չի էլ հիշատակում, թեև նրանք նկատելի ներկայացված են ավետարանի պատմություններում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Այս հակասությունները չե՞ն վնասում դրա արժանահավատությանը,– հարցրի:

— Ամենևին,– հետևեց պատասխանը: — Նախ, ավելի ուշադի՛ր նայեք հավատամքին. այն չի ասում՝ Հիսուս առաջինը Պետրոսին հայտնվեց: Ընդամենը Պետրոսի անունն առաջինն է դնում: Ու քանի որ կանայք, իբրև վկա, ձեռնհաս չէին համարվում առաջին դարի հրեական մշակույթում, զարմանալի չէ, որ այստեղ չեն հիշատակվում: Առաջին դարում նրանց վկայությունը, ընդհանուր առմամբ, որևէ կշիռ չէր ունենա: Այնպես որ Պետրոսին առաջինը դնելը կարող էր ավելի շուտ տրամաբանական լինել, քան ժամանակային առաջնահերթություն ցույց տալ: Եվ կրկին,– եզրակացրեց նա,– հավատամքի արժանահավատությունն անվնաս է մնում: Այո, կան որոշ խնդիրներ, բայց միաժամանակ պետք է ընդունել, որ այս հավատամքը գրվել է Հարությունից անմիջապես հետո, խեղաթյուրված չէ հետագա ավանդույթներով, պարզ է, երկիմաստ չէ, հիմնված է ականատեսների վկայությունների վրա:

Ընդհանուր առմամբ, ստիպված էի համաձայնել, որ նա ճիշտ է, և վաղ քրիստոնեական հավատամքն իսկապես Հարության հզոր ապացույցն էր: Այնքան հզոր, որ Ուիլյամ Լեյն Կրեյգը՝ Հարության մասնագետը, որի հետ նախորդ գլխում հարցազրույց վարեցի, ասաց, որ հանգուցյալ Վուլֆհարթ Պաննենբերգը՝ աշխարհի թերևս մեծագույն սիստեմատիկ աստվածաբանը, «ցնցեց ժամանակակից, սկեպտիկ գերմանական աստվածաբանությունը՝ իր ամբողջ աստվածաբանությունը հիմնելով հենց Հիսուսի հարության պատմական փաստերի վրա, ինչպես տրամադրում է Պողոսի՝ հայտնությունների ցուցակը»[153]:

Վերջնականապես համոզվեցի, որ Ա Կորնթացիներին 15-ում գրված վաղ քրիստոնեական հավատամքը հուսալի աղբյուր է, և ժամանակն է դիմել ավետարաններին, որտեղ շատ ու մանրամասն խոսվում է Հիսուսի հայտնությունների մասին:

Ավետարանների վկայությունը

Նախ Հաբերմասին խնդրեցի նկարագրել հարություն առած Քրիստոսի հայտնությունները Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի ու Հովհաննեսի ավետարաններում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ավետարաններում ու «Գործք առաքելոցում»,– սկսեց նա,– հիշատակվում են Հիսուսի բազմաթիվ հայտնություններ տարբեր մարդկանց ու տարբեր վայրերում: Նա հայտնվում է մեկ մարդու կամ մի ամբողջ խմբի, տանը կամ բաց երկնքի տակ, Հովհաննեսի պես ջերմեռանդ հավատացյալներին ու Թովմասի պես թերահավատներին: Երբեմն նրանք հպվում են Հիսուսին, ուտում նրա հետ: Տեքստերում ասվում է, որ նա ֆիզիկապես ներկա էր: Այս երևույթները տևում են մի քանի շաբաթ: Եվ մենք այս պատմություններին հավատալու հիմք ունենք, քանի որ դրանք զուրկ են առասպելներին ու լեգենդներին բնորոշ նշաններից:

— Այդ հայտնությունները կարո՞ղ եք թվարկել:

Հաբերմասն անգիր, մեկ առ մեկ նկարագրեց դրանք: Հիսուս հայտնվեց.

- Մարիամ Մագդաղենացուն՝ Հովհաննես 20:10–18-ում,
- մյուս կանանց՝ Մատթեոս 28:8–10-ում,
- Կղեոպասին ու մի ուրիշ աշակերտի՝ Էմմաուս տանող ճանապարհին՝ Ղուկաս 24:13–32-ում,
- 11 աշակերտներին և ուրիշների՝ Ղուկաս 24:33–49-ում,
- 10 առաքյալներին և ուրիշների, երբ Թովմասը ներկա չէր՝ Հովհաննես 20:19–23-ում,
- Թովմասին ու մյուս առաքյալներին՝ Հովհաննես 20:26–30-ում,
- 7 առաքյալներին՝ Հովհաննես 21:1–14-ում,
- աշակերտներին՝ Մատթեոս 28:16–20-ում,
- Նա աշակերտների հետ էր Ձիթենյաց լեռան վրա նախքան համբարձվելը՝ Ղուկաս 24:50–52-ում և «Գործք առաքելոց» 1:4–9-ում:

— Հատկապես հետաքրքիր է,– ավելացրեց Հաբերմասը,– որ Քեմբրիջի համալսարանի գիտնական Չ. Հ. Դոդը մանրակրկիտ վերլուծել է այս հայտնություններն ու եզրակացրել, որ դրանցից որոշները հիմնված են հատկապես վաղ նյութերի վրա՝ ներառյալ Հիսուսի հանդիպումը կանանց հետ Մատթեոս 28:8–10-ում, հանդիպումը 11 առաքյալների հետ, որոնց նա տալիս է Մեծ պատվիրանը, Հովհաննես 20:19–23-ը, որում նրանց ցույց է տալիս իր ձեռքերն ու կողը: Կրկին ահա Հիսուսի երևալու հարուստ վկայություններ: Ընդ որում, Հիսուսի հայտնություններն ակնթարթային չէին. չկարծեք, թե ինչ-որ ստվերային մարմին արագորեն անցնում էր հեռվում,

թվայնացրել է 1915.info կայքը

և դա միայն 1-2 մարդ էր նկատում: Բազմակի հայտնություններ էին բազմաթիվ մարդկանց, հայտնություններից մի քանիսը հաստատվում էին ավելի քան մեկ ավետարանում կամ Ա Կորնթացիներին 15 հավատամքով:

— Որևէ հավելյալ ապացույց կա՞:

— Ուղղակի նայե՛ք «Գործք առաքելոցը»,- պատասխանեց Հաբերմասը՝ հիշատակելով Նոր Կտակարանի գիրքը եկեղեցու ծննդյան և կազմավորման մասին: «Գործք առաքելոցում» Հիսուսի հայտնվելն իր աշակերտներին նկարագրված է բազմիցս և շատ մանրամասն:

— Գլխավորն այն է,- ասաց Հաբերմասը,- որ որոշ պատմություններ «Գործք առաքելոցի» 1-5, 10, և 13-ում նույնպես ներառում են որոշակի հավատամքներ, որ, ինչպես Ա Կորնթացիներին 15-ը, Հիսուսի մահվան ու հարության վերաբերյալ շատ վաղ տվյալներ են հաղորդում:

Այս ասելով՝ Հաբերմասը մի գիրք ձեռքն առավ ու կարդաց գիտնական Ջոն Դրեյնի եզրակացությունը:

> Հարության մասին մեր ունեցած ամենավաղ վկայությունները գրեթե անկասկած վերաբերում են այս ենթադրյալ իրադարձությանն անմիջապես հաջորդած ժամանակաշրջանին: Այս վկայությունը կա Սուրբ Առաքյալների Գործերի քարոզներում, և կասկած չկա, որ «Գործք առաքելոցի» առաջին հինգ գլուխներում դրանց հեղինակը նյութեր է փոխանցում շատ վաղ աղբյուրներից[154]:

Իսկապես, «Գործք առաքելոցը» լի է Հիսուսի հայտնությունների հիշատակումներով: Պետրոս առաքյալը անդրդվելի էր հատկապես այդ հարցում: Գործք 2:32-ում նա ասում է. «Այս Հիսուսին Աստված հարություն տվեց, որին մենք ամենքս վկա ենք»: Գործք 3:15-ում նա կրկնում է. «Սպանեցիք կյանքի Առաջնորդին, որին Աստված մեռելներից հարություն տվեց, և այդ բանին մենք իսկ վկա ենք»: Գործք 10:41-ում նա հաստատում է Կոռնելիոսին, որ ինքն ու ուրիշները «կերան ու խմեցին Հիսուսի հետ՝ մեռելներից նրա հարություն առնելուց հետո»:

Պողոսը նույնպես, Գործք 13:31-ում գրառված ելույթում ասում է. «Եվ Հիսուս բազում օրեր երևաց նրանց, ովքեր նրա հետ Գալիլեայից Երուսաղեմ էին եկել, այժմ նրա վկաներն են ժողովրդի առաջ»:

Հաբերմասը պնդեց.

թվայնացրել է 1915.info կայքը

— Հարությունը, անկասկած, վաղ եկեղեցու կենտրոնական դրույթն էր իր վաղ օրերից: Վաղ քրիստոնյաները ոչ թե պարզապես ընդունում էին Հիսուսի ուսմունքը, այլև ողջ տեսան Նրան խաչելությունից հետո: Ահա թե ինչը փոխեց նրանց կյանքն ու եկեղեցու սկիզբը դրեց:

Այո, ավետարաններից ու «Գործք առաքելոցից» Հարության ապացույցները՝ փաստ առ փաստ, վկա առ վկա, դետալ առ դետալ, հավելյալ ապացույց, ապացույցի վրա, ծայրաստիճան տպավորիչ էին: Թեև փորձեցի, չկարողացա հին պատմության մեջ առավել ամբողջականորեն հաստատված իրադարձություն հիշել:

Բայց մի հարց էլ կար, որ ուզում էի պարզել: Դա վերաբերում էր այն ավետարանին, որը մասնագետները համարում են Հիսուսի մասին առաջին պատմությունը:

Մարկոսի եզրակացության բացակայությունը

Երբ սկսեցի առաջին անգամ հետազոտել Հարության հարցը, իմ Աստվածաշնչի լուսանցքում մտահոգող մեկնաբանության հանդիպեցի. «Ամենավստահելի վաղ ձեռագրերում ու այլ հին վկայություններում Մարկոս 16:9-20-ը չկա»: Այլ խոսքով, գիտնականների մեծ մասը կարծում է, թե Մարկոսի ավետարանն ավարտվում է 16:8-ով, երբ կանայք, գերեզմանը դատարկ են գտնում, իսկ ողջ Հիսուս ոչ մեկին չի երևում: Այս միտքը հետապնդում էր ինձ:

— Ձեզ չի՞ անհանգստացնում այն փաստը, որ առաջին ավետարանում հիշատակված չէ Հարությունից հետո Հիսուսի հայտնվելը,- հարցրի Հաբերմասին:

Նա ամենևին մտահոգ չէր թվում:

— Ընդհանրապես խնդիր չեմ տեսնում,- ասաց նա: — Իհարկե, լավ կլիներ, որ Մարկոսն էլ գրեր հայտնությունների մասին, բայց ահա ձեզ մտածելու թեմա. նույնիսկ եթե Մարկոսի ավետարանն ավարտվում է 8 համարով, ինչում ոչ բոլորն են վստահ, միևնույն է, նա դեռ հաղորդում է, որ գերեզմանը դատարկ էր, ու մի երիտասարդ հայտարարում է՝ Նա հարությունն է առել, ու ասում է կանանց, որ հայտնություններ են լինելու: Այնպես որ առաջին՝ ունենք հայտարարություն, որ հարությունը եղել է, երկրորդ՝ ունենք կանխատեսում, որ հայտնություններ են հաջորդելու:

թվայնացրել է 1915.info կայքը

Կարող ես փակել սիրածդ վեպն ու ասել. «Չեմ հավատում, որ հեղինակն ինձ հաջորդ դրվագը չի պատմում»: Բայց չես կարող գիրքը փակել ու ասել. «Գրողը չի հավատում հաջորդ դրվագին»: Մարկոսը հաստատապես հավատում է: Ակնհայտ է, որ նա հավատում էր, որ Հարությունը տեղի է ունեցել: Նա ավարտում է, երբ կանանց ասում են, որ Հիսուս հայտնվելու է Գալիլեայում, հետո էլ ուրիշները հաստատում են, որ հայտնվել է:

Եկեղեցու ավանդույթի համաձայն՝ Մարկոսը ականատես Պետրոսի ուղեկիցն էր:

— Տարօրինակ չէ՞,– հարցրի,– որ Մարկոսը չի հիշատակում, որ Հիսուս հայտնվել է Պետրոսին, եթե իսկապես հայտնվել էր:

— Մարկոսը որևէ հայտնություն չի հիշատակում, ուրեմն արտասովոր չէր լինի, որ Պետրոսը չի թվարկվում,– ասաց նա: — Բայց նկատի ունեցեք, որ Մարկոսը Պետրոսին առանձնացնում է: Մարկոս 16:7-ում ասվում է. «Բայց գնացեք, նրա աշակերտներին և Պետրոսին ասեք, որ ահա ձեզնից առաջ գնում է Գալիլեա, այնտեղ կտեսնեք նրան, ինչպես ասել էր ձեզ»: Սա համապատասխանում է Ա Կորնթացիներին 15:5-ին, որը հաստատում է, որ Հիսուս իսկապես հայտնվել է Պետրոսին, և Ղուկաս 24:34-ին՝ մեկ այլ վաղ հավատամք, որում ասվում է. «Իսկապես որ Տերը հարություն առավ և երևաց Սիմոնին» կամ Պետրոսին:

Այնպես որ հաղորդվում է, որ կատարվել է այն, ինչ Մարկոսը կանխատեսում է Պետրոսի մասին: Եվ դա հաստատվում է եկեղեցու երկու վաղ ու վստահելի հավատամքներով, նաև Պետրոս առաքյալի վկայությամբ՝ «Գործք առաքելոցում»:

Այլընտրանքներ կա՞ն

Հարությունից հետո Հիսուսի հայտնությունների վկայությունների ու հավելյալ ապացույցների քանակը, անկասկած, ապշեցուցիչ է: Եթե վկաներին դատարան կանչեիք, որպեսզի յուրաքանչյուրին ընդամենը 15 րոպե խաչաձև հարցաքննեիք, ու շուրջօրյա, առանց ընդմիջման աշխատեիք, նրանց բոլորին կլսեիք երկուշաբթի նախաճաշից մինչև ուրբաթ ճաշի ժամը: Ականատեսների վկայություններն ուղիղ 129 ժամ լսելուց հետո ո՞վ կարող էր կասկածներ ունենալ:

թվայնացրել է 1915.info կայքը

Որպես լրագրող, որը լուսաբանել է մեծ թվով դատավարություններ՝ թե՛ քրեական, թե՛ քաղաքացիական, ստիպված էի համաձայնել սըր Էդվարդ Քլարկի՝ բրիտանական Բարձր դատարանի դատավորի հետ, որն առաջին Զատկի ամբողջական իրավական վերլուծություն էր արել. «Ինձ համար փաստերը վերջնական են, ու Բարձր դատարանում կրկին ու կրկին դատավճիռը հիմնել եմ փաստերի վրա, որոնք ամենևին էլ նույնքան ծանրակշիռ չէին: Որպես իրավաբան, Ավետարանի փաստերն ընդունում եմ անվերապահորեն, իբրև ազնիվ մարդկանց վկայությունը փաստերի մասին, որոնք նրանք կարողացել են հաստատել»[155]:

Այնուամենայնիվ, կա՞ն հարություն առած Հիսուսի հայտնվելու այլ հավանական բացատրություններ: Դրանք պարզապես լեգենդնե՞ր են: Գուցե ականատեսները զգայապատրանքնե՞ր էին ունենում: Որոշեցի այդ հարցերը պարզել Հաբերմասի հետ:

ՏԱՐԲԵՐԱԿ N 1. Հիսուսի հայտնությունն առասպել է

Եթե ճիշտ է, որ Մարկոսի ավետարանը նախկինում ավարտվում էր մինչև որևէ հայտնություն հաղորդելը, կարելի էր պնդել, որ ավետարաններում էվոլյուցիոն մշակում կա: Մարկոսը հայտնություն չի արձանագրում, Մատթեոսը մի քանիսն ունի, Ղուկասը՝ ավելին, Հովհաննեսը՝ ամենաշատը:

— Դա ցույց չի՞ տալիս, որ հայտնություններն ուղղակի առասպելներ են, որ ժամանակի ընթացքում թափ են հավաքել,– հարցրի ես:

— Ոչ, և դրա համար շատ պատճառներ կան,– վստահեցրեց Հաբերմասը: — Առաջին, բոլորը չէ, որ կարծում են, թե Մարկոսն ամենավաղ ավետարանն է: Կան գիտնականներ, ճիշտ է՝ քչերը, որոնք կարծում են, թե Մատթեոսն առաջինն է գրվել:

Երկրորդ, նույնիսկ եթե ընդունեմ Ձեր թեզի իրավացիությունը, այն միայն կապացուցի, որ առասպելներն աճել են ժամանակի ընթացքում, բայց չի կարող բացատրել նախնական համոզմունքը, որ Հիսուս հարություն է առել մեռելներից: Ինչ-որ բան կատարվեց, որը եկեղեցու պատմության ամենավաղ փուլում առաքյալներին մղեց Քրիստոսի Հարությունը հռչակել հիմնական դոգմա: Առասպելը չի բացատրում ականատեսների վկայությունների սկզբնագրերը: Այլ խոսքով, առասպելը կարող է ասել,

թվայնացրել է 1915.info կայքը

թե ինչպես է պատմությունը մեծացել, չի կարող ասել, թե ինչպես է այն առաջացել, երբ երկու մասնակիցն էլ վկաներ են ու իրադարձությունները վաղ են հաղորդել:

Երրորդ, մոռանում եք, որ Ա Կորնթացիներին 15-ի հավատամքը նախորդում է բոլոր ավետարաններին ու հայտնությունների մասին վիթխարի պնդումներ է անում: Փաստորեն, ամենամեծ թիվը ներառող պնդումը՝ որ նրան միաժամանակ 500 մարդ է տեսել, վերադառնում է այս՝ ամենավաղ աղբյուրին: Դա առասպելի մշակման վարկածի հետ խնդիրներ է առաջացնում: Առասպելի վարկածը մերժելու լավագույն պատճառները գալիս են վաղ դավանական պատմություններից Ա Կորնթացիներին 15-ում ու «Գործք առաքելոցում», որոնք էլ նախորդում են ավետարանի նյութին: Եվ չորրորդ, Հիսուսի դատարկ գերեզմանը: Եթե Նրա հայտնվելը միայն առասպել լիներ, Մարմինը կմնար գերեզմանում: Բայց այն դատարկ էր Զատկի առավոտը: Դա լրացուցիչ վարկած է պահանջում:

ՏԱՐԲԵՐԱԿ N 2. **Հիսուսի հայտնվելը զգայապատրանք էր**

Գուցե վկաներն անկեղծ հավատացած էին, որ տեսել են Հիսուսին: Գուցե նրանք ճշգրիտ արձանագրել են կատարվածը: Բայց նրանք կարող էին զգայապատրանք ունենալ, որը կհամոզեր նրանց, որ Հիսուսին են հանդիպում, ինչն իրականում այդպես չէր:

Հաբերմասը ժպտաց հարցի վրա:

— Գարի Քոլինզին գիտեք,– հարցրեց:

Հարցն անակնկալի բերեց ինձ:

— Իհարկե,– պատասխանեցի,– ճանաչում եմ:

— Բոլորովին վերջերս նրա գրասենյակում այս նույն գրքի համար հարցազրույց էի վարում,– ասացի:

— Նրան լավ հոգեբան եք համարում,– հարցրեց Հաբերմասը:

— Այո՛,– զգույշ պատասխանեցի, քանի որ զգում էի, որ ինչ-որ բանի է նախապատրաստում ինձ: — Դոկտորական, 20 տարվա դասախոս, հոգեբանական հարցերի վերաբերյալ տասնյակ գրքերի հեղինակ, հոգեբանների ազգային միավորման նախագահ: Իհարկե, որակավորված եմ համարում նրան:

թվայնացրել է 1915.info կայքը

Հաբերմասն ինձ մի թուղթ փոխանցեց:

— Գարիին հարցրել եմ հավանականության մասին, որ սրանք զգայապատրանքներ էին, ու սա նրա մասնագիտական կարծիքն է,– ասաց: Նայեցի փաստաթղթին:

> Զգայապատրանքներն անհատական երևույթներ են: Հենց բնույթն այնպիսին է, որ միայն մի անձ կարող է միանգամից որոշակի զգայապատրանք ունենալ: Դրանք, անշուշտ, անհնար է խմբով տեսնել: Ոչ էլ հնարավոր է, որ մի անձը որևէ կերպ մի ուրիշի մոտ զգայապատրանք առաջացնի: Քանի որ զգայապատրանքը գոյություն ունի միայն այս սուբյեկտիվ, անձնական իմաստով, ակնհայտ է, որ ուրիշները չեն կարող դրան վկա լինել[156]:

— Դա,– ասաց Հաբերմասը,– մեծ խնդիր է զգայապատրանքի վարկածի համար, քանի որ կրկնվող պատմություններ կան, որ Հիսուս հայտնվել է բազմաթիվ մարդկանց, որոնք նույն բանն են հաղորդում: Կա մի քանի այլ փաստարկ, թե ինչու զգայապատրանքները չեն կարող բացատրել նրա հայտնությունները,– շարունակեց նա: — Աշակերտները վախեցած էին, կասկածներով լի ու խաչելությունից հետո հուսահատ, մինչդեռ զգայապատրանքներ ունեցող մարդիկ պետք է սպասումով կամ կանխատեսումով հղի միտք ունենան: Աստված սիրեք, Պետրոսը համառ էր, Հակոբոսը թերահավատ էր, ինչ խոսք, զգայապատրանքների համար լավ թեկնածուներ չեն: Նաև զգայապատրանքները համեմատաբար հազվադեպ երևույթ են: Դրանց պատճառը սովորաբար թմրանյութերը կամ մարմնական զրկանքներն են: Ամենայն հավանականությամբ, չեք ճանաչում որևէ մեկին, որ երբևէ զգայապատրանք է ունեցել, ինչի պատճառն այս երկուսից մեկը չի եղել: Այնինչ մենք, ենթադրվում է, պիտի հավատանք, որ բազմաթիվ շաբաթների ընթացքում ամեն տեսակի ծագման, ամեն տեսակի խառնվածքի, զանազան վայրերից, բոլորը զգայապատրանքներ են ունեցել: Դա բավական պրկում է վարկածը, չէ՞:

Եթե ավետարանների պատմությունները հիմնավորում ենք որպես վստահելի, ինչպե՞ս կբացատրեք, որ աշակերտներն ուտում էին Հիսուսի հետ ու դիպչում նրան: Ինչպե՞ս է նա քայլում նրանցից երկուսի հետ՝ Էմմավուս տանող ճանապարհին: Իսկ դատարկ գերեզմանը: Եթե մարդիկ միայն կարծեին, թե Հիսուսին են տեսել, նրա մարմինը դեռ գերեզմանում կլիներ:

թվայնացրել է 1915.info կայքը

Լավ, մտածեցի, եթե դա պատրանք չէր, գուցե ավելի խորամանկ որևէ բան էր:

— Սա կարող էր խմբային մտածողության օրինակ լինել, երբ մարդիկ միմյանց համոզում են տեսնել այն, ինչը գոյություն չունի,– հարցրի: — Մայքլ Մարտինը նկատել է, որ «Կրոնական մոլեռանդը կարող է տեսնել այն, ինչ ուզում է, և ոչ այն, ինչ իսկապես կա»[157]:

Հաբերմասը ծիծաղեց:

— Գիտեք, աթեիստներից մեկը, որի հետ բանավիճել եմ՝ Էնթոնի Ֆլուն, ասաց, որ իրեն դուր չի գալիս, որ այլ աթեիստներ օգտագործում են այդ վերջին փաստարկը, որովհետև այն երկու կողմ ունի: Նա ասաց. «Քրիստոնյաները հավատում են, որովհետև ուզում են հավատալ, իսկ աթեիստները չեն հավատում, որովհետև չեն ուզում»: Իրականում մի քանի պատճառ կա, թե ինչու աշակերտները չէին կարող միմյանց համոզել սրանում: Իբրև նրանց հավատի կենտրոն, չափից դուրս շատ բան էր վտանգված: Նրանցից ոմանք ավելի ուշ չէի՞ն վերանայի խմբային մտածողությունը, չէի՞ն հրաժարվի կամ ուղղակի լուռ չէի՞ն անջատվի: Իսկ Հակոբոսը, որը չէր հավատում Հիսուսին, ու Պողոսը, որը հալածում էր քրիստոնյաներին, ինչպե՞ս նրանց համոզեցին, որ ինչ-որ բան տեսնեն: Ավելին, իսկ դատարկ գերեզմանը: Ու այս տեսակետը չի բացատրում Ա Կորնթացիներին 15-ի հավատամքն ու այլ հատվածներ: Ականատեսներն առնվազն համոզված էին, որ Հիսուսին ողջ են տեսել, իսկ խմբային մտածողությունն այս կողմը լավ չի բացատրում:

Հաբերմասը բավական երկար դադար տվեց, որ գիրք հանի ու իր փաստարկը հիմնավորի ականավոր աստվածաբան ու պատմաբան Կարլ Բրատենից մեջբերումով. «Նույնիսկ ամենաթերահավատ պատմաբանները համաձայն են, որ պարզունակ քրիստոնեության համար... Հիսուսի հարությունը մեռելներից պատմության մեջ իրական իրադարձություն էր, հավատի հենց հիմքը, և ոչ առասպելական գաղափար, որը ելնում է հավատացյալների ստեղծարար երևակայությունից»[158]:

— Երբեմն,– եզրակացրեց Հաբերմասը,– մարդիկ ուղղակի կառչում են ծեղիկին՝ փորձելով բացատրել հայտնությունները: Բայց ոչինչ ավելի լավ չի համապատասխանում փաստերին, քան բացատրությունը, որ Հիսուս իրականում հարություն է առել մեռելներից:

Ոչ մի ռացիոնալ կասկած

Հիսուս մահացավ խաչի վրա: Ալեքսանդր Մեթերելը դա պարզաբանել է: Նրա գերեզմանը Զատկի առավոտյան դատարկ էր: Ուիլյամ Լեյն Կրեյգը կասկած չթողեց դրանում: Նրա աշակերտներն ու մյուսները տեսել են նրան, դիպել ու հարությունից հետո կերել նրա հետ: Գարի Հաբերմասն այս փաստարկումը կառուցեց առատ փաստերով: Բրիտանացի ականավոր փաստաբան Մայքլ Գրինն ասել է. «Հիսուսի հայտնությունները նույնքան լավ են վավերացված, որքան որևէ բան հնում...Կասկած լինել չի կարող, որ դրանք կատարվել են, ու որ գլխավոր պատճառը, որ քրիստոնյաները համոզվեցին, ուղղակի սա էր. նրանք կարող էին վստահ ասել. «Մենք տեսել ենք Տիրոջը»: Նրանք գիտեին, որ Նա էր[159]:

Այս ամենն անգամ չի սպառում փաստերը: Ես արդեն օդանավի տոմս էի ամրագրել երկրի մյուս կողմն ուղևորվելու համար, որպեսզի ևս մի մասնագետի հետ հարցազրույց վարեմ վերջնական ապացույցների համար, որ Հարությունն իրական պատմական իրադարձություն է:

Բայց նախքան Հաբերմասի գրասենյակից դուրս գալը ևս մի հարց ունեի: Անկեղծ ասած, տատանվում էի այն տալիս, որովհետև փոքր-ինչ կանխատեսելի էր, ու թվում էր, թե ստանալու եմ ծեծված պատասխան:

Հարցը վերաբերում է Հարության կարևորությանը: Թվում էր, որ եթե Հաբերմասին հարցնեմ դա, միօրինակ պատասխան է տալու, որ դա քրիստոնեական ուսմունքի կենտրոնում է, առանցքը, որի շուրջ պտտվում է քրիստոնեական հավատը: Եվ ես չսխալվեցի. նա իսկապես պատրաստի պատասխան տվեց:

Բայց ինձ զարմացրեց այն, որ դա ամենը չէր, ինչ նա ասաց: Այս պրակտիկ գիտնականը, այս անողոք ու ուղղախոս բանավիճողը, հավատի այս մարտական պաշտպանը ինձ թույլ տվեց նայել իր հոգու մեջ և հասկանալ, որ իր պատասխանը ծագել էր ամենասև հուսահատության անդունդից:

Դեբիի հարությունը

Հաբերմասը շփեց իր ճերմակող մորուքը: Կայծակնային ռիթմն ու բանավիճողի սուր ձայնն անհետացան: Այլևս չհիշատակեց գիտնականների,

թվայնացրել է 1915.info կայքը

չցիտեց Սուրբ գրությունները, փաստարկում չկառուցեց: Ես հարցրել էի Հարության կարևորության մասին, ու Հաբերմասը որոշեց ռիսկի դիմել՝ վերադառնալով 1995 թվական, երբ իր կինը՝ Դեբին, դանդաղ մեռավ ստամոքսի քաղցկեղից: Նուրբ պահից անակնկալի գալով՝ կարող էի միայն լսել:

— Մեր պատշգամբում նստած,– սկսեց նա՝ հայացքը դեպի տարածություն: Խորը շունչ քաշեց, ապա շարունակեց: — Կինս վերևում մեռնում էր: Մի քանի շաբաթը չհաշված՝ նա տանն էր անցնում այդ ամենի միջով: Դա ամենավատ բանն էր, որ կարող էր պատահել:

Շրջվեց և ուղիղ ինձ նայեց:

— Գիտեք, թե ինչն էր ապշեցուցիչ: Ուսանողներս զանգում էին ինձ, ոչ թե միայն մեկը, այլ մի քանիսը, ու ասում. «Այս իրադրությունում ուրախ չեք, որ հարություն գոյություն ունի»: Որքան էլ հանգամանքները մռայլ էին, ստիպված ժպտում էի երկու պատճառով: Նախ՝ ուսանողներս փորձում էին ինձ սփոփել իմ սեփական ուսուցումով: Երկրորդ, դա օգնում էր: Այնտեղ նստած պատկերացնում էի Հոբին, որն անցավ այդ ամբողջ սարսափի միջով ու Աստծուն հարցեր էր տալիս, բայց հետո փոխեցին դերերը, ու Աստված նրան մի քանի հարց տվեց: Գիտեի, որ եթե Աստված ինձ այցելեր, միայն մի հարց կտայի. «Տե՛ր, ինչո՞ւ է Դեբին այնտեղ՝ վերևում»: Ու կարծում եմ՝ Աստված կպատասխաներ՝ մեղմ հարցնելով. «Գա՛րի, ես իմ որդուն մեռելներից հարություն տվեցի՞»: Ես կասեի. «Լավ էլի, Տե՛ր, այդ թեմայով յոթ գիրք եմ գրել: Իհարկե, նա հարություն է առել մեռելներից: Բայց ես Դեբիի՛ մասին եմ ուզում իմանալ»: Նա երևի կվերադառնար նույն հարցին. «Որդուս մեռելներից հարություն տվեցի՞»: Մինչև նրա միտքը գլխի ընկնեի, հարությունն ասում է, որ եթե Հիսուս 2000 տարի առաջ հարություն է առել, Դեբիի մահը 1995-ին պատասխան ունի: Գիտեք, թե որն է: Այն աշխատեց ինձ համար, երբ նստած էի պատշգամբում, ու դեռ աշխատում է այսօր: Ինձ համար սարսափելի հուզական ժամանակ էր, բայց չէի կարողանում համակերպվել այն փաստի հետ, որ նրա տառապանքի պատասխանը հարությունն է: Դեռ անհանգստանում էի, թե ինչ եմ անելու՝ չորս երեխա մենակ մեծացնելիս: Բայց չի եղել իրադրություն, երբ ճշմարտությունը չմխիթարի ինձ: Կնոջս կորցնելն ամենացավոտ փորձությունն էր, որով երբևէ անցել եմ, բայց եթե հարությունը կարող էր ինձ անցկացնել դրա միջով, այն կարող է ինձ անցկացնել ամեն մի երևույթի միջով:

Եթե այն գործել է Ք. հ. 30 թվականին, կգործի 1995-ին, կգործի 1998-ին ու կգործի դրանից հետո:

Հաբերմասը հայացքն ինձ սևեռեց:

— Սա ինչ-որ քարոզ չէ,- ասաց կամացուկ: — Ամբողջ սրտով հավատում եմ դրան: Եթե կա հարություն, կա երկինք: Եթե Հիսուս հարություն է առել, Դեբին հարություն կառնի: Ու ինչ-որ օր՝ ես էլ:

Այդ ժամանակ ես երկուսին էլ կտեսնեմ:

Քննարկումներ

Հարցեր խորհրդածելու կամ խմբային պարապմունքի համար

1. Հաբերմասը հարության խնդիրը հանգեցրեց երկու հարցի՝ Հիսուս մահացամ, հետագայում նրան ողջ տեսամ: Մինչև այժմ փաստերի հիման վրա ինչպես կպատասխանեք այս հարցերին և ինչու:
2. Որքան ազդեցիկ է Ա Կորնթացիներին 15 հավատամքը ձեր գնահատականի համար, թե՝ Հիսուսին ողջ տեսել են: Ինչու եք եզրակացնում, որ դա հետաքննության ժամանակ կարևոր է կամ անկարևոր:
3. Մի քանի րոպե հատկացրեք Հաբերմասի մեջբերած ավետարանի հայտնություններից մի քանիսը փնտրելուն: Դրանք ճշմարտության բաժին ունեն ձեզ համար: Որպես հարության օգտին փաստեր՝ ինչպես կգնահատեք դրանք:
4. Հաբերմասը խոսեց այն մասին, թե ինչու հարությունն անձնական նշանակություն ունի իր համար: Կյանքում կորուստ ունեցել եք: Ինչպես կանդրադառնար հարության հանդեպ հավատը նրա վրա, թե ինչպես եք նայում դրան:

թվայնացրել է 1915.info կայքը

ԳԼՈՒԽ 14

Անուղղակի ապացույցներ

Կան ապացույցներ, որոնք անուղղակիորեն հաստատում են Հարությունը

Ոչ մի վկա չէր տեսել, թե ինչպես է Թիմոթի Մակվեյը երկու տոննա հանքային հիմքով պայթուցիկ բարձում Ռայդեր վարձու բեռնատարը: Ոչ ոք չէր տեսել, թե ինչպես է բեռնատարը բերում Օկլահոմա սիթիի դաշնային շենքի առաջ ու պայթեցնում ռումբը՝ 168 մարդու սպանելով: Ոչ մի տեսախցիկ չէր տեսագրել նրան՝ հանցագործության վայրից փախչելիս:

Բայց ատենակալները ողջամիտ կասկածից դուրս եզրակացրին, որ Մակվեյը մեղավոր է ԱՄՆ պատմության մեջ տեղական ահաբեկչության ծանրագույն ակտի մեջ: Ինչո՞ւ: Որովհետև դատախազները փաստ առ փաստ, ապացույց առ ապացույց, վկա առ վկա օգտագործեցին անուղղակի փաստերը՝ նրա դեմ անհերքելի գործ սարքելու համար:

Թեև վկայի ամբիոնի մոտ կանչված 137 անձից ոչ մեկը Մակվեյին չէր տեսել հանցանքը գործելիս, նրանց վկայություններն իսկապես նրա մեղքի անուղղակի ապացույցներ ապահովեցին: Մի բիզնեսմեն ասաց, որ Մակվեյը Ռայդերի բեռնատար է վարձել, մի ընկեր ասաց, որ նա խոսել է զայրույթից կառավարության շենքը պայթեցնելու մասին, մի քրեագետ էլ ասաց, որ երբ Մակվեյին ձերբակալել են, նրա հագուստի մեջ պայթուցիկների մնացորդներ են եղել:

Դատախազները սա սատարեցին ավելի քան 700 իրեղեն ապացույցներով՝ մոթելի ու տաքսու կտրոնից մինչև հեռախոսազրույցներ, բեռնատարի բանալի ու չինական ռեստորանի հաշիվ: Մոտ 18 օր նրանք հմտորեն փաստերի ցանց հյուսեցին, որից Մակվեյը չկարողացավ ազատվել:

Ականատեսների վկայությունը կոչվում է ուղղակի ապացույց, որովհետև մարդիկ երդման տակ նկարագրում են, թե ինչպես են անձամբ տեսել, որ ամբաստանյալը գործել է հանցանքը: Թեև սա հաճախ անհերքելի է, երբեմն ենթակա է աղոտ հիշողությունների, նախապաշարումների ու նույնիսկ ուղղակի հորինվածքի: Ի հակադրություն՝ անուղղակի ապացույցները

բաղկացած են կողմնակի փաստերից, որոնցից կարելի է տրամաբանորեն եզրակացություններ անել[160]: Դրա կուտակվող էֆեկտը կարող է ճիշտ նույնքան ամուր լինել, ու շատ դեպքերում նույնիսկ ավելի ազդեցիկ, քան ականատեսների վկայությունները:

Թիմոթի Մակվեյը գուցե կարծել էր, թե կատարյալ հանցանք է գործել՝ խուսափելով վկաներից, բայց, միևնույն է, հայտնվեց մահվան դատապարտվածների շարքում անուղղակի ապացույցների պատճառով, որ նրա կողմն էին ցույց տալիս նույնքան անհավատալիորեն, որքան կարող էր ցույց տալ անմիջական ականատեսը:

Արդեն քննարկած լինելով դատարկ գերեզմանի համոզիչ ապացույցներն ու հարություն առած Հիսուսին տեսածների պատմությունները՝ ժամանակն էր, որ գտնեի անուղղակի ապացույցներ, որոնք կարող էին ամրապնդել հարության օգտին գործը: Գիտեի, որ եթե Հիսուսի հարության պես իրադարձությունն իսկապես տեղի ունեցած լիներ, պատմությունը լցված կլիներ դա հավաստող անուղղակի ապացույցներով:

Փնտրտուքն ինձ ևս մի անգամ տարավ հարավային Կալիֆոռնիա, այս անգամ՝ մի պրոֆեսորի գրասենյակ, որը վարպետորեն միախառնում է պատմության, փիլիսոփայության ու գիտության ձեռնհասությունը:

13-ՐԴ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Ջ. Փ. Մորլենդ, փիլիսոփայության դոկտոր

Ջ. Փ. Մորլենդը լի է էներգիայով: Նա խոսում է աշխույժ, կրքոտ, պտտվող աթոռի վրա հաճախ առաջ հակվելով, որպեսզի ընդգծի իր մտքերը, երբեմն թեթև ցատկելով, կարծես պատրաստվում էր տեղից վեր թռչել ու իր փաստարկներով տապալել ինձ:

Մորլենդի խիստ կազմակերպված միտքն այնքան համակարգված է աշխատում, այնքան տրամաբանված, որ կարծես առանց ջանքի կառուցում է իր գործը՝ ավարտուն նախադասություններով ու ամբողջական պարբերություններով, առանց բառեր վատնելու ու առանց ավելորդ մտքերի, ասես պատրաստ էր սրբագրել ու տպել: Երբ ձայնագրիչս կանգ էր առնում, նա դադար էր առնում, ժամանակ տալիս, որ նոր ձայներիզ մտցնեմ, հետո սկսում էր ճիշտ այն տեղից, որտեղ կանգ էր առել, առանց մի տող բաց թողնելու:

թվայնացրել է 1915.info կայքը

Մորլենդը հայտնի փիլիսոփա է (Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի դոկտորի կոչումով) ու հանգիստ կողմնորոշվում է Կանտի ու Կիերկեգորի գաղափարական աշխարհներում, սակայն չի կենտրոնանում միմիայն վերացականի վրա: Նրա գիտական կրթությունը (Միսուրիի համալսարանում քիմիկոսի աստիճան է ստացել) ու պատմությունն իմանալը (ինչպես ցույց է տալիս նրա գերազանց գիրքը՝ «Աշխարհիկ քաղաքի մասշտաբայնացումը») նրան խարսխում են առօրյա աշխարհում ու թույլ չեն տալիս ընկել զուտ եթերային մտածողության գիրկը:

Մորլենդն աստվածաբանության մագիստրոսի կոչում ունի Դալլասի աստվածաբանական սեմինարիայից, այժմ փիլիսոփայության վաստակավոր պրոֆեսոր է Թալբոթի աստվածաբանության դպրոցում, որտեղ դասավանդում է փիլիսոփայության ու էթիկայի մագիստրատուրայում:

Նրա հոդվածները տպագրվել են ավելի քան 30 մասնագիտական ամսագրերում՝ American Philosophical Quarterly; Metaphilosophy և Philosophy and Phenomenological Research և այլն: Նա գրել, համահեղինակել ու խմբագրել է տասնյակ գրքեր՝ ներառյալ «Քրիստոնեությունն ու գիտության բնույթը», «Աստված գոյություն ունի՞» (բանավեճ Քաի Նիլսենի հետ), «Բանավեճ կյանքի և մահվան մասին», «Արարչագործության վարկածը», «Մահից այն կողմ. անմահության ապացույցների ուսումնասիրություն», «Հիսուս կրակի տակ», «Քո ամբողջ մտքով սիրի՛ր քո Աստծուն»:

Մորլենդի հետ նստելով նրա փոքր, բայց հարմարավետ գրասենյակում՝ արդեն գիտեի, որ «անուղղակի ապացույցներ» արտահայտությունը սովորաբար հանդիպում է հոգնակի թվով: Այլ խոսքով, այն կառուցվում է աղյուս առ աղյուս, մինչև ամուր հիմք լինի, որին կարելի է վստահ հենել ապացույցները:

Ուստի հարցազրույցը սկսեցի վճռական մարտահրավերով:

— Կարո՞ղ եք ներկայացնել հինգ անուղղակի ապացույց, որ Հիսուս հարություն առավ մեռելներից:

— Հինգ օրինա՞կ,– հարցրեց Մորլենդը: — Հինգ բան, որը ոչ ոք չի՞ վիճարկում:

Գլխով արեցի: Մորլենդն աթոռը գրասեղանից հետ հրեց ու անցավ իր առաջին ապացույցին՝ առաքյալների փոխված կյանքերն ու նրանց պատրաստակամությունը՝ մեռնել հանուն իրենց համոզմունքի, որ Հիսուս մեռելներից հարություն է առել:

ԱՊԱՑՈՒՅՑ N 1. Առաքյալները մեռան հանուն համոզմունքների

— Երբ Հիսուս խաչվեց,– սկսեց Մորլենդը,– նրա հետևորդները թևաթափ եղան ու ընկճվեցին: Նրանք այլևս վստահ չէին, որ Հիսուսին Աստված է ուղարկել, որովհետև հավատացած էին, որ ամեն մի խաչված անիծված է Աստծուց: Նրանց նաև սովորեցրել էին, որ Աստված թույլ չէր տա, որ իր Մեսիան մահանա: Ուստի նրանք ցրվեցին: Հիսուսի շարժումը գրեթե կազմալուծվեց:

Հետո, կարճ ժամանակ անց, տեսնում ենք, թե ինչպես են նրանք թողնում իրենց գործերը, հավաքվում ու հանձն առնում շատ հստակ ուղերձի տարածումը՝ որ Հիսուս Աստծո Մեսիան էր, որը մեռավ խաչի վրա, կյանք վերադարձավ, ու նրան ողջ տեսան: Նրանք պատրաստ էին իրենց կյանքի մնացյալ մասն անցկացնել սա հռչակելով՝ մարդկային տեսանկյունից առանց որևէ օգուտի: Միջերկրականի ափին նրանց ամենևին էլ ամառանոց չէր սպասում, այլ դժվարություններով լի կյանք: Հաճախ քաղցած էին մնում, քնում էին բնության տարերքներից անպաշտպան, նրանց ծաղրում էին, ծեծում, բանտարկում: Ի վերջո, նրանց մեծ մասին տանջալի եղանակներով մահապատժի ենթարկեցին:

Ինչի՞ համար: Բարի մտադրությունների՞: Ո՛չ, որովհետև նրանք առանց կասկածի նշույլի համոզված էին, որ տեսել են մեռելներից հարություն առած Հիսուս Քրիստոսին: Չեք կարող բացատրել այն, թե ինչպես է մարդկանց այս որոշակի խումբը հնարել այս որոշակի համոզմունքը՝ առանց հարություն առած Քրիստոսի փորձառություն ունեցած լինելու: Այլ համարժեք բացատրություն չկա:

Ընդհատեցի «Այո՛, բայց...» առարկությամբ:

— Այո՛,– համաձայնեցի,– նրանք պատրաստ էին մեռնել հանուն իրենց համոզմունքների: Բայց,– ավելացրի,– նույնն արել են մահմեդականները, մորմոններն ու Ջիմ Ջոնսի* ու Դեյվիդ Քորեշի** հետևորդները: Սա կարող է ցույց տալ, որ նրանք մոլեռանդներ էին, բայց ընդունենք՝ դա չի ապացուցում, որ այն, ինչին նրանք հավատում էին, ճիշտ էր:

---

* James Warren "Jim" Jones, Ջեյմս Ուորրեն «Ջիմ» Ջոնս (1931-1978) - ամերիկացի քարոզիչ, «Ազգերի տաճար» աղանդի հիմնադիր, որի հետևորդները 1978 թվականին զանգվածային ինքնասպանություն գործեցին:

** David Koresh, Դեյվիդ Քորեշ, իսկական անունը՝ Վերնոն Ուեյն Հոուել, (1959-1993) - «Դավթի ճյուղ» աղանդի առաջնորդը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Սպասեք, մտածեք տարբերության մասին,– պնդեց Մորլենդը՝ պտըտվելով, որ ինձ նայի՝ երկու ոտքն ամուր հենելով գետնին: — Մահմեդականները գուցե պատրաստ են եղել մեռնել հանուն իրենց համոզմունքի, որ Ալլահը հայտնվել է Մուհամեդին, բայց այս հայտնությունը հանրայնորեն նկատելի չի եղել: Ուրեմն նրանք կարող էին սխալվել այդ հարցում: Կարող էին անկեղծ մտածել, որ դա ճիշտ է, բայց չեն կարող որպես փաստ իմանալ, քանի որ իրենք դրան ականատես չեն եղել: Բայց առաքյալները պատրաստ էին մեռնել նրա համար, ինչ տեսել էին սեփական աչքերով, դիպել սեփական ձեռքերով: Նրանք եզակի դիրքում էին ոչ միայն հավատալու, որ Հիսուս մեռելներից հարություն է առել, այլև հաստատ իմանալու առումով: Իսկ երբ 11 արժանահավատ մարդ ունես՝ առանց ծածուկ շարժառիթների, որոնք ոչինչ չեն շահելու, բայց կորցնելու շատ բան ունեն, որոնք համաձայն են, որ իրենց սեփական աչքերով են ինչ-որ բան տեսել, դե, որոշ չափով դժվար կլինի դա բացատրելը:

Ժպտացի, որովհետև առարկելով սատանայի փաստաբանի դեր էի խաղացել: Իրականում գիտեի, որ նա ճիշտ է: Փաստորեն այս վճռորոշ տարբերությունն առանցքային էր իմ սեփական հոգևոր ուղևորության մեջ: Ինձ այսպես էին ասել՝ մարդիկ կմեռնեն իրենց կրոնական համոզմունքների համար, եթե անկեղծ հավատում են, որ դրանք ճիշտ են, բայց մարդիկ չեն մեռնի իրենց կրոնական համոզմունքների համար, եթե գիտեն, որ իրենց համոզմունքները կեղծ են:

Մարդկանց մեծ մասը կարող է միայն հավատալ, որ իր համոզմունքը ճիշտ է, սակայն առաքյալներն առանց կասկածի նշույլի կարող էին իմանալ՝ Հիսուս հարություն առել է մեռելներից, թե ոչ: Նրանք պնդում էին, որ տեսել են նրան, խոսել հետն ու կերել միասին: Եթե լիովին վստահ չլինեին, թույլ չէին տա իրենց մահվան տանջանքների ենթարկել՝ հռչակելու համար, որ հարությունը տեղի է ունեցել[161]:

— Լավ, համոզիչ էր,– ասացի,– բայց ուրիշ ինչ օրինակներ ունեք:

ԱՊԱՑՈՒՅՑ N 2. **Անհավատների դարձը**

— Եվս մի անուղղակի ապացույց է,– շարունակեց Մորլենդը,– որ կային կարծրացած թերահավատներ, որ Հիսուսին չէին հավատում նախքան

նրա խաչելությունն ու վճռականորեն դեմ էին տրամադրված քրիստոնեությանը: Նրանք Հիսուսի մահից հետո դարձի եկան ու ընդունեցին քրիստոնեական հավատը: Սրա համար լուրջ պատճառ չկա՝ բացի այն, որ անձամբ տեսել էին հարություն առած Քրիստոսին:

— Հավանաբար Հակոբոսի՝ Հիսուսի եղբոր մասին եք խոսում, և տարսոնացի Սողոսի՝ ապագա Պողոս առաքյալի,– ասացի: — Բայց իսկապե՞ս որևէ հավաստի ապացույց ունեք, որ Հակոբոսը թերահավատ է եղել Հիսուսի վերաբերյալ:

— Այո՛, ունեմ,– ասաց: — Ավետարանները պատմում են, որ Հիսուսի ընտանիքը, Հակոբոսը ներառյալ, խայտառակված էին այն փաստից, ինչ նա պնդում էր, որ է: Նրանք չէին հավատում նրան, հակադարձում էին: Հին հուդայականության մեջ խիստ վարկաբեկող էր, որ ռաբբիի ընտանիքը նրան չի ընդունում: Հետևաբար ավետարանի հեղինակներն այս թերահավատությունը հորինելու շարժառիթ չէին ունենա, եթե դա ճիշտ չլիներ: Պատմիչ Հովսեփոնն ավելի ուշ գրում է, որ Հակոբոսը՝ Հիսուսի եղբայրը, որը Երուսաղեմի եկեղեցու առաջնորդն էր, քարկոծությունից մեռավ իր եղբոր հանդեպ հավատի պատճառով: Ինչո՞ւ փոխվեց Հակոբոսի կյանքը: Պողոսը պատմում է՝ հարություն առած Հիսուս հայտնվեց նրան: Այլ բացատրություն չկա:

Իսկապես, ոչինչ միտքս չեկավ:

— Իսկ Սողո՞սը,– հարցրի:

— Իբրև փարիսեցի, նա ատում էր այն ամենը, ինչ խաթարում էր հրեա ժողովրդի ավանդույթները: Նրա համար այս նոր հակաշարժումը, որը քրիստոնեություն էր կոչվում, կլիներ անհավատարմության բարձրակետը: Փաստորեն, նա վրդովմունքը դրսևորում էր մահապատժի ենթարկելով քրիստոնյաներին, երբ հնարավորություն էր ունենում,– պատասխանեց Մորլենդը: — Հանկարծ նա ոչ թե ուղղակի թեթև է նայում քրիստոնյաներին, այլ միանում է նրանց շարժմանը: Ինչպե՞ս պատահեց սա: Դե, բոլորը համաձայն են, որ Պողոսը գրել է Գաղատացիներին, ու նա ինքն էլ այդ նամակում պատմում է, որ 180 աստիճան շուռ է եկել ու դարձել քրիստոնեական հավատի գլխավոր կողմնակիցը: Սեփական գրչով ասում է, որ տեսել է հարություն առած Քրիստոսին ու լսել, որ Քրիստոս իրեն նշանակում է իր հետևորդներից մեկը:

Սպասում էի, որ Մորլենդն արտահայտի այս միտքը, որպեսզի կարողանամ նրան մարտահրավեր նետել քրիստոնեության քննադատ Մայքլ

թվայնացրել է 1915.info կայքը

Մարտինի առարկությամբ: Նա ասել է, որ եթե Պողոսի դարձը համարենք հարության ճշմարտացիության ապացույց, ապա Մուհամեդի դարձն իսլամին պիտի համարենք ապացույցը ճշմարտացիության, որ Հիսուս հարություն չի առել, քանի որ մահմեդականները ժխտում են հարությունը:

— Նա գլխավորապես ասում է, որ Պողոսի դարձի ու Մուհամեդի դարձի ապացուցողական արժեքները բացառում են միմյանց,– ասացի Մորլենդին: — Անկեղծ ասած, լավ միտք է թվում: Չե՞ք ընդունի, որ նա ճիշտ է:

Մորլենդը խայծը կուլ չտվեց:

— Հայացք գցենք Մուհամեդի դարձին,– ասաց՝ ձայնում վճռականություն: — Ոչ ոք ոչինչ չգիտի այդ մասին: Մուհամեդը պնդում է, որ մտել է քարանձավ ու Ալլահի հետ կրոնական փորձառություն ունեցել, որում Ալլահը Ղուրանը հայտնել է իրեն: Սա հաստատող վկա չկա: Մուհամեդը հանրայնորեն զարմանահրաշ նշաններ չի արել՝ որևէ բան հավաստելու համար: Իսկ որևէ մեկը Մուհամեդին հետևելիս կարող էր հեշտ հետին շարժառիթներ ունենալ, որովհետև վաղ տարիներին իսլամը տարածվել է մեծ մասամբ պատերազմով: Մուհամեդի հետևորդները քաղաքական ազդեցություն ու իշխանություն էին ձեռք բերում գյուղերի վրա, որոնք նվաճում ու «դարձի էին բերում» իսլամի սրով: Հակադրե՛ք դա Հիսուսի վաղ հետևորդների պնդումներին՝ Պողոսինը ներառյալ: Նրանք պնդում էին, որ ականատես են եղել հանրային իրադարձությունների, որոնք ուրիշ մարդիկ ևս տեսել են: Սրանք բաներ էին, որոնք տեղի ունեցան նրանց մտքերից դուրս, ոչ թե ուղղակի նրանց մտքերում: Ավելին, երբ Պողոսը գրեց Բ Կորնթացիներին, ինչը ոչ ոք չի վիճարկում, որ նա է գրել, կորնթացիներին հիշեցրեց, որ հրաշքներ է գործել ավելի վաղ, երբ նրանց հետ էր: Նա, իհարկե, հիմար կլիներ, եթե աներ այս պնդումը, ու նրանք իմանային, որ հրաշքներ չի գործել:

— Եվ ո՞րն է Ձեր միտքը,– հարցրի:

— Հիշե՛ք,– ասաց նա,– դա ուղղակի պարզ փաստ չէ, որ Պողոսը փոխեց իր հայացքները: Ստիպված եք բացատրել, թե ինչպես է տեղի ունեցել համոզմունքների այս որոշակի փոփոխությունը, որը լիովին հակասում էր նրա դաստիարակությանը, ինչպես հանրային իրադարձության ժամանակ տեսավ հարություն առած Քրիստոսին, որին ուրիշները ականատես եղան, թեև չհասկացան դա, ու թե ինչպես հրաշքներ գործեց՝ հիմնավորելով առաքյալի իր հավակնությունը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Լավ, լավ,– ասացի: — Ձեր միտքը հասկացա: Ընդունում եմ, լավն է: Շարժումով հասկացրի, որ անցնի հաջորդ ապացույցին:

ԱՊԱՑՈՒՅՑ N 3. Ավանդույթների և սոցիալական հաստատությունների փոփոխությունները

Անուղղակի ապացույցների հաջորդ օրինակը բացատրելու համար Մորլենդը պիտի հրեական մշակույթի մասին որոշ կարևոր տեղեկություններ տրամադրեր:

— Հիսուսի ժամանակ հրեաներին 700 տարի հալածել էին բաբելոնացիները, ասորեստանցիները, պարսիկները, այդժամ՝ հույներն ու հռոմեացիները,– բացատրեց Մորլենդը: — Շատ հրեաներ սփռվել էին ու գերիների պես ապրում էին օտար ազգերի մեջ:

Այսօր տեսնում ենք հրեաներին, մինչդեռ չենք տեսնում խեթերին, փերեզացիներին ու ամոնացիներին, ասորեստանցիներին, պարսիկներին, բաբելոնացիներին ու այլ ժողովուրդների, որոնք այդ ժամանակ ապրում էին: Ինչո՞ւ: Որովհետև այս ժողովուրդներին այլ ժողովուրդները գերեվարեցին, ամուսնանալով միախառնվեցին ու կորցրին իրենց ազգային ինքնությունը: Ինչո՞ւ սա չպատահեց հրեաների հետ: Որովհետև այն, ինչը հրեաներին հրեա էր դարձնում՝ սոցիալական կառույցները, անհավատալի կարևոր էին նրանց համար: Հրեաներն այս կառույցները փոխանցում էին իրենց երեխաներին, տոնում սինագոգի ժողովներում ամեն Շաբաթ, ամրացնում իրենց ծիսակատարություններով, որովհետև գիտեին՝ եթե չանեն դա, հրեա չի մնա: Նրանք կմիաձուլվեին այն մշակույթներին, որոնք գերեվարել էին նրանց: Եվ կա մի այլ պատճառ, թե ինչու էին այդ հասարակական ինստիտուտներն այդքան կարևոր. նրանք հավատում էին, որ այդ ինստիտուտներն Աստված է վստահել իրենց: Կարծում էին, թե այդ ինստիտուտները լքելը կնշանակեր մահից հետո իրենց հոգիները դժոխքի դատապարտվելու վտանգին ենթարկել:

Հիմա ցածրակարգ մի շրջանից մի ռաբբի է հայտնվում, անունը՝ Հիսուս: Նա ուսուցանում է երեք տարի, հավաքում ցածր ու միջին խավի հետևորդների, խնդիրների մեջ ընկնում իշխանությունների հետ ու խաչվում 30 հազար այլ հրեա տղամարդկանց հետ, որոնք այս ժամանակաշրջանում մահապատժի են ենթարկվում:

թվայնացրել է 1915.info կայքը

Բայց նրա խաչվելուց հինգ շաբաթ անց մոտ 10 հազար հրեա է հետևում նրան ու պնդում, որ նա նոր կրոն նախաձեռնողն է: Ու հասկացեք սա. նրանք պատրաստ են հրաժարվել կամ փոխել բոլոր հինգ հասարակական հաստատությունները, որոնք, ինչպես մանկությունից նրանց սովորեցրել էին, կարևոր են թե՛ հասարակայնորեն, թե՛ աստվածաբանորեն:

— Ուրեմն եզրահանգումն այն է, որ ինչ-որ մեծ բան էր կատարվում,– ասացի:

Մորլենդը բացականչեց.

— Շատ մեծ բան էր կատարվում:

Հրեական կյանքի հեղափոխումը

Մորլենդին հրավիրեցի անցնել այս հինգ հասարակական կառույցներով ու բացատրել, թե ինչպես են Հիսուսի հետևորդները փոխել դրանք կամ հրաժարվել դրանցից:

— Առաջին,– ասաց նա,– Աբրահամի կամ Մովսեսի ժամանակից ի վեր նրանց սովորեցրել էին, որ ամեն տարի պիտի կենդանի զոհաբերեն իրենց մեղքերը քավելու համար: Աստված նրանց մեղքերը փոխանցում էր այդ կենդանուն, ու նրանց մեղքերը ներվում էին, որպեսզի նրանք իր առջև արդարանային: Բայց հանկարծ այս նազարեթցի հյուսնի մահից հետո այս հրեաներն այլևս զոհ չեն մատուցում:

Երկրորդ, հրեաները շեշտում էին հնազանդվելն օրենքներին, որ Աստված վստահել էր նրանց Մովսեսի միջոցով: Նրանց տեսանկյունից սա էր նրանց առանձնացնում հեթանոս ազգերից: Այնինչ Հիսուսի մահից կարճ ժամանակ անց հրեաները սկսել էին ասել, որ չես կարող իրենց համայնքի իրական անդամ համարվել՝ ուղղակի Մովսեսի օրենքները պահելով:

Երրորդ, հրեաները բծախնդրորեն պահում էին Շաբաթը՝ ուրիշ ոչինչ չանելով՝ բացի ամեն շաբաթ օրվա կրոնական աստվածապաշտությունից: Ահա թե ինչպես էին արժանանում Աստծո առջև արդարացման, երաշխավորում իրենց ընտանիքի փրկությունն ու արդարացվում ազգի մոտ: Բայց այս 1500 տարվա ավանդույթը նազարեթցի հյուսնի մահից հետո կտրուկ փոխվում է: Այս քրիստոնյաներն Աստծուն պաշտում են կիրակի օրը. ինչո՞ւ: Որովհետև այդ ժամանակ Հիսուս մեռելներից հարություն առավ:

թվայնացրել է 1915.info կայքը

Չորրորդ, նրանք հավատում էին մոնոթեիզմի՝ միայն մեկ Աստծու: Մինչդեռ քրիստոնյաները միաստվածության տեսակ են ուսուցանում, ասում, որ Հայրը, Որդին ու Սուրբ Հոգին մեկ Աստված են: Սա արմատականորեն տարբեր է նրանից, ինչին հավատում էին հրեաները: Նրանք հերետիկոսության գագաթնակետը կհամարեին ասելը, որ որևէ մեկը կարող է միաժամանակ Աստված ու մարդ լինել: Այնինչ հրեաները սկսում են Հիսուսին իբրև Աստծո պաշտել քրիստոնեական կրոնի առաջին տասնամյակի ընթացքում:

Եվ հինգերորդ, այս քրիստոնյաները Մեսիային պատկերում էին իբրև մեկի, որը տառապեց ու մեռավ աշխարհի մեղքերի համար, այնինչ հրեաներին սովորեցրել էին հավատալ, որ Մեսիան լինելու է քաղաքական առաջնորդ, որը կոչնչացնի հռոմեական զորքերը»:

Այս համատեքստը հիմնելով՝ Մորլենդը հռետորական ջախջախիչ հարված հասցրեց՝ ինձ ծակելով իր ուշադիր ու աներեր հայացքով:

— Լի՛,– ասաց,– ինչպե՞ս է հնարավոր բացատրել թե ինչու կարճ ժամանակահատվածում ոչ թե ուղղակի մի հրեա, այլ առնվազն 10 հազար հրեայից բաղկացած մի ամբողջ համայնք պատրաստ էր հրաժարվել այս հինգ հիմնական սովորույթներից, որոնք այդքան դարեր նրանց ծառայել էին հասարակայնորեն ու աստվածաբանորեն: Իմ բացատրությունը պարզ է. նրանք տեսել էին, թե ինչպես է Հիսուս մեռելներից հարություն առնում:

Թեև Մորլենդի միտքը ծայրաստիճան տպավորիչ էր, ես խնդիր տեսա. մարդիկ այսօր դա կհասկանա՞ն: Ասացի, որ 20-րդ դարի ամերիկացին կդժվարանա գնահատել այս վերափոխման արմատական բնույթը:

— Այս օրերին մարդիկ հավատի մեջ փոփոխական են,– ասացի: — Հետ ու առաջ են ցատկում քրիստոնեության ու Նյու Էյջի համոզմունքների միջև: Զբաղվում են բուդդայականությամբ, խառնում են, համապատասխանեցնում ու ստեղծում իրենց սեփական հոգևորությունը: Ձեր նշած փոփոխություններն անելը մեծ բան չի թվա նրանց:

Մորլենդը գլխով արեց: Հավանաբար այս առարկությունը նախկինում լսել էր:

— Այդպիսի անձին կհարցնեմ. «Ո՞րն է քո ամենանվիրական համոզմունքը: Որ ծնողներդ լավ մարդի՞կ էին: Որ սպանությունն անբարո՞ է: Մտածի՛ր, թե որքան արմատական պիտի լինի ինչ-որ բան, որպեսզի քեզ

թվայնացրել է 1915.info կայքը

ստիպի փոխել կամ հրաժարվել այն համոզմունքից, որը շատ թանկ է քեզ համար: Հիմա սկսում ենք մոտենալ: Մտապահեք, որ սա մարդկանց մի ամբողջ համայնք է, որը հրաժարվում է նվիրական համոզմունքներից, որոնք փոխանցվել են դարեր շարունակ ու, նրանք հավատում էին, անձամբ Աստծուց էին: Նրանք դա անում էին, չնայած վտանգի էին ենթարկում իրենց սեփական բարօրությունը, նաև հավատում էին, որ վտանգի են ենթարկում իրենց հոգիների դատապարտումը դժոխքի, եթե սխալվեին: Ավելին, նրանք սա չէին անում, որովհետև ավելի լավ գաղափարների էին բախվել: Նրանք շատ գոհ էին հին ավանդույթներից: Դրանցից հրաժարվեցին, որովհետև տեսել էին հրաշքներ, որ չէին կարողանում բացատրել, ու որոնք հարկադրեցին աշխարհին այլ կերպ տեսնել:

— Մենք արևմտյան անհատներ ենք, որոնց դուր է գալիս տեխնոլոգիական ու սոցիոլոգիական փոփոխությունը,– նկատեցի ես: — Ավանդույթները մեզ համար մեծ նշանակություն չունեն:

— Ընդունում եմ,– պատասխանեց Մորլենդը: — Բայց այն մարդիկ իսկապես արժևորում էին ավանդույթը: Նրանք ապրում էին մի ժամանակաշրջանում, երբ մի բանը որքան ավելի հին էր, այնքան ավելի լավ էր: Փաստորեն նրանց համար որքան գաղափարը ծագումով ավելի հետ էր գնում, այնքան ավելի հավանականությամբ էր ճշմարիտ: Այնպես որ նոր գաղափարներ առաջարկելը հակառակն էր նրա, ինչպիսին մենք այսօր ենք: Հավատացեք ինձ,– եզրակացրեց նա,– հրեական հասարակական կառույցների այս փոփոխությունները պարզապես մանր կարգավորումներ չէին, որ անփույթ արվեցին: Դրանք վիթխարի էին: Սա հասարակական երկրաշարժ էր: Երկրաշարժն առանց պատճառի չի լինում:

ԱՊԱՑՈՒՅՑ N 4. Հաղորդություն և մկրտություն

Մորլենդը ցույց տվեց հաղորդության ու մկրտության առաջացումը վաղ եկեղեցում, կրկին որպես անուղղակի ապացույց, որ հարությունը ճշմարիտ է: Բայց ես որոշ կասկածներ ունեի:

— Բնական չէ՞, որ կրոնները սեփական ծեսեր ու սովորույթներ կստեղծեին,– հարցրի: — Բոլոր կրոններն ունեն դրանք: Ուրեմն ինչպե՞ս է դա հարության մասին որևէ բան ապացուցում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Այո, բայց մի պահ հաղորդության մասին մի բան քննենք,– պատասխանեց նա: — Տարօրինակ է, որ Հիսուսի այս վաղ հետևորդները չէին հավաքվել գովելու համար նրա ուսուցումները կամ նրա հրաշալիությունը: Նրանք կանոնավոր հավաքվում էին տոնական ճաշի՝ մի պատճառով՝ հիշելու, որ Հիսուսին հրապարակավ սպանել են սարսափազդու և նվաստացուցիչ եղանակով:

Այս մասին ժամանակակից լեզվով մտածեք. եթե մի խումբ մարդիկ սիրեին Ջոն Ֆ. Քենեդուն, կարող էին կանոնավոր հանդիպել՝ հիշելու համար նրա կոնֆլիկտը Ռուսաստանի հետ, քաղաքացիական իրավունքների խրախուսումն ու խարիզմատիկ անհատականությունը: Բայց նրանք չեն տոնելու այն փաստը, որ Լի Հարվի Օսվալդը սպանեց նրան: Դա համանման է նրան, ինչ անում էին վաղ քրիստոնյաները: Ինչպե՞ս եք բացատրում դա: Ես այսպես եմ բացատրում. նրանք հասկացան, որ Հիսուսի սպանությունն անհրաժեշտ քայլ էր դեպի շատ ավելի մեծ հաղթանակ: Նրա սպանությունը վերջին խոսքը չէր. վերջին խոսքն այն էր, որ մեզ բոլորիս համար նվաճեց մահը՝ հարություն առնելով մեռելներից: Նրա մահապատիժը տոնում էին, որովհետև համոզված էին, որ գերեզմանից ողջ են տեսել:

— Իսկ մկրտությո՞ւնը,– հարցրի:

— Վաղ եկեղեցին մկրտության տեսակը՝ պրոզելիտ մկրտություն անունով, ընդօրինակեց իր հրեական դաստիարակությունից: Երբ հեթանոսներն ուզում էին Մովսեսի օրենքները վերցնել, հրեաներն այդ հեթանոսներին մկրտում էին Իսրայելի Աստծո հեղինակությամբ: Բայց Նոր Կտակարանում մարդիկ մկրտվում էին Հայր Աստծո, Որդի Աստծո և Սուրբ Հոգի Աստծո անունով, ինչը նշանակում էր, որ նրանք Հիսուսին բարձրացրել էին Աստծո լիարժեք կարգավիճակի: Բայց, բացի դրանից, մկրտությունը Հիսուսի մահվան տոնումն էր, ճիշտ ինչպես հաղորդությունը: Ջրի տակ սուզվելով՝ տոնում ես նրա մահը, իսկ ջրից դուրս գալով՝ փաստը, որ Հիսուս հարություն առավ նոր կյանքի համար:

Ես ընդհատեցի՝ ասելով.

— Ենթադրում եք, որ այս հաղորդությունն ուղղակի չէր ընդօրինակվել, այսպես կոչված, առեղծվածային կրոններից:

— Եվ լուրջ պատճառներով,– պատասխանեց Մորլենդը: — Առաջին, չկա ծանրակշիռ ապացույց, որ որևէ առեղծվածային կրոն հավատում էր

թվայնացրել է 1915.info կայքը

աստվածների մահվանն ու հարությանը մինչև Նոր Կտակարանի ժամանակաշրջանը: Այնպես որ եթե կար որևէ փոխառություն, ապա փոխառել են քրիստոնեությունից: Երկրորդ, մկրտության սովորույթը եկել է հրեական սովորություններից, իսկ հրեաները դեմ էին թույլ տալուն, որ հեթանոսական կամ հունական գաղափարներն ազդեն իրենց պաշտամունքի վրա: Եվ երրորդ, այս երկու խորհուրդը կարելի է վերագրել ամենավաղ քրիստոնեական համայնքին, չափազանց վաղ, որպեսզի որևէ այլ կրոնի ազդեցություն սողոսկեր Հիսուսի մահվան մասին իրենց պատկերացումներ:

ԱՊԱՑՈՒՅՑ N 5. Եկեղեցու առաջացումը

Մորլենդը նախաբանեց այս վերջին կետը՝ ասելով.

— Երբ խոշոր մշակութային փոփոխություն է տեղի ունենում, պատմաբանները միշտ փնտրում են իրադարձություններ, որոնք կարող են բացատրել այն:

— Այո, տրամաբանական է,– ասացի:

— Լավ, այդ դեպքում մտածենք քրիստոնեական եկեղեցու սկզբի մասին: Կասկած չկա, որ այն սկսվեց Հիսուսի մահից կարճ ժամանակ անց ու այնքան արագ տարածվեց, որ գուցե քսան տարում հասավ Կեսարի պալատ, Հռոմ: Ավելին, այս շարժումը հաղթանակ տարավ մրցակից գաղափարների հանդեպ ու, ի վերջո, հեղեղեց ամբողջ Հռոմեական կայսրությունը:

Ուրեմն, եթե մարսեցի լինեիք, որը վերևից նայում է առաջին դարին, կկարծեիք՝ քրիստոնեությունը կգոյատևի, թե՞ Հռոմեական կայսրությունը: Հավանաբար փող չէիք դնի մի խումբ թափթփուկների վրա, որոնց գլխավոր ուղերձն այն էր, որ հեռավոր գյուղից մի հյուսն մահվան դեմ հաղթանակ է տարել: Այնինչ նա այնքան հաջողակ էր, որ այսօր մեր երեխաներին Պետրոս ու Պողոս ենք անվանում, իսկ շներին՝ Կեսար ու Ներոն: Ինձ դուր է գալիս, թե ինչպես է Չ. Ֆ. Դ. Մոուլը՝ Նոր Կտակարանի գիտնականը Քեմբրիջում, արտահայտել դա. «Եթե նազարեթցիների գոյություն ստանալը՝ երևույթ, որն անհերքելի վկայում է Նոր Կտակարանը, մեծ պատրոռվածք է բացում պատմության մեջ, հարության չափի ու ձևի անցք, ի՞նչ է առաջարկում աշխարհիկ պատմաբանը դա կանգնեցնելու համար»[162]:

թվայնացրել է 1915.info կայքը

Թեև սա Մորլենդի ամենուժեղ միտքը չէր, քանի որ այլ կրոնական շարժումներ նույնպես հայտնվել ու տարածվել են, անուղղակի ապացույցները չեն հիմնվում միայն մեկ փաստի ամրության վրա: Ավելի շուտ մի քանի փաստի հավաքվող կշիռն է, որ միասին իջեցնում է եզրակացության նժարը: Մորլենդի համար եզրակացությունը պարզ է:

— Տե՛ս,– ասաց,– եթե ինչ-որ մեկն ուզում է քննել այս հանգամանական ապացույցն ու վճիռ կայացնել, որ Հիսուս մեռելներից հարություն չի առել, արդար է: Բայց պիտի այլընտրանքային բացատրություն առաջարկի, որը ճշմարտանման է բոլոր այս հինգ փաստերի համար: Հիշեք, որ կասկած չկա, որ այս փաստերը ճիշտ են, խնդիրը դրանք բացատրելն է: Ես հարությունից ավելի լավ բացատրություն երբեք չեմ տեսել:

Մտքումս հանգամանական փաստերի ձայներիզը հետ պտտեցի՝ աշակերտների պատրաստակամությունը՝ տառապել ու անգամ մեռնել իրենց ապրածի համար, Հակոբոսի ու Սողոսի պես թերահավատների հեղափոխված կյանքերը, արմատական փոփոխությունները կառույցներում, որ հրեաները փայփայել էին դարեր շարունակ, հաղորդության ու մկրտության հանկարծակի հայտնվելը և եկեղեցու ապշեցուցիչ երևան գալն ու աճը: Բոլոր հինգ անվիճելի փաստերը հաշվի առնելով՝ ստիպված էի համաձայնել Մորլենդի հետ, որ հարությունը և միայն հարությունն է այս բոլորը տրամաբանական դարձնում: Ոչ մի այլ բացատրություն սրան մոտ չէ: Եվ սրանք դեռ անուղղակի ապացույցներն են: Երբ ավելացրի Հիսուսի դատարկ գերեզմանի զորեղ ապացույցն ու հետհարության նրա հայտնությունների համոզիչ վկայությունը, գործը եզրափակված թվաց:

Դա նաև սըր Լիոնել Լակհուի գնահատականն էր, փայլուն ու բանիմաց փաստաբանի, որի հոյակապ՝ 245 հաջորդական սպանությունների արդարացումները նրան հասցրին Գինեսի համաշխարհային ռեկորդների գիրք, իբրև աշխարհի ամենահաջողակ իրավաբանի[163]: Էլիզաբեթ թագուհուց երկու անգամ ասպետ ձեռնադրվելով՝ նախկին դատավորն ու դիվանագետը հարության մասին պատմական փաստերը ենթարկեց իր սեփական, խստագույն վերլուծության՝ հայտարարելուց մի քանի տարի առաջ. «Վստահաբար ասում եմ, որ Հիսուս Քրիստոսի հարության օգտին ապացույցներն այնքան ճնշող են, որ հարկադրում են ընդունել այն ապացուցման եղանակով, որը որևէ կասկածի տեղ չի թողնում»[164]:

Բայց սպասեք: Ավելին կա:

թվայնացրել է 1915.info կայքը

Վերջին քայլն անելիս

Մեր հարցազրույցն ավարտելով՝ Մորլենդն ու ես կատակում էինք ֆուտբոլի մասին: Ձայնագրիչն անջատեցի ու սկսեցի հավաքել գրառումներս: Փոքր-ինչ շտապում էի, որ հասնեմ Չիկագո՝ հետդարձի թռիչքիս, բայց նա մի բան ասաց, և ես ստիպված դադար առա:

— Ապացույցների մի կարգ էլ կա, որի մասին չեք հարցրել,– նկատեց: Մտքումս մեր հարցազրույցն էի քննում:

— Հանձնվում եմ,– ասացի: — Ի՞նչ է:

— Դա մշտական հանդիպումն է հարություն առած Քրիստոսի հետ: Դա կատարվում է ամբողջ աշխարհով մեկ, ամեն մշակույթի մեջ, ամեն տեսակի, ծագման ու անհատականություններով մարդկանց հետ՝ լավ կրթված, թե ոչ, հարո՞ւստ, թե աղքատ, մտածո՞ղ, թե զգացող, տղամա՞րդ, թե կին: Նրանք բոլորը կվկայեն, Հիսուս Քրիստոս փոխել է նրանց ավելի, քան որևէ այլ բան իրենց կյանքում,– Մորլենդն ընդգծելու համար առաջ հակվեց: — Սա ինձ տրամադրում է եզրափակիչ, հաստատող ապացույցը, որ Հիսուսի ուղերձը կարող է բացել դուռը դեպի ուղիղ հանդիպում հարություն առած Քրիստոսի հետ:

— Ենթադրում եմ՝ այդպիսի հանդիպում ունեցել եք,– ասացի,– պատմե՛ք:

— 1968-ին քիմիայի մասնագիտացումով ցինիկ ուսանող էի Միսուրիի համալսարանում, երբ բախվեցի փաստին, որ եթե Հիսուս Քրիստոսի պնդումները քննեմ քննադատաբար, բայց բաց մտքով, փաստերն ավելի քան բավարար են, որ հավատամ դրանց:

Ու հավատի քայլ արեցի նույն ուղղությամբ, ինչ ապացույցներն էին ցույց տալիս՝ Հիսուսին ընդունելով իբրև ինձ ներողի ու առաջնորդի, սկսեցի հարաբերվել նրա՝ հարություն առած Քրիստոսի հետ, շատ իրական ու մշտական ձևով: Երեք տասնամյակում աղոթքների հարյուրավոր պատասխաններ եմ ստացել, կատարվել են բաներ, որոնք ուղղակի բնական բացատրություններ չունեն, ապրել եմ փոխված կյանք, վեր այն ամենից, ինչ կարող էի պատկերացնել:

— Բայց,– առարկեցի,– մարդիկ փոփոխություններ են ապրում այլ կրոններում, որոնց դրույթները հակասում են քրիստոնեությանը: Վտանգավոր չէ՞ որոշումը սուբյեկտիվ ապրումների վրա հիմնելը,– հարցրի:

թվայնացրել է 1915.info կայքը

— Երկու բան պարզաբանեմ,– ասաց նա: — Առաջին, ես չեմ ասում. «Ուղղակի վստահի՛ր փորձառությանդ»: Ասում եմ. «Միտքդ հանգի՛ստ օգտագործիր ու կշռի՛ր փաստերը, հետո թո՛ւյլ տուր, որ փորձը դառնա հաստատող ապացույց»: Երկրորդ, եթե այն, ինչ այս ապացույցները ցույց են տալիս, ճիշտ է, այսինքն՝ եթե այս բոլոր ապացույցներն իսկապես Հիսուսի հարությունն են մատնացույց անում, ապացույցները փորձառական ստուգման ենթարկվելու կարիք ունեն:

— Սահմանե՛ք դա,– ասացի:

— Փորձառական ստուգումն է. «Նա դեռ ողջ է, ու ես կարող եմ ստուգել՝ հարաբերվելով նրա հետ»: Եթե ատենակալների կազմում լինեիք ու լսեիք բավարար ապացույցներ՝ ինչ-որ մեկի մեղավորության մասին, տրամաբանական չէր լինի կանգ առնել նրան դատապարտելու վերջին քայլին: Իսկ ընդունել Հիսուսի հարության օգտին փաստերն ու չկատարել վերջին՝ փորձառական ստուգման քայլը, կնշանակի չհասնել այնտեղ, ուր, վերջի-վերջո, փաստերը տանում են:

— Ուրեմն,– ասացի,– եթե փաստերը համոզիչ այդ ուղղությունն են ցույց տալիս, ողջամիտ ու տրամաբանական է հետևել փորձառական տիրույթում:

Նա հավանությամբ գլխով արեց:

— Հենց այդ է, որ կա,– ասաց: — Դա ապացույցների վերջնական հաստատումն է: Իրականում կասեմ՝ այս փաստերը ճչում են, որ իրենց փորձառական ստուգման ենթարկեն:

Քննարկումներ

Հարցեր խորհրդածելու կամ խմբային պարապմունքի համար

1. Աշակերտները բացառիկ դիրքում էին և կամենում էին հաստատ իմանալ, թե Հիսուս մեռելներից վերադարձե՞լ է: Նրանք պատրաստ էին տառապել ու անգամ մեռնել հանուն իրենց համոզմունքի, որ այդպես է: Կարո՞ղ եք հիշել պատմական մեկին, որ գիտակցաբար ու պատրաստակամ մեռել է հանուն ստի: Ի՞նչ աստիճանի վստահության կարիք կունենաք, որպեսզի պատրաստ լինեք կյանք տալ

թվայնացրել է 1915.info կայքը

հանուն համոզմունքի: Որքա՞ն մանրամասն կքննեք որևէ հարց, եթե կյանքը դրա վրա հիմնելիս լինեք:

2. Որո՞նք են ձեր ամենանվիրական համոզմունքները: Ի՞նչ կպահանջվի, որ հրաժարվեք դրանցից կամ արմատականորեն վերանայեք այդ թանկ կարծիքները, հատկապես եթե իսկապես հավատացած եք, որ ձեր հոգին կվտանգվի, եթե սխալվեք: Պատասխանը ինչպե՞ս է կապվում այն պատմական փաստի հետ, որ Հիսուսի խաչելությունից կարճ ժամանակ անց հազարավոր հրեաներ հանկարծ հրաժարվեցին հինգ հիմնական հասարակական ու կրոնական կառույցներից:
3. Բացի Հիսուսի հարությունից կարո՞ղ եք այլ բացատրություն մտածել, որը միաժամանակ կբացատրեր Մորլենդի քննարկած ապացույցների բոլոր հինգ կարգերը: Ի՞նչ եք կարծում, նրա նման մեկն ինչպե՞ս կարձագանքեր ձեր վարկածին:
4. Մորլենդն իր հարցազրույցն ավարտեց՝ խոսելով փորձառական ստուգման մասին: Ի՞նչ պիտի կատարվեր, նախքան անձամբ կհամաձայնեիք անել այդ քայլը:

թվայնացրել է 1915.info կայքը

Եզրակացություն. Պատմության դատավճիռը

Ինչ են հաստատում փաստերը, և ինչ է դա նշանակում այսօր

1981-ի նոյեմբերյան մի կեսօր փակվեցի ննջարանումս ու ժամեր անցկացրի՝ հետ պտտելով հոգևոր ուղևորությունը, որը կատարել էի 21 ամսվա ընթացքում:

Փորձառությանս մասին գրելու մտադրություն չէի ունեցել, փաստորեն տարիներ անց էի որոշելու հետազոտել ու ընդլայնել սկզբնական հետաքննությունս՝ ճանապարհորդելով երկրով, որպեսզի գիտնականներից հարցազրույց վերցնեմ այս գրքի համար: Այդուհանդերձ, 1980-ի հունվարի 20-ից մինչև 1981-ի նոյեմբերի 8-ը բազմակողմանի ու ոգևորող էր:

Ուսումնասիրել էի պատմություն, մաղել հնագիտությունը, հարցեր տվել ու պատասխանները վերլուծել բաց մտքով, որպիսին միայն կարող էի դրսևորել: Հիմա հասել էի վճռորոշ զանգվածին: Փաստերը կարծես հստակ էին: Միակ հարցը, որ մնացել էր, այն էր, թե դրա հետ ինչ էի անելու:

Դեղին բլոկնոտը դուրս բերելով՝ սկսեցի թվարկել հարցերը, որոնք ուղղել էի, երբ սկսել էի հետաքննությունս, նաև բանալի փաստերը, որ բացահայտել էի: Նույն կերպ կարող եմ ամփոփել մեր պարզածի էությունը՝ այս գրքի մասնագետների միջոցով փաստերի մեր սեփական քննումով:

• Հիսուսի կենսագրականներին կարելի՞ է վստահել

Մի ժամանակ կարծում էի, թե ավետարաններն ուղղակի կրոնական քարոզչություն են՝ անհուսորեն աղավաղված գերակտիվ երևակայությամբ ու ավետարանական մոլեռանդությամբ: Բայց Կրեյգ Բլոմբերգը՝ այս թեմայով երկրի առաջատար հեղինակություններից մեկը, համոզիչ գործ կառուցեց այն մասին, որ դրանք արտացոլում են ականատեսների ուղղակի ու անուղղակի վկայություններն ու ճշգրտության ակնհայտ նշաններ են կրում: Այս կենսագրություններն այնքան հին են, որ անհնար է դրանք բացատրել ուղղակի իբրև առասպելական հորինվածք: Փաստորեն Հիսուսի հրաշքների, հարության ու աստվածության հանդեպ հիմնարար հավատը սկիզբ է առնում քրիստոնեական շարժման հենց արշալույսին:

թվայնացրել է 1915.info կայքը

• Հիսուսի կենսագրությունները քննության դիմանո՞ւմ են

Բլոմբերգը պնդեց, որ ավետարանների հեղինակները մտադիր են եղել պահպանել վստահելի պատմություն, կարողացել են անել դա, եղել են ազնիվ ու պատրաստ ներառել դժվար բացատրելի նյութ, թույլ չեն տվել, որ կողմնակալությունն անտեղի գունազարդի իրենց հաղորդածը: Ավետարաններում էական փաստերի ներդաշնակությունը, որոշ չհամընկնող մանրամասների հետ համադրումը պատմական վստահելիություն են հաղորդում վկայություններին: Ավելին, վաղ եկեղեցին չէր կարող արմատներ գցել ու ծաղկել հենց այնտեղ՝ Երուսաղեմում, եթե ուսուցանելիս լիներ Հիսուսի մասին փաստեր, որ հենց նրա ժամանակակիցները կարող էին մերկացնել իբրև կեղծ կամ չափազանցված: Կարճ ասած, ավետարանները կարողացան բռնել բոլոր ութ փաստական քննությունները:

• Հիսուսի կենսագրությունները հավաստիորեն պահպանվե՞լ են մեզ համար

Համաշխարհային մակարդակի գիտնական Բրյուս Մեցգերն ասաց, որ այլ հին փաստաթղթերի համեմատ Նոր Կտակարանի ձեռագրերի քանակն աննախադեպ է, և կարելի է դրանք թվագրել բնագրերին չափազանց մոտ: Տեքստային տարբերակները, որոնք հիմնականում մանր ուղղագրական ու քերականական տարբերություններ ունեն, քրիստոնեական որևէ խոշոր վարդապետություն կասկածի տակ չեն դնում: Վաղ եկեղեցու գործածած չափանիշները, որոնք թույլ են տալիս վճռել, թե որ գրքերն է պետք հեղինակավոր համարել, երաշխավորել են, որ ունենանք Հիսուսի մասին լավագույն արձանագրությունները:

• Հիսուսի օգտին նրա կենսագրություններից դուրս վստահելի փաստեր կա՞ն

«Հիսուսի օգտին մենք ավելի լավ պատմական փաստաթղթավորում ունենք, քան որևէ այլ հին կրոնի հիմնադրի»,– ասաց Էդվին Յամաուչին: Աստվածաշնչից դուրս աղբյուրները հաստատում են, որ շատերն էին հավատում, որ Հիսուս բժշկություններ արեց ու Մեսիան էր, խաչվեց, ու, չնայած ամոթալի մահվանը, մարդիկ վստահ էին, որ նա դեռ ողջ է, և նրան պաշտում էին իբրև Աստծո: Մի փորձագետ 39 հին աղբյուր էր փաստագրել, որոնք Հիսուսի կյանքի, ուսուցումների, խաչելության ու

հարության վերաբերյալ ավելի քան 100 փաստ են հաստատում: Յոթ աշխարհիկ աղբյուր և մի քանի վաղ դավանանք վերաբերում են Հիսուսի աստվածությանը, ուսմունք, որը «հստակ կա վաղ եկեղեցում»՝ ըստ գիտնական Գարի Հաբերմասի:

• Հնագիտությունը հաստատո՞ւմ է Հիսուսի կենսագրությունները, թե՞ հակասում է դրանց

Հնագետ Ջոն Մակրեյն ասաց, որ կասկած չկա, որ հնագիտական գտածոները բարձրացրել են Նոր Կտակարանի արժանահավատությունը: Որևէ հայտնագործություն երբեք չի հերքել աստվածաշնչյան հիշատակումները: Ավելին, հնագիտությունը հաստատել է, որ Ղուկասը, որը գրել է Նոր Կտակարանի մոտ մեկ քառորդը, առանձնապես ուշադիր պատմաբան էր: Մի մասնագետ եզրակացրեց. «Եթե Ղուկասն այդքան ջանասիրաբար ճշգրիտ էր իր պատմական հաղորդումներում (մանր դետալների), ի՞նչ տրամաբանական հիմքով կարող ենք ենթադրել, որ նա դյուրահավատ էր կամ ոչ ճշգրիտ՝ այն հարցերը հաղորդելիս, որոնք շատ ավելի կարևոր էին ոչ միայն նրա, այլև ուրիշների համար»: Օրինակ՝ Հիսուսի հարությունը:

• Պատմության Հիսուս նույնն է, ինչ հավատի՞ Հիսուս

Գրեգորի Բոյդն ասաց, որ լայնորեն լուսաբանվող «Հիսուսի սեմինարը», որը կասկածում է, որ Հիսուս ասել է իրեն վերագրվողի մեծ մասը, կազմված է «չափից դուրս փոքրաթիվ, արմատական գիտնականներից, որոնք Նոր Կտակարանի մտածողության հեռու-հեռու ձախ թևում են»: Սեմինարը սկզբում բացառում էր հրաշքների հնարավորությունը, կիրառում վիճելի չափանիշներ, որոշ մասնակիցներ խիստ կասկածելի, առասպելախառն փաստաթղթեր էին առաջ մղում: Ավելին, գաղափարը, որ Հիսուսի մասին պատմություններն ի հայտ են եկել մեռնող ու հարություն առնող աստվածների մասին առասպելներից, քննադատության չի դիմանում: Բոյդն ասաց. «Փաստերը, որ Հիսուս նա էր, որի մասին ասում էին առաքյալները, ուղղակի լուսային տարիներով հեռու է իմ պատճառներից՝ կարծելու, թե «Հիսուսի սեմինարի» ձախ թևի գիտնականները ճիշտ են»: Ընդհանուր առմամբ, հավատի Հիսուս նույնն է, ինչ պատմության Հիսուս:

թվայնացրել է 1915.info կայքը

• Հիսուս իսկապես համոզված էր, որ Ինքն Աստծո Որդին է
Վերադառնալով ամենավաղ ավանդույթներին, որոնք, անկասկած, ապահով են առասպելական մշակումներից, Բեն Ուիդրինգտոն 3-րդը ցույց տվեց, որ Հիսուս գերազանց ու գերբնական ինքնագիտակցություն ունի: Փաստերի վրա հիմնվելով՝ ասաց. «Հիսուս կարծում էր, որ Աստծո Որդի՞ն է՝ Աստծո Օծյալը: Պատասխանն է՝ այո՛: Նա ինքն իրեն տեսնո՞ւմ էր իբրև Մարդու Որդի: Պատասխանն է՝ այո՛: Ինքն իրեն տեսնո՞ւմ էր իբրև վերջին Մեսիա: Այո՛, նա այդպես էր պատկերացնում իրեն: Նա կարծո՞ւմ էր, թե Աստծուց նվազ որևէ մեկը կարող է փրկել աշխարհը: Ո՛չ, ինձ չի թվում, թե կարծում էր:

• Հիսուս խելագա՞ր էր, երբ պնդում էր, որ Աստծո Որդին է
Նշանավոր հոգեբան Գարի Քոլինզն ասաց, որ Հիսուս որևէ անտեղի հույզ չի ցուցաբերել, իրականության հետ կապը պահել է, ունեցել փայլուն միտք, մարդու բնույթի ապշեցուցիչ ներըմբռնում, խորը և տևական հարաբերություններ: «Ես ուղղակի նշաններ չեմ տեսնում, որ Հիսուս տառապեր որևէ հայտնի հոգեկան հիվանդությամբ»,– եզրակացրեց նա: Ի լրումն՝ Հիսուս Աստված լինելու իր հավակնությունն ամրացրեց բժշկության զարմանահրաշ գործերով, բնության վրա իշխանության ապշեցուցիչ դրսևորումներով, անօրինակ ուսուցումով, մարդկանց աստվածային ըմբռնումով ու իր հարությամբ, որը նրա ինքնության վերջնական վավերացումն էր:

• Հիսուս իրագործո՞ւմ է Աստծո հատկանիշները
Մարմնավորումը՝ Աստծո փոխակերպումը մարդու, անսահմանի վերածումը սահմանափակի, լարում է մեր երևակայությունը, սակայն նշանավոր աստվածաբան Դ. Ա. Քարսոնը նշեց, որ շատ են փաստերը, որ Հիսուս աստվածության ապացույցներ է դրսևորել: Փիլիպեցիներին 2-ի վրա հիմնվելով՝ շատ աստվածաբաններ կարծում են, թե Հիսուս կամավոր ունայնացրել է իրեն այս աստվածային հատկանիշների անկախ գործադրումից, երբ մարդկության փրկության իր առաքելությանն էր հետամուտ լինում: Այդուհանդերձ, Նոր Կտակարանը հաստատում է, որ Հիսուս վերջին հաշվով ուներ աստվածության բոլոր որակավորումները՝ ներառյալ ամենագիտությունը, ամենագոյությունը, ամենակարողությունը, մշտնջենականությունը և անփոփոխությունը:

• Հիսուս և միայն Հիսո՞ւս էր համապատասխանում Մեսիայի ինքնությանը

Հիսուսի ծնունդից հարյուրավոր տարիներ առաջ մարգարեները կանխատեսել էին Մեսիայի գալուստը՝ Օծյալի, որը կփրկեր Աստծո ժողովրդին: Փաստորեն, Հին Կտակարանի տասնյակ մարգարեություններն առաջացրել են մատնահետք, որին միայն իսկական Մեսիան կարող էր համապատասխանել: Սա Իսրայելին տվել էր ինքնակոչներին բացառելու ու իսկական Մեսիայի հավատարմագրերը վավերացնելու եղանակ: Աստղաբաշխական հաշվարկին հակառակ՝ հավանականությունը մեկն էր տրիլիոն, տրիլիոն, տրիլիոն, տրիլիոն, տրիլիոն, տրիլիոն, տրիլիոն, տրիլիոն, տրիլիոն, տրիլիոն, տրիլիոն, տրիլիոնի մեջ, որ Հիսուս և միայն Հիսուս ամբողջ պատմության մեջ համապատասխանեց այս մարգարեական մատնահետքին: Սա վստահության անհավատալի աստիճանի հաստատում է Հիսուսի ինքնությունը:

• Հիսուսի մահը կեղծիք էր, Հարությունը՝ խաբեությո՞ւն

Վերլուծելով բժշկական ու պատմական փաստերը՝ դոկտոր Ալեքսանդր Մեթերելը եզրակացրեց, որ Հիսուս չէր կարող ողջ մնալ խաչելության սարսափելի տանջանքներից հետո, էլ չասած նրա թոքերն ու սիրտը խոցած խոշոր վերքի մասին: Ենթադրությունը, որ նա ինչ-որ կերպ խաչի վրա ուշագնաց է եղել ու մեռած ձևացել, զուրկ է որևէ փաստական հիմքից: Հռոմեացի դահիճներն անողորմաբար արդյունավետ էին՝ իմանալով, որ իրենք մահվան կարժանանային, եթե իրենց զոհը խաչից ողջ իջներ: Անգամ եթե Հիսուս որևէ կերպ ողջ պրծներ խոշտանգումներից, նրա զարհուրելի դրությունը երբեք համաշխարհային շարժում չէր ոգեշնչի՝ հիմնվելով այն նախադրյալի վրա, որ նա փառավոր հաղթանակ է տարել մահվան հանդեպ:

• Հիսուսի մարմինն իսկապե՞ս Նրա գերեզմանում չէր

Ուիլյամ Լեյն Կրեյգն ապշեցուցիչ փաստեր ներկայացրեց, որ Զատկի մնայուն խորհրդանիշը՝ Հիսուսի դատարկ գերեզմանը, պատմական իրողություն է: Դատարկ գերեզմանի մասին հաղորդվում ու ենթադրվում է խիստ վաղ աղբյուրներում՝ Մարկոսի ավետարանում ու Ա Կորնթացիներին 15 հավատամքում, որոնք իրադարձությանն այնքան մոտ են թվագրվում,

թվայնացրել է 1915.info կայքը

որ անհնար է, որ առասպելի արդյունք լինեն: Փաստը, որ ավետարանները հաղորդում են, որ կանայք գերեզմանը դատարկ են գտել, բարձրացնում է պատմության վավերականությունը: Հիսուսի գերեզմանի տեղը հայտնի էր թե՛ քրիստոնյաներին, թե՛ հրեաներին, ու թերահավատները կարող էին ստուգել այն: Փաստորեն ոչ ոք, ոչ էլ անգամ հռոմեական իշխանությունները կամ հրեա առաջնորդները, երբեք չեն պնդել, որ Հիսուսի մարմինը դեռ գերեզմանում է: Ստիպված են եղել հնարել այն անհեթեթ պատմությունը, թե աշակերտները, չնայած շարժառիթ կամ հնարավորություն չունեին, գողացել են մարմինը. վարկած, որին անգամ ամենաթերահավատ քննադատն այսօր չի հավատում:

• Մահից հետո խաչի վրա Հիսուսին ողջ տեսել են

Հիսուսի՝ հետհարության հայտնությունների ապացույցներն աստիճանաբար չեն առաջացել, այլ տարիների ընթացքում, մինչ առասպելներն աղավաղում էին նրա կյանքի հուշերը: Ավելի շուտ, ասաց հարության մասնագետ Գարի Հաբերմասը, հարությունը «սկզբից ևեթ վաղ եկեղեցու կենտրոնական հռչակումն էր»: Ա Կորնթացիներին 15-ի հին հավատամքը հիշատակում է անհատների ու խմբերի, որոնք հանդիպել են հարություն առած Քրիստոսին, Պողոսն անգամ մարտահրավեր է նետել առաջին դարի թերահավատներին, որպեսզի անձամբ խոսեն այդ վկաների հետ, որպեսզի որոշեն հարցի ճշմարտացիությունը: «Գործք առաքելոցը» ցանված է Հիսուսի հարության ծայրահեղ վաղ հաստատումներով, ավետարանները մանրամասն նկարագրում են բազմաթիվ հանդիպումները: Բրիտանացի աստվածաբան Մայքլ Գրինը եզրակացրել է. «Հիսուսի հայտնությունները նույնքան լավ են վավերացված, որքան ամեն բան հնում... Չի կարող ողջամիտ կասկած լինել, որ դրանք եղել են»:

• Կա՞ն սատարող փաստեր, որոնք Հարությունն են մատնացույց անում

Ջ. Փ. Մորլենդի հանգամանական ապացույցները վերջնական արձանագրում ավելացրին հարության օգտին: Նախ՝ աշակերտները եզակի դիրքում էին, որպեսզի իմանային՝ հարությունը եղե՞լ է, ու նրանք պատրաստ էին տառապանք ու զրկանք կրել՝ հռչակելով, որ դա ճշմարիտ է: Երկրորդ, բացի հարությունից՝ կարգին պատճառ չկա, թե ինչու Պողոսի ու Հակոբոսի

թվայնացրել է 1915.info կայքը

պես թերահավատները դարձի կգային ու կմեռնեին հանուն իրենց հավատի: Ոչ ոք գիտակցաբար ու պատրաստակամ չի մեռնում հանուն ստի: Երրորդ՝ խաչելությունից շաբաթներ անց հազարավոր հրեաներ սկսեցին հրաժարվել կարևոր սոցիալական սովորույթներից, որոնք դարեր շարունակ վճռական հասարակական ու կրոնական նշանակություն էին ունեցել: Նրանք հավատում էին, որ ենթարկվում են դատապարտվելու վտանգին, եթե սխալվեն: Չորրորդ՝ հաղորդության ու մկրտության վաղ խորհուրդները հաստատեցին Հիսուսի հարությունն ու աստվածությունը: Եվ հինգերորդ՝ եկեղեցու զարմանահրաշ առաջացումը՝ հռոմեական բիրտ հալածանքի տակ, «պատմության մեջ մեծ պատռվածք է բացում՝ հարության չափի ու ձևի անցք», ասել է Չ. Ֆ. Դ. Մոուլը:

Մյուլլերի մարտահրավերի ձախողումը

Ընդունում եմ՝ Հիսուսի՝ Աստծո որդին լինելու փաստերի քանակն ու որակը թակարդը գցեցին ինձ: Այդ կիրակի կեսօրին սենյակումս նստած, ապշած գլուխս էի թափահարում: Տեսել էի, թե ինչպես են մեղադրյալներին սայլակով մահվան խուց ուղեկցում՝ պակաս համոզիչ ապացույցներով: Հավաքվող փաստերն ու տվյալներն ակնհայտորեն ցույց էին տալիս մի եզրակացություն, որին հանգելն ամենևին հարմար չէր:

Անկեղծ ասած, ուզել էի հավատալ, որ Հիսուսի աստվածացումն առասպելական մշակման արդյունք է, որում բարի մղումներով, բայց ապակողմնորոշված մարդիկ իմաստունին դանդաղ վերածել են Աստծո առասպելական Որդու: Դա ապահով ու հանգստացնող էր թվում, ի վերջո, առաջին դարի թափառական, աշխարհի կործանումն ազդարարող քարոզիչը ոչինչ չէր կարող պահանջել ինձնից: Բայց սկսեցի հետաքննել՝ կարծելով, որ այս առասպելական մշակումը բնազդորեն ակնհայտ է, և դրանից դուրս եկա՝ համոզված, որ այն լիովին անհիմն է:

Ինձ վերջնական որոշման հանգեցրեց Ա. Ն. Շերվին Ուայթի մեկնաբանությունը՝ մեծ դասական պատմաբանն Օքսֆորդի համալսարանից, որին Ուիլյամ Լեյն Կրեյգը հիշատակեց մեր հարցազրույցի ժամանակ: Շերվին Ուայթը գիտեր տեմպը, որով առասպելն ավելացվում էր հին աշխարհում: Նրա եզրակացությունն էր՝ անգամ երկու լիարժեք սերունդը բավարար

թվայնացրել է 1915.info կայքը

ժամանակ չէր, որ առասպելը զարգանա ու ջնջի պատմական ճշմարտության ամուր հիմքը[165]:

Հիմա քննենք Հիսուսի դեպքը: Պատմականորեն ասած, նրա դատարկ գերեզմանի լուրը, ականատեսների վկայությունները՝ հարությունից հետո նրա հայտնությունների մասին, և համոզմունքը, որ նա իսկապես Աստծո միակ Որդին է, փաստորեն առաջացան անմիջապես:

Ա Կորնթացիներին 15 հավատամքը, հաստատելով Հիսուսի մահը մեր մեղքերի համար ու թվարկելով հետհարության հայտնություններն անվանված վկաներին, ձևակերպվել է խաչելությունից ամիսներ անց: Դատարկ գերեզմանի՝ Մարկոսի պատմությունը վերցվել է նյութից, որը սկիզբ է առնում բուն իրադարձությունից մի քանի տարի անց:

Ավետարանները, որոնք վկայում են Հիսուսի ուսուցումների, հրաշքների ու հարության մասին, շրջանառվում էին Հիսուսի ժամանակակիցների կյանքի ընթացքում, որոնք միայն չափից դուրս ուրախ կլինեին հստակություն մտցնել, եթե գունազարդում կամ կեղծիք լիներ: Ամենապարզունակ քրիստոնեական օրհներգերը հաստատում են Հիսուսի աստվածային բնույթը:

Բլոմբերգն այս կերպ ամփոփեց դա. «Նրա մահից հետո երկու տարվա ընթացքում Հիսուսի՝ նշանակալի թվով հետևորդներ քավության վարդապետություն են ձևակերպել: Կարծես վստահ էին, որ նա մարմնով հարություն է առել մեռելներից: Հիսուսին կապակցում են Աստծո հետ ու հավատում, որ Հին Կտակարանում բոլոր այս համոզմունքների համար հիմնավորում են գտել»[166]:

Ուիլյամ Լեյն Կրեյգը եզրակացրեց. «Ավետարանների իրադարձությունների վերաբերյալ առասպելի նշանակալի քանակ ավելացնելու համար անհրաժեշտ ժամանակամիջոցը մեզ կբերեր Ք. հ. երկրորդ դար՝ *փաստորեն հենց այն ժամանակ, երբ ծնվել են առասպելական պարականոն ավետարանները*: Սրանք են այն առասպելական պատմությունները, որ քննադատները փնտրում են»[167]:

Ժամանակն ուղղակի ամենևին բավարար չէր, որպեսզի առասպելն ամբողջովին աղավաղի Հիսուսի մասին պատմական արձանագրությունները, հատկապես ականատեսների մեջ, որոնք դեռ անձամբ ճանաչում էին նրան: Գերմանացի աստվածաբան Յուլիուս Մյուլլերը 1844-ին առաջարկեց պատմության որևէ հատվածում գտնել նույնքան արագ զարգացած

թվայնացրել է 1915.info կայքը

առասպելի օրինակ: Նրա ժամանակակիցների և այժմյան գիտնականների պատասխանը զրնգուն լռությունն է[168]:

1981-ի նոյեմբերի 8-ին գիտակցեցի, որ նաև Հիսուսին իմ ամենամեծ առարկությունն է լռեցվել պատմական փաստերով: Ծիծաղեցի՝ հասկանալով, թե ինչպես է իրավիճակը շուռ եկել:

Հիսուսի օգտին փաստերի այս ծանրության տակ՝ իմ հետաքննության ընթացքում ձեռք բերած համոզիչ փաստերի լույսի ներքո եկա պարադոքսալ եզրակացության. պետք է շատ ավելի մեծ ջանք գործադրեմ աթեիստ մնալու համար, քան Նազարեթցի Հիսուսին հավատալու համար:

Եզրահանգումներ փաստերից

Հիշո՞ւմ եք Ջեյմս Դիքսոնի պատմությունը այս գրքի ներածության մեջ: Ազդեցիկ փաստերը նրա մեղքն էին ցույց տալիս՝ Չիկագոյի ոստիկանության սերժանտին կրակելու գործով: Նա նույնիսկ ընդունեց, որ արել է դա:

Բայց երբ ավելի ամբողջական հետաքննություն իրականացվեց, հանկարծ փոփոխություն տեղի ունեցավ. սցենարը, որը կատարելապես համապատասխանում էր փաստերին, այն էր, որ սերժանտը ծուղակն էր գցել Դիքսոնին, որը կրակոցի մեջ մեղավոր չէր: Դիքսոնի՛ազատ արձակեցին, ու սպան հայտնվեց մեղադրյալի աթոռին: Մինչ եզրափակում ենք Քրիստոսի օգտին մեր հետաքննությունը, արժի այդ պատմությունից երկու մեծ դաս վերանայել:

- **Առաջին. փաստերի հավաքածուն ամբողջակա՞ն է եղել**

Այո՛, եղել է: Ես ընտրեցի փորձագետների, որոնք կարող էին արտահայտել իրենց դիրքորոշումն ու այն պաշտպանել պատմական փաստերով, որոնք կարող էի ստուգել խաչաձև հարցերի միջոցով: Ինձ միայն նրանց կարծիքները չէին հետաքրքրում, ես փաստեր էի ուզում: Նրանց մարտահրավեր նետեցի աթեիստների ու ազատական պրոֆեսորների ընթացիկ տեսություններով: Նրանց կրթությունը, դիպլոմները, փորձն ու բնավորությունը հաշվի առնելով՝ այս գիտնականներն ավելի քան որակավորված էին Հիսուսի վերաբերյալ վստահելի պատմական տվյալներ ներկայացնելու համար:

թվայնացրել է 1915.info կայքը

• Երկրորդ. ո՞ր բացատրությունն է լավագույն կերպով համապատասխանում փաստերի ամբողջությանը

Մինչև 1981-ի նոյեմբերի 8-ը առասպելի իմ վարկածը, որին համառորեն կառչել էի տարիներ շարունակ, լիովին կազմալուծվել էր: Ավելին, գերբնականի հանդեպ իմ լրագրողական թերահավատությունը հալվել էր հափշտակող պատմական փաստերի լույսի ներքո, որ Հիսուսի հարությունն իրական, պատմական իրադարձություն էր: Փաստորեն, միտքս չկարողացավ մի եզակի բացատրություն ծնել, որը պատմական փաստերին կհամապատասխաներ նույնքան լավ, որքան եզրակացությունը, որ Հիսուս նա էր, ով պնդում էր, որ էր՝ Աստծո միակ և անկրկնելի Որդին:

Աթեիզմը, որը երկար ժամանակ ընդունել էի, փլվեց պատմական ճշմարտության ծանրության տակ: Ապշեցուցիչ և արմատական ավարտ էր, հաստատ ոչ այն, ինչ կանխատեսել էի այս հետաքննությունը սկսելիս: Բայց, իմ կարծիքով, փաստերի հարկադրած որոշում էր:

Այս ամենն ինձ հանգեցրեց «Հետո՞ ինչ» հարցին: Եթե սա ճիշտ է, ի՞նչ տարբերություն: Մի քանի ակնհայտ հետևանք կար:

- Եթե Հիսուս Աստծո Որդին է, նրա ուսուցումներն ավելին են, քան ուղղակի իմաստուն ուսուցչի լավ մտքերը, դրանք աստվածային ներըմբռնումներ են, որոնց վրա կարող եմ վստահ կառուցել իմ կյանքը:
- Եթե Հիսուս սահմանում է բարոյականության չափանիշը, կարող եմ աներեր հիմք ունենալ իմ ընտրությունների ու որոշումների համար, ոչ թե դրանք հիմնել նպատակահարմարության ու եսակենտրոնության սորուն ավազի վրա:
- Եթե Հիսուս իսկապես հարություն առավ մեռելներից, նա դեռ ողջ է այսօր ու կարող է ինձ հետ հանդիպել:
- Եթե Հիսուս հաղթեց մահին, ուրեմն կարող է ինձ համար նույնպես բաց անել հավիտենական կյանքի դուռը:
- Եթե Հիսուս աստվածային զորություն ունի, կարող է ինձ ուղղորդել, օգնել ու վերափոխել, քանի դեռ հետևում եմ նրան:
- Եթե Հիսուս անձամբ ապրել է կորստի ու տառապանքի ցավը, կարող է մխիթարել ու քաջալերել ինձ՝ փոթորիկների ժամանակ, որոնց մասին Ինքն է զգուշացրել, որ անխուսափելի են մեղքով ապականված աշխարհում:
- Եթե Հիսուս սիրում է ինձ, ինչպես ասում է, իմ ամենամեծ օգուտը Նրա սրտում է: Նշանակում է, որ ես կորցնելու բան չունեմ, բայց կա-

թվայնացրել է 1915.info կայքը

որող եմ ձեռք բերել ամեն ինչ՝ հանձնվելով Նրան ու Նրա նպատակներին:

- Եթե Հիսուս նա է, ով պնդում է, որ է (ու հիշեք, որ ոչ մի այլ խոշոր կրոնի առաջնորդ երբեք չի ձևացրել, թե Աստված է), որպես իմ Արարիչ, իրավամբ, արժանի է իմ հավատարմությանը, հնազանդությանն ու երկրպագությանը:

Հիշում եմ, որ այս եզրահանգումները գրի առա նոթատետրում ու հենվեցի աթոռիս: Հասել էի գրեթե երկու տարի տևած իմ ուղևորության գագաթնակետին: Վերջապես եկել էր ամենահրատապ՝ «Հիմա ինչ» հարցին պատասխանելու ժամանակը:

Հավատի բանաձևը

Անձնական հետաքննությունից հետո, որն ավելի քան 600 օր ու անհամար ժամեր տևեց, իմ սեփական դատավճիռը հստակ հօգուտ Քրիստոսի էր: Բայց գրասեղանիս մոտ նստած հասկացա, որ պետք է ավելին, քան մտավոր որոշումը: Ուզում էի անել փորձառական քայլը, որը Ջ. Փ. Մորլենդը նկարագրել էր վերջին հարցազրույցում:

Դա իրագործելու եղանակ փնտրելով՝ վերցրի Աստվածաշունչն ու բացեցի Հովհաննես 1:12-ը՝ համար, որը հանդիպել էի հետաքննության ընթացքում. «Իսկ իրեն ընդունողներին և իրեն հավատացողներին նա իշխանություն տվեց Աստծո որդիներ լինելու»:

Այդ համարի գլխավոր բայերը մաթեմատիկական ճշգրտությամբ շարադրում են, թե ինչ է պետք՝ Հիսուսի աստվածության մտավոր ընդունումից այն կողմ անցնելու և նրա հետ մշտական հարաբերության մեջ մտնելու համար՝ որդեգրվելով Աստծո ընտանիքին. հավատալ+ստանալ+դառնալ:

1. Հավատա՛

Լինելով լրագրող ու ստանալով իրավաբանական կրթություն, սովորել էի արձագանքել փաստերին, ուր էլ տանեին դրանք: Տվյալները համոզիչ

թվայնացրել է 1915.info կայքը

ցույց էին տալիս, որ Հիսուս Աստծո Որդին է, որը մեռավ իմ փոխարեն՝ վճարելով վարձը, որին արժանի էի իմ գործած մեղքերի համար:

Դրանք շատ էին: Ինձ կխնայեմ, չեմ դնի անհարմար դրության մեջ ու չեմ մտնի մանրամասների մեջ, բայց ճշմարտությունն այն է, որ վարել էի անվայել, հարբեցողի, եսակենտրոն ու անբարո կյանք: Աշխատանքում գործընկերներիս թիկունքից հարվածել էի՝ անձնական առավելություն ձեռք բերելու համար, լուրեր փնտրելիս պարբերաբար խախտել էի իրավական ու էթիկական նորմերը: Անձնական կյանքում կնոջս ու երեխաներիս զոհաբերում էի հանուն իմ հաջողության: Ստախոս էի, խաբեբա ու մոլորեցնող:

Սիրտս սեղմվել էր այն աստիճանի, որ քարի պես կարծր էր դարձել ուրիշ մեկի հանդեպ: Հիմնական խթանն անձնական հաճույքն էր, ու, որքան ավելի ագահաբար էի ձգտում դրան, այնքան ավելի թռուցիկ ու ինքնակործան էր դառնում կյանքս:

Աստվածաշնչում կարդացի, որ այդ մեղքերն ինձ բաժանում են Աստծուց, որը սուրբ է ու բարոյապես անաղարտ, և դա ճշմարիտ հնչեց: Իհարկե, Աստված, որի գոյությունը տարիներ շարունակ ժխտել էի, ծայրաստիճան հեռավոր էր թվում, ու ակնհայտ դարձավ, որ այդ անդունդը կամրջելու համար Հիսուսի խաչն էր պետք ինձ: Պետրոս առաքյալն ասաց. «Ինքը՝ Քրիստոս, մեկ անգամ չարչարվեց մեր մեղքերի համար, արդարը՝ մեղավորներիս համար, որպեսզի մեզ մոտեցնի Աստծուն»: (1 Պետրոս 3:18)

Հիմա հավատում էի այս ամենին: Պատմության փաստերն ու իմ սեփական փորձն այնքան ծանրակշիռ էին, որ չէի կարող անտեսել:

2. Ընդունի՛ր

Հետաքննության ընթացքում իմ ուսումնասիրած բոլոր մյուս կրոնական համակարգերը հիմնված էին «արա՛» ծրագրի վրա: Այլ խոսքով՝ պետք էր, որ մարդիկ ինչ-որ բան անեին: Օրինակ՝ օգտագործեին տիբեթական աղոթքի թմբուկ, ողորմություն անեին, գնային ուխտագնացությունների, վերամարմնավորվեին, ազատվեին անցյալի զանցանքների կարմայից, վերափոխեին բնավորությունը՝ փորձելով որևէ կերպ վաստակել իրենց վերադարձը դեպի Աստված: Չնայած իրենց լավագույն ջանքերին՝ բազմաթիվ անկեղծ մարդիկ ուղղակի տեղ չէին հասնի:

Քրիստոնեությունը եզակի է: Այն հիմնված է «արված է» ծրագրի վրա: Հիսուս խաչի վրա մեզ համար արել է այն, ինչ չենք կարող ինքներս անել՝ վճարել է մահվան վարձը, որին մենք ենք արժանի մեր ընդվզման ու հանցանքների համար, որպեսզի հաշտվենք Աստծո հետ:

Ես ստիպված չէի պայքարել ու փորձել անել անհնարը՝ ինձ արժանի դարձնելու համար: Աստվածաշունչը կրկին ու կրկին ասում է, որ Հիսուս ներում ու հավիտենական կյանք է առաջարկում որպես ձրի պարգև, որը հնարավոր չէ վաստակել (տե՛ս Հռոմեացիներին 6:23, Եփեսացիներին 2:8-9; Տիտոսին 3:5): Այն կոչվում է շնորհ, հրաշալի շնորհ, չվաստակած շնորհ: Այն հասանելի է նրան, ով ընդունում է դա ապաշխարության անկեղծ աղոթքով: Նույնիսկ ինձ:

Այո՛, ստիպված էի հավատի քայլ անել, ինչպես անում ենք ամեն որոշման մեջ, որ կայացնում ենք: Բայց ահա վճռական տարբերությունը. ես այլևս չէի փորձում հոսանքով վեր լողալ, փաստերի ուժեղ հոսքին հակառակ, այլ ընտրում էի նույն ուղղությունը, որով հոսում էր փաստերի հեղեղը: Դա խելամիտ էր, ողջախոհ, տրամաբանական: Ավելին, մի ներքին ու անբացատրելի եղանակով դա նաև այն էր, ինչ, զգում էի: Աստծո Հոգին էր ինձ մղում անել դա:

Եվ 1981-ի նոյեմբերի 8-ին Աստծո հետ խոսեցի սրտալի ու անմշակ աղոթքով՝ ընդունելով իմ հանցանքներն ու երես թեքելով դրանցից, Հիսուսի միջոցով ստանալով ներման շնորհն ու հավիտենական կյանքը: Այդ պահից սկսած, ասացի, որ ուզում եմ Նրա օգնությամբ հետևել Նրան ու Նրա ճանապարհներին:

Չկային կայծակներ, լսելի պատասխաններ, ծակծկոցի զգացողություն: Գիտեմ, որ որոշ մարդիկ այսպիսի պահերի հույզերի պոռթկում են ունենում, բայց իմ դեպքում այլ բան եղավ, ինչը նույնքան ոգևորող էր:

3. Դարձի՛ր

Այդ քայլն անելուց հետո Հովհաննես 1:12-ից իմացա, որ անցել էի նոր փորձառության շեմը: Ես ուրիշ մի բան էի դարձել, Աստծո զավակ՝ հավիտենապես որդեգրված նրա ընտանիքին՝ պատմականորեն, հարություն առած՝ Հիսուսի միջոցով: Պողոս առաքյալն ասել է. «Որևէ մեկը, որ միա-

թվայնացրել է 1915.info կայքը

ցած է Քրիստոսին, նոր արարած է, նա այլևս այն չէ, ինչ նախապես էր, որովհետև նա ամբողջությամբ նորոգվեց» (Բ Կորնթ. 5:17):

Եվ, իհարկե, ժամանակի ընթացքում, մինչ ես ջանում էի հետևել Հիսուսի ուսուցումներին ու բացվել նրա վերափոխող զորության առջև, իմ առաջնահերթությունները, արժեքներն ու բնավորությունն աստիճանաբար փոխվում էին (և շարունակում են փոխվել): Ես ավելի ու ավելի շատ եմ ուզում, որ Հիսուսի շարժառիթներն ու տեսանկյունն իմ սեփականը դառնան: Վերաշարադրեմ Մարտին Լյութեր Քինգ Կրտսերին՝ գուցե դեռ այն մարդը չեմ, որ պիտի լինեի, կամ այն մարդը, որը Քրիստոսի օգնությամբ մի օր կլինեմ, բայց փառք Աստծո, այլևս այն մարդը չեմ, որն էի:

Գուցե դա հանելուկային է թվում, չգիտեմ: Ոչ շատ վաղուց ինձ այդպես կթվար: Բայց հիմա ինձ ու ինձ շրջապատողների համար շատ իրական է: Փաստորեն, իմ կյանքում փոփոխությունն այնքան արմատական էր, որ Հիսուսի հետևորդ դառնալուցս մի քանի ամիս անց մեր հնգամյա դուստրը՝ Էլիսոնը, մոտեցել է կնոջս ու ասել. «Մայրիկ, ուզում եմ, որ Աստված ինձ համար անի այն, ինչ արել է հայրիկի համար»:

Ահա մի փոքրիկ աղջիկ, որը ճանաչում էր հորը, որն անվայելուչ էր, զայրացած, խոսելիս կոպիտ էր ու չափից դուրս շատ էր բացակայում: Երբեք հարցազրույց չէր վերցրել գիտնականից, չէր վերլուծել տվյալները, բայց մոտիկից էր տեսել ազդեցությունը, որը Հիսուս կարող է ունենալ մի անձի կյանքի վրա: Նա, փաստորեն, ասում էր. «Եթե Աստված սա է անում մարդ արարածի հետ, ես էլ եմ ուզում»:

Այսքան տարի անց հետ եմ նայում ու հստակ տեսնում եմ, որ իմ ամբողջ կյանքի առանցքային իրադարձությունը կատարվեց այն օրը, երբ Հիսուսի գործում անձամբ որոշում կայացրի Նրա օգտին:

Կայացրո՛ւ քո սեփական դատավճիռը

Հիմա դառնանք քեզ: Սկզբում քեզ քաջալերեցի, որ այս գրքի փաստերին մոտենաս որպես հնարավորին չափ արդար ու անաչառ ատենակալ, եզրակացություններ անես ու հիմնվես փաստերի կշռի վրա: Ի վերջո, դատավճիռը քոնն է ու միայն քոնը: Քո փոխարեն ոչ ոք չի կարող քվեարկել:

թվայնացրել է 1915.info կայքը

Գուցե փորձագետ-փորձագետի հետևից կարդալով, փաստարկ-փաստարկի հետևից լսելով, տրամաբանությամբ ու առողջ դատողությամբ փաստերը ստուգելով ինձ պես համարել ես, որ Քրիստոսի օգտին գործը համոզիչ է:

Հովհաննես 1:12-ի դավանանքի մասն ամուր իր տեղում է, մնում է միայն Հիսուսի շնորհն ընդունել, ու դու կդառնաս Նրա որդին կամ դուստրը, կներգրավվես հոգևոր արկածին, որը կարող է ծաղկել կյանքիդ մնացյալ մասում և հավերժության մեջ: Հասել է քո փորձառական քայլի ժամանակը, ու ավելի վստահ չէի կարող քաջալերել քեզ, որ այդ քայլը խանդավառությամբ անես:

Մյուս կողմից՝ գուցե քեզ համար հարցերը դեռ մնում են: Գուցե չանդրադարձա առարկությանը, որը քո մտքում ամենակարևորն է: Արդարացի է: Ոչ մի գիրք չի կարող քննել բոլոր նրբերանգները: Բայց հավատացած եմ, որ այս էջերում հաղորդված տեղեկությունների քանակն առնվազն համոզած կլինի քեզ, որ խելամիտ է, փաստորեն, անգամ հրամայական, քո հետաքննությունը շարունակելը: Ճշտիր, թե ո՛ր փաստերը պիտի ամրապնդվեն, ու լրացուցիչ պատասխաններ ստացիր հարգված մասնագետներից: Եթե համարես, որ ավելի լավ սցենար ես գտել, որը փաստերն ավելի լավ է բացատրում, պատրաստ եղիր այն ենթարկել կոշտ քննության: Ինքդ ուսումնասիրիր Աստվածաշունչը (մի առաջարկ՝ The Journey-ն Աստվածաշնչի հատուկ հրատարակություն է՝ նախատեսված նրանց համար, ովքեր դեռ չեն հավատում, որ դա Աստծո խոսքն է)[169]:

Որոշի՛ր, որ դատավճիռ կկայացնես, երբ տեղեկությունների բավարար քանակ հավաքես և իմանաս, որ յուրաքանչյուր առանձին հարցի լիարժեք լուծումը երբեք չես ունենալու: Գուցե անգամ ուզես աղոթք շշնջալ Աստծուն, որը, դեռ վստահ չես, որ գոյություն ունի, գուցե Նրան խնդրես քեզ առաջնորդել դեպի Իր մասին ճշմարտությունը: Ու այդ ամենով անցնելիս՝ կունենաս իմ անկեղծ քաջալերանքը, քանի դեռ շարունակում ես հոգևոր փնտրտուքդ:

Միաժամանակ պարտավոր եմ կոչ անել, որ սա քո կյանքում առաջնային հարց դարձնես: Դրան անփութորեն կամ թեթևամտորեն մի՛ մոտեցիր, որովհետև քո եզրակացությունից շատ բան է կախված: Մայքլ Մերֆին ասել է. «Ոչ միայն ճշմարտության պնդումներն են վտանգված հետաքննության մեջ, այլև մենք ինքներս»[170]: Այլ խոսքով, եթե Քրիստոսի

թվայնացրել է 1915.info կայքը

գործով իմ եզրակացությունը ճիշտ է, քո ապագան ու հավիտենությունն են կախված նրանից, թե ինչպես կարծագանքես Քրիստոսին: Չէ՞ որ Հիսուս հռչակեց. «Եթե չհավատաք, որ ես եմ, պիտի մեռնեք ձեր մեղքերի մեջ» (Հովհաննես 8:24):

Սրանք սթափ բառեր են, որոնք գալիս են իսկական ու սիրող մտահոգությունից: Դրանք մեջբերում եմ՝ ընդգծելու համար այս հարցի կարևորությունն այն հույսով, որ դրանք կխթանեն ակտիվ ու մանրակրկիտ քննել Քրիստոսի գործը:

Բայց վերջում հիշի՛ր, որ որոշ տարբերակներ ուղղակի իրական չեն: Կուտակված փաստերն արդեն փակել են դրանք: Ք. Ս. Լուիսը՝ Քեմբրիջի համալսարանի փայլուն ու մի ժամանակ թերահավատ պրոֆեսորը, որին, ի վերջո, հաղթեցին Հիսուսի օգտին փաստերը, նկատել է.

Ես այստեղ փորձում եմ կանխել, որ որևէ մեկը չասի այն իսկապես հիմար բանը, որ մարդիկ ասում են Նրա մասին. «Ես պատրաստ եմ ընդունել, որ Հիսուս մեծ, բարոյական ուսուցիչ է, բայց չեմ ընդունում նրա՝ Աստված լինելու հավակնությունը»: Ահա մի բան, որը չպետք է ասենք: Մեծ, բարոյական ուսուցիչ լինել չէր կարող նա, ով ընդամենը մարդ էր ու ասել է այն տեսակի բաներ, ինչ՝ Հիսուս: Նա կլիներ կամ խելագար, կամ դժոխքի սատանա: Պիտի կատարես քո ընտրությունը: Կամ այս մարդը էր և է Աստծո Որդին, կամ խելագար էր, կամ ավելի վատ բան: Կարող եք նրան հիմարի տեղ դնել, կարող եք թքել նրա վրա ու նրան սպանել որպես դևի, կամ կարող եք ընկնել նրա ոտքերի առաջ ու նրան Տեր ու Աստված կոչել: Բայց մեծամիտ անհեթեթություն չինարենք նրա՝ մեծ մարդ-ուսուցիչ լինելու մասին: Նա մեզ այդ տարբերակը չի թողել: Մտադիր չի եղել թողնել[171]:

թվայնացրել է 1915.info կայքը

Հարցազրույց Լի Ստրոբելի հետ

Մոտենում էր «Քրիստոսի իսկության վարույթը» աշխատության 20-րդ տարին, ու բեսթսելլերների հեղինակ Մարկ Միթլբերգն իրավիճակը շուռ տվեց՝ Լի Ստրոբելից հարցազրույց վերցնելով գրքի ժառանգության, քննադատների խնդիրների ու այն մասին, թե ինչպես է փոխվել նրա անձնական կյանքը: Միթլբերգը, որը հեղինակել է «Հարցեր, որոնք, քրիստոնյաները հուսով են, ոչ ոք չի տա» և «Վստահ հավատ» գրքերը, 1987-ից Ստրոբելի մտերիմ գործակիցն է ծառայության մեջ:

Հ. - Որքա՞ն է քեզ զարմացրել «Քրիստոսի իսկության վարույթը» գրքի ազդեցությունը 1998-ին լույս տեսնելուց ի վեր: Վստահ եմ, որ երբեք չես կանխատեսել, որ գրեթե 10 միլիոն օրինակ կվաճառվի տարբեր ձևաչափերով կամ կթարգմանվի 20 լեզվով:

Պ. - Իսկապես ապշել էի: Մեծացել եմ որպես Չիկագո Քաբսի երկրպագու, ուստի Ռիգլի Ֆիլդի հետ կապված համանմանություն բերելը սրտովս է: Հաճախ հարվածողը մականով խփում է գնդակին, ու կենտրոնական ֆիլդերը բռնում է այն: Բայց երբեմն, երբ քամին շատ ճիշտ է փչում, գնդակը բարձրացնում է պատի վրայով: Հարվածողն ավելի ուժեղ չի խփել գնդակին, բայց հանգամանքներն այն վերածել են «տուն» վերադարձի: Այդպիսի զգացում ունեմ «Քրիստոսի իսկության վարույթը» գրքի հանդեպ: Գնդակի հետ կոնտակտի մեջ եմ մտել, այլ խոսքով ասած՝ հետազոտել եմ ու գրել գիրքն իմ իմացած լավագույն ձևով, բայց Աստված բարձրացրել է այն ու տարել հեռու, շատ ավելի հեռու, քան իմ ողորմելի ջանքերը կարող էին երբևէ հասցնել այն:

Հ. - Գիտեմ, որ որոշ ընտիր պատմություններ ունես մարդկանց մասին, որոնց վրա գիրքն ազդեցություն է թողել: Կա՞ն մի քանիսը, որ առանձնանում են քո մտքում:

Պ. - Խոնարհեցնող ու քաջալերող է եղել: Տարիների ընթացքում բազում էլնամակներ եմ ստացել, թվիթներ, նամակներ ու զանգեր մարդկանցից, որոնք այս գիրքը կարդալուց հետո սկսել են հավատալ Հիսուսին: Ոմանք, ի վերջո, ընդունվել են ճեմարաններ ու անցել հոգևոր ծառայության:

թվայնացրել է 1915.info կայքը

Ոմանք դարձել են հավատի ազդեցիկ պաշտպաններ, որովհետև սա եղել է առաջին գիրքը, որը նրանց հետաքրքրությունն է շարժել քրիստոնեական ապոլոգետիկայի հանդեպ:

Գրքի հրատարակումից կարճ ժամանակ անց նամակ ստացա մի աթեիստից, որը գնացել էր գրախանութ՝ աստղագիտական ամսագիր գնելու: Տեղավորվել էր մի նստարանի, որ աչքի անցկացնի այն, ու հասկացել էր, որ ինչ-որ բանի վրա է նստել. «Քրիստոսի իսկության վարույթը» գրքի: Նա թերթել էր այն ու ինքն իրեն ասել. «Նման բաների չեմ հավատում»: Հետո ասաց, որ ներքին ձայնի պես մի բան կար, որը նրան հուշեց, որ պիտի կարդա, ուստի գիրքը գնեց ու դարձավ Քրիստոսի հանդեպ հավատի: Ի դեպ, օրերս նրանից նամակ եմ ստացել. դեռ հետևում է Հիսուսին:

Վերջերս մի քրիստոնյա ինձ ասաց, որ «Քրիստոսի իսկության վարույթը» գրքի մի օրինակ է պատվիրել առցանց գրավաճառից: Երբ այն առաքել են տուն ու դուռը զանգել են, նրա հայրը, որը հոգևոր սկեպտիկ է, կարծել է, թե փաթեթն իր համար է, ու բացել է դուռը: Գիրքը տեսել է, մի կողմ դրել, սակայն վերնագիրը գրավել է: Ծայրեծայր կարդացել է ու, ի վերջո, սկսել է հավատալ Հիսուսին:

Կոլորադոյում մի աթեիստ համակարգչային ինժեներ կար, որը կարդացել էր գիրքը, որ հերքի այն: Ստուգել էր բոլոր ծանոթագրությունները, կարդացել հղումներն ու եզրակացրել, որ Քրիստոսի օգտին գործը համոզիչ է: Վստահությունը դրել էր Հիսուսի վրա ու հաջորդ կիրակի գնացել մի մեծ եկեղեցի: Ծառայության այդ կետում, երբ քարոզիչը բոլորին քաջալերել էր ողջունել միմյանց, նա շրջվել էր ու ձեռքը մեկնել ինձ: Ես վերջերս էի տեղափոխվել Կոլորադո ու այցելել էի եկեղեցի: Պատահաբար զբաղեցրել էի հենց նրա հետևի նստարանը: Երբ ինձ պատմեց այս պատմությունը, ապշել էի այդ համընկնումից: Այդ պահից ի վեր Դագն ու ես մոտ ընկերներ ենք:

Կարող եմ անվերջ շարունակել: Երբ հանրային ելույթ եմ ունենում, մարդիկ պատմություն պատմության հետևից են պատմում, թե Աստված ինչպես է գիրքն օգտագործել նրանց, նրանց հոր կամ ընկերոջ կյանքում: Շատ ոգեշնչող է: Սիրում եմ մտածել, որ նույնիսկ գիշերը, երբ քնած եմ, ինչ-որ մեկը Չինաստանում, Հնդկաստանում կամ Ինդոնեզիայում կարդում է գիրքն ու քննարկում քրիստոնեության օգտին գործը:

թվայնացրել է 1915.info կայքը

Հ. – Կար նաև Իվել Կնիվելը...

Պ. – Այո՛, թոկից փախած, մոտոցիկլիստ-ցատկորդն ու մշակութային կուռքը, որն ապրում էր վայրի ու ինքնահավան կյանքով: Մի օր նա լողափին էր ու հանկարծ զգաց, որ Աստված իրեն ասում է. «Ռոբերտ, ես քեզ փրկել եմ շատ ավելի հաճախ, քան երբևէ կիմանաս: Հիմա ուզում եմ, որ դեպի ինձ գաս իմ որդու՝ Հիսուսի միջոցով»: Նա ապշել էր: Զանգեց այն քրիստոնյաներին, որոնց ճանաչում էր, ու հարցրեց Հիսուսի մասին: Նրանք հանձնարարեցին կարդալ «Քրիստոսի իսկության վարույթը» գիրքը: Կարդաց ու ասաց, որ Աստված օգտագործեց այն՝ ամրացնելու համար իր նոր հավատը Հիսուսի հանդեպ:

Աստված արմատականորեն փոխեց նրա արժեքները, բնույթը, բարոյականությունը: Երբ նրան մկրտեցին, պատմեց իր պատմությունը, ու հարյուրավոր մարդիկ արձագանքեցին՝ Քրիստոսին ընդունելով ու տեղում մկրտվելով: Մենք ընկերներ դարձանք: Զանգում էր ինձ և պատմական ու աստվածաբանական հարցեր տալիս: Մահացավ մի քանի տարի անց: Նրա գերեզմանաքարին, իր խնդրանքով, փորագրված է *Հավատա՛ Հիսուսին:*

Հ. – Գիրքը լավ են ընդունել բազմաթիվ ընթերցողներ՝ տղամարդիկ, կանայք, նրանք, ովքեր կրոնավոր են, նաև թերահավատները, տարբեր ռասաների ու մշակույթների մարդիկ: Ինչպե՞ս են արձագանքել երիտասարդները:

Պ. – Սա հատկապես զարմանալի էր: Երբ գրքի համար հարցազրույց էի վերցնում մի գիտնականից...

Հ. – Ումի՞ց:

Պ. – Դե, չեմ ուզում ասել: Բայց մեր զրույցի մի դադարի ընթացքում, երբ ձայնագրիչի մեջ նոր երիզ էի տեղադրում, ասաց. «Գուցե ոչ ոք չկարդա գիրքդ»: Ցնցվեցի: Հարցրի. «Ինչո՞ւ»: Ասաց՝ հետմոդեռն մշակույթում ենք ապրում: Քրիստոնեության պատմական փաստերն այլևս ոչ մեկի չեն հետաքրքրում, հատկապես երիտասարդներին: Ընկճվեցի: Տուն վերադարձա ու Լեսլիին գանգատվեցի. «Ոչ ոք գիրքս չի կարդա»:

թվայնացրել է 1915.info կայքը

Հ. – Ուրեմն ինչ պատահեց:

Պ. – Երբ գիրքը լույս տեսավ, ապշեցինք. ամենամեծ արձագանքը ստացանք 16–24 տարեկաններից: Այս խումբը հաղորդում էր, որ գիրքը կարդալուց հետո է ընդունել Քրիստոսին: Պարզվում է՝ հավատի օգտին փաստերը շատ են հետաքրքրում նրանց: Փաստորեն դա մղեց, որ Ջեյն Վոգելի հետ գրեմ ուսանողների համար նախատեսված տարբերակ:

Հ. – Մեր ընկեր Քլիֆ Նեչտելն ասում է. «Հավատի եկող անձը նման է բազմաթիվ օղակներով շղթայի: Կա սկսող օղակը, մեջտեղինն ու վերջինը: Ինչ կասես ընթերցողներին, որոնց համար այս գիրքն ուղղակի նրանց հոգևոր ուղևորության սկիզբն է կամ ուղղակի ևս մի քայլ երկար ուղու վրա:

Պ. – Գիտեմ՝ հոգևոր փնտրտուքի մեջ լինելն ինչ է: Ոգևորող է, հուզիչ, բարդ, հիասթափեցնող, երբեմն շփոթեցնող ու, վերջիվերջո, արժի: Խորհուրդս է տոկալ, կանխակալությունն ու նախապաշարմունքը հնարավորին չափ արմատախիլ անել, հետևել փաստերին, ուր էլ տանեն դրանք, շարունակել հարցեր տալ: Ու դիմել Աստծուն, անգամ եթե վստահ չես, որ նա գոյություն ունի, որ քեզ դեպի ճշմարտությունն առաջնորդի: Հետո, երբ փաստերը տեղում են, համարձակ դատավճիռ կայացնել:

Հ. – Կա՞ն «Քրիստոսի իսկության վարույթը» գրքի հայեցակետեր, որոնք ավելի են ամրացել գրքի հրապարակումից հետո:

Պ. – Մի միտումն այն է, որ գիտնականները վերջերս ավելի լուրջ են ընդունում Նոր Կտակարանը: Մարկ Դ. Ռոբերտսը, որը Նոր Կտակարանի թեմայով իր դոկտորականը ստացել է Հարվարդում, նկատել է, որ «Նոր Կտակարանի ամենափայլուն ու ամենաազդեցիկ որոշ գիտնականներ պնդել են, որ Նոր Կտակարանի ավետարանները Հիսուսի մասին պատմական տեղեկությունների վստահելի աղբյուրներ են»: Ու ավելացրել է. «Եթե նայես ուղիղ փաստերին, նրան, թե ինչպես են լայնորեն ընկալվում, ու դրանք չգունազարդես քամահրական կողմնակալությամբ կամ աթեիստական ենթադրություններով, կպարզես, որ ավետարաններին վստահելը խելամիտ է»[172]:

Նոր Կտակարանի ամենահարգված գիտնականներից մեկը Կրեյգ Ա. Էվանսն է, որը 50 գիրք է գրել ու խմբագրել, դասախոսել է Քեմբրիջում, Օքսֆորդում ու Եյլում: Նա ինձ ասաց. «Ավետարանները վստահելի են, շատ ու շատ գիտնականներ կան, որ համաձայն են: Պատճառներ կան

եզրակացնելու, որ ավետարաններն անաչառ ու ճշգրիտ հաղորդել են Հիսուսի ուսմունքի, կյանքի, մահվան ու հարության էական տարրերը: Դրանք բավական հին են, սկիզբ են առնում ճիշտ հոսանքներից, որոնք վերադառնում են Հիսուսին ու առաջին հավատացյալներին, կա շարունակելիություն, կա մերձություն, որոշակի առանձին կետերի վավերացում հնագիտությամբ ու այլ փաստաթղթերով, ու կա ներքին տրամաբանություն[173]:

Քանի տարի առաջ Միշել Լիկոնան գրեց ուղենիշային գիրքը (718 էջ), որը կոչվում է «Հիսուսի հարությունը. նոր պատմագրական մոտեցում», մինչդեռ Ն. Թ. Ռայթը հեղինակեց հավակնոտ գործը՝ «Աստծո Որդու Հարությունը» վերնագրով: Այս ոլորտներում գիտականության ավելացման հետ աճել է նաև քրիստոնեության օգտին գործի ամրությունը: Հարության վերաբերյալ հետազոտության մեջ նաև մեծ քայլեր են եղել:

Հ. - Անշուշտ, քրիստոնեական ապոլոգետիկայի կամ հավատի պաշտպանության ոլորտը փոխվել է քո գրքի հրապարակումից հետո:

Պ. - Այո՛, ահռելիորեն: Երբ գրեցի «Քրիստոսի իսկության վարույթը» գիրքը, հավատի օգտին փաստերին նվիրված հայտնի գրքերը շատ չէին: Այսօր շատ կան գերազանց գրքեր, կրթական ծրագրեր, կայքեր, բլոգներ, տեսանյութեր ու դասընթացներ: Նաև այս թեման ավելի ու ավելի շատ է քարոզվում եկեղեցիներում:

Հ. - Ինչ ես կարծում, քո գիրքը նպաստե՞լ է, որ այդ ամենը ծավալվի:

Պ. - Ինձ թվում է՝ մեծ մասամբ մշակութային փոփոխություններն են, որ ավելացող պահանջ են ստեղծում պատասխանների համար, որոնք գտնվում են քրիստոնեական ապոլոգետիկայում: Չնայած քրիստոնեությանը սատարող ու ավելացող փաստերի ամբողջությանը, ավելի ու ավելի շատերն են կասկածում: 2014-ին ազգային հարցում պատվիրեցի ու պարզեցի, որ բեյբի բումերների (50-68 տարեկաններն են) 82 տոկոսը վստահ է, որ Աստված գոյություն ունի, միլենիալների (18-30 տարեկաններն են) միայն 62 տոկոսը նույնն ասաց[174]: Հետազոտող Դեյվիդ Քինեմանը հայտնաբերել է, որ եկեղեցուց հեռանալու վեց պատճառներից երեքը, որ նշում են երիտասարդները, կապված են ինտելեկտուալ հարցերի ու մտահոգությունների հետ[175]: Ուրեմն ապոլոգետիկայի մեծ կարիք կա, և

թվայնացրել է 1915.info կայքը

ուրախ եմ, որ ավելի ու ավելի շատ նյութեր են ստեղծվում այդ պահանջարկը բավարարելու համար:

Հ. – Իր հատուկ նշանակության շնորհիվ՝ «Քրիստոսի իսկության վարույթը» աշխատանքը շատերի, նաև որոշ քննադատների ուշադրությունն է գրավել:

Պ. – Իրականում ինձ քաջալերել է սկեպտիկների մեծ մասի ընդունելությունը, որին արժանացել է գիրքը, որովհետև նրանց առարկությունները համոզիչ չեն թվում: Քննադատ գիտնականներին, որոնցից հարցազրույց էի վերցրել, կոչեց «ենթադրաբար մասնագետներ», ասես Բրյուս Մեցգերը, Ուիլյամ Լեյն Կրեյգը, Դ. Ա. Քարսոնը, Բեն Ուիդրինգտոն 3-րդը, Կրեյգ Բլոմբերգը, Էդին Յամաուչին ու Ջ. Փ. Մորլենդը և այլք՝ դոկտորականներով Քեմբրիջից, Փրինսթոնից, Բրանդեյսից և այլնից, հարյուրավոր գիտական հրապարակումներով ինչ-որ կերպ թերի են որակավորված: Այլ քննադատներ ավելի ուշադիր են եղել, բայց ես միշտ թեթևացած շունչ եմ քաշում, երբ կարդում եմ քննադատությունները, որովհետև դրանց պատասխանելը սովորաբար բավական հեշտ է:

Հ. – Որոշ քննադատներ պնդում են, որ գիրքը գրելիս աթեիստ չես եղել:

Պ. – Դե, նրանք չեն սխալվում: Ես երբեք չեմ պնդել դա: Ճիշտ է, որ աթեիստ եմ եղել կյանքիս մեծ մասը, մինչև կնոջս՝ Լեսլիի դարձը քրիստոնեության ինձ մղեց օգտագործել իմ լրագրողական ու իրավական կրթությունը և հետաքննել, թե քրիստոնեությունը կամ որևէ այլ համաշխարհային կրոն արժանահավատություն ունի՞: Ես դա արեցի մեկ տարի ու ինը ամիս:

Հ. – Ինչ եղավ հետո:

Պ. – 1981-ի նոյեմբերի 8-ին ննջարանումս մենակ, դեղին նոթատետրի վրա ամփոփեցի քրիստոնեության թեմայով թեր և դեմ փաստարկները: Հիմնվելով փաստերի ձնահյուսի վրա, որն ազդեցիկորեն քրիստոնեության ճշմարտացիությունն էր ցույց տալիս, եզրակացրի, որ ավելի շատ հավատ պիտի գործադրեմ, որ պահպանեմ աթեիզմս, քան որ քրիստոնյա դառնամ: Եվ աղոթեցի, որ Հիսուսին ընդունեմ որպես ինձ ներողի ու

առաջնորդողի: 1990-ականների վերջին գրեցի «Քրիստոսի իսկության վարույթը» գիրքը: Ներածության մեջ գրել եմ՝ գիրքը հետազոտում է ու ընդարձակում իմ սկզբնական հետաքննությունը:

Հ. - Ինչո՞ւ կարիք զգացիր, որ անես դա:

Պ. - Որովհետև երբ իմ անձնական հետաքննությունն էի անում, միտք չունեի այդ մասին որևէ բան գրել: Գրառումներս այնքան էլ լավ չէի պահում, մինչև այսօր չեմ գտնում այդ դեղին նոթատետրը: Իրոք, գրքեր կարդում էի թե՛ հօգուտ քրիստոնեության, թե՛ դեմ, մասնագետներին հարցեր էի տալիս, մանրակրկիտ հետազոտում էի հին պատմությունն ու հնագիտությունը, և այս ամենն անում էի հետաքրքրասիրությունից դրդված: Տարիներ անց, երբ որոշեցի գրել «Քրիստոսի իսկության վարույթը» գիրքը, ուզեցի խնդրին ավելի համակարգային մոտենալ ու լիարժեք արձանագրված հարցազրույցներ վարել համաշխարհային մեծության գիտնականների հետ, որպեսզի ստանամ ամենաժամանակակից ու արդիական փաստերը: Այդպես կարող էի փաստերը դասավորել ամենատրամաբանական ու հասկանալի ձևով:

Հ. - Եթե գիրք գրելու ծրագիր չունեիր, երբ քո սեփական հետաքննությունն էիր անում, ինչը մղեց քեզ, ի վերջո, սկսել մեկը:

Պ. - 1981-ին, երբ դարձա Քրիստոսի հանդեպ հավատին, որոշ ժամանակ մնացի լրագրության մեջ, բայց, ի վերջո, թողեցի այն՝ միանալու համար Ուիլլոու Քրիկ համայնքային եկեղեցուն, որտեղ առաջին անգամ հանդիպեցինք ես ու դու: Այնտեղ ես մենթորություն էի անցնում աստվածաբանությունից, կարգվեցի ու դարձա ուսուցանող քարոզիչ: Մի օր ինձ հանձնարարեցին երեք շաբաթ տևողությամբ քարոզների շարք անել, ու որոշեցի այն կոչել «Քրիստոսի իսկության վարույթը»: Հարթակն այնպես ձևավորեցի, որ դատարանի դահլիճի նմանվի, մասնագետներին կանչում էի վկայի ամբիոնի մոտ և ցուցադրում նրանց հետ արած իմ հարցազրույցների տեսանյութերը:

Մի քանի ամիս անց Լեսլիի հետ զբոսնում էի, ու նա առաջարկեց, որ այդ շարքը գրքի վերածեմ: Սկզբում լուրջ չընդունեցի գաղափարը՝ ասելով, որ այն տեսանյութերի վրա է հիմնված: Բայց հետո կանգ առա (կարող եմ քեզ տանել մայթի ուղիղ այդ կետի մոտ) և ասացի. «Մի րոպե սպա-

թվայնացրել է 1915.info կայքը

սիր. դա կարող է աշխատել»: Ահա թե երբ որոշեցի գիրքն առաջարկել Զոնդերվանին*: Թվում էր՝ նրանք կմերժեն գաղափարը, որովհետև այդ ժամանակ ապոլոգետիկայի վերաբերյալ գրքերը հազվադեպ էին լավ վաճառվում, բայց նրանք զարմացրին ինձ՝ նախագծի համար կանաչ լույս վառելով:

Հ. – Ասացին, թե ինչու հավանություն տվեցին:

Պ. – Ասացին, որ տեսնում են իմ ակնհայտ կիրքը նախագծի հանդեպ: Կարծում էին, թե գիրքը եզակի տեսանկյուն է ունենալու, քանի որ անցյալում աթեիստ էի և լրագրող:

Հ. – Գիտնականներից հարցազրույցներ վերցնելը դժվար էր:

Պ. – Դա իրականում զարմանալի էր. ամենևին էլ դժվար չէր: Յուրաքանչյուր գիտնական, որին զանգում էի, անմիջապես համաձայնում էր հարցազրույց տալ, թեև նրանց մեծ մասը գաղափար չուներ, թե ով եմ ես: Այս մարդիկ իրենց կյանքն անցկացնում են գիտական հետազոտությունների մանրուքներում ու, անկեղծ ասած, հաճախ ցնծում են, երբ որևէ մեկն ուշադիր կարդում է իրենց գրքերը և ուզում է խոսել այն մասին, ինչ գրել են: Ի վերջո, հինգ ամիս տևեց, նաև՝ շաբաթվա վերջը, երեկոներն ու արձակուրդը, որ կազմեմ «Քրիստոսի իսկության վարույթը» գիրքը:

Հ. – Շատ արագ է:

Պ. – Հետ նայելով հասկանում եմ, որ դա եղանակներից մեկն էր, որով նկատում էի, որ Աստծո ձեռքը նախագծի վրա է: Չեմ հասկանում՝ ինչպես է հնարավոր այդքան արագ անել դա:

Հ. – Այս գիրքը գրելիս՝ որևէ խնդրի բախվե՞լ ես:

Պ. – Հա՛, շատ ահավոր խնդրի: Սկզբում միտքս այս հարցուպատասխանի պես ձևաչափելն էր՝ առանց զարդարելու որևէ նկարագրական նյութով: Բայց խմբագիրս՝ Զոն Սլոանը, հորդորեց գիրքն իբրև պատմություն գրել՝ ընթերցողին հետս տանել, երբ հարցազրույց էի վերցնում

* Zondervan-ը միջազգային առաջատար քրիստոնեական մեդիահրատարակչական ընկերություն է (ԱՄՆ, Միչիգան):

գիտնականներից: Նա ուզում էր, որ նկարագրեմ միջավայրը, պատմեմ հույզերս ու պատկերեմ, թե ինչպես էր ծավալվում այս պատմությունը:

Հ. - Հիանալի գաղափար է: Ոգևորեց քեզ:

Պ. - Ամենևին ոչ: Առաջին գլուխն արդեն գրել էի որպես ուղիղ հարցուպատասխան և թափս պահպանելու կարիք էի զգում: Բայց Սլոանը հարվածն իր վրա վերցրեց ու պատմողաբար վերաշարադրեց դրա մի մասը: Երկու տարբերակն էլ ցույց տվեցի Լեսլիին ու հարցրի՝ որն է ավելի լավ: Ասաց՝ նրանը: Սրտիս խորքում գիտեի, որ նա ճիշտ է, բայց չգիտեի, թե որպես գրող դա գլուխ բերելու հմտություն ունեմ: Սլոանին երախտապարտ եմ, որ օգնեց անցնել այդ փորձությունը:

Հ. - Որևէ սկեպտիկից հարցազրույց չես վերցրել այս գրքի համար, ինչի պատճառով քեզ քննադատել են:

Պ. - Իմ մոտեցումը կարծես սխալ են հասկացել: Սկեպտիկի դերում ես էի: Ենթավերնագրում ասվում է, որ սա «Հիսուսի օգտին փաստերի՝ մի լրագրողի անձնական հետաքննությունն է»: Ես տալիս էի այն հարցերը, որ ունեի, երբ աթեիստ էի: Ակնհայտ է, սա կարող եք տեսնել ծանոթագրություններից ու իմ շատ հարցերից, որ յուրացրել էի սկեպտիկ գիտնականների գրվածքները: Հետո առերեսում էի քրիստոնյա գիտնականներին սկեպտիկների ամենազորեղ առարկություններին, որոնց դեմ անձամբ էի պայքարում՝ տեսնելու համար, թե նրանք կարող են անհերքելի ու համոզիչ պատասխաններ առաջարկել: Ապա հաղորդում էի նրանց պատասխաններն ու թողնում, որ ընթերցողներն անձամբ կայացնեն իրենց դատավճիռը:

Հ. - Թույլ տուր ճնշել քեզ՝ կենտրոնանալով գրքիդ վերաբերյալ տարածված առարկության վրա: «Հերքման ապացույցները» վերնագրով գլխում հարցազրույց ես վերցրել «Հիսուսի սեմինարի» քննադատից, այնինչ հարցեր չես տվել որևէ մեկին հենց «Հիսուսի սեմինարից»: Ոմանք դա անարդար են համարել:

Պ. - Գաղտնիք չէ, թե «Հիսուսի սեմինարն» ինչ կարծիքի է: Նրանք իրենց գրվածքներում հստակ ներկայացնում են իրենց մեթոդաբանությունը: Գիտես, որ Սեմինարը հիմնել է հանգուցյալ Ռոբերտ Ֆանքը՝

թվայնացրել է 1915.info կայքը

Նոր Կտակարանի ազատական գիտնականը, ու այն հայտնի է դարձել պնդելով, որ Հիսուս երբեք չի ասել 82 տոկոսը նրա, ինչ ավետարանները հաղորդում են, որ ասել է: Սեմինարը կազմված էր ձախ թևի գիտնականներից ու աշխարհականներից, որոնք պնդում էին, որ Հիսուսի անաչառ հետաքննություն են անում, այնինչ նրանց պնդումները հերքելու համար ոչ ոք նրանց չի քննադատում, որ պահպանողական գիտնականներին իրենց գրքերում տեղ չեն հատկացնում:

Հ. – Հարցազրույց վերցրիր «Հիսուսի սեմինարի» քննադատ Գրեգորի Բոյդից: Նա ասաց՝ Սեմինարն ընդունել է նատուրալիզմը՝ համոզմունքը, որ յուրաքանչյուր իրադարձություն բնական պատճառ ունի, ու հենց սկզբից բացառել է գերբնականի հավանականությունն անգամ: Այնինչ քննադատները մատնանշում են, որ Ֆանքն ասել է. «Ոչինչ անհնար չէ, եթե միայն չբացառենք տրամաբանական անհնարինությունները, օրինակ՝ քառակուսի շրջանը»[176]: «Հիսուսի սեմինարի» համանախագահ Ջոն Դոմինիկ Կրոսսանն ասել է. «Լիովին բաց եմ թողնում՝ Աստված ինչ կարող էր անել»[177]:

Պ. – Թույլ տուր պատմության մնացյալ մասը պատմել քեզ: Նախ և առաջ Ֆանքը շիտակ էր իր արմատապաշտական համոզմունքներում: Նա ասել է. «Մետաֆիզիկական դարաշրջանի Աստված մեռած է: Անձնային աստված չկա այնտեղ՝ մարդ արարածներից ու նյութական աշխարհից դուրս»: Հետո ավելացրել է. «Գաղափարը, որ Աստված ժամանակ առ ժամանակ միջամտում է բնության կարգին՝ օգնելու կամ պատժելու համար, այլևս ընդունելի չէ: Հրաշքներն անբացատրելի են, այլապես կհակասեն ֆիզիկական տիեզերակարգի կանոնավորությանը»: Ավելին, Ֆանքն ասել է. «Հիսուսին պիտի ցած բերենք: Այլևս ընդունելի չէ Հիսուսին աստվածային համարելը»[178]:

Կրոսսանն էլ Ուիլյամ Լեյն Կրեյգի հետ բանավեճում իսկապես ժխտեց, որ նատուրալիստ է[179]: Բայց ընդունեց, որ «աստվածաբանական նախապաշարում» ունի, որ Աստված ուղիղ չի միջամտում գործերին[180]: Նաև ասաց. «Գերբնականը միշտ (գոնե մինչև սա հերքվի ինձ համար) գործում է բնականի ծածկույթի միջոցով»[181]: Այդուհանդերձ, Կրեյգի ասածի պես, դա նատուրալիզմն է, համոզմունք, որ Աստված աշխարհում գործում է միայն անուղղակի, բնական պատճառների միջոցով[182]: Իրականում,

չնայած Կրեյգի սադրանքին, Կրոսսանը հրաժարվեց հաստատել, որ Աստված իսկապես գոյություն ունի մեր երևակայությունից դուրս[183]:

Գերբնականի մասին Կրոսսանի նախապաշարումը վիթխարի հետևանքներ ունի: «Շատ պարզ,– ասաց Կրեյգը,– այն նախօրոք բացառում է հարության նման իրադարձությունների պատմականությունը»[184]:

Հստակեցնենք: «Հիսուսի սեմինարի» գրքի՝ Հինգ Ավետարանների նախաբանում ասվում է, որ «այս գիտական դարում... դավանանքի ու դոգմայի Քրիստոս... այլևս չի կարող հարուցել նրանց համաձայնությունը, ովքեր երկինքը տեսել են Գալիլեոյի աստղադիտակով»[185]: Սեմինարի առաջին «իմաստության սյունը» պատմական Հիսուսի ու հավատի Հիսուսի միջև տարբերությունն է, այլ խոսքով, ըստ գերմանացի գիտնական Դ. Ֆ. Շտրաուսի՝ բնական Հիսուսի ու գերբնական Հիսուսի[186]: «Ավետարանների Հիսուս,– ասել է «Հիսուսի սեմինարը»,– աստվածաբանական կոնստրուկտ է»[187]:

Ուիլյամ Լեյն Կրեյգը կտրուկ էր մի գիտական հոդվածում, որը գրել է Կրոսսանի հետ իր բանավեճից հետո: Նա ասել է. «Հիսուսի սեմինարն ակնհայտ անկեղծ է նատուրալիզմի իր նախապաշարումի վերաբերյալ... եթե նատուրալիզմը սկսես ենթադրելով, ապա, կստանաս զուտ բնական Հիսուս: Այս վերակառուցված, նատուրալիստական Հիսուս հիմնված է ոչ թե փաստերի, այլ սահմանման վրա: Ապշեցուցիչ է, որ «Հիսուսի սեմինարը» չի փորձում պաշտպանել այս նատուրալիզմը, որն ուղղակի ենթադրվում է: Բայց այս ենթադրությունը լիովին անհիմն է: Մերժի՛ր այս ենթադրությունը, և ամբողջ կառույցը կփլվի»[188]:

Գիտնական Մարկ Ռոբերտսը Հարվարդում «Հիսուսի սեմինարի» յոթ մասնակիցներից մեկն էր: Նա գրել է. «Իմ որոշ գործընկերներ Աստվածաշնչի հրաշալի գիտնականներ են, սակայն Սեմինարն ինքն իրապես գիտական գործունեություն չէ: Փաստորեն դա խնամքով մոգոնված ջանք է՝ քայքայելու համար դասական քրիստոնեական հավատը... Ֆանքը բավական հստակ էր իր հակաքրիստոնեական օրակարգի հարցում: Հենց սկզբից ակնհայտ էր, որ «Հիսուսի սեմինարի» համար Ֆանքի օրակարգը համատեղելի չէր դասական քրիստոնեության հետ»[189]:

Անկասկած որոշ տարբերություններ կային Սեմինարի տարբեր անդամների համոզմունքների միջև: Առնվազն մեկին ճանաչում եմ: Նա այնքան հեռուն է գնում, որ ասում է, որ Հիսուսի՝ երբևէ ապրած լինելու

թվայնացրել է 1915.info կայքը

ապացույցները բավարար չեն: Սա, իմ կարծիքով, անհեթեթություն է[190]: Բայց, իբրև խումբ, Սեմինարն իր տեսակետները շատ հստակ հայտնել է, հետևաբար պիտի ակնկալի բաց լինել քննադատության համար, ինչպես բոլորի գրվածքներն են բաց:

Հ. – Ոմանք քննադատել են գիրքդ՝ ասելով, որ չափազանց հեշտ են քեզ համոզում նրանք, ումից հարցազրույց ես վերցրել: Հավանաբար չես փվել որոշ հարցերի շարունակությունը, որ կուզեին, որ փված լինեիր:

Պ. – Յուրաքանչյուր ոք Հիսուսի թեմային մոտենում է սեփական հարցերի կամ առարկությունների շարքով: Մի գիրքը չի կարող ամեն հնարավոր հարցի հետ գործ ունենալ: Ամեն մեկը կարող է ասել. «Կարող էիր ավելի խորանալ այդ թեմայով, բայց «Քրիստոսի իսկության վարույթը» գրքի՝ զանգվածային շուկայի փափուկ կազմով գրքույկն արդեն 400 էջ էր: Ու որոշեցի կենտրոնանալ այն թեմաների վրա, որոնք ամենից շատ էին մտահոգում ինձ: Հուսով եմ՝ դրանք նույն թեմաներն են, որոնք ընթերցողների մեծ մասի մտքին են, բայց ուրիշները կարող են այլ հարցեր ունենալ: Ոչինչ:

Նրանց համար, ովքեր ավելի շատ տեղեկություններ են ուզում, թարմացրել եմ յուրաքանչյուր գլխի վերջում հանձնարարվող ընթերցանության ցուցակով: Այս ռեսուրսները կարող են հիանալի հաջորդ քայլ լինել: Բացի այդ, իմ հաջորդ՝ «Իրական Հիսուս հետաքննության տակ» գիրքը, որը վերահրատարակվում է «Ի պաշտպանություն Հիսուսի» վերնագրով, ավելի խորն է հետազոտում հարությունը, առասպելաբանությունը, Նոր Կտակարանի տեքստի արժանահավատությունը, իրագործված մարգարեություններն ու պարականոն ավետարանների մասին պնդումները:

Հ. – Երբ խոսքը քրիստոնեությանն է վերաբերում, չե՞ս կարծում, որ ոմանք դիմադրության պատեր են կառուցում, որոնք սովորաբար չեն կառուցում իրենց կյանքի այլ բնագավառներում:

Պ. – Հոգևոր փնտրտուքով զբաղվողների մեծ մասն անկեղծ է ու իսկապես շահագրգռված է պատասխաններ գտնելու մեջ, ինչը հիանալի է: Բայց կան այնպիսիք, որոնք կարծես մտածված խորացնում են իրենց թերահավատությունը: Երբեմն, երբ մեկն ինձ առանձնապես սուր հարց է տալիս, ուզում եմ ասել. «Նախ ապացուցե՛ք, ինձ, թե ով եք: Ու մի՛ փորձեք

վարորդական վկայական ցույց տալ: Գիտենք, որ կարելի է կեղծել դրանք: Մի՛ փորձեք ծննդյան վկայական ցույց տալ: Ի՞նչ իմանամ, որ իսկական է: Թող մի ընկեր կամ գրչակից չվկայի ձեր ինքնության մասին, որովհետև բոլորիս հայտնի է, որ մարդիկ կարող են ստել»:

Տեսնում ես, որ կարող ենք հեշտորեն թափ տալ ձեռքներս ու անհիմն բարձրացնել մեր թերահավատության նշաձողը: Բայց այլ բնագավառներում մեր կյանքն այդպես չենք ապրում: Կարծում եմ, որ շատ ավելի համոզիչ կլինի, որ մեր առողջ դատողությունն օգտագործենք ու քրիստոնեության օգտին եղած փաստերը գնահատենք այնպես, ինչպես կանեինք այլ դեպքում:

Հ. - Հավանաբար ոգեշնչված ես նորությունից, որ «Քրիստոսի իսկության վարույթը» գիրքն արաբերեն է թարգմանվել:

Պ. - Այո՛, հույս ունեմ, որ այն կհասնի ավելի մեծ մուսուլմանական բնակչության, քան երբևէ նախկինում: Ի վերջո, գիրքն ամուր փաստեր է առաջարկում՝ հիմնավորելով մի քանի բանալի կետեր, որոնք իսլամը ժխտում է՝ որ Հիսուս Աստծո միածին Որդին է, որ նրան սպանել են խաչելությամբ, որ նա մեռելներից հարություն է առել: Գուցե դա մուսուլմաններին դրդի հետաքննել, թե իրականում ինչ է ցույց տալիս պատմությունը:

Հ. - Հենց իմ ընկեր Ֆայզի օրինակով տեսել եմ, թե ինչպես կարող է «Քրիստոսի իսկության վարույթը» գիրքն օգնել, որ մուսուլմանները գտնեն իրական Հիսուսին: Այլ գրքեր ծրագրո՞ւմ ես:

Պ. - Գիտես, որ շարքում արդեն մի քանի գիրք կա: «Արարչի իսկության վարույթը» գիրքը զննում է գիտական փաստերը, որոնք ցույց են տալիս Արարչին, որը պատահմամբ հիշեցնում է Աստվածաշնչի Աստծուն: «Հավատը հետաքննության տակ» գիրքը սկսվում է սկեպտիկի հետ անկեղծ, հոգևոր հարցազրույցով, քննում քրիստոնեության ութ ամենամեծ առարկությունները: Հիշատակել եմ «Իրական Հիսուս հետաքննության տակ» գիրքը, որն առնչվում է Քրիստոսի պնդումների ընթացիկ առարկություններից շատերին, և այժմ վերատպվում է որպես «Ի պաշտպանություն Հիսուսի»: «Շնորհը հետաքննության տակ» գիրքն առաջարկում է փորձառական փաստարկներ՝ պատմելով արմատապես փոխված կյանքերի պատմություններ, որոնցում Աստված լավագույն բացատրությունն է թվում: Նաև ստեղծել եմ «Քրիստոսի իսկության վարույթը» ուսումնական

թվայնացրել է 1915.info կայքը

Աստվածաշունչը, նվեր-գրքեր՝ «Հույսը հետաքննության տակ» և «Քրիստոնեությունը հետաքննության տակ. պատասխանների գիրքը»: Հիմա աշխատում եմ մի քանի այլ նախագծերի վրա, բայց դեռևս չեմ ուզում դրանց մասին որևէ բան ասել:

Հ. – «Քրիստոսի իսկության վարույթը» գրքի լույս տեսնելուց հետո կյանքդ փոխվե՞լ է:

Պ. – Ես ու դու միասին մի գիրք ենք գրել՝ «Անսպասելի արկածը», ու դա բավական լավ նկարագրություն է, թե ինչպիսին է կյանքը եղել ինձ համար: Հաճույք եմ ունեցել ազգային հեռուստատեսային ցանցի շոու վարել, որը կոչվում էր «Հավատը կրակի տակ»: Այդ ընթացքում վարում էի կրոնական ու սոցիալական թեմաներով զանազան բանավեճեր քրիստոնյաների, աթեիստների, մուսուլմանների, հինդուականների, բահայականների և ուրիշների միջև: Խոսել եմ համաժողովներում, սեմինարներում ու եկեղեցիներում ամբողջ աշխարհով մեկ: Հյուսթոնի բապտիստական համալսարանում այսօր «Քրիստոնեական միտք» եմ դասավանդում:

Հ. – Քո ելույթներում ցավոտ անկեղծ ես, թե ինչպես է աթեիստ լինելդ բացասաբար ազդել երեխաներիդ վրա, երբ նրանք փոքր էին: Ընդունում ես, որ անբարո, հարբած ու ինքնահավան կյանքով ես ապրել:

Պ. – Չեմ ակնարկել, թե բոլոր հոգևոր սկեպտիկներն են այդ կերպ ապրում: Մեծ մասը, իհարկե, այդպես չի ապրում: Բայց, իմ կարծիքով, եթե չլիներ Աստված կամ վերջնական պատասխանատվություն, ամենատրամաբանական կերպը կլիներ ապրելը որպես հեդոնիստ, որը պարզապես հաճույքի է ձգտում: Ու դա անում էի ի վնաս ընտանիքիս ու ինձ:

Հ. – Հիսուսի հետևորդ դառնալուց հետո երեխաներիդ վրա ինչ ազդեցություն է թողել քո կյանքի փոփոխությունը:

Պ. – Նրանք տեսան փոփոխությունները, որոնք Աստված իրագործեց իմ բնավորության, արժեքների ու բարոյականության մեջ: Երախտապարտ եմ, որ այսօր երկուսն էլ Հիսուսի նվիրված հետևորդներ են: Ալիսոնը քրիստոնեական թեմաներով մի քանի վեպ է գրել: Նա ու ամուսինը՝ Դենը, որը ապոլոգետիկայի ոլորտում գիտական աստիճան ունի, Աստծո մասին երկու գիրք են հեղինակել մանուկների համար:

թվայնացրել է 1915.info կայքը

Քայլն իր դոկտորականը ստացել է աստվածաբանությունից, Աբերդինի համալսարանում: Հիմա Բիոլայի համալսարանի Թալբոթի Աստվածաբանության դպրոցի դասախոս է: Նա գրել է և՛ հանրամատչելի, և՛ գիտական գրքեր, նրա գիտական աշխատանքը տպագրվել է Harvard Theological Review-ում և այլուր: Ես օրհնված եմ երեք հրաշալի թոռնուհիներով ու մի թոռով՝ Օլիվեր Լի Ստրոբելով:

Հ. *– Նկատեցի, որ նրա ամբողջական անունը հիշատակեցիր:*

Պ. – Այո, պիտի երկրորդ անունը խցկեի: Շատ հպարտ եմ դրանով:

Հ. *– «Քրիստոսի իսկության վարույթը» գրքում ասել ես, որ, երբ հետքաննությունդ ավարտվի, ավելի շատ հավատի կարիք կունենաս, որ պահպանես աթեիզմդ, քան որ քրիստոնյա դառնաս: Կասկածների դեմ պայքարո՞ւմ ես:*

Պ. – Իհարկե, կան դժվարին ժամանակներ, երբ կարող եմ կասկածի տակ առնել հավատիս որոշ կողմեր, բայց դրանք ժամանակավոր են: Միշտ վերադառնում եմ գիտության փաստերին: Տիեզերագիտությունը, ֆիզիկան, կենսաքիմիան, գենետիկան ու մարդկային գիտակցությունն Արարչի գոյությունն ազդեցիկ են ցույց տալիս: Ես վերադառնում եմ պատմությանը: Հիսուս պնդում էր, որ աստվածային է, հետո հիմնավորեց պնդումը՝ մեռելներից վերադառնալով: Բայց հավատս ավելին է, քան դա:

Հ. *– Ինչ նկատի ունես:*

Պ. – Ուիլյամ Լեյն Կրեյգն ինձ համար բյուրեղացրեց հարցը: Ասաց. «Վերջիվերջո, քրիստոնյան իսկապես իմանում է, որ քրիստոնեությունը ճշմարիտ է Աստծո Հոգու ինքնավավերացնող վկայության միջոցով: Սուրբ Հոգին մեր հոգուն շշնջում է, որ Աստծուն ենք պատկանում: Դա նրա դերերից մեկն է: Մյուս փաստերը հիմնավոր են, բայց հիմնականում օժանդակ են:

Նա միտքն այսպես բացատրեց: «Ասենք՝ գնում ես գրասենյակ, որ տեսնես՝ շեֆդ տեղո՞ւմ է: Նրա մեքենան տեսնում ես կայանատեղիում: Քարտուղարին հարցնում ես, ասում է. «Հենց նոր հետը խոսեցի»: Նրա գրասենյակի դռան տակից երևում է լույսը: Ականջ ես դնում ու լսում նրա ձայնը՝

թվայնացրել է 1915.info կայքը

հեռախոսով խոսում է: Բոլոր այս փաստերի հիման վրա ծանրակշիռ պատճառներ ունես եզրակացնելու, որ շեֆդ գրասենյակում է:

Բայց կարող էիր բոլորովին այլ բան անել: Կարող էիր գնալ դռան մոտ, թակել ու դեմառդեմ տեսնել շեֆիդ: Այդ կետում կայանատեղիում մեքենայի փաստը, քարտուղարի վկայությունը, լույսը՝ դռան տակից, հեռախոսով խոսողի ձայնը հիմնավոր կլինեին, բայց երկրորդական դեր կկատարեին, որովհետև հիմա շեֆիդ դեմառդեմ տեսար:

«Նույն կերպ, երբ հանդիպել ես Աստծուն, այսպես ասած, դեմառդեմ, Նրա գոյության օգտին բոլոր փաստարկներն ու փաստերը, որոնք կատարելապես հիմնավոր են, երկրորդական են դառնում: Դրանք հիմա օժանդակում են, ինչ Աստված ինքն է ցույց տվել մեր սրտերում՝ Սուրբ Հոգու վկայության միջոցով»[191]:

Այնպես որ երախտապարտ եմ «Քրիստոսի իսկության վարույթը» գրքում նկարագրված փաստերի համար, որովհետև դրանք էական էին իմ ու Հիսուսի միջև արգելապատը քանդելու համար: Բայց եթե այսօր հարցնեք՝ ինչու եմ վստահ, որ Հիսուս ողջ է ու Աստծո Որդին է, կասեմ. «Որովհետև անձամբ ճանաչում եմ նրան: Որովհետև հիմա նա իմ ընկերն է»:

Դա մի բան է, որ բոլորս կարող ենք ապրել, երբ դառնում ենք Նրան՝ ապաշխարությամբ ու հավատով: Ու թույլ տվեք լիովին թափանցիկ լինել. դա՛ է իմ հույսը ամեն մեկի համար, ով կարդում է «Քրիստոսի իսկության վարույթը» գիրքը:

թվայնացրել է 1915.info կայքը

թվայնացրել է 1915.info կայքը

Երախտագիտության խոսք

Շատ մարդիկ են ներդրում ունեցել այս գրքի պատրաստման գործում, և ես նրանց բոլորին անչափ շնորհակալ եմ: Հատկապես երախտապարտ եմ Բիլ Հայբելզին, որ թույլ տվեց ինձ այս թեմայով մի շարք ելույթներ ունենալ Ուիլոու Քրիկ համայնքային եկեղեցում, կնոջս՝ Լեսլիին, որն առաջարկեց այս դասախոսությունները գրքի վերածելու գաղափարը, և իմ խմբագրին՝ Ջոն Սլոունին, որի ստեղծագործական ներդրումը մեծապես բարելավեց նախագիծը:

Նաև երախտապարտ եմ Մարկ Միտելբերգին և Գարի Փուլին՝ անխոնջ օգնության ու աջակցության համար, Չադ Մեյստերին և Բոբ ու Գրետխեն Պասանտինոներին իրենց հետազոտության ու գաղափարների համար, Ռուս Ռոբինսոնին՝ իրավական տեսանկյան, իմ օգնական Ջոդի Ուոլին՝ անգնահատելի օգնության համար, դստերս՝ Էլիսոնին, որդուս՝ Քայլին, այս գործում աննկատ, բայց իսկապես կարևոր ներդրման համար:

Վերջում ուզում եմ շնորհակալություն հայտնել այն գիտնականներին, որոնք համաձայնեցին մասնակցել այս գրքի հարցազրույցներին: Նորից ու նորից ինձ զարմացրին ոչ միայն և ոչ այնքան նրանց գիտելիքն ու իմաստությունը, որքան նրանց խոնարհ ու անկեղծ հավատը և ցանկությունն օգնելու նրանց, ովքեր դեռևս Հիսուսի անհավանական պնդումները քննելու հոգևոր որոնումների մեջ են:

թվայնացրել է 1915.info կայքը

Օգտագործված գրականություն

Archer—Gleason L. Archer, *The Encyclopedia of Bible Difficulties* (Grand Rapids: Zondervan, 1982).

Anderson—J. N. D. Anderson, *The Evidence for the Resurrection* (Downers Grove, IL: InterVarsity Press, 1966).

Ankerberg—John Ankerberg and John Weldon, *The Facts on the Mormon Church* (Eugene, OR: Harvest House, 1991).

Ankerberg—John Ankerberg and John Weldon, *Knowing the Truth about the Resurrection* (Eugene, OR: Harvest House, 1996).

Ankerberg—John Ankerberg and John Weldon, *Ready with an Answer* (Eugene, OR: Harvest House, 1997).

Armstrong—Karen Armstrong, *A History of God* (New York: Ballantine/ Epiphany, 1993).

Baigent—Michael Baigent, Richard Leigh, and Henry Lincoln, *Holy Blood, Holy Grail* (New York: Delacorte, 1982).

Barnett—Paul Barnett, *Is the New Testament History?* (Ann Arbor, MI: Vine, 1986).

Barnett—Paul Barnett, *Jesus and the Logic of History* (Grand Rapids: Eerdmans, 1997).

Black—Henry Campbell Black, *Black's Law Dictionary*, 5th ed. (St. Paul, MN: West, 1979).

Blomberg—Craig Blomberg, *The Historical Reliability of the Gospels* (Downers Grove, IL: InterVarsity Press, 1987).

Boyd—Gregory A. Boyd, *Cynic Sage or Son of God? Recovering the Real Jesus in an Age of Revisionist Replies* (Wheaton, IL: BridgePoint, 1995).

Boyd—Gregory A. Boyd, *Jesus under Siege* (Wheaton, IL: Victor, 1995).

Boyd—Robert Boyd, *Tells, Tombs, and Treasure* (Grand Rapids: Baker, 1969).

Braaten—Carl Braaten, *History and Hermeneutics*, vol. 2 of *New Directions in Theology Today*, ed. William Hordern (Philadelphia: Westminster Press, 1966).

British Medical Journal—"A Case of Congenital Ichthyosiform Erythrodermia of Brocq Treated by Hypnosis," *British Medical Journal* 2 (1952). Brown—R. E. Brown, "Did Jesus Know He Was God?" *Biblical Theology Bulletin* 15 (1985).

Bruce—F. F. Bruce, *The New Testament Documents: Are They Reliable?* (Grand Rapids: Eerdmans, 1960).

Bruce—F. F. Bruce, *The Books and the Parchments* (Old Tappan, NJ: Revell, 1963).

Bruce—F. F. Bruce, *Jesus and Christian Origins outside the New Testament* (Grand Rapids: Eerdmans, 1974).

Bruce—F. F. Bruce, *The Canon of Scripture* (Downers Grove, IL: InterVarsity Press, 1988).

Chicago Tribune—"Bomb Victim's Body Not in Grave," *Chicago Tribune* (January 14, 1998).

Clifford—Ross Clifford, *The Case for the Empty Tomb* (Claremont, CA: Albatross, 1991).

Collins—Gary R. Collins, *Can You Trust Psychology?* (Downers Grove, IL: InterVarsity Press, 1988).

Collins—Gary R. Collins, *Christian Counseling: A Comprehensive Guide* (Dallas: Word, 1988).

Collins—Gary R. Collins, *The Soul Search* (Nashville: Thomas Nelson, 1998). Craig—William Lane Craig, *Knowing the Truth about the Resurrection* (Ann Arbor, MI: Servant, 1988).

թվայնացրել է 1915.info կայքը

Craig—William Lane Craig, *Reasonable Faith* (Westchester, IL: Crossway, 1994).

Craig—William Lane Craig, *The Son Rises: Historical Evidence for the Resurrection of Jesus* (Chicago: Moody Press, 1981).

Craig—William Lane Craig and Frank Zindler, *Atheism vs. Christianity: Where Does the Evidence Point?* (Grand Rapids: Zondervan, 1993). Videocassette.

Crossan—John Dominic Crossan, *The Historical Jesus* (San Francisco: HarperSanFrancisco, 1991).

Donato—Marla Donato, "That Guilty Look," *Chicago Tribune* (April 1, 1994). Drane—John Drane, *Introducing the New Testament* (San Francisco: Harper & Row, 1986).

Dunn—James D. G. Dunn, *Jesus and the Spirit* (London: SCM Press, 1975). Dunn—James Dunn, *The Living Word* (Philadelphia: Fortress, 1988).

Edwards—William D. Edwards et al., "On the Physical Death of Jesus Christ," *Journal of the American Medical Association* (March 21, 1986), 1455–63. Evans—Colin Evans, *The Casebook of Forensic Detection* (New York: John Wiley & Sons, 1996).

Finegan—Jack Finegan, *The Archaeology of the New Testament* (Princeton: Princeton University Press, 1992).

Foreman—Dale Foreman, *Crucify Him* (Grand Rapids: Zondervan, 1990). France—R. T. France, *The Evidence for Jesus* (Downers Grove, IL: InterVarsity Press, 1986).

Fruchtenbaum—Arnold Fruchtenbaum, *Jesus Was a Jew* (Tustin, CA: Ariel Ministries, 1981).

Frydland—Rachmiel Frydland, *What the Rabbis Know about the Messiah* (Cincinnati: Messianic, 1993).

Geisler—Norman Geisler and Thomas Howe, *When Critics Ask* (Wheaton, IL: Victor, 1992).

Geisler—Norman L. Geisler and William E. Nix, *A General Introduction to the Bible* (1968; reprint, Chicago: Moody Press, 1980).

Geivett—R. Douglas Geivett and Gary R. Habermas, eds., *In Defense of Miracles* (Downers Grove, IL: InterVarsity Press, 1997).

Grant—Michael Grant, *Jesus: An Historian's Review of the Gospels* (New York: Charles Scribner's Sons, 1977).

Green—Michael Green, *Christ Is Risen: So What?* (Kent, England: Sovereign World, 1995).

Green—Michael Green, *The Empty Cross of Jesus* (Downers Grove, IL: InterVarsity Press, 1984).

Greenleaf—Simon Greenleaf, *The Testimony of the Evangelists* (Grand Rapids: Baker, 1984).

Gregory—Leland H. Gregory III, "Top Ten Government Bloopers," *George* (November 1997).

Gruenler—Royce Gordon Gruenler, *New Approaches to Jesus and the Gospels* (Grand Rapids: Baker, 1982).

Habermas—Gary Habermas, *The Historical Jesus* (Joplin, MO: College Press, 1996).

Habermas—Gary Habermas, *The Verdict of History* (Nashville: Thomas Nelson, 1988).

Habermas—Gary Habermas and Antony Flew, *Did Jesus Rise from the Dead? The Resurrection Debate* (San Francisco: Harper & Row, 1987), xiv.

Habermas—Gary Habermas and J. P. Moreland, *Beyond Death: Exploring the Evidence for Immortality* (Westchester, IL: Crossway, 1998). Habermas—Gary Habermas and J. P. Moreland, *Immortality: The Other Side of Death* (Nashville: Thomas Nelson, 1992).

Harris—Murray J. Harris, *Jesus As God* (Grand Rapids: Baker, 1993).

Harris—Murray J. Harris, *Three Crucial Questions about Jesus* (Grand Rapids: Baker, 1994).

թվայնացրել է 1915.info կայքը

Hengel—M. Hengel, *Crucifixion in the Ancient World* (Philadelphia: Fortress, 1977).
Ignatius—Ignatius, *Trallians* 9.
Irenaeus—Irenaeus, *Adversus Haereses* 3.3.4.
Johnson—Denny Johnson, "Police Add Electronic 'Sketch Artist' to Their Bag of Tricks," *Chicago Tribune* (June 22, 1997).
Johnson—Luke Timothy Johnson, *The Real Jesus* (San Francisco: HarperSanFrancisco, 1996).
Josephus—Josephus, *The Antiquities* 20.200.
Kaiser—Walter C. Kaiser Jr., *The Messiah in the Old Testament* (Grand Rapids: Zondervan, 1995).
Kenyon—Frederic Kenyon, *Handbook to the Textual Criticism of the New Testament* (New York: Macmillan, 1912).
Kenyon—Frederic Kenyon, *The Bible and Archaeology* (New York: Harper, 1940).
Lake—Kirsopp Lake, *The Historical Evidence for the Resurrection of Jesus Christ* (London: Williams & Norgate, 1907).
Lawrence—D. H. Lawrence, *Love among the Haystacks and Other Stories* (New York: Penguin, 960).
Lewis—C. S. Lewis, *Mere Christianity* (New York: Macmillan-Collier, 1960).
Lewis—C. S. Lewis, *The Screwtape Letters* (London: Collins-Fontana, 1942).
Maier—Paul L. Maier, *Pontius Pilate* (Wheaton, IL: Tyndale House, 1968).
Maier—P. Maier, "Sejanus, Pilate, and the Date of the Crucifixion," *Church History* 37 (1968).
Marshall—I. Howard Marshall, *I Believe in the Historical Jesus* (Grand Rapids: Eerdmans, 1977).
Martin—Michael Martin, *The Case against Christianity* (Philadelphia: Temple University Press, 1991).
Martin—W. J. Martin, *The Deity of Christ* (Chicago: Moody Press, 1964).
McDowell—Josh McDowell, *Evidence That Demands a Verdict* (1972; reprint,
San Bernardino, CA: Here's Life, 1986).
McDowell—Josh McDowell, *More Than a Carpenter* (Wheaton, IL: Living Books, 1977).
McDowell—Josh McDowell, *The Resurrection Factor* (San Bernardino, CA: Here's Life, 1981).
McDowell—Josh McDowell and Bart Larson, *Jesus: A Biblical Defense of His Deity* (San Bernardino, CA: Here's Life, 1983).
McDowell—Josh McDowell and Bill Wilson, *He Walked among Us* (Nashville: Thomas Nelson, 1994).
McFarlan—Donald McFarlan, ed., *The Guinness Book of World Records* (New York: Bantam, 1991).
McGinniss—Joe McGinniss, *Fatal Vision* (New York: New American Library, 1989).
McRay—John McRay, *Archaeology and the New Testament* (Grand Rapids: Baker, 1991).
Metzger—Bruce M. Metzger, *The Canon of the New Testament* (Oxford: Clarendon Press, 1988).
Metzger—Bruce M. Metzger, *The Text of the New Testament* (Oxford: Oxford University Press, 1992).
Miller—Kevin D. Miller, "The War of the Scrolls," *Christianity Today* (October 6, 1997).
Montgomery—John Warwick Montgomery, ed., *Christianity for the Tough- Minded* (Minneapolis: Bethany House, 1973).
Moreland—J. P. Moreland, *Scaling the Secular City* (Grand Rapids: Baker, 1987).
Morison—Frank Morison, *Who Moved the Stone?* (Grand Rapids: Zondervan, 1987).
Moule—C. F. D. Moule, *The Phenomenon of the New Testament* (London: SCM Press, 1967).
Müller—Julius Müller, *The Theory of Myths, in Its Application to the Gospel History, Examined and Confuted* (London: John Chapman, 1844).
Neill—Stephen Neill, *The Interpretation of the New Testament 1861–1961* (London: O.U.P., 1964).

թվայնացրել է 1915.info կայքը

O'Collins—Gerald O'Collins, *The Easter Jesus* (London: Darton, Longman & Todd, 1973).

Patzia—Arthur G. Patzia, *The Making of the New Testament* (Downers Grove, IL: InterVarsity Press, 1995).

Peck—M. Scott Peck, *People of the Lie* (New York: Touchstone, 1997).

Pelikan—Jaroslav Pelikan, *The Christian Tradition: A History of the Development of Doctrine*, vol. 1, *The Emergence of the Catholic Tradition (100–600)* (Chicago: University of Chicago Press, 1971).

Phlegon—Phlegon, *Olympiades he Chronika* 13, ed. Otto Keller, *Rerum Naturalium Scriptores Graeci Minores*, I (Leipzig: Teurber, 1877).

Possley—Maurice Possley, "Mob Hit Man Aleman Gets One Hundred to Three Hundred Years," *Chicago Tribune* (November 26, 1997).

Proctor—William Proctor, *The Resurrection Report* (Nashville: Broadman & Holman, 1998).

Rosen—Marjorie Rosen, "Getting Inside the Mind of a Serial Killer," *Biography* (October 1997).

Rosen—Moishe Rosen, *Y'shua, the Jewish Way to Say Jesus* (Chicago: Moody Press, 1982).

Rosen—Ruth Rosen, ed., *Jewish Doctors Meet the Great Physician* (San Francisco: Purple Pomegranate, 1997).

Schaff—Philip Schaff, *The Person of Christ* (New York: American Tract Society, 1918).

Schonfield—Hugh Schonfield, *The Passover Plot* (New York: Bantam, 1965). Sherwin-White—A. N. Sherwin-White, *Roman Society and Roman Law in the New Testament* (Oxford: Clarendon Press, 1963).

Smith—Morton Smith, "Biblical Arguments for Slavery," *Free Inquiry* (Spring 1987), 30.

Sowell—Thomas Sowell, *Race and Culture* (New York: Basic, 1995).

Stoner—Peter W. Stoner, *Science Speaks* (Chicago: Moody Press, 1969).

Stott—John Stott, *Basic Christianity* (Grand Rapids: Eerdmans, 1986).

Strobel—Lee Strobel, "His 'I Shot Him' Stuns Courtroom," *Chicago Tribune* (June 20, 1975).

Strobel—Lee Strobel, "Pal's Confession Fails; Defendant Ruled Guilty," *Chicago Tribune* (June 21, 1975).

Strobel—Lee Strobel, "Jury in Makeshift Courtroom Hears Dying Boy Tell of Attack," *Chicago Tribune* (February 24, 1976).

Strobel—Lee Strobel, "'Textbook' Thumbprint Aids Conviction in Coed's Killing," *Chicago Tribune* (June 29, 1976).

Strobel—Lee Strobel, "Four Years in Jail—and Innocent," *Chicago Tribune* (August 22, 1976).

Strobel—Lee Strobel, "Youth's Testimony Convicts Killers, but Death Stays Near," *Chicago Tribune* (October 25, 1976).

Strobel—Lee Strobel, "Did Justice Close Her Eyes?" *Chicago Tribune* (August 21, 1977).

Strobel—Lee Patrick Strobel, *Reckless Homicide: Ford's Pinto Trial* (South Bend, IN: And Books, 1980).

Strobel—Lee Strobel, *God's Outrageous Claims* (Grand Rapids: Zondervan, 1997).

Telchin—Stan Telchin, *Betrayed!* (Grand Rapids: Chosen, 1982).

Templeton—Charles Templeton, *Act of God* (New York: Bantam, 1979).

Templeton—Charles Templeton, *Farewell to God* (Toronto: McClelland & Stewart, 1996).

Thompson—J. A. Thompson, *The Bible and Archaeology* (Grand Rapids: Eerdmans, 1975).

Warfield—Benjamin B. Warfield, *Introduction to Textual Criticism of the New Testament* (London: Hodder & Stoughton, 1907).

թվայնացրել է 1915.info կայքը

Webster's—*Webster's Encyclopedic Unabridged Dictionary of the English Language* (New York: Gramercy, 1989).

Wilcox—M. Wilcox, "Jesus in the Light of His Jewish Environment," *Aufstieg und Niedergang der römischen Welt* 2, no. 25.1 (1982).

Wilkins—Michael J. Wilkins and J. P. Moreland, eds., *Jesus under Fire* (Grand Rapids: Zondervan, 1995).

Wilson—Ian Wilson, *Jesus: The Evidence* (1984; reprint, San Francisco: HarperSanFrancisco, 1988).

Witherington—Ben Witherington III, *The Christology of Jesus* (Minneapolis: Fortress, 1990).

Yamauchi—Edwin Yamauchi, "Josephus and the Scriptures," *Fides et Historia* 13 (1980).

Yamauchi—Edwin Yamauchi, *The Stones and the Scriptures* (New York: J. B. Lippincott, 1972).

Zindler—Frank Zindler, "Where Jesus Never Walked," *American Atheist* (Winter 1996–1997).

Zodhiates—Spiros Zodhiates, *Was Christ God?* (Grand Rapids: Eerdmans, 1966).

Zondervan—*The Journey Bible* (Grand Rapids: Zondervan, 1996).

թվայնացրել է 1915.info կայքը

Լրացուցիչ գրականություն

Գլուխ 1 Ականատեսների վկայությունները

Barnett, Paul. *Is the New Testament Reliable?* Second edition. Downers Grove, IL: InterVarsity Academic, 2005.

Bauckham, Richard. *Jesus and the Eyewitnesses.* Grand Rapids: Eerdmans, 2008.

Blomberg, Craig L. *Can We Still Believe the Bible?* Grand Rapids: Brazos Press, 2014.

Blomberg, Craig L. *The Historical Reliability of the Gospels.* Second edition. Downers Grove, IL: InterVarsity Academic. 2007.

Blomberg, Craig L. *The Historical Reliability of John's Gospel. Downers Grove,* IL: InterVarsity Press, 2001.

Bruce, F. F. *The New Testament Documents: Are They Reliable?* Grand Rapids: Eerdmans, 1960.

Cowan, Stephen B., and Terry L. Wilder. *In Defense of the Bible.* Nashville, TN: Broadman & Holman, 2013.

Eddy, Paul Rhodes, and Gregory A. Boyd. *The Jesus Legend: A Case for the Historical Reliability of the Synoptic Jesus Tradition.* Grand Rapids: Baker Academic, 2007.

Keener, Craig S. *The Historical Jesus of the Gospels.* Reprint edition. Grand Rapids: Eerdmans, 2012.

Roberts, Mark D. *Can We Trust the Gospels?* Wheaton, IL: Crossway, 2007.

Stein, Robert H. "Criteria for the Gospels' Authenticity." *In Contending With Christianity's Critics,* Paul Copan and William Lane Craig, eds., 88–103. Nashville, TN: B&H Academic, 2009.

Գլուխ 2 Ականատեսների վկայությունների ստուգում

Archer, Gleason L. *New International Encyclopedia of Bible Difficulties.* Grand Rapids: Zondervan, 2001.

Beilby, James K., and Paul Rhodes Eddy, eds. *The Historical Jesus: Five Views.* Downers Grove, IL: InterVarsity Academic, 2009.

Köstenberger, Andreas J., Darrell L. Bock, and Josh Chatraw. *Truth in a Culture of Doubt: Engaging Skeptical Challenges to the Bible.* Nashville, TN: B&H Academic, 2014.

Komoszewski, J. Ed, M. James Sawyer, and Daniel B. Wallace. *Reinventing Jesus.* Grand Rapids: Kregel, 2006.

Marshall, I. Howard. *I Believe in the Historical Jesus.* Grand Rapids: Eerdmans, 1977.

Morrow, Jonathan. *Questioning the Bible.* Chicago: Moody, 2014.

Strobel, Lee. *The Case for the Real Jesus.* Grand Rapids: Zondervan, 2007.

Wallace, J. Warner. *Cold-Case Christianity.* Colorado Springs, CO: David C. Cook, 2013.

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ 3 Փաստագրական ապացույցներ

Bruce, F. F. *The Canon of Scripture.* Downers Grove, IL: InterVarsity Press, 1996. Evans, Craig, and Emanuel Tov, eds. *Exploring the Origins of the Bible.* Grand Rapids: Baker Academic, 2008.

Evans, Craig A. *Fabricating Jesus: How Modern Scholars Distort the Gospels. Downers Grove*, IL: InterVarsity Press, 2008.

Geisler, Norman L., and William E. Nix. *From God to Us.* New edition. Chicago: Moody Press, 2012.

Jones, Timothy Paul. *Misquoting Truth.* Annotated Edition. Downers Grove, IL: InterVarsity Press, 2007.

Kruger, Michael J. *Canon Revisited.* Wheaton, IL: Crossway, 2012.

Kruger, Michael J. *The Question of Canon.* Downers Grove, IL: IVP Academic, 2013.

Lightfoot, Neil R. *How We Got the Bible.* Third edition. Grand Rapids: Baker, 2010.

Metzger, Bruce M., and Bart D. Ehrman. *The Text of the New Testament: Its Transmission, Corruption, and Restoration.* Fourth edition. New York and Oxford: Oxford University Press, 2005.

Metzger, Bruce M. *The Canon of the New Testament.* Reprint edition. Oxford: Oxford University Press, 1997.

Patzia, Arthur G. *The Making of the New Testament.* Downers Grove, IL: InterVarsity Press, 1995.

Perrin, Nicholas. *Lost in Transmission?* Nashville, TN: Nelson, 2007.

Porter, Stanley E. *How We Got the New Testament.* Grand Rapids: Baker Academic, 2013.

Wallace, Daniel B. *Revisiting the Corruption of the New Testament.* Grand Rapids: Kregel Academic and Professional, 2011.

Wegner, Paul D. *The Journey from Texts to Translations.* Grand Rapids: Baker, 1999.

Գլուխ 4 Հավելյալ ապացույցներ

Bruce, F. F. *Jesus and Christian Origins Outside the New Testament.* Grand Rapids: Eerdmans, 1974.

France, R. T. *The Evidence for Jesus.* Vancouver, Canada: Regent College Publishing, 2006.

Habermas, Gary. *The Historical Jesus: Ancient Evidence for the Life of Christ.* Joplin, MO: College Press, 1996.

McDowell, Josh, and Bill Wilson. *He Walked Among Us.* Nashville: Thomas Nelson, 1994.

Schäfer, Peter. *Jesus in the Talmud.* Princeton, NJ: Princeton University Press, 2009.

Van Voorst, Robert E. *Jesus Outside the New Testament.* Grand Rapids: Eerdmans, 2000.

Yamauchi, Edwin M. "Jesus Outside the New Testament: What Is the Evidence?" In *Jesus Under Fire*, Michael J. Wilkins and J. P. Moreland, eds., 207–230. Grand Rapids: Zondervan, 1995.

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ 5 Գիտական ապացույցներ

Evans, Craig A. *Jesus and His World: The Archaeological Evidence*. Louisville, KY: Westminster John Knox Press, 2012.

Free, Joseph P., and Howard F. Vos. *Archaeology and Bible History*. Revised edition. Grand Rapids: Zondervan, 1992.

Hoerth, Alfred, and John McRay. *Bible Archaeology*. Grand Rapids: Baker, 2006. Holden, Joseph M., and Norman Geisler. *The Popular Handbook of Archaeology and the Bible*. Eugene, OR: Harvest House, 2013.

Kaiser, Walter C. Jr., and Duane Garrett, eds. *NIV Archaeological Study Bible*. Grand Rapids.: Zondervan, 2006.

McRay, John. *Archaeology and the New Testament*. Grand Rapids: Baker Academic, 2008.

Գլուխ 6 Հերքող ապացույցներ

Bock, Darrell L. *Studying the Historical Jesus: A Guide to Sources and Methods*. Grand Rapids: Baker Academic, 2002.

Boyd, Gregory A. *Cynic Sage or Son of God? Recovering the Real Jesus in an Age of Revisionist Replies*. Wheaton, IL: BridgePoint, 1995.

Boyd, Gregory A., and Paul Rhodes Eddy. *The Jesus Legend: A Case for the Historical Reliability of the Synoptic Jesus Tradition*. Grand Rapids: Baker Academic, 2007.

Boyd, Gregory A., and Paul Rhodes Eddy. *Lord or Legend: Wrestling with the Jesus Dilemma*. Grand Rapids: Baker, 2007.

Evans, Craig A. *Fabricating Jesus: How Modern Scholars Distort the Gospels*. Expanded Edition. Downers Grove, IL: InterVarsity Press, 2006.

Johnson, Luke Timothy. *The Real Jesus*. San Francisco: HarperSanFrancisco, 1996.

Wilkins, Michael J., and J. P. Moreland, eds. *Jesus Under Fire*. Grand Rapids: Zondervan, 1995.

Witherington, Ben III. *What Have They Done With Jesus?* Reprint Edition. New York: HarperOne, 2007.

Գլուխ 7 Ինքնության փաստեր

Bauckham, Richard. *Jesus and the God of Israel: God Crucified and Other Studies on the New Testament's Christology of Divine Identity*. Grand Rapids: Eerdmans, 2008.

Bird, Michael F. "Did Jesus Think He was God?" In *How God Became Jesus: The Real Origins of Belief in Jesus' Divine Nature,* by Michael F. Bird, Craig A. Evans, Simon J. Gathercole, Charles Hill, and Chris Tilling, 45–70. Grand Rapids: Zondervan, 2014.

Bock, Darrell L. *Who Is Jesus? Linking the Historical Jesus with the Christ of Faith*. New York: Howard Books, 2012.

Craig, William Lane. "The Self-Understanding of Jesus." In *Reasonable Faith*, Third edition, by William Lane Craig, 287–332. Wheaton, IL: Crossway, 2008.

թվայնացրել է 1915.info կայքը

Hurtado, Larry W. *How on Earth Did Jesus Become a God? Historical Questions about Earliest Devotion to Jesus.* Grand Rapids: Eerdmans, 2005.

Marshall, Howard I. *The Origins of New Testament Christology.* Downers Grove, IL: InterVarsity Press, 1976.

Moule, C. F. D. *The Origins of Christology.* Cambridge: Cambridge University Press, 1977.

Witherington III, Ben. *The Christology of Jesus.* Minneapolis: Fortress Press, 1990.

Wright, N. T. *Christian Origins and the Question of God.* 3 vols. Minneapolis: Fortress Press, 1992, 1996, 2003.

Գլուխ 8 Հոգեբանական փաստեր

Collins, Gary R. *Can You Trust Psychology?* Downers Grove, IL: InterVarsity Press, 1988.

Cramer, Raymond L. *Psychology of Jesus and Mental Health.* Grand Rapids: Zondervan, 1987.

Keener, Craig S. *Miracles: The Credibility of New Testament Accounts.* 2 vol– umes. Grand Rapids.: Baker Academic, 2011.

Twelftree, Graham H. *Jesus the Exorcist: A Contribution to the Study of the Historical Jesus.* Reprint edition. Eugene, OR: Wipf & Stock, 2011.

Twelftree, Graham H. *Jesus the Miracle Worker: A Historical and Theological Study.* Downers Grove, IL: InterVarsity Academic, 1999.

Գլուխ 9 Հոգեբանական դիմանկարի փաստը

Bauckham, Richard. *God Crucified: Monotheism and Christology in the New Testament.* Grand Rapids: Eerdmans, 1999.

Bowman, Robert M. Jr., and J. Ed Komoszewski. *Putting Jesus in His Place.* Grand Rapids: Kregel, 2007.

Gathercole, Simon J. *The Preexistent Son: Recovering the Christologies of Matthew, Mark, and Luke.* Grand Rapids: Eerdmans, 2006.

Harris, Murray J. *Jesus as God.* Grand Rapids: Baker, 1992.

Longnecker, Richard N., ed. *Contours of Christology in the New Testament.* Grand Rapids: Eerdmans, 2005.

Morgan, Christopher W., and Robert A. Peterson. *The Deity of Christ.* Wheaton, IL: Crossway, 2011.

Ware, Bruce A. *The Man Christ Jesus.* Wheaton, IL: Crossway, 2012. Witherington III, Ben. *The Many Faces of the Christ: The Christologies of the New Testament and Beyond.* New York: Crossroad, 1998.

Ware, Bruce A. *The Man Christ Jesus The Christology of Jesus.* Minneapolis: Augsburg Fortress, 1990.

Գլուխ 10 Մատնահետքերի փաստը

Bock, Darrell L., and Mitch Glaser, eds. *The Gospel According to Isaiah 53.* Grand Rapids: Kregel, 2012.

թվայնացրել է 1915.info կայքը

Brown, Michael L. *Answering Jewish Objections to Jesus.* Vol. 1–5. Grand Rapids: Baker, 2000, 2003, 2006, 2010.

Kaiser, Walter C., Jr. *The Messiah in the Old Testament.* Grand Rapids: Zondervan, 1995.

Porter, Stanley E. *The Messiah in the Old and New Testaments.* Grand Rapids: Eerdmans, 2007.

Rydelnik, Michael. *The Messianic Hope: Is the Hebrew Bible Really Messianic?* Nashville, TN: B&H Academic, 2010.

Strobel, Lee, "Challenge #5: Jesus Was an Imposter Who Failed to Fulfill the Messianic Prophecies," *The Case for the Real Jesus.* Grand Rapids: Zondervan, 2007), 189–226.

Telchin, Stan. *Betrayed!* Grand Rapids: Chosen, 1982.

Wright, Christopher J.H. *Knowing Jesus through the Old Testament.* Downers Grove, IL: InterVarsity, 1995.

Գլուխ 11 Բժշկական փաստեր

Cook, John Granger. *Crucifixion in the Mediterranean World.* Tuebingen, Germany: Mohr Siebeck, 2015.

Edwards, William D., et al. "On the Physical Death of Jesus Christ." *Journal of the American Medical Association* (March 21, 1986), 1455–63.

Evans, Craig A., and N. T. Wright. *Jesus, the Final Days: What Really Happened.*

Louisville, KY: Westminster John Knox Press, 2009.

Foreman, Dale. *Crucify Him.* Grand Rapids: Zondervan, 1990.

Gibson, Shimon. *The Final Days of Jesus: The Archaeological Evidence.* Reprint edition. New York: HarperOne, 2010.

Hengel, M. *Crucifixion in the Ancient World.* Philadelphia: Fortress, 1977. Köstenberger, Andreas J., and Justin Taylor. *The Final Days of Jesus.* Wheaton, IL: Crossway, 2014.

Գլուխ 12 Անհետացած մարմնի փաստը

Copan, Paul, and Ronald K. Tacelli, eds. *Jesus' Resurrection: Fact or Figment? A Debate Between William Lane Craig and Gerd Lüdemann.* Downers Grove, IL: InterVarsity Academic, 2000.

Craig, William Lane. "The Empty Tomb of Jesus." In R. Douglas Geivett and Gary R. Habermas, eds., *In Defense of Miracles*, 247–61. Downers Grove,IL: InterVarsity Press, 1997.

Craig, William Lane, "Did Jesus Rise from the Dead?" In Michael J. Wilkins and J. P. Moreland, eds., *Jesus Under Fire*, 147–82. Grand Rapids: Zondervan, 1995.

Craig, William Lane, "The Resurrection of Jesus." In *Reasonable Faith*, Third edition, ed. William Lane Craig, 333–400. Wheaton, IL: Crossway, 2008.

Craig, William Lane. *The Son Rises: Historical Evidence for the Resurrection of Jesus.* Reprint edition. Eugene, OR: Wipf & Stock, 2000.

Craig, William Lane, "Objection #2: Since Miracles Contradict Science, They Cannot Be True." In Lee Strobel, *The Case for Faith*, 57–86. Grand Rapids: Zondervan, 2000.

Evans, Craig A. "Getting the Burial Traditions and Evidences Right." In Michael F. Bird, Craig A. Evans, Simon J. Gathercole, Charles Hill, and Chris Tilling, *How God Became Jesus: The Real Origins of Belief in Jesus' Divine Nature*, 71–93. Grand Rapids: Zondervan, 2014.

Morison, Frank. *Who Moved the Stone?* Reprint edition. Grand Rapids: Zondervan, 1987.

Գլուխ 13 Հայտնությունների փաստը

Habermas, Gary R., and Michael R. Licona. *The Case for the Resurrection of Jesus*. Grand Rapids: Kregel, 2004.

Habermas, Gary R., and Antony Flew. *Did the Resurrection Happen? A Conversation with Gary Habermas and Antony Flew*. Downers Grove, IL: InterVarsity Press, 2009.

Habermas, Gary R. *The Risen Jesus and Future Hope*. Lanham, MD: Rowman and Littlefield, 2003.

Habermas, Gary R. "The Resurrection Appearances of Jesus." In R. Douglas Geivett and Gary R. Habermas, eds., *In Defense of Miracles*, 262–275. Downers Grove, IL: InterVarsity Press, 1997.

Habermas, Gary R. "The Resurrection of Jesus Time Line." In Paul Copan and William Lane Craig, eds., *Contending With Christianity's Critics*, 113–125. Nashville, TN: B&H Academic, 2009.

Licona, Michael R. *The Resurrection of Jesus: A New Historiographical Approach*. Downers Grove, IL: InterVarsity Press, 2010.

Swinburne, Richard. *The Resurrection of God Incarnate*. Oxford: Oxford Press, 2003.

Wright, N.T. *The Resurrection of the Son of God*. Minneapolis: Fortress, 2003.

Գլուխ 14 Անուղղակի ապացույցներ

Groothuis, Douglas. "The Resurrection of Jesus." In *Christian Apologetics: A Comprehensive Case for the Christian Faith*, 527–563. Downers Grove, IL: InterVarsity Academic, 2011.

Licona, Michael R. "New Explanations Have Refuted Jesus' Resurrection" and "The Cross-Examination." In Lee Strobel, *The Case for the Real Jesus*, 101–155. Grand Rapids: Zondervan, 2007.

McDowell, Josh, and Sean McDowell. *Evidence for the Resurrection*. Ventura, CA: Regal, 2009.

Moreland, J. P. "The Resurrection of Jesus." In *Scaling the Secular City*, 159– 183. Grand Rapids: Baker, 1987.

Mettinger, Tryggve N.D. *The Riddle of the Resurrection*. Stockholm, Sweden: Almqvist & Wiksell International, 2001.

թվայնացրել է 1915.info կայքը

Ծանոթագրություններ

Ներածություն
Եզակի հետաքննության վերսկսում

Lee Strobel, "Four Years in Jail—and Innocent," Chicago Tribune (August 22, 1976) and "Did Justice Close Her Eyes?" Chicago Tribune (August 21, 1977)

ՄԱՍ 1
Արձանագրությունների քննություն

Գլուխ 1 Ականատեսների վկայությունները
Վստահելի՞ են Քրիստոսի կենսագրությունները

1 Lee Strobel, "Youth's Testimony Convicts Killers, but Death Stays Near," Chicago Tribune (October 25, 1976)
2 Irenaeus, Adversus Haereses 3.3.4
3 Arthur G. Patzia, The Making of the New Testament (Downers Grove, IL: InterVarsity Press, 1995), 164
4 Տե՛ս նույն տեղում, 49:
5 Karen Armstrong, A History of God (New York: Ballantine/Epiphany, 1993), 82
6 William Lane Craig, The Son Rises: Historical Evidence for the Resurrection of Jesus (Chicago: Moody Press, 1981), 140
7 Armstrong, A History of God, 79
8 1 Corinthians 15:3–7

Գլուխ 2 Ականատեսների վկայությունների ստուգում
Քրիստոսի կենսագրությունները քննությանը դիմանո՞ւմ են

9 Lee Strobel, "Jury in Makeshift Courtroom Hears Dying Boy Tell of Attack," Chicago Tribune (February 24, 1976)
10 Luke 1:1–4
11 Seven ancient sources report the willingness of the disciples to suffer for their conviction that Jesus rose from the dead: Acts, Clement of Rome, Polycarp, Ignatius, Dionysius of Corinth (quote found in Eusebius), Tertullian, and Origen. If the martyrdoms of Paul and Jesus' half-brother James are included, there are eleven sources. See the interview with resurrection scholar Michael Licona in: The Case for the Real Jesus, by Lee Strobel (Grand Rapids: Zondervan, 2007), 118
12 Simon Greenleaf, The Testimony of the Evangelists (Grand Rapids: Baker, 1984), vii

թվայնացրել է 1915.info կայքը

13 Cited in Craig Blomberg, "Where Do We Start Studying Jesus?" in Michael J. Wilkins and J. P. Moreland, eds., Jesus under Fire (Grand Rapids: Zondervan, 1995), 34

14 See Gleason L. Archer, The Encyclopedia of Bible Difficulties (Grand Rapids: Zondervan, 1982) and Norman Geisler and Thomas Howe, When Critics Ask (Wheaton, IL: Victor, 1992)

Գլուխ 3 Փաստագրական ապացույցներ

Քրիստոսի կենսագրություններն անխաթար են հասել մեզ

15 See Lee Patrick Strobel, Reckless Homicide: Ford's Pinto Trial (South Bend, IN: And Books, 1980), 75–92, and Lee Strobel, God's Outrageous Claims (Grand Rapids: Zondervan, 1997), 43–58. Ford was ultimately acquitted of criminal charges after the judge withheld key documents from the jury, though the automaker was successfully sued in civil cases. Allegations about the Pinto were first reported in Mother Jones magazine.

16 Bruce M. Metzger died in 2007

17 According to Daniel B. Wallace of the Center for the Study of New Testament Manuscripts, the official total of New Testament Greek manuscripts as of mid-2015 was 5,843. Included were 129 Papyri, 323 Majuscules, 2,928 Minuscules, and 2,463 Lectionaries. However, because of various factors in counting, Wallace said he believed the totals were closer to 5,600.

18 F. F. Bruce, The Books and the Parchments (Old Tappan, NJ: Revell, 1963), 178, cited in Josh McDowell, Evidence That Demands a Verdict (1972; reprint, San Bernardino, CA: Here's Life, 1986), 42

19 Frederic Kenyon, Handbook to the Textual Criticism of the New Testament (New York: Macmillan, 1912), 5, cited in Ross Clifford, The Case for the Empty Tomb (Claremont, CA: Albatross, 1991), 33

20 Frederic Kenyon, The Bible and Archaeology (New York: Harper, 1940), 288

21 For more on variants between New Testament manuscripts, estimated to number between 200,000 and 400,000, see: Lee Strobel, The Case for the Real Jesus (Grand Rapids: Zondervan, 2007), 65-100. In an interview, Daniel B. Wallace, one of the world's foremost authorities on textual criticism, explained how variants are counted: "If there's any manuscript or church father who has a different word in one place, that counts as a textual variant.... If a single fourteenth-century manuscript misspells a word, that counts as a variant." He added: "Only one percent of variants are both meaningful, which means they affect the meaning of the text to some degree, and viable, which means they go back to the original text." Most of those are insignificant issues. He emphasized: "No cardinal or essential doctrine of altered by any textual variant that has plausibility of going back to the original."

22 Patzia, The Making of the New Testament, 158

23 Subsequent analysis by scholars puts the dating of Thomas at no earlier than AD 175 and probably closer to 200. See interview with New Testament scholar Craig A. Evans in The Case for the Real Jesus, by Lee Strobel (Grand Rapids: Zondervan, 2007), 35–43.

24 Benjamin B. Warfield, Introduction to Textual Criticism of the New Testament (London: Hodder & Stoughton, 1907), 12–13

թվայնացրել է 1915.info կայքը

25 Geisler and Nix, A General Introduction to the Bible, 195. They note that some include Philemon, 1 Peter, and 1 John among the disputed books, but "it is probably better to refer to these as omitted rather than disputed books."

26 Տես նույն տեղում, 207:

27 Տես նույն տեղում, 199. This does not include the Apocrypha, which were accepted by particular churches for a particular period of time and today are considered valuable though not canonical. Examples: Shepherd of Hermas, Epistle to the Corinthians, Epistle of Pseudo-Barnabas, Didache, Apocalypse of Peter, The Acts of Paul and Thecla, and Ancient Homily or the Second Epistle of Clement.:

28 Տես նույն տեղում:

Գլուխ 4 Հավելյալ ապացույցներ

Ավետարաններից դուրս կան վստահելի վկայություններ Հիսուսի մասին

29 Webster's Encyclopedic Unabridged Dictionary of the English Language (New York: Gramercy, 1989), 328.

30 Maurice Possley, "Mob Hit Man Aleman Gets One Hundred to Three Hundred Years," Chicago Tribune (November 26, 1997).

31 Charles Templeton, Act of God (New York: Bantam, 1979), 152.

32 Josephus, The Antiquities 20.200. See also Edwin Yamauchi, "Josephus and the Scriptures," Fides et Historia 13 (1980), 42–63.

33 Josephus, The Antiquities 18.63–64.

34 Michael Martin, The Case against Christianity (Philadelphia: Temple University Press, 1991), 49.

35 Tacitus, Annals 15.44.

36 Pliny the Younger, Letters 10.96.

37 Gary Habermas, The Historical Jesus (Joplin, MO: College Press, 1996), 196–97.

38 Paul L. Maier, Pontius Pilate (Wheaton, IL: Tyndale House, 1968), 366, citing a fragment from Phlegon, Olympiades he Chronika 13, ed. Otto Keller, Rerum Naturalium Scriptores Graeci Minores, 1 (Leipzig: Teurber, 1877), 101. Translation by Maier.

39 See P. Maier, "Sejanus, Pilate, and the Date of the Crucifixion," Church History 37 (1968), 1–11.

40 M. Wilcox, "Jesus in the Light of His Jewish Environment," Aufstieg und Niedergang der römischen Welt 2, no. 25.1 (1982), 133.

41 Luke Timothy Johnson, The Real Jesus (San Francisco: HarperSanFrancisco, 1996), 120.

42 Ignatius, Trallians 9.

43 The Verdict of History was later retitled: The Historical Jesus: Ancient Evidence for the Life of Christ, by Gary Habermas (Joplin, MO: College Press, 1996).

44 See Gary Habermas, The Verdict of History (Nashville: Thomas Nelson, 1988).

45 Տես նույն տեղում, 169:

Գլուխ 5 Գիտական ապացույցներ

Հնագիտությունը հաստատում, թե՞ հերքում է Հիսուսի կենսագրությունները

46 For the full story, see Joe McGinniss, Fatal Vision (New York: New American Library, 1989). For a description of the scientific evidence, see Colin Evans, The Casebook of Forensic Detection (New York: John Wiley & Sons, 1996), 277–80.

47 Luke 18:35, Mark 10:46.

48 Norman Geisler and Thomas Howe, When Critics Ask (Wheaton, IL: Victor, 1992), 385.

49 John Ankerberg and John Weldon, Ready with an Answer (Eugene, OR: Harvest House, 1997), 272.

50 Michael Martin, The Case against Christianity (Philadelphia: Temple University Press, 1991), 69, emphasis added.

51 John McRay, Archaeology and the New Testament (Grand Rapids: Baker, 1991), 155, emphasis added.

52 See: Darrell L. Bock, Luke 1:1-9:50: Baker Exegetical Commentary on the New Testament (Grand Rapids: Baker, 1994), 905.

53 William Mitchell Ramsay, The Bearing of Recent Discovery on the Trustworthiness of the New Testament (London: Forgotten Books, 2012, reprint of 1909 edition), 277.

54 For examples, see: Harold W. Hoehner, Chronological Aspects of the Life of Christ (Grand Rapids: Zondervan, 1977), 16.

55 Տես նույն տեղում, 22, 23.:

56 Darrell L. Bock, Luke 1:1-9:50: Baker Exegetical Commentary on the New Testament (Grand Rapids: Baker Academic, 1994), 906.

57 Norman Geisler and Thomas Howe, When Critics Ask (Wheaton, IL: Victor, 1992), 386.

58 Harold W. Hoehner, Chronological Aspects of the Life of Christ, 22. See also: A. J. B. Higgins, "Sidelights on Christian Beginnings in the GrecoRoman World," The Evangelical Quarterly 41 (October, 1969), 200–201.

59 Darrell L. Bock, Luke 1:1–9:50: Baker Exegetical Commentary on the New Testament, 909.

60 Josephus also mentions the AD 6 census in Antiquities of the Jews.

61 Harold W. Hoehner, Chronological Aspects of the Life of Christ, 19.

62 Տես նույն տեղում:

63 Darrell L. Bock, Luke 1:1–9:50: Baker Exegetical Commentary on the New Testament, 909. For a thorough discussion of issues related to the census, see 903–909, and Harold W. Hoehner, Chronological Aspects of the Life of Christ, 11–23.

64 Frank Zindler, "Where Jesus Never Walked," American Atheist (Winter 1996–1997), 34.

65 Տես նույն տեղում:

66 See: Eric M. Meyers and James F. Strange, Archaeology , the Rabbis, and Early Christianity (Nashville: Abington, 1981) and article on "Nazareth" in The Anchor Bible Dictionary (New York: Doubleday, 1992).

67 Jack Finegan, The Archaeology of the New Testament (Princeton, NJ: Princeton University Press, 1992), 46.

թվայնացրել է 1915.info կայքը

68 See: Ken Dark, "Has Jesus' Nazareth House Been Found?" Biblical Archaeology Review 41.2 (March/April 2015).

69 See: Ken Dark, "Early Roman-Period Nazareth and the Sisters of Nazareth Convent," The Antiquaries Journal 92 (2012).

70 See: Y. Alexandre, "Mary's Well, Nazareth: The Late Hellenistic to the Ottoman Periods" Israel Antiquities Authority Report 49 (2012).

71 Wilkins and Moreland, Jesus under Fire, 209.

72 Տես նույն տեղում, 211:

73 Kevin D. Miller, "The War of the Scrolls," Christianity Today (October 6, 1997), 44, emphasis added.

74 Joseph Smith, History of the Church, 8 vols. (Salt Lake City: Deseret, 1978), 4:461, cited in Donald S. Tingle, Mormonism (Downers Grove, IL: InterVarsity Press, 1981), 17.

75 John Ankerberg and John Weldon, The Facts on the Mormon Church (Eugene, OR: Harvest House, 1991), 30, emphasis in original.

76 Clifford Wilson, Rocks, Relics and Biblical Reliability (Grand Rapids: Zondervan; Richardson, TX: Probe, 1977), 120, cited in Ankerberg and Weldon, Ready with an Answer, 272.

Գլուխ 6 Հերքող ապացույցներ

Պատմական Քրիստոս նույնն է, ինչ հավատի Քրիստոս

77 Henry Campbell Black, Black's Law Dictionary, 5th ed. (St. Paul: West, 1979), 1139.

78 Lee Strobel, "His 'I Shot Him' Stuns Courtroom," Chicago Tribune (June 20, 1975) and "Pal's Confession Fails; Defendant Ruled Guilty," Chicago Tribune (June 21, 1975).

79 Gregory A. Boyd, Jesus under Siege (Wheaton, IL: Victor, 1995), 88.

80 Boyd later became well-known as a proponent of "open theism," which says that while God is omniscient, he does not know what we will freely decide to do in the future. I do not embrace this theology

81 For more on this issue, see the interview with me in the back of this book.

82 See: "Challenge #4: Christianity's Beliefs About Jesus Were Copied From Pagan Religions," in: Lee Strobel, The Case for the Real Jesus (Grand Rapids: Zondervan, 2007), 157-187.

83 John Dominic Crossan, The Historical Jesus (San Francisco: HarperSanFrancisco, 1991), 329.

84 See: 1 Corinthians 15:17.

85 Johnson, The Real Jesus, 3, 5, 8.

86 Տես նույն տեղում, 26:

87 Տես նույն տեղում:

ՄԱՍ 2
Հիսուս. հետաքննություն

Գլուխ 7 Ինքնության փաստեր
Հիսուս իրեն Աստծո Որդի համարելու հիմքեր ունե՞ր

88 Marjorie Rosen, "Getting Inside the Mind of a Serial Killer," Biography (October 1997), 62–65.
89 Տե՛ս նույն տեղում, 64:
90 See: Luke 11:20.
91 R. E. Brown, "Did Jesus Know He Was God?" Biblical Theology Bulletin 15 (1985), 78, cited in Ben Witherington III, The Christology of Jesus (Minneapolis: Fortress, 1990), 277.
92 Jaroslav Pelikan, The Christian Tradition: A History of the Development of Doctrine, vol. 1, The Emergence of the Catholic Tradition (100–600) (Chicago: University of Chicago Press, 1971), 173, cited in William Lane Craig, Reasonable Faith (Westchester, IL: Crossway, 1994), 243.
93 See John 10:30.
94 Craig, Reasonable Faith, 252.
95 Տե՛ս նույն տեղում, 244:
96 Royce Gordon Gruenler, New Approaches to Jesus and the Gospels (Grand Rapids: Baker, 1982), 74.
97 James D. G. Dunn, Jesus and the Spirit (London: SCM Press, 1975), 60, cited in Craig, Reasonable Faith, 252, emphasis added.

Գլուխ 8 Հոգեբանական փաստեր
Հիսուս խելագա՞ր էր, երբ պնդում էր, որ Ինքն Աստծո Որդին է

98 Leland H. Gregory III, "Top Ten Government Bloopers," George (November 1997), 78.
99 Charles Templeton, Farewell to God (Toronto: McClelland & Stewart, 1996), 112.
100 Wilson, Jesus: The Evidence, 141.
101 Տե՛ս նույն տեղում, 109, emphasis in original:
102 "A Case of Congenital Ichthyosiform Erythrodermia of Brocq Treated by Hypnosis," British Medical Journal 2 (1952), 996, cited in Wilson, Jesus: The Evidence, 103.
103 M. Scott Peck, People of the Lie (New York: Touchstone, 1997).
104 Wilson, Jesus: The Evidence, 107.
105 C. S. Lewis, The Screwtape Letters (London: Collins–Fontana, 1942), 9.
106 Philip Schaff, The Person of Christ (New York: American Tract Society, 1918), 97, cited in McDowell, Evidence That Demands a Verdict, 107, emphasis added.

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ 9 Հոգեբանական դիմանկարի փաստը
Հիսուս ուներ Ասպծո բոլոր հատկանիշները

107 Marla Donato, "That Guilty Look," Chicago Tribune (April 1, 1994).
108 Denny Johnson, "Police Add Electronic 'Sketch Artist' to Their Bag of Tricks," Chicago Tribune (June 22, 1997).
109 See John 8:46.
110 Templeton, Farewell to God, 230.
111 Morton Smith, "Biblical Arguments for Slavery," Free Inquiry (Spring 1987), 30.
112 Thomas Sowell, Race and Culture (New York: Basic, 1995).
113 Josh McDowell and Bart Larson, Jesus: A Biblical Defense of His Deity (San Bernardino, CA: Here's Life, 1983), 62–64.

Գլուխ 10 Մատնահետքերի փաստը
Համապատասխանում էր Փրկչի ինքնությանը Հիսուս և միայն Հիսուս

114 Evans, The Casebook of Forensic Detection, 98–100.
115 Lee Strobel, "'Textbook' Thumbprint Aids Conviction in Coed's Killing," Chicago Tribune (June 29, 1976).
116 See Darrell L. Bock, Darrell and Mitch Glaser, eds. The Gospel According to Isaiah 53 (Grand Rapids: Kregel, 2012).
117 For basic details on fulfilled prophecies, see McDowell, Evidence That Demands a Verdict, 141–77.
118 Peter W. Stoner, Science Speaks (Chicago: Moody Press, 1969), 109.
119 For a discussion of the Daniel prophecy, see Robert C. Newman, "Fulfilled Prophecy As Miracle," in R. Douglas Geivett and Gary R. Habermas, eds., In Defense of Miracles (Downers Grove, IL: InterVarsity Press, 1997), 214–25.
120 Stan Telchin, Betrayed! (Grand Rapids: Chosen, 1982).
121 Ruth Rosen, ed., Jewish Doctors Meet the Great Physician (San Francisco: Purple Pomegranate, 1997), 9–23.
122 Տես նույն տեղում, 34–35:

ՄԱՍ 3
Հարության քննություն

Գլուխ 11 Բժշկական փաստեր
Հիսուսի մահը կեղծիք էր, հարությունը՝ խաբեություն

123 Surah IV: 156–57.
124 Wilson, Jesus: The Evidence, 140.
125 Craig, Reasonable Faith, 234.

126 D. H. Lawrence, Love among the Haystacks and Other Stories (New York: Penguin, 1960), 125.
127 Hugh Schonfield, The Passover Plot (New York: Bantam, 1965), 165.
128 Habermas, The Verdict of History, 56.
129 Michael Baigent, Richard Leigh, and Henry Lincoln, Holy Blood, Holy Grail (New York: Delacorte, 1982), 372.
130 Johnson, The Real Jesus, 30.
131 An article in the Journal of Medicine analyzed 76 cases of hematidrosis and concluded that the most common causes were acute fear and intense mental contemplation. See: J. E. Holoubek and A. E. Holoubek, "Blood, Seat and Fear: 'A Classification of Hematidrosis," Journal of Medicine 1996, 27 (3–4): 115–33.
132 J. W. Hewitt, "The Use of Nails in the Crucifixion," Harvard Theological Review 25 (1932), 29–45, cited in Josh McDowell, The Resurrection Factor (San Bernardino, CA: Here's Life, 1981), 45.
133 William D. Edwards et al., "On the Physical Death of Jesus Christ," Journal of the American Medical Association (March 21, 1986), 1455–63.

Գլուխ 12 Անհետացած մարմնի փաստը
Իսկապես Հիսուսի գերեզմանը դատարկ էր

134 Gerald O'Collins, The Easter Jesus (London: Darton, Longman & Todd, 1973), 134, cited in Craig, The Son Rises, 136.
135 For a tape of the debate, see William Lane Craig and Frank Zindler, Atheism vs. Christianity: Where Does the Evidence Point? (Grand Rapids, MI: Zondervan, 1993), videocassette.
136 Templeton, Farewell to God, 120.
137 Martin, The Case against Christianity, 78–79.
138 Տես նույն տեղում,, 81.
139 Michael Grant, Jesus: An Historian's Review of the Gospels (New York: Charles Scribner's Sons, 1977), 176.
140 Researcher Glenn Miller's study of the rabbinical literature supports this. He pointed out: "Rabbi Eleazar ben Azariah, tenth in the descent from Ezra, was very specific: 'A day and a night are an Onah ["a portion of time"] and the portion of an Onah is as the whole of it" (J. Talmud, Shabbath 9.3 and b. Talmud, Pesahim 4a).
141 Kirsopp Lake, The Historical Evidence for the Resurrection of Jesus Christ (London: Williams & Norgate, 1907), 247–79, cited in William Lane Craig, Knowing the Truth about the Resurrection (Ann Arbor, MI.: Servant, 1988), 35–36.
142 For the scientific evidence for the existence of God, see: Lee Strobel, The Case for a Creator (Grand Rapids: Zondervan, 2005).
143 J. N. D. Anderson, The Evidence for the Resurrection (Downers Grove, IL: InterVarsity Press, 1966), 20.

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ 13 Հայտնությունների փաստը

Մահից հետո խաչի վրա Հիսուսին ողջ տեսել են

144 "Bomb Victim's Body Not in Grave," Chicago Tribune (January 14, 1998).

145 Martin, The Case against Christianity, 87.

146 Gary Habermas and Antony Flew, Did Jesus Rise from the Dead? The Resurrection Debate (San Francisco: Harper & Row, 1987), xiv.

147 Տես նույն տեղում, xv. Flew renounced his atheism in 2004 after he became convinced there is a Creator. See: Antony Flew and Roy Abraham Varghese, There Is a God: How the World's Most Notorious Atheist Changed His Mind (New York: HarperOne, 2008). He died in 2010:

148 See: Gary Habermas, "The Resurrection of Jesus Time Line." In Contending With Christianity's Critics, edited by Paul Copan and William Lane Craig, 113-125 (Nashville, Tenn.: B&H Academic, 2009).

149 James D.G. Dunn, Jesus Remembered, volume 1 of Christianity in the Making (Grand Rapids: Eerdmans, 2003), 825 (emphasis in original).

150 Pinchas Lapide, The Resurrection of Jesus: A Jewish Perspective (Minneapolis: Augsburg, 1983), 99.

151 Richard Bauckham, Jesus and the Eyewitnesses (Grand Rapids: Eerdmans, 2006), 308.

152 Martin, The Case against Christianity, 90.

153 Craig, The Son Rises, 125.

154 John Drane, Introducing the New Testament (San Francisco: Harper & Row, 1986), 99.

155 Michael Green, Christ Is Risen: So What? (Kent, England: Sovereign World, 1995), 34.

156 Also cited in Gary Habermas and J. P. Moreland, Immortality: The Other Side of Death (Nashville: Thomas Nelson, 1992), 60.

157 Martin, The Case against Christianity, 75.

158 Carl Braaten, History and Hermeneutics, vol. 2 of New Directions in Theology Today, ed. William Hordern (Philadelphia: Westminster Press, 1966), 78, cited in Habermas and Flew, Did Jesus Rise from the Dead? 24.

159 Michael Green, The Empty Cross of Jesus (Downers Grove, IL: InterVarsity Press, 1984), 97, cited in Ankerberg and Weldon, Knowing the Truth about the Resurrection, 22, emphasis in original.

Գլուխ 14 Անուղղակի ապացույցներ

Կան ապացույցներ, որոնք անուղղակիորեն հաստատում են Հարությունը

160 Black, Black's Law Dictionary, 221.

161 See Josh McDowell, More Than a Carpenter (Wheaton, IL: Living Books, 1977), 60–71.

162 C. F. D. Moule, The Phenomenon of the New Testament (London: SCM Press, 1967), 3.

163 Donald McFarlan, ed., The Guinness Book of World Records (New York: Bantam, 1991), 547.

164 Clifford, The Case for the Empty Tomb, 112.

թվայնացրել է 1915.info կայքը

Եզրակացություն. Պատմության դատավճիռը

Ինչ են հաստատում փաստերը, և ինչ է դա նշանակում այսօր

165 A. N. Sherwin-White, Roman Society and Roman Law in the New Testament (Oxford: Clarendon Press, 1963), 188–91.

166 Blomberg, "Where Do We Start Studying Jesus?" in Wilkins and Moreland, Jesus under Fire, 43, emphasis added.

167 Craig, The Son Rises, 102, emphasis added.

168 Julius Müller, The Theory of Myths, in Its Application to the Gospel History, Examined and Confuted (London: John Chapman, 1844), 26, cited in Craig, The Son Rises, 101.

169 The Journey Bible (Grand Rapids: Zondervan, 1996).

170 Michael Murphy, "The Two-Sided Game of Christian Faith," in John Warwick Montgomery, ed., Christianity for the Tough-Minded (Minneapolis: Bethany House, 1973), 125, cited in Ankerberg and Weldon, Knowing the Truth about the Resurrection, 44.

171 C. S. Lewis, Mere Christianity (New York: Macmillan-Collier, 1960), 55–56.

Հարցազրույց Լի Ստրոբելի հետ

172 Mark D. Roberts, Can We Trust the Gospels? (Wheaton, IL: Crossway, 2007), 20.

173 Lee Strobel, The Case for the Real Jesus: A Journalist Investigates Current Attacks in the Identity of Christ (Grand Rapids, MI: Zondervan, 2007), 58.

174 The poll by the Barna Group included 1,001 telephone interviews conducted among a representative, nationwide sample of adults ages eighteen and older. The interviews were conducted from August 25 through September 10, 2014. The sampling error is plus or minus 3.1 percentage points at the 95 percent confidence level. The cooperation rate was 78 percent.

175 See: David Kinnaman, You Lost Me: Why Young Christians are Leaving Church . . . and Rethinking Faith (Grand Rapids, MI: Baker, 2011).

176 Robert Funk, Honest to Jesus (San Francisco: HarperCollins, 1996), 60.

177 John Dominic Crossan, Who Is Jesus? (New York: HarperCollins, 1996), 96.

178 Robert W. Funk, "The Coming Radical Reformation: Twenty-One Theses." The Fourth R, Volume 11–4 (July–August 1998).

179 William Lane Craig and John Dominic Crossan, Will the Real Jesus Please Stand Up?, (Grand Rapids, MI: Baker, 1999), 45.

180 Տես նույն տեղում, 61. Also, in a radio dialogue in March 1995 on The Milt Rosenberg Show on WGN in Chicago, Crossan said: "God does not act directly . . . physically, in the world in the same sense in which the miracles taken literally would seem."

181 William Lane Craig and John Dominic Crossan, Will the Real Jesus Please Stand Up?, 45.

182 Տես նույն տեղում, 169:

183 Տես նույն տեղում, 49–51. Also, Craig asked at one point: "What about the statement that God exists? Is that a statement of faith or fact?" Crossan replied: "It is a statement of faith for all those who make it." See p. 49.

թվայնացրել է 1915.info կայքը

184 Տես նույն տեղում, 169. Craig added: "Thus his antisupernaturalism determines his skepticism concerning the historicity of the New Testament witness to the resurrection of Jesus." See p. 170.

185 Robert W. Funk, Roy W. Hoover, and The Jesus Seminar, The Five Gospels (San Francisco: HarperSanFrancisco, 1997), 2.

186 Strauss is not only cited in support of the Jesus Seminar's first pillar, but The Five Gospels is dedicated to him, Galileo Galilei, and Thomas Jefferson, "who took scissors and paste to the gospels."

187 Robert W. Funk, Roy W. Hoover, and the Jesus Seminar, The Five Gospels (San Francisco: HarperSanFrancisco, 1997), 4.

188 William Lane Craig, "Rediscovering the Historical Jesus: The Presuppositions and Presumptions of the Jesus Seminar." Faith and Mission 15 (1998): 3–15.

189 Mark D. Roberts, "Unmasking the Jesus Seminar: A Critique of Its Methods and Conclusions," Patheos, http://www.patheos.com/blogs/ markdroberts/series/unmasking-the-jesus-seminar/.

190 Even agnostic scholar Bart Ehrman said, "The claim that Jesus was simply made up falters on every ground. . . . Whether we like it or not, Jesus certainly existed." See Bart D. Ehrman, "Did Jesus Exist?" HuffPost Religion, http://www.huffingtonpost.com/bart-d-ehrman/did-jesus-exist_b_1349544.html

191 Craig credits apologist and speaker Peter Grant for this illustration. See Lee Strobel, The Case for Faith: A Journalist Investigates the Toughest Objections to Christianity (Grand Rapids, MI: Zondervan, 1998), 84–85.

թվայնացրել է 1915.info կայքը

newmag 151

ՀՈՒՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ

Լի Ստրոբել

Քրիստոսի իսկության վարույթը

Մատենաշարի պատասխանատուներ՝

Տ. Արարատ քահանա Պողոսյան
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչություն

Սարգիս Մելքոնյան
Newmag հրատարակչություն

Թարգմանությունն անգլերենից՝
Աստղիկ Սարգսյանի

Հեղինակի լուսանկարը՝
Լի Ստրոբելի անձնական արխիվից

Գրքի դիզայնը՝
Էդիկ Պողոսյանի

Շապիկի բնօրինակի հեղինակ՝
Kurt Dietsch / Luciditi

Շապիկի լուսանկար՝
Veer

Տառատեսակը՝
GHEA Narek, GHEA Aragats, հեղինակ՝ **Էդիկ Ղաբուզյան**
Տպագրված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանում:
Գրքի շապիկը և կազմարարությունը՝ Անտենոր տպարանի

Գործադիր տնօրեն՝
Արտակ Ալեքսանյան

Գլխավոր խմբագիր՝
Գնել Նալբանդյան

Խմբագիրներ՝
Արմեն Ամիրխանյան
Տաթևիկ Նալբանդյան
Մարգարիտ Սարգսյան
Աննա Բախշյան

Ստրատեգիական
և հատուկ նախագծերի ղեկավար՝
Գոհար Մանուկյան

Գրական ծրագրերի ղեկավար՝
Անի Հակոբյան

Վերստուգող խմբագիրներ՝
Մայիս Նիկողոսյան
Տաթևիկ Բաղդասարյան

Մարկետինգի և վաճառքի ղեկավար՝
Գոհար Ալեքսանյան

Սրբագրիչներ՝
Նարինե Հովակիմյան
Մարինա Մկրտչյան
Աննա Կոբալյան

Մուլտիմեդիա
բովանդակության ղեկավար՝
Մանու Իրիցյան

«Նյու Մեգ» ՍՊԸ
info@newmag.am | newmag.am
Ադոնցի 4/3, Երազ բիզնես կենտրոն #329,
3-րդ հարկ, Երևան 0014, ՀՀ